նրան պատկանող իրավունքի պաշտպանության հարցում: Ուսումնասիրելով ներպետական դատական պրակտիկան՝ գալիս ենք այն եզրահանգման, որ դատարանների կողմից այս նորմի կիրառումը շատ հազվադեպ է հանդիպում: Նույն իրավիճակը առկա է նաև Ռուսաստանի Դաշնությունում<sup>2</sup>: Ապացուցել նման իրավունքի չարաշահումը քաղաքացիական դատավարության կարգով առավել բարդ է թվում:

Ինչպես նշում է Ա. Յու. Ֆյոդորովը, այս խնդիրը առկա է նաև այլ պետություններում: Մեծ Բրիտանիայում բաժնետերերի իրավունքների դատական պաշտպանության հնարավորությունը բաժնետիրական իրավունքի կարևոր տար է համարվում: Սակայն անգլիական օրենսդիրը պարբերաբար ընդլայնում է օրենսդրական միջոցներն ընդդեմ բաժնետերերի կողմից իրավունքների չարաշահման<sup>3</sup>:

Ա. Յու. Ֆյոդորովը նշում է, որ «չարաշահում» ասելով՝ անհրաժեշտ է հասկանալ «ի չարս, ի վնաս կիրառում», այսինքն՝ գործողություն (անգործություն), որը վնաս է պատճառում: Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում տեղ գտած չարաշահման եզրույթին, ապա կարծում ենք, որ այն նույնպես բավարար մակարդակով չի բացահայտվել: Իրավունքի չարաշահումը բազմաթիվ հետազոտությունների առարկա է հանդիսացել: Վ. Պ. Գրիբանովը վերոնշյալ թեմայով ամենահայտնի աշխատանքների հեղինակներից է, ով իրավունքի չարաշահման գրեթե նույնատիպ սահմանում է տվել<sup>4</sup>:

Ա. Պ. Մերգենը նշում է, որ իրավունքի չարաշահումը հատուկ քաղաքացիական իրավախախտում է, իսկ դրա գլխավոր

1 Տե՛ս «Բժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-232 ՀՀՊՏ 2001.11.06/34(166), հոդված 93-րդ, կետ 3-րդ:

2 Տե՛ս Фёдоров А.Ю. Рейдерство и корпоративный шантаж (организационно-правовые меры противодействия). - «Волтерс Клувер», 2010. Էջ 89:

3 Տե՛ս նույն տեղում:

4 Տե՛ս Грибанов В.П. Пределы осуществления и защиты гражданских прав. М., 1992. Էջ 34:

առանձնահատկությունն այն է, որ իրավախախտողի գործողությունները ձևականորեն հիմնվում են իրեն պատկանող իրավունքների վրա, սակայն կոնկրետ իրականացման ժամանակ դրանք ստանում են այնպիսի ձև, որ հանգեցնում են այլ անձանց իրավունքների խախտման<sup>1</sup>: Նման տեսակետ է արտահայտել նաև Տ. Կ. Բարսեղյանը. «Իրավունքի չարաշահման հիմնական առանձնահատկությունն այն է, որ իրավախախտողի գործողությունները ձևականորեն հիմնված են իրեն պատկանող իրավունքների վրա, բայց իրականացվում են այնպիսի եղանակներով ու շրջանակներում, որ խախտվում են այլ անձանց իրավունքներն ու շահերը:

Ամփոփելով նշվածը և համադրելով քաղաքացիական իրավունքի դոկտրինում առկա «իրավունքի չարաշահում» սահմանման հետ՝ կարելի է եզրահանգել, որ գրինմեյլը կարելի է դիտարկել որպես բաժնետիրոջ կողմից իրականացվող իրավունքի չարաշահում: Ի դեպ, իրավունքի չարաշահումը ավելի հաճախ իրականացվում է փոքր միտոքոնար բաժնետիրոջ կողմից:

Արդարացի է, որ կորպորատիվ ոլորտում իրավունքի չարաշահման խնդիրը դիտարկվում է օրենսդրական բարեփոխումների համատեքստում: Այսպես՝ Վ. Դ. Ավետիսյանը և Դ. Մ. Սերոբյանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ գլխի փոփոխությունների հայեցակարգում արդարացիորեն նշում են. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ամենակատարյալ օրենսդրական կարգավորման պայմաններում անգամ հնարավոր չէ բացառել իրավունքի չարաշահման հնարավորություն ընձեռող նորմերի գոյությունը, առաջարկվում է կորպորատիվ իրավահարաբերություններում

իրավունքի չարաշահումը բնորոշվել որպես շեղվող վարքագիծ, իրավախախտման հատուկ տեսակ, որի դեպքում անձի կողմից իրեն պատկանող իրավունքների և օրինական շահերի իրականացումը երրորդ անձանց համար առաջացնում է վնաս, նման գործողությունների կատարումն ակնհայտորեն անհամաչափ է իրավունքներն ու օրինական շահերն իրացնող անձի անձնական շահին, օրենքի ոգուն և հակասում է իրավահարաբերությունների կարգավորման կարևորագույն սկզբունքներից՝ բարի կամքի և ազնվության սկզբունքներին»<sup>3</sup>:

Իրավունքի չարաշահման ինստիտուտի սակավակիրառումը դատարաններում հիմնականում պայմանավորված է դրա օրենսդրական թերի ձևակերպման հետ, ինչն էլ այժմյան ձևակերպման պայմաններում դատական ակտեր կայացնելիս կարող է հանգեցնել օրինականության սկզբունքի խախտման:

Առկա իրավական կարգավորման պայմաններում հայաստանյան գրինմեյլերի գործողությունները սահմանափակված են ստորև նշված պայմանների շրջանակներում.

- գրինմեյլեր ընկերության բյուջեով, այն է՝ գրինմեյլերների ֆինանսական հնարավորությունների սահմաններով: Բաժնետերերի իրավունքների իրացումը ենթադրում է որոշակի ֆինանսական ծախսերի իրականացում (իրավաբանների ծառայությունների վճարում, PR մասնագետների ծառայությունների հատուցում, բաժնետոմսերի գրանցման հետ կապված ծախսերի հատուցում և այլն):

- բաժնետիրական ընկերության կորպորատիվ կառավարման որակով: Գործարքներ կատարելիս, ընդհանուր ժողովներ անցկացնելիս, կանոնադրական կապիտալի ավելացման/նվազեցման որոշումները կայացնելիս եթե

1 Տե՛ս Сергеев А.П. Гражданское право/под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. М., 2003. Էջ 278:

2 Տե՛ս Տ. Կ. Բարսեղյան, «Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական իրավունք», ԵՊՀ Երևան, 2000, էջ 74:

3 ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների հայեցակարգ (գլուխ 5-րդ՝ իրավաբանական անձինք), <http://www.justice.am/legal/view/article/726>:

կազմակերպության ղեկավարության կողմից խախտվել է գործող օրենսդրությունը, ապա գրինմեյլերը անպայման կօգտվի ընձեռված հնարավորությունից: Բաժնետիրական օրենսդրության էական խախտումները ավելի են թեթևացնում գրինմեյլերների աշխատանքը, քանի որ վերջիններս արհեստականորեն չեն ստեղծում այն առիթները, որոնց առկայության պայմաններում նրանք հնարավորություն ունեն դատական կարգով բողոքարկելու բաժնետիրական ընկերության որոշումները:

Վարչական և դատական ռեսուրսներով:

Տիրապետվող բաժնետոմսերի քանակով: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը բաժնետերերին հնարավորություն է ընձեռնում, իրենց պատկանող բաժնետոմսերի քանակից կախված, կոնկրետ իրավունքներ իրականացնել:

Առկա օրենսդրական կարգավորման պայմաններում գրինմեյլերները հիմնականում իրենց գործունեությունը իրականացնում են հետևյալ իրավունքների չարաշահման միջոցով՝

Տեղեկատվություն ստանալու իրավունք.

- արտահերթ ժողով հրավիրելու

պահանջի իրավունք,

- ֆինանսատնտեսական գործունեության ստուգում պահանջելու իրավունք,

- վարչարարության կարգով ստուգումներ նախաձեռնելու իրավունք.

Կառավարման մարմիններում օրակարգի բոլոր հարցերով ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք.

Դատական վեճեր նախաձեռնելու իրավունք:

Ինչպես վկայում է կորպորատիվ կառավարման պրակտիկան՝ բաժնետիրական բաժնետերը տիրապետում է բազմաթիվ իրավունքների, որոնք թույլ են տալիս վերջինիս մասնակցել ընկերության կառավարմանը: Դատական կորպորատիվ շորթումը իրականացվում է հենց այդ իրավունքների իրականացման միջոցով: Ուստի վերոգրյալը նկատի ունենալով՝ սույն աշխատանքի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում կորպորատիվ իրավահարաբերությունների համակարգային հիմնախնդիրների շարքում ուշադրություն հրավիրել նաև իրավունքի չարաշահմանը, որը կարող է իրականացվել շորթման նպատակով:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝  
15.02.2015

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Лунеев В.В. Преступность XX в.: мировые, региональные и российские тенденции. М., 2005.
2. Алексеев С.С. Право собственности. Проблемы теории. 2-е изд., перераб. и доп. М., 2007. էջ. 209-210.
3. Бушев А.Ю., Скворцов О.Ю. Акционерное право. Вопросы теории и судебно-арбитражной практики. М., 1997. էջ. 80.
4. Носов С.И. Акционерное законодательство России. Опыт теоретического и историко-правового исследования: дис. ... д-ра юрид. наук. М., 2001.
5. Black's Law Dictionary. Seventh edition. St. Paul. Minn. 1999. էջ. 709.
6. Тутьхин В., Пылаев И. Типология незаконных действий при захвате предприятий//Слияния и Поглощения. 2005. N 6 (28). էջ. 50
7. Ионцев М.Г. Корпоративные захваты: слияния, поглощения, гринмэйл. 2-е изд., перераб. и доп. М., 2006. էջ. 11.
8. Гуца В. Набор средств гринмэйлера.
9. Кашепов В.П. Корпоративный шантаж: квалификация, ответственность//Российская юстиция. 2006. N 10.
10. Фёдоров А.Ю. Рейдерство и корпоративный шантаж (организационно-правовые меры противодействия). - «Волтерс Клувер», 2010 г.

11. Грибанов В.П. Пределы осуществления и защиты гражданских прав. М., 1992. Ёջ. 34.
12. Сергеев А.П. Гражданское право/под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. М., 2003. Ёջ. 278
13. «Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական իրավունք» Տ.Կ. Բարսեղյան, ԵՊՀ Երևան 2000 թ.Եջ 74
14. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների հայեցակարգ (գլուխ 5-րդ՝ իրավաբանական անձինք) <http://www.justice.am/legal/view/article/726>

## КОРПОРАТИВНЫЙ ШАНТАЖ (GREENMAIL): ЗЛОУПОТРЕБЛЕНИЕ ПРАВОМ МИНОРИТАРНЫХ УЧАСТНИКОВ АКЦИОНЕРНОГО ПРАВА В КОНТЕКСТЕ КОРПОРАТИВНЫХ ПРАВООТНОШЕНИЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**СИМОН БАБАЯН**

*Национальная Академии наук РА, Международный Научно-образовательный центр, заведующий кафедрой юриспруденции, кандидат юридических наук*

Фундаментальные изменения экономических отношений в последнее двадцатилетие инициировали соответствующие изменения в корпоративных правоотношениях. Традиционные направления защиты интересов субъектов корпоративного права подлежат дополнительному изучению, а при необходимости – пересмотру. Основанием для такого вывода послужили наблюдаемые в международной правоприменительной практике такие негативные явления, как рейдерство (захват юридических лиц) и гринмайл (корпоративный шантаж).

В данной статье рассмотрены возможности осуществления корпоративного шантажа (greenmail) посредством злоупотребления правом со стороны миноритарных участников корпоративных правоотношений в контексте корпоративного законодательства РА.

Дата предоставления статьи: 15.02.2015

## GREENMAIL: ABUSING RIGHT OF MINORITY PARTICIPANTS TO EQUITY RIGHT IN THE CONTEXT OF CORPORATE LEGAL RELATIONS IN THE REPUBLIC OF ARMENIA

**SIMON BABAYAN**

*International Scientific-Educational Center of the National Academy of Sciences of RA , Head of the Law Department, Candidate of Law*

Fundamental changes in the economic relations in recent two decades caused relevant changes in corporate legal relations. Traditional directions in protecting the interests of the subjects of corporate law are subject to additional examination, and review, if needed.

Such negative phenomena as corporate raiding and greenmail observed in the international regulatory practice have served as basis for such a conclusion.

This article discusses the opportunities for greenmailing through abusing the right of minority participants to equity right in the context of corporate legislation of the Republic of Armenia.

Article submission date: 15.02.2015

**ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Չինաստանի ժողովրդական Հանրապետության ժամանակակից սահմանադրական կարգավորումների շրջանակում մարդու և քաղաքացու քաղաքական և քաղաքացիական իրավունքների վերաբերյալ կատարված հետազոտությունները պայմանավորված են իրենց արդիականությամբ և «չինական» առանձնահատկությամբ:

Այսպես՝ դրանց վերլուծության ու համադրման արդյունքում անհրաժեշտ է ընդգծել, որ՝ ա) այդ իրավունքների իրացման հիմքում ընկած է համընդհանուր արդարության սկզբունքը, բ) եթե գործող սահմանադրությունը բովանդակում է «ժողովրդավարության» տարրեր, ապա դա պայմանավորված է, մասնավորապես, պետության քաղաքական էության՝ որպես ժողովրդի ժողովրդավարական դիկտատուրայի բնութագրմամբ, ինչպես նաև պետական իշխանության համակարգի հիմքում «դեմոկրատական ցենտրալիզմի» սկզբունքի առկայությամբ, գ) Սահմանադրությունն ունի չինական «սահմանադրականության» յուրահատուկ ընկալման նշանակություն, ընդ որում, մի կողմից՝ այն ձեռք է բերում արժեքանական իմաստ, որով նախանշվում են սոցիալիստական ժողովրդավարական ու իրավական վարքագծի կանոններ՝ ինչպես անհատի քաղաքացիական վարքագծում, այնպես էլ հասարակական կյանքում և պետական իշխանության մարմինների լիազորությունների իրականացման գործընթացում, իսկ մյուս կողմից, այն յուրահատուկ մեթոդաբանական դեր է խաղում պետականության

զարգացման գործում:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ ՉԺՀ Սահմանադրություն, մարդու քաղաքական իրավունքներ, մարդու քաղաքացիական իրավունքներ, չինական «սահմանադրականություն»:

Վերջին տասնամյակում ՉԺՀ իրավական համակարգի հիմնախնդիրներին առնչվող հետազոտությունները առանձնակի կարևորություն ու հետաքրքրություն են ստանում գործնականում աշխարհի բոլոր երկրներում՝ պայմանավորված արդի դարաշրջանում Չինաստանի տնտեսական ու քաղաքական աճող դերակատարությամբ, «չինական հրաշքի» իրականության գոյությամբ, ինչու չէ նաև հենց Հայաստանի Հանրապետության հետ քաղաքական, տնտեսական ու մշակութային արդյունավետ հարաբերությունների առկայությամբ:

Հին փիլիսոփա Կոնֆուցիոսն, որն ապրել է Չինաստանում մ.թ.ա. 551-479 թթ., սովորեցնում էր գտնել «բազմազանի և չհամընկնողի ներդաշնակությունը՝ անգամ մեկը մյուսին բացառող հարաբերություններում»: Այս ուսմունքը կրող ժողովուրդը սովորեց կերտել «հետնայելով առաջ գնալ» գաղափարախոսությունը՝ ստեղծելով համամարդկային քաղաքակրթական ժառանգության մաս կազմող սահմանադրական մշակույթ և քաղաքացու իրավունքների արժեքանություն՝ «չինական» առանձնահատկությամբ:

Չինաստանի քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովման ու իրացման երաշխիքների հիմնահարցերը անմասն չեն մնում այդ

իրողություններից: Բնականաբար, այդ խնդրում կարևոր նշանակություն է ստացել 2014-ի 1982 թվականի Սահմանադրությունը (1988, 1993, 1999 և 2004 թվականներին կատարված փոփոխություններով), այդ թվում՝ «Քաղաքացիների հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ 2-րդ գլխում ամրագրված սահմանադրական նորմերը [1, էջ 885]:

Անհրաժեշտ է նկատել, որ չինական իրավական եզրութաբանության մեջ «քաղաքացի» հասկացությունն ունի իմաստաբանական տարբեր նրբերանգներ: Այսպես, եթե 2014 Սահմանադրության 33-56-րդ հոդվածներում քաղաքացու իրավունքներին ու պարտականություններին վերաբերող դրույթներում օգտագործվում է «ցոնգմին» (gongmin) եզրույթը, որն իմաստային առումով նշանակում է քաղաքացի կամ ժողովրդի մաս հանդիսացող մարդ, ապա մյուս կողմից՝ գոյություն ունի նաև «քաղաքացի» եզրույթի մեկ այլ նշանակություն, այն է՝ «ջուոյի» (guoji), որն նշանակում է պետության իրավագործության տակ գտնվող կամ քաղաքացիություն ունեցող անձ:

Եթե համադրենք 2014 Սահմանադրության մեջ ամրագրված «քաղաքացի» եզրույթը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ օգտագործվող «մարդ և քաղաքացի» բառակապակցության հետ, ապա ակնհայտ է դառնում դրանց իմաստաբանական հավասարությունը, ինչն ենթադրում է, որ չինական սահմանադրական դրույթներում «քաղաքացի» եզրույթն ընկալվում է՝ ինչպես «քաղաքացի» նշանակությամբ, այնպես էլ «մարդ և քաղաքացի»

հավաքական հասկացության իմաստով:

Հատկապես 1982 թվականի սահմանադրական գործընթացներով պայմանավորված՝ առանձնակի կարևորություն է տրվել քաղաքացու քաղաքական ու քաղաքացիական իրավունքների ապահովման ու իրացման սահմանադրական երաշխիքների հիմնահարցերին, ինչն իր հերթին դրական ազդեցություն ունեցավ Սահմանադրության կառուցվածքի, այդ թվում՝ քաղաքացիների հիմնական իրավունքների և ազատությունների շարադրման վրա:

Նախ, անհրաժեշտ է նկատել, որ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի դրույթները գործնականում համակարգային հենք են հանդիսացել 2002 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում 2014-ի Սահմանադրության 33-րդ հոդվածի ամրագրման համար, համաձայն որի<sup>1</sup> «Պետությունը հարգում և երաշխավորում է մարդու իրավունքները»: Հենց «մարդու իրավունքներ» եզրույթի սահմանադրական ամրագրմամբ նոր էջ բացվեց Չինաստանում մարդու իրավունքների զարգացման պատմության մեջ:

Հիշարժան է այն հանգամանքը, որ «պետությունը հարգում և երաշխավորում է մարդու իրավունքները» դրույթի ձևակերպման արդյունքում «մարդու իրավունքներ» եզրույթը դադարեց որպես քաղաքական հասկացություն լինելուց և վերածվեց իրավաբանական կատեգորիայի: Ընդ որում, դա առաջադիմական քայլ էր ժամանակակից Չինաստանի սահմանադրական իրավունքի համակարգում, ինչը հավուր պատշաճի արժևորում է մարդու իրավունքները և կատարելագործում նրա քաղաքական ու քաղաքացիական իրավունքների երաշխավորման սկզբունքային դրույթները:

Սակայն, հարկ է նշել, որ սոցիալական կարգի առանձնահատկություններով պայմանավորված՝ տնտեսական

1 Այս հասկացությունների նշանակության ու դրանց համադրման մասին է վկայում չինական մասնագետների բանավեճը: Տե՛ս Китайский информационный Интернет-центр по материалам Агентства Синьхуа. <http://www.chma.org.cn>, տես նաև<sup>a</sup> Дун Юньху. Важный шаг в развитии прав человека в Китае. // Материалы Агентства Синьхуа 09.01.2006. <http://www.russian.xinhuanet.com>.



զարգացման տարբեր մակարդակների, պատմական պայմանների ու մշակութային ավանդույթների առկայությունն ինքնին հանգեցրել է մարդու իրավունքների համընդհանրության վերաբերյալ սեփական մոտեցումների ու պատկերացումների ձևավորմանը: Այսպես՝ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները դիտարկվում են այն իմաստով, որ դրանք «տրամադրվում են պետության կողմից սոցիալիզմի շինարարության նպատակով» [2, էջ 205]: Իսկ քաղաքացու սահմանադրական շատ պարտականություններ ունեն գաղափարախոսական ուղղվածություն և դրանք ընկալվում են ոչ այնքան իրավական, որքան որպես բարոյական պահանջներ (օրինակ՝ «սրբազան պարտք», կամ «որպես երկրի տեր» բառակապությունների առկայությունը և այլն):

Չնայած այն հանգամանքին, որ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը 1998 թվականի հոկտեմբերի 5-ին ստորագրել է, սակայն, մինչ այսօր չի վավերացրել, հետևաբար, չի հանդիսանում ՄԱԿ-ի 1966 թվականի «Մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի մասնակից պետություն, այնուամենայնիվ, հարկ է կարևորել, որ սահմանադրորեն ամրագրվել են մարդու անձնական և քաղաքական շատ իրավունքներ (չնայած ոչ բոլորը), որոնք համարվում են հիմնական կամ առաջնային:

Չինաստանում քաղաքացիների քաղաքացիական և քաղաքական իրավունքների իրականացումը սերտորեն կապվում է սոցիալիստական ժողովրդավարության իրականացման և կատարելագործման հետ<sup>1</sup>: Այսպես՝ 2ԺՀ Մահմանադրության 34-րդ հոդվածի հա-

մաձայն՝ քաղաքացու ակտիվ և պասիվ քաղաքական ընտրական իրավունքների կիրառման համար սահմանվում է 18-ամյա տարիքային ցենզ: Ընդ որում, այդ իրավունքների իրացումը տեղի է ունենում՝ անկախ ազգային և ռասայական պատկանելությունից, սեռից, զբաղմունքի տեսակից, սոցիալական ծագումից, դավանանքից, կրթությունից, գույքային դրությունից և նստակեցությունից<sup>2</sup>: Այդ մասով բացառություն են կազմում օրենքով քաղաքական իրավունքներից զրկված անձինք<sup>3</sup>:

Չինաստանի ընտրական համակարգում հարկ է կարևորել մի առանձնահատկություն, համաձայն որի՝ ընտրողները կամ ընտրական մարմիններն օժտված են իրենց կողմից ընտրված պատգամավորների հետկանչի իրավունքով: Ցանկացած քաղաքացի և ցանկացած կազմակերպություն իրավունք ունի պահանջ առաջադրելու դադարեցնելու այն պատգամավորի լիազորությունները, ով խախտել է օրենքները կամ թույլ է տվել կարգապահական կանոնների խախտում կամ կատարել է պատգամավորական լիազորություններից չբխող լուրջ արարքներ:

2 Քաղաքացիների՝ ընտրելու և ընտրվելու սահմանադրական իրավունքների իրականացման կարգերն իրենց ամրագրումն են ստացել մի շարք իրավական ակտերում, որոնցից կարևորագույններն են՝ «Ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի և ժողովրդական ներկայացուցիչների տեղական ժողովների ընտրությունների մասին», «Ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի կազմավորման մասին», «Ժողովրդական ներկայացուցիչների տեղական ժողովրդական կառավարությունների կազմակերպման մասին», «Քաղաքային բնակիչների կոմիտեների կազմակերպման մասի» և «Գյուղական բնակչության կոմիտեների կազմակերպման մասին» 2ԺՀ օրենքները:

3 Չինաստանում, որպես կանոն, բարձր ակտիվությամբ են անցկացվում ընտրությունները, ընդ որում, վերջին տասնամյակին կազմակերպված ընտրությունների արդյունքներով մասնակիցների ընդհանուր թիվը մշտապես գերազանցել է 90%-ը: Տե՛ս Прогресс Китая в защите прав человека. Белая книга. Пресс-канцелярия Госсовета КНР // Китайский информационный Интернет-центр, <http://www.china.org.cn>. 2009:

1 Քաղաքացիների այդ իրավունքների նկատմամբ ոսնձգությունների դեմ հիմնական երաշխիքներն իրենց ամրագրումը ստացան 2ԺՀ քրեական օրենսգրքով, «Վարչական պատիժների մասին» և «Հասարակական կարգի խախտումների համար պատժի մասին» օրենքներով:

Քաղաքացուն իր քաղաքական իրավունքներից զրկելը թույլատրվում է բացառապես դատարանի որոշմամբ, ինչն իրենից ներկայացնում է լրացուցիչ պատժատեսակ: Այսպես՝ 2ԺՀ քրեական օրենսգրքի 3-րդ գլխի 7-րդ պարագրաֆին համապատասխան՝ քաղաքական իրավունքներից զրկված են հանդիսանում մեկից մինչև տասը տարի ժամկետով պատիժ կրող անձինք: Իսկ նույն օրենսգրքի 54-րդ հոդվածը սահմանում է, որ քաղաքական իրավունքներից զրկելը ավելի ընդգրկուն բովանդակություն ունի և ներառում է ոչ միայն ընտրելու և ընտրվելու իրավունքից զրկելը:

Ինչ վերաբերում է քաղաքական իրավունքներից զրկված անձին, ապա արգելվում է նրան հրապարակավ ելույթներ ունենալ, մասնակցել հավաքների, ճանապարհորդել, զբաղեցնել պաշտոններ պետական մարմիններում, ինչպես նաև ղեկավար պաշտոններ՝ պետական ընկերություններում, ձեռնարկություններում, կազմակերպություններում և ժողովրդական կուլեկտիվներում և այլն:

Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների սահմանման հարցում կարևորվում է Սահմանադրության 35-րդ հոդվածով ամրագրված դրույթը, համաձայն որի՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության քաղաքացիներն ունեն խոսքի, մամուլի, հավաքների, միությունների, փողոցային երթերի ու ցույցերի ազատություն: Միաժամանակ, հարկ է նկատել, որ Սահմանադրությամբ չի նախատեսվում քաղաքացու՝ այլ քաղաքացիների հետ քաղաքական կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու ու դրանցից ազատորեն դուրս գալու իրավունքը:

Իսկ Սահմանադրության 36-րդ հոդվածն ամբողջությամբ նվիրված է կրոնին և կրոնական գործունեությանը: Ընդ որում, հռչակելով դավանանքի ազատություն, միաժամանակ արգելվում է հարկադրել կրոնի դավանման կամ կրոնի չդավանման կամ այդ հիմքով որևէ

խտրականություն ինչպես պետական մարմինների, այնպես էլ հասարակական կազմակերպությունների և առանձին անձանց կողմից:

Սահմանադրության նույն հոդվածով սահմանվել են կրոնական գործունեության իրականացման կամ վարման սահմանադրական երաշխիքներ, այդ թվում՝ արգելելով այդ գործունեությունն օգտագործել հասարակական կարգը խախտելու, քաղաքացիների առողջությանը վնաս պատճառելու և կրթության պետական համակարգին վնասելու համար: Միաժամանակ, հռչակվել է, որ կրոնական կազմակերպություններն ազատ են օտարերկրյա վերահսկողությունից, ինչը կապված է, նախ և առաջ, Չինաստանի պատմական փորձի հետ<sup>1</sup>:

Ամրագրելով քաղաքացիների անձնական ազատության անձեռնմխելիությունը, Սահմանադրության 37-րդ հոդվածը միաժամանակ նախատեսում է հետևյալը՝ ոչ մի քաղաքացի չի կարող կալանավորվել այլ կերպ, քան հասարակական անվտանգության մարմինների թույլտվությամբ, ժողովրդական դատախազության կամ ժողովրդական դատարանի որոշմամբ: Ընդ որում, օգտագործելով սահմանադրական այդ պահանջը, Սահմանադրությունը նույն հոդվածի ուժով արգելում է կատարել քաղաքացիների անօրինական խուզարկություն կամ անձին զրկել ազատությունից կամ այն սահմանափակել անօրինական կերպով կալանքի տակ պահելով կամ անօրինական գործողու-

1 Ըստ չինական աղբյուրների՝ բազմիցս բռնկված «կրոնական հակամարտությունները» հրահրվել և օգտագործվել են օտարերկրյա տերությունների կողմից՝ Չինաստանում իրենց տիրապետությունն ուժեղացնելու համար, կամ «արևմտյան» եկեղեցիները ծայրահեղ թշնամական դիրք են գրավել ժամանակակից Չինաստանի հանդեպ: Մանրամասն տես История Китая / Под редакцией А. В. Меликсетова. -М.: 2004.; Религия и свобода совести в Китае. Белая книга. Пресс-канцелярия Госсовета КНР // Китайский информационный Интернет-центр, <http://www.china.org.cn>. 2003:

թյուններով<sup>1</sup>:

Չինաստանի իրավապահ մարմինները, այլ կազմակերպությունները, այլք պարտավոր են ոչ միայն հարգել քաղաքացու անձնական ազատության անձեռնմխելիությունը, այլև սատար կանգնել դրան: Նույնը վերաբերում է քաղաքացիների պատվի և արժանապատվության անձեռնմխելիությանը՝ «հոդվ. 38», բնակարանի անձեռնմխելիությանը՝ «հոդվ. 39», նամակագրության ազատությանն ու գաղտնիության իրավունքին՝ «հոդվ. 40», մեղադրյալի պաշտպանության իրավունքին՝ «հոդվ. 125» և այլն<sup>2</sup>:

Միաժամանակ, Սահմանադրության 38-րդ հոդվածն ամրագրելով ՉԺՀ քաղաքացիների պատվի և արժանապատվության անձեռնմխելիությունը, արգելում է քաղաքացիներին որևէ կերպ ենթարկել վիրավորանքի, զրպարտության, կեղծ մեղադրանքների և հալածանքի: Նման ձևակերպմամբ փորձ է արվել վերացնելու «կուլտուրական հեղափոխության» ժամանակաշրջանում հասարակական կարգի զանգվածային խախտումների հնարավոր կրկնումը:

Հարկ է նկատել, որ Սահմանադրության մեջ ուղղակի բացակայում է

---

1 Սահմանադրության այդ դրույթներն իրենց զարգացումն են ստացել հետևյալ օրենսդրական ակտերում՝ «Ոստիկանության մասին», «Դատախազությունների մասին», «ՉԺՀ դատարանների մասին», «Բանտերի մասին» ՉԺՀ օրենքներում և ՉԺՀ քրեադատավարական օրենքում:

2 Սահմանադրության 39-րդ հոդվածով նաև արգելվում է քաղաքացու բնակարանի անօրինական խուզարկումը և բնակարան անօրինական մուտք գործելը: Միաժամանակ, Սահմանադրության 40-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ քաղաքացիների նամակագրության ազատության և գաղտնիության իրավունքը կարող է սահմանափակվել հասարակական անվտանգության և դատախազության մարմինների կողմից՝ օրենքով սահմանված կարգով: Դրա հետևանքով, նամակագրության ստուգումը կարող է իրականացվել ինչպես քրեական գործերի հետաքննության շրջանակներում, այնպես էլ «պետական անվտանգության շահերից ելնելով»: Նամակագրության ստուգմանն առնչվող դրույթները վերջին դեպքում սահմանված են «Պետական անվտանգության մասին» ՉԺՀ օրենքում:

վարչական որոշումների դատական բողոքարկման իրավունքն ամրագրող նորմ, սակայն քաղաքացու անձնական ազատության, պատվի ու արժանապատվության պաշտպանության խնդրի համատեքստում Սահմանադրության 41-րդ հոդվածում առկա է այլ իրավական կարգավորում, համաձայն որի՝ ՉԺՀ քաղաքացիներն իրավունք ունեն ցանկացած պետական մարմնի կամ պետական ծառայողի հասցեին քննադատությամբ կամ առաջարկություններով դիմելու, իրավունք ունեն գանգատներով, մեղադրանքներով կամ հայտարարություններով համապատասխան պետական մարմնին դիմելու՝ ցանկացած պետական մարմնի կամ պետական ծառայողի կողմից օրենքի կամ ծառայողական պարտքի խախտման առիթով:

Իսկ պետական մարմինները, Սահմանադրության նույն հոդվածի պահանջներին համապատասխան, պարտավոր են քննության առնել քաղաքացիների գանգատները, մեղադրանքները և հայտարարությունները փաստերի ստուգման միջոցով, և, ընդ որում, պատասխանատվություն կրել դրանց չլուծման կամ ոչ պատշաճ լուծման համար: Դրա հետևելու, սահմանադրորեն ամրագրվում է, մի կողմից, մարդկանց՝ փաստերի խեղաթյուրմամբ և նենգափոխմամբ զրպարտելու և վարկաբեկելու, և, մյուս կողմից՝ քաղաքացիների վրա ճնշում գործադրելու և նրանցից վրեժխնդիր լինելու անթույլատրելիությունը<sup>3</sup>:

---

3 Սահմանադրական հիշատակված դրույթներն իրենց զարգացումն են ստացել ՉԺՀ Վարչադատավարական օրենքում և «Վարչական գործողությունների վերանայման մասին» ՉԺՀ օրենքում: Ընդ որում, ՉԺՀ Վարչադատավարական օրենքի համաձայն՝ քաղաքացիները, իրավաբանական անձինք կամ այլ կազմակերպություններ այն դեպքում, երբ նրանք գտնում են, որ վարչական մարմինների կամ վարչական աշխատողների կոնկրետ գործողությունների հետևանքով իրենց օրինական իրավունքներին և շահերին վնաս է պատճառվել, իրավունք ունեն դատարան հայց ներկայացնելու՝ բողոքարկելով վարչական մարմինների կամ մեղավոր աշխատակիցների գործողությունները: «Վար-

Միաժամանակ, Սահմանադրության նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական մարմինների և պետական ծառայողների կողմից քաղաքացիական իրավունքների նկատմամբ ոտնձգությունների հետևանքով վնաս կրած անձինք ունեն փոխհատուցում ստանալու իրավունք [3, էջ 401]:

Սահմանադրական մակարդակով համապատասխան կարևորություն է տրվել նաև ազգերի և ժողովուրդների իրավունքների իրացման հիմնախնդիրներին: Այդ առումով առաջնահերթ ուշադրության է արժանի ժողովրդի կյանքի և զարգացման իրավունքը: Ընդ որում, Չինաստանի կոմունիստական կուսակցությունը մշտապես իր հիմնական խնդիրն է համարում պետության ինքնիշխանության ու անկախության պաշտպանումը, ժողովրդի իրավունքների երաշխավորումն ու զարգացումը, իսկ կյանքի ու զարգացման իրավունքը համարում է մարդու կարևորագույն իրավունք [4, էջ 21]:

Չնայած այն, որ հիշատակված իրավունքը Սահմանադրության տեքստում չի արձանագրվում առանձին նորմի կամ դրույթի ձևով, սակայն այդ գաղափարն առկա է ամբողջ Հիմնական օրենքով: Այդպիսի եզրակացություն կարելի է անել՝ վերլուծելով Սահմանադրության նախաբանի և 1-ին գլխի բովանդակությունը: Այսպես, Սահմանադրության 4-րդ հոդվածում սահմանվում է, որ «Պետությունը, հաշվի առնելով ազգային փոքրամասնությունների առանձնահատկությունները և կարիքները, օգնում է ազգային փոքրա-

մասնություններին՝ արագացնելու տարածքների տնտեսական և մշակութային աճերի զարգացումը»:

Միաժամանակ, նույն իրավունքի արդյունավետ իրացման պետական երաշխիքների մասին է հիշատակվում Սահմանադրության 14-րդ հոդվածում, որով նախատեսվում է պետության պարտավորությունը՝ կուտակման և սպառման միջոցները իրատեսորեն բաշխելու վերաբերյալ, հաշվի առնել պետական, կոլեկտիվ և անձնական շահերը արտադրության զարգացման հիման վրա՝ աստիճանաբար բարելավելով ժողովրդի նյութական և հոգևոր կյանքը: Նույն այդ նպատակին է ծառայում նաև պետության կողմից հիմնված և կատարելագործվող սոցիալական ապահովության համակարգը, որը համապատասխանում է տնտեսական զարգացման մակարդակին:

Չին ժողովրդի կյանքի և զարգացման իրավունքի երաշխիքներն արտացոլված են նաև Սահմանադրության 19-24-րդ և 26-29-րդ հոդվածներում: Այդ հոդվածներում նախատեսված են պետության պարտավորությունները ժողովրդի կյանքի ու զարգացման իրավունքի ապահովման գործին ծառայող հասարակական կյանքի տարբեր ոլորտների համակողմանիորեն զարգացնելու մասին:

Հարկ է նշել, որ այդ հիմնարար իրավունքի իրացման հատուկ իրավաբանական երաշխավորման մակարդակը փաստորեն որևէ ազդեցություն չունի, քանի որ ժողովրդի կյանքի ու զարգացման իրավունքի իրական երաշխավորմանը կարելի է հասնել միայն ընդհանուր երաշխիքների ընդլայնման և ամրապնդման ճանապարհով:

Նաև նշենք, որ, համաձայն Սահմանադրության 4-րդ հոդվածի, յուրաքանչյուր ազգություն Չինաստանում օգտվում է իր լեզվի և գրերի օգտագործման ու զարգացման ազատությունից, իր ավանդույթներն ու սովորույթները պահպանելու կամ փոփոխելու ազատությունից, որը հանդիսանում է ազգությունների գոյա-

չական գործողությունների վերանայման մասին» ՉԺՀ օրենքը կիրառվում է այն դեպքերում, երբ քաղաքացիները, իրավաբանական անձինք կամ այլ կազմակերպություններ գտնելով, որ կոնկրետ վարչական գործողություններով խախտվել են իրենց օրինական իրավունքները և շահերը, դիմում են վարչական մարմիններ՝ վարչական գործողությունների վերանայման մասին խնդրանքով, իսկ այդ վարչական մարմիններն ընդունելով նման խնդրանքը քննարկման՝ ընդունում են վարչական գործողությունները վերանայելու որոշում// Конституция и основные законодательные акты Китайской Народной Республики. М., 1985, с. 485.

պահպանման հիմնական երաշխիքը:

Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է կարևորել, որ Սահմանադրության 51-րդ հոդվածին համապատասխան՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության քաղաքացիներն, իրականացնելով իրենց ազատությունները և իրավունքները, չպետք է վնաս պատճառեն պետության, հանրության և կոլեկտիվի շահերին, այլոց օրինական ազատություններին ու իրավունքներին: Միաժամանակ Սահմանադրության 33-րդ հոդվածը հռչակում է, որ յուրաքանչյուր քաղաքացի օգտվում է Սահմանադրությամբ նախատեսված իրավունքներից և պետք է կատարի սահմանադրական պարտականությունները: Միևնույն ժամանակ, օգտվում է օրենքներով նախատեսված իրավունքներից և պետք է կատարի օրենքներով նախատեսված պարտականությունները:

Այդ առումով, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ սահմանադրական պարտականություններ ամրագրող առանձին հոդվածներ բովանդակում են տարբեր մեկնաբանվող դրույթներ: Այսպես, Սահմանադրության 55-րդ հոդվածը սահմանում է, որ Հայրենիքի պաշտպանությունը և ազդեցիկի հետ մղելը համարվում են ՉԺՀ յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքը, իսկ գինվորական ծառայությունը և Ժողովրդական աշխարհագրորին օրենքով սահմանված մասնակցությունը՝ պատվավոր պարտականությունը:

Նույն Սահմանադրության 52-րդ հոդվածը հռչակում է, որ ՉԺՀ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է պաշտպանել պետության միասնությունը և երկրի բոլոր ազգերի ու ազգությունների համախմբվածությունը, իսկ 54-րդ հոդվածով նախատեսվում է, որ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է պահպանել Հայրենիքի անվտանգությունը, պատիվն ու շահերը, և չպետք է կատարել այնպիսի գործողություններ, որոնք կվ-

նասեն նրան:

Այսպիսի ձևակերպումների համադրված վերլուծությունից հետևում է, որ այդ դրույթների տարրնկալվող կամ երկիմաստ մեկնաբանությունները կարող են առաջացնել բացասական հետևանքներ, օրինակ, գործնականում Ժողովրդավարական բարեփոխումներ անցկացնելու ցանկացած պահանջ կարելի է որակել որպես Սահմանադրության այդ հոդվածներով պաշտպանվող արժեքների դեմ ուղղված ոտնձգություն:

Այսպիսով՝ չնայած այն հանգամանքին, որ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության 2002 թվականի սահմանադրական կարգավորումների հիմքում ակնհայտ է դառնում հենց անձի սահմանադրական կարգավիճակի հիմնական տարրերի ընդլայնման հնարավորությունը, այնուամենայնիվ, ելնելով մարդու և քաղաքացու քաղաքական, քաղաքացիական իրավունքների վերաբերյալ չինական առանձնահատկությամբ առկա պատկերացումներից, կարելի է եզրահանգել հետևյալը.

ա) Չինաստանում մարդու իրավունքների իրացման բնագավառում առկա է լայն հնարավորություն, այդ իրավունքների իրացման հիմքում ընկած է արդարության սկզբունքը, սակայն, սահմանադրական առանձին ձևակերպումներ հստակեցման կարիք ունեն:

բ) Չինաստանի Ժողովրդական Հանրապետության 1982 թվականի Սահմանադրությունը բովանդակում է «Ժողովրդավարության» տարրեր, ինչը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում, մասնավորապես, պետության քաղաքական էությունը բնութագրվում է որպես Ժողովրդի Ժողովրդավարական դիկտատուրա, իսկ պետական իշխանության համակարգի հիմքում դրված է «դեմոկրատական ցենտրալիզմի» սկզբունքը,

գ) Սահմանադրությունն ունի չինական «սահմանադրականության» յուրա-

հատուկ ընկալման նշանակություն, ընդ որում, մի կողմից՝ այն ձեռք է բերում արժեքանական իմաստ, որով նախանշվում են սոցիալիստական ժողովրդավարական ու իրավական վարքագծի կանոններ ինչպես անհատի քաղաքացիական վարքագծում, այնպես էլ հասարակական կյանքում և պետական իշխանու-

թյան մարմինների լիազորությունների իրականացման գործընթացում, իսկ մյուս կողմից, այն յուրահատուկ մեթոդաբանական դեր է խաղում պետականության զարգացման գործում:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝ 13.03.2015

## ՊՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Конституция Китайской Народной Республики / Конституции государств Азии. В 3 томах. Том 3. Дальний Восток // Под ред. Т.Я.Хабриевой., М.: 2010,
2. Арутюнян Г.Г. Баглай М.В. Конституционное право: Энциклопедический словарь. М.: 2006:
3. Փոխհատուցման գումարի վճարման կարգը սահմանված է «Պետական փոխհատուցումների մասին» ՉԺՀ օրենքով // Конституция и основные законодательные акты Китайской Народной Республики. М.: 1985:
4. Материалы XII Всекитайского съезда Коммунистической партии Китая. – Пекин, 1982:

## ПРОБЛЕМЫ КОНСТИТУЦИОННОГО ЗАКРЕПЛЕНИЯ ПОЛИТИЧЕСКИХ И ГРАЖДАНСКИХ ПРАВ ЧЕЛОВЕКА И ГРАЖДАНИНА В КИТАЙСКОЙ НАРОДНОЙ РЕСПУБЛИКЕ

**ГАЙК ХАЧАТРЯН**

*Кандидат юридических наук*

Статья посвящена исследованию особенностей конституционного закрепления прав человека и гражданина в Китайской Народной Республике.

Проанализированы современные теоретико-правовые проблемы системы политических и гражданских прав человека, представлено содержание и значение конституционных прав граждан КНР с учетом специфики китайской правовой системы.

Дата предоставления статьи: 15.02.2015

## MAIN PROBLEMS OF CONSTITUTIONAL CONSOLIDATION OF THE HUMAN'S AND CITIZEN'S POLITICAL AND CIVIL RIGHTS IN THE NATIONAL REPUBLIC OF CHINA

**HAYK KHACHATRYAN**

*Candidate of Law*

The article investigates the peculiarities of the constitutional consolidation of human and civil rights in the National Republic of China.

In the article modern theoretical and legal problems of the political and human civil rights system is analyzed.

Considering the specifics of the Chinese legal system the content and significance of the constitutional rights of Chinese citizens are presented.

Article submission date: 15.02.2015

**ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՓՈԽՎԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հողվածում վերլուծվում է Հայաստանի Հանրապետությունում պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման փոխհարաբերությունները, համագործակցության ձևերը և ոլորտները: Վերլուծվում են ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման փոխհարաբերությունները կարգավորող նորմերը:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** պետական կառավարում, տեղական ինքնակառավարում, տեղական ինքնակառավարման մարմիններ, ՀՀ Սահմանադրություն, փոխհարաբերություններ:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Սահմանադրության նշված հոդվածը հիմք է հանդիսանում նշելու, որ պետական իշխանության մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հարաբերությունների, այդ թվում՝ փոխգործակցության հիմնահարցերը նույնպես պետք է իրականացվեն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Ինչպես արդարացիորեն նշում են պրոֆեսորներ Ս.Վ.Կլիմենկոն և Ա.Լ.Չիչերինը, հասարակությունը «մարդկանց միություն է, որոնք ունեն բնակության ընդհանուր տարածք, ընդհանուր մշակույթ և միևնույն կենսակերպը» [1, էջ 52]:

Ըստ գերմանացի իրավագետ Մ.Վեբերի՝ հասարակությունը մարդկանց փոխգործունեություն է, որը սոցիալական, այսինքն՝ ուրիշ մարդկանց գործունեությամբ կողմնորոշվելու վրա է հենվում: Բացահայտ է, որ հասարակությունը բարդ կառուցվածք ունի: Առաջին հերթին պետք է նշել հասարակության հիերարխիկ կազմությունը: Այն ունի որոշակի տարածքային հատված, ուստի երբ խոսք է գնում տեղային միության մասին, ենթադրում է հասարակության՝ ինչ-որ մի հատկանիշով առանձնացող մասը [2, էջ 5]:

Հասարակությունը սերտորեն կապված է քաղաքական իշխանության հետ: Իշխանությունը սոցիալական հարաբերությունների դրսևորման ձև է, որ բնութագրվում է մարդկանց, սոցիալական խմբերի և դասերի գործունեության ուղղվածության վրա ներգործելու կարողությամբ, տնտեսական, գաղափարախոսական և կազմակերպչական-իրավական միջոցներով [3, էջ 9]:

Հայաստանի Հանրապետությունում հանրային կառավարումը իր մեջ ներառում է դրա իրականացման երկու միջոց՝ պետական և տեղական ինքնակառավարումը: Պետական կառավարումը իրականացվում է պետական իշխանության մարմինների միջոցով երկրի ամբողջ տարածքում, իսկ տեղական ինքնակա-

ռավարումը իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ղեկավարի և ավագանու, միջոցով՝ քաղաքային և գյուղական համայնքներում: Թերևս, կարելի է համաձայնվել այն պնդման հետ, որ տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ պետական իշխանության դերի բարձրացումը չպետք է նշանակի պետական միջամտություն տեղական նշանակության հարցերի վերաբերյալ որոշումների ընդունմանը, այլ պետք է նպատակ ունենա բարձրացնելու պետական իշխանության դերակատարումը տեղական ինքնակառավարման կայացման, զարգացման և իրականացման արդյունավետության բարձրացման գործում [4, էջ 37–38]:

Տեղական ինքնակառավարումը կարող է լինել արդյունավետ ոչ միայն այն ժամանակ, երբ պետությունը օրենսդրորեն կամրագրի տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, այլ նաև կստեղծի բավարար պայմաններ տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման համար, կերաշխավորի դրանց ինքնուրույնությունը և կբացառի, ինչպես տեղական ինքնակառավարումը պետական իշխանության մաս դարձնելը, այնպես էլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նույնացումը: Այլապես նման պարագայում խոսք չի կարող գնալ տեղական ինքնակառավարման գլխավոր սկզբունքներից մեկի՝ ինքնուրույնության մասին, հակառակ դեպքում իմաստագրվում է տեղական ինքնակառավարումն ընդհանրապես:

Տեղական ինքնակառավարումը հանդիսանում է բնակչության կողմից ինքնուրույն ձևավորվող մարմին, որը ունի ապակենրոնացված բնույթ և դժվար է համաձայնվել, որ դրանք տեղերում հանդիսանում են պետական իշխանության շարունակությունը [5, էջ 55]:

Մյուս կողմից՝ տեղական ինքնակա-

ռավարումը դժվար է անվանել նաև պետական իշխանության մասը, քանի որ այն իր գործունեությունը իրականացնում է միայն համայնքի տարածքում և իրականացնում է պետական իշխանությունից տարբերվող լիազորություններ:

Միաժամանակ տեղական ինքնակառավարման մարմինները կարող են դիտարկվել որպես պետության հիմքը և հանրային կառավարման մի մասը: Սակայն, եթե մենք դրանք ընդունենք, որ այն պետական իշխանության մի մասն է կազմում, ապա դա ինքնին խոսում է համայնքներում ինքնակառավարման բացակայության մասին:

Անհրաժեշտ է նկատել, որ պետության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները պետք է կառուցված լինեն փոխադարձ հավասարության հիման վրա, որտեղ սակայն հիմնական դերը պետք է հատկացված լինի պետությանը՝ օրենսդրորեն կարգավորելով, օժանդակելով և երաշխավորելով տեղական ինքնակառավարումը:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունում առկա են գյուղական և քաղաքային համայնքներ, որոնցում իրականացվում է տեղական ինքնակառավարում: Համայնքների սահմանները որոշվում են օրենքով՝ օրենքով սահմանված կարգով: Օրենսդրությամբ ամրագրված է նաև, որ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը բաժանված է համայնքների միջև:

Մասնագիտական գրականության մեջ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման հարաբերակցության հիմքում նախանշվում են հետևյալ սկզբունքները, որոնք կարևոր նշանակություն ունեն փոխադարձ ու վստահելի հարաբերությունների ձևավորման համար: Մասնավորապես անհրաժեշտ է կարևորել ժողովրդի իշխանության սկզբունքը, որի համաձայն՝ թե՛ պետական իշխանությունը, թե՛ տե-



ղական ինքնակառավարումը հանդիսանում են ժողովրդի իշխանության իրականացման անմիջական ձևեր [6, էջ 69], ինչպես նաև պետության և տեղական շահերի համադրման սկզբունքը, որը պայմանավորված է սոցիալական, մշակութային, ֆինանսական ու այլ ոլորտներում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների հստակ բաժանմամբ [7, էջ 125]:

Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման փոխգործակցության հաջորդ եղանակը համագործակցությունն է: Տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող օրենսդրության վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում այդպիսի համագործակցության ոլորտներ կարող են հանդիսանալ՝

1) տեղական ինքնակառավարման ընդհանուր սկզբունքների սահմանումը.

2) տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների սահմանումը.

3) տեղական ինքնակառավարման ոլորտում պետական մարմինների լիազորությունների սահմանումը.

4) տեղական ինքնակառավարման մարմիններին պետական լիազորությունների պատվիրակումը.

5) տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ հսկողության իրականացումը:

Պետական և տեղական ինքնակառավարման փոխհարաբերությունները կրում են յուրահատուկ բնույթ և յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնենք, որ պետական իշխանությունը և տեղական ինքնակառավարումը նմանատիպ չեն և ավելի շատ հակադրվող երևույթներ են, ինչպես, օրինակ, պետական իշխանությունը և հասարակությունը: Այսինքն՝ դրանք փոխկապակցված են, սակայն տարբերվում են իրենց ձևավորման մոդելներով:

Այս իմաստով արդարացի է պրոֆե-

սոր Օ.Ն.Վանենի այն դիտարկումը, ըստ որի՝ տեղական ինքնակառավարումը հաջողությամբ իրականացվում է այնտեղ, որտեղ քաղաքացիական հասարակությունը կայացել է և տեղական ինքնակառավարումը չի ենթադրում միայն տեղական ինքնակառավարման մարմինների գործունեություն, այլ իր մեջ ներառում է նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ [6, էջ 66]:

Չնայած այն հանգամանքին, որ պետական իշխանությունը և տեղական ինքնակառավարումը նույն հանրային կառավարման տարբեր ձևերն են [9, էջ 40], այնուամենայնիվ, ենթադրվում է, որ նրանք ունեն նաև մի շարք ընդհանրություններ: Դրանք են՝ 1) պետական և տեղական իշխանությունները ձևավորվում են վարչատարածքային բաժանման հիման վրա, 2) և՛ պետական, և՛ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց գործառույթները իրականացնում են հատուկ մարմինների միջոցով, որոնք օժտված են իշխանական լիազորություններով, 3) միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն են իրավասու սահմանել հարկեր, տուրքեր և վճարներ և իրականացնել դրանց հավաքագրում, 4) միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն են իրավասու իրենց լիազորությունների շրջանակում ընդունել նորմատիվ իրավական ակտեր, 5) միայն իշխանության այդ երկու մարմիններն են օժտված հարկադրանք կիրառելու լիազորությամբ [9, էջ 10-11]:

Այսպիսով՝ պետության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները կարելի է բնորոշել երկու հիմնական ձևով՝ տեղական ինքնակառավարման համակարգում և տեղական ինքնակառավարման նկատմամբ պետական հսկողություն: Եվ եթե տվյալ դեպքում համակարգումը ենթադրում է հարաբերությունների երկու մասնակցի փոխհարաբերություններ,

ապա պետական հսկողությունը ներառում է տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ պետական կառավարման մարմինների միակողմանի գործողություններ [10, էջ 38-40]:

Կարելի է առանձնացնել մի շարք ուղղություններ, որտեղ պետությունը ունենում է իր ազդեցությունը տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վրա: Այսպես՝

1) պետությունը օրենսդրորեն սահմանում է տեղական նշանակության հարցերի այն շրջանակը, որոնք կարող են փոփոխվել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Օրինակ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ համայնքի ավագանին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը:

2) պետական օժանդակության, մասնավորապես ֆինանսական օժանդակության ցուցաբերում տեղական հարցերի լուծման ժամանակ: Օրինակ՝ պետական բյուջեից տրամադրվող դոտացիաներ՝ այդ թվում համահարթեցման սկզբունքով տրամադրվողները և ֆինանսական նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ):

3) համայնքի տարածքում օրինականության պահպանման՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ հսկողության իրականացում: Օրինակ՝ «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «թ» կետի համաձայն՝ վերահսկիչ պալատի գործառույթներից է պետական ու համայնքային սեփականության (ներառյալ՝ մտավոր սեփականությունը, մշակութային արժեքները) կառավարման, օգտագործման՝ օտարման, մասնավորեցման, վարձակալության և անհատույց օգտագործման,

հողամասի կառուցապատման, հավատարմագրային կառավարման, կոնցեսիայի նկատմամբ վերահսկողության իրականացումը,

4) տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային ծառայողների համար սոցիալական երաշխիքների ապահովում,

5) տեղական ինքնակառավարման մարմիններին մեթոդաբանական օգնության տրամադրում:

Վերը նշված ցանկը կարելի է լրացնել նաև, որ պետությունը տեղերում ձևավորում է մարմիններ, որոնք գործում են տեղական իշխանության մարմինների գործունեությանն զուգահեռ:

ՀՀ Սահմանադրության 105-րդ հոդվածի տրամաբանությամբ՝ պետությունը համայնքներին կարող է պատվիրակել նաև իր լիազորությունների մի մասը, որոնց իրականացման նկատմամբ հսկողության կարգը տարբերվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվող հսկողությունից:

Տեղական ինքնակառավարման վրա ազդեցության միջոցը պետք է հանդիսանա օրենսդրական կարգավորումը, ուր պետական մարմինների միջամտությունը պետք է լինի հնարավորինս քիչ: Տվյալ դեպքում, տեղական ինքնակառավարման ինքնուրույնության գլխավոր երաշխիքը հանդիսանում է ՀՀ Սահմանադրությունը, որը միաժամանակ կարգավորում է տեղական ինքնակառավարման հետ կապված առավել կարևոր իրավահարաբերությունները:

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ իրականացվող պետական հսկողությունը կարող է դրսևորվել տարբեր ձևերով.

1) դատական հսկողություն, որն իրականացվում է սահմանադրական, վարչական և ընդհանուր իրավասության դատարանների միջոցով: Յուրաքանչյուր գործի քննության ժամանակ դա-

տարանները քննելով գործը ուսումնասիրում են և գնահատական են տալիս տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործողություններին, անգործությամբ և կայացված ակտերին,

2) վարչական հսկողություն, որն իրականացվում է տարբեր միջոցներով, մասնավորապես՝ ստուգումների, բացատրությունների ստացման, դիտարկումների իրականացման միջոցով: Վարչական հսկողությունը նպատակն ունի ապահովելու օրենքների և այլ ակտերի պահանջների կատարումը և կատարվում է բացառապես օրենքի հիման վրա և օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև ունի առավելապես կանխարգելիչ բնույթ [11, էջ 88-89]:

Մեր օրենսդրությամբ ամրագրվում է նաև, որ պետությունն իրականացնում է հսկողություն նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընդունած ակտերի օրինականության և իրավաչափության նկատմամբ: Այսպես՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտերի նախագծերն ուղարկվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննություն իրականացնելու, իսկ այդ ակտերի ընդունումից հետո՝ պետական գրանցման ու պաշտոնական հրապարակման համար: Միաժամանակ սահմանված է նաև, որ օրենքով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն չներկայացված նորմատիվ իրավական ակտերը համարվում են անվավեր:

Բացի դրանից՝ անհրաժեշտ է կարևորել այն հանգամանքը, որ տեղական ինքնակառավարումը իր հերթին ունի իր պետության նկատմամբ իր ազդեցության ձևերը: Այդպիսիք կարող են դիտարկվել, օրինակ՝

1) տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների պարտադիր են բոլոր կազմակերպությունների, հաստատությունների համար՝ անկախ դրանց հիմնադրման ձևից և հիմնադրից:

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությամբ որոշակի հարցերի քննարկման համար ստեղծվում են հանձնաժողովներ, վեճերի լուծման համար ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է դատարան դիմելու հնարավորություն,

3) տեղական ինքնակառավարման մարմինները մասնակցում են իրավական ակտերի մշակմանը, ունեն օրենսդրական նախաձեռնությունների ներկայացման հնարավորություն,

4) տեղական ինքնակառավարման մարմինները մասնակցում են ընկտությունների և հանրաքվեների անցկացման կազմակերպմանը,

5) պետական մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակվում են լիազորություններ [12, էջ 218-219, էփ, էջ 30-31]:

Սակայն դիտարկվող համակարգում գլխավոր դերակատարությունը հատկացված է պետությանը, քանի որ հենց պետությունն է օրենքների միջոցով կարգավորում տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման, գործունեության առանձնահատկությունները և սահմանում նրանց լիազորությունները: Բացի այդ, պետությունը իրավասու է պատվիրակել տեղական ինքնակառավարման մարմիններին որոշակի լիազորություններ:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ տեղական ինքնակառավարումը՝ չի նշանակում հանրային իշխանությունից լիովին առանձնացում, միաժամանակ այն լիովին ազատ չէ պետական իշխանության ազդեցությունից:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝  
15.03.2015

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Велихов Л.А., Основы городского хозяйства. Общее учение о городе, его управлении, финансах и местном хозяйстве. М.-Л., Госиздат, 1928.
2. Тихомирова Л.В., Тихомиров М.Ю., Юридическая энциклопедия. М., 1997.
3. Каваленко А.И., Краткий словарь-справочник по теории государства и права. М., 1994.
4. Мокрый В.С. Местное самоуправление: пути становления и развития // Журнал российского права. 2002 №10..
5. Баранчиков В.А. Правовые проблемы становления и развития местного самоуправления в РФ. М., 2005.
6. Ванеев О.Н., Спас М.А. Город и самоуправление: вопросы теории. Красноярск, 2003.
7. Селютина Е.Н. Взаимоотношения органов государственной власти РФ и органов местного самоуправления. Орел, 2003.
8. Пешин Н.Л. Государственная власть и местного самоуправления в России: проблемы развития конституционно-правовой модели. М., 2007.
9. Кочетова Н.М. Соотношение государственной власти и местного самоуправления в РФ// Государственная власть и местное самоуправление. 2003. №1.
10. Пешин Н.Л. Государственная власть и местного самоуправления в России: проблемы развития конституционно-правовой модели. М., 2007.
11. Гусенбеков И.И. Некоторые аспекты взаимодействия органов местного самоуправления с органами государственной власти субъектов РФ // Журнал российского права. 2006. №6.
12. Кашо В.С. Ответственность в системе местного самоуправления. Красноярск, 2005.
13. Ковешников Е.М. Государство и местное самоуправление в России: теоретико-правовые основы взаимодействия. М., 2002.
14. Тимофеев Н.С. Местное самоуправление в системе государственных и общественных отношений. М., 2005.

## СООТНОШЕНИЕ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ И ГОСУДАРСТВЕННОЙ ВЛАСТИ

**ТАРОН МАРГАРЯН**

*Академия государственного управления  
РА, соискатель*

В статье анализируется соотношение органов местного самоуправления и государственной власти в Республике Армения, методы и сферы взаимодействия. Анализируются конституционные нормы, касающиеся органов местного самоуправления и государственной власти.

Дата представления статьи: 15.03.2015

## THE RELATIONSHIP OF THE STATE AND LOCAL GOVERNMENTS

**TARON MARGARYAN**

*Public Administration Academy of the Republic of Armenia, Applicant*

The article analyzes the state and local governments relations and forms of cooperation in the Republic of Armenia. It analyzes the constitutional provisions relating to the local government and public authorities.

Article submission date: 15.03.2015

**ԶԼՄ-ՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ  
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Ժողովրդավարական հասարակությունում անկախ լրատվամիջոցների դերը չափազանց մեծ է և կարևոր: ԶԼՄ-ների գործունեության սկզբունքները, տեղեկատվություն ստանալու և տարարծելու ազատությունը ժողովրդավարության հիմքն են և հադես են գալիս որպես ժողովրդավարական կառույցների հադորդակցային համակարգի անբաժան մաս: Մեծ է ԶԼՄ-ների դերը հատկապես քաղաքացիական հասարակության, անհատի սոցիալական ինքնադրսևորման, հասարակական գիտակցության և աշխարհայացքի ձևավորման գործում: Մինևույն ժամանակ, ԶԼՄ-ները լինելով հասարակության հադորդակցային համակարգի անբաժան մասը, հանրությանը հետաքրքրող իրադարձությունների և հուզող խնդիրների, հասարակությունում տեղի ունեցող գործընթացների, զարգացումների, փոփոխությունների, պետական իշխանության մարմինների գործունեության, պաշտոնատար անձանց գործողությունների և վարքագծի վերաբերյալ հասարակությանը կամ նրա մի մասին ամբողջական տեղեկատվություն տրամադրող սուբյեկտներ են: Դրանից բացի՝ ԶԼՄ-ները հասարակության և պետության միջև հանդես են գալիս յուրօրինակ «միջնորդի» դերում, որոնք սոցիալական, տնտեսական, քաղաքական և հասարակական կյանքի մյուս ոլորտներում գործառում են հասարակական և պետական ինստիտուտների հետ և այդպիսով իրականացում որոշակի հսկողություն հասարակությունում տեղի ունեցող գործընթացների,

պետական կառույցների և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության և նրանց կողմից ընդունվող իրավական ակտերի և որոշումների նկատմամբ:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** ԶԼՄ-ների անկախություն, ԶԼՄ-ների սահմանադրաիրավական երաշխիքներ, խոսքի ազատություն, ԶԼՄ-ների ազատության սահմանափակումներ, սահմանադրական սահմանափակումներ, գրաքննության արգելք:

ԶԼՄ-ների անկախության երաշխիքները, ինչպես ԶԼՄ-ների և պետության հետ փոխհարաբերությունները, կանոնակարգվում են միջազգային նորմերով և պետությունների ներպետական օրենսդրությամբ, որոնցով երաշխավորում է մի կողմից՝ ԶԼՄ-ների անկախությունը, մյուս կողմից՝ պաշտպանվում այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ խոսքի իրավունքը, տեղեկատվություն ստանալու իրավունքը, կարծիքները և համոզմունքներն ազատ արտահայտելու ազատությունը, ինչպես նաև բազմակարծությունը, ԶԼՄ-ների հասարակական վերահսկողությունը, պատասխանատվությունը և այլ հիմնարար արժեքներ: Այսպիսով՝ ԶԼՄ-ների ազատության բովանդակության հիմքում որպես դեկավար սկզբունք ընկած է այն հիմնարար դրույթը, համաձայն որի՝ առանց ԶԼՄ-ների ազատության և բազմակարծության լիիրավ ժողովրդավարության հնարավոր չէ հասնել: ԶԼՄ-ների ազատությունը և անկախությունը ցանկացած ժողովրդավարական հա-

սարակության բնականոն գործունեության անհրաժեշտ նախապայմանն է<sup>1</sup>:

Ամենաընդհանուր իմաստով ՋԼՄ-ների անկախության երաշխիքները հանդիսանում են ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակության կայացման հիմնարար գաղափար, սկզբունք, ժողովրդավարական արժեքների պաշտպանության, այդ թվում նաև մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման անհրաժեշտ միջոցներ: Այդ մասին են վկայում մի շարք միջազգային փաստաթղթեր,<sup>2</sup> որոնցում խոսքի իրավունքի ազատության, կարծիքների և տեղեկատվության ազատության երաշխիքների հիմքում դրված են ժողովրդավարական սկզբունքները և գաղափարները: Այդ մասին են վկայում նաև միջազգային մի շարք կազմակերպությունների և նրանց մարմինների կողմից իրականացվող իրավաստեղծ և իրավակիրառ գործունեությունը: Մասնավորապես, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) բազմիցս հաստատել է, որ ՋԼՄ-ների ազատությունը պահանջում է առանձնակի ուշադրություն և պաշտպանություն, որպեսզի վերջիններս կարողանան ապահովել իրենց վերապահված հասարակական պաշտպանի կարևոր դերակատարությունը և հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղե-

կատվության տարածումը<sup>3</sup>: Մեկ այլ միջազգային մարմին՝ ՄԱԿ-ի կարծիքներն ազատ արտահայտելու հարցերով հատուկ հանձնաժողովը, անդրադարձել է ՋԼՄ-ների միջոցով տեղեկատվության տարածման և իրադարձությունների լուսաբանման երաշխիքների կարևորությանը, որպիսիք են՝ գրաքննության արգելքը, ՋԼՄ-ների ազատ և անխոչընդոտ գործունեությունը, ՋԼՄ-ների գործունեությանը միջամտելու անթույլատրելիությունը, լրագրողների անձնական անձեռնմխելիությունը և բռնություններից պաշտպանությունը, տեղեկատվության անարգել հասանելիությունը, գաղափարների և կարծիքների բազմազանությունը և այլն:

Վերոշարադրյալը թույլ է տալիս եզրակացնելու, որ ժողովրդավարական պետություններում ՋԼՄ-ների անկախության համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները՝

Առաջին՝ ՋԼՄ-ների անկախության ապահովումը հնարավոր չէ առանց համապատասխան իրավական երաշխիքների առկայության, որոնք պետք է ամրագրված լինեն ժողովրդավարական տիպի բոլոր պետությունների սահմանադրություններում: Միևնույն ժամանակ, լրատվամիջոցների անկախության երաշխիքների սահմանադրական ամրագրումից չպետք է տուժն քաղաքացիների այլ հիմնարար իրավունքներն ու ազատությունները, որոնք կարող են առնչվել այլոց իրավունքներին ու ազատություններին, ուստի սահմանադրական երաշխիքները, որպես այդպիսին, չեն կարող լինել անսահմանափակ, այլ ըստ անհրաժեշտության, դրանք պետք է հակակշռեն այլ անձանց իրավունքները և օրինական շահերը, պետության և հասարակության հետաքրքրությունները: Հետևաբար, երաշխիքների ամրագրումից բացի, անհրաժեշտ է, որ-

1 St' u Возчиков В. А.. Медиакультура, телевидение и право на информацию. Философия права. Ростов на Дону. 2005. N 3 С. 68-74.

2 St' u Մարդու իրավունքների Համընդհանուր Հռչակագիրը 1948 թ, հոդված 19: Մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիան 1950թ. հոդված 10: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը 1966 թ. հոդված 19: Եվրոպայի խորհրդի Նախարարների Կոմիտեի 1982 թ.( 70-րդ նստաշրջանում ընդունված) Տեղեկատվության և կարծիքի ազատ արտահայտման մասին հռչակագիրը և այլն:

3 St' u Սմ.: Законы о печати. Журнал Inter – Nations. 10. 04. 2003. с. 111.

պեսզի օրենքով սահմանված լինեն այնպիսի երաշխիքներ, որպիսիք են խոսքի չարաշահումները կանխարգելող ողջամիտ սահմանափակումները և արգելքները, և որոնց ուժով իրավասու մարմինների համար առաջանում են օրենքով սահմանված պարտավորություններ և պատասխանատվություն:

Երկրորդ՝ ժողովրդավարական ԶԼՄ-ների երաշխիքների արդյունավետությունը կախված է պետության տեղեկատվական-հաղորդակցական համակարգում գործուն և իրական մեխանիզմներից, որոնք ուղղված են ԶԼՄ-ների ոլորտի գործունեության ազատությանն ու անկախությանը: Այսպես՝ ԶԼՄ-ների անկախության երաշխիքների նորմեր առկա են մի շարք ժողովրդավարական պետությունների, մասնավորապես՝ ԱՄՆ, Ավստրիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Նիդերլանդների, Նորվեգիայի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի, Վրաստանի սահմանադրություններում, նաև Մեծ Բրիտանիայի և Ավտրալիայի չգրված սահմանադրություններում: Ֆինլանդիայում և Ավստրիայում հաստատված են և գործում են ԶԼՄ-ների ազատության ապահովման արդյունավետ մեխանիզմներ, որոնք, ուղղված են պետական մարմիններից լրատվամիջոցների ազատությանն ու անկախությանը: Այսպես՝ Ֆինլանդիայի «Զանգվածային լրատվամիջոցներով արտահայտվելու ազատության մասին» օրենքում (1 հունվարի, 2004 թ.) սահմանված է, որ պետական մարմնի միջամտությունը, որպես այդպիսին, ԶԼՄ-ների գործունեության մեջ կարող է իրավաչափ լինել միայն այն դեպքում, երբ այն ամբողջ ծավալով անհրաժեշտ է և հանգամանորեն հաշվի է առնում արտահայտվելու ազատության կարևորությունը ժողովրդավարական հասարակությունում<sup>1</sup>, ինչն ըստ էության համապա-

տասխանում և բխում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներից:

Երրորդ՝ թեև ԶԼՄ-ների ազատությանը ժողովրդավարական պետության տեղեկատվական հասարակության անհրաժեշտ և պարտադիր բաղադրատարրն է, այդուհանդերձ, հենց այդ ազատությունն է, որպես ամենախոցելին, պահանջում առանձնակի պաշտպանություն և իրավական կարգավորում, հատկապես, երբ խնդիրն առնչվում է պետական իշխանության մարմինների ոչ իրավաչափ միջամտությանը: Շատ կարևոր է, որպեսզի իշխանական մարմիններից լրատվամիջոցների անկախությունը չհանգեցնի վերջիններիս ազատության սոցիալական նշանակության և իմաստի աղավաղմանը, որպիսիք են որոշ դեպքերում՝ անվանարկումը (դիֆամացիա), զրպարտությունը, վիրավորանքը, ազգային, կրոնական և ռասայական անհանդուրժողականությունը և այլն: Որոշ պետությունների սահմանադրությունները, (ՌԴ, Ուկրաինա, Մոլդովա, Ղազախստան և այլն) ԶԼՄ-ների անկախության և ազատության ապահովման երաշխիքների ամրագրումից բացի սահմանում են արգելող կամ սահմանափակող բնույթի երաշխիքներ, որոնցով, մասնավորապես արգելվում է սոցիալական, ռասայական, կրոնական կամ ազգային հողի վրա թշնամանք կամ ատելություն սերմանող քարոզչությունը<sup>2</sup>: Նման արգելք պարունակող նորմը, ըստ էության, որոշակիորեն նպաստում է ԶԼՄ-երի արտահայտվելու ազատության և զանգվածային տեղեկատվության ազատության սահմանների կարգավորմանը:

ԶԼՄ-ների անկախության երաշխիք-

дан. – Режим доступа: <http://www.finex.fi/english/laws/index.php>.

2 Տե՛ս ՌԴ Սահմանադրություն, 1993 թ., հոդված 29, կետ 2:

1 Տե՛ս Finlex , Электронный ресурс, – Электрон.

ները սահմանված են նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, սակայն խոսքի իրավունքի ազատությունը մինչև սահմանադրությամբ ամրագրվելը առաջին անգամ արտացոլվել էր 1991 թ. ՀՀ Անկախության հռչակագրում: Հռչակագրի 9-րդ կետով, մասնավորապես սահմանված է, որ Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է յուրաքանչյուրի «խոսքի, մամուլի, խղճի ազատությունը»<sup>1</sup>: Ուշագրավ է, որ ԶԼՄ-ների գործունեության ազատությունը, որպես անկախության երաշխիք, սահմանադրորեն ամրագրվեց միայն 2005 թ.<sup>2</sup> ՀՀ սահմանադրությունում տեղի ունեցած բարեփոխումների արդյունքում հետևյալ ձևակերպմամբ. «լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է<sup>3</sup>»: Ներկայումս ՀՀ սահմանադրությամբ ամրագրված ԶԼՄ-ների երաշխիքների շարքում առաջնայինն է խոսքի (արտահայտվելու) ազատությունը, որը, բացի անհատի խոսքի իրավունքից երաշխավորում է հաղորդակցային ոլորտի զանգվածային տեղեկատվության ազատությունը, մամուլի և մյուս լրատվամիջոցների ազատությունը:

Այս առումով՝ անհրաժեշտ ենք համարում առավել հանգամանորեն անդրադառնալ ԶԼՄ-ների կարևորագույն երաշխիքի՝ խոսքի ազատության իրավունքի սահմանադրաիրավական նորմի բովանդակությանը:

Խոսքի ազատությունը ամրագրված է ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածում, և սահմանում է յուրաքանչյուր անձի ազատ արտահայտվելու իրավունքը: Միևնույն ժամանակ այն հանդես է գալիս որպես արտահայտվելու ազատության բոլոր ձևերի պաշտպա-

նություն, այդ թվում՝ խոսքի ազատության, կարծիքի և տեղեկատվության ազատության պաշտպանության երաշխիք: Այս նորմում խտացված են արտահայտվելու իրավունքի սահմանադրական բոլոր ազատությունները՝ խոսքի, կարծիքի, համոզմունքի, տեղեկատվության, զանգվածային տեղեկատվության և այլն, որոնք գտնվում են միասնության և սերտ փոխկապվածության մեջ, ունեն հավասարաչափ մեծ նշանակություն և չեն կարող կիրառվել առանց հաշվի առնելու նրանց միջև համակարգային կապը<sup>3</sup>: Մյուս կողմից՝ ԶԼՄ-ների անկախության սահմանադրական երաշխիքների շարքին են դասվում նաև գաղափարախոսական բազմակարծությունը, կարծիքների բազմազանությունը, սեփական համոզմունքներ ունենալու, մտքի, խղճի և կրոնի ազատությունը<sup>4</sup> որպես ընդհանուր ուղղվածության բնույթի երաշխիքներ:

Ինչպես խոսքի ազատությունը, այնպես էլ մամուլի և մյուս լրատվամիջոցների ազատությունը<sup>5</sup> նույնպես իր արտահայտությունն է գտել ՀՀ սահմանադրությունում՝ 2005 թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում, որով երաշխավորվեցին տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունն ապահովող անկախ հանրային լրատվամիջոցների առկայությունը և գործունեությունը<sup>6</sup>: Հոդվածի բովանդակությունից երևում է, որ սահմանադրական այս երաշխիքի հիմքում ընկած է պետության կամ իրավասու պետական մարմնի համապատասխան պարտավորությունը՝ ստեղծել անկախ մարմին՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության

1 Տե՛ս ՀՀ Անկախության հռչակագիր, 1991 թ. կետ 9:

2 Տե՛ս ՀՀ Սահմանադրություն. 1995թ. հոդված 27 կետ 3:

3 Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ: 2010 թ. էջ 304:

4 Տե՛ս ՀՀ Սահմանադրություն հոդվածներ 7, 26,27:

5 Տե՛ս ՀՀ սահմանադրություն հոդված. 27:

6 Տե՛ս ՀՀ սահմանադրություն, հոդված 27. 4:



ապահովման նպատակով, և որի կողմորոշվածությունն այսուհետև ուղղված կլինի ոչ թե մասնավոր, այլ հանրային շահերի լուսաբանմանը: Դրանով հանդերձ, պետությունը նման պարտավորություն ստանձնելով, միևնույն ժամանակ պարտավորվում է չմիջամտել հետագայում այդ մարմնի գործունեությանը, ինչը հանդիսանում է և արդյունավետ երաշխիք, և պոզիտիվ պարտավորություն՝ ԶԼՄ-ների անկախությունն ապահովելու համար: Այս առումով ՀՀ սահմանադրական դատարանը դեռևս 2001 թ. հունվարի 11-ի ՍԴՈ-278 որոշմամբ (մինչև սահմանադրական բարեփոխումները) արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը, որում, մասնավորապես, նշվում էր, որ միջազգային մի շարք կարևոր փաստաթղթեր (ՄԻԵԿ-ը, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիրը և այլն), «որոնցում ամրագրված են յուրաքանչյուրի՝ ազատորեն արտահայտվելու, այդ թվում սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունները, դրանց իրականացման կարևոր երաշխիք են դիտում պետական մարմինների միջամտության բացառումը»<sup>1</sup>: Այս գաղափարն իր հետագա զարգացումն ու կոնկրետացումն է գտել սահմանադրական մեկ այլ դրույթում, համաձայն որի՝ «Հեռարձակվող լրատվամիջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ օրենքով ստեղծվում է անկախ պետական մարմին...»<sup>2</sup>, ինչի վերաբերյալ Սահմանադրական դատարանը նույնպես կայացրել է որոշում (2007 թ. փետրվարի 16-ին ՍԴՈ-678 որոշումը): Համաձայն այդ որոշման՝

ԶԼՄ-ներն իրենց գործառնություններն իրականացնելիս, մասնավորապես՝ հեռու-տահաղորդումների և ծրագրերի պատրաստման, կազմման և թողարկման, այդ հաղորդումների ուղղվածությունը որոշելու հարցերում միանգամայն ինքնուրույն են և օժտված են գործելակերպի ազատությամբ, ինչպես նաև ազատ են որևէ պետական մարմնի ազդեցությունից կամ միջամտությունից: Նշված սահմանադրաիրավական երաշխիքը, կարծում ենք, համահունչ է և բխում է Եվրոպայի խորհրդի Նախարարների Կոմիտեի՝ Հանրային հեռարձակման անկախության երաշխիքների վերաբերյալ թիվ R (96) հանձնարարականից, որում ուղղակիորեն կոչ է արվում ԵՄ անդամ պետություններին երաշխավորել հանրային ռադիոհեռարձակումների անկախությունը՝ ապահովելով խմբագրական, ծրագրային և կառուցակարգային ինքնուրույնությունը<sup>3</sup>: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ այս ամենը չի խոչընդոտում տեղեկատվական-հաղորդակցային ոլորտում լիցենզավորման համակարգի կիրառումը<sup>4</sup>, ինչպես նաև հասարակության և պետության օրինական շահերից ելնելով օրենքով նախատեսված սահմանափակումների և արգելքների սահմանումը<sup>5</sup>:

Այսպիսով՝ ՀՀ սահմանադրությամբ ամրագրված լրատվամիջոցների անկախության հիմնական երաշխիքներն են՝ խոսքի ազատությունը, մտքի և կարծիքների ազատությունը, համոզմունքների ազատությունը, զանգվածային տեղեկատվության ազատությունը, լրատվամիջոցների գործունեության ազատությունը, ԶԼՄ-ների անկախությունը պետական մարմնի ոչ իրավա-

1 Տես ՀՀ սահմանադրական դատարանի 2001 թ. հունվարի 11-ի ՍԴՈ-278 որոշումը:

2 Տես ՀՀ սահմանադրություն, հոդված 83.2:

3 Տես Եվրոպայի խորհրդի Նախարարների Կոմիտեի՝ Հանրային հեռարձակման անկախության երաշխիքների վերաբերյալ թիվ R (96) հանձնարարականը, 1996 թ. սեպտեմբերի 11:

4 Տես ՀՀ օրենքը Զանգվածային լրատվության մասին, 13.12.2003 թ. հոդված 4 կետ 2:

5 Տես ՀՀ օրենքը Զանգվածային լրատվության մասին, 13.12.2003 թ. հոդված 7:

չափ միջամտությունից, օրենքի հիման վրա անկախ պետական մարմնի ստեղծումը, բազմակարծությունը: Մինևույն ժամանակ ՀՀ սահմանադրությամբ սահմանված են որոշակի սահմանափակումներ և արգելքներ, որոնք մասնավորապես ուղղված են լրատվամիջոցների տեղեկատվություն տարածելու ազատությանը, իրադարձությունները լուսաբանելու ազատությանը, սակայն պայմանով, եթե դա «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար»<sup>1</sup>:

ՀՀ սահմանադրաիրավական նորմերի շրջանակներից, սակայն, դուրս է մնացել գրաքննության արգելքը, որը ՁԼՄ-ների անկախության համար, կարելի է ասել, ամենասկզբունքային նշանակություն ունեցող երաշխիքն է: ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի 3 մասով երաշխավորված լրատվամիջոցների ազատության բովանդակության հիմքում ընկած է ՁԼՄ-ների ազատությունը գրաքննությունից և անկախությունը կառավարությունից: *Այս առումով գրաքննության արգելքը սահմանափակող, արգելող բնույթի երաշխիք է*: Սակայն գրաքննությունն արգելող նորմը ուղղակիորեն նախատեսված չէ ՀՀ Սահմանադրությամբ՝ ի տարբերություն ժողորդավարական գաղափարով պետությունների, որտեղ խոսքի իրավունքը և գրաքննության արգելքը սահմանադրորեն ամրագրված երաշխիքներ են: Գրաքննության արգելմամբ, որպես կանոն, սահմանափակվում են գաղափարները, կարծիքները, տեղեկատվություն ստանալու և տարա-

ծելու ազատությունը, վերահսկվում են տեղեկատվական հոսքերը, նյութերը և հաղորդագրությունները: Ինչևիցե, թեև գրաքննության արգելումը սահմանված է ՀՀ գործող ՁԼՄ-ների մասին օրենքով<sup>2</sup>, կարծում ենք, առավել նպատակահարմար կլիներ վերջինիս սահմանադրական ամրագրումը՝ որպես ելակետային և հիմնարար նշանակություն ունեցող դրույթի: Այս առումով, տեղին է որոշ հեղինակների կարծիքն այն մասին, որ «զանգվածային տեղեկատվության երաշխիքը՝ գրաքննության արգելքն է»<sup>3</sup>:

ՁԼՄ-ների անկախության երաշխիքների համակարգում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ՁԼՄ-ների ազատությունը և խոսքի իրավունքը: Նախ և առաջ «ՁԼՄ-ների ազատությունը» և «ՁԼՄ-ների անկախությունը» իրավական կատեգորիաներ են, որոնք ունեն որոշակի ընդհանրություններ և տարբերություններ:

Ընդհանուր առմամբ, ՁԼՄ-ների ազատությունը՝ որպես սահմանադրաիրավական կատեգորիա, մեկնաբանվում է ինչպես լայն, այնպես էլ նեղ իմաստով: Լայն իմաստով՝ ՁԼՄ-ների ազատությունն իրենից ներկայացնում է ընդհանուր իրավական ռեժիմ, նեղ իմաստով՝ ՁԼՄ-ների ազատությունը դիտարկվում է որպես սահմանադրաիրավական երաշխիք (կամ սկզբունք):

ՁԼՄ-ների ազատության հասկացության առավել լայն մեկնաբանությունը տրված է Վ.Մակլակովի և Բ. Ստրաշունի աշխատություններում, համաձայն որի՝ ՁԼՄ-ների ազատությունը իրավունքների և ազատությունների ամբողջական համակարգ է, որն իր մեջ ընդգրկում է խոսքի ազատությունը, կարծիքի արտահայտման ազատությունը, մամուլի և մյուս լրատվամիջոցների

1 Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 43:

2 Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը Զանգվածային լրատվության մասին. 2003 թ. Հոդված 4 կետ 3:

3 Տե՛ս Шестопал Е. Б. «Новые тенденции восприятия в России». Москва. 2005 г. С 37.

ազատությունը, տեղեկություններ տարածելու ազատությունը<sup>1</sup>: «ԶԼՄ-ների ազատության» նման մեկնաբանությունից հետևում է, որ, առաջին՝ ԶԼՄ-ների ազատությունը այնպիսի իրավական ռեժիմ է, որն իրենից ներկայացնում է սուբյեկտիվ իրավունքների, պոզիտիվ պարտավորությունների (որոշ դեպքերում նաև նեգատիվ) սահմանափակումների, սահմանների, արգելքների ամբողջություն: Երկրորդ՝ ԶԼՄ-ների ազատության իրավունքների և պարտավորությունների բովանդակության հիմքում ընկած են ԶԼՄ-ների անկախության հետևյալ երաշխիքները (ԶԼՄ-ների ազատության իրավագործությունները). խոսքի (արտահայտվելու) ազատությունը, մամուլի և մյուս լրատվամիջոցների ազատությունը, լրատվամիջոցի գործունեության ազատությունը, ԶԼՄ-ների բազմակարծությունը, ԶԼՄ-ների տեղեկատվություն ստանալու և տարածելու ազատությունը, տեղեկատվական այլ միջոցների ազատությունը, ԶԼՄ-ների ինքնակարգավորումը, լրագրողների ֆիզիկական անձեռնմխելիությունը, ԶԼՄ-ների խմբագրական ինքնուրույնությունը և այլն:

Երրորդ՝ կարևոր է իրավունքների և պարտականությունների փոխհարաբերակցությունը և փոխպայմանավորվածությունը: Սուբյեկտիվ իրավունքների իրականացումը հաճախ պայմանավորված է համապատասխան լիազորություններով օժտված անձանց պոզիտիվ պարտավորությունների կատարմամբ. (պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից անհատի դիմումի կամ հարցման հիման վրա տեղեկատվության տրամադրումը, պետական մարմինների կողմից բնակչությանն իրազեկելու պարտավորությունը և այլն): Իսպառնակումն այս ամենի, օտարերկրյա

պետությունների օրենսդրություններում ակտիվորեն զարգանում և կիրառվում են տեղեկատվության մատչելիությունն ապահովող և տեղեկատվության տրամադրման կարգը սահմանող իրավադրույթները: Մասնավորապես լայնորեն տարածված է առավելագույն հրապարակայնության սկզբունքը, որը մինչև ժամանակ տեղեկատվության ազատության երաշխիք է և դրսևորվում է պետական մարմինների կողմից հանրությանը տեղեկություններ տրամադրելու պարտավորությամբ<sup>2</sup>:

Ցավոք, այսօր ՀՀ-ում ակտիվ հրապարակայնության սկզբունքը դեռևս բավարար չափով արտացոլված չէ պետական իշխանության մարմինների գործողություններում:

*Չորրորդ՝* ԶԼՄ-ների ազատությունը, որպես իրավունքների և երաշխիքների ամբողջություն, իրացվում է համապատասխան գործառույթների և իրավագործությունների միջոցով, որոնցով սահմանվում է լրատվամիջոցների գործունեության ազատության սահմանները և հնարավորությունները: Այդ ազատությունը ներառում է զանգվածային տեղեկատվություն փնտրելու, հավաքելու, ստանալու, արտադրելու, տարածելու ազատությունը, որոնց միջոցով արտադրվում և թողարկվում են նյութեր, նորություններ, ինչպես նաև հրապարակվում և տարածվում օրենքով չարգելված ցանկացած բնույթի տեղեկատվություն:

ԶԼՄ-ների ազատությանն առնչվող կարևոր խնդիրներից է ԶԼՄ-ների ազատության սահմաններին վերաբերող հարցը: ԶԼՄ-ների ազատությունը՝ որպես հասարակական և սոցիալական տեղեկատվություն փնտրելու, հավաքելու, ստանալու, պահպանելու, մշակելու, փոխանցելու և տարածելու

1 Տե՛ս Маклаков В.В. Страшун Б. А. Свобода информации, Конституционное право зарубежных стран. М. 1993 С 102.

2 Տե՛ս Артикаль19. Право граждан на доступ к информации. Принципы законодательства о свободе информации. 2012. Киев. Институт Медиа Права. С. 95.

ազատություն, ինչպես արդեն նշվեց, չի կարող լինել բացարձակ: Այդ սահմանները նախատեսված են գործող օրենսդրությամբ, որոնց խախտման դեպքում առաջանում է օրենքով սահմանված պատասխանատվություն: Այդ սահմանների խախտմամբ տարածված տեղեկատվությունը, փոխակերպվում և վերածվում է ակնհայտ կեղծ կամ ոչ հավաստի տեղեկատվության, որի տարածումը, առավել ևս՝ իրացումը իրական վտանգ է ներկայացնում անհատի, հասարակության և պետության շահերին: Իր հերթին, ՋԼՄ-ների կողմից ազատության ոչ ձիշտ ընկալումն ու գիտակցումը, ինչպես և այդ ազատության ոչ պատշաճ իրացումը, կարող է հանգեցնել ամենաթողության: Այս առումով ՋԼՄ-ների ազատության սահմանների օրենսդրական կարգավորումը ավելի քան անհրաժեշտ է և պարտադիր բոլոր ժողովրդավարական պետություններում, ընդ որում նախընտրելի է այդ նորմերի սահմանադրորեն ամրագրումը՝ որպես սահմանափակող բնույթի երաշխիքներ:

Այդուհանդերձ, ՋԼՄ-ների ազատությունը ուղղված է քաղաքացիների հավաստի և օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու իրավունքին: Հենց դա էլ ՋԼՄ-ների ազատության սոցիալական նշանակությունն է: Հետևապես, կանխապես կեղծ տեղեկատվության տարածումը, այսինքն՝ ապատեղեկատվությունը, իրենից ներկայացնում է ոչ թե լրատվամիջոցների ազատության սահմանափակում, այլ տվյալ սկզբունքի իրական իմաստի աղավաղում:

ՋԼՄ-ների ազատությունը նեղ իմաստով սահմանադրաիրավական սկզբունք է՝ հիմնարար և ղեկավար գաղափար, որով որոշվում է տեղեկատվական իրավունքների և զանգվածային տեղեկատվության իրավական կարգավորման ուղղվածությունը: Տվյալ սկզբունքն ուղղակիորեն արտահայտվում է գործող օրենսդրությամբ

նախատեսված սուբյեկտիվ իրավունքներում, որոնց իրացմամբ ապահովվում է տեղեկատվության ազատ տարածումը: Դրանք են՝ տեղեկատվության փնտրելը, ստանալը, մշակելը, փոխանցելը, արտադրելը, հրապարակելը և այլն: Բացի այդ, զանգվածային տեղեկատվության ազատությունը իրավական պետությունում՝ որպես ՋԼՄ-ների կարևորագույն երաշխիք և բոլոր տեսակների լրատվամիջոցների գործունեության գլխավոր սկզբունք, սերտորեն կապված է տեղեկատվական անվտանգության և ազգային անվտանգության հետ<sup>1</sup>:

Այսպիսով՝ զանգվածային տեղեկատվության ազատությամբ, որը միևնույն ժամանակ նաև տեղեկատվական անվտանգության հիմնական երաշխիք է, ապահովվում է՝

1) քաղաքացիների ամբողջական, համակողմանի և օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու իրավունքը,

2) հասարակական գիտակցության պաշտպանությունը քարոզչությունից և այլ բացասական ազդեցություններից,

3) սոցիալական համակարգերում տեղեկատվության կուտակմանը, նորացմանը, փոխանցմանը և իրացմանը:

Այսպիսով՝ որպես իրավական կատեգորիա՝ «ՋԼՄ-ների ազատությունը» սահմանադրությամբ երաշխավորված և օրենքով ամրագրված, անսահմանափակ թվով անձանց ուղղված սոցիալական նշանակության տեղեկատվություն փնտրելու, ստանալու, փոխանցելու և տարածելու հնարավորությունն է, որոնց իրականացումը հաճախ պայմանավորված է օրենսդրությամբ սահմանված այնպիսի սահմանափակումների հետ, որոնք անհրաժեշտ են այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, պետական անվտանգության, հասարակական

1 Стн Федотов М. А. Правовые основы журналистики. 2002 стр 26 .

կարգի պաշտպանության նպատակով:

ԶԼՄ-ների ազատությունից անհրաժեշտ է տարբերել ԶԼՄ-ների անկախությունը: Ինչպես արդեն նշվեց, այս երկու կատեգորիաները ունեն ինչպես ընդհանուր, այնպես էլ տարբեր հատկանիշներ: Սովորաբար, երբ խոսքը գնում է ԶԼՄ-ների անկախության մասին, ապա դիտարկվում է վերջիններիս անկախությունը պետական իշխանությունից, չնայած, որ «լրատվամիջոցները կարող են կախվածության մեջ լինել նաև խմբագրություններից, ԶԼՄ հիմնադիրներից, խմբագրական կոլեկտիվից, և երբեմն էլ, նաև հրատարակված նյութերի «հերոսներից»<sup>1</sup>: Հետևաբար, ԶԼՄ-ների անկախությունը, ինչպես ԶԼՄ ազատությունը չի կարող լինել բացարձակ, այն նույնպես կրում է հարաբերական բնույթ: Այս իմաստով, Մ. Ֆեդոտովը «ԶԼՄ-ներ» եզրույթը գործածելիս առաջարկում է վերջինից չտարանջատել «անկախ» եզրույթը, իսկ «խոսքի ազատությունը» ԶԼՄ-ների ենթատեքստում դիտարկել որպես ժողովրդավարական ԶԼՄ-ների հիմնական երաշխիք: Բացի դրանից՝ անկախ ԶԼՄ-ների գոյությունը պարտադիր է, քանի որ խոսքի իրավունքը ազգային անվտանգության երաշխիքն է<sup>2</sup>: Հակառակ դեպքում, եթե ԶԼՄ-ները կախվածության մեջ լինեն պետական մարմիններից, դրանք միանշանակ և անպայմանորեն կվերածվեն իրական սպառնալիքի ազգային անվտանգության համար: Հետևապես, ԶԼՄ-ների անկախության կարևոր երաշխիքներ են նաև ԶԼՄ-ների ազատ լինելը գրաքննությունից և անկախությունը պետական մարմնի միջամտությունից:

1 Стів Романович Н. А. О независимости от власти и взгляде общества на миссию российского телевидения. Стаття. [www.mognovse.ru](http://www.mognovse.ru)

2 Стів [http://tvrain.ru/articles/mihail\\_fedotov\\_uveren\\_chno\\_protsses\\_unichtozhenija\\_nezavisimyh\\_smi\\_prodolzhasja\\_ne\\_budet\\_svoboda\\_slova\\_eto\\_05\\_maj\\_2014](http://tvrain.ru/articles/mihail_fedotov_uveren_chno_protsses_unichtozhenija_nezavisimyh_smi_prodolzhasja_ne_budet_svoboda_slova_eto_05_maj_2014).

Այդուհանդերձ, կան խնդիրներ, որոնք բխում են խոսքի ազատության սահմանների ոչ հստակ օրենսդրական կարգավորումից և այդ պատճառով իրենց հիմքում կրում են լրացուցիչ սոցիալական ռիսկեր: Այս առումով նշենք, որ ժամանակակից պետություններում ձևավորվել են ԶԼՄ-ների և պետության փոխհարաբերությունների երեք ձևաչափեր (մոդելներ): Առաջինը, այսպես կոչված՝ «գաղափարների ազատ շուկան» է, համաձայն որի՝ պետության գլխավոր խնդիրն է ապահովել քաղաքացիների անարգել տեղեկատվություն ստանալու իրավունքը: Այդ իրավունքը ենթադրում է ԶԼՄ-ների կողմից իշխանություններին քննադատելու անպատժելիություն, պետական սահմաններից դուրս լրատվամիջոցներով տարածվող նյութերի ազատություն, գրաքննության բացակայություն և լրագրողների ազատության երաշխիքների հաստատում:

ԶԼՄ-ների և պետության փոխհարաբերությունների երկրորդ ձևաչափը վերաբերում է պատասխանատվության ինստիտուտին: Մասնավորապես, խոսքը գնում է ԶԼՄ-ների և պետության փոխհարաբերությունների ընթացքում առաջացած սոցիալական պատասխանատվության մասին, որով նախատեսվում է որոշակի պարտավորությունների կատարում հանրության առջև, և որը պետք է համապատասխանի տեղեկատվության օբյեկտիվ փոխանցման չափանիշներին, տեղեկատվության հավաստիությանն ու իսկությանը: Այդուհանդերձ, պետությունը պետք է ապահովի ԶԼՄ-ների բազմակարծությունը, թեև միևնույն ժամանակ հասարակական կարգի անվտանգության նկատառումներից ելնելով, ապահովվում է նաև ԶԼՄ-ների գործունեությանը միջամտելու հնարավորություն: Իրենց հերթին, սակայն, ԶԼՄ-ները նույնպես կրում են սոցիալական պատասխանատվություն, մասնավորապես՝ իրենց գործունեությամբ չպետք է առաջացնեն բացասա-

կան հետևանքներ հանրության համար, պետք է խուսափեն և զերծ մնան այնպիսի տեղեկատվություն տարածելուց, որը կառաջացնի խուճապ և տագնապ բնակչության միջև և այլն: Երրորդ ձևաչափը ՋԼՄ-ների և պետության փոխհարաբերությունների «ժողովրդավարական ներկայացուցչությունն» է: Այստեղ հիմնական շեշտը դրվում է ՋԼՄ-ներով տարածվող նյութերի բովանդակության վրա, իշխանությունների բյուրոկրատական հսկողությունից ազատության, ինչպես նաև ՋԼՄ-ների՝ որպես սոցիալական, մշակութային-լուսավորչական, և ոչ թե կոմերցիոն ինստիտուտի նշանակության վրա<sup>1</sup>:

Այսպիսով՝ ՋԼՄ-ների անկախության սահմանադրաիրավական երաշխիքները սահմանադրությամբ սահմանված միջոցների և պայմանների համակցություն է, որոնցով ապահովվում է ՋԼՄ-ների ազատությունն ու անկախությունը, ինչպես նաև այնպիսի իրավական միջոցների ամբողջություն, որոնցով ապահովվում և իրացվում են ՋԼՄ-ների իրավունքները և ստեղծվում են ՋԼՄ-ների ազատության, իրավունքների պաշտպանության և պատասխանատվության ապահովման արդյունավետ մեխանիզմներ: Բնորոշումից երևում է, որ ՋԼՄ-ների անկախությունը և ազատությունը, ինչպես նաև իրավունքների իրականացումը ամրագրված են Սահմանադրությամբ համապատասխան երաշխիքների միջոցով, որոնք իրենց համակցությամբ ՋԼՄ-ների անկախության համար ունեն սկզբունքային նշանակություն: Երկրորդ՝ սահմանադրաիրավական այդ նորմերը ՋԼՄ-ների ազատության և անկախության հիմքում ընկած առաջնային, ելակետային և

հիմնարար սկզբունքներ են և, երրորդ՝ ՋԼՄ-ների սահմանադրական երաշխիքների միջոցով իրացվում են ՋԼՄ-ների իրավունքները և ազատությունները, ապահովվում պաշտպանությունը և պատասխանատվությունը, և այդ նպատակով ստեղծվում են համապատասխան մեխանիզմներ:

Ժողովրդավարությունը և լրատվամիջոցները միմյանցով պայմանավորված և անխզելիորեն փոխկապված կատեգորիաներ են: Ժողովրդավարության հիմքում ընկած են այն հիմնարար սկզբունքները, որոնք կանխորոշում են ՋԼՄ-ների ազատ և անխոչընդոտ գործունեությունը: Մինևույն ժամանակ, ազատ ՋԼՄ-ները իրենց հիմքում պետք է ունենան օրենքով սահմանված համապատասխան իրավական երաշխիքներ, առանց որոնց չի կարող կայանալ քաղաքացիական հասարակություն և լինել իրական ժողովրդավարություն: ՋԼՄ-ների իրավական կարգավիճակի և գործունեության ազատության և անկախության երաշխավոր է պետությունը, որը, մի կողմից՝ զերծ է մնում որևէ միջամտությունից ՋԼՄ-ների գործառույթներում, մյուս կողմից՝ Սահմանադրության մեջ և օրենքներում ամրագրում է ժողովրդավարության սկզբունքներ և երաշխիքներ, և այդպիսով՝ երաշխավորում ՋԼՄ-ների ազատ գործունեությունը:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝  
28.03.2015

1 Стен Фокина В.В. СМИ как акторы мировой политики. Санкт-Петербург. 2013. Статья по теме «Трансформация мира: негосударственные акторы мировой политики». С 63.

ПОНЯТИЕ КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫХ ГАРАНТИЙ  
НЕЗАВИСИМОСТИ СМИ И ИХ ОСОБЕННОСТИ В РА

**ЛИЛИТ ХАРАТЯН**

*Национальная академия наук РА, Международный научно – образовательный центр,  
юрисконсульт Института философии, социологии и права, соискатель*

СМИ и демократия тесно взаимосвязанные и неотделимые друг от друга категории. В своей деятельности СМИ руководствуются основополагающими принципами, составляющими основу демократии, которые предусматривают соответствующие правовые гарантии и предпосылки. В свою очередь, гарантии являются основой функционирования СМИ, залогом демократического государства и становления гражданского общества. Государство, выступая в качестве гаранта свободы СМИ, с одной стороны, принимает на себя обязательство не вмешиваться в деятельность СМИ, с другой- издает законы и правовые акты, гарантирующие независимость и защиту СМИ.

Дата представления статьи: 28.03.2015

THE CONCEPT OF CONSTITUTIONAL AND LEGAL GUARANTEES OF  
MASS MEDIA INDEPENDENCE AND ITS PECULIARITIES IN ARMENIA

**LILIT KHARATYAN**

*International Scientific-Educational Center of the National Academy of Sciences of the Republic of  
Armenia, Legal advisor, LecturerApplicant at the Institute of Law and Philosophy*

Mass media and democracy are interrelated and inseparable categories.

In its activities mass media is guided by the fundamental principles which form the basis of democracy, that stipulates corresponding legal guarantees and prerequisites. Guarantees in their turn, are the basis for the functioning of mass media, the key to a democratic state and civil society formation. The state, acting as a guarantor of freedom of the media, on the one hand, assumes a liability not to interfere in the activities of mass media, and on the other hand- passes laws and legal acts guaranteeing the independence and protection of mass media

Article submission date: 28.03.2015

**ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ԵՎ ՆԵՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ  
ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Աշխատանքը նվիրված է Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանում համաներման ու ներման իրավական ինստիտուտների կայացման ու զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Այդ ինստիտուտների իրականացումը նախատեսված է եղել և՛ ԽՍՀՄ, և՛ Խորհրդային Հայաստանի Սահմանադրություններով:

Պատմահամեմատական վերլուծությունների արդյունքներով հեղինակը եկել է այն եզրահանգման, որ Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանում համաներման և ներման իրավական ինստիտուտների գոյությունը պայմանավորված է եղել դրանց հասարակական-դասակարգային նպատակահարմարությամբ ու անհրաժեշտությամբ, խորհրդային սոցիալիստական մարդասիրության սկզբունքի իրացմամբ, մարդու նկատմամբ մեծահոգության ու հավատի դրսևորմամբ, և այն համոզմունքով, որ մարդն, ի վերջո, ուղղման ու վերադաստիարակության ենթակա սուբյեկտ է նույնիսկ այն դեպքում, երբ ինքը կամ հանցագործություն է կատարել, կամ կատարված հանցագործությունների համար արդեն կրում է պատիժ:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** համարերում, ներում, Հայաստանի խորհրդային ժամանակաշրջան, պատմահամեմատական վերլուծություն:

Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանում համաներման ու ներման իրավական ինստիտուտների կայացման ու զարգացման ընթացքն եղել է

առանձնահատուկ այն առումով, որ և Հայաստանի պարագայում, և մյուս հանրապետությունների համար, այդ ինստիտուտներին առնչվող որոշումներն ու հրահանգները ընդունվում էին կենտրոնում և միայն տեղ երում էին կազմակերպում դրանց կատարման ընթացքը [1, էջ 5]:

Համաներման ակտերի և ներման ինստիտուտի իրականացումը նախատեսված էր ԽՍՀՄ և Խորհրդային Հայաստանի Սահմանադրություններով: Ընդ որում, եթե խորհրդային կարգերի իշխանության առաջին տարիներին համաներման և ներման իրավունքը պատկանում էր Խորհրդային Հայաստանին, ապա ԽՍՀՄ կազմավորումից հետո այդ իրավունքը վերապահվեց ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններին:

Այս առթիվ առաջին դեկրետներից անհրաժեշտ է կարևորել 1921 թվականի ապրիլին Հայաստանի հեղկոմի կողմից ընդունված դեկրետները՝ քաղաքական հանցագործներին ներում շնորհելու մասին: Դրանք կարևոր նշանակություն ունեցան երկրում տիրող քաղաքական իրավիճակը մեղմացնելու և դրա հեռանակները վերացնելու տեսանկյունից, ինչպես նաև դրական ազդեցություն ունեցավ քաղաքացիական բնակչության արտագաղթի դադարեցման վրա [2, էջ 7]:

Հայաստանի հեղկոմի 1921 թվականի ապրիլի 10-ի դեկրետով Հայաստանի բոլոր գյուղացիներին, արևմտահայ գաղթականներին, աշխատավոր մտավորականությանը, նրանց, ովքեր այս կամ այն ձևով մասնակցել և մասնակ-



ցում են հակահեղափոխական շարժմանը, հայտարարվեց, որ "... խորհրդային իշխանությունը լիակատար մոռացության է տալիս Հայաստանի բանվորների և գյուղացիների հանդեպ նրանց կատարած հանցանքը հակահեղափոխական շարժման մեջ [2, էջ 11], ինչը հիմք հանդիսացավ նրանց բոլորին աշխատանքի ներգրավելու [2, էջ 12]: Այդ դեկրետով՝ համաներումը չէր տարածվում «հակահեղափոխականների, հանցագործ ղեկավարների, արտակարգ հանձնաժողովի կողմից, բարձրաստիճան հրամանատարական կազմի և խմբապետների վրա»:

Այդ ժամանակաշրջանի հաջորդ կարևոր համաներման ակտն ընդունվեց 1921 թվականի ապրիլի 23-ի երկրորդ դեկրետով «Ընդհանուր ներման մասին» վերտառությամբ, որով վերացվեցին առաջին դեկրետով արված սահմանափակումները, և դրանով համաներումը կրեց համընդհանուր բնույթ [2, էջ 21]: Ընդ որում, ինչպես արդարացիորեն նշում են հայ պատմաբանները. «համաներումը կարևոր նշանակություն ունեցավ արտագաղթի ուղին բռնած հազարավոր հայ մարդկանց կես ձանապարհից հայրենիք վերադարձնելու կամ Զանգեզուրից գաղթը կանխելու համար, այն դեպքում, որ այդ ժամանակ փախստական դարձած քաղաքացիների ու գինվորականների ընդհանուր թվաքանակն անցնում էր 10 հազարից» [1, էջ 376]:

Խորհրդային ժամանակաշրջանում համաներման և ներման ակտեր միշտ էլ ընդունվել են: Դրանց ընդունման ու կիրառման սկզբունքները թեև օրենսդրությամբ նախանշված ու սահմանված չէին, սակայն հավաստի էր այն, որ դրանք հանդիսացել են պետական իշխանության բարձրագույն մարմինների օրինաչափ գործունեության յուրատիպ արտահայտությունը և մենաշնորհը:

Խորհրդային իշխանության օրենսդրությամբ ինչպես համաներման ակտերը,

այնպես էլ համաներման ակտերը կիրառվում էին ցանկացած հանցագործության մասով և յուրաքանչյուր դատապարտյալի նկատմամբ: Ընդ որում, նշանակություն չունեին այն հանգամանքը, թե կատարված արարքը ինչ աստիճանի էր, կամ արարք կատարողը առաջին անգամ էր դատապարտվել, թե առանձնապես վտանգավոր հանցագործությունների ռեցիդիվ էր հանդիսանում: Այսպիսի մոտեցումը առանձնահատուկ սկզբունք էր, սակայն իրավակիրառ պրակտիկայում այդ ակտերը, որպես կանոն, չէին տարածվում առանձնապես այնպիսի ծանր ու վտանգավորություն ունեցող հանցագործությունների վրա, ինչպիսին էին, օրինակ, հայրենիքի դավաճանությունը, սպանությունը, հանրային գույքի խոշոր հափշտակումները և այլն: Այստեղ դրսևորվում է անհատական մոտեցում, որը միաժամանակ, բացատրվում էր սոցիալիստական մարդասիրության դրսևորմամբ:

Պատմականորեն խորհրդային ժամանակաշրջանում համաներման ակտերն ընդունում էին ԽՍՀՄ և ՀԽՍՀ գերագույն խորհուրդների համագումարները և այդ խորհուրդների կենտրոնական գործկոմները, սակայն, սկսած 1937 թվականից՝ այսինքն՝ 1936 թվականին ԽՍՀՄ Սահմանադրության և 1937 թվականին ՀԽՍՀ Սահմանադրության ընդունումից հետո համաներման ակտերն ընդունում էին ԽՍՀՄ և ՀԽՍՀ գերագույն խորհուրդներն ու դրանց նախագահությունները: Ընց համագումարին ու կենտրոնականին էր վերապահված ընդհանուր և մասնակի համաներում նախաձեռնելու իրավունքը:

Ոչ միայն համաներման այս իրավունքը, այլև ներման ու քաղաքացիներին ռեաբիլիտացիայի ենթարկելու իրավունքը վերապահված էր ՀԽՍՀ Գերագույն խորհուրդին ու դրա նախագահությանը միայն այն անձանց մասով, ովքեր դատապարտվել էին ՀԽՍՀ դատական մարմինների կողմից:

ԽՍՀՄ և ՀԽՍՀ Սահմանադրություն-

ներում համաներման և ներման իրավունքի հարցերը կարգավորվում էին հետևյալ իրավական կառուցակարգերին համապատասխան. ԽՍՀՄ իրավասությանը, հանձին նրա պետական իշխանության բարձրագույն մարմինների և պետական կառավարման մարմինների գործունեության, ենթակա էր համաներման մասին ընդհանուր միութենական ակտերի ընդունումն ու հրապարակումը (ԽՍՀՄ Սահմանադրություն, հոդվ. 14, «ո» կետ):

Այնուհետև, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը ընդհանուր միութենական մասշտաբով իրականացնում էր ներման իրավունքը (հոդվ. 49, «ժ» կետ): Միութենական հանրապետությունների գերագույն խորհուրդներն ու նրանց նախագահությունները օգտվում էին համապատասխան հանրապետությունների դատական մարմինների կողմից դատապարտված քաղաքացիների համաներման և ներման իրավունքից (հոդվ. 60, «դ» կետ) [3, էջ 130]: Պետք է հաշվի առնել նաև այն, որ այդ հանրապետությունները փաստորեն չէին իրականացնում համաներման իրենց սահմանադրական իրավունքը: Նրանք սահմանափակվում էին միայն ներման իրավունքի կատարմամբ:

Բացի դրանից, խորհրդային պետության պատմության ընթացքում համաներման բազմաթիվ ակտեր են ընդունվել պետության և հանրապետությունների ժողովուրդների կյանքում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունների կապակցությամբ: Այսպես՝ համաներման ծավալուն ակտեր ընդունվել են, օրինակ, Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 1-ին, 3-րդ, 5-րդ, 10-րդ, 40-րդ, 50-րդ տարելիցների օրերին, Հայրենական մեծ պատերազմում պատմական հաղթանակի կապակցությամբ, մայիսմեկյան տոնախմբությունների օրերին, Հայաստանում խորհրդային կարգերի հաղթանակի տարբեր հորելյանական տարեթվերի առթիվ և

այլն: Դրանց թվում են եղել և ընդհանուր և մասնակի համաներման ակտեր:

Համաներման բոլոր ակտերում էլ, իբրև ելակետ, մատնանշվել են դրանց ընդունման նախադրյալներն ու հիմնավորումները: Այսպես՝ Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 5-րդ տարեդարձի կապակցությամբ, 1922 թվականի նոյեմբերի 2-ին ընդունված համաներման ակտը ընդունվել է «տոնի տարելիցի բերկրալից օրերին՝ ձգտելով թեթևացնել առաջին հերթին այն բանվորների ու գյուղացիների, ինչպես և բոլոր այն քաղաքացիների վիճակը, ովքեր, կարիքից դրդված, պատահաբար կամ առաջին անգամ ներգրավվել են հանցագործությունների մեջ, սակայն չեն կատարել հեղափոխության նվաճումների քայքայմանն ու նվաճմանն ուղղված ծանր ու վտանգավոր արարքներ: Այդպիսիններին ներում էր շնորհվում և կոչ էր արվում խաղաղ շինարարությանն իրենց հետագա մասնակցությամբ հատուցել հանրապետությանը պատճառած վնասը և անվերապահորեն կանգնել աշխատավորների ու գյուղացիության շարքերում» [4, էջ 939]:

Նույն տրամաբանությունն էր դրված Հոկտեմբերյան հեղափոխության 40-րդ տարեդարձի առիթով 1957 թվականի նոյեմբերի 1-ին ընդունված համաներման ակտի ներածական մասում, որտեղ նշվում էր այն մասին, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը համաներում է հայտարարում՝ ղեկավարվելով մարդասիրական սկզբունքներով և ձգտելով թեթևացնել վիճակը այն քաղաքացիների, որոնք կատարել են պետության համար մեծ վտանգավորություն չներկայացնող հանցագործություններ, և միաժամանակ այդ քաղաքացիներին կոչ էր արվում սոցիալիստական շինարարությանը իրենց հետագա մասնակցությամբ վերացնել հասարակությանը պատճառած վնասը և վերադառնալ ազնիվ աշխատանքային կյանքի ասպարեզ:

Փոքր ինչ այլ խմբագրությամբ էր

հարցը դրված Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի կապակցությամբ 1967 թվականի նոյեմբերի 1-ին ընդունված համաներման ակտի մեջ, որտեղ նշվում էր, որ հեղափոխության 50-ամյակի առիթով և առաջնորդվելով սոցիալիստական մարդասիրության սկզբունքներով՝ հնարավոր էր համարվում ներում շնորհել այն քաղաքացիներին, ովքեր առաջին անգամ են կատարել հասարակական մեծ վտանգ չներկայացնող հանցագործություններ և օրինակելի վարքագծով ու աշխատանքի նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքով ապացուցել են հասարակության առջև մեղքը քավելու իրենց ձգտումը:

Հարկ է կարևորել, որ համաներման ակտերը այսօր էին զարնում իրենց որոշակիությամբ: Նրանց մեջ մատնանշվում էին այն արարքները կամ անձինք, որոնց վրա դրանք տարածվում էին: Այսպես, օրինակ, Երկրորդ համաշխարհային պատերազմում տարած հաղթանակի կապակցությամբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1945 թվականի հուլիսի 7-ին ընդունված «Համաներման մասին» հրամանագրով պատժից բոլորովին ազատվեցին ոչ ավելի, քան երեք տարով ազատագրվման կամ պատժի ավելի մեղմ միջոցների դատապարտվածները, ռազմական արդյունաբերության ձեռնարկություններից և մի շարք այլ հաստատություններից ինքնագլուխ հեռանալու, ինչպես և մի քանի զինվորական ու այլ հանցագործությունների համար դատապարտվածները: Կիսով չափ կրճատվեց ավելի քան 3 տարվա ժամկետով ազատագրվման դատապարտված անձանց պատժի մնացած ժամանակը՝ բացառությամբ հակահեղափոխական հանցագործությունների, սոցիալիստական սեփականության հափշտակման, բանդիտիզմի, ավազակային հարձակման և մի շարք այլ առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտվածների պատժաժամկետների:

Հարկ է նշել, որ հիշատակված համաներման ակտով, բազմաթիվ դատապարտյալների դատվածությունը վերացվեց, ինչպես նաև վերացվեցին բոլոր չգանձված տուգանքները և ի կատար չածված զանազան վարչական տույժերը: Համաներումը միայն չէր կիրառվում այն անձանց նկատմամբ, որոնք բազմիցս դատապարտվել էին գողության, կողոպուտի և խուլիգանության համար [5, էջ 139]:

Հայաստանի Խորհրդային դարաշրջանում առավել ընդգրկուն, կոնկրետ ու համապարփակ էր համաներման ակտը, որն ընդունվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1953 թվականի մարտի 27-ի «Համաներման մասին» հրամանագրով, որով ազատագրվումից և ազատագրվման հետ չկապված պատժի այլ միջոցներից, օրինակ՝ քստորից ազատվեցին մինչև հինգ տարի ժամկետով դատապարտված անձինք: Միաժամանակ, անկախ պատժաժամկետից՝ պատժից ազատվեցին պաշտոնական և տնտեսական բոլոր հանցագործությունների, ինչպես նաև զինվորական մի շարք հանցագործությունների համար դատապարտվածները: Հետագայում պատիժ կրելուց ազատվեցին նաև մինչև 10 տարեկան հասակի երեխաներ ունեցող և հղի կանայք, մինչև 18 տարեկան անչափահասները, 55-ից բարձր տարիքի տղամարդիկ և 50-ից բարձր տարիքի կանայք, նաև անբուժելի ծանր հիվանդություններով տառապողները: Այն անձանց նկատմամբ, ովքեր դատապարտվել էին հինգ տարուց ավելի ժամկետով ազատագրվման, պատժաչափը կրճատվեց կիսով չափ: Այս հրամանագրով վերացվեց պատժից ազատված անձանց դատվածությունը: Թերևս, հրամանագրով, այնուամենայնիվ, համաներում չէր տարածում այն բոլոր անձանց վրա, ովքեր դատապարտվել էին ազապագրվման հինգ տարուց ավելի ժամկետով հակահեղափոխական բնույթի հանցագործությունների, սոցիալա-

կան սեփականության խոշոր հափշտակումների, բանդիտիզմի և դիտավորյալ սպանություններ կատարած անձանց համար [6, էջ 71]:

Բացի այդ՝ Հայաստանի Խորհրդային ժամանակաշրջանում շարունակվող և տևող հանցագործությունների մասով համաներման ակտի կիրառումը դրսևորվել էր որոշ առանձնահատկություններով: Չնայած այն հանգամանքին, որ այդ հարցն իր կարգավորումն էր ստացել դեռևս ԽՍՀՄ Գերագույն դատարանի պլենումի 1929 թվականի մարտի 4-ի որոշմամբ, սակայն, այդ որոշման մեջ ԽՍՀՄ Գերագույն դատարանի պլենումով 1963 թվականի մարտի 14-ին կատարված «վաղեմության և համաներում կիրառելու պայմանները տևող և շարունակվող հանցագործությունների» վերաբերյալ կատարված փոփոխությունների համաձայն՝ տևող հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ, որպես կանոն, համաներումը կիրառվում էր, եթե հանցավոր արարքն ավարտված էր լինում մինչև համաներման ակտի ընդունումն ու հրապարակումը: Օրինակ, եթե ալիմենտ վճարելուց չարամտորեն խուսափող հայրը կամ դասալիք գինվորականը մինչև ակտի ընդունումն ու հրապարակումը մեղայականով ներկայացած է լինում: Հակառակ դեպքում, եթե տևող հանցագործությունը շարունակվում է մեղավորների նկատմամբ համաներման ակտի հրապարակումից հետո, որպես կանոն, համաներում չի կիրառվում:

Հետագոտման առարկա ժամանակաշրջանում առանձնակի կարևորություն էր ստացել նաև ներման իրավունքը: Խորհրդային ժամանակաշրջանում այդ իրավունքը վերապահված էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը, իսկ Հայաստանում դա պատկանում էր ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը, եթե այդ գործերը լսվել էին Հայաստանի դատական մարմինների կողմից:

Հարկ է նշել, որ օրենսդրական կամ

իրավական որևէ այլ ակտով սահմանափակված չէր այն հաստատությունների ու անձանց շրջանակը, որոնք կարող էին հանդես գալ ներման իրավունքի միջնորդության ներկայացմամբ: Այդպիսիք կարող էին լինել աշխատավորական կոլեկտիվները, հասարակական կազմակերպությունները, պետական իշխանության մարմինները, անհատ քաղաքացիները կամ նրանց խմբերը, հենց ինքը՝ մեղադրյալը կամ ամբաստանյալը, կամ նրանց մերձավորներն ու բարեկամները: Ջուտ իրավական առումով ներումը կարող էր տարածվել ցանկացած անձի նկատմամբ, անկախ նրա կատարած հանցագործության վտանգավորության աստիճանից և նրա անձից: Բայց պրակտիկայում ծանր հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ, այդ թվում՝ վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում, որպես ընդհանուր կանոն, ներում չէր տարածվում, թեև, բացառված չէր, որ անգամ մահապատժի դատապարտված անձի նկատմամբ ներում տարածվի և դրա ուժով նա ազատվի նշված պատիժը կրելիս, կամ թե այդ պատիժը փոխարինվի մեկ այլ պատժատեսակով, օրինակ՝ ազատազրկմամբ տասնհինգ տարի ժամանակով և աքսորով կամ առանց աքսորի:

Հայաստանում Խորհրդային ժամանակաշրջանում եթե ներման միջնորդությամբ կարող էին հանդես գալ աշխատավորների կոլեկտիվները, հասարակական կազմակերպությունները, ուղղիչ աշխատանքային գաղութների վարչությունները և նույնիսկ անհատ անձինք, ապա համաներման դեպքում որևէ միջնորդության մասին, ում կողմից էլ որ դա տեղի ունենար, միևնույն է խոսք լինել չէր կարող: Վերջինիս նախաձեռնությունը պատկանում էր բացառապես պետական իշխանության բարձրագույն մարմիններին: Բայց երբեմն ներման մասին ակտերը կարող էին վերաբերել նաև շատ թվով անձանց շրջա-

նակին: Այդպիսի ակտերից էին, օրինակ՝ ԽՍՀՄ Կենտգործկոմի և ժողկոմխորհի 1937 թվականի հուլիսի 14-ի որոշումը, որով Մոսկվա – Վոլգա ջրանցքի շինարարության մեջ բոլոր հարվածային աշխատողները ներման կարգով վաղաժամ ազատվեցին ազատգրկման ձևով հետագա պատիժը կրելուց և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1938 թվականի ապրիլի 16-ի հրամանագրով հանվեց դատվածությունը այն անձանցից, ովքեր կամավոր կերպով, ազատ վարձակալության սկզբունքով, մնացել էին հիմնական աշխատանքի մեջ նույն այդ ջրանցքի կառույցներում ու շինարարությունում:

Ներման վերաբերյալ միջնորդության որոշում ընդունում էր ԽՍՀՄ կամ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդների նախագահությունները: Ընդ որում, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը քննության էր առնում միայն այն անձանց ներման վերաբերյալ միջնորդությունները, ովքեր՝

1) դատապարտվել են ԽՍՀՄ Գերագույն դատարանի կոլեգիաների կողմից.

2) դատապարտվել են գինվորական տրիբունալների կողմից.

3) քաղաքացիական անձինք են, բայց գինվորական տրիբունալների կանոնադրության 9, 10 և 11 հոդվածներով սահմանված ընդդատությանը համապատասխան դատապարտվել են գինվորական տրիբունալների կողմից.

4) պատիժ են կրում երկու կամ ավելի միութենական հանրապետությունների դատարանների դատավճիռներով:

Մնացած բոլոր դեպքերում ներման վերաբերյալ միջնորդություններն ուղարկվում էին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահություն, ընդ որում, միջնորդություն կարող էր ներկայացնել ինքը՝ դատապարտյալը, նրա հարազատները և մյուս շահագրգիռ անձինք, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները, վերահսկող հանձնաժողովները կամ ազա-

տագրկման վայրի աշխատակազմը:

Միաժամանակ, հարկ է նշել, որ ԽՍՀՄ կամ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդների նախագահությունների կողմից ներման խնդրանքի մերժելը չէր բացառում նույն խնդրանքով կրկին միջնորդություններ ներկայացնելու հնարավորությունը:

Դատապարտյալին ներելու մասին միջնորդության հարուցումը խրախուսանքի միջոց էր: Ներում կարող էր կիրառվել ամեն տեսակ հանցագործությունների համար դատապարտված անձանց նկատմամբ, անկախ այդ հանցագործությունների բնույթից և ծանրությունից, ինչպես նաև ամեն տեսակ պատժի՝ այդ թվում ազատագրկման և անգամ բացառիկ պատժամիջոցի՝ մահապատժի դատապարտվածների նկատմամբ: Բացառված չէր նաև ներում կիրառելու հնարավորությունը առանձնապես ծանր հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ, այդ թվում՝ վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում:

Դատապարտյալներն իրենց միջնորդությունը հանձնում էին ազատագրկման վայրերի վարչակազմի միջոցով, որը պետք է ոչ ուշ հնգօրյա ժամկետում միջնորդությունը՝ անհրաժեշտ փաստաթղթերի (դատավճիռների, որոշումների, պատճենների, բնութագրի և այլ փաստաթղթերի) հետ միասին, ուղարկեր համապատասխան գերագույն խորհրդի նախագահություն: Բնութագրի մեջ, որն ստորագրում էր ազատագրկման վայրի պետը կամ նրա տեղակալը և ջոկատի պետը, մանրամասն տվյալներ էին շարադրվում աշխատանքի և ուսման նկատմամբ դատապարտյալի վերաբերմունքի, ազատագրկման վայրերում գտնվելու ժամանակ նրա դրսևորած վարքի, ուղղիչ-աշխատանքային գաղութի հասարակական կյանքում նրա մասնակցության մասին և այլն: Միջնորդությունն ուղղարկվում էր հասցեատիրոջը՝ այդ մասին տեղեկացնելով դատապարտյալին՝ ստորագրու-

թյուն վերցնելու միջոցով:

Եթե ներման մասին միջնորդություն հարուցվելուց հետո դատապարտյալը չարամտորեն խախտել է ռեժիմը կամ նոր հանցագործություն է կատարել, այդ մասին անհապաղ հաղորդվում է համապատասխան գերագույն խորհրդի նախագահություն:

Ազատագրկման վայրերի վարչակազմը ներման վերաբերյալ միջնորդություն ներկայացնում էր այն դատապարտյալների նկատմամբ, ովքեր ապացուցել էին իրենց ուղղված լինելը, աշխատում էին ազնվորեն, անբասիր կերպով պահպանում էին սահմանված ռեժիմը, վարչակազմից օգնում էին կանոնավորելու և ապահովելու ուղղիչ-աշխատանքային գաղութի նորմալ աշխատանքը: Որպես կանոն, ներման վերաբերյալ միջնորդություններ վարչակազմը ներկայացնում էր այն բանից հետո, երբ դատապարտյալը պատժի ժամկետի նշանակալի մասը կրել էր, թեև պաշտոնական սահմանափակումներ չկան: Այն անձինք, ովքեր պայմանական վաղաժամկետ ազատման իրավունք ունեին, սովորաբար ազատվում էին ոչ թե ներման ուժով, այլ «Պայմանական վաղաժամկետ ազատման մասին» ԽՍՀՄ օրենքի հիման վրա, սակայն առանձնապես աչքի ընկած դատապարտյալների նկատմամբ ներում կարող էր կիրառվել պատժաժամկետի ցանկացած պահի: Դատապարտյալի կողմից ներում խնդրելու մասին միջնորդություն հարուցելը չէր բացառում նրան պայմանական վաղաժամ ազատման ներկայացնելու հնարավորությունը: Ներում կարող էր կիրառվել նաև այն անձանց նկատմամբ, ովքեր ենթակա չէին պայմանական վաղաժամ ազատման: Դրանով իսկ տվյալ կատեգորիայի դատապարտյալների համար ևս խթաններ էին ստեղծվում պատիժը բարեխղճորեն կրելու, ռեժիմի բոլոր պահանջները պահպանելու հարցերում:

Պրակտիկայում դեպքեր էին պատահում, երբ ներման վերաբերյալ միջ-

նորդության խնդրագրում նշումներ էին կատարվում այն մասին, թե դատապարտյալը հանցագործություն չէր կատարել, թե հանցագործության որակումը սխալ է, չափից ավելի խիստ պատիժ է նշանակվել և այլն: Նման պատճառները (եթե դրանք առկա էին) հիմք էին հանդիսանում դատավճիռը կամ որոշումը վերանայելու, այլ ոչ թե ներում շնորհելու համար: Ներման հարցը վճռելու համար կարող էին կարևոր նշանակություն ունենալ ոչ միայն այն հանգամանքները, որոնք վերաբերում էին պատիժը կրողի անձին, կատարված հանցագործության բնույթին և ծանրությանը, այլև որոշ այլ տվյալների, օրինակ՝ դատապարտյալների ընտանիքի ծանր դրությանը, հարազատների ծանր հիվանդություններին: Դա բխում էր խորհրդային պետության ուղղիչ աշխատանքային քաղաքականության մարդասիրական սկզբունքներից:

Ներման՝ որպես խրախուսանքի վերաբերյալ միջնորդություն հարուցելու մասին որոշում ընդունվում էր ազատագրկման վայրի աշխատողներից կազմված նույն հանձնաժողովի կողմից, որը քննության էր առնում նաև պայմանական վաղաժամ ազատման վերաբերյալ միջնորդություն հարուցելու հարցերը:

Ներում ստացած դատապարտյալներն անհապաղ ազատվում էին այն բանից հետո, երբ ուղղիչ աշխատանքային գաղութի վարչակազմը ստանում էր ներման մասին ԽՍՀՄ կամ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդների նախագահությունների հրամանագիրը կատարելու կարգադրությունը: Եթե ներումը չէր վերաբերում լրացուցիչ պատժամիջոցին, ապա վերջինիս կրումը տեղի էր ունենում ազատագրկումից ազատվելուց հետո:

Այսպիսով՝ Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանում համաներման և ներման իրավական ինստիտուտների գոյությունը պայմանավորված է եղել դրանց հասարակական - դասակարգային նպատակահարմարությամբ

ու անհրաժեշտությամբ, խորհրդային սոցիալիստական մարդասիրության սկզբունքի իրացմամբ, մարդու նկատմամբ մեծահոգության ու հավատի դրսևորմամբ, և այն համոզմունքով, որ մարդն, ի վերջո, ուղղման ու վերադաստիարակության ենթակա սուբյեկտ

է նույնիսկ այն դեպքում, երբ ինքը կամ հանցագործություն է կատարել, կամ կատարված հանցագործությունների համար արդեն կրում է պատիժ:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝  
14.03.2015

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Հայոց պատմություն, Հատոր IV, Գիրք առաջին: Եր., 2010, էջ 5:
2. ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, սր. 2, Եր., 1921, էջ 7.
3. Постановление Центрального Исполнительного Комитета Союза ССР от 7 марта 1925 г. «Об амнистии» // СЗ РСФ. М., 1925. № П. չ 130.
4. Постановление Президиум ЦИК Союза ССР от 17 августа 1923 г. «Об амнистии в ознаменование образования Союза Советских Социалистических Республик» // СЗ РСФСР. 1923. § «Об амнистии ознаменование образования Союза Советских Социалистических Республик I» // СЗ РСФСР. М., 1923. № 95 չ 939.
5. Ведомости Верховного Совета СССР. 1945. № 39.
6. Ведомости Верховного Совета СССР. 1953. № 4.

## **ПРАВОВЫЕ ИНСТИТУТЫ АМНИСТИИ И ПОМИЛОВАНИЯ В АРМЕНИИ В ПЕРИОД СОВЕТСКОЙ ВЛАСТИ: В КОНТЕКСТЕ ИСТОРИКО-ПРАВОВОГО РАЗВИТИЯ**

**ХАЧИК ХАЧАТРЯН**

*Академия государственного  
управления Республики Армения, соискатель*

Статья посвящена изучению проблем амнистии и помилования в период советской власти в Армении. Рассматриваются историко-правовые особенности этих институтов, а также некоторые вопросы конституционно-правового анализа, проблемы объявления амнистии и применения помилования.

Дата представления статьи: 14.03.2015

## **LEGAL INSTITUTE OF AMNESTY AND CLEMENCY IN ARMENIA DURING THE SOVIET PERIOD IN THE CONTEXT OF HISTORICAL-LEGAL DEVELOPMENT.**

**KNACHIK KHACHATRYAN**

*Public Administration Academy of the Republic of Armenia, Applicant*

The article studies the problem of amnesty and pardon in the period of Soviet power in Armenia. In the article the historical and legal peculiarities of these institutions are considered, as well as some issues of constitutional and legal analysis, problems of amnesty declaration and pardon exercising.

Article submission date: 14.03.2015

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍ-  
ՏՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆ ԴԻՐՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված է. «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»: Սահմանադրության նշված դրույթը՝ նորմ սկզբունք է, նորմ նպատակային և վարքագծի պարտադիր կանոն, այն օժտված է անմիջական գործողության իրավազորությամբ: Այստեղից բխում է, որ իրավունքի բոլոր սուբյեկտների համար նշված սահմանադրական դրույթը գործողության ծրագիր և բովանդակություն է՝ պետական գործունեության և հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտներում:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ սահմանադրական բարեփոխում, սոցիալական պետություն, մարդու իրավունքներ, սահմանադրական երաշխիքներ

Շուկայական տնտեսության պայմաններում պետության և մարդու փոխհարաբերության հարցը եղել և մնում է տնտեսական, քաղաքական-իրավական մտքի կենտրոնական հարցերից, որովհետև այն շոշափում է ինդուստրիալ և հետիեդուստրիալ հասարակության կարևորագույն սկզբունքները՝ ազատությունը և սոցիալական հավասարությունը: Իրավական պետության ձևավորումը կարելի է համարել մարդկային քաղաքակրթության մեծագույն նվաճումներից մեկը, որովհետև այն լուծեց մարդու «իրավունքների առաջին սերնդի» հիմնախնդիրը և ապահովեց մարդու ազատությունն ու ձևական (իրավական) հա-

վասարությունը, սակայն ինդուստրիալ հասարակությունն իր զարգացման ընթացքում չկարողացավ լուծել մարդկանց սոցիալական (փաստական) հավասարության խնդիրը և առաջացավ հակասություն այդ երկու սկզբունքների միջև: Անհատական ազատության սկզբունքի կենսագործումը պետության հիմնական պարտականությունը համարելով ցանկացած միջամտությունից այդ ազատության պահպանությունը ապաճորտացրեց մարդկանց նախաձեռնությունը և ինքնագործունեությունը, նպաստեց մասնավոր ձեռնարկատիրության և շուկայական տնտեսության զարգացմանը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում նշված է, որ «Հայաստանի Հանրապետությունում 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքում իրականացված բարեփոխումները համակարգային լուծումների առումով... առաջընթաց գրանցելով հանդերձ, բովանդակեցին նաև մի շարք կիսալուծումներ, որոնք ներկայումս հաղթահարելու և համակարգային մոտեցումներն ամբողջականացնելու անհրաժեշտություն ունեն: Մասնավորապես, դրանք վերաբերում են սկզբունքներին նոր մոտեցումներ պահանջող հետևյալ հիմնախնդիրներին.

- ա) Իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորման, ապահովման ու իրացման սահմանադրաիրավական անհրաժեշտ նախադրյալների ստեղծմանը,
- բ) մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների ամրապնդմանը,



գ) սոցիալական պետության սահմանադրական սկզբունքի առավել հստակ երաշխավորմանը»:

Մեր հասարակության կյանքի վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ վերը շարադրված Սահմանադրության դրույթը կարելի է գնահատել միայն որպես ծրագրային դրույթ, քանի որ ներկայիս պայմաններում պետությունը չունի ոչ երկարաժամկետ սոցիալական քաղաքականություն, ոչ կայուն տնտեսություն, ոչ իրավունքի սկզբունքներին կողմնորոշվածություն, առանց որոնց հնարավոր չէ սոցիալական գործառույթների իրականացումը, սակայն սոցիալական պետականության զարգացումը ազատ հասարակության համար միակ հնարավոր ուղին է: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել պետականության սոցիալական ասպեկտների իրականացմամբ անհաջողության պատճառներին և փորձել սահմանել դրանց հաղթահարման ուղիները:

Ամենից առաջ անհրաժեշտ է նշել պայմանների տարբերությունները, որոնցում տեղի է ունենում զարգացած կապիտալիստական երկրներում սոցիալական պետությունների ձևավորումը և պայմանները, որոնցում առաջադրվում է Հայաստանում սոցիալական պետականության ձևավորումը:

Սոցիալական գործառույթների վերաբերյալ հարցը ծագել է Արևմուտքում արդեն հստակ ամրապնդված իրավական պետականության իրավիճակում, երբ «ագրեսիվ կուտակման» նախնական շրջանը փոխարինվում է շուկայով, որը վերջնական արդյունքում գործում է իրավունքի սահմաններում: Պետության սոցիալականության ընդունումը, որը անխուսափելիորեն կապված է նաև տնտեսական գործընթացների վրա պետության որոշակի ազդեցության ընդունման հետ, չէր կարող այդ հանգամանքներում անցնել իրավունքի սահմանները և հանգեցնել տնտեսության կարգավորման վարչահրամայական մեթոդների

կիրառությանը: Տնտեսական ձկուն քաղաքականության կիրառությունը և գործառույթների իրականացումը դարձան պետության սոցիալական կոչվածության իրականացման հիմնական եղանակներ:

Սոցիալական պետականության ձևավորման խնդիրը առաջադրվում է Հայաստանի պայմաններում, երբ վերջինս հենքեր չի ստացել իրավունքում, մարդու իրավունքներում: Ծագում է իրավիճակ, որի դեպքում սոցիալական պետությունը դիտարկվում է ոչ թե իրավական պետության զարգացման նոր փուլ՝ հանդիսանալով մարդկանց կյանքը նորմավորող և կարգավորող հստակ իրավական բնութագրերի ձեռք բերման հետևանք, այլ իրավական անկայունության և անկարգավորվածության, իրավական նիհիլիզմի, անհատների իրավունքների չհարգման իրավիճակներում: Դա հանգեցնում է «նախնական կուտակման» գիշատչային եղանակներին, որոնք համատեղելի չեն իրավունքի հետ:

Տնտեսության բարեփոխությունները չհանգեցրեցին իշխանության և սեփականության տարանջատմանը, չստեղծեցին սեփականատերերի «միջին խավ»: Տեղի ունեցավ հսկայական հարստության կուտակում մարդկանց փոքր խմբերի ձեռքերում և բնակչության էական հատվածի աղքատացում:

Սոցիալական պետականության վերաբերյալ հարցը ծագեց Արևմուտքում այն ժամանակ, երբ ստեղծվեց հզոր տնտեսական պոտենցիալ, որը հնարավորություն է տալիս իրականացնել ու եկամուտների վերաբաշխման միջոցները առանց սեփականատերերի ինքնավարության և ազատության էական սահմանափակումների: Տնտեսական ցանկացած անբարեհաջողությունների (արտադրության անկում, տնտեսության լճացում) ռեակցիան անխուսափելիորեն հանդիսանում է սոցիալական ծախսերի կրճատումը: Նշանակում է «ագգային հարստության կուտակումը» պետության սոցիալական գործառույթների իրակա-

նացման պարտադիր պայմանն է:

Նման պայմանները Հայաստանում բացակայում են: Տեղի է ունենում արտադրության կտրուկ անկում: Ձեռք չի բերվել նույնիսկ տնտեսության հարաբերական կայունություն: Վատթարանում է ապրանք արտադրողների իրավիճակը, շատ ձեռնարկություններ դառնում են սնանկ: Ներդրումային ներուժը դանդաղ է աճում: Պետությունը ունի հսկայական արտաքին պարտքեր: Անդադար աճում է գործազրկությունը և արտագաղթը:

Արևմտյան աշխարհում սոցիալական պետականության ձևավորումը իրականացվում է զարգացած քաղաքացիական հասարակությունում, որը ստեղծում է պայմաններ հասարակական հարաբերությունների հարմոնիկացման, կատակլիզմների կանխարգելման և հատուկ հակամարտության խնդիրների լուծման նպատակներով: Հասուն քաղաքացիական հասարակությունը լավագույնս է ընդունում կարեկցանքի, բարեգործության, մարդկանց սոցիալական անպաշտպանության վերաբերյալ հոգացությունը:

Հաշվի առնելով անցումային շրջանում հայ հասարակության առանձնահատկությունները դրա ապակառուցողական տնտեսությամբ, դեֆորմացված հասարակական գիտակցությամբ, խախտված հոգևոր-բարոյական կողմնորոշիչներով՝ անհրաժեշտ է ձևակերպել պետության և քաղաքացու փոխհարաբերությունների սկզբունքները՝ կանխարգելելով դրա բևեռացումը, հեռացնելով լարվածությունը: Հավասարաչափ աջակցելով շուկայական հարաբերությունների զարգացմանը՝ պետությունը ստանձնում է քաղաքացու սոցիալական պաշտպանության գործառույթը, այն արտահայտվում է միջոցների համակարգում, որոնք կոչված են ապահովելու ՀՀ Սահմանադրության հոդ.1-ով նախատեսված յուրաքանչյուր մարդու արժանապատիվ կենսամակարդակը:

Հաշվի առնելով վարչական-տնտեսական համակարգի փլվածքների վրա ձևավորվող հարաբերությունների յու-

րօրինակությունը, դժվարությունները շուկայական հարաբերություններին անցման մեջ, աղքատության սահմանագծից այն կողմ հայտնված բնակչության հսկայական զանգվածների ծագումը՝ պետությունը անցումային շրջանում պահպանում է վերաբաշխման հարաբերությունների կարգավորման իրավասությունները ձևափոխված ձևերով: Դա արտահայտվում է հասարակության տարբեր սոցիալական շերտերի միջև եկամուտների վերաբաշխման, հարկման, պետական բյուջեի, սոցիալական ծրագրերի, մասնավորապես աղքատության հետ պայքարի ծրագրերի ֆինանսավորման նպատակահարմար համակարգերի հաստատման միջոցով:

Պետությունը հաշվի է առնում հասարակության կյանքում գիտության (մասնավորապես՝ հիմնարար) և մշակութային յուրօրինակությունը և բացառիկ նշանակությունը, որոնք չեն կարող և չպետք է ներառվեն շուկայական տնտեսությունում (սման ընդգրկումը կարող է հանգեցնել վերջիններիս լիարժեք դեգրադացման և քայքայման), իրականացնում է դրանց մշտական ֆինանսավորում՝ աջակցելով և զարգացնելով մշակութային և գիտական ծրագրեր:

Նոր տնտեսական հարաբերությունների պայմաններում պետության խնդիրն է՝ սոցիալական արդարության, իրավահավասարության, մարդկանց միջև հարաբերություններում բարոյականության ապահովումը: Այս սկզբունքները կարող են իրականացվել սոցիալական ծրագրերի ընդլայնման ուղիներով, բարեգործության խթանմամբ (մասնավորապես՝ բարեգործական գործունեություն իրականացնող գործարարական կառույցներին հարկատվությունից ազատում), գնագոյացման գործընթացի վրա ազդեցությամբ: Վերջինս հնարավոր է արտադրության և առևտրի ոլորտներում մենաշնորհի չեզոքացմամբ, և այստեղ պետության դերը շատ մեծ է:

Երկարաժամկետ, հեռանկարային

նպատակի որակով պետությունը պետք է առաջադրի մարդկանց վիճակների հավասարեցման խնդիրները, չնայած, որ փաստացի, այլ ոչ միայն իրավաբանական հավասարության ձեռքբերումը անիրականանալի խնդիր է: Դա չի նշանակում հավասարության գաղափարների մերժում. այդ գաղափարը իրենից ներկայացնում է հսկայական, բարոյական ներուժ, քանի որ մարդկանց հավասարության ձգտումները ուժեղ են նրանց ազատության ձգտումներից: Հավասարության և արդարության այդ անսանձ ձգտման հետ հասարակությունը հաշվի չնստել չի կարող: Դա նաև պայմանավորում է պետության սոցիալական կողմնորոշման քաղաքականության անհրաժեշտությունը:

Մեր հասարակության զարգացման ուղիների, տնտեսական և սոցիալական ոլորտներ պետության միջամտության սահմանների, միջին դասի ստեղծման մեջ պետության դերի սահմանումը, պետության սոցիալական դերի ընդլայնումը, որը նշանակում է վերջինս «հասարակական ծառայության առաքինության» վերագրում, քաղաքացու առջև նրա արժանապատիվ կենսապայմանների ստեղծման համար պետության պատասխանատվության աճը անցումային շրջանում սոցիալական քաղաքականության կարևոր խնդիրներն են:

Հասարակական հումանիզմի դրսևորման և քաղաքակրթության առաջընթացի մեծագույն ձեռքբերում է սոցիալական պետության կազմավորումը, ուր հասարակության անդամները, սահմանադրական համաձայնության հիման վրա, որոշում են իրենց առաջընթացի նպատակը, հստակեցնում նպատակ – նախադրյալ – միջոց հարաբերակցությունը: Սա հասարակական համակեցության ավելի բարձր որակ է: Սոցիալական կարող է լինել այն պետությունը, որպես մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամբողջական և գործուն համակարգ է ստեղծվել, ուր պետության կառավարման ամբողջ համակարգը խարսխված է

հասարակական շահերի ներդաշնակման սկզբունքի վրա:

Սոցիալական պետության լիարժեք գոյության հիմքը տնտեսական զարգացման մակարդակն է, որը թույլ է տալիս պահպանելով մրցակցությունը ձկուն հարկային քաղաքականության միջոցով նպաստել տնտեսության զարգացմանը, կառուցվածքային փոփոխություններին, ֆինանսավորել սոցիալական ծրագրերը, սակայն տեսակետը, որ մարդու իրավունքների անբավարար ապահովումն ունի միայն տնտեսական պատճառներ, մոլորություն է: Ո՛չ զարգացման մակարդակը, ո՛չ աճի տեմպերը, ո՛չ բնակչության մեկ շնչին հասնող եկամտի մեծությունը չեն պայմանավորում նվաճումները մարդու իրավունքների ոլորտում: Տարբեր երկրներում այդ ցուցանիշների հավասար պայմաններում հնարավոր են իրավունքների իրականացման տարբեր աստիճաններ: Իհարկե, ճիշտ չէր լինի անտեսել տնտեսական ռեսուրսների դերն իրավունքների իրականացման գործում: Տնտեսական աճը, անշուշտ, անհրաժեշտ է, բայց ինքնին՝ ոչ բավարար: Տնտեսական աճը և իրավունքները պայմանավորելու համար անհրաժեշտ է մշակել ռազմավարություն. ռեսուրսների բաշխումը եւ տնտեսական աճի կառուցվածքը պետք է կողմնորոշել դեպի չունևորների շահերը, մարդկային ներուժի զարգացմանը և իրավունքների իրականացմանը:

Այն հանգամանքը, որ մարդու սոցիալական տնտեսական և մշակութային իրավունքները հավասարաարժեք են առաջին սերնդի իրավունքների հետ, որ դրանք նույնքան «բնական և անօտարելի են», որքան և քաղաքական ու քաղաքացիական իրավունքները, ուղղակիորեն ամրագրված են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի նախաբանում, որում ասված է, որ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին համապատասխան, վախից ու կարիքից ձերբազատված մարդկային ազատ անհատի իդեալը կա-

րող է իրականացվել, եթե ստեղծվեն այնպիսի պայմաններ, երբ յուրաքանչյուրը կարող է օգտվել ինչպես իր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներից, այնպես էլ քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից: Վախից ու կարիքից ազատ մարդկանց հասարակությունն առկա է միայն այն դեպքում, երբ կայացած սոցիալ-իրավական պետությունն առաջին սերնդի իրավունքների հետ համահավասար երաշխավորում է նաև երկրորդ սերնդի իրավունքները:

Սոցիալական քաղաքականության հայեցակարգը, որը հենված է իրավունքի գերակայության վրա և ապահովում է կտրուկ սոցիալական անհավասարությունների աստիճանական չեզոքացում, արդարություն և բարոյականություն՝ նոր հասարակության մոդելի կարևորագույն ասպեկտներն են, որ պետք է ձևավորվեն Հայաստանում: Միայն նման հայեցակարգի իրականացան հունում հնարավոր է անհատների սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների իրական **ապահովման** պայմանների ստեղծում, վերջիններիս մասնակցությունը Հայաստանի քաղաքական ձևափոխություններում, ժողովրդավարական հասարակության ստեղծումը:

Սոցիալական պետության կայացումն անընդհատ և մշտական գործընթաց է, պահանջում է համարժեք մոտեցում յուրաքանչյուր նոր ու փոփոխվող իրավիճակում: Միայն է այն մոտեցումը, թե պետությունը կարող է սոցիալական համարվել միայն այն դեպքում, երբ արդեն ստեղծել է հզոր տնտեսական նախադրյալներ և կարող է ժամանակ գտնել մտածելու մարդկանց սոցիալական կարիքների մասին: Մարդկանց պահանջունքների և դրանց բավարարման հնարավորությունների արդարացի ներդաշնակման խնդիրը գոյություն ունի յուրաքանչյուր պահ, և այն դինամիկ երևույթ է: Այլ բան է, որ տարբեր հնարավորությունների պարագայում սոցիալական բավարարման տարբեր խնդիրներ կարող են լուծվել: Բայց դա չի

նշանակում, որ ժամանակի ու տարածության մեջ միջոցը կարող է կտրվել նպատակից, առավել ևս հակադրվել դրան:

Ինչ վերաբերում է անցման շրջանին, հատկապես՝ ճգնաժամային կառավարման իրավիճակներին, ապա սոցիալական պաշտպանվածության խնդիրը պետության համար ստանում է հատուկ առաջնահերթություն: Ավելին, եվրոպական երկրների փորձը վկայում է, որ պետության սոցիալական գործառույթը հատկապես ընդգծվեց և սահմանադրորեն ամրագրվեց համակարգային վերափոխումների ընթացքում, քանի որ նման վերափոխումների գերագույն նպատակը մարդն է, նրա կարիքների բավարարումն ու, ինչպես պատկերավոր նշվում է՝ «...հասարակության մարդկայնացումը»: Հետևաբար, անցման շրջանում պետության հիմնական խնդիրն է շուկայական հարաբերություններին անցնելու թափը հավասարակշռել սոցիալական պաշտպանվածության հուսալի համակարգով:

Սոցիալական պետությունն անհատի և հասարակության, անհատի և պետության փոխհարաբերությունների ներդաշնակման ավելի բարձր աստիճան է ենթադրում: Այն պետք է ճանաչվի, ընկալվի ու պաշտպանվի հասարակության յուրաքանչյուր բջջի կողմից, վարքագծի պարտադիր կանոն պետք է դառնա, որ այն ամենը, ինչն անօրինական է, արդար չէ ու անհարիր է սոցիալական պետությանը:

Սոցիալական պետության կայացումը ենթադրում է նաև խելամիտ սպասելիքների ու պահանջունքների խնդրի առաջադրում: Հասարակության անդամների սպասելիքների իմացությունը, ռացիոնալ սպասելիքների ձևավորումը, դրան համապատասխան՝ համակեցության նոր արժեհամակարգերի անհրաժեշտությունը ոչ միայն համակարգված ու ծրագրված տնտեսական, այլև քաղաքական ու, առավել ևս բարոյական նոր մոտեցումներ են պահանջում: Բանն այն է, որ անցման շրջանին բնորոշ այնպիսի վիճակներ, ինչպիսիք են խաթարված վերարտադ-

րական համակարգը, արմատական վերակազմակերպման անհրաժեշտություն ունեցող և սեփական կառուցվածքային հիմք չունեցող տնտեսությունը, անորոշության գործոնը, աղճատված հասարակական գիտակցությունը, փլուզված արժեհամակարգերը և այլն, թելադրում են անհատի ու հասարակության փոխհարաբերությունների նոր սկզբունքների

ակտիվ ու համակարգված ձևավորում: Առանց դրա անհնարին է հաղթահարել ծայրահեղ բևեռացումն ու անհանդուրժողական հակադրությունը, մեղմել հասարակական լարվածությունը, ապահովել ներդաշնակ զարգացում:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝ 25.03.2015թ.

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան, 2010, էջ 47:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան, 2010, էջ 52:
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան, 2010, էջ 52:

## **ПРОБЛЕМЫ СТАНОВЛЕНИЯ СОЦИАЛЬНОГО ГОСУДАРСТВА В АРМЕНИИ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННЫХ РЕФОРМ**

**АРТАК МАНУКЯН**

*Национальная Академия наук РА,  
Институт философии, социологии и права, соискатель*

Статья посвящена анализу проблем становления социальных государств, в которых установлена полная и функциональная система гарантии прав человека и государственного управления, основанная на принципе гармонизации в интересах общества. В статье затронуты вопросы государственного значения в новых экономических условиях, в частности, социальной справедливости, равенства, обеспечения морали.

Дата представления статьи: 25.03.2015

## **THE SOCIAL STATE- BUILDING PROBLEMS IN THE CONTEXT OF THE CONSTITUTIONAL REFORMS IN ARMENIA**

**ARTAK MANUKYAN**

*The National Academy of Sciences of the Republic of Armenia,  
Applicant at the Institute of Law and Philosophy*

The article analyzes the problems of the social state-building in which there is a complete and functional system of guarantees for human rights and governance, based on the principle of harmonization in the public interest. The article touches upon issues of national significance in the new economic conditions, particularly, of social justice, equality and ensuring morality.

Article submission date: 25.03.2015

**ԻՆՔՆԻՇԵԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Աշխատանքը նվիրված է պետության ինքնիշխանության և մարդու իրավունքների հարաբերակցության և վերջիններիս սահմանադրական ամրագրման ու կարգավորման հիմնախնդիրների ուսումնասիրությանը, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության սահմանադրական բնութագրիչների համատեքստում պետության կողմից իր քաղաքացիների կամքն արտահայտելու և նրանց իրավունքներն ու շահերն ապահովելու հիմնահարցերի հետազոտությանը:

Պետության ինքնիշխանության՝ որպես քաղաքական-իրավական սկզբունքի իրացմամբ ու նշանակությամբ է սահմանվում պետության որակական վիճակը, այդ թվում՝ ժողովրդի լիարժեք իշխանության ու պետության տարածքային գերակայության ու նրա անկախության երաշխավորման միջոցով:

Տեսականորեն հիմնավորվում է, որ պետական իշխանության և նրա ինքնիշխանության սահմանների սահմանումը կախված է այն հանգամանքից, թե ինչպես են պաշտպանվում մարդու իրավունքներն ու ազատությունները՝ որպես այդ իշխանության սահմանափակիչներ:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** ինքնիշխանություն, պետական ինքնիշխանություն, պետության ինքնիշխանության և մարդու իրավունքների հարաբերակցություն:

Պետության ինքնիշխանության և մարդու իրավունքների հարաբերակցության և վերջիններիս սահմանադրական ամրագրման ու կարգավորման հիմ-

նախնդիրները քաղաքական և իրավական այն հարցադրումներից են, որոնք կարևորվում են ինչպես Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության սահմանադրական բնութագրիչների համատեքստում, այնպես էլ ինքնիշխան պետության կողմից իր քաղաքացիների կամքն արտահայտելու և նրանց իրավունքներն ու շահերն ամբողջ ծավալով ապահովելու առումով:

Պետության ինքնիշխանությունն իրենից ներկայացնում է կարևոր քաղաքական-իրավական սկզբունք: Այդ սկզբունքով է սահմանվում պետության որակական վիճակը՝ ապահովելով ժողովրդի լիարժեք իշխանության ու պետության տարածքային գերակայությունը և նրա անկախությունը միջազգային հարաբերություններում:

Զարգացած քաղաքացիական հասարակություն ունեցող ժողովրդավարական պետություններում բացարձակ ինքնիշխանության մասին խոսք չի կարող գնալ, քանի որ պետական իշխանությունը օժտված չէ գործողությունների բացարձակ ազատությամբ և առանց որևէ պատասխանատվություն կրելու հնարավորությամբ: Այս առումով իրավացի են պրոֆետորներ Ա. Հարությունյանը և Գ. Հարությունյանը, որ իրավունքների ու ազատությունների անմիջական գործողությունը ենթադրում է անձի, հասարակության և պետության միջև որոշակի կապերի առկայություն, որը երաշխավորում է անհատի ինքնաիրացման իրավաբանական անհրաժեշտ ու բավարար նախադրյալներ [1, էջ 69-70]:

Պետությունը և նրա մարմինները իրենց գործունեությունում առաջին հերթին դիտարկվում են որպես ժողովրդի կամքն արտահայտող և նրա իրավունքներն ու շահերը պաշտպանող ներկայացուցչական մարմիններ:

Մյուս կողմից՝ պետությունը չի կարող օժտված լինել հարաբերականորեն սահմանափակված իշխանությամբ, քանի որ կապված է ժողովրդի և առանձին քաղաքացիների նկատմամբ ստանձնած պարտավորությունների կատարման հետ: Ինչպես արդարացիորեն նկատում է պրոֆեսոր Բ.Ս.Էբգենը, «համաձայն հասարակության ժողովրդավարական արժեքանության՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու հիմնական ազատությունները հանգուցային ցանկացած օրենսդիրի համար են» [2, էջ 171]:

Միևնույն ժամանակ մարդու իրավունքները և ազատությունները ոչ միայն սահմանում են պետական իշխանության, այլ նաև հաստատում ազգային ինքնիշխանության բովանդակության սահմանները: Որևէ ժողովրդի համար իրական ինքնիշխանություն չի կարող համարվել, եթե յուրաքանչյուր անհատ չի տիրապետում իրական իրավունքներին և ազատություններին, որոնք օրենսդրորեն ապահովված և գործնականում ներդրված չեն պետության իրավակիրառական գործունեությունում:

Միաժամանակ, անհրաժեշտ է ընդգծել, որ ժողովրդի ինքնիշխանության բացարձակ ինքնաբավ լինելը ոչ պակաս վտանգավոր է, քան պետական ինքնիշխանության անսահմանափակությունը, հատկապես այն դեպքերում, երբ ազգային կամքի արտահայտման դերը ստանձնում են տարատեսակ քաղաքական կուսակցությունները և շարժումները, որոնք կարող են հետապնդել անգամ ժողովրդի իրական շահերին հակասող նպատակներ:

Ակնհայտ է հետևյալը, որ ինչպես պետական, այնպես էլ ժողովրդի ինքնիշխանության բացարձականացման

ցանկացած միտում նպաստում է տոտալիտար քաղաքական համակարգի ձևավորմանը, անձի իրական ազատությունների և իրավունքների գերակայության բացառմանը: Եվ այս առումով տեղին է մեջբերել քաղաքագետ Ա.Պեչերի այն պնդումը, ըստ որի՝ մարդկության խորքային փոփոխությունների (գլոբալիզացիայի) կայսրության դարաշրջանում հենց պետական ինքնիշխանությունն է դեպի նրա փրկության ճանապարհի գլխավոր խոչընդոտը [2, էջ 177]:

Մարդու իրավունքների և ինքնիշխանության հարաբերակցությունը, ըստ էության, հասարակական ու պետական կյանքում ընդհանուրի և անհատականի հարաբերակցության խնդրի բաղկացուցիչ մասն է կազմում: Այս հարաբերակցության ցանկացած շեղում կարող է հանգեցնել մարդու և քաղաքացու հիմնական ազատությունների ու իրավունքների անտեսմանը, կամ պետականության և մարդկության համակեցության կանոնների խաթլմանը:

Այստեղից՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով ամրագրված նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ՝

ա) ինքնիշխանության իրացման շրջանակում պետությունը ճանաչում է մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեքներ (1-ին մաս),

բ) այդ իրավունքներն ու ազատությունները կրում են բնական ու անօտարելի բնույթ, ինչը ենթադրում է նաև սահմանել ինքնիշխան պետության և նրա մարմինների ու պաշտոնատար անձանց անմիջական իրավաբանական պարտականություններ այդ արժեքների առաջնահերթ պաշտպանության նպատակով (1-ին մաս),

գ) դրանք այն սոցիալական արժեքներն են, որոնց պաշտպանությունը պետք է համապատասխանեցվի միջազգային իրավական չափանիշներին (2-րդ մաս),

դ) այդ իրավունքներն ու ազատությունները՝ որպես անմիջական գործող իրավունքներ, կրում են սահմանափակիչ բնույթ պետության ինքնիշխանության իրականացման համար (3-րդ մաս):

Մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրի լուծումը, սակայն, չպետք է պայմանավորված լինի դրանց՝ միայն սահմանադրությամբ ամրագրմամբ: Տվյալ պարագայում ակնհայտ է, որ խոսքը գնում է մարդու իրավունքների պաշտպանության որակական արդիականացման և դրանց սահմանադրաիրավական գործնական մեխանիզմների ստեղծման մասին:

Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրական կարգավորումները, եթե, մի կողմից, իրականացնում են սոցիալական գործառույթներ՝ ուղղված դրանց իրացման սահմանների հաստատմանը, ինչպես նաև՝ այդ իրավունքների ու ազատությունների իրավական կարգավորման սկզբունքների և դրանց ոլորտային կարգավորման հիմքերի ամրագրմանը, ապա, մյուս կողմից՝ ունեն իրավական ուղղվածություն, քանի որ այդ կարգավորումների միջոցով են հաստատվում պետական իշխանության և դրա ինքնիշխանության սահմանները:

Այսպես՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխավորման համատեքստում ՀՀ Սահմանադրությամբ հռչակվել են պետական իշխանության և դրա ինքնիշխանության սահմանների սահմանման հետևյալ սկզբունքները.

ա) պետության և Սահմանադրությամբ ու օրենքներով փոխկապվածությունը (հոդվ. 5, մաս 1),

բ) մարդու և քաղաքացու իրավունքներով ու ազատություններով պետության սահմանափակվածությունը (հոդվ. 3, մաս 3),

գ) միջազգային իրավունքի սկզբունք-

ներին ու նորմերին համապատասխան մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանվածությունը (հոդվ. 3, մաս 2),

դ) համայնքներում բնակչության տեղական ինքնակառավարման երաշխավորումը (հոդվ. 11.2),

ե) Սահմանադրությամբ և օրենքներով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց լիազորությունների տարանջատվածությունը (հոդվ. 5, մաս 2) և այլն:

Հենց սահմանադրական այս սկզբունքների իրացման համատեքստում և պետական իշխանության ու դրա ինքնիշխանության սահմանների շրջանակում առավել արդիական են դառնում մարդու իրավունքների երաշխավորման ու պաշտպանության խնդիրը: Ինչպես արդարացիորեն նշում է ֆրանսիացի հայտնի մտածող Ժ. Մարիտենը. «Պետությունն օգտագործում է մարդու ուղեղը և էներգիան և վերջինս առանց մարդու իրենից ոչինչ չի ներկայացնում: Պետությունը գործիք է մարդուն ծառայելու համար, այն ոչ այլ ինչ է, քան մարմին, որին տրված է իրավունք իրականացնել իշխանություն ու հարկադրանք: Եվ հարկադրել մարդուն ծառայել այդ գործիքին, նշանակում է քաղաքական այլասերվածություն: Եվ հետո. ոչ թե մարդը գոյություն ունի պետության համար, այլ հակառակը՝ պետությունը գոյություն ունի մարդու համար» [3, էջ 21]:

Այստեղից ենթադրվում է, որ մարդու իրավունքների հիմնախնդրի գործնական լուծումը պետք է իրականացվի երկակի գործընթացների համադրմամբ. մի կողմից, անհրաժեշտ է հստակորեն սահմանել անձի նկատմամբ պետության պարտականությունների շրջանակները, պատասխանատվության կոնկրետ ձևերը և աստիճանները, մյուս կողմից՝ հաստատել այնպիսի երաշխիքներ, որոնք կապահովեն պետության, նրա մարմին-



ների ու պաշտոնակատար անձանց՝ կամայականություններից արդյունավետ պաշտպանությունը: Այս խնդրի լուծման առավել արդյունավետ ուղիներից մեկը, անկասկած ժողովրդավարական հասարակության կառուցումն է, որը պետք է իրականացվի օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի հիման վրա:

Նույնիսկ օրենսդիր իշխանությունը, որն ունակ է առավել լիարժեքորեն արտահայտել ու ժողովրդի ինքնիշխանությունը ներկայացուցչական ժողովրդավարության միջոցով, նույնպես օժտված չէ անսահմանափակ իշխանությամբ: Չնայած որ խորհրդարանական վերահսկողությունը մարդու իրավունքների ու շահերի պաշտպանության կարևորագույն մեխանիզմներից մեկն է, այնուամենայնիվ, չպետք է բացառել սահմանադրական այնպիսի ինստիտուտների դերակատարությունը, ինչպիսիք են՝ հանրաքվեն, ընտրությունները կամ ժողովրդի կամքի անմիջական արտահայտման այլ ձևեր<sup>1</sup>:

Այսպիսով, եթե Սահմանադրությունը հաստատում է պետության և մարդու ու քաղաքացու միջև հարաբերությունների հիմնարար հիմքերը, ապա այդ փոխհարաբերություններում ժողովրդական ինքնիշխանությունը դիտարկվում է պետական ինքնիշխանության, դրա գերա-

կայության, անկախության և ինքնուրույնության հիմքը:

Սակայն, անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ պետության և ժողովրդի փոխհարաբերությունները չեն կարող բնութագրվել որպես իրավահավասար: Ակնհայտ է, որ ժողովուրդը հանդիսանում է ինքնիշխանության միակ կրողը, հետևաբար, նրան է վերապահված պետական իշխանության նկատմամբ նրա գերակա դերակատարումը:

Բացի դրանից՝ Սահմանադրությունը միաժամանակ իրականացնում է կարևոր և մեկը մյուսի հետ սերտորեն կապված գործառույթներ. մի կողմից, այն հանդիսանում է օրենք, որի միջոցով ժողովուրդը հիմնադրում է պետության գործունեության հիմնարար և ղեկավար սկզբունքները, մյուս կողմից, այն հանդես է գալիս որպես օրենք, որով սահմանվում է իրավունքի այլ սուբյեկտների իրավական դրությունը՝ միաժամանակ, կարգավորելով վերջիններիս իրավական վարքագիծը:

Հենց այս հիմնավորմամբ՝ պետության սահմանադրական պարտավորությունները բնութագրվում են առանձնահատուկ սոցիալական նշանակությամբ, քանի որ հատկապես դրանք են երաշխավորում և՛ սահմանադրական կառուցվածքի կայունությունը, և՛ հասարակության ժողովրդավարական ինստիտուտների արդյունավետությունը, և՛ անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության ապահովումը:

Մարդու իրավունքների ապահովման սահմանադրական պրակտիկան վկայում է, որ քաղաքացիների սուբյեկտիվ իրավունքների ու ազատությունների նորմատիվային իրավական բովանդակությունը սահմանվում է երկակի նշանակությամբ. մի դեպքում, հիմնական օրենքով հռչակվում է մարդու և քաղաքացու սահմանադրական կոնկրետ իրավունքը, մեկ այլ դեպքում՝ Սահմանադրությունը այդպես էլ չի բացա-

1 Պետության և ժողովրդի միջև փոխհարաբերությունների խնդրի ժողովրդավարական տեսլականն իր արտացոլումն է ստացել միջազգային իրավունքի նորմաներում: Այսպես, օրինակ, Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության 1975 թվականի օգոստոսի 1-ի եզրափակիչ փաստաթղթում, բացահայտելով ժողովուրդների ու ազգերի իրավահավասարության և սեփական ճակատագրով տնօրինելու իրավունքների սկզբունքների բովանդակությունը, հաստատվել է, որ «բոլոր ազգությունները միշտ իրավունք ունեն ինչպես և երբ ցանկանում են լիարժեք ազատության պայմաններում սահմանել իրենց ներքին և արտաքին քաղաքական կարգավիճակը», ինչպես նաև «ըստ սեփական հայեցողության՝ իրականացնելու իրենց քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումները»:

հայտում այդ իրավունքի իրացման և այն կրողի իրավասության շրջանակը՝ բավարարելով միայն պետության պարտականությունների թվարկմամբ (Սահմանադրության 8, 14, 48-րդ և այլ հոդվածներ):

Անկախ սահմանադրական իրավունքների ամրագրման ձևից՝ պետության սահմանադրական պարտականությունների իրականացումն ինքնին ընկալվում է որպես քաղաքացիների իրավունքների ու ազատությունների, նրանց օրինական շահերի պաշտպանության ապահովում և նյութական, քաղաքական ու հոգևոր պահանջունքների բավարարում:

Ակնհայտ է նաև այն, որ բացի սոցիալական կարևորությունից ու նշանակությունից, պետության սահմանադրական պարտավորությունները ունեն նաև էական առանձնահատկություններ: Դրանք իրենցից ներկայացնում են քաղաքական, բարոյական և իրավաբանական սկզբունքների համակարգ, որոնք կարգավորում են պետության, հասարակության և անհատի միջև փոխհարաբերությունները:

Բացի դրանից այդ պարտավորությունները տարբերվում են ձևական որոշակիության բացակայությամբ, որը բնորոշ է հիմնականում ճյուղային օրենսդրական կարգավորումների համար: Վերջին հանգամանքը հնարավոր է դարձնում դրանք վերանայել և գնահատել իրավունքի այլ ոլորտների համար բնորոշ իրավաբանական իրա-

վունքների և պարտականությունների տեսանկյուններից:

Կատարելով ամփոփում՝ անհրաժեշտ է նշել, որ պետությունը, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինները և նրանց պաշտոնատար անձինք իրենց լիազորությունների իրականացման ժամանակ սահմանափակված են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով, և այդ լիազորությունները պետք է իրականացվեն այնպես, որ ապահովեն ժողովրդի իրական իշխանությունը և նրա կողմից պետության վերապահված ինքնիշխանությունը, համապատասխան տնտեսական, քաղաքական և իրավական պայմաններ ստեղծելու պայմանով: Այդպիսի պայմաններ և իրավական նախադրյալներ երաշխավորված են ՀՀ Սահմանադրության 3, 5 և այլ հոդվածներով, որոնք, սակայն, մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից որակական արդիականացման և դրանց սահմանադրաիրավական իրացման նոր կառուցակարգեր ստեղծելու կարիք ունեն: Ասվածի համատեքստում տեղին է մեջբերել այն խոսքը, որ ազատությունը, իսկապես, այն է, որ պետությունը հասարակությունից վեր կանգնած մարմնից վերածվի այնպիսի մարմնի, որպեսզի լիարժեքորեն կարողանա ծառայել այդ նույն հասարակությանը [2, էջ 181]:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝  
12.03.2015

## ՊՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ // Ընդ. խմբ. Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի, Եր., 2010,
2. Эбзеев Б.С. Конституция. Демократия. Права человека. М., 2002,
3. Маритен Ж. Человек и государство. М., 2000:

СУВЕРЕНИТЕТ И ПРОБЛЕМЫ КОНСТИТУЦИОННОГО РЕГУЛИРОВАНИЯ  
ПРАВ ЧЕЛОВЕКА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

**АРАМ ХАЧАТРЯН**

*Академия государственного управления Республики Армения, кафедра юриспруденции, аспирант*

Статья посвящена важной и актуальной теме конституционного права: проблемам реализации прав и свобод человека в контексте осуществления государственного суверенитета.

Теоретически обосновано, что определение границ государственной власти и его суверенитета во многом зависит от того, как защищаются права и свободы человека – ограничители самой власти.

Дата представления статьи: 12.03.2015

SOVEREIGNTY AND CONSTITUTIONAL ISSUES REGULATION OF  
HUMAN RIGHTS IN THE REPUBLIC OF ARMENIA

**ARAM KHACHATRYAN**

*Academy of Public Administration of the Republic of Armenia, Chair of Jurisprudence, Postgraduate*

The article is devoted to the important and actual subject of constitutional law: problems of realization of human rights and freedoms in the implementation context of national sovereignty.

It is theoretically proved that the definition of the state power boundaries and its sovereignty is largely dependent on how human rights and freedoms are protected – limiters of the power itself.

Article submission date: 12.03.2015

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌԱԶՄԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՅԱԼՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

Վերլուծվել են Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում ռազմական կրթության իրականացման քաղաքական-իրավական որոշ հիմնախնդիրներ և ըստ այդմ՝ նախանշվել են դրանց հաղթահարման հնարավոր ուղղությունները: Ուսումնասիրության տվյալների վերլուծության արդյունքների հիման վրա ներկայացված են այն օրենսդրական բացթողումները, որոնք բացասական ազդեցություն են գործում Զինված ուժերում զինծառայողների ռազմական կրթությունն արդյունավետ կերպով կազմակերպելու վրա: Այդ բացթողումների շարքին են դասվում.

ա) տվյալ ոլորտը կարգավորող միասնական իրավական-նորմատիվ ակտի չլինելը,

բ) ոլորտը կարգավորվում է ոչ օրենսդրական, այլ ենթաօրենսդրական մակարդակում:

Վերլուծված է նաև այն անհրաժեշտ միջոցառումների համախումբը, որոնց համակարգային մոտեցմամբ իրականացումը հնարավորություն կընձեռի ՀՀ ռազմակրթական տիրույթը համապատասխանեցնելու միջազգային չափորոշիչներին և այդ գործընթացի իրականացման համար ապահովելու անհրաժեշտ իրավական հիմքեր:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** ռազմական կրթության համակարգ, ռազմակրթական գործընթացի իրավական-քաղաքական հիմնախնդիրներ, կրթության հաջորդականություն, եռաստիճան կրթական

համակարգ:

ՀՀ Զինված ուժերում զինծառայողների ռազմական կրթությունն առ այսօր կազմակերպվում և իրականացվում է ընթացիկ իրավական ակտերի, այդ թվում՝ ՀՀ կառավարության որոշումների և պաշտպանության նախարարի հրամանների հիման վրա [3]: Ընդհանուր հայեցակարգային մոտեցմում չունենալու պայմաններում՝ Հայաստանի կրթական համակարգի բաղկացուցիչ մասը կազմող ռազմակրթական համակարգը զարգանում է նվազ տեմպերով, ինչը դժվարություններ է առաջացնում զինված ուժերի սպայական և ենթասպայական կազմերի կադրային ձկուն քաղաքականության, նրանց որակավորման բարձրացման գործում: Նկատի ունենալով, որ պաշտպանական բարեփոխումների համատեքստում ռազմական կրթության համակարգի զարգացումը գերակա խնդիր է՝ կարիք է զգացվում իրավական ամրագրման ենթարկելու միասնական հայեցակարգային մոտեցումները [1], որոնք հնարավորություն կտան էլ ավելի արդյունավետ իրականացնելու բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստումն ու առաջխաղացումը [8, էջ 258]:

2010-2015 թվականների պաշտպանական բարեփոխումների շրջանակում 2010 թվականին ձևավորվել էր միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի նպատակն էր մշակել ՀՀ ռազմական կրթության հայեցակարգի նախագիծը: Խմբի կազմում ընդգրկվել էին ներկա-

յացուցիչներ ՀՀ ՊՆ և ԶՈՒ ԳՇ շահագրգիռ ստորաբաժանումներից, այդ թվում՝ ռազմաուսումնական հաստատություններից, ՊՆ ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտից, ինչպես նաև՝ փորձագետներ ՀՀ կրթության և գիտության նախարարությունից, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայից, Երևանի պետական համալսարանից, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանից, ինչպես նաև՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից:

Աշխատանքային խմբի կողմից կատարված ինտենսիվ աշխատանքների արդյունքում ստեղծվեց ՀՀ ռազմական կրթության հայեցակարգի նախագիծ, որը պարբերաբար քննարկվում էր ՀՀ ՊՆ և ԶՈՒ ԳՇ վարչություններում, իսկ 2011 թվականի ընթացքում՝ նաև Հայաստան այցելած ՆԱՏՕ-ի փորձագիտական խմբերի հետ: Աշխատանքային խմբի կողմից քննարկումներն ավարտելուց հետո լրամշակված նախագիծը 2011 թվականին ներկայացվեց պետական շահագրգիռ մարմինների քննարկմանը, մասնավորապես՝ ՀՀ արդարադատության, կրթության և գիտության, ֆինանսների նախարարություններ, ՀՀ Նախագահի աշխատակազմ, գլխավոր ռազմական տեսչություն, ազգային անվտանգության խորհուրդ, ՀՀ ոստիկանություն և ազգային անվտանգության ծառայություն: Ստացված առարկություններն ու առաջարկությունները դրվեցին քննարկման ներքին աշխատանքային խմբի կողմից՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով համապատասխան փորձագետների: Լրամշակված նախագծի փաթեթը 2011 թվականի նոյեմբերին ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: ՀՀ կառավարության աշխատակազմից նախագծի վերաբերյալ կարծիքներ են ստացվել պետաիրավական, սոցիալական, իրավաբանական վարչություններից և ՀՀ

վարչապետի խորհրդականից: Արված առաջարկությունները մեծամասամբ ընդունվել են, մյուսներն էլ համաձայնեցվել առաջարկությունների հեղինակների հետ:

Արդյունքում ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացան և հաստատվեցին երեք կարևոր փաստաթղթեր՝ ՀՀ ռազմական կրթության հայեցակարգը, սպայական կազմի պատրաստման փուլերի ճանապարհային քարտեզը և հայեցակարգի ապահովման միջոցառումների ծրագիրը [5]: ՀՀ ռազմական կրթության հայեցակարգը ռազմական կրթության նպատակների և խնդիրների նկատմամբ պաշտոնական մոտեցումների համակարգ է: Նախանշվում են ռազմական կրթության գործող համակարգի բարեփոխումների ուղղությունները, մասնավորապես՝ ռազմական կրթության շարունակականությունը, եռաստիճան կրթական համակարգի ներդրումը, համագործակցությունը ազգային և միջազգային ուսումնական հաստատությունների հետ (ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական), գիտական ու գիտատեխնիկական կադրերի պատրաստումը, վերապատրաստումը, որակավորումը, ռազմական կրթության համակարգում ենթասպայական կազմի կրթության ներառումը, ինչպես նաև նախազորակոչային պատրաստության դիտումը՝ որպես սպայական պատրաստության փուլ: Ամրագրվում են նաև հայեցակարգի նպատակը և խնդիրները, այդ թվում՝

- 1) ռազմական կրթության համապատասխանեցումը պետական կրթական չափորոշիչների պահանջներին,
- 2) ռազմական կրթության համակարգի զարգացման և կատարելագործման ուղիների նախանշումը,
- 3) պաշտոնական առաջխաղացման ուղեգծի նախանշումը,
- 4) ռազմական կրթության փուլերի շարունակականության և ներդաշնա-

կության ապահովումը,

5) ռազմակրթական գործընթացի կառավարման և ռազմական կրթության զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորման նախանշումը:

Հայեցակարգում հստակեցվեց, որ ռազմական կրթության համակարգը ՀՀ ընդհանուր կրթական համակարգի բաղկացուցիչ մասն է և ապահովում է շարունակական կրթության իրականացման համար անհրաժեշտ կրթական միջազգային համագործակցություն՝ լայնորեն կիրառելով ժամանակակից նորարական կրթական և տեղեկատվական տեխնոլոգիաները: Սահմանվեցին սպայական կազմի պատրաստության փուլերը (նախագորակոչային պատրաստության, կրտսեր, ավագ և բարձրագույն սպայական կազմերի կրթության փուլեր), ինչպես նաև ենթասպայական կազմի կրթությունը՝ որպես մեկ օղակում սերժանտների, ավագների ու ենթասպաների պատրաստության երաշխիք: Հայեցակարգում տեղ գտան նաև առանձին դրույթներ, որոնք վերաբերում են գիտական և դասախոսական անձնակազմի պատրաստմանը, վերապատրաստմանն ու որակավորման բարձրացմանը, ազգային և միջազգային ուսումնական հաստատությունների համագործակցությանը՝ ՀՀ գինված ուժերի համար անհրաժեշտ մասնագետների պատրաստման, օտարերկրյա պետության գիտակրթական ներուժի օգտագործման, ինչպես նաև դաշնակից և գործընկեր պետությունների գինված ուժերի հետ համագործակցության ապահովման նպատակով: Հայեցակարգում ամրագրվեց նաև միջգերատեսչական ձևաչափով պաշտպանական-անվտանգային քաղաքագիտական բարձրագույն, հետբուհական և լրացուցիչ կրթության կազմակերպման անհրաժեշտությունը, որի ապահովումը պետք է իրականացվի ՀՀ ՊՆ ազգային ռազմավարական հետազոտություններ

րի ինստիտուտի կերպափոխման արդյունքում ստեղծվելիք պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի շրջանակներում:

Ամրագրվեցին նաև գինված ուժերի սպայական կազմի պատրաստության փուլերի ճանապարհային քարտեզը, նախանշվեցին սպայական կազմի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման փուլերը՝ ըստ ուսումնական հաստատությունների և ակնկալվող գինվորական պաշտոնների: Ըստ փուլերի՝ հստակեցվեցին այն քայլերը, որոնք անհրաժեշտ են կոնկրետ որակավորման և այդ որակավորման արդյունքում՝ պաշտոնեական առաջխաղացման համար: Ըստ այդմ՝ առաջադրվեցին սպայական կազմի պատրաստության հետևյալ փուլերը՝

- կրտսեր սպայական կազմի կրթության փուլ, որն ապահովվում է մարտավարական մակարդակում ռազմական գիտելիքներին և հմտություններին տիրապետող, առաջատարի ու հրամանատարի ունակություններով օժտված սպայական կազմի պատրաստում, վերապատրաստում և որակավորման բարձրացում,

- ավագ սպայական կազմի կրթության փուլ, որն ապահովվում է օպերատիվ-մարտավարական գործողությունների կառավարման և շտաբային աշխատանքներին տիրապետող բարձրագույն ռազմական կրթությամբ սպաների պատրաստում ու վերապատրաստում,

- բարձրագույն սպայական կազմի կրթության փուլ, որն ապահովվում է գինվորական կամ պետական այլ դեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց կրթությունն ու վերապատրաստումը:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է նշել, որ հայեցակարգով նախանշվել են ռազմական կրթության գործող համակարգի բարեփոխումների հիմնական ուղղությունները, մասնավորապես՝ ռազմական կրթության շարունակականությունը, եռաստիճան

կրթական համակարգի ներդրումը, փոխհամագործակցությունը, գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստումը, վերապատրաստումը, որակավորումը, ռազմական կրթության համակարգում ենթասպայական կազմի կրթության ներառումը, ինչպես նաև նախագորակոչային պատրաստության դիտումը՝ որպես սպայական պատրաստության փուլ: Երաշխավորվել են յուրաքանչյուր պաշտոնի ու համապատասխան կրթական չափանիշների տրամաբանական կապը, բարձրացվել են հայաստանյան քաղաքացիական բարձրագույն ուսումնական հաստատությունների և արտասահմանյան ուսումնական հաստատությունների դերն ու նշանակությունը ՀՀ ՋՈՒ սպայական կադրերի պատրաստման, արտերկրի գիտակրթական ներուժի կիրառման, ինչպես նաև դաշնակից և գործընկեր պետությունների զինված ուժերի հետ փոխգործունակության ապահովման գործում: Կարևորվել է նաև ստեղծվելիք պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի կողմից միջգերատեսչական ձևաչափով իրականացվելիք պաշտպանական-անվտանգային քաղաքագիտական բարձրագույն, հետբուհական և լրացուցիչ կրթության կազմակերպման անհրաժեշտությունը:

Յուրաքանչյուր զինծառայողի պատրաստումը, վերապատրաստումն ու որակավորման բարձրացումը, ինչպես նաև պաշտոնեական առաջխաղացումը՝ ըստ զբաղեցրած պաշտոնի և կոչման, անհրաժեշտ պահանջ են դառնում այդ փաստաթղթով: Արդյունքում, բարձրագույն ռազմական կրթությունն իրենից ներկայացնելու է ոչ թե մեկ քայլից բաղկացած կրթական գործունեություն, այլ՝ համակարգ, որը բաղկացած է մի քանի անբաժան, շարունակական կրթական տարրերից՝ դասընթացներից, վերապատրաստումներից, որտեղ մեկը հիմնվում, ներկառուցվում է մյուսի վրա և որոնց կապող օղակն են հանդիսա-

նալու զինծառայողների ծառայության ընթացքում ձեռքբերված փորձն ու գիտելիքները:

Որպես վերջնական արդյունք՝ նպատակ է դիտարկվում մշակելու ՀՀ ՋՈՒ-ի ենթասպայական (պրոֆեսիոնալ սերժանտական) կազմի կրթության և վարժանքների, ինչպես նաև ՀՀ ՋՈՒ-ի սպայական կազմի ակադեմիական կրթության համակարգը՝ ՀՀ քաղաքացիական բարձրագույն կրթության չափանիշներին և Բոլոնիայի գործընթացին համահունչ: Դրա համար էլ փորձառու, երիտասարդ և եռանդուն զինվորական մասնագետների ներդաշնակ զարգացումը՝ հայ զինվորականության լավագույն ավանդույթների պահպանմամբ և բազմապատկմամբ, հանդիսացել և միշտ էլ հանդիսանալու է ՀՀ զինված ուժերի բարեփոխումների անհրաժեշտ ուղեկիցը, քանի որ հայոց բանակը կարող է լինել հզոր և մարտունակ՝ միայն վերջինիս կազմում ունենալով զինվորականի պատիվը պահող ու պաշտող նվիրյալներ [9, էջ 64]:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է նաև Հայաստանի Հանրապետության ռազմաուսումնական հաստատություններ ընդունելության ու օտարերկրյա պետությունների ռազմաուսումնական հաստատություններում սովորելու համար թեկնածուների ընտրության կարգը [4]: Այդ փաստաթղթի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի այն դրույթի պահանջով, համաձայն որի՝ ՀՀ կառավարությունը պետք է հաստատի ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության կարգը [3, հոդված 10]:

Մինչ այդ ՀՀ պաշտպանության նախարարության ռազմաուսումնական հաստատություններ ընդունելության և օտարերկրյա պետությունների ռազմաուսումնական հաստատություններում

սովորելու համար թեկնածուների ընտրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում էին ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամանով, ինչի հետևանքով առաջանում էին ոչ միայն իրավական բնույթի խնդիրներ («Ջինապարտության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթի պահանջի մասով), այլ նաև որոշակի կիրառական բարդություններ: Մասնավորապես, այդ կարգերը հաստատված էին առանձին հրամաններով, ինչը բարդություններ էր ստեղծում դրանցում զետեղված դրույթների միասնական կիրարկման և միմյանց միջև համապատասխանության ապահովման առումով:

Փաստորեն՝ ռազմական կրթության բնագավառում ՀՀ պաշտպանության նախարարությունը որդեգրեց առավել միասնական և ճկուն քաղաքականություն՝ համակարգված եղանակով կարգավորելով ռազմաուսումնական հաստատություններ ընդունելության և դրա հետ կապված հարաբերությունները: Դրանով իսկ ՀՀ կառավարության կողմից միասնական կարգավորման են ենթարկվում ՀՀ ռազմաուսումնական հաստատություններ ընդունելության և օտարերկրյա պետություններում սովորելու համար թեկնածուների ընտրության հետ կապված հարաբերությունները՝ հիմք ընդունելով «Ջինապարտության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթի պահանջը:

Հարկ է ընդգծել, որ ռազմական կրթությունը իր նշանակային արժեքայնությամբ կարելի է դիտարկել երկու տեսանկյունից: Նախ՝ այն առանձնացված է երկրի ընդհանուր կրթական և ուսումնական գործընթացներից, և երկրորդ՝ տվյալ համակարգը խիստ արժևորվում է ՀՀ գինված ուժերի որակական առաջընթացի երաշխավորման ընթացակարգերում: Հայաստանի ազգային անվտանգության ոլորտի հայտնի մասնագետ Հ. Բոթանջյանի բազմաթիվ աշխատություններից մեկում հստակ դասակարգմամբ ներ-

կայացվում է Հանրապետության անվտանգության դեմ ուղղված արտաքին և ներքին սպառնալիքները, որոնք իրենց հերթին ըստ բնույթի առանձնացված են համաչափ ու անհամաչափ խմբերում [7, էջ 242, 249]: Ներքին անհամաչափ սպառնալիքների շարքում պրոֆեսորի կողմից դիտարկվում են սոցիալական շերտավորման խորացումն ու աղքատությունը, կոռուպցիոն դրսևորումները, պետական համակարգի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության գործում հասարակական կազմակերպությունների դերի նվազումը, իշխանությունների հանդեպ անվստահության խորացումը, հասարակության ազդեցիկ խմբերի միջև անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորումը և իշխանություններին անհնազանդության հնարավոր դրսևորումները, ժողովրդագրական բացասական միտումներն ու արտագաղթը, խոսքի ազատության ոչ լիարժեքությունը, ինչպես նաև առանձնակի ընդգծվում է գիտական ու մշակութային ներուժի շարունակվող արտահոսքը, գիտակրթական գործընթացների հետևողական զարգացումը, միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ կրթական համակարգի առկայությունը և այլն [6, էջ 686-688]:

Այսպիսով՝ պետք է փաստել, որ մեր երկրի պաշտպանության բնագավառում սկիզբ առած և արդեն իսկ նշանակալի ձեռքբերումներով իրականացվող բարեփոխումների շնորհիվ ոչ հեռու ապագայում հնարավոր կլինի Հայաստանի Հանրապետությունում նույնպես ունենալ միջազգային բոլոր չափանիշներին համապատասխանող որակյալ ռազմական կրթության համակարգ, որի շրջանավարտները կհամալրեն ոչ միայն պաշտպանության նախարարության համակարգը, այլ նաև պետական համակարգի այլ կարևոր օղակներ:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝  
28.02.2015



## ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2005.01.31/8, 14.12.2004:
2. «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը, ՀՀ ՊՏ 1998/26, 16.10.1998:
3. «Կրթության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 1999.05.14/12, 14.09.1999:
4. «Հայաստանի Հանրապետության ռազմաուսումնական հաստատություններ ընդունելության և օտարերկրյա պետությունների ռազմաուսումնական հաստատություններում սովորելու համար թեկնածուների ընտրության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 26.04.2012թ-ի թիվ 525 Ն որոշում:
5. ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 7-ի նիստում այդ փաստաթղթերը հավանության արժանացան և հաստատվեցին ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ:
6. Հայաստանի ազգային անվտանգությանն ուղղված մարտահրավերները. ազգային անվտանգության ռազմավարություն, Քոթանջյան Հ.Ս., Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Երևան, ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010, էջ 686-688:
7. Հ.Ս. Քոթանջյան, Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ, ԽՍՀՄ վերակառուցում - Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս-Աֆղանստան, Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2009, էջ 242, 249:
8. Տ.Տ. Քոչարյան, Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 258:
9. Օհանյան Ս., 21-րդ դարի բանակը, Եր., Տիգրան Մեծ, 2007, էջ 64:

## К ВОПРОСУ О ПОЛИТИКО-ПРАВОВЫХ ПРЕДПОСЫЛКАХ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ПРОЦЕССОВ ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

### ՏԱՐԳԻՍ ԿԵԴԻՏՅԱՆ

*Института национальных стратегических исследований МО РА,  
юрист-советник начальника*

Исследованы некоторые политико-правовые проблемы военно-образовательного процесса в ВС РА и представлены возможные направления их преодоления. На основе результатов анализа данных настоящего исследования представлены те упущения в сфере законодательства РА, которые отрицательно влияют на эффективность организации процесса военного образования военнослужащих.

Проанализирована также совокупность тех необходимых мероприятий, системное осуществление которых позволит в правовом аспекте привести систему военного образования РА в соответствие с международными стандартами. К числу таких упущений относятся: а) отсутствие регулирующего данную сферу единого нормативно-правового акта; б) регулирование военного образования не на законодательном, а на подзаконодательном уровне.

Дата представления статьи: 28.02.2015

SOME CONSIDERATIONS ON IMPROVING POLITICAL-LEGAL PREREQUISITES OF  
THE MILITARY EDUCATION PROCESS IN THE REPUBLIC OF ARMENIA

**SARGIS KEGISHYAN**

*Drastamat Kanayan Institute for National Strategic Studies, MOD, RA  
Attorney-Advisor to the Chief.*

Some political-legal issues of the military education process in the armed forces of the Republic of Armenia have been analyzed and accordingly a number of possible ways of overcoming them have been outlined. Based on the results of the study the legislative gaps that have a negative effect on the efficient organization process of military education of the servicemen in the armed forces are presented. These gaps include: a) the lack of a single legal normative act regulating the field, b) the sector is regulated not by legislation, but on a sub-legislative level.

The complex of necessary measures have also been analyzed, the implementation of which will enable the compliance of the armed forces of the RA to accepted international standards and the creation of a legal framework needed to ensure these processes.

Article submission date: 28.02.2015

# ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ

## ՏԻԳՐԱՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀՀԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն, քաղաքագիտության անբիռնի վարիչ,  
քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ

### ԱՆԴՐԱԴԱՐՁ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԻԴԻՆ ԱՌՆԶՎՈՂ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հոդվածում ներկայացվում են Խորհրդային Միության կազմավորման տարիներին ու հետագա շրջանում Լեռնային Ղարաբաղին առնչվող իրավաքաղաքական նշանակություն ունեցող մի շարք իրադարձություններ, վերլուծվում է դրանց ազդեցությունը կոնկրետ ժամանակահատվածներում հիմնախնդրի կարգավորման հնարավորությունների վրա, ինչպես նաև այդ փաստերը գնահատվում են Ղարաբաղյան հակամարտության ներկայացման փոփոխությունների համատեքստում:

**Հանգուցային բաներ և արտահայտություններ՝** ազգային ինքնություն, անկախություն, անվտանգություն, տարածքային ամբողջականություն, ինքնավարություն, բռնություն, բնակչություն:

Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, որը ամենահին հակամարտություններից է նախկին ԽՍՀՄ տարածքում, հետզհետե ավելի շատ է ձեռք բերում ձգձգված միջազգային և միջպետական խնդրի կարգավիճակ՝ զարգացման շղարշոտ հեռանկարներով: Սկզբնավորվելով 20-րդ դարի 80-ական թվականների վերջին (դեռևս ԽՍՀՄ քաղաքական տարածքում)՝ այն ԽՍՀՄ փլուզումից հետո ինքնաբերաբար վերածվեց երկու նորանկախ պետությունների՝ Հայաստանի և Ադրբեյջանի միջպետական խնդրի:

Խորհրդային Միության կառավար-

ման պետական համակարգում միութենական 15 հանրապետություններից բացի՝ եղել են նաև ինքնավար հանրապետություններ, մարզեր և օկրուգներ, որոնցից հինգը Անդրկովկասում էին, երեքը՝ Վրաստանում (Աբխազիա, Աջարիա և Հարավային Օսիա), երկուսը՝ Խորհրդային Ադրբեյջանում (Նախիջևան և Լեռնային Ղարաբաղ): Ըստ Խորհրդային ինքնավարությունների տրամաբանության՝ Ղարաբաղում պետք է բնակվեին ղարաբաղցիներ (ազգի մասով), մինչդեռ աշխարհում նման ժողովուրդ և լեզու գոյություն չունի, ևս մեկ անումալիա՝ միութենական 15 հանրապետություններից միայն Հայաստանն ու հայ ժողովուրդն էին, որոնք, ունենալով միութենական հանրապետության կարգավիճակ, ունեին մեկ այլ ազգային միավորում՝ ի դեմս ԼՂԻՄ-ի, հարևան միութենական հանրապետության սահմաններում:

1917թ. փետրվարին Ռուսական կայսրությունում, որի մաս էր կազմում նաև Անդրկովկասը, հեղափոխության հաղթանակի արդյունքում իշխան Գեորգի Լվովի նախագահությամբ կազմվում է Պետրոգրադի ժամանակավոր կառավարությունը: Ժամանակավոր կառավարությունը, որի իշխանությունը շարունակվեց ընդամենը ինը ամիս, մարտին ձևավորեց հանձնաժողով՝ Անդրկովկասի հատուկ կոմիտեն (Օզակոմ), Անդր-

կովկասը և Օսմանյան կայսրությունից գրավված տարածքները ղեկավարելու համար: Անդրկովկասի հայերը, վրացիները և թաթարները ողջունեցին փետրվարյան հեղափոխությունը, որը տապալեց Ռոմանովների դինաստիայի երեքհարյուրամյա գահակալությունը: Հայերը նաև ոգեշնչված էին Արևմտահայաստանի կարգավիճակի վերաբերյալ ժամանակավոր կառավարության նպաստավոր հայտարարություններից: Նույն թվականի նոյեմբերին՝ համառուսաստանյան սահմանադիր ժողովի ընտրություններում, վրաց մենշևիկները, մահմեդական մուսավաթականները և հայ դաշնակցականները շահեցին Անդրկովկասում քվեների ավելի քան 75 տոկոսը: Սահմանադիր ժողովը, որը պետք է որոշեր պետության վարչաձևը, գումարվեց միայն մեկ օր և 1918թ. հունվարին ցրվեց բոլշևիկյան նոր կառավարության հրամանով:

1918թ. ապրիլի 22-ին մենշևիկները Սեյմի մահմեդական խմբակցությունների աջակցությամբ առաջարկեցին հիմնադրել անկախ Անդրկովկասյան ժողովրդական Դաշնակցային Հանրապետություն [8, էջ 77]: Մայիսի 26-ին, 27-ին և 28-ին Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը հռչակեցին իրենց անկախությունը [3, էջ 5], սակայն նորահռչակ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կառավարությունը չէր կարող ժամանել իր հռչակած մայրաքաղաք Բաքու, քանի որ քաղաքական իշխանությունն այնտեղ գտնվում էր հայերի կողմից ընտրված Բաքվի խորհրդի ձեռքում, և Կովկասյան թաթարները բավարար ներուժ չունեին Անդրկովկասի մահմեդական խորհրդի անունից հռչակած պետությանը իրավական հենք տալու համար [10, էջ 16]: Ղարաբաղի հայերը, հաշվի առնելով այն փաստը, որ Թուրքիային հակադրվող Հայաստանը Ղարաբաղից անջատված էր և Ադրբեջանի հավակնությունների դեմ պայքարի հարցում ի վիճակի չէր գործուն օգ-

նություն տրամադրելու Ղարաբաղին, որոշեցին քաղաքական և իրավական ինքնուրույն ուղեգիծ որդեգրել:

Որպես վերջինիս դրսևորում՝ 1918թ. հուլիսի 22-ին Ղարաբաղի ազգային ներկայացուցիչների առաջին համագումարում Ղարաբաղը հայտարարվեց ինքնուրույն վարչաքաղաքական միավոր, ձևավորվեց Ղարաբաղի Հայկական Ազգային խորհուրդը և մերժվեցին Ադրբեջանի հավակնությունները՝ հայտարարելով, որ Լեռնային Ղարաբաղը երբեք Ադրբեջանական Հանրապետության մաս չի կազմել: 1918-20թթ. ԼՂ բնակչության լիազոր ներկայացուցիչների բոլոր ինը համագումարները, բացառությամբ յոթերորդի, մերժել են ԼՂ նկատմամբ ԱԳՀ հավակնությունները և երկրամասը հայտարարել են ՀՀ անկապտելի մաս[9, էջ 11]: Ղարաբաղցիները, երկրամասը հայտարարելով Հայաստանի անկապտելի մաս, միաժամանակ տեղում ձևավորում էին օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններ, քանի որ լավ գիտակցում էին, որ ցեղասպանության վերքը չբուժած Հայաստանը ի վիճակի չէր իր պաշտպանության տակ առնել Արցախը: 1918-1920թթ. Լեռնային Ղարաբաղը ինքնուրույն վարչաքաղաքական միավոր էր՝ ինքնիշխանության բոլոր բաղադրիչներով:

Ընդ որում, Ազգերի լիգայի ոչ մի անդամ երկիր չի ճանաչել Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը, նաև նրա «տարածքային ամբողջականությունը» 1918-20թթ. նրա կողմից ներկայացված սահմանագծմամբ, քանի որ դրանք դուրս էին ԱԳՀ-ի վերահսկողությունից [15]: Մինչև թուրքական ռազմական ինտերվենցիան Բաքվում և Շուշիում իշխանությունների ազգային հենարանը հայերն էին, և բնական է, որ 1918-20թթ. Արևելյան Անդրկովկասի երկու գլխավոր համայնքների՝ հայերի և կովկասյան թաթարների միջև բորբոքված էթնոքաղաքական վեճն, ըստ էության, ողջ երկրամասի ազգային-պետական կարգա-

վիճակի շուրջ էր: Սա նշանակում է, որ մինչև թուրքական ինտերվենցիան Ղարաբաղյան հակամարտությունը որպես այդպիսին չկար, իսկ էթնոքաղաքական հակամարտության ուժերի հարաբերակցությունը 1917թ. Արևելյան Անդրկովկասում բացառում էր կովկասյան թաթարների ազգային պետության ստեղծումը, եթե չլիներ Թուրքիայի միջամտությունը: 1918թ. սեպտեմբերին թուրքական կանոնավոր զորքերը գրավեցին Բաքուն և իշխանությունը հանձնեցին մուսավաթական կառավարությանը: Ադրբեջանական Հանրապետությունը Թուրքիայի կողմից նոր թուրքական պետություն հիմնելու փորձ էր, իսկ «Ադրբեջան» անվանումը թափանցիկ ակնարկ էր պարսկական այդ տարածքին հավակնելու (Իրանի հյուսիս-արևմուտքում) Թուրքիայի պլանների վերաբերյալ [10, էջ 18]:

«Ադրբեջանցիներ» և «ադրբեջաներեն» բառերը՝ որպես ժողովուրդ և լեզու բնութագրող եզրեր, միայն տարիներ հետո առաջացան՝ որպես հետևանք «Ադրբեջան» պետության կազմավորման: Համաշխարհային պատմության մեջ սա եզակի դեպք էր. նախ ստեղծված պետություն, ապա այդ անունով՝ ժողովուրդ և լեզու: Նրանք, ովքեր 1936թ. իրենց կոչեցին ադրբեջանցիներ, մինչ այդ անգամ հաստատված միասնական անուն չունեին. երբեմն կոչվում էին թաթարներ կամ մուսուլմաններ, երբեմն էլ թյուրքեր [4, էջ 52-53]: 1923թ. հուլիսի 31-ի Ադրբեջանական Կենտրոնական գործադիր կոմիտեի դեկրետը՝ «Ադրբեջանական ՄԽՀ պետական հիմնարկների ազգայնացման մասին», արձանագրում էր. «Ադրբեջանում խորհրդային իշխանության հռչակման պահից թուրքերենը՝ որպես մեծամասնության լեզու, հռչակվել է պետական: Ղարաբաղյան ինքնավար մարզի հետ հարաբերությունների լեզուն հայերենն էր»: 1920թ. ապրիլին խորհրդային իշխանության հաղթանակն Ադրբեջանում, իսկ մայիսին՝ Լեռնային Ղարաբաղում

հնարավորություն ստեղծեց թուրքական ինտերվենցիայի և մուսավաթականների նկրտումների հետևանքների վերացման համար: Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանություն հաստատելով՝ մարզի գյուղացիական ժողովները Խորհրդային Ռուսաստանին դիմեցին հովանավորության խնդրանքով, մինչդեռ ԱդրԽՍՀ կառավարությունը անմիջապես Ղարաբաղը Ադրբեջանին միացնելու մասին վերջնագիր ներկայացրեց, սակայն ղարաբաղցիները մերժեցին այդ վերջնագիրը [3, էջ 6]: Ադրբեջանի կողմից երկրամասի բռնազավթումը կանխելու համար հարց ծագեց՝ Խորհրդային Ռուսաստանի զորքերը մտցնելու մասին, սակայն Ադրբեջանի ղեկավարությունը, գիտակցելով, որ Լեռնային Ղարաբաղի և մշտապես Հայաստանին պատկանող տարածքների բռնազավթման քաղաքականությունը ցանկալի արդյունք չի տալիս՝ իր նպատակներին հասնելու համար, դիմեց այլ միջոցների:

Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատման հաջորդ օրը Ադրբեջանի Հեղկոմը 1920թ. նոյեմբերի 30-ի հեռագրով և 1920թ. դեկտեմբերի 1-ի հռչակագրով հայտարարեց այն մասին, որ Ադրբեջանը հրաժարվում է Ղարաբաղի, Ջանգեզուրի և Նախիջևանի նկատմամբ պահանջատիրությունից, սակայն, հաջորդ օրը՝ դեկտեմբերի 2-ին, մամուլում հրապարակվեց հռչակագրի փոփոխված տեքստ. Նախիջևանը և Ջանգեզուրը ձանաչվեցին ՀԽՍՀ-ի անբաժանելի տարածքներ, իսկ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ձևակերպումը փոփոխվեց, հռչակվեց, որ Խորհրդային Ադրբեջանը ձանաչում է ԼՂ ժողովրդի ազատ և լրիվ ինքնորոշման իրավունքը: Հենվելով Ղարաբաղի ժողովրդական ներկայացուցիչների ժողովի համագումարների՝ մինչ այդ ընդունած որոշումների և ԱդրԽՍՀ-ի հետ ձեռքբերված համաձայնության վրա՝ ՀԽՍՀ կառավարությունը 1921թ. հունիսի 12-ին ԼՂ-ն հռչակեց իր անբաժանելի մաս[14]: Նա-

խիջևանն իր հերթին 1920թ. նոյեմբերից մինչև 1921թ. մարտը ՀԽՍՀ տարածք էր և ձանաչված էր ինչպես ԱԽՍՀ, այնպես էլ ՌՍՍՀ-ի կողմից [9, էջ13]:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ երկու պետությունների իրավասու օրգանները հայտարարեցին և իրավաբանորեն ձևակերպեցին միջազգային համաձայնագիր՝ հրապարակված հուշագրի տեսքով: Ըստ էության՝ դա նշանակում էր, որ Ադրբեջանի կողմից նախաձեռնված տարածքային վեճը պետք է վերանա: Սակայն այդ որոշումը չիրագործվեց՝ Ադրբեջանի ղեկավարության դիրքորոշումը արմատապես փոխելու և Կովբյուրոյի անդամների անսկզբունքային Ղարաբաղի կարգավիճակը որոշվեց հօգուտ Հայաստանի, սակայն, դրան հակառակ, 1921թ. հուլիսի 5-ին Կովբյուրոն Ի. Ստալինի ձնշմամբ ընդունեց հակադիր և Ղարաբաղի հայերի համար կործանարար որոշում. «Ելնելով հայերի և մուսուլմանների միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից, Լեռնային և Դաշտային Ղարաբաղի տնտեսական կապից, Ադրբեջանի հետ նրա մշտական կապից՝ Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում, նրան ընձեռել մարզային լայն ինքնավարություն՝ վարչական կենտրոն ունենալով Շուշի քաղաքը, որը մտնում է ինքնավար մարզի կազմի մեջ»[3, էջ 7]:

Հարկ է նշել, որ Կովբյուրոյի որոշման մեջ որպես որոշման կեղծ քաղաքական հիմնավորում՝ ամրագրված էր Ադրբեջանի երկու հիմնական ազգերի՝ «հայերի և մահմեդականների միջև ազգային հաշտեցման» անհրաժեշտության գաղափարը: Ադրբեջանի հիմնվել է որպես հայերի ու մուսուլմանների ընդհանուր պետություն, որտեղ հայերը դիտվել են որպես այդ ինտերնացիոնալ հանրապետության հիմնադիր ազգերից մեկը: Որոշումն իրավական տեսանկյունից էլ ունի խիստ թերություններ: Այնտեղ նշվում էր, որ «ԼՂ-ն պետք է թողնել Ադրբեջանի կազմում», այնինչ՝ մինչ

որոշումը ԼՂ-ն որևէ կարգավիճակով չէր եղել Ադրբեջանի մաս, ուստի հնարավոր չէր այն թողնել Ադրբեջանի կազմում: Դրա ապացույցն է հանդիսանում նաև այն հանգամանքը, որ նախ՝ խորհրդային իշխանությունը Ղարաբաղում հռչակվել է 1920թ. մայիսին՝ Ադրբեջանի խորհրդայնացումից մեկ ամիս հետո, երկրորդ՝ իրոք Ադրբեջանին պատկանող տարածքներից ոչ մեկը նրա կազմի մեջ չի «թողնվել» Կովբյուրոյի կամ որևէ այլ մարմնի որոշմամբ:

Ինքնավար հայկական մարզը կազմավորվեց Ադրբեջանի ԿԳԿ 1923թ. հուլիսի 7-ի դեկրետով, որի մեջ հանրաքվեի մասին նույնիսկ չի հիշատակվում: Ըստ որում՝ ԼՂԻՄ-ից դուրս մնացին Ղարաբաղի բնիկ հայ բնակչություն ունեցող ընդարձակ տարածքները: Լեռնային Ղարաբաղի բնակչության ձնշող մեծամասնությունը կազմող հայությունը հետագայում մեկ անգամ չէ, որ դիմել է ԽՍՀՄ ղեկավարությանը՝ խնդրելով վերանայել Լեռնային Ղարաբաղի ենթակայության հարցը: Առավել ևս, որ մշտապես ենթարկվել է խտրական վերաբերմունքի ու ճնշումների: Դա հաստատող բազմաթիվ փաստերից մի քանի օրինակ. Խորհրդային Միության կազմում գոյություն ունեւր ութ ինքնավար մարզ, կազմավորումից մինչև 1986թ. այդ մարզերի բնակչությունն աճել է 60 տոկոսից մինչև 4 անգամ, մինչդեռ Լեռնային Ղարաբաղի բնակչությունը՝ միայն 12 տոկոսով, ինչը բացարձակապես չի համապատասխանում այդ տարիներին Լեռնային Ղարաբաղում արձանագրված ծնելիության մակարդակին: Ընդ որում, այդ նույն ընթացքում Հայաստանի ու Ադրբեջանի բնակչությունն աճել է մի քանի անգամ [6, էջ 374]:

Հայրենական մեծ պատերազմում՝ Խորհրդային Միության տարած հաղթանակից անմիջապես հետո, ԽՍՀՄ կենտրոնական մարմինների առջև Ղարաբաղյան հարցն արթնացնելու լուրջ փորձեր են ձեռնարկվել: 1945թ. նոյեմ-

բերին Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը (Հարությունով, Արութինով) դիմել է Ստալինին և երկրորդ քարտուղար Մալենկովին: Հարությունյանն ընդգծում է, որ մարզի 153 հազար բնակիչներից 137 հազարը հայեր են, դարաբաղի գյուղատնտեսությունը նման է Հայաստանի լեռնային մասին, և Ղարաբաղը Հայաստանի կազմի մեջ մտցնելը շատ ավելի կնպաստեր նրա զարգացմանը և կրթելավվեր տնտեսության ղեկավարումը [7, էջ 57]:

1946թ. Հայաստանի ղեկավարությունը, վկայակոչելով տասնյակ հազարավոր սփյուռքահայերի հայրենադարձությունը, Մոսկվայում անց է կացնում խորհրդակցություն: Խոսք էր գնում նաև Նախիջևանը Հայաստանին միացնելու մասին: Դրանով Ստալինը ծրագրել էր պատժել Թուրքիային, քանի որ վերջինս պատերազմի առաջին տարիներին ակնհայտ բարյացակամ վերաբերմունք էր ցուցաբերել Ֆաշիստական Գերմանիային ԽՍՀՄ դեմ պատերազմում: Այագայում Թուրքիայից ազատագրվելիք հայկական տարածքներում, որտեղ ծրագրվել էր ստեղծել կուսակցության մարզային երկու կոմիտե, արդեն նշանակվել էին քարտուղարներ: Կարսի մարզկոմի քարտուղարի պաշտոնում հաստատվել էր Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Անտոն Քոչինյանը:

1965թ. հունիսի 28-ին 13 արցախցի կոմունիստների ստորագրությամբ նամակ է հանձնվում ԽՄԿԿ Կենտկոմին: Նամակն ուղարկվել էր Բրեժնևին, Կոսիգինին և Միկոյանին. «Լեռնային Ղարաբաղի բնակչության 85 տոկոսը հայեր են, և նրանք անհիշելի ժամանակներից ապրում են այս հողի վրա, իսկ հողը պատկանում է նրան, ով ապրում է նրա վրա: Այս ձմարտությունը շատ լավ են հասկացել նրանք, ովքեր 1920թ. Ղարաբաղը տվել են հենց նոր ստեղծված Խորհրդային Հայաստանին: Սակայն հետագայում Ստալինի թեթև ձեռքով բե-

կանվել է Ղարաբաղի վերամիավորումը Հայաստանին: Դիմելով Ձեզ՝ մենք համոզված ենք, որ ԽՄԿԿ Կենտկոմը և Խորհրդային կառավարությունը, որոնք միշտ և ամենուրեք պաշտպանում են բոլոր ազգերի շահերը, անհապաղ իրենց բարի ուշադրությունը կդարձնեն Ղարաբաղցի հայերի օրինական ձայնին և մարզը կվերամիավորեն ՀԽՍՀ-ին» [12, էջ 214]:

Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու պաշտոնական նախաձեռնությամբ Հայաստանն ու նրա ղեկավարությունը ևս մեկ փորձ են անում 1972թ.՝ օգտագործելով Սուււլվի արձակուրդի մեջ լինելու առիթը: Քարտուղարության որոշմամբ, որը վարում էր Կիրիլենկոն, Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարությանը հանձնարարվում է համատեղ ուսումնասիրել և լուծում առաջարկել: Սակայն երկու երկրների ղեկավարները այդպես էլ որևէ համաձայնության չեն գալիս: 1972թ. սեպտեմբերի 30-ին ԼՂԻՄ-ը Հայաստանին միացնելու խնդրանքով ԽՄԿԿ Կենտկոմը նամակ է ուղարկում՝ կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Քոչինյանի և նախարարների խորհրդի նախագահ Բադալ Մուրադյանի ստորագրություններով: «Այդ նամակը գրվեց Քաղբյուրոյի անդամ Ալեքսանդր Շելեպինի՝ Երևան կատարած այցից հետո: Հայաստանի ղեկավարության և նրա միջև խոսակցություն էր եղել Ղարաբաղի վերաբերյալ, և Շելեպինը խոստացել էր հնարավորինս աջակցել հարցի՝ մեզ համար դրական լուծմանը: Նամակը ստանալուց հետո Շելեպինը խոսակցություն է ունեցել Բրեժնևի հետ, ու նրա համառ պնդումներից հետո Քաղբյուրոյի որոշմամբ ստեղծվեց հատուկ հանձնաժողով Ղարաբաղի հիմնախնդիրը քննարկելու և առաջարկություն կայացնելու համար» [5, էջ 195]:

1973թ. հուլիսին՝ ԼՂԻՄ-ի ձևավորման 50-ամյակի կապակցությամբ, մարզկոմի առաջին քարտուղար Գուր-

գեն Մելքունյանը և մարզխորհրդի գործկոմի նախագահ Մուշեղ Օհանջանյանը հորեկանը բարձր մակարդակով անցկացնելու նպատակով հրավերներ են ուղարկում ծնունդով ղարաբաղցի մի քանի տասնյակ գեներալների, մարշալների, ակադեմիկոսների, կրթության, գիտության, մշակույթի գործիչների, սակայն, Բաքվում պատրվակ են բռնում, իբր հովիւր բերքահավաքի եռուն շրջան է, և Ադրբեջանի ղեկավարությունը հնարավորություն չունի մասնակցելու միջոցառմանը, ուստի նպատակահարմար է միջոցառումը հետաձգել մինչև աշուն: 1973թ. հոկտեմբերի 1-ին Մելքունյանին ազատում են պաշտոնից և աշխատանքի տեղափոխում Բաքու: Նրա փոխարեն ուղարկում են Բորիս Կևորկովին: Ամիսներ անց մարզգործկոմի նախագահի պաշտոնից ազատվում և Բաքու է տեղափոխվում նաև Օհանջանյանը: Մելքունյանի և Օհանջանյանի նպատակը՝ տոնակատարություններին տալ համամիութենական նշանակություն, ընդձեռն ԼՂԻՄ-ի հայկականությունը, հաջողություն չի ունենում:

Ղարաբաղյան հարցը կրկին ուշադրության կենտրոնում հայտնվեց 1977թ., երբ քննարկվում էր ԽՍՀՄ նոր սահմանադրության նախագիծը: ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահության նիստի նոյեմբերի 23-ի արձանագրությունում նշվում էր, որ «տասնամյակներ առաջ Լեռնային Ղարաբաղն արհեստականորեն միացվել է Ադրբեջանին»: «Հաշվի չեն առնվել մարզի պատմական անցյալը, նրա ազգային կազմը, ժողովրդի ցանկությունը և տնտեսական շահերը: Անցել են տասնամյակներ, և Ղարաբաղի հարցը շարունակվում է հղովվել՝ անհանգստություն և անբարյացկամության պահեր ստեղծելով դարավոր բարեկամությանը շողկապված երկու հարևան ժողովուրդների միջև: Պետք է Լեռնային Ղարաբաղը (հայերեն «Արցախ») միացնել ՀայկԽՍՀ-ին» [2]:

Անփոփելով հողվածում ներկայաց-

ված վերլուծությունը՝ պետք է փաստել, որ Ղարաբաղյան հակամարտության արմատները պետք է փնտրել դեռ Խորհրդային պետության կազմավորման շրջանում: Որոշ մասնագետներ Ղարաբաղյան ազատագրական շարժման սկիզբ են համարում 1980-ական թվականների վերջը: Սակայն փաստերը վկայում են, որ անգամ Խորհրդային Ադրբեջանի բռնակալության պայմաններում արցախահայությունը երբեք չի համակերպվել Հայաստանից կտրված լինելու ու բռնաճնշումներին ենթարկվելու հանգամանքի հետ, երբեք չի դադարեցրել իր պայքարը հանուն հայ ժողովրդի միասնականության վերականգնման: Արցախահայության ազատագրական պայքարի պատմական վաղեմության ապացույց է 1917-1918թթ. կազմակերպված ինքնապաշտպանությունը: Բայց Թուրքիայի ու անգլիացիների աջակցության և բոլշևիկների միջամտության շնորհիվ ադրբեջանցի մուսավաթականներին, ապա կոմունիստներին որոշակիորեն հաջողվեց կասեցնել արցախահայության դիմադրությունը: Իսկ 1966թ. օգոստոսի 8-ին Կենտկոմի քարտուղարությունն ընդունել էր որոշում, որով հանձնարարվում էր Ադրբեջանի ու Հայաստանի ղեկավարներին համատեղ ջանքերով քննել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը ՀԽՍՀ-ին միացնելու հնարավորությունը և իրենց առաջարկությունները ներկայացնելու ԽՄԿԿ Կենտկոմ՝ հարցի վերջնական լուծման համար: Նշվում էր նաև հիմքը՝ Լեռնային Ղարաբաղից ստացված համապատասխան դիմումներն ու միջնորդագրերը, սակայն հիմնախնդիրը ԽՍՀՄ գոյության ողջ շրջանում այդպես էլ որևէ հստակ կարգավորման չենթարկվեց:

Հողվածի ներկայացման տարեթիվը՝  
24.02.2015



## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Արցախ պատմական տեղեկանք», Հայկական ժողովրդական շարժում, Բեյրութ, 1988:
2. ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահության 1977թ. նոյեմբերի 27-ի նիստի արձանագրություն, թիվ 61.11-4133:
3. Վ. Թովմասյան, Վ. Աթաջանյան, Յու. Ներսիսյան, Ղարաբաղյան հարց, Ստեփանակերտ, 1991:
4. Տ. Թորոսյան, ԼՂ հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2008:
5. Ալ. Կիրակոսյան, «Մայրամուտի շեմին. Հուշեր և մտորումներ» Եր., 2002:
6. Թ. Հակոբյան, Արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, 2011:
7. Գ. Հարությունյան, Կյանքը և գործունեությունը, Եր., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2000:
8. Ռ. Հովհաննիսյան, Ղարաբաղյան հակամարտությունը, Եր., 1997:
9. Ալ. Մանասյան, Ղարաբաղյան հիմնախնդիր: Փաստեր և փաստաթղթեր: Եր., 2005:
10. Ալ. Մանասյան, Ա. Ղևնդյան, Լեռնային Ղարաբաղ, ինչպես է դա եղել, Եր., Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն, 2011:
11. Յու. Ներսիսյան, Ղարաբաղյան հարց, Ստեփանակերտ 1991:
12. Բ. Ուրուբաբյան, Արցախյան գոյապայքար, Եր., 1994:
13. Байков Б.Л. Воспоминания о революции в Закавказье (1918-1920гг.) Архив русской революции, Берлин, 1923г.
14. Декларация Совнаркома ССР Армении «Об объявлении Нагорного Карабаха, Зангезура и Нахичевана составной частью Армянской ССР» от 12 июня 1921г.
15. «О территориальных претензиях АДР. (сентябрь- апрель 1918-1920гг.), представленных в Лигу Наций». Архив. СР 2/45).

## ПОЛИТИКО-ПРАВОВЫЕ СОБЫТИЯ СОВЕТСКОГО ПЕРИОДА, КАСАЮЩИЕСЯ ПРОБЛЕМЫ НАГОРНОГО КАРАБАХА

### ТИГРАН КОЧАРЯН

*Национальная Академия Наук РА, Международный научно-образовательный центр,  
заведующий кафедрой политологии, доктор политических наук, доцент*

В статье представлены некоторые значимые политико-правовые события в годы образования Советского Союза и дальнейшего периода, анализируется их воздействие на возможности регулирования проблемы в конкретные временные отрезки, а также дана оценка данных фактов в контексте изменения способов представления Карабахского конфликта.

Дата представления статьи: 24.02.2015

## ON SOME POLITICAL-LEGAL EVENTS OF THE SOVIET PERIOD CONCERNING THE PROBLEM OF NAGORNO-KARABAKH

### TIGRAN KOCHARYAN

*International Scientific-Educational Center of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Head of the Chair of Political Science, Doctor of the Political Science, Associate professor*

The article presents some important political and legal events of the Soviet Union formation and a further period. The impact on the possibility of the problem regulation in specific time periods is analyzed, as well as the facts in the context of changing ways of presenting the Karabakh conflict are evaluated.

Article submission date: 24.02.2015

## ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐԻՔԻԱՅՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԱՆ ԻՐԱԿԱ- ՆԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐ

Մարդկության պատմության 20-րդ դարը արձանագրեց անթիվ ցեղասպանություններ, ահաբեկչություններ, պատերազմներ և հեղափոխություններ, որոնց թվում՝ 1915 թ. հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, որը բացառիկ նշանակության արժանացավ: Այս ոճրագործությունը անպատժելիության հետևանքով հիմք հանդիսացավ հետագա հանցագործ պատերազմների և ահաբեկչությունների համար: Ավելին՝ պարզ դարձավ ինչպես առանձին անհատների, մարդկանց խմբերի հիվանդ ուղեղներն ու բնագոյները, կուսակցությունների, կազմակերպությունների ու պետությունների աշխարհաքաղաքական նպատակների և տնտեսական շահերի պրագմատիզմը կարող են վտանգել մարդկության զարգացմանը՝ մարտահրավերների կոչելով և կասկածի տակ դնելով դարերից եկող ժողովուրդների բարոյական հիմքերը:

**Հանգուցային բառերը և արտահայտություններ՝** Հայկական հարց, հայերի ցեղասպանություն, հրեական պետություն, Օսմանյան կայսրություն, երիտթուրքեր, սիոնիզմ, ազգային շահ, հոչակագիր, պայմանագիր:

Հայտնի է, որ պետությունը իր ժողովրդի անվտանգության երաշխիքն է: **Պետականություն ունեցող ժողովուրդները ծայրահեղ դեպքում պատերազմում են միմյանց դեմ, իսկ պետականություն չունեցող ժողովուրդների համար պատերազմը նույնիսկ շայտություն է՝ նրանց պարզապես ենթար-**

**կում են ցեղասպանության:**

Հայկական պետականության բացակայությունը 14-րդ դարից հետո շատ հայ գործիչների ստիպեց հանդես գալ խնդրողի դերում, ինչը հանգեցրեց եվրոպական գերտերությունների անլուրջ կամ անտարբեր վերաբերմունքին հայ ժողովրդի ակնկալումների նկատմամբ: Պատահական չէ, որ Հայկական հարցը Եվրոպայի և Ամերիկայի արտաքին քաղաքականությունում հատուկ արժեք էրբեք չի ունեցել, սակայն հայկական խաղաքարտն, այսպես թե այնպես, շահարկվել է և շարունակում է շահարկվել այս կամ այն պետությունների կողմից հակառակորդին ճնշելու նպատակով տարածաշրջանում առաջնորդի դերակատարություն ստանձնելու պայքարում: Հայկական հարցը դարձավ Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում՝ ուրույն տեղ գրավելով արևմտաեվրոպական երկրների և Ռուսաստանի արտաքին քաղաքականությունում Մերձավոր Արևելքում Օսմանյան Թուրքիայի վրա ներազդելու մրցակցությունում:

19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում Օսմանյան Թուրքիան և Մերձավոր Արևելքը չէին գտնվում ԱՄՆ-ի արտաքին հետաքրքրության տեսադաշտում: 19-րդ դարի 90-ական թվականներին, անգլոամերիկյան հարաբերությունների հակասությունների սրման ժամանակահատվածում, ԱՄՆ-ը Բրիտանիային համարում էր սուլթան Համիդի հայկական ջարդերի հիմնական

մեղավորը: Առաջին համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ի կողմից հայտարարվեց «Մեծ Հայաստանի» վրա մանդատ սահմանելու իր մտադրությունը, որը իր մեջ պետք է ներառեր ինչպես Արևելյան Հայաստանը, այնպես էլ Արևմտյան Հայաստանը: 1918 թ. դեկտեմբերի 10-ին Ամերիկյան Սենատը քննարկեց Անկախ Հայաստանի ստեղծման հարցը, որի սահմանները պետք է հասնեին մինչև Սև, Կասպից և Միջերկրական ծովերը, սակայն դրան խանգարեցին մի շարք գործոններ: Ըստ որոշ գիտնականների՝ դրանց թվին է պատկանում Պաղեստինում սեփական պետություն կառուցելու հրեաների ձգտումը: **ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ն. Հովհաննիսյանի** խմբագրությամբ լույս է տեսել արաբ պատմաբան Մրվան Բուհեյրիի «Թեոդոր Հերցելը և Հայկական հարցը» աշխատությունը: Ըստ արաբ պատմաբան Մրվան Բուհեյրիի՝ հրեական պետության ստեղծման խնդիրը միահյուսվել է Հայկական հարցի հետ: Միոնիզմի հիմնադիր Թեոդոր Հերցելը և նրա գաղափարակիցները ձգտում էին ստեղծել «հրեական օջախ»: Այդ նպատակով նրանք փորձեցին աջակցություն ստանալ սուլթան Համիդից՝ Երուսաղեմում հրեաներին բնակեցնելու համար, և Հայկական հարցը օգտագործեցին սուլթանի օգտին՝ եվրոպական տերությունների վրա ճնշում գործադրելու համար: 1896 թ. Թեոդոր Հերցելը լեի ազնվական, միջազգային բախտախնդիր Միքայել Նևիխնսկու հետ ուղևորվեցին Կոնստանդնուպոլիս՝ սուլթանի մոտ: «Սուլթանը թող մեզ տա այդ հողկտորը, – ասում է Թեոդոր Հերցելը, – իսկ դրա փոխարեն մենք կարգի կբերենք նրա տունը (երկիրը), կկարգավորենք նրա ֆինանսական վիճակը և ամբողջ աշխարհում նրա օգտին կձևավորենք հասարակական կարծիքը» [1]: Ինչպես գրում է Մրվան Բուհեյրի, Թ. Հերցելն իր հետ էր վերցրել Պաղեստինի գնման նախագիծը: Եվ, չնայած սուլթանը մերժեց սիոնիստների նախագիծը՝ խնդրելով օգ-

նել Հայկական հարցում, Հերցելին պարգևատրեց «Մեջիդի» շքանշանով: Որպեսզի իրագործի սուլթանի խնդրանքը, Թ. Հերցելն ուղևորվում է Լոնդոն՝ հանդիպելու տարբեր հասարակական, քաղաքական գործիչների, այդ թվում նաև՝ Հայ Հնչակյան կուսակցության ղեկավար Նազարբեկովի հետ: Թ. Հերցելը ջանք չէր խնայում հաղթահարելու հայերի անվստահությունն իր նկատմամբ: Իր նամակներից մեկում նա գրում է. «Հայերը չպետք է իմանան, որ մեր մասնակցությունը պայմանավորված է մեր ազգային շահերով» [2]: Նա լայն գործունեություն է ծավալում Վիեննայում և կապ հաստատում ամբողջ Եվրոպայում՝ փորձելով հասնել այն բանին, որ հայ հեղափոխական կոմիտեները Եվրոպայում ենթարկվեն սուլթան Համիդին՝ նրա օգտին ձևավորել հասարակական դրական կարծիք և դրանով իսկ նսեմացնել Հայկական հարցի նշանակությունը եվրոպական հասարակության աչքին: Եվ, իհարկե, դա նրանց հաջողվում է: Եվրոպական առաջատար շատ թերթեր գտնվում էին հրեաների ձեռքում, այդ իսկ պատճառով պատահական չէր, որ հայերը Եվրոպայում ներկայացվեցին խռովարարների և անշնորհակալ հպատակների դերում՝ «բարյացակամ ինքնակալի նկատմամբ»: Միոնիստներին հաջողվում է մեծ կաշառքների միջոցով իրենց կողմը գրավել Օսմանյան Թուրքիայի ազդեցիկ Խաքի Փաշային: Իսրայել Ջանգվիլը՝ սիոնիզմի առաջնորդներից մեկը, հետևյալ կերպ է նկարագրում այդ իրադարձությունները «Ֆորթնայթ Բեյլյու» ամսագրում. «...Մեծն Խաքի փաշան կլինի հենց այն մարդը, որը բացահայտորեն կդնի հրեական պետության ստեղծման հարցը սուլթանական Թուրքիայի առջև: Ամբարտավան վեզիրը չէր համարձակվում առարկել: Նրա աչքերի առաջ կանգնում է սուլթան Համիդի գահընկեց տխուր պատկերը, որը խիստ փողի կարիք ունի, ինչպես ձուկը ջրի, սակայն նա մերժել էր Թեոդոր Հերցելի առաջարկը. վճարել իր բո-

լոր պարտքերի դիմաց՝ թույլտվություն տալով (freeman) ձեռք բերելու Պաղեստինի և Լիբանանի տարածքները հրեաների համար: Սկզբում Հերցելը առաջարկում էր 150 մլն. անգլիական ֆունտ կանխիկ: Սակայն սուլթանը նամակով թունոտ պատասխան է ուղարկում Հերցելին, որտեղ ասվում էր. «հրեաները կկարողանան ձեռք բերել Պաղեստինը միայն այն դեպքում, երբ Օսմանյան կայսրությունը մասնատեն և ոչնչացնեն»:[3] Պաղեստինի գնման նախագիծը տապալվում է, սակայն սուլթանը իր ողջ դիմադրությամբ հանդերձ՝ չհրաժարվեց, որ իր անունով Եվրոպական բանկերում ոսկու մեծ ներդրումներ կատարվեն: Եվ հրեական մի համայնքի թույլ տվեց հիմնվել Պաղեստինում ու զբաղվել այգեգործությամբ: Դա բավական էր, որ այդ համայնքի միջոցով սկսվեր հողերի, տարածքների համատարած գնումը: 1901 թ. մայիսին Հերցելը դարձյալ արժանացավ սուլթանի ընդունելությանը՝ հունգարացի հրեա Արմինիի Վամբերիի[4] շնորհիվ: Դրանից հետո սուլթանը հրեաներին իրավունք տվեց հողեր գնելու Միջերկրականում՝ Սիրիայում, Լիբանանում, իսկ հետագայում Պաղեստինում՝ միանգամից 100000 հրեաների բնակեցման համար: Եվ բոլոր հրեաների հավաքավայրն է դառնում Պաղեստինը: Այսպիսով՝ **առանց արյուն թափելու, խաղաղ ճանապարհով, փողի ուժով հիմք է դրվում ներկայիս իսրայելական պետությանը**: 1880 թ-ից ի վեր Արմինիի Վամբերիինը տարեկան երկու անգամ այցելում էր սուլթանին և նրա հետ քննարկում միջազգային քաղաքականության հարցեր: Նա նվիրվել էր սուլթանին և Օսմանյան Թուրքիայի փառաբանմանը և «Հայկական հարցը»՝ ըստ իր հայեցակետով լուծելու գաղափարին: Օրինակ՝ 1889 թ. հոկտեմբերի 22-ին նա գրում է այն խորը ստեղծության մասին, որը սուլթան Համիդը տածում էր հայերի նկատմամբ. «Զո անգլիացի բարեկամներին, հատկապես լորդ Սոլսբերիին,

հայտնիր, որ պատրաստ եմ ոչնչացնել չարիքը Հայաստանում և ավելի շուտ թույլ կտամ գլուխս անջատել մարմնիցս, քան տեսնել անկախ Հայաստանի ստեղծումը»:[5] Քրիստոֆոր Ուոքերի գրքում ուշադրություն է դարձվում նաև Վամբերիինի ռուսաաշխարհային վրա: Հայերի պոտենցիալ անկախությունը նրա համար ոչ այլ ինչ էր, քան Ռուսաստանի առաջխաղացում: Այդ տեսակետը նա մշտապես ներշնչում էր Ֆորին Օֆիսին՝ ասելով, որ դա մեծ վնաս կհասցնի Անգլիայի շահերին, սակայն նրա գործունեությունը դրանով չէր սահմանափակվում. նրա թույնը դուրս էր թափվում Եվրոպայի առաջատար թերթերի էջերից, քանի որ հասկացել էր, թե ինչպիսի կարևոր նշանակություն ունի մամուլը հասարակական կարծիք ձևավորելու հարցում: Թ. Հերցելի բազմաթիվ կողմնակիցներ կասկածի տակ են առնում հայկական հարցում վերջինիս դիրքորոշման բարոյական հիմքերը: Օրինակ՝ նրա առաջին մեղսակից Բերնարդ Լազարը, որպես սուլթանի դեմ ի ցույց բողոքի, դուրս է գալիս սիոնիստական շարժման կազմակերպիչից և 1902 թ. սուր քննադատության ենթարկում սիոնիզմը “Про-Армения” թերթի էջերում: Մեկ այլ դաշնակից՝ Էդուարդ Բերնշտեյնը, իր հերթին, արժանանում է ծայրահեղ հայհոյանքների հայտնի **սիոնիստ** Խայյմ Վացմանի կողմից այն բանի համար, որ իր հովանու տակ էր վերցրել հայերին, այլ ոչ թե հրեաներին՝ հանրային դասախոսություն կարդալով Հայկական Հարցի պաշտպանության խնդրի վերաբերյալ [6]: Անկասկած, այս կարգի թե՛ անցյալ և թե՛ ներկա հասարակական գործիչների և գիտնականների ազնիվ գործունեությունը արժանի է հատուկ ուսումնասիրության, բարձր գնահատականի և երախտագրի հայերի կողմից, սակայն, փաստորեն, 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին իսրայելական պետության ստեղծման հիմնահարցը պարբերաբար միահյուսվել է **Հայկական**

**հարցի** հետ: Պատմագրության մեջ հիմնավոր կարծիք կա սիոնիստների և երիտթուրքերի սերտ կապի մասին: 20-րդ դարի վերջին և XX դարի սկզբներին սիոնիստները էական դեր են խաղացել երիտթուրքերի կուսակցության ձևավորման և անրապնդման գործում: Չնայած հրեական ազգաբնակչության նկատմամբ սուլթանի բարյացակամ վերաբերմունքին՝ սիոնիզմի առաջնորդները, զգալով նրա վիճակի խախտությունը, որոշեցին ներգրավվել նրա դեմ պայքարին: Շատ հարուստ հրեաներ Սալոնիկում դառնում են Իթիհատ-Վետերակի կուսակցության անդամներ, հրեական բանկից փողը հոսում է դեպի երիտթուրքերը: Երուսաղեմի համար պայքարի հաջողության հույսերը սիոնիստները կապում են երիտթուրքերի հետ:

Թուրքիայի արդարադատության նախարար Սահիդ մոլլա բեյը նշել է. «Երբ մենք խոսում ենք թուրքերի մասին, պետք է տարանջատել նրանց սալոնիկյան **դյունմեն**երից և իրենց կողմից կազմակերպված «Իթթիհատը» և զինվորականությունը» [6]: Նա ի նկատի ուներ այն հրեաներին, որոնք ընդունել էին իսլամը և դարձել թուրք: 1891 թ-ին ժնևում ստեղծում են «Իթթիհատ վե թերաքքի» («Միություն և առաջադիմություն») հրեա-մաստնական կազմակերպությունը՝ նպատակ դնելով ոչնչացնելու օսմանյան խալիֆայությունը: Փաստացի, իթթիհատականները թրքացած հրեաներ էին (դյունմե) և պատկանում էին ֆրիմասոն օթյակներին և ժողովներին Էմանուել Կարասոյի [7] գլխավորությամբ: Վերջինս հիմնադրել էր «Մակեդոնիա Ռիզորտա» («Վերածնված Մակեդոնիա» օթյակը), որին անդամակցում էին երիտթուրքեր՝ Թալեթա, Էնվեր, Ջեմալ փաշաները և բժիշկ Նազիմը: Անգլիացի պատմաբան Արթուր Թոյնթին իր «Մուսուլմանների պատմությունը» [8] աշխատությունում նույնպես փաստել է, որ սալոնիկյան հրեաները երիտթուրքերի կոմիտեի անբաժան մաս են կազմել:

Ջոն Կիրակոսյանի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» գրքում բերված արխիվային նյութերը հաստատում են, որ սիոնիստների և երիտթուրքերի կապը պայմանավորված էր մի նպատակով՝ դուրս մղել հայերին, հույներին և արաբներին կայսրության քաղաքական կյանքից՝ տիրանալով նրանց հարստությանը: Պատահական չէ, որ արաբական շարժման առաջնորդները անվստահությամբ ու կասկածանքով էին վերաբերում երիտթուրքերի և հրեաների, ֆրիմասոնների կապին: Ինչը, ցավոք, տեղի չունեցավ հայ մտավորական և քաղաքական առաջնորդների կողմից:

Կոստանդնուպոլսի բրիտանական դեսպան Ջոն Լոյթերն իր զեկուցագրում «Միություն և առաջընթաց» կոմիտեն անվանում էր հրեաների և ֆարմասոնների կոմիտե, ոչ միայն այն պատճառով, որ երիտթուրքերը հրեական ծագում ունեին, այլ որ նրանց **գլխավոր զաղափարախոսները սիոնիստներ էին և Օսմանյան Թուրքիան դարձել էր նրանց ձեռքին հրեական պեպության սյուղեման համար գործիք**: Այդ կապը սնունդ էր առնում նաև ցարական Ռուսաստանի նկատմամբ խորը ատելությունից: Դա է վկայում 1914 թ. հուլիսի 23-ին Ստամբուլի Նուրի Օսմանի ակումբում կայացած նրանց համատեղ ժողովը, որի ժամանակ հակառուսական կոչերով և հայերին մեղադրելով հանդես է եկել Թալեթա: Պարսիկ պատմաբան Իսմայել Ռայինը [9] այդ հարցում մեղավոր է համարել ոչ միայն **երիտթուրքերին**, այլև սիոնիստներին և գերմանացիներին: Նրա կարծիքով՝ գերմանացիները հետապնդում էին գաղութատիրական նպատակներ, իսկ սիոնիստները ձգտում էին իրականացնել սեփական պետություն ստեղծելու իրենց երազանքը: Հատուկ ուշադրություն էր հատկացվում Մեծ Թուրանի ստեղծման նպատակով Հայաստանի և հայերի բնաջնջմանը: Պատահական չէ, որ գերմանացիները Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ փորձում էին

ռագմական նպատակներով օգտագործել հրեաներին: Հրեաներն իրենց հերթին պահանջում էին գերմանացիներից ծառայություններ մատուցել Պաղեստինի համար: Ջորջ Լյոդի խոսքերով, «ոչ այլ ոք, քան հրեաները օգնեցին գերմանական բանակին կոտրել ցարական լուծը Լեհաստանում .. հրեաները մեծ ազդեցություն ունեին այլ երկրներում, հատկապես Ամերիկայում, որտեղ նրանց որոշ հզոր առաջնորդները մեծ ազդեցություն ունեին նախագահ Վիլսոնի վրա, գալելով դաշնակիցներին մերձենալու նրա ցանկությունը» [10]: Դեռ 1916 թ-ին գերմանացիները պնդում էին, որ թուրքերը գիջեն սիոնիստներին Պաղեստինի հարցում: Շատ մեծ ջանքեր չպահանջվեցին այս հարցում, քանի որ իշխանության գլխին կանգնած էին երիտթուրքերը: Հարկ է նշել, որ գերմանացիների և հրեաների համագործակցությունը բացառապես չէր բխում անգլիացիների շահերից, և վերջիններս որոշում են հրեաներին գերմանացիներից դեպի իրենց վերադարձնել: Դրա մասին է վկայում այն ժամանակվա Ռուսաստանի արտգործնախարար Ս.Գ. Սազոնովին ուղղված հուշագիրը (1916, մարտ), Պետրոգրադում գտնվող Մեծ Բրիտանիայի դեսպանատնից, որտեղ նշվում է այն մասին, որ արտաքին գործերի նախարարության քարտուղար լորդ Գրեից հեռագիր է ստացվել հետևյալ բովանդակությամբ. Լյուսեն Վոլֆը տեղեկացրել է կառավարությանը Պաղեստինում հրեաների բնակեցման մասին: Ի դեպ, Ցարական կառավարությունը չէր առարկում հրեաների բնակեցմանը Պաղեստինում:

Այսպիսով, XX դարի սկզբին, երբ հրեաները ձգտում էին Պաղեստինում ստեղծել հրեական պետություն, Ռուսաստանը զոհ է դառնում, և դրա հետ միաժամանակ «թաղվում» է հայկական հարցը: 1918 թ. փետրվարի 14-ին Համբուրգի խորհրդակցության ժամանակ (մինչ Բրեստ Լիտովյան պայմանագրի կնքումը) Վիլհելմ 2-րդն ասում է. «Ռուս

ժողովուրդը հանձնվեց այն հրեաների վրիժառությանը, որոնք կապված էին աշխարհի բոլոր հրեաների, այսինքն՝ մասոնների հետ»[11]: Ցարական Ռուսաստանի նկատմամբ հրեական այդ ատելությունը շատ եվրոպական տերություններ (Գերմանիա, Անգլիա, Ֆրանսիա, հետո և՛ ԱՄՆ) փորձում էին օգտագործել իրենց շահերի օգտին: Սիոնիստները հաջողության են հասնում, քանի որ նրանց նպատակները համընկնում էին մեծ տերությունների շահերի հետ: Այդ երկրների հրեական համայնքների հայտնի ներկայացուցիչներ կարող էին ազդել տվյալ երկրի կառավարության որոշման վրա՝ իրենց անհրաժեշտ շահեկան ուղղությամբ: «Չափազանցություն չէր լինի ասել, որ միջազգային սիոնիզմի կազմակերպությունների համակարգը ճյուղավորված է ամբողջ աշխարհում և միևնույն ժամանակ կենտրոնացված: Այն հենվում է հզոր ֆինանսատնտեսական բազայի վրա՝ ի դեմս հրեական ծագում ունեցող մենաշնորհային (մոնոպոլիստ) բուրժուազիայի: Վերջինս, ունենալով մեծապես ազդեցություն առաջատար կապիտալիստական երկրների լրատվամիջոցների, մշակույթի և պետական ադմինիստրատիվ ապարատի վրա, հանդիսանում է սիոնիստական ուժի և ազդեցության գլխավոր աղբյուրը մի շարք առաջատար պետությունների քաղաքականության ձևավորման գործում»:[12]

**Սիոնիզմի** վրա ազդեցություն ունենալու պայքարը գերմանացիների և անգլիացիների միջև խորանում է 1917 թ-ի ամռանը: Այդ ժամանակ Բրիտանիայի արտգործնախարար Բալֆուրը բուռն գործունեություն է ծավալում սիոնիստական շարժման նկատմամբ՝ ստանալով ԱՄՆ նախագահ Վիլսոնի օժանդակությունը: Սիոնիստ գործիչների հաջողությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ նրանց նպատակները համընկնում էին գերտերությունների շահերի հետ: Սիոնիզմի առաջնորդների

ակտիվ բանակցությունները բրիտանական կառավարության ղեկավարության հետ հանգեցրին փոխադարձ համաձայնության: Արդյունքում անգլիացիները խոստանում են հրեական պետության հիմքը դնել, իսկ սիոնիստական առաջնորդները իրենց հերթին՝ ապահովել դաշնակիցներին հրեական օժանդակությամբ ամբողջ աշխարհում:

Բալֆուրի հռչակագրի տապալման դեպքում պետք է գործի դրվեր պահեստային «Շիրվանի» տարբերակը՝ հրեական պետության ստեղծումը Ադրբեջանի տարածքում: Այս տարբերակի իրականացման պատասխանատուներն էին անվանի բոլշևիկներ Լև Տրոցկին (Լեյբա Բրոնշտեյնը, Ջինովևը (Աբֆելբաում), Կամենևը (Ֆեյֆման): Նրանք էին նաև ԽՍՀՄ հարավային սահմանների վրա թուրքական մի շարք վարչական միավորումների ստեղծման նախաձեռնողները: Պատահական չէ, որ 1920 թ. Թ. Հերցելի հիմնադրած «Երիտասարդ սիոն» թերթը գրում էր, որ Կովկասում՝ ի դեմս Ադրբեջանի, ստեղծվել է հրեական պետություն, որը կոչված է կլանելու ամբողջ տարածաշրջանը:

1917 թ. հոկտեմբերի հեղափոխությունը հնարավորություն տվեց ռուսաստանյան սիոնիստներին՝ ճնշում գործադրելու խորհրդային կառավարության վրա՝ պատերազմը շարունակելու համար, որպեսզի Գերմանիան և Ավստրիան հնարավորություն չունենան Ռուսաստանի պաշարներից ստանալու հաց, նավթ, պղինձ և զորք ավելացնելու արևմտյան ճակատում: Շեշտադրումները արված էին ի հօգուտ Անտանտայի երկրների: Այդ նպատակով **1917 թ. նոյեմբերի 8-ին հրապարակվում է Բալֆուրի հռչակագրը** [13]: Դրան հետևում է ցարական արխիվների դիվանագիտական գաղտնի փաստաթղթերի հրապակումը ռեկորդային սեղմ ժամկետներում: Այդ փաստաթղթերի թվում էր 1919 թ. Սայկս-Պիկոյի պայմանագիրը, համաձայն որի Անգլիան և Ֆրանսիան հաղթանակից

հետո պետք է Ռուսաստանին փոխանցեին Կոնստանդնուպոլիսը, Բոսֆորը և Դարդանելին, Էրզրումը, Տրապիզոնը, Վանը, Բիթլիսը և Քրդստանի մի մասը: 1917 թ. նոյեմբերի 20-ին Լենինը դիմեց Ռուսաստանի և Արևելքի մուսուլմաններին հետևյալ հայտարարությամբ. «Գահընկեց թագավորի գաղտնի բանակցությունները Կոնստանդնուպոլիսի գրավման վերաբերյալ պատռել և ոչնչացնել: Ռուսաստանը և նրա կառավարությունը՝ ժողովրդական կոմիսարների Խորհուրդը դեմ է օտար տարածքների զավթմանը: Կոստանդնուպոլիսը պետք է մնա մուսուլմանների ձեռքում: Մենք հայտարարում ենք, որ Թուրքիայի մասնատման և նրանից Հայաստանը վերցնելու մասին պայմանագիրը պատռված և ոչնչացված է»[13]: Սա առաջին և վերջին հարվածը չէր ռուսական քաղաքական կողմից Հայաստանի նկատմամբ, և 1917 թ. ռուսների հեռանալը Կովկասյան ճակատից նշանակում էր ռուսական իշխանությունների կողմից Անդրկովկասի բանալիների հանձնում թուրքերին:

Ինչպես հայտնի է, երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում սիոնիստական շարժումը գտնվում էր Անգլիայի հովանու տակ: Իսրայել պետության ստեղծումը հնարավոր դարձավ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ տեղի ունեցավ նոր ուժերի դասավորում միջազգային հարաբերություններում, և ԱՄՆ-ի քաղաքական ազդեցությունը և դիրքերը ուժեղացան Մերձավոր Արևելքում: Այս տարածաշրջանի նավթային հարստությունները և ռազմավարական հնարավորությունները չափազանց ձգող էին հզոր գերտերությունների համար: 1946 թ-ի դեկտեմբերին Բազելում կայացավ հրեաների 22-րդ Համաշխարհային Կոնգրեսը, որտեղ տեղի ունեցավ վերջնական կողմնորոշումը դեպի ԱՄՆ: Արդյունքում ԱՄՆ-ին պարզ դարձավ, որ Իսրայելից ավելի լավ գործընկեր չէին կարող ունենալ: Իսրայել-ամերիկյան

այլանսի պատմությունից պարզ է դառնում, որ Իսրայելը, ստանձնելով ԱՄՆ-ի դերը Մերձավոր Արևելքում, դառնում է ԱՄՆ-ի միակ և հուսալի ռազմավարական գործընկերը այս տարածաշրջանում: Այս պետության ստեղծման փաստն արդեն նախանշում էր Մերձավոր Արևելքում մշտական պայթյունավտանգ իրավիճակ: Անշուշտ, Իսրայելը հասկանում է, որ դժվար է հաղթել զավթած տարածքներում: Այդ իսկ պատճառով պատրաստ է օժանդակելու Իրանի, Իրաքի և Սիրիայի քրդերին անկախ Քրդստանի ստեղծման նպատակով՝ ձեռք բերելով «հավատարիմ աչքեր ու ականջներ», այսինքն՝ հենակետեր այդ տարածաշրջանում: Դա, իհարկե, կարող է սրել Թուրքիայի հետ փոխհարաբերությունները, սակայն ԱՄՆ-ի հովանավորության ներքո դրանք կհարթվեն: Այլ է Իրանի դեպքում. նա երբեք չի համակերպվի Իսրայելի կամ Թուրքիայի գլխավոր դերակատարության հետ տարածաշրջանում և չի հանդուրժի Իսրայելի ռազմաօդային բազաներին՝ իր սահմանների մոտ:

Ամփոփելով հոդվածում ներկայացված նյութը՝ անհրաժեշտ է կարևորել հետևյալ եզրահանգումները.

1. Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության ժխտողական քաղաքականության պատճառներից մեկը Իսրայելի պետության կողմից՝ նրա ստեղծման ակունքներում է: 2001 թ. ապրիլին Իսրայելի արտգործնախարար Շմոն Պերեսը հայտարարում է. «Մենք հերքում ենք Հոլոքոստի և 1915 թ հայերի ողբերգական իրադարձությունների միջև համեմատություն անցնելու բոլոր տեսակի փորձերը: Հայ ժողովուրդը ապրել է ողբերգություն, սակայն դա ոչ մի կերպ չի կարելի անվանել ցեղասպանություն»: 2002 թ. սկզբին Բիվկա Կոէնը՝ Իսրայելի դեսպանը Հայաստանում, հայտարարել է. «Հոլոքոստը աննախադեպ երևույթ է, և ոչինչ, այդ թվում նաև հայերի ցեղասպանությունը, չի կարելի համեմատել հրեական ցեղասպանության հետ»:

Այսպիսով՝ ոչինչ չի փոխվել մինչ այսօր. Իսրայելի պետությունը շարունակում է նույն ժխտողական քաղաքականությունը՝ ներկայացնելով Հոլոքոստը՝ որպես աննախադեպ երևույթ:

2. Ներկա աշխարհաքաղաքական պայմաններում անհրաժեշտ է 19-20 դդ. պատմական և աշխարհաքաղաքական իրականության նոր ընկալման մոտեցում: Կարևոր է նորովի գնահատել հայերի ցեղասպանությունը սուլթան Համիդի և երիտթուրքերի օրոք հայ քաղաքական գործիչների և մտավորականության գործունեության համատեքստում: Այն դեպքում, երբ արաբական շարժման առաջնորդները կասկածով ու անվստահությամբ էին վերաբերվում երիտթուրքերին, հայ գործիչները ոգևորությամբ ընդունեցին երիտթուրքերի խոստումները՝ ներգրավվելով այսպես կոչված հեղափոխական «ռեֆորմների» իրականացմանը:

3. Պատմությունից դասեր քաղելու ունակությունը հնարավոր է պետական մտածելակերպի ամկայության դեպքում: **Սեփական պատմություն և մշակույթ ունեցող ժողովուրդը պարտավոր է կյանքի կոչել պետականության համար կարևոր բաղկացուցիչները՝ բարոյականությունը, հավատքը, կայունությունը և իր քաղաքացիների բարեկեցությունը, սակայն պետության առաջնային նպատակներից են իրավունքը և ուժը՝ ապահովելով ժողովրդի անվտանգությունը և երկրի հզորացումը:**

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝ 20.01.2015



## ՊԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Марван Бухейри, Теодор Герцель и Армянский вопрос, Под редакцией проф. Николая Оганесяна, Институт востоковедения НАН РА, Ереван, 2010, с. 51 – 52
2. Указ. соч., с.48, 66
3. Алестин Ф. “Палестина в петле сионизма”, Москва, 1988, с. 6-7
4. Арминий Вамбери, <https://ru.wikipedia.org/wiki/>
5. Christopher Walker, Armenia: The Survival of a Nation, N.Y., 18980, p.191
6. Марван Бухейри, Теодор Герцель и Армянский вопрос, Под редакцией проф. Николая Оганесяна, Институт востоковедения НАН РА, Ереван, 2010, с. 67-68
7. Киракосян Дж., “Младотурки перед судом истории”, 1986, Ереван, с. 109 (на русском яз..
8. Эммануил Карассо, <https://ru.wikipedia.org/wiki/>
9. Ջ. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թվականներ -1914 թ.), Երևան, 1988, էջ 380:
10. Նոյն տեղում, էջ 379:
11. Джордж Ллойд, “Правда о мирных переговора.”, в двух томах, под ред. В.Г.Трухановского, Москва, Издательство иностранной литературы, 1957, с.285
12. Киракосян Дж., “Младотурки перед судом истории”, 1986, Ереван, с. 381
13. Декларация Бальфура (1917), <https://ru.wikipedia.org/wiki/>
14. Международный сионизм: история и политика” (Сборник статей), Изд. “Наука”, 1977, с. 15
15. ДВП СССР, т.1., с.1

### НЕКОТОРЫЕ ПРЕДПОСЫЛКИ ОСУЩЕСТВЛЕНИЯ ГЕНОЦИДА АРМЯН В ОСМАНСКОЙ ТУРЦИИ

#### АНГЕЛИНА ГАСПАРЯН

*Национальная академия наук РА, Международный научно – образовательный центр,  
преподаватель, кандидат филологических наук*

В статье представлены некоторые предпосылки осуществления геноцида армян в Османской империи. В частности, обращается внимание на антиармянскую политику Османской Турции и коварные замыслы сионистской тайной дипломатии в Армянском вопросе конца XIX и начала XX вв. С целью создания еврейского государства попытки тайного сговора лидеров сионистского движения с турецким султаном, а в дальнейшем с младотурками и большевиками, были направлены против национальных интересов армян.

Дата представления статьи: 20.01.2015

### SOME PREREQUISITES OF COMMITTING THE ARMENIAN GENOCIDE IN OTTOMAN TURKEY

#### ANGELINA GASPARYAN

*International Scientific-Educational Center of the National Academy of Sciences of the Republic of  
Armenia, Lecturer, Candidate of Philological Sciences*

The article presents some prerequisites for committing the Armenian Genocide in the Ottoman Empire. In particular, attention is drawn to the anti-Armenian policy of the Ottoman Empire, as well as insidious plans of the secret Zionist diplomacy on the Armenian Question at the end of the 19<sup>th</sup> century and beginning of the 20<sup>th</sup> century. In order to establish a Jewish State the attempts of collusion of the Zionist leaders with the Turkish Sultan, and later with the Young Turks and the Bolsheviks were directed against the national interests of the Armenians.

Article submission date: 20.01.2015

**ՊՅԵՌ ԲՈՒՐԴՅԵՆ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՆՐԱ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ  
(ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՆԿՅՈՒՆ)**

Հողվածն ուղղված է օտարման Պ. Բուրդյեի հայեցակարգի քաղաքագիտական վերլուծությանը: Այստեղ քաղաքական օտարումը բնութագրվում է որպես քաղաքական կուսակցությունների՝ սոցիալական խմբերի շահերի իրենց ներկայացուցչության սկզբունքի խաթարման, աղավաղման արդյունք:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** խմբային շահերի ներկայացուցչություն կամ պատվիրակման սկզբունք, քաղաքական օտարում, ապարատ, կուսակցական բյուրոկրատիզմ:

Հանրագիտարանային հրապարակումներում օտարման ներքո բնութագրվում են, նախ՝ այն գործընթացները և դրանց հետևանքները, երբ մարդկային գործունեության արդյունքները, ինչպես նաև մարդու հատկանիշներն ու առանձնահատկությունները վերածվում են մարդկանցից անկախ և նրանց վրա իշխող ուժի, երկրորդ, երբ գանազան երևույթները և միջմարդկային հարաբերությունները վերածվում են ինչ-որ այլ բանի, քան ինքնին դրանք գոյություն ունեն, երբ մարդկանց գիտակցության մեջ ռեալ, կենսական իրողությունները փոխարինվում են իրենց աղավաղմամբ ու խեղաթյուրմամբ:<sup>1</sup>

Այս մեթոդաբանական դիրքորոշման շրջանակներում «քաղաքական օտարում» հասկացությունն արտահայտում է մի վիճակ, երբ քաղաքական գա-

ղափարները, հարաբերությունները և ինստիտուտները վերածվում են մարդկանցից անկախ, իսկ երբեմն՝ նրանց հակադիր և խորթ ուժի:<sup>2</sup> Բնութագրումը, սակայն, թերի է, քանի որ հաշվի չի առնվում մարդկանց քաղաքական հարաբերությունների աղավաղումն ու խեղաթյուրումը՝ արտացոլված նրանց գիտակցության մեջ:

Քաղաքագետները, սոցիոլոգները և սոցիալական հոգեբանները մարդկանց սոցիալական գիտակցության և ինքնագագացողության վիճակը բնութագրելիս լայնորեն կիրառում են «քաղաքական օտարում» հասկացությունը: Այդ հասկացությունը բավական ճշգրիտ կերպով բնութագրում է շարքային քաղաքացու իրական վիճակը, որը սուր է զգում իր մեկուսացվածությունը պետությունից, նրա հիմնական ինստիտուտներից, խմբավորումներից և անձանցից, ովքեր վերահսկում են թելադրվող քաղաքականությունը: Ընդգծվում են քաղաքական օտարվածության քանակապես չափելի հետևյալ հատկանիշները՝

- անգորությունը, որ հարուցում է անհատի, խմբի կողմից սեփական կենսական հանգամանքները կամ երկրում ստեղծված ձգնաժամային իրադրությունը վերահսկելու կամ փոխելու անկարողության զգացմունքը.
- արժեներմատիվ ապակողմնորոշվածություն վիճակը՝ կենսական նպատակներին հասնելու կամ սեփական շահերի պաշտպանության համար հասա-

1 Социологический энциклопедический словарь. Под ред. Г. В. Осипова. – М., 1998, с. 229; Философский энциклопедический словарь. Под ред. И. Т. Фролова. – М., 1986, с. 351.

2 Политологический словарь в 2-х частях. Ч. 2, М., 1994, с. 281.

րակության օրենքների և պաշտոնական բարոյականության կողմից չխրախուսվող, անօրինական միջոցների դիմելու հարկադրական անհրաժեշտությունը.

- քաղաքական մեկուսացումը՝ հասարակության մեջ կամ որոշակի սոցիալական խմբում ընդունված քաղաքական արժեքների մերժումը.

- ինքնամեկուսացումը՝ առերևույթ մասնակցումը այնպիսի քաղաքական գործողություններին, որոնք որևէ ներքին բավարարվածություն չեն պատճառում և ընկալվում են որպես զուտ արտաքին, ցուցադրական անհրաժեշտություն.

- քաղաքական միայնությունը, որ արտահայտվում է խմբի, հասարակության կողմից ընդունված չլինելու, կամ, որ նույնն է, մերժված լինելու զգացողությամբ:

Սոցիալ-հոգեբանական և քաղաքագիտական հետազոտություններից պարզվել է, որ հենց քաղաքականության ոլորտում է, որ մարդիկ ավելի հաճախ են տառապում սոցիալ անզորության, անինաստության և անելանելիության զգացումներով: Քաղաքական գիտակցության և ինքնագզացողության վիճակը, որը բնութագրվում է վերոնշյալ էմպիրիկ հատկանիշներով, հենց քաղաքական օտարվածությունն է: Իսկ այն անձը, որը ցուցադրում է այդպիսի ինքնագզացողություն և գիտակցություն, քաղաքականապես օտարված անհատն է:

Իհարկե, օտարվածության քանակապես չափելի մակարդակը շատ կարևոր դեր է խաղում, սակայն չափման մասշտաբները շատ ավելի ընդգրկուն են դարձել: Դրանք ներառում են նաև սոցիալական խմբերի, կուսակցությունների շարքային անդամների շահերի ներկայացուցչության մեխանիզմների ձևաբեկման և խաթարման, առհասարակ՝ ներկայացուցչական ժողովրդավարության արատավոր կողմերը: Տեղին է նկատել, որ անհատի և սոցիալական խմբերի մակարդակում ներկայացուցչական

ժողովրդավարության մեխանիզմների չգործելու դեպքում ոչ միայն խիստ անարդյունավետ է դառնում շահերի ներկայացուցչությունը, այլև նպաստավոր պայմաններ են ստեղծվում քաղաքական օտարվածության աճի համար:

Մեր ժամանակների մեծանուն սոցիոլոգ և քաղաքագետ ֆրանսիացի Պյեռ Բուրդյեն բավական մեծ ուշադրություն է դարձրել ներկայացուցչական ժողովրդավարության հիմնախնդիրների ուսումնասիրությանը, մշակել է քաղաքական օտարման ինքնատիպ և արդյունավետ հայեցակարգ: Բուրդյեի արծարծած ներկայացուցչական ժողովրդավարության սոցիոլոգիական մեկնաբանության մեջ ուշագրավ է երեք հանգամանք: Նախ՝ նա ընդգծում է, որ ժամանակակից ժողովրդավարական իշխանության ինստիտուտների կազմավորման հիմքում ընկած է ժողովրդի, դասակարգերի, սոցիալական խմբերի, ազգերի կամ էթնոսների շահերի ներկայացուցչության, կամ, որ նույնն է, ներկայացման սկզբունքը: Այլ կերպ ասած՝ ներկայացուցչությունը սոցիալական խմբերի ինստիտուտացման անհրաժեշտ միջոց է, որի էությունը խմբերի իրավունքներն իրենց շահերը ներկայացնողներին փոխանցելու մեջ է: Երկրորդ՝ Բուրդյեն, իհարկե, հասկանում է, որ ներկայացուցչական ժողովրդավարության պայմաններում որոշակի սոցիալական խումբը կամ քաղաքական կազմակերպությունը, պարզապես, գոյություն չունի առանց համապատասխան պետական գրանցման, առանց իրենց շահերի ներկայացուցիչների, որոնք գործում են խմբի կամ կազմակերպության անունից և նրանց հանձնարարությամբ: Այսինքն՝ սոցիալական խումբը կամ քաղաքական կազմակերպությունը գոյություն չունի առանց իրավաբանական և խորհրդանշական (սիմվոլիկ) ներկայացուցչության, որոնց շնորհիվ խումբը կամ քաղաքական կազմակերպությունը «ձանաչում է ինքն իրեն»:

Առաջադրելով ներկայացուցչության հակասականության պրոբլեմը՝ Բուրդյեն չէր կարող շրջանցել կուսակցություններում քաղաքական օտարման բնույթի և առանձնահատկությունների խնդիրը: Ըստ Բուրդյեի՝ կուսակցական օտարումը ոչ այլ ինչ է, քան ներկայացուցչական ժողովրդավարությանը ներհատուկ իշխանության պատվիրակման (ներկայացուցչության) ձևաբեկված պրակտիկայի օրինաչափական արտահայտություն: Բուրդյեն համոզված էր, որ կուսակցական օտարման հիմքում ընկած է «ներկայացուցչության» ֆենոմենը: Հենց դրա վրա է հիմնվում կուսապարատի, կուսակցական բյուրոկրատիայի ուժը, կուսապարատ, որն իր ձեռքում է կենտրոնացնում ամենատարբեր կազմակերպչական հարցերի լուծման, ինչպես նաև օրակարգի ձևավորման իրավունքը: Ապարատն է նշանակում կուսահամագումարների պատվիրակներ, նա է կազմում խորհրդարանի պատգանավորության թեկնածուների փակ ցուցակները: Հետագայում դրանք ձևականորեն հաստատվում են պլենումներում և ընդհանուր ժողովներում: Որոշումների նախագծերը ևս նախապես պատրաստվում են ապարատի կամ բյուրոյի կողմից, իսկ կուսակցության շարքային անդամները միայն մասնակցում են քվեարկությանը: Այս ամենն արտացոլում է ներկայացուցչական ժողովրդավարության պայմաններում կուսապարատի իշխանության վերարտադրության տրամաբանությունը և նրա գործունեության ավտորիտար-բյուրոկրատական ոճը՝ կուսակցական իշխանության մենաշնորհը պահպանելու նպատակով: Կուսակցական բյուրոկրատիան, կուսապարատը կարծեք թե հետապնդում են երկակի նպատակ: Խոսքով նրանք դեմ չեն ժողովրդավարության զարգացմանը, անգամ պատրաստ են դա խրախուսելու, սակայն պատրաստ չեն ընդունելու այնպիսի որոշումներ, որոնք

պահանջում են սահմանափակել կուսակցական բյուրոկրատիայի տիրապետման հնարավորությունները: Ամեն դեպքում էլ նման քաղաքականության «շնչառությունը» կարճատև է, սահմանափակված է ապարատի իշխանությունը պահպանելու քաղաքական նկրտումներով: Այդ բացասական երևույթների հիմնապատճառները պետք է փնտրել ապարատի գործունեության նկատմամբ ներկուսակցական վերահսկողության ծայր աստիճան թուլության, ներկուսակցական ժողովրդավարության անզարգացածության մեջ:

Ապարատային բյուրոկրատիզմի ուղին կապված է բազմաթիվ ռիսկերի հետ: Նախ՝ այդ ուղին ելնում է այն կարծեցյալ դրույթից, թե միայն ապարատի «դեմիուրգ-արարիչներն» են օժտված կուսակցության առջև ծառայած բոլոր հիմնահարցերը գիտակցելու և լուծելու իրավունքով: «Աստծո փոխանորդ» կարգվելու այս մեծամոլիկ հավակնությունը քաղաքական անբարտավանության արդյունք է, իսկ կուսակցական ժողովրդավարության տեսանկյունից նման մոտեցումը զուրկ է քաղաքական հիմքերից: Երկրորդ, պարատային բյուրոկրատիզմն անխուսափելիորեն կազմաքանդում է հակադարձ կապերը, աղավաղում է «ներքևից», այսինքն՝ կուսակցական շարքերից եկող ազդանշան-հաղորդումները կուսակցության ներսում գործերի իրական վիճակի մասին: Կուսակցական ղեկավարումը դառնում է անբովանդակ, ինչը հանգեցնում է կուսապարատի և կուսակցական շարքերի փոխօտարման խորացմանը:

Անում են, թե լինում է կուսակցական բյուրոկրատիա, որը պատասխանատվությամբ է կատարում իր գործառնությունները, սակայն արգասաբեր կուսակցական բյուրոկրատիան հնարավոր է որպես ղեկավարման ապարատ, որը մշտապես վերահսկվում է կուսակցության շարքային անդամների կողմից և ծառայում է նրանց:

Որո՞նք են այն նրբին մեխանիզմները, որոնց շնորհիվ կուսապարատն իրականացնում է իշխանության բռնատիրումը: Դա կատարվում է փոխանունության (մետոնիմիա) շնորհիվ, երբ մասի (կուսակցության, նրա առաջնորդի և վերջինիս ենթական կուսապարատի) շահերը նույնականացվում են ողջ կուսակցության, անգամ ժողովրդի ընդհանրական շահերի հետ: Դա, իսկապես, հիշեցնում է պատկերավորման միջոցներից մեկը՝ մետոնիմիան, երբ փոխանակ ասելու, որ այսինչ կամ այնինչ մարդը հարստացավ՝ ասում են. «Երևանը հարստացավ»... Որոշակի կուսակցության, քաղաքական կազմակերպության ներկայացուցիչները, իրականացնելով իրենց անդամների՝ սոցիալական մեծ խմբերի շահերի ներկայացուցչության գործառույթը, նրանց նկատմամբ ձեռք են բերում որոշ խորհրդանշական (սիմվոլիկ) քաղաքական իշխանություն: Դա իրականացվում է առանց որևէ բռնության՝ փոխանունության, այսինքն՝ մասի (առաջնորդի, նրա կուսապարատի) կողմից ամբողջի (կուսակցության, ժողովրդի) լիազորությունների սեփականման-յուրացման շնորհիվ: Դա տեղի է ունենում այնպիսի եղանակով, որը Բուրդյեն անվանել է «պատգամախոսի էֆեկտ», կամ, որ նույնն է, ապարատի ներկայացուցիչների յուրօրինակ «ինքնաօծում», «սրբագործում»: Միջնորդի կամ մեդիումի դերում հանդես են գալիս հենց այդ ներկայացուցիչները, որոնք նույնիսկ իրենց գործունեության մեջ հրաժարվում են անձնական դերանունից և միշտ ասում են «մենք, մեր կուսակցությունը...» կամ «կուսակցությունը գտնում է, որ...»: Սեփական ես-ը տարրալուծում են ողջ կուսակցության, անգամ ժողովրդի հիմնարար շահերի՝ «այդ բարձրագույն ատյանի» մեջ: Ինչպես քահանան իրեն համարում է եկեղեցու, այդ անանձնական ամբողջի ներկայացուցիչը, այդպես էլ պատգամավորը հանդես է գալիս ժողովրդի, աշխատավորության, ազգի,

դասակարգի, սոցիալական խմբի անունից: Ավելին, հնարավորություն է տալիս, որպեսզի պատգամավորները, քաղաքական գործիչներն իրենց սեփական կամքը և սեփական շահերը ներկայացնեն որպես ժողովրդի, ընտրազանգվածի կամք և այլն: Պարզ է, որ ժողովրդին, ընտրազանգվածին մշտական վկայակոչումները մշտապես կառուցվում են այն կուսակցությունների, ապարատների, լիդերների իշխանության լեգիտիմացման համար, որոնք բռնատիրել են նույն ժողովրդի շահերը ներկայացնելու և նրանց համախմբելու գործառույթները: Պ.Բուրդյեն նկատել է, որ կուսակցական առաջնորդը, քաղաքական գործիչը որպեսզի իրեն վերագրի սոցիալական խմբի (սակ ժողովրդի - Ս.Կ.) հեղինակությունը, իրեն պետք է նույնացնի այդ խմբի հետ, որն նրան օժտում է իր հեղինակությամբ:<sup>1</sup> Անկասկած է, որ եթե ինչ-որ մեկը, հանդես գալով միայն իր անունից, անսպասելիորեն դիմում է խմբին՝ մասնակցելու այս կամ այն գործողությանը, հակակառավարական հանրահավաքին և կամ բոյկոտի ենթարկելու ընտրությունների արդյունքները, ապա հազիվ թե նրա ձայնը լսելի լինի հասարակության տարբեր շրջանակներում, սակայն եթե նույն մարդը, քողարկելով իր իսկական նպատակները և դեմքը, հանդես գա «ժողովրդի, ազգի անունից», ապա ամեն ինչ փոխվում է:

Պ.Բուրդյեն գտնում է, որ «Անցումը սահմանական եղանակից հրամայական եղանակին ենթադրում է անհատականից անցում կոլեկտիվին՝ որպես ցանկացած ճանաչված կամ ճանաչվելիք հարկադրանքի հիմքի»:<sup>2</sup> Պ.Բուրդյեն առանձնացնում է քաղաքական օտարման այնպիսի տեսակ, ինչպիսին է քաղաքական ինքնակոչությունը, երբ արտաքուստ համազգային շահին ծա-

1 Бурдые П. Социология политики. - М., 1993, с.242-243.

2 Նույն տեղում, էջ 247-248:

ռայելու դիմակի ներքո կուսակցական լիդերները փորձում են իրագործել իրենց նեղ խմբային շահադիտական նկրտումները: Ընդ որում, քաղաքական ինքնակոչը պատրաստ է հեշտահաճո կերպով շրջանցել բոլոր օրենքներն ու բարոյական սկզբունքները՝ առաջնորդվելով «նպատակն արդարացնում է միջոցը» մաքիավելիական կարգախոսով:<sup>1</sup>

Օտարված քաղաքական գիտակցության, ժողովրդի շահերի ներկայացուցչության մեխանիզմների վերասերման ձևերից է քաղաքական ֆետիշիզմը, երբ առանձին քաղաքական գործիչներին, պատգամավորներին և այլոց՝ անկախ ընտրողների ու սոցիալական խմբերի իրական կարծիքներից, վերագրվում են հասարակական, ազգային գրավչության հատկանիշներ: Այստեղ խմբերի ուժը վերագրվում է կուսակցական գործիչներին, որոնք «ստանձնում» են հիանալի հատկանիշները: Դա հանգեցնում է առանձին կուսակցական գործիչների, «ազգային բարերարների» կերպարների առասպելականացմանն ու դրանց համապատասխան ընկալմանը: Այդ կուսակցական գործիչները՝ «ազգային բարերարները» փոխակերպվում են ազգային հերոսների կամ փրկիչների, որոնք, մարտնչելով ամեն տեսակի հրեշների և չար ոգիների դեմ, պաշտպանում են ազգային իդեալները և մաքրում քաղաքական, կուսակցական տարածքը: Այդ երևույթը հիմնվում է այն պատրանքի վրա, թե իբր «ազգանվեր» կուսակցական գործիչների խոսքն ու խարիզման հրաշագործ եղանակով կվերածվեն գործերի՝ առանց ձգնաժամի հաղթահարման գիտական ծրագրերի, իշխանության և ընդդիմության միջև կառուցողական երկխոսության: Այդօրինակ քաղաքական ընկալումը ոչ մի կապ չունի այդ գործիչների իրական գործունեության կամ ոչ ռացիոնալ փաստարկների հետ: Իշխանություններից բնակ-

չության մեծամասնության օտարումը դրսևորվում է նաև նրանով, որ շարքային քաղաքացու մոտ իշխանությունը չի կապվում իր համայնքի, տեղական ադմինիստրացիայի հետ: Նրա համար իշխանության գտնվելու վայրը մայրաքաղաքն է, որտեղից և նա ակնկալում է իրեն մտահոգող խնդիրների հնարավոր լուծումը:

Բացի դրանից՝ թերևս կուսապարտի նույնականացումը որևէ սոցիալական խմբի, համայնքի և այլնի հետ բացառապես գիտակցված գաղափարախոսական գործունեություն չէ, քանի որ շատ բան արվում է անգիտակցորեն: Հենց այդ պատճառով էլ քաղաքական ֆետիշիզմը բնորոշ է ոչ միայն կուսակցական գործիչներին, այլև այդ քաղաքական կազմակերպությունների շարքային անդամներին: Այդօրինակ ֆետիշիզմից կարելի է ազատվել միայն ապարտի արհեստածին նույնականությունը պակասազերծ անելու միջոցով: Առերևույթ թվում է, թե կարելի է ապարտին դիմել հետևյալ խոսքերով՝ «Դուք, ապարտի ներկայացուցիչներ, առանց մեզ ներկայացուցիչներ չեք, մենք կարող ենք ձեզ գրկել մեր սոցիալական խումբը ներկայացնելու իրավունքից»: Հարցը դրանով չի լուծվի, քանի որ ներկայացուցչական ժողովրդավարության հզոր մեխանիզմը մշտապես վերարտադրում է քաղաքական կազմակերպության, նրա շարքային անդամների կախվածությունը ապարտից ու նրա ներկայացուցիչներից: Պետք է նկատի ունենալ և այն, որ հետխորհրդային հասարակություններում կուսակցությունների բյուրակրատացումը ամենևին էլ տեղի չի ունենում վերերյան եղանակով: Հայտնի է, որ վերերյան բյուրոկրատիան հանդիսանում է պրոֆեսիոնալ մենեջերների լեգիտիմ տիրապետման եղանակ, իսկ մեզանում քաղաքական մենեջմենթի գծով պրոֆեսիոնալների փոխարեն տիրապետող դիրքեր են զբաղեցնում հիմնականում

1 Նույն տեղում, էջ 243-248:

«հաճկատարները», «հնարամիտները», որոնք կարողանում են դուր գալ իրենց «կուսակցական պետերին», նրանց հաճոյանալ, կռահել և գուշակել իրենց առաջնորդների և կուսապարտի պատասխանատուների ձգտումները և հակումները: Նրանք պետք է տիրապետեն իրենց մրցակիցների դեմ խարդավանելու, բանսարկություններ սարքելու «արվեստին»: Կուսակցական կարիերիզմը մարդկանց մեջ դաստիարակում է այնպիսի հատկանիշներ, ինչպիսին են հաճկատարությունը, կամակատարությունը, շողոքորթությունը և քծնողությունը: Կարիերիզմը զարգանում է անվստահության և բանսարկությունների մթնոլորտում, որոնք ներկուսակցական մր-

ցակցության անբաժան ուղեկիցներն են:

Հետխորհրդային հասարակությունների ընտրական պրակտիկան ցույց է տվել, որ կուսակցական օտարման գործընթացները այնքան հեռուն են գնացել, որ հիմնախախտել են բուն խմբերի շահերի ներկայացուցչության, պատվիրակման մեխանիզմը: Կուսակցությունները վերածվել են յուրօրինակ վենչուրային տիպի քաղաքական կազմակերպությունների, որտեղ ներդրումներ կատարվում են՝ ապագայում հնարավոր քաղաքական և տնտեսական օգուտներ ստանալու նպատակով:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝  
21.03.2015

## ПЬЕР БУРДЬЕ И ЕГО КОНЦЕПЦИЯ ОТЧУЖДЕНИЯ (С ПОЛИТОЛОГИЧЕСКОЙ ТОЧКИ ЗРЕНИЯ)

**САРКИС КАРАПЕТЯН**

*Национальная Академия наук РА, Институт философии, социологии и права, аспирант*

Статья посвящена политологическому анализу концепции политического отчуждения П.Бурдьё. Раскрыта сущность интерпретации П.Бурдьё политического отчуждения как результата нарушения политическими партиями принципов представительства интересов социальных групп.

Дата представления статьи: 21.03.2015

## PIERRE BOURDIEU AND HIS CONCEPT OF ALIENATION (FROM THE POINT OF VIEW OF POLITICAL SCIENCE)

**SARGIS KARAPETYAN**

*The National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Law and Philosophy  
Postgraduate Student*

The article is devoted to the political analysis of the concept of political alienation by P. Bourdieu. The interpretation essence of P. Bourdieu's political alienation as a result of principles violations of the political parties representing the interests of social groups has been disclosed.

Article submission date: 21.03.2015

**ՀԱՊԿ-Ն ՀՀ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԱՇՏՊԱՆԱԿԱՆ  
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2005-2010ԹԹ.)**

Հարավային Կովկասում ԽՍՀՄ փլուզման հետևանքով ստեղծված աշխարհաքաղաքական վակուումի, ժամանակակից պետական կառույցներ չլինելու և ուժգնացող էթնոքաղաքական հակամարտությունների պայմաններում Հայաստանի Հանրապետությունը վերսկսեց, իսկ պետական շինարարության որոշ կարևորագույն ոլորտներում դատարկ էջից մեկնարկեց կենսունակ պետականության կերտման մրցավազքը: Դատարկ էջի իրավիճակն առաջին հերթին վերաբերում էր Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական կառույցների ստեղծմանն ու կայացմանը, ապա նաև ժամանակի թելադրանքով՝ դրանց կատարելագործմանը: Հաշվի առնելով այն պարզ հանգամանքը, որ ինչպես երկրի արտաքին քաղաքական ու սոցիալ-տնտեսական ոլորտների կառավարման համակարգի, այնպես էլ դրանց ուրույն մաս կազմող պաշտպանական բնագավառի բարեփոխումները պետք է ծառայեն ազգային շահերի իրականացմանը՝ Հայաստանի Հանրապետությունը որդեգրեց պաշտպանական ոլորտի բարեփոխումների մի այնպիսի ճանապարհ, որը, ի վերջո, տրամաբանորեն ուղղված էր այդ ոլորտի հնարավորինս մոտեցմանը արդի լավագույն միջազգային ստանդարտներին: Սա այդ ժամանակաշրջանի ամենահրատապ հրամայականն էր:

**Բանալի բառեր և արտահայտություններ՝** ՀՀՊԿ, ազգային անվտանգություն, ռազմական անվտանգություն, ավանդական սպառնալիքներ, պաշտպանական բարեփոխումներ, ռեալիզմ:

20-րդ դարի վերջին Հայաստա-

նի մերձակա տարածքներում ի հայտ եկան անվտանգության համար ներտարածաշրջանային և արտատարածաշրջանային սպառնալիքներ: Ներտարածաշրջանային սպառնալիքներն առավելապես պայմանավորված էին տարածաշրջանում առկա ազգամիջյան հակամարտություններով, զինված բախումներով: Արտատարածաշրջանային սպառնալիքները հիմնականում բխում էին տարածաշրջանի նկատմամբ բոլոր հիմնական ուժային կենտրոններում առկա շահերի խաչաձևումից: Էթնիկական հակամարտությունները, ներքին բախումները և ռազմական գործողությունները սահմանակից պետություններում Հայաստանի համար կարող էին ներկայացնել (այժմ նույնպես նման վտանգ կա) տարաբնույթ սպառնալիքներ՝ տարանցիկ ենթակառուցվածքների դեմ դիվերսիոն գործողություններից մինչև հարևան պետություններում ծավալվող ռազմական գործողությունների անդրսահմանային ներագդեցությունները<sup>1</sup>:

Այսպիսի հանգամանքներում Հայաստանի Հանրապետությունը գործնականորեն անցավ ազգային անվտանգության ապահովման նպատակների իրականացման բուն գործընթացին՝ մասնավորապես ինտեգրվելով միջազգային և տարածաշրջանային անվտանգության մի շարք համակարգերի:

Հայաստանը տարածաշրջանային և համաշխարհային ներգրավման գործընթացներին մասնակցող երկիր է և իրեն

1 Տես ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, www.mil.am/1297157753:



դիտում է որպես տարածաշրջանում և միջազգային ասպարեզում տեղի ունեցող գործընթացների լիիրավ մասնակից: Ներգրավվածությունը ենթադրում է մասնակցություն միջազգային ասպարեզում ընթացող այն զարգացումներին, որոնց համահունչ են Հայաստանի որդեգրած նպատակները<sup>1</sup>: Այս տեսանկյունից Հայաստանի Հանրապետությունը ներգրավվեց նաև Հավաքական անվտանգության մասին կազմակերպությանը՝ հետագայում խորացնելով համագործակցությունը այդ կազմակերպության շրջանակներում:

Հայաստանը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության հիմնադիր անդամ է: Պայմանագրի գլխավոր նպատակն է միասնական ուժերով կանխել, իսկ անհրաժեշտության դեպքում վերացնել մասնակից պետությունների դեմ ուղղված ռազմական սպառնալիքը: Անդամակցությունը ՀԱՊԿ-ին Հայաստանի անվտանգության ապահովման բաղադրիչներից է, որն ապահովվում է անդամ-պետությունների միջև բազմակողմ կապերի շնորհիվ: Պայմանագրի ռազմական բաղադրիչն արտոնյալ պայմաններ է ընձեռում անդամ-պետություններին ռազմատեխնիկական մատակարարումների հարցում, ինչն առաջնային կարևորություն ունի Հայաստանի համար: ՀԱՊԿ ռազմական բաղադրիչի զարգացումը միտված է անդամ-պետությունների միջև ռազմական համագործակցության գործուն մեխանիզմների ստեղծմանն ու կայացմանը, միջազգային սպառնալիքների՝ ահաբեկչության, թմրանյութերի և զենքի անօրինական շրջանառության դեմ պայքարի արդյունավետ միջոցների ստեղծմանը, այս ասպարեզում տեղեկատվության փոխանակմանը:

ՀՀ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության ակտիվ անդամ է և գործնական մասնակցություն է ունենում Հավաքական

անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության ծրագրերին, ինչպիսիք են՝

ա) ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունների մշակումը.

բ) տարածաշրջանային սկզբունքով հավաքական անվտանգության համակարգի զարգացումը.

գ) ԱՊՀ և ՀԱՊԿ հակաօդային պաշտպանության համակարգի կատարելագործումը.

դ) ռազմատեխնիկական համագործակցությունը.

ե) ռազմական ենթակառուցվածքների զարգացումը.

զ) ռազմական կադրերի պատրաստումը և ռազմական գիտությունը.

է) միջազգային ահաբեկչության և այլ միջազգային հանցագործությունների դեմ պայքարը.

ը) երկկողմ ձևաչափով համագործակցությունը ՀԱՊԿ անդամ պետությունների հետ<sup>2</sup>:

Նշված բոլոր ուղղություններով Հայաստանի Հանրապետությունը ակտիվ համագործակցություն է ծավալում: Դրավառ ապացույցը ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորոյուժայի հետևյալ միտքն է. «Հայաստանի Հանրապետությունը ՀԱՊԿ-ի անդամ պետությունների դաշնակցային հարաբերությունների համակարգում հուսալի, ժամանակով ստուգված գործընկեր է: Նա հանգուցային դեր է խաղում կոլեկտիվ անվտանգության Կովկասյան տարածաշրջանի գործերի միացյալ խմբավորման կազմում, արտաքին քաղաքականության հարցերում, ակտիվորեն համագործակցում է այլ անդամ պետությունների հետ՝ հակազդելով արդի սպառնալիքներին և մարտահրավերներին: Այդ բոլոր գործերում մեր հայ ընկերները և գործընկերները աչքի են ընկնում նախաձեռնողականությամբ, ընդունված որոշումների

1 Տե՛ս նույն տեղում, [www.mil.am/1297157753](http://www.mil.am/1297157753)

2 Տե՛ս ՀՀ Ռազմական դոկտրին, [www.mil.am/Est-tristique-auctor-mus-pulvinar-parturient-ac](http://www.mil.am/Est-tristique-auctor-mus-pulvinar-parturient-ac)

իրականացման համար բարձր պատասխանատվությամբ, ՀԱՊԿ-ի ձևաչափում ինտեգրման գործընթացների հետագա խորացման պատրաստակամությամբ<sup>1</sup>»:

Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը ստորագրելիս ՀՀ-ն այն դիտում էր որպես ներդրում համաեվրոպական անվտանգության ու կայունության ամրապնդման գործում և Ասիայի ու Եվրոպայի կոլեկտիվ անվտանգության համակարգի բաղկացուցիչ մաս: Հայաստանը ելնում էր այն բանից, որ առձակատման հաղթահարման, ռազմական ոլորտում գործընկերության ու բազմակողմանի համագործակցության ընդլայնման և վստահության ամրապնդման, միջուկային ու սովորական սպառազինության կրճատման հետևանքով ստեղծվում են բարենպաստ պայմաններ՝ միջազգային խնդիրներ լուծելիս ուժի կիրառումից հրաժարվելու համար: Մասնակցելով անվտանգության նոր կառույցի ստեղծմանը՝ ՀՀ-ն նպատակ ուներ ապահովելու իր անվտանգությունը և նվազեցնելու ռազմական ծախսերը՝ հաշվի առնելով ռազմական ենթակառուցվածքների և գիտահետազոտական ու ռազմատուփնական բազայի առկայությունը, սպառազինության և ռազմական տեխնիկայի միատիպությունը, պաշտպանական ոլորտի ձեռնարկությունների պահպանված համագործակցությունը: ՀՀ-ն պլանավորում էր պայմանագրի շրջանակներում կազմակերպել մասնակից պետությունների հետ ավելի սերտ համագործակցություն նաև երկկողմ հիմունքներով<sup>2</sup>: Թե ինչքանով արդարացան այս սպասումները, որքանով էր ՀԱՊԿ ինտեգրումը արդյունավետ ՀՀ համար, կվորձենք պատասխանել հետագա շարադրանքում՝ ՀԱՊԿ շրջանակներում Հայաստանի Հանրապետության բազմակողմանի համագործակցությունը ներկայացնելով վերլուծական

մոտեցմամբ:

2001թ. մայիսին Երևանում տեղի ունեցած Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության ՀԱԽ նստաշրջանի ժամանակ որոշում ընդունվեց ռոտացիոն կարգով ՀԱԽ-ում նախագահելու մասին: Քանի որ հանդիպումը տեղի էր ունենում Երևանում, նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյան: ՀՀ նախագահության ընթացքում զգալի աշխատանքներ են կատարվել: Մասնավորապես ընդունվել են կազմակերպության զարգացման ուղղությունը երկարաժամկետ հեռանկարով կանխորոշող այնպիսի կարևոր փաստաթղթեր, ինչպիսիք են Հավաքական անվտանգության խորհրդի որոշումը ՀԱԽ-ի կանոնադրության նոր խմբագրման մասին և Խորհրդի մարմինների կանոնադրությունները պայմանագրի շրջանակներում ծավալված համագործակցության արդի փուլի խնդիրներին համապատասխանեցնելու անհրաժեշտության վերաբերյալ, Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների կոլեկտիվ անվտանգության համակարգի ուժերի և միջոցների ձևավորման ու գործառնման կարգի մասին արձանագրությունը, որի հիմքում դրված է Հավաքական անվտանգության համակարգի ձևավորման տարածաշրջանային սկզբունքը, և ըստ որի՝ սահմանվել են Հավաքական անվտանգության տարածաշրջանները, Հավաքական անվտանգության Կենտրոնասիական տարածաշրջանի արագ ծավալման Հավաքական ուժերի Կանոնադրությունը և այլն<sup>3</sup>:

Լինելով ՀԱՊԿ շրջանակներում ինտեգրացիոն գործընթացների խորացման հարցում ակտիվ մասնակից՝ Հայաստանի Հանրապետությունը համագործակցությունն իրականացնում է նաև երկկողմ ձևաչափով: Ասվածը նախ և առաջ վերաբերում է ՀՀ-ՌԴ փոխգործակցությանը: Այս մասին նշել է նաև ՀՀ Պաշտպա-

1 [www.newsarmenia.ru/exclusive/20070118/41627762.html](http://www.newsarmenia.ru/exclusive/20070118/41627762.html)).

2 Տե՛ս «Հայկական բանակ», 4(58).2008, էջ 76

3 Տե՛ս «Հայկական բանակ», 4(58).2008, էջ 74-75

նության նախարար Սեյրան Օհանյանը՝ «Ինտերֆակս» գործակալությանը տված բացառիկ հարցազրույցի ժամանակ. «Ինձ համար հաճելի է նշել, որ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցությունը, որը ելնում է մեր պետությունների երկարաժամկետ ռազմավարական շահերից, բավական բարձր մակարդակի է հասել և շարունակում է զարգանալ՝ ի բարօրություն մեր ժողովուրդների: Մեր երկրների միջև գոյություն ունեցող իրավապայմանագրային բազան, որը իրենից ներկայացնում է շուրջ 160 միջպետական, միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրերի մի համալիր, դրա վառ ապացույցն է հանդիսանում: Խոսելով հայ-ռուսական ռազմա-տեխնիկական համագործակցության մասին՝ պետք է նշեմ, որ այն համապատասխանում է Հայաստանի շահերին և ծառայում է որպես տարածաշրջանային անվտանգության ապահովման երաշխիք: Հայաստանի Հանրապետության տարածքում տեղաբաշխված 102-րդ ռուսական բազան՝ իր կազմի մեջ մտնող Հակաօդային պաշտպանության համակարգով և ավիացիայով, ՀՀ զինված ուժերի հետ միասին իրականացնում են մեր սահմաններով անցնող ԱՊՀ օդային սահմանի անվտանգության ապահովման գործընթացը: ՀՀ զինված ուժերի մարտական պատրաստակալությունը բարձր մակարդակի վրա պահպանելը Հարավային Կովկասի անվտանգության պահպանման համար լրացուցիչ գործոն է հանդիսանում, ինչն էլ իր հերթին համապատասխանում է ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ ՀԱՊԿ անդամ պետությունների երկարաժամկետ շահերին»<sup>1</sup>:

ՀՀ տարածքում ռուսական ռազմակայանի տեղակայման մասին պայմանագիրը Ռուսաստանի Դաշնության Պետդուրման վավերացրել է 1997թ.ապրիլի 18-ին՝

370 կողմ, 5 դեմ և 1 ձեռնպահ քվեարկությամբ<sup>2</sup>: Այսօր այդ ռազմակայանում պաշտոնական տեղեկատվության համաձայն տեղակայված է շուրջ 100 տանկ, 300 զրահամեքենա և 4000 զինվոր<sup>3</sup>: 2010թ. օգոստոսին նոր համաձայնագիր ստորագրվեց ռուսական ռազմակայանի՝ Հայաստանում գտնվելու ժամկետը 49 տարով երկարացվելու մասին: Վերջինս փոփոխություններ է մտցնում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 1995թ. մարտի 16-ին ստորագրված պայմանագրի մեջ: Հայաստանի տարածքում գտնվող ռուսական 102-րդ ռազմակայանը ՀՀ զինված ուժերի հետ միասին հանդիսանում են Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության՝ պատասխանատվության գոտի հանդիսացող Հարավկովկասյան տարածաշրջանի անվտանգության ապահովման գործում կարևոր մեխանիզմ:

Ինչ վերաբերում է ՀԱՊԿ շրջանակներում այլ անդամ պետությունների հետ ընթացող երկկողմ համագործակցությանը, պետք է նշել, որ հիմնական ուղղություններից մեկը ռազմական կադրերի պատրաստումն է: Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության Պաշտպանության նախարարների մակարդակով համաձայնագիր է ստորագրվել, որի համաձայն՝ անդամ պետությունների ռազմաուսումնական հիմնարկություններում ՀՀ քաղաքացիները կարող են ուսանել անվճար և արտոնյալ պայմաններով: Մասնավորապես Ռուսաստանի Դաշնությունում նմանատիպ 45 հիմնարկություն կա, Բելլոռուսում՝ 6, Ղազախստանում՝ 3, և Տաջիկստանում ու Ղրղզստանում՝ մեկական<sup>4</sup>:

Ընդհանրապես՝ ՀՀ շատ ակտիվ է Հավաքական անվտանգության պայմա-

1 Տե՛ս [www.interfax.ru/politics/](http://www.interfax.ru/politics/)

2 Տե՛ս Ժ. Մանուկյան, «ԱՊՀ ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտներում (1995-2001թթ)», էջ 92

3 [www.nationalidea.am/publications.php?id=4514&l=A](http://www.nationalidea.am/publications.php?id=4514&l=A)

4 Տե՛ս [www.odkb.gov.ru/start/indexpage.htm](http://www.odkb.gov.ru/start/indexpage.htm)

նագրի կազմակերպության ռազմական բաղկացուցիչի շրջանակում ընթացող համագործակցության առումով: Այլ անդամ պետությունների ռազմական խմբավորումների հետ ՀՀ Զինված ուժերի որոշ ստորաբաժանումներ մասնակցել են «Ռուբեժ», «Կոբալտ», «Փոխգործակցություն» ամենամյա հրամանատարաշտաբային գործարժություններին: Մասնավորապես՝ 2008թ. հունիս-օգոստոս ամիսներին Հայաստանում անցկացվեց «Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության համատեղ պաշտպանության գործողության նախապատրաստում և անցկացում» թեմայով ՀԱՊԿ անդամ պետությունների համատեղ հրամանատարաշտաբային գործարժությունը, որը հնարավորություն ընձեռեց գործնական առումով ստուգելու Հավաքական անվտանգության մասին պայմանագրի 4-րդ հոդվածով նախատեսված անդամ պետությունների հավաքական պաշտպանության պատրաստվածությունը, ինչպես նաև մշակելու Հայաստանի հանդեպ ագրեսիայի սպառնալիքի կամ ագրեսիայի ակտի դեպքում ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից ձեռնարկվելիք միջոցներ<sup>1</sup>: Զորավարժությանը մասնակցում էին շուրջ 2500 զինծառայող Հայաստանից ու Ռուսաստանից: Զորավարժության ընթացքում գործարկվել են զրահատեխնիկա, զենիթային միջոցներ, Հակաօդային պաշտպանության համակարգեր, ավիացիա: «Կոբալտ» գործարժությանը Հայաստանի Հանրապետությունից մասնակցում է Օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի կազմի մեջ մտնող հատուկ նշանակության ջոկատը: Զորավարժության հիմնական նպատակը ահաբեկչության դեմ պայքարի հարցում անդամ պետությունների համապատասխան ստորաբաժանումների պատրաստվածության

կատարելագործումն է, ինչպես նաև այս հարցում ընդհանուր միջոցների համադասումն ու կիրառումը:

Ինչ վերաբերում է «Փոխգործակցություն» գործարժությանը, նշենք, որ այն անցկացվում է 2009թ-ից՝ ելնելով նույն թվականի հունիսի 14-ին Արագ արձագանքման հավաքական ուժերի ստեղծման փաստից: 2009թ. անցկացված հրամանատարաշտաբային գործարժությունում, որը տեղի է ունեցել Ղազախստանում գտնվող Մատիբուլակ գործարժարանում, Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում էին Պաշտպանության նախարարության 10 սպաներից բաղկացած օպերատիվ խմբավորման հետ միասին մոտոհրաձգային բրիգադից հատկացված 94 զինծառայողներ<sup>2</sup>:

ՀՀ-ը Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպությունում նախագահելու մասին խոսելիս պետք է նշել, որ նախագահելու ժամանակահատվածներում շատ կարևոր որոշումներ են ընդունվել: Բավական է դրանց շարքում նշել Արագ ծավալման հավաքական ուժերի Կենտրոնասիական հատվածի և Արագ արձագանքման հավաքական ուժերի ստեղծման փաստը, և ակնհայտ կդառնա Կազմակերպության շրջանակում Հայաստանի ակտիվ դերի դրսևորումը: Այս տեսանկյունից հատկապես կարևոր էր 2008թ. սեպտեմբերի 5-ից ՀԱԽ-ում նախագահությունը ստանձնելու հանգամանքը, որը առաջադրված զգալի թվով խնդիրների կարգավորման առումով Հայաստանի համար բավական բարդ շրջան էր:

Ըստ «ԱՊՀ մասնակից պետությունների ռազմական համագործակցության ոլորտում օգտագործվող հիմնական տերմիններ և հասկացություններ» տեղեկատու բառարանի՝ ՀԱՊ-ի մասնակից պետությունների դաշնադրային ռազմավարության հիմնական դրույթները կազմում են ռեալ ձևավորվող աշխարհ-

1 Տե՛ս [www.mfa.am/hy/international-organisations/CSTO/](http://www.mfa.am/hy/international-organisations/CSTO/)

2 Տե՛ս [www.odkb.gov.ru/start/index.htm](http://www.odkb.gov.ru/start/index.htm)

հաքաղաքական և ռազմական ռազմավարական իրադրությունում հնարավորագրեսիան կանխելու ու համատեղ հետմղելու նպատակով ռազմաքաղաքական ու ռազմական բնագավառներում՝ դաշնադրային ռազմական շինարարության, զորքերի (ուժերի) դաշնադրային (միացյալ) խմբավորումների պատրաստման և կիրառման, ՀԱՊ-ի մասնակից պետությունների կոլեկտիվ անվտանգության համակարգի ձևավորման և գործառման խնդիրների գործնական լուծման ու միջոցառումների իրականացման վերաբերյալ հայեցակարգային գաղափարների և տեսակետների համախումբը: 1992թ. մայիսի 15-ի Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների դաշնադրային ռազմավարության հիմնական դրույթները հաստատվել են ՀԱՊԿ-ի ՀԱԽ-ի 2000թ. մայիսի 24-ի որոշմամբ: Սակայն վերջին 2 տարում ՀԱՊԿ-ի մի շարք պետություններ ընդունել են ռազմական դոկտրիններ կամ նրանց նոր խմբագրումներ (Հայաստանի Հանրապետություն, Ղազախստանի Հանրապետություն և Տաջիկստանի Հանրապետություն), ինչի հետևանքով անհրաժեշտություն կա այդ փաստաթղթում կատարելու համապատասխան շտկումներ<sup>1</sup>:

ՀԱՊԿ-ի Անվտանգության խորհրդում և մյուս կանոնադրական մարմիններում ՀՀ նախագահությունը հնարավորություն է տալիս նաև անդամ պետությունների ուշադրությունը հերթական անգամ հրավիրելու այն հանգամանքի վրա, որ անհրաժեշտ է վերանայել Հավաքական անվտանգության մասին պայմանագրի ձևաչափում 90-ական թվականների վերջերին ընդունված տեսական բազան, որը որոշում է դաշնադրային ռազմական շինարարության օպերատիվ – ռազմավարական հարցերի ամբողջ համալիրը, քանի որ այդ տեսական բազան արդեն չի համապատասխանում ժամանակի

ոգուն և ռազմական անվտանգության ապահովման գործում ՀԱՊԿ-ի անդամ պետությունների գերակայություններին: Անհրաժեշտ է նաև շտկումներ կատարել պաշտպանական քաղաքականության ձևավորման գործընթացում:

Պաշտպանական քաղաքականություն ասելով՝ մենք հասկանում ենք այն որոշակի ուղեգիծը կամ գործելակերպը, որոնք պաշտպանական ոլորտում ղեկավարման կամ ապագա որոշումների իրականացման նպատակով ընտրվում են եղած բոլոր հնարավոր տարբերակներից, առաջադրված են բարձրագույն գործադիր իշխանության կողմից, կոչված են ուղղորդելու ռազմական ոլորտում գործերի կառավարման հետ կապված գործողությունները, որոշումները և այլ հարցեր ու հիմնված են ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթների վրա: Դա ռազմական ոլորտում պետության անվտանգության ապահովման մի յուրահատուկ ծրագիր է: Պաշտպանական քաղաքականության պլանավորման ժամանակ անհրաժեշտ է ձևակերպել և լուծել երկու հիմնական խնդիր, այն է՝ որոշել, թե վերջնական նպատակներին հասնելու համար ինչպես օգտագործել առկա միջոցները, և որոշել այն միջոցները, որոնք կազմակերպությանը կամ անդամ պետություններին հնարավորություն կտան ապագայում արդյունավետ կերպով չեզոքացնելու հավանական մարտահրավերները և սպառնալիքները: Առաջին խնդիրը ներառում է ինչպես ռազմավարական, այնպես էլ օպերատիվ ոլորտներ, ինչպես նաև մանրակրկիտ կերպով մշակված իրավիճակային պլանավորում, զորքերի կառավարում մարտական գործողությունների ժամանակ, այսինքն՝ զորքերի (ուժերի) կիրառում<sup>2</sup>:

Երկրորդ խնդիրը լուծելիս, եթե պաշտպանական քաղաքականության նկատմամբ կիրառվում է նպատակներին կողմնորոշված մոտեցում, պետք է հաշվի

1 Տե՛ս «Հայկական բանակ», 4(58).2008., էջ 78

2 Տե՛ս «Հայկական բանակ», 4(58).2008, էջ 79

առնել, որ հենց դրված նպատակներն են պայմանավորում ապագա զինված ուժերի կառուցվածքը: Օրինակ՝ պաշտպանական ոլորտի բարեփոխումները արդյունավետ չեն լինի, եթե պաշտպանական քաղաքականությունը և պլանավորումը կողմնորոշված չեն նպատակին հասնելուն: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ պաշտպանական քաղաքականությունն ընդգրկում է ինչպես նպատակները, այնպես էլ միջոցները, և հատկապես առաջադրված նպատակներն են որոշում զարգացումը<sup>1</sup>:

Վերը ասվածի համաձայն՝ կոլեկտիվ անվտանգության Կովկասյան տարածաշրջանի ուժերի և միջոցների ձևավորումը պետք է շարունակվի Հայաստանի Հանրապետության ընդունած ազգային անվտանգության ռազմավարության, ինչպես նաև այն փաստի հաշվառմամբ, որ Հայաստանի Հանրապետությունը չունի ՀԱՊԿ-ի անդամ պետություններից որևէ մեկի հետ ընդհանուր սահման: Դա նշանակում է, որ 2007թ. հոկտեմբերի 6-ին ստորագրված «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի անդամ պետությունների ազդեցիկ սպառնալիքի կամ ազդեցիկ ակտի դեպքում ռազմատեխնիկական օգնություն ցուցաբերելու մեխանիզմի մասին» արձանագրության կիրարկումը մեր հանրապետության նկատմամբ կապված կլինի որոշակի բարդությունների հետ և պահանջում է յուրահատուկ մոտեցում:

Վերը շարադրվածից ելնելով՝ Հայաստանի Հանրապետությունը ՀԱՊԿ շրջանակում իր գործունեությունը 2008 թ-ից հետո իրականացնում է առաջադրված խնդիրների լուծման և այդ ենթատեքստում համապատասխան օղակների հետ ակտիվ շփումների ուղղությամբ:

Այսպիսով՝ ՀՀ անկախության վերականգնումից հետո ՀՀ իշխանությունների առջև, իբրև միջազգային հարաբերությունների սուբյեկտ, ծառայում արտաքին

քաղաքականության հարցը: Որակապես նոր ռազմաքաղաքական իրադրության պայմաններում ՀՀ պետք է կարողանար ապահովել սեփական անվտանգությունը սոցիալ-տնտեսական հետագա զարգացման համար: Հայաստանի Հանրապետության կողմից բաց քաղաքականության որդեգրումը, այլ պետությունների հակասություններից օգուտներ քաղելու ռազմավարությունից հրաժարվելը դեռ չէր նշանակում, որ փոխադարձության սկզբունքը հանդիսանալու էր այդ քայլի տրամաբանական շարունակությունը: Այս հարցում երաշխիքներ չունենալու հետևանքով Հայաստանը արտաքին քաղաքականության գերակայություն համարեց նախկին խորհրդային պետությունների հետ նոր անվտանգության համակարգ հիմնելու հարցը, որն էլ հանդիսացավ Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը: Դառնալով վերջինիս հիմնադիր անդամ՝ ՀՀ ակտիվորեն մասնակցեց դրա շրջանակում ինտեգրացիայի խորացմանը և արդյունքում, մեր կարծիքով, չախալվեց: Հայաստանի Հանրապետությունը, հաշվի առնելով անվտանգության ապահովման գործում ռազմաքաղաքական շահերի ընդհանրությունը, ելնելով այս ուղղությամբ ջանքերի կենտրոնացման անհրաժեշտությունից, իր գործունեությունը Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության հետ ներդաշնակեցնում է ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունների մշակման, տարածաշրջանային սկզբունքով անվտանգության համակարգի զարգացման, ռազմատեխնիկական համագործակցության, ռազմական ենթակառուցվածքների զարգացման, զինվորական կադրերի պատրաստման, ռազմական գիտության, միջազգային ահաբեկչության և այլ միջազգային հանցագործությունների դեմ պայքարի հարցերում:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝ 19.02.2015

1 Stu'/www.mil.am/1298098598

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տե՛ս [www.interfax.ru/politics/](http://www.interfax.ru/politics/):
2. Տե՛ս Վ. Մանուկյան, «ԱՊՀ ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական դիրսներում (1995-2001թթ)», էջ 92:
3. Տե՛ս [www.nationalidea.am/publications.php?id=4514&l=A](http://www.nationalidea.am/publications.php?id=4514&l=A):
4. Տե՛ս [www.odkb.gov.ru/start/indexpage.htm](http://www.odkb.gov.ru/start/indexpage.htm):
5. Տե՛ս [www.mfa.am/hy/international-organisations/CSTO/](http://www.mfa.am/hy/international-organisations/CSTO/):
6. Տե՛ս [www.odkb.gov.ru/start/index.htm](http://www.odkb.gov.ru/start/index.htm):

### ОДКБ В КОНТЕКСТЕ ВОЕННОЙ ПОЛИТИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: ПОСЛЕДСТВИЯ ДЛЯ ВОЕННЫХ РЕФОРМ (2005-2010)

**ГОР ТОВМАСЯН**

*Ереванский государственный университет,  
кафедра международных отношений и дипломатии, аспирант*

Последователи политического реализма утверждают, что государство остается одним из главных участников международных отношений, а сила – наиболее важным фактором для реализации национальных интересов. По нашему мнению, суть этой силы заключается в соотношении и в точной оценке национальных и международных возможностей. Если гарантией военной безопасности РА являются боеспособные вооруженные силы, вооруженные современным оружием, высоким уровнем боевой готовности и боевым духом, способные защитить национальный суверенитет и территориальную целостность государства, готовые к предотвращению и нейтрализации угроз военной безопасности, то применение международных возможностей для военной безопасности проявляется в сферах системы безопасности, особенно в рамках ОДКБ, с непрерывным развитием и установлением союзнических и партнерских отношений.

Дата представления статьи: 19.02.2015

### CSTO IN THE CONTEXT OF ARMENIA'S MILITARY SECURITY POLICY: IMPLICATIONS FOR DEFENCE REFORMS (2005-2010)

**GOR TOVMASYAN**

*Yerevan State University, Chair of International Relations and Diplomacy, Postgraduate student*

The political realism trend followers claim that the state continues to be the main subject of international relations, and the strength for the most important factor for the realization of national interests. In our opinion, the essence of this force is the ratio and accurate assessment of national and international opportunities

If the guarantee of military security of the Republic of Armenia are combat-ready armed forces with modern armament, who have a high level of combat readiness and morale capable of defending national sovereignty and territorial integrity of the state, ready to prevent and neutralize threats to military security, then the application of international opportunities for military security is expressed within the security systems, especially within the framework of CSTO the continuous development and the establishment of partnerships and alliances.

Article submission date: 19.02.2015

**ՄԻԳՐԱՅԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐՆ ՈՒ ԱՆՎՏԱՆ ԳԱՅԻՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ**

Հոդվածում ձևակերպվում է «միգրացիա» հասկացությունը, որը դիտարկվում է որպես անվտանգային խնդիր: Անդրադարձ է կատարվում միգրացիոն գործընթացներին Հարավային Կովկաս տարածաշրջանում (ՀՀ, ԼՂՀ, Ադրբեջան, Վրաստան, Աբխազիա, Հարավային Օսեթիա)՝ բացահայտելով հիմնական անվտանգային խնդիրները: Խնդրառարկայի ուսումնասիրության համար կարևորվել են աշխարհագրական և ազգագրական ուսումնասիրությունների փորձն ու աշխատանքայինները: Հետազոտվող թեմայի ուսումնասիրման համար կիրառվել են պատմահամեմատական, սոցիոլոգիական մեթոդները:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** միգրացիոն գործընթացներ, անվտանգային խնդիր, Հարավային Կովկաս, էթնոժողովրդագրություն:

Միգրացիան անհատների կամ սոցիալական խմբերի մշտական բնակավայրի փոփոխության գործընթաց է, որն արտահայտվում է նույն երկրի այլ տարածաշրջան, այլ աշխարհագրական շրջան կամ այլ երկիր տեղափոխման ձևով: «Միգրացիա» տերմինը ծագել է լատիներեն «migrato» բառից, որը նշանակում է տեղափոխություն, վերաբնակեցում կամ պարզապես՝ գաղթ: Միգրացիա են համարվում նաև գյուղից քաղաք և քաղաքից գյուղ տեղաշարժերը[1]: Միգրացիայի որոշման հիմնական պատճառները կապված են զբաղվածության հիմնախնդիրների հետ՝ ներառյալ թե՛ ընդհանուր առմամբ աշխատատեղերի պակասը, թե՛ արժանապատիվ

ապրուստ ապահովող, բավարար աշխատավարձով աշխատատեղերի պակասը, թե՛ որոշակի մասնագիտությունների հատուկ աշխատատեղերի բացակայությունը: Գոյություն ունի միգրացիայի երկու տեսակ՝ ներքին միգրացիա և արտաքին միգրացիա:

Ներքին միգրացիան երկրների ներսում ընթացող տեղաշարժերն են: Ներքին միգրացիան նույնպես աճում է մարդիկ տեղափոխվում են՝ արձագանքելով ռեսուրսների, ծառայությունների ու հնարավորությունների անհավասարությանը կամ փախուստի դիմում բռնությունից կամ բնականաղետների հետևանքով:

Արտաքին միգրացիա՝ արտագաղթ և ներգաղթ: Հայաստանի բնակչության մինչ անցումային շրջանի արտաքին միգրացիոն տեղաշարժերում հստակորեն առանձնանում էին 2 տիպի հոսք.

- մշտական արտաքին միգրացիա կամ մշտական բնակչության վայրի վերջնական փոխմանը միտված է միգրացիոն-էիմիգրացիոն տեղաշարժեր,
- սեզոնային արտաքին աշխատանքային միգրացիա կամ գարուն-աշուն ժամանակահատվածում աշխատելու նպատակով ձոձանակային բնույթի՝ մեկնում-վերադարձ տեղաշարժեր [2]:

Այժմ որպես համաաշխարհային հիմնահարց դիտվում է աշխատանքային միգրացիան, որը կապված է տվյալ երկրի զարգացման հետ, որն իր ազդեցությունն ունի աշխարհի զգալի մասի վրա: Այն միջազգային տարածաշրջանային և ազգային քաղաքականություն-



ների օրակարգում առաջնահերթ տեղ է զբաղեցնում: Իրենց աշխատանքով աշխատավոր միգրանտները նպաստում են նպատակակետ երկրների աճին և զարգացմանը:

**Կարևոր համաշխարհային հիմնահարցը** էթնիկական միգրացիան է, ուր առաջին պլան է մղվում էթնիկական գործոնը: Էթնիկական միգրացիաների պատճառներն են ազգային անհավասարությունը, խտրականությունը, ազգային շահագործումն ու հալածանքները, կրոնական հալածանքները, ազգային բախումները, պատերազմները և այլն [2]:

- Գոյություն ունի նաև այսպես կոչված սպառնալիքների միգրացիա: Դա կապված է ապօրինի միգրանտների հետ: Համաձայն Միգրացիայի միջազգային կազմակերպության գնահատումների՝ ամեն տարի 2,5-ից 4 մլն մարդ արտագաղթում է առանց համապատասխան թույլտվության: Ապօրինի միգրանտներին հաճախ վտանգավոր ճամփորդություն է սպասվում. նրանք ենթարկվում են շահագործման ու ընկնում են քրեական ցանցերի ձեռքը, հանդիպում են դժվարին աշխատանքային և կենցաղային պայմանների և անհանդուրժողականության, երբ ոտք են դնում օտար հող: Խոցելի կարգավիճակի պատճառով նրանք հաճախ վախենում են օգնություն փնտրելուց, երբ իրենց իրավունքները ոտնահարվում են: Միգրանտների անօրինական սահմանահատումները սահմանող համակցված բաղադրատարրերը հետևյալն են՝ անօրինական միգրացիա. տեղի ունի տեղաշարժ պետական սահմաններով, անօրինական մուտք կամ կեցություն օտար երկրում.

- միջնորդներ. հանձն են առնում օժանդակել անօրինական միգրացիայի նյութական շահի դիմաց,

- կամավոր միգրանտ. անձը օգնություն է խնդրում՝ մուտք գործելու մեկ այլ պետություն, ուր ինքը կեցության իրավունք չունի [1,2]

- Այսպիսով՝ կարող ենք ասել, որ մեծածավալ արտաքին տեղաշարժը (հատկապես երկրից հեռացումը) տվյալ երկրի հասարակական կյանքի ու զարգացման ընթացքի վրա թողնում է մի շարք բացասական հետևանքներ՝

- Սոցիալ-ժողովրդագրական բնույթի հետևանքներ. էմիգրացիոն հոսքերում աշխատանքային և վերարտադրողական տարիքի տղամարդկանց թվի ակնհայտ գերակշռությունը հանգեցնում է մասնավորապես ծնելիության ցուցանիշի կտրուկ նվազեցմանը: Ամուսնությունների թիվը նվազում է, իսկ ամուսնալուծությունների թիվը՝ մեծանում:

- Սոցիալ-տնտեսական և քաղաքական հետևանքներ. երկրում լայն տարածում է ստանում աղքատությունը: Բնակչության առավել ակտիվ և բարձր որակավարում ունեցող զանգվածի հեռացումը դանդաղեցնում է հասարակության զարգացման ընթացքը: Բնակչության դանդաղ վերարտադրությունը չի ապահովում երկրի բանակի համալրման համար անհրաժեշտ մարդկանց թվաքանակը: Սա կարող է խաթարել երկրի պաշտպանության հիմքերը և սպառնալ անվտանգությանը:

Չի ապահովվում կրթական համակարգի համար անհրաժեշտ երեխաների թիվը: Չի ապահովվում նաև ապրանքների և ծառայությունների իսպառողների որոշակի զանգված:

- Բարոյահոգեբանական բնույթի հետևանքներ. բնակչության շրջանում խորանում է երկիրը լքելու, երկրի ապագայի նկատմամբ անտարբերության, երկրի զարգացման համար, անարդարությունների ու օրինախախտումների դեմ չպայքարելու, բացասական երևույթներին հարմարվելու մտածելակերպը՝ նպաստելով մարդու իրավունքների ու ազատությունների ոտնահարումների շատացմանը:

Միգրացիաների լայն թափը դժվարացնում է նաև այն երկրների սոցիալ-տնտեսական վիճակը, ուր հայտնվում են

միգրանտները: Հաճախ այդ երկրներում ուժեղանում են ազգայնամոլությունը և անհանդուրժողականությունը: Դրանք առաջացնում են նոր բախումներ: Հետևաբար այդ երկրների իշխանությունները սկսում են հրապարակել օրենքներ, որով սահմանափակվում են միգրանտների ներթափանցումը իրենց երկիր [3]:

Հարավային Կովկասում միգրացիան սկսվեց ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: Միգրացիան հատկապես ուժգնացավ անցյալ դարի 90-ական թվականներին, քանի այդ ժամանակ սկսվեցին ԽՍՀՄ-ում բնակչության տեղաշարժերը: Մինչ այդ սլավոնալեզու բնակչությունն էր տեղափոխվում նախկին ԽՍՀՄ-ի հանրապետությունների տարածք՝ միտում ունենալով մեծացնելու նրանց տեսակարար կշիռը, մասնավորապես՝ Հարավային Կովկասում: Ազատ շուկայական հարաբերությունների զարգացման և ազատ տեղաշարժվելու իրավունք ձեռք բերելու շնորհիվ հարևան երկրների (Իրան, Թուրքիա) ձեռներեցները, գործարարները սկսեցին թափանցել Անդրկովկաս, իսկ տարածաշրջանի գործարարները, նաև բնակչության մի ստվար խավ գնում էին հիշյալ երկրներ՝ աշխատանք գտնելու ու էժան ապրանք, «ապրուստի միջոց» բերելու նպատակով: 1980-ական թվականներին ԽՍՀՄ-ի տարածքում ծագեցին ու զարգացան էթնոքաղաքական կոնֆլիկտներ, որոնց հետևանքով դանդաղորեն, բայց ժողովրդագրական իրադրությունը, արմատապես և արագ փոխվում էր ու մեծանում: Ադրբեջանի կազմում գտնվող Նախիջևանի Ինքնավար Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի մարզի հայ բնակչության թիվը համեմատած 1920-ական թվականների, խիստ նվազել էր, իսկ ադրբեջանցիներինը՝ մեծացել: Ղարաբաղյան շարժման արդյունքում Լեռնային Ղարաբաղը վերածվեց միատարր էթնիկ հայկական տարածքի: Ինչ վերաբերում է Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը,

ապա Ադրբեջանի հայերի նկատմամբ կիրառած էթնիկ գտման հետևանքով ամբողջությամբ հայաթափվեց:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո պատկերը փոխվեց, էթնիկ փոքրամասնությունների տոկոսային հարաբերությունը նվազեց, փոփոխվեց կրոնական, մշակութային էթնիկական կազմը: Օրինակ՝ Ադրբեջանում, որտեղ խոշոր էթնիկ խմբեր էին հայերն ու ռուսները, այժմ, նրանց փոխարեն այդ երկրում մեծացել է մուսուլմանների, լեզգի և թալիշ էթնիկ խմբերի թվաքանակը:[4]

Ի տարբերություն տարածաշրջանի մյուս պետությունների՝ Հայաստանում ազգային, կրոնական խտրականություն գոյություն չունի, բոլոր ազգերը ՀՀ քաղաքացիներ են, հավասար իրավական, քաղաքական, սոցիալ-տնտեսական իրավունքների և պարտականությունների շրջանակում: 20-րդ դարի վերջին տասնամյակում ՀՀ-ում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական վերափոխությունները զգալի ազդեցություն են թողել ժողովրդագրական պատկերի վրա: Մասնավորապես նվազեց բնակչության թիվը, որոշակի փոփոխություններ կրեց բնակչության էթնիկական, լեզվական, կրոնական կազմը և այլն: Նման փոփոխությունների արդյունքում ներկայումս ՀՀ ժողովրդագրական բնութագիրն զգալի առանձնահատկություններ ունի խորհրդային ժամանակաշրջանի համեմատությամբ: Կարևոր առանձնահատկություններից է արտագաղթը, որի համար խթանող գործոն են երկրի տնտեսական անկումը, էներգետիկ ձգնաժամը, գործազրկությունը և ցածր աշխատավարձը, ծանր հարկային քաղաքականությունը, ցածր կենսական պայմանները, օլիգարխիկ-ավտորիտար ռեժիմը, ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղում ու ՀՀ-ի սահմանամերձ շրջաններում, տնտեսական շրջափակումը, բնական աղետները: Մարդիկ ստիպված բռնում են միգրա-

ցիայի ճանապարհը [5]:

Եթե համեմատենք ՀՀ-ն և Արցախը հարևան Վրաստանի հետ, ապա այնտեղ կհանդիպենք մի քանի արտահայտիչ էթնոմշակութային գոնաների, որտեղ տեղի են ունենում վեր ընկալազրկված էթնիկ տեղաշարժերի թույլ պրոցեսներ: Դրան հակառակ, Աբխազիայում, պատմական Ջավաքում, Հարավային Օսեթիայում, Աջարիայում, որոնք առանձնանում են էթնոմշակութային առանձնահատկություններով, վերջին շրջանում վրացական իշխանությունների կողմից ենթարկվում են շեշտված հակաազգային քաղաքականության. սահմանափակվում են ազգային դպրոցների, լեզվի, ազգային մշակույթի տարածումը, հայ առաքելական եկեղեցու իրավունքները: Դա պատճառ է դառնում այդ երկրներից ազգային բնիկ տարրի արտագաղթման: Հայաստանում և Վրաստանում կատարվող էթնիկ տեղաշարժերը խիստ տարբերվում են Ադրբեջանում: Այսօր Ադրբեջանում բնակչության ավելի քան 97%-ը մուսուլման ադրբեջանցիներն են: Դա էթնիկ գտման արդյունք է, որը կատարվում է բռնի, բիրտ ձևերով, ջարդերով, ցեղասպանությամբ: Ադրբեջանում սկսված հակախորհրդային պայքարը կոնկրետ ուղղված չէր Կենտրոնի դեմ, այլ դա տեղի ունեցավ որպես «հակահայկական, հակադարաբաղյան» անջատողականության դեմ պայքար: Հետագայում «ադրբեջանական ինքնորոշման շարժումը դարձավ իրականում անջատողական և այդ առումով նաև հակախորհրդային, քանի որ սրում էր հայադրբեջանական հակամարտությունը Լեռնային Ղարաբաղի համար» [5,6]:

Ադրբեջանում ևս առկա է արտագաղթի երևույթ: Տասը տարիների ընթացքում Ադրբեջանից արտագաղթել են 600 հազար այլազգի՝ չհաշված ավելի քան 400 հազարանոց հայությունը: Ադրբեջանից գաղթում են ազգային փոքրամասնությունները, քանի որ այն

դարձել է սպանդի, ոճրագործության, ցեղասպանության տարածք, ուր տիրում է թշնամանքն ու ատելությունը:

Վերջին մի քանի տարիներին Ադրբեջանից հեռացողների թիվը փոքրինչ նվազել է՝ կապված Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Եվրոպայի միգրացիոն օրենսդրության խստացման հետ: Այնուամենայնիվ, ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի ազգային անվտանգությանը սպառնալիք է շարունակող տարեկան 10 հազար աշխատունակ բնակչի արտագաղթը: Վտանգավոր են նաև Բաքվում բնակվող, բայց գրանցում չունեցող ներգաղթյալները:

Ադրբեջանի ղեկավարությունը ձգտում է բոլոր էթնիկ խմբերին միավորել մեկ՝ ադրբեջանցի էթնոսի մեջ: Ադրբեջանում ապրում են լեզգիներ, թաթեր, թալիշներ, քրդեր և այլ էթնիկ խմբեր: Քաղաքական գործունեությունն ամենուր նույնն է՝ հետապնդում ազգային հողի վրա, անանցանելի խոչընդոտներ մայրենի տարածման ճանապարհին, ազգային մտավորականության վերացում, մասսայական ադրբեջանացում:

Մինչդեռ հարևան Հայաստանում և Վրաստանում ավելանում էր քրդերի թիվը: Վրաստանում բնակվում են նաև ռուսներ, ադրբեջանցիներ, աբխազներ, աջարներ, հույներ, օսեր, քրդեր և այլ ազգեր: Բարդ միգրացիոն շարժերը և ժողովրդագրական փոփոխությունները օսերին և վրացիներին կանգնեցրել են բախումային ուղու վրա՝ նրանց միջև առաջացնելով տարբեր աստիճանի լարվածություններ: Դրա ամենավերջին դրսևորումը Կովկասի ներկա հակամարտությունն է [7]: Օսերը և վրացիները տարբեր լեզուներով են խոսում: Նույնիսկ այն տարածքը, որի համար երկու խմբերը տարածքային պահանջներ են ներկայացնում, այլ անվանում ունի երկու լեզուներում. օսերն այն անվանում են Հարավային Օսիա, իսկ վրացական իշխանություններն այն նախընտրում են անվանել Ցխինվալի: Վրաստանի հակա-

մարտությունում ներգրավված են վրացիների, օսերի և ռուսների տարածքային, տնտեսական, քաղաքական և մշակութային պահանջները: Այդ պահանջների հիմքում ընկած է լեզվով, պատմությամբ, մշակույթով և ազգային կապերով պայմանավորված էթնիկ ինքնությունը: Սակայն էթնիկ ինքնության ծայրահեղ դրսևորումը ազգայնականությունն է, որը մի խմբի էթնիկ պատկերացումները և շահերը գերադասում է մյուս բոլոր խմբերի շահերից: Երկու կողմերն էլ միմյանց էթնիկ գտման մեղադրանքներ են ներկայացնում: Համաձայն Ռուսաստանի «բաժանիր և տիրիր» դասական մարտավարության՝ տարածաշրջանում ստեղծվել է էթնիկ լարվածություն: Այսօր ռուսական գորքերը Հարավային Օսիայում ստանձնել են խաղաղապահի դեր: Իսկ վրացիները նրանց անվանում են զավթիչներ և մտավախություն ունեն, որ Կրեմլը ցանկանում է ոչնչացնել իրենց փխրուն ժողովրդավարությունը:

Պատմական Զավախք նահանգի մոտ 3 հազար քառակուսի կմ տարածքում ապրում է ավելի քան 140 հազար հայ բնակչություն: Տարածաշրջանի հայ բնակչությունը պայքարում է իր էթնոքաղաքական և սոցիալական իրավունքների պաշտպանության համար: Վրաստանի իշխանությունները շարունակում են ռեպրեսիվ գործողությունները Զավախքի հայկական կազմակերպությունների ու ակտիվիստների նկատմամբ: Անկասկած Աբխազիայում և Հարավային Օսիայում վրացական իշխանությունների գործողությունների հաջողության դեպքում, Վրաստանի հարավային շրջանների հայ բնակչության նկատմամբ նույնպես կկիրառվեին խտրականության որոշակի գործողություններ՝ ընդհուպ մինչև էթնիկական գտման դրսևորումները: [7]

Ինչպես տեսնում ենք, Հարավային Կովկասի տարածաշրջանի առանձին հիմնախնդիրների լուծումները կախված են ավելի լայն շրջանների շահե-

րից, որոնք պայմանավորված են նոր աշխարհաքաղաքական իրողություններով: Եթե Ադրբեջանը ազատ է իր գործունեության մեջ՝ թե՛ Արևմուտքի, և թե՛ Ռուսաստանի հետ իր «նավթային քաղաքականությամբ», ապա այսօր Հայաստանի դրությունն ավելի ծանր է, քանի որ Եվրոպան, Ռուսաստանը և հարևան երկրներն ականատեսն են Հայաստանում կատարվող ներքաղաքական պայքարին: Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականությունը խանգարում է կոնֆլիկտների շուտափույթ լուծմանը: Կոնֆլիկտներն առկա են նաև Վրաստանի հետ կապված պատմական Զավախքի հետ: Թուրքիա-Հայաստան վիճելի հարցերը կապ ունեն Արևմտյան Հայաստանի և Ցեղասպանության ճանաչման հետ, Թուրքիայի համար կարևոր է քրդական խնդիրը: Նշված հիմնախնդիրները խանգարում են տարածաշրջանի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու դիվանագիտական նորմալ հարաբերությունների հաստատմանը և ժողովուրդների խաղաղ գոյակցմանը:

Միաժամանակ տարածաշրջանի բոլոր պետությունները ունեն ներքին խնդիրներ՝ տնտեսական ազատության, մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների հետ կապված, կոռուպցիայի, ներքին բիզնեսի զարգացման համար նպաստավոր պայմանների բացակայությունը, արտաքին պարտքերը և այլն: Այս ամենին գումարվել են նաև ԵՄ-ին կամ ՄՄ-ին միանալու կնճռոտ հարցերը: Պարզորոշ կողմնորոշում ունի Վրաստանը դեպի ՆԱՏՕ, ՀՀ-ն արդեն ՄՄ անդամ է: Ցավալի կարող է լինել ՌԴ-ի հետ ցանկացած վեճ Վրաստանի համար: ԱՊՀ-ն արդեն փաստացի դադարել է գոյություն ունենալ, իսկ ՀԱՊԿ-ն գնալով դադարում են կատարել իրենց առջև դրված պարտավորությունները: Անորոշ է նաև Լեռնային Ղարաբաղի հարցը:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝  
17.03.2015

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Մարդկային զարգացման ազգային զեկոյց» 2009, ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիր, Հայաստան
2. <http://mtrcarm.com/74.html#sthash.gXvFcqak.dpuf> <http://mtrcarm.com/74.html#sthash.gXvFcqak.dpuf> –
3. Юдина Т.Н. Миграция: словарь основных терминов: Учеб. пособие. — М.: Издательство РГСУ; Академический Проект, 2007. — 472 с.<http://voluntary.ru/dictionary/949/word/yetnicheskie-migraci>
4. Михаил Калишевский, Парадоксы российской миграционной политики. 2012. <http://www.fergananews.com/articles/7580>
5. Искандарян А., Современные миграции на Кавказе в контексте процессов этнической концентрации. [http://migrocenter.ru/publ/konfer/kavkaz/m\\_kavkaz028.php](http://migrocenter.ru/publ/konfer/kavkaz/m_kavkaz028.php)
6. Արտակ Մարկոսյան, Արտագաղթը և Հայաստանի Հանրապետության բնակչության ժողովրդագրական գործընթացները 1989-2001թթ., 2006թ., [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=2402](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2402)
7. Արա Մուրադյան, Ադրբեջանի ժողովուրդները: <http://www.hayzinvor.am/17160.html>
8. Իգոր Մուրադյան, Զավախքի հիմնախնդիրը և համաշխարհային ուժային կենտրոնների շահերը, «Իրավունք դե ֆակտո», Iragir 31/12/09 <http://www.azadakrum.org/azatagram/articles/fragirarticle31dec09.html>

## МИГРАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ И ВОПРОСЫ БЕЗОПАСНОСТИ ЮЖНОГО КАВКАЗА

### ԳԱԿԱՆՈՒԹՅԱՆ

*Ереванский Государственный Университет, факультет международных отношений, магистерская программа по региональной политике, магистр*

В этой статье понятие миграции определяется как проблема безопасности. Определяется миграционные процессы в регионе Южного Кавказа (Армения, НКР, Грузия, Азербайджан, Абхазия, Южная Осетия), выявлены основные проблемы в области безопасности. Опыт национальных исследований и методов работы имеет важное значение для изучения этой проблемы. Для изучения этой темы были использованы историко-сравнительный и социологические методы.

Дата подачи статья: 25.02.2015

## THE MIGRATION PROCESSES AND SAFETY FROBLEMS IN SOUTH CAUCASUS

### GAYANE MELIKYAN

*YSU The faculty of International Relations, The Regional political magistrate program, Master of Political Science*

In this article the conception of migration is defined, which is considered a safety problem. Migration processes are paid attention in the region of the South Caucasus (RA, NKR, Georgia, Azerbaijan, Abkhazia, South Osetia), discovering the main safety problems.

The experiences of national research and work methods are of importance for the study of this subjects problem. Historical-comparative, sociological methods were used for the study of this theme.

Article submission date: 25.02.2015

**ԱԶԳԱՅԻՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ. ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԱԶԳԻ ՀԱՄԱՐ**

Հողվածում ձևակերպված է «գաղափարախոսություն» հասկացությունը, որը դիտարկվում է որպես արդի համընդհանուր ինտեգրացման գործընթացների անբաժան ատրիբուտ: Բացահայտված է բացասական գործոնների ազդեցությունը ազգային և պետական գաղափարախոսությունների վրա: Հիմնավորվում է ազգային գաղափարախոսության դերը՝ որպես պետական քաղաքականության արդյունավետության պայման և առաջարկվում են համապատասխան ծրագրային քայլեր:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** ազգային գաղափարախոսություն, պետական գաղափարախոսություն, գլոբալացում, քաղաքական գաղափարախոսություն, սոցիալ-ինտեգրացնող սկիզբ, նորմատիվ-արժեքային տարածություն, կոնսոլիդացնող նպատակներ, գլոբալ կոնցեպցիա, մոբիլիզացում:

Գաղափարախոսության, այդ թվում՝ պետական և ազգային գաղափարախոսությունների հիմնախնդիրը կրկին հրատապ է դարձել: Այն ոչ միայն զանազան քննարկումների, վեճերի, այլև քաղաքական կուսակցությունների և ուժերի հետաքրքրության և երբեմն էլ՝ շահարկման առարկա է դարձել: Թե՛ տեսաբանները, թե՛ քաղաքական գործիչները սովորաբար հարկ չեն համարում անդրադառնալ ազգային գաղափարախոսության էությանն ու գործառնական դերակատարության բացահայտմանը, դրանց սահմանմանը: Մինչդեռ առանց

դրա հնարավոր չէ լրջորեն խոսել ազգային գաղափարախոսության մասին, առավել ևս հավակնել դրա կրողի դերակատարությանը: Արդի գլոբալացման և ազգային մշակութային միախառնման պայմաններում ազգային արժեքների, ազգային ինքնության պահպանման և զարգացման հարցը դարձել է գերխնդիր բոլոր փոքր ազգերի, այդ թվում՝ նաև հայության համար, առավել ևս այն դեպքում, երբ հայության սովորական գվածը գտնվում է սփյուռքում: 21-րդ դարի հարափոփոխ գործընթացները բնութագրվում են հասարակական կյանքի բոլոր ոլորտներն ընդգրկող մեծ վերափոխումներով, որոնցում գլոբալացումը և տեղեկատվական ոլորտի անսխաղեպ զարգացումն օբյեկտիվ նախադրյալներ են ստեղծում մարդկության հոգևոր ու նյութական ներուժի ինչպես միավորման, այնպես էլ բաժանման համար[5, էջ 68]: Ազգային գաղափարախոսության պատմական և քաղաքական գործառույթն է համազգային գաղափարների և շահերի շուրջ միավորել, համախմբել սոցիալական բոլոր խավերը, ազգի ֆիզիկական և հոգևոր ներուժը և դրանք ուղղել դեպի ազգային ինքնության պահպանման, ներդաշնակ զարգացման հիմնախնդրի լուծմանը: Ազգային գաղափարախոսությունն անցյալն արժևորող, ներկան իմաստավորող և ապագան ուղենշող, ազգային արժեքներն ու իդեալները ներկայացնող գաղափարների, հայացքների համակարգ է, որի դերը չի կարելի անտեսել

ազգի ինքնաճանաչման, ներդաշնակ զարգացման գործում: Արժեքային դիրքորոշումները և գաղափարները «գաղափարախոսություն» հասկացության մեջ ընդհանրացվել են դեռ 1801 թ. Անտուան Դեսթյույո դե Թրասիի կողմից [1, էջ 3]: Գիտնականների վերաբերմունքը այս շատ արագ տարածված հասկացության վերաբերյալ կրում էր երկակի բնույթ. մի կողմից՝ երևույթները բացատրվում էին՝ ելնելով ելակետային պահից, սկզբնապատճառից (ձշմարիտ գաղափարախոսություն), մյուս կողմից՝ այդ բացատրությունները տրվում էին արդեն կայացած իրադարձություններից հետո՝ դրանք արդարացնելու, մեկնաբանելու միտումով (կեղծ գաղափարախոսություն) [2, էջ 7]: Ազգային առանձին գաղափարների առկայությունը, դրանց մեխանիկական համակցումը հաճախ ներկայացվում են որպես ազգային գաղափարախոսություն, ինչը մեծագույն սխալ է, քանի որ վերջինս համակարգված գաղափարաքաղաքական հայեցակարգ է և ծրագրային ուղղվածություն ունի: Հետևաբար, եթե համազգային խնդիրներն ու շահերը շարունակում են պահպանվել և պաշտպանվել պետության կողմից, ապա այս դեպքում ևս ազգային գաղափարախոսության առկայությունը անհրաժեշտ է դառնում իբրև ազգային կեցության իմաստավորման և հերթական ազգային հիմնախնդիրների ու ծրագրերի հիմնավորման կարևորագույն միջոց: Այս պարագայում ազգային գործոնը կրկին գերիշխող է դառնում, իսկ ազգային գաղափարախոսության մշակումը՝ բախտորոշ: Այսպիսով՝ ազգային հիմքով ձևավորված պետական գաղափարախոսությունը յուրաքանչյուր պետական համակարգի անհրաժեշտ ատրիբուտն է, իսկ դրա ստեղծումը՝ մեր երկրի քաղաքական իշխանության անհետաձգելի խնդիրներից մեկը:

Ազգային-պետական գաղափարախոսությունը որոշելու համար պետք է

հստակ գիտակցել այն փաստը, որ չի կարելի արհեստականորեն գաղափարայնացնել հասարակությանը՝ ելնելով իրավիճակային դատողություններից: Հասարակության վրա մահացած գաղափարախոսական համակարգի բարդումը կհանգեցնի պետականության անկման, լճացման և հետընթաց շարժման: Այդ իսկ պատճառով գաղափարախոսությունը պետք է լինի արդյունավետ, հասարակության և պետության պահանջներին համապատասխան, խորը ներթափանցի մարդկանց գիտակցության մեջ և կառուցվի սեփական, հարազատ հենքի (բազիսի) վրա: Ցանկացած քաղաքական գաղափարախոսություն հիմնվում է ազգային-պետական գաղափարախոսության վրա, որում ժողովուրդն արտահայտում է իր պատմական գոյության իմաստը: Այն չի ստեղծվում արհեստականորեն, այլ բնականոն ձևով բխում է ազգի արժեքներից և մենթալիտետի առանձնահատկություններից, որոնք էլ ենթադրում են նրա ամբողջականությունը և մյուսների կողմից «ձանաչելիությունը» [3, էջ 119]: Հայ ազգի գաղափարախոսությունը պետք է լինի ուժեղ և բարգավաճ հարեճիքի ստեղծումը: Հայ ժողովուրդն ունի հնարավորություն (ունի բազմախորհուրդ պատմություն, սերնդեսերունդ փոխանցվող ավանդույթներ ու սովորույթներ, հարուստ մշակույթ, դեմոկրատական ճանապարհով ընթացող պետություն) իր երջանիկ ապագան կառուցելու համար:

Ազգային-պետական գաղափարախոսությունը ներառում է երեք հիմնական տարր առանց որոնց չի կարող գոյություն ունենալ ազգային պետությունը, և հանուն որոնց պայքարել ենք մեր ողջ պատմության ընթացքում. դրանք են՝ անկախություն, կայունություն և բարեկեցություն: Ազգային-պետական գաղափարախոսությունն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- հանդիսանում է սոցիալ-ինտեգ-

րացնող սկիզբ, որը ստեղծվում է միասնական նորմատիվ-արժեքային տարածություն՝ ազգի կենսագործունեության համար.

- տալիս է առկա հասարակական և քաղաքական կարգի բացատրությունը.

- ձևավորում է «ընդհանուր գործի» կոնսոլիդացնող նպատակները, որոնք բխում են ազգի զարգացման ներքին միտումներից, սակայն դրանց հասնելու միջոցները չպետք է հակասեն հայ հասարակության հոգևոր-բարոյական հիմքերին:

Պետությունն ուժեղ է օրենքներով, ընդհանուր կանոններով, ազգային նպատակներով, զարգացման ստրատեգիայով, որոնք իրենց արտացոլումն են գտնում ազգային-պետական գաղափարախոսության մեջ: Ոչ մի պետական կազմավորում չի կարող գոյատևել առանց հոգևոր-գաղափարախոսական հիմքերի, որոնք նրա ամբողջականության, միասնության հիմքն են և միաժամանակ բովանդակում են ազգի, հասարակության և պետության գոյատևման և կենսագործունեության նպատակաուղղված ծրագիր: Ազգը չի կարող գոյություն ունենալ առանց ամբողջական գաղափարների, արժեքների և նորմերի, որոնք միավորում են ազգի բոլոր անդամներին: Պետությունն առանց գաղափարախոսության նույնն է, ինչ մարդ առանց մտքի. չի կարող զարգանալ, առավել ևս՝ դիմակայել ներքին և արտաքին սպառնալիքներին ու մարտահրավերներին: Եթե պետությունն ազգային է, հետևաբար պատմական տարբեր կոնկրետ փուլերում, ելնելով աշխարհաքաղաքական գործոնների առանձնահատկություններից, ազգային գաղափարախոսության հիմնախնդիրների լուծման համար պետք է պայքարի [4, էջ 40]:

Ազգային-պետական գաղափարախոսությունը գլոբալ միջազգային գործընթացներում մեր երկրի զարգացման

ստրատեգիան է և ազգային շահերի ապահովման գործում հայ ազգի գործողությունների տակտիկան: Այն ուղղված է ձևավորելու՝

- հայ ազգի բազիսային արժեքների համակարգը, որի հիման վրա պետք է կառուցվեն հասարակական համաձայնությունը, հասարակական զարգացման ուղիներն ու հեռանկարը.

- պետական-քաղաքական կառուցվածքի կատարելագործման ուղիների և մեթոդների մասին հասարակական կարծիքի ձևավորումը, ինչպես նաև արդարության, բարեկեցության բարձրացումը, հասարակական կյանքի ընդհանուր զարգացումը.

- մարդու սոցիալական ակտիվության բարձրագույն մակարդակը՝ ուղղված պետության ամրապնդմանն ու զարգացմանը, ուժեղ և ծաղկուն Հայաստանի կառուցումը:

Գաղափարախոսությունը կոչված է մոբիլիզացնելու և միավորելու աշխարհասփյուռ հայությանը, նպաստելու ազգային-պետական գաղափարների հիմքով ազգային միասնությանն ու համախմբվածությանը՝ որպես հայ ազգի զարգացման գլոբալ կոնցեպցիա: Արդի ազգային գաղափարախոսության մշակման մասին կոչերը սուբյեկտիվ բնույթ չեն կրում՝ կապված այս կամ այն կուսակցության, կազմակերպության կամ գործչի ցանկության հետ, այլ բխում են հայ ժողովրդի պատմության արդի փուլի հիմնախնդիրների լուծումը գտնելու անհրաժեշտությունից:

Ազգային գաղափարախոսությունը հիմնվում է հայրենասիրության, ազգային արժեքները հարգելու և պահպանելու, հայրենիքի համար հպարտության զգացողության վրա. այն հայրենասիրության գաղափարախոսություն է, կառուցողական է, որքանով ուղղված է «հզորագույն մոբիլիզացնող սկզբի» ստեղծման և պահպանման վրա:

Քննարկված հարցերը վկայում են այն մասին, որ ազգային գաղափար-



րախոսության խնդիրը (թեև տարբեր անվանումներով, այն ընկած է բոլոր պետությունների քաղաքականության հիմքում) շարունակում է մնալ քաղաքական պրակտիկայի և տեսության կարևոր խնդիրներից մեկը: Անկախ այն բանից, թե որքանով ենք մենք ընկալում և գիտակցում խնդրի կարևորությունը, ինչպիսի տեղ ենք հատկացնում գործնական քաղաքականությունում, այն չի կորցնում իր հրատապությունը:

Խնդրի կարևորության անտեսումը իրականում հանգեցնում է այլազան և օտարածին գաղափարախոսությունների, առանձին սկզբունքների մեխանիկական տեղադրմանը հայ իրականության մեջ, որոնք, անհարիր լինելով ազգի կենսակերպին, ազգային ավանդույթներին և հոգևոր փորձին, փոշիացնում են ազգի նյութական և հոգևոր ներուժը: Մինչդեռ ազգային գաղափարախոսության կարևորագույն առաքելություններից մեկը հենց ազգ-հասարակություն միասնականության, ամբողջականության ապահովումն է, առանց որի մեր պետությունն ի գօրու չէ նպատակասլաց կերպով լուծելու իր առջև ծառայած մարտավարական, առավել ևս՝ ռազմավարական բարդ խնդիրներն ու ծրագրերը: Այս պարագայում առավել կարևոր է ազգային պետության սահմաններից դուրս ազգային և պետական գաղափարների տարածումը:

Ազգի մոբիլիզացման և համախմբման գործում անհրաժեշտ է առանձնացնել նաև ՀՀ սփյուռքի նախա-

րարության դերը, որը 2008 թվականից իր գործունեությունը ուղղում է հայկական սփյուռքում ազգային գաղափարների տարածմանը, ինչպես նաև նպաստում է հայ ինքնության պահպանմանը, հայությանը պետության և միասնության գաղափարի շուրջ համախմբելուն, ուժացման դեմ պայքարին: Վերոնշյալ գործունեությունը, անշուշտ, հիմնված է ազգային գաղափարների, ազգային-պետական գաղափարախոսության վրա: Այդ տեսանկյունից ազգը սեփական պետության շուրջ համախմբելուց բացի՝ արդիական է դարձել աշխարհասփյուռ հայության ներուժի օգտագործումը նաև այլ պետությունների քաղաքական և տնտեսական դաշտերում:

Այսպիսով՝ ծրագրային հստակ ուղղվածություն ունեցող համակարգված գաղափարաքաղաքական հայեցակարգի ձևավորումը, ազգային գաղափարախոսության առանձին տարրերի արդիականացումը և օտարածին գաղափարների ներթափանցման ու մեր իրականության մեջ ներդրման կանխումը ազգային-պետական գաղափարախոսության հզորացման նախապայմաններն են, քանի որ միայն ամուր հենքի վրա կառուցված գաղափարները կարող են գոյատևել արդի գլոբալացվող աշխարհի և ազգային մշակույթների միախառնման պայմաններում:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝  
16.02.2015

## ՊՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Փ. Ենգոյան, «Արդի դարաշրջանի հիմնական գաղափարախոսական հոսանքները», Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2002թ., 105 էջ:
2. Ի. Ս. Բայյան, Ա.Փ.Ենգոյան, «Քաղաքական գաղափարախոսություններ», Երևան, Մխիթար Գոշ, 1996, 48 էջ:
3. Леваш И. Я Культурология, Учеб.пособие для вузов, Минск, ТетраСистемс, 2000, 495стр.
4. Լ. Ա. Խուրշուդյան Հայոց ազգային գաղափարախոսությունը, Երևան, Զանգակ-97, 1999 թ., 282 էջ:
5. Վ. Կ. Աթոյան, Ազգային անվտանգության հիմնախնդիրներ (դասախոսություններ), Երևան, «Տեսնեսագետ» հրատարակչություն, 2014թ., 154 էջ:

## РОЛЬ И ЗНАЧЕНИЕ НАЦИОНАЛЬНО-ГОСУДАРСТВЕННОЙ ИДЕОЛОГИИ: ЕЕ ЗНАЧЕНИЕ ДЛЯ АРМЯНСКОЙ НАЦИИ

**СЕРГЕЙ САРУХАНЯН**

*Министерство диаспоры Республики Армения, специалист первого ранга  
Управления по связям с ближней диаспорой, магистр политологических наук*

В статье дается определение понятия идеология, рассматриваемого в качестве органического дополнения и неотъемлемого атрибута в рамках современных общемировых глобализационных процессов. Раскрывается влияние негативных факторов на национальную и государственную идеологию. Обосновывается роль национальной идеологии как условия развития государственной политики. В заключении предлагаются соответствующие программные шаги.

Дата представления статьи: 16.02.2015

## THE ROLE AND MEANING OF A NATIONAL AND STATE IDEOLOGY: ITS IMPORTANCE FOR THE ARMENIAN NATION

**SERGEY SARUKHANYAN**

*RA Ministry of Diaspora Near Diaspora Relations Department  
First Class Specialist, Master of Political Science*

The article defines the concept of ideology, considered as an organic complement and inherent attribute within the framework of contemporary worldwide globalization processes. Further, the impact of negative factors on the national and state ideology is disclosed. Then, the article substantiates the role of national ideology as a public policy development condition. In conclusion, the author gives proposals containing appropriate program steps.

Article submission date: 16.02.2015

## ԳՈՇԱՐ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

*ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,  
Գիտակրթական միջազգային կենտրոն, քաղաքագիտության բաժին  
քաղաքագիտության մագիստրոսի որակավորում*

### ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1997-2014 Թ.Թ. ՄԱԶՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Ժամանակագրական առումով, երբ էլ փորձենք ուսումնասիրել հայ-ռուսական հարաբերությունները, ուղղակիորեն այն պետք է դիտարկենք Հարավային Կովկասում ՌԴ-ի վարած քաղաքականության ու տարածաշրջանում վերջինիս ունեցած ընդհանրական շահերի համատեքստում: ՌԴ-ի հարավկովկասյան նպատակը տարածաշրջանում եղել և մնում է մեկը՝ պահպանել և ուժեղացնել տարածաշրջանային երկրների Ռուսաստանից կախվածությունը և կառուցվածքային փոխկապվածությունը, ինչը իր փաստական դրսևորումն ու արտահայտությունն է գտնում հենց հայ-ռուսական հարաբերություններում:

Անհերքելի փաստ է, որ Հայաստանն այսօր մեծապես կախված է Ռուսաստանից, այն պարզ պատճառով, որ առանցքային ենթակառուցվածքային համակարգերի մի զգալի մասը, հատկապես՝ էներգետիկ հատվածը, պատկանում է ռուսաստանյան ընկերություններին:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ**՝ հայ-ռուսական հարաբերություններ, մաքսային միություն, ռազմավարական համագործակցություն:

Հայաստանի Հանրապետությունը անկախություն ձեռք բերելուց հետո հայտնվեց բարդ իրավիճակում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ երկիրը փաստացի մասնակցում էր Լեռնային Ղարաբաղի հետ կապված հակամարտությանը, որով պայմանավորված ենթարկվեց տրանսպորտային ու տնտեսական շրջափակման Ադրբեյջանի

կողմից, իսկ ինչպես հայտնի է պատմությունից, ցանկացած պետության թուլությունը որոշ հարևանների մոտ ցանկություն է առաջացնում օգտվելու դրանից: Այդ իրավիճակում անկախ Հայաստանի ղեկավարությունը, ուղեգիծ ընդունելով ազգային զինված ուժեր ստեղծելու և ինքնիշխանության երաշխիքի ապահովման գործընթացը, հետևողականորեն զարգացրեց և ներկայումս լայն թափով իրականացնում է Ռուսաստանի հետ ռազմական համագործակցություն ինչպես բազմակողմ (օրինակ՝ ՀԱՊԿ-ի շրջանակներում), այնպես երկկողմ ձևաչափերով:

Չի կարելի թերագնահատել նաև Ռուսաստանի համար կայուն և բարեկամական տրամադրվածությամբ Հայաստանի դաշնակցային նշանակությունը, քանի որ վերջինս իր աշխարհագրական դիրքով գտնվում է Եվրոպայի և Ասիայի սահմանագծի վրա, Հյուսիս-Հարավ և Արևելք-Արևմուտք երթուղիների՝ պատմականորեն ձևավորված խաչուղիներում: Ռուսաստանի Դաշնության հետ ՀՀ հարաբերությունները կրում են ռազմավարական բնույթ և կարևորվում են Հայաստանի անվտանգության համար ունեցած իրենց անկյունաքարային դերով և նշանակությամբ: Հայ-ռուսական հարաբերությունները բազմատարր են [1]:

Դրանք ընդգրկում են երկու պետությունների և երկու ժողովուրդների միջև համագործակցության բոլոր հնարավոր ոլորտները և համակարգվում են շուրջ 160 երկկողմ միջազգային պայ-

մանագրերով: Նշանակալի է, որ համագործակցության այդ լայն շրջանակում բոլոր բաղկացուցիչները բարձր մակարդակի վրա են, որոնք առանցքային դեր են կատարում պետության անվտանգության ապահովման համար: Բավական է նշել ռազմական, առևտրատնտեսական, էներգետիկ, գիտական և այլ ոլորտները, հատկապես՝ վերջին շրջանում ռուսական կապիտալի ներհոսքը Հայաստան:

Համագործակցության անդամ-պետությունները, որոնց թվում Ռուսաստանն ու Հայաստանը, ռազմական ոլորտում դժվարին ճանապարհ անցան միացյալ պաշտպանական տարածքի և միացյալ զինված ուժերի ստեղծման հրապուրիչ գաղափարներից մինչև ազգային բանակների ստեղծումն ու կազմավորումը, տարբեր ձևաչափերով փոխշահավետ ռազմական համագործակցությունը, որում առանձնահատուկ նշանակություն ունի Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ): Ներկայումս կարելի է համոզված ասել, որ ՀԱՊԿ-ն ընդհանուր առմամբ ոչ միայն հաջողությամբ լուծեց իր առջև դրված խնդիրը, այլև կուտակեց այն ռազմավարական կարողությունը, որն ինքնին անհրաժեշտ է՝ ներքին և արտաքին անվտանգության միջավայրերում տեղի ունեցող փոփոխություններին համապատասխան հայ-ռուսական ռազմավարական փոխհարաբերությունների զարգացման համար:

Այսօր Հայաստանի և Ռուսաստանի միջև ռազմավարական համագործակցության առաջնային բաղկացուցիչ մասն է կազմում ռազմական և ազգային և ազգային անվտանգության ապահովման, սպառնալիքների չեզոքացման, ռազմական օգնության ցուցաբերման և համատեղ ինքնապաշտպանական իրավունքի իրացման մեխանիզմները՝ սահմանված Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի և Հայաստանի Հանրապետության միջև բարեկամության,

համագործակցության և փոխադարձ օգնության՝ համաձայն 1997 թվականի օգոստոսի 29-ին կնքված պայմանագրի դրույթներով: Փաստորեն՝ հայ-ռուսական ռազմավարական գործակցությունը Հայաստանի Հանրապետության ազգային, և առաջին հերթին ռազմական անվտանգության ապահովման համակարգի բաղկացուցիչ մասն է [2]:

1997-2013 թվականներին ՀՀ-ի և ՌԴ-ի միջև կնքվել են քաղաքական, ռազմաքաղաքական, տնտեսական և հումանիտար ոլորտների հարաբերությունները կարգավորող ավելի քան 200 միջպետական, միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրեր ու համաձայնագրեր:

1997 թվականը նշանավորվում է նրանով, որ Ռուսաստանի և Հայաստանի միջև երկկողմ հարաբերությունները թևակոխեցին բարձր մակարդակի անցման փուլ, որն ամրապնդվեց 1997թ. օգոստոսի 29-ին կնքված Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագրով, որը ուժի մեջ է մտել 1998թ. նոյեմբերին: Հայ-Ռուսական հարաբերությունների մասին մինչև այսօր խոսելիս հիմանականում հղում է արվում 1997 թվականի վերոնշյալ պայմանագրին և, իհարկե, «2000 թվականի սեպտեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 21 դար ուղղված դաշնակցային համագործակցության» մասին հռչակագիրը ընդունվեց:

Հայաստանում հաջողությամբ իրագործվում են խոշոր ներդրումային նախագծեր՝ ռուսական կապիտալի մասնակցությամբ, այդ թվում՝ վառելիքաէներգետիկ, տրանսպորտային, բանկային, հեռահաղորդակցության և այլ ոլորտներում: Այս ուղղությամբ ձեռք բերվող պայմանավորվածությունների իրագործմանն աջակցելու արդյունավետ մեխանիզմ է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև

տնտեսական համագործակցության միջ-կառավարական հանձնաժողովը: ՀՀ և ՌԴ տնտեսական համագործակցության իրավապայմանագրային բազայի կարևորագույն հիմքերն են հանդիսացել 2001թ. սեպտեմբերի 15-ի «Մինչև 2010թ. ժամանակահատվածի համար ՀՀ և ՌԴ միջև երկարատև տնտեսական համագործակցության մասին» պայմանագիրը: 2011թ. հոկտեմբերին ստորագրվել է ԱՊՀ մասնակից պետությունների միջև ազատ առևտրի գոտու ստեղծման համաձայնագիրը: Ռուս-հայկական հաբերությունները նշանավորվեցին հենց 2000 թվականին՝ որպես նոր հազարամյակի թևակոխման փուլ: Հաշվի առնելով, որ միջպետական ինտերգրումը հանդիս-նում է տնտեսական զարգացման կարևորագույն տարրերից մեկը, ինչը բա-ռացի նշված է նաև պայմանագրում, կողմերը իրագործում են «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև մինչև 2010 թվականի երկարաժամկետ տնտեսական համագործակցության» ծրագիրը:

2010թ. օգոստոսի 20-ին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ստորագրված պայմանագրի գործողության ժամկետը 102-րդ ՌԴԿ գործառնության մասին երկարաձգվել է մինչև 2044թ.: Բացի այդ, պայմանագրի լրացուցիչ արձանագրությամբ նախատեսվում է ընդլայնել կայանի աշխարհագրական և ռազմավարական պատասխանատվության ոլորտը: Արձանագրության դրույթների համաձայն՝ ՌԴԿ-ի վրա, բացի Ռուսաստանի Դաշնության շահերի պաշտպանությունից, դրվում են Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման խնդիրները՝ Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի հետ համատեղ:

1997 թվականի օգոստոսի 29-ին կնքված, ՀՀ և ՌԴ միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագրով ֆիքսվել

էր, որ ՀՀ ԱՊՀ կազմի մեջ չմտնող պետությունների հետ սահմանների պահպանությունը կիրականացվի Բարձր պայմանավորվող կողմերի համատեղ ջանքերով՝ իրենց միջև համապատասխան պայմանագրերի հիման վրա՝ ելնելով իրենց սեփական անվտանգության և ԱՊՀ հավաքական անվտանգության շահերից: 2010 թվականի օգոստոսի 20-ին ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևի Հայաստան կատարած այցի շրջանակներում ստորագրված արձանագրությամբ՝ ՀՀ-ում ռուսական ռազմականը պատասխանատվություն ստանձնեց՝ ՀՀ ԶՈՒ-ի հետ համատեղ իրականացնելու Հայաստանի բոլոր սահմանների, այդ թվում՝ հայ-ադրբեջանական սահմանի պահպանության խնդիրը: Նոր փոփոխությամբ՝ ոչ միայն երկարաձգվեց Հայաստանում ռուսական ռազմականի տեղակայումը, այլև ընդլայնվեց դրա աշխարհագրական և ռազմավարական պատասխանատվությունը: Այսինքն՝ մինչ 2010 թվականը, խոսք էր գնում միայն ռուսական ռազմաբազայի կողմի միայն նախկին ԽՍՀՄ արտաքին սահմանի՝ Թուրքիայի ու Իրանի սահմանային հատվածում իրականացվող խնդիրների մասին, ապա այժմ արդեն, փաստորեն, հայ-ադրբեջանական սահմանը ևս:

2001 թվականին տեղի ունեցավ ՌԴ նախագահ Պուտինի առաջին այցը Հայաստան, որի արդյունքը եղավ այն, որ մենկարկեց այսպես կոչված «Գույք պարտքի դիմաց» ծրագիրը, որով Հայաստանյան հինգ ձեռնարկություններ՝ Հրազդանի ջերմաէլեկտրակայանը, «Մարս» գործարանը, Երևանի նյութաբանության, Երևանի մաթեմատիկական մեքենաների, Երևանի կառավարման ավտոմատացված համակարգերի գիտահետազոտական ինստիտուտները անցան Ռուսաստանին, բայց փոխարենը՝ Հայաստանն ամբողջությամբ մարում է Ռուսաստանին ունեցած պետական պարտքը՝ շուրջ 100 մլն դոլար:

Հաջորդը 2005 թվականի մարտի 24-ին ՌԴ նախագահը այցելեց Հայաստան, որպեսզի մարտի 25-ին մասնակցի Հայաստանում Ռուսաստանի տարվա կապակցությամբ հանդիսությանը: Հաջորդը 2008 թվականին արդեն նախագահ Մեդվեդևի այցն էր: Այցի պատճառները մեծ հաշվով կարելի է հասկանալ՝ ինչի համար էր այն տրամաբանական կապի մեջ է նույն տարին տեղի ունեցած օգոստոսյան հայտնի դեպքերի հետ:

2002-2003թթ. սկսած Անդրկովկասում և ընդհանուր առմամբ ԱՊՀ տարածքում նկատվում է ռուսաստանյան կապիտալի թռիչքաձև ակտիվացում: Բնորոշ է, որ Հայաստանում և Վրաստանում խոշոր կապիտալի լայնածավալ ներդրման միտումն ակնհայտ պետական «չափում» ունի: Ուշադրություն է գրավում տնտեսական և էներգետիկ էքսպանսիայի ռազմավարական ուղիվածությունը. Ռուսաստանը ձեռք է բերում ենթակառուցվածքային և արդյունաբերական կարևոր ռեսուրսատար օբյեկտներ: Անդրկովկասյան երկրների տնտեսական ոլորտում ՌԴ ակտիվ գործունեության արդյունքն է Հայաստանում և Վրաստանում բավական ծանրակշիռ ակտիվների ձեռքբերումը:

2004 թվականին Հայաստանի և Ռուսաստանի միջև տրանսպորտի բնագավառում համագործակցության սզբունքների և փոխհարաբերությունների մասին, որով դյուրացվում է բեռների և ուղևորների հաղորդակցության իրականացումը, ինչպես նաև իրենց տարածքներով տարանցիկ փոխադրումը երրորդ երկրներ:

2002-2004թթ. ընթացքում փաստորեն ռուսաստանյան խոշոր վերագալիս ընկերությունների վերահսկողության տակ անցավ Հայաստանի էներգետիկ համակարգը («ЕЭС России» ՌԲԸ-ին է պատկանում Հայաստանի ամբողջ էլեկտրացանցը. բաժնետիրական ընկերությունը վերահսկում է Հայկական ԱԷԿ-ի ֆինանսական հոսքերը), «Ինտեր

ՌԱՕ»-ն 2003թ. ի վեր իրականացնում է ՀԱԷԿ-ի կառավարումը), Հրազդանի ՊՇԷԿ-ի բլոկները՝ «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՁԷԿ) և ԲԲԸ (հիմնադրվել է ՌԴ դաշնային գույքի կառավարման դաշնային գործակալության 2004թ. սեպտեմբերի 1-ի No291 կարգադրության համապատասխան): «ՀրազՁԷԿ» ԲԲԸ ստեղծվել է Հայաստանի պետական պարտքի մարման դիմաց Ռուսաստանի Դաշնությանը, որպես սեփականություն փոխանցված Հրազդանի ջերմային էլեկտրակայանի գույքային համալիրը ընկերության կանոնադրական կապիտալին ներդնելու միջոցով: Այսօր ընկերության միակ բաժնետերն է հանդիսանում Ռուսաստանի Դաշնությունը՝ ի դեմս ՌԴ դաշնային գույքի կառավարման գործակալության: Ընկերության բաժնետերերի ռեեստրը վարում է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան:

Ռուսաստանյան «Газпром» ընկերությանն է պատկանում Հայաստանի գազաբաշխիչ ցանցի վերահսկիչ փաթեթը (Ջանքերի միավորում) «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ն ստեղծվել է 1997 թվականին: Մինչ դեկտեմբեր ընկերության բաժնետոմսերի 80%-ը պատկանում էր «Գազպրոմ» ԲԲԸ-ին, 20%-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ի դեմս ՀՀ էներգետիկայի նախարարության):

Ի դեպ, Դեկտեմբերի 2-ին ամբողջական ծավալով շահագործման հանձնվեց Հրազդանի ՁԷԿ-ի 5-րդ էներգաբլոկը, որը 2012 թվականի հունվարից գտնվում էր փորձարարական-արդյունաբերական շահագործման փուլում (նշենք որ 2006 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության և «Գազպրոմ» ԲԲԸ-ի միջև կնքված համաձայնագրի շրջանակում «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ն բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման միջոցով ձեռք է բերել «Հրազդանի ՁԷԿ»-ի 5-րդ էներգաբլոկի գույքը՝ շինարարությունն ավարտելու և արդի-

ականացնելու պարտավորություններով): Թողարկման մեկնարկի արարողությանը մասնակցել են «Գազպրոմ» ԲԲԸ Վարչության նախագահ Ալեքսեյ Միլլերը և «Հայֆուսգազարդ» ՓԲԸ Վարչության նախագահ գլխավոր տնօրեն Վարդան Հարությունյանը, բայց միաժամանակ ստորագրվելու է համապատասխան փաստաթուղթ, համաձայն որի «Գազպրոմ»-ը ձեռք է բերում «Հայֆուսգազարդ»-ի բաժնետոմսերի 20 տոկոսը և դառնում է ընկերության լիակատար բաժնետեր: Այսպիսով՝ «Հայֆուսգազարդ»-ը ներգրավվում է «Գազպրոմ»-ի դուստր ձեռնարկությունների համերաշխ ընտանիք: Սահմանվելու է նոր գին, և Հայաստան տարեկան մինչև 2, 5 մլրդ խ.մ մատակարարվող գազի այդ գինը փոխկապակցած է լինելու Ռուսաստանում գործող ներքին գների հետ:

Բավական ակտիվ են նաև ռուսաստանյան այլ կորպորացիաներ ու բանկեր: Այսպես՝ «Русал»-ը ձեռք է բերել տարածաշրջանում այլումին արտադրող ամենախոշոր՝ «Арменал» ձեռնարկությունը, «Внешторгбанк»-ը՝ «Հայխնայբանկի» արգելափակիչ փաթեթը [3]:

«Сибирские «Авиаинии»-ն՝ Հայաստանի խոշորագույն ավիափոխադրող «Հայկական ավիաուղիները»: Եվրասիայում քիմիական արդյունաբերության ամենախոշոր ձեռնարկություններից մեկը՝ «Նախիտը» ևս ռուսաստանյան ֆինանսա-արդյունաբերական խմբի սեփականությունն է դառնում: Այսպես՝ դեռ 2000թ. մարտին ստորագրվեց ռուս-հայկական արձանագրությունը, որի համաձայն՝ Ռուսաստանն իրավունք ստացավ 25 տարի ժամկետով պահպանել ռազմական ներկայությունը ՀՀ տարածքում: 2000թ. սեպտեմբերի 27-ին երկու երկրների պաշտպանության նախարարները ստորագրեցին ռազմական ոլորտում համագործակցության 3 համաձայնագիր. ռազմական գործողությունների համատեղ ծրագրման, ՀՀ-ում

ՌԴ ռազմական ներկայությունը կարգավորող կանոնների և միմյանց օդային տարածքը ռազմաօդային ուժերի կողմից փոխադարձ օգտագործման մասին փաստաթղթեր:

2002թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ և ՌԴ պաշտպանության նախարարներն ստորագրեցին միջպետական համաձայնագիր ռազմական ենթակառուցվածքի օբյեկտների համատեղ օգտագործման և տեղեկատվության փոխանակման մասին: Մինչ այդ՝ 1999թ. մարտին, Ռուսաստանն ու Հայաստանը ստորագրել էին «ՌԴ և ՀՀ հակաօդային պաշտպանության համատեղ գործողությունների կանոնները»: Ծրագրված միջոցառումների ավարտից հետո Հայաստանի տարածքում տեղակայված ՀՕՊ և օդային հետախուզության միջոցները միավորվեցին հակաօդային պաշտպանության միասնական համակարգի մեջ (կենտրոնը՝ Մոսկվայում): 2001թ. ապրիլին երկու երկրների ռազմական և ռազմատեխնիկական համագործակցությունն աշխուժացավ ԶՈւ միավորված համակարգի ստեղծման մասին որոշմամբ: Ենթադրվում է, որ շուտով Հայաստանի տարածքում կսկսի գործել ՀԱՊԿ (անդրկովկասյան ուղղություն) արագ արձագանքման կոլեկտիվ ուժերի գորախումբը, որի կազմում կընդգրկվեն 1500 զինծառայող:

2002թ. հոկտեմբերին «հին» ՀԱՊ հիմքի վրա ստեղծվեց ՀԱՊԿ-ը (ՌԴ, Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Տաջիկստան, Ղրղըզստան). կազմակերպություն, որի պաշտոնական անվանման մեջ ԱՊՀ մասին չի հիշատակվում: Նոր կազմակերպության Կանոնադրության ամենագլխավոր տարբերակիչ գիծը, ՆԱՏՕ Կանոնադրության 5-րդ հոդվածի համանմանությամբ, այն կետն է, ըստ որի՝ կազմակերպության վեց անդամներից որևէ մեկի դեմ զինված ագրեսիան մեքենայաբար դիտարկվում է իբրև հարձակում մնացած բոլորի վրա: Ընդ որում՝ միջազգային հարցերի վե-

րաբերյալ ՀԱՊԿ շրջանակներում ընդունվող որոշումները պարտադիր են բոլոր մասնակիցների համար: Ի տարբերություն «ագրեսորի դիմակայությունը կազմակերպելու համար բազմակողմանի խորհրդատվությունների անհրաժեշտության» մասին ՀԱՊ նախկին դրույթների՝ անվտանգության փոխադարձ երաշխիքների ձևավորումն ուղղվեց անվտանգության գործող տարածաշրջանային կառուցվածքի արդյունավետության բարձրացմանը: Վերջին տարիների ընթացքում ընդունվել են ՀԱՊԿ գործունեության արդյունավետության բարձրացման մի շարք փաստաթղթեր՝ որոշումների ընդունման արարողակարգի, զինուժի համատեղ կիրառման, օպերատիվ համատեղման, տեղեկատվության փոխանակման, ռազմատեխնիկական համագործակցության և այլնի վերաբերյալ:

Ռուսաստանյան էներգակապիտալի բուն հոսքը Հայաստան շարունակվում է: 2005թ. հունիսին «ЕЭС России» ՌԲԸ դուստր ընկերությունը \$73 մլն-ով Midland Resources Holding-ից ձեռք բերեց «Հայաստանի էլցանցերի» կառավարման և շահույթի ստացման իրավունքը: Սեպտեմբերի վերջին Հայաստանի կառավարությունը հավանություն տվեց ընկերության արդեն ֆորմալ անցմանը Interenergo B.V. ընկերության հավատարմագրային կառավարման ներքո (պայմանագիրը կնքվեց 99 տարով)՝ «Интер PAO «ЕЭС»-ի դուստր կառույցին: Ձեռք բերելով էլեկտրաբաշխիչ ցանցերը՝ ռուսաստանյան ընկերությունը, փաստորեն, դարձավ Հայաստանում էլեկտրաէներգիայի գլխավոր արտադրողն (ընդհանուր թողարկման 80%-ը. Սևան-Հրազդանի ՀԷԿ, Հրազդանի ԶԷԿ, Հայկական ԱԷԿ) ու բաշխողը:

Ռուսաստանի մյուս էներգահսկան՝ «Газпром»-ը, նույնպես շարունակում է ակտիվ աշխատանքը հանրապետության էներգահատվածում: Հայտնի է, որ 2007թ. հունվարի 1-ին նախատեսվող

Իրան-Հայաստան գազատարի գործարկումը կարող է իրական մրցակից դառնալ մեկ այլ՝ դեպի եվրոպական շուկա կողմնորոշված նախագծի՝ «Газпром»-ի՝ «Голубой поток»-ին, որով ռուսական գազը մատակարարվում է Թուրքիային և այնուհետև՝ Եվրոպային:

Հենց այս հեռանկարն էլ նկատի ունենալով՝ 2005թ. փետրվարին «Газпром»-ի վարչության փոխնախագահ Ա.Ռյազանովը հայտարարեց. «Եթե մենք չմասնակցենք Իրան-Հայաստան գազատարի անցկացմանը, ոչ ոք չգիտի, թե ուր կգնա այդ գազը» [4]: Հայաստանի ղեկավարությունն, իր հերթին, երկրի գլխավոր գազամատակարարի կողմից կառուցել և նորոգել է հայ-իրանական գազատարի Քաջարան-Արարատ հատվածը: Ավելի քան 130 միլիոն դոլար արժողությամբ ներդրումային այս ծրագիրն իրականացրեց հայ-ռուսական համատեղ «ՀայՌուսգազարդ» ընկերությունը՝ սկսելով այն 2007թ.: Ծրագրի ֆինանսավորումն իրականացվել է «Գազպրոմ» ԲԲԸ օգտին «ՀայՌուսգազարդ» ընկերության բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման միջոցների հաշվին: Հիշեցնենք, որ ՀՀ կառավարությունը 2004թ. նախաձեռնել էր Իրան-Հայաստան գազատարի կառուցումը, որի նպատակն էր ընդլայնել երկիր բնական գազի մատակարարման ռեսուրսային բազան, ստեղծել տեխնոլոգիական երկրորդ մուտքային գիծը:

ՌԴ նախագահ Պուտինի այցի արդյունքում Ռուսաստանի և Հայաստանի միջև ստորագրվեց 12 փաստաթուղթ՝ քաղաքական, տնտեսական և ռազմական համագործակցության, միջուկային անվտանգության, էներգետիկայի, կրթության և զբոսաշրջության հարցերի վերաբերյալ: Թերևս հուշագրավներից էր այն, որ կողմերի միջև ստորագրվեց 2014-2018թթ. Հայաստանի Հանրապետություն բնական գազ ներմուծելու մասին «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության և «Գազպրոմ էքսպորտ» բաց բաժնետիրական ընկե-



րության միջև գործարքը, «Օյլ Տեխնո ԼՊ» ընկերության և «Ռոսնեֆտ Գլոբալ Թրեյդ Ս.Ա.» ընկերության միջև համատեղ ձեռնարկություն ստեղծելու մասին համաձայնագիրը և բաժնետիրական համաձայնագիրը [5]:

2011թ. հոկտեմբերի 18 –ին Սանկ Պետերբուրգում ստորագրվել է ԱՊՀ մասնակից պետությունների միջև ազատ առևտրի գոտու ստեղծման համաձայնագիրը: 2012թ. հոկտեմբերին ընդունվում է «Մինչև 2020 թվականը ՀՀ և ՌԴ միջև երկարատև տնտեսական համագործակցության ծրագիրը»:

2013 թվականը նշանավորվեց նաև ՀՀ նախագահի՝ ՌԴ կատարած աշխատանքային այցով, որի ժամանակ ՀՀ նախագահը հայտարարությամբ հանդես եկավ՝ ՀՀ Մաքսային միությանն անդամակցելու վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ 1997–2013 թվականներին Ռուսաստանի և Հայաստանի միջև ապրանքաշրջանառության ծավալները զգալիորեն աճել են, 2000 թվականին ներմուծման ծավալը կազմում էր 445 մլն. ամերիկյան դոլար 2012 այն դարձել է 687 մլն. դոլար, արտահանման ծավալները 2000 թվականին կազմում էր 137 մլ. դոլար 2012–ին այն դարձել է 222 մլն. դոլար:

2014թ. մայիսի 29–ին ք. Ատանայում ՌԴ–ի.ԲՀ–ի, ՂՀ–ի կողմից ստորագրվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիր:

Պայմանագիրը բաղկացած է 4 մասից՝ Եվրասիական տնտեսական միության հիմնադրումը, Մաքսային միությունը, Միասնական տնտեսական տարածքը, Անցումային և եզրափակիչ դրույթներ [6]:

Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ապահովվում են ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի շարժի ազատությունը, համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականության իրականացումը հետևյալ

ուղորտներում՝

- մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորում
- մաքսային կարգավորում
- տեխնիկական կարգավորում
- սանիտարական, անասնաբուժական–սանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ
- ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրում և բաշխում
- երրորդ երկրների նկատմամբ առևտրային ռեժիմի սահմանում
- արտաքին և փոխադարձ առևտրի վիճակագրություն
- մակրոտնտեսական քաղաքականություն
- մրցակցային քաղաքականություն
- արդյունաբերական և գյուղատնտեսական լրավճարներ
- էներգետիկ քաղաքականություն
- բնական մենաշնորհներ
- պետական և համայնքային գնումներ
- ծառայությունների և ներդրումների փոխադարձ առևտուր
- տրանսպորտ և փոխադրումներ
- արժույթային քաղաքականություն
- մտավոր սեփականություն
- աշխատանքային միգրացիա
- ֆինանսական շուկաներ

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը 2014թ. հոկտեմբերի 10–ին Մինսկում ստորագրել է «Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միության ստեղծման մասին 2014թ. մայիսի 29–ի պայմանագրին միանալու մասին» պայմանագիրը, որը պետք է վավերացվի նշված պայմանագիրը ստորագրած բոլոր 4 պետությունների կողմից:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝  
11.01.2015

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. <http://www.mfa.am/hy/country-by-country/ru/>
2. Alfred Dupont Chandler, Strategy and Structure: Chapters in the History of the Industrial Enterprise, Mit Pr.1969
3. Грдзелян Р., Либеральная империя: Россия меняет тактику борьбы за влияние в Закавказье, АрмИнфо, 16.09.2005.
4. <http://www.president.am/hy/press-release/item/2013/12/02/President-Serzh-Sargsyan-meeting-with-the-President-Vladimir-Putin/>
6. Малышева Д.Б., Конфликты в развивающемся мире России и СНГ, М., 1997, էջ 31:
7. <http://www.mineconomy.am/arm/556/gortsaruyt.html>

### АРМЯНО-РУССКИЕ ОТНОШЕНИЯ В 1997-2014 ГГ.: ТАМОЖЕННЫЙ СОЮЗ

#### ԳՕԱՐ ԵԳԻԱԶԱՐՅԱՆ

*Национальная Академия наук РА, Международный научно-образовательный центр,  
магистр политологии*

В каких бы хронологических рамках ни рассматривались армяно-русские отношения, они должны анализироваться в контексте политики России на Южном Кавказе и ее общих интересов в регионе.

Южнокавказская цель была и остается той же – поддерживать и укреплять структурную взаимосвязь и зависимость региональных стран от России, что выражается и находит свое фактическое проявление именно в армяно-русских отношениях.

Дата представления статьи: 11.01.2015

### ARMENIAN-RUSSIAN RELATIONS IN 1997-2014: THE CUSTOMS UNION

#### GOHAR YEGHIAZARYAN

*International Scientific-Educational Center of the National Academy of Sciences,  
Master of Political Science*

In whatever chronological framework the Armenian-Russian relations are analyzed, these relations should be observed in the context of the policy run by the Russian Federation in the South Caucasus and its common interests in the region.

The objective of the Russian Federation in South Caucasus has always been and still remains the same – to maintain and strengthen structural relationship and dependence of regional countries from Russia, which is factually reflected and expressed in Armenian-Russian relations. The main time period selected is 1997–2014, i.e. before and after joining the Customs Union in 2015.

Article submission date: 11.01.2015

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ  
ԸՄԲՈՒՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ**

Ջ. Ռոուլսի արդարության ազատական հայեցակարգի հիմքում ընկած է ազնվության սկզբունքը, սակայն այն քննարկվում է արդարության պայմանագրային մոդելի համատեքստում: Պայմանագրի, կամ, որ նույնն է, փոխհամաձայնության մասնակիցները գործնական խորհրդատվական շփումների միջոցով հանգում են արդարության երկու սկզբունքների ձևակերպմանն ու ճանաչմանը: Առաջինը հավասար բաշխման սկզբունքն է և դրա տարածումը մարդկանց հավասար իրավունքների և ազատությունների վրա, իսկ երկրորդը՝ հավասար հնարավորությունների և չափավոր անհավասարության կամ տարբերակման սկզբունքը: Այդ երկու սկզբունքները կազմում են Ջ.Ռոուլսի արդարության հայեցակարգի մեթոդաբանության բովանդակությունը:

**Հանգուցային բռեր և արտահայտություններ՝** սոցիալական արդարություն, ազատական և սոցիալ-դեմոկրատական ըմբռնումներ, համեմատական վերլուծություն:

Սոցիալական արդարության սկզբունքները մեզ ներկայանում են ավարտուն և ձևակերպված տեսքով: Նախ՝ ազատության սկզբունքը նշանակում է, որ բոլոր մարդիկ օժտված են հավասար իրավունքներով՝ հավասարապես օգտվելու հիմնական ազատությունների համակարգից: Երկրորդ՝ առկա է տարբերակման սկզբունքը, որը պահանջում է, որ սոցիալական և տնտեսական անհավասարությունը կարգավորվի այնպես, որ՝

ա) առավել նվազ հաջողակները կարողանան ակնկալել առավելագույն օգուտները.

բ) պաշտոնները և հասարակակն դիրքերը բոլորի համար բաց լինեն, այսինքն՝ ազնվորեն պահպանվի հավասար հնարավորությունների սկզբունքը: «Բոլոր սոցիալական արժեքները, - նշում է Ռոուլսը, - ազատությունը և բարենպաստ հնարավորությունները, եկամուտները և հարստությունը, ինքնահարգանքի սոցիալական հիմքերը՝ այդ ամենը պետք է հավասար բաշխվի, բացի այն դեպքերից, երբ այդ արժեքներից ցանկացած մեկի կամ բոլորի անհավասար բաշխումը յուրաքանչյուրին տալիս է առավելություն»<sup>2</sup>: Ելնելով այս պատկերացումից կամ ըմբռնումից՝ դժվար չէ հասկանալ, թե, ըստ Ռոուլսի, որն է անարդարությունը. դա այնպիսի անհավասարություն է՝ իրական և այժմեական տեսքով, որը ոչ մեկին առավելություն չի տալիս<sup>3</sup>:

Այստեղ ակներև է Ռոուլսի հայեցակարգային ըմբռնման նշանակությունը՝ ճշգրտել և կոնկրետացնել «ընդհանուր» ըմբռնման դրույթները: Սակայն դրանցում ոչինչ չի ասվում այն մասին, թե ինչպես պետք է վարվել բարիքների տարբեր տեսակների հետ, որոնք բաշխվում են հասարակական տարբեր ինստիտուտների կողմից: Չէ՞ որ, մի կողմից՝ բաշխման ենթակա են այն-

1 Տե՛ս Քոլզ Ջ. Теория справедливости. - Новосибирск: изд-во Новосибирского университета, 1995, էջ 54:  
2 Տե՛ս նույն տեղում, էջ 41:  
3 Տե՛ս նույն տեղում:

պիսի բարիքներ, ինչպիսին են ազատությունն ու անձնավորության ինքնահարգանքը, որոնք կարելի է դասել քաղաքական արժեքների թվին, իսկ մյուս կոմից՝ հնարավորությունները և եկամուտները, որոնք իրենցից ներկայացնում են տնտեսական արժեքներ: Եվ քանի որ այդ բարիքների բնույթը միատեսակ չէ, ծագում է հարց՝ «դրանցից որո՞նք կարելի է ձանաչել առավել կարևոր»: Այլ խոսքերով՝ առաջանում է այդ արժեքների առաջնահերթության հիմնախնդիրը: Հետևաբար, արդարության սկզբունքների միջև, որոնք կարգավորում են տարատեսակ բարիքների և արժեքների բաշխումը, անհրաժեշտ է սահմանել պատշաճ հավասարակշռություն: Այդ հարցը նվազ չափով է շոշափվում Ռոուլսի աշխատություններում: Ռոուլսը բավարարվում է ընդհանուր բնույթի, ինչ-որ իմաստով, վերացական պնդումներով, մասնավորապես՝ անհատները բարձրագույն բարիք են համարում իրենց հիմնարար նպատակներն ու արժեքները՝ դրանք ազատ ձևակերպելու և վերանայելու հնարավորությունը, այսինքն՝ բարոյական ինքնավարությունը<sup>1</sup>: Այստեղ ևս ծագում է հարց՝ տնտեսական և սոցիալ-քաղաքական պրակտիկայում հնարավո՞ր են արդյոք վերոնշյալ սկզբունքների իրականացման կարգի խախտումներ: Ըստ Ռոուլսի՝ դրանք հնարավոր են միայն մի դեպքում, եթե պահանջվում է սահմանափակել ազատությունը՝ հանուն ուրիշ ազատությունների, կամ եթե տվյալ հասարակության մեջ իրավունքները երաշխավորված են անբավարար կերպով: Այդ կապակցությամբ, Ա.Ալեկսեևան նկատում է՝ «... ազատությունը չի կարող ապահովվել այնքան ժամանակ, մինչև որ հասարակությունը չհասնի ժողովրդավարության և տնտեսական բարգավաճման որոշակի մակարդակի ... երբ այն ար-

դեն երաշխավորված է, ոչ մի անկում չի կարող հանգեցնել նրա վերացմանը: Հետադարձ ընթացք գոյություն չունի»<sup>2</sup>:

Ռոուլսը բազմիցս կրկնում է, որ քաղաքական արդարության բնույթը հիմնված է անհատական ազատության և քաղաքական ու քաղաքացիական հավասարության բացարձակ արժեքի ձանաչման վրա: Այս խոսքերի մեջ երևակվում են արդարության առաջնության կանտյան մոտիվները, նրա գերակայությունը ցանկացած սոցիալական նպատակների և արժեքների նկատմամբ: Այդ իսկ պատճառով ինստիտուտները որքան էլ արդյունավետ կառուցված լինեն, պետք է լուծարվեն կամ վերափոխվեն, եթե չեն բավարարում արդարության հայեցակարգի պահանջները<sup>3</sup>:

Միաժամանակ, Ռոուլսը հնարավոր է համարում միասնական հայեցակարգային սխեմայի շրջանակներում ձևական իրավունքները և տնտեսական արդյունավետության պահանջը միավորելը նյութական բարեկեցության ամենաբարձր նվազագույնը ստանալու յուրաքանչյուրի իրավունքի հետ: Ըստ ամերիկյան փիլիսոփայի՝ միայն այն հասարակությունը, որ իր քաղաքացիներին կարող է երաշխավորել այդ հիմնարար իրավունքը, կարող է համարվել արդար: Ընդամին՝ պետության քաղաքացիները հանդես են գալիս որպես ռացիոնալ էգոիստներ, որոնք կենտրոնացած են սեփական շահերի և նպատակների վրա: Եվ քանի որ շահերի մրցակցությունը պարտադիր է, անհրաժեշտ է մուծել ինչ-որ ընթացակարգ, որի դեպքում մարդը, որ օժտված է օրինական հավակնություններով, համաձայն կլինի արդար ինստիտուտների և պրակտիկայի հաստատման հետ: Հա-

2 Алексеева Т.А. Современные политические теории. – М.: Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2000, էջ 142-143.

3 Снѹ Роулз Дж. Теория справедливости. – Новосибирск: изд-во Новосибирского университета, 1995:

1 Տե՛ս նույն տեղում՝ էջ 53-54:

սարակության ռեալ ինստիտուտների նկատմամբ արդարության սկզբունքների կիրառումը՝ համաձայնության, պայմանագրի առարկա է: Կնքելով հասարակական պայմանագիր՝ մարդկանց խմբերը պետք է իրար միջև մեկընդմիշտ լուծեն, թե ինչն է արդարությունը, իսկ ինչը՝ անարդարությունը:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում արդարության՝ թե՛ ազատության և թե՛ բարեկեցության առումով, պրակտիկ իրագործման ըմբռնումը Ռոուլսի կողմից: Ըստ Ռոուլսի՝ դրա հիմքում պետք է լինի հասարակական և քաղաքական այնպիսի համակարգի կառուցումը, որին նա տվել է «սեփականության տիրապետման ժողովրդավարություն» անվանումը: Այդ համակարգի կազմակերպման սկզբունքները դիտարկվում են բավական հարևանցիորեն և ամենաընդհանուր ձևով, սակայն պարզ է, որ նպատակն է՝ «ժողովրդական ռեժիմի հաստատումը, որտեղ հողը և կապիտալը պատկանում են նշանակալի թվով մարդկանց, բայց ոչ հավասարապես»<sup>1</sup>: Ընդսմին՝ «հասարակության մեջ չկա այնպիսի բաժանում, որ նրա համեմատաբար ոչ մեծաքանակ խավին հնարավորություն տա վերահսկելու արտադրական ռեսուրսների մեծ մասը»<sup>2</sup>: Ըստ Ռոուլսի՝ սեփականության ապակենտրոնացումն անհրաժեշտ է, մի կողմից՝ հասարակական ազատության և հավասար հնարավորությունների համար նյութական նախադրյալներ ստեղծելու, իսկ մյուս կողմից՝ շուկայի գործառնության էթիկայես չարդարացված հետևանքները վերացնելու նպատակով: Ռոուլսի նկարագրած սոցիալական համակարգը կապիտալիզմը չէ, այլ ավելի շուտ կապիտալիզմի և սոցիալիզմի ինչ-որ սիմբիոզը (համակեցություն), կամ, հնարավոր է, ազատական սոցիալիզմը: Ինքը՝

Ռոուլսը, իր տեսական համակարգը կոշտ կերպով չի կապակցում այս կամ այն քաղաքական վարչակարգի հետ, գտնելով, որ այն համատեղելի է տարբեր տեսակի վարչակարգերի, ներառյալ և սոցիալիստականի հետ<sup>3</sup>:

Ջ.Ռոուլսի ազատական հայեցակարգի տեսական թերություններից մեկը բարոյականության փոխարինումն է ռացիոնալությամբ: Ռոուլսն ուղղակիորեն նշում է, որ «արդարության՝ որպես ազնվության» հայեցակարգի մեջ անհատներն ըմբռնվում են որպես «միմյանց նկատմամբ շահագրգռվածություն չունեցող», իսկ, ըստ էության, իրար հանդեպ անտարբեր մարդիկ, և որ «արդարությունը՝ որպես փոխհամաձայնության արդյունք, ձեռք է բերվում ոչ թե բարոյական զգացումների, այլ ընթացակարգերի միջոցով, որոնք համապատասխանում են օբյեկտիվության պահանջներին»<sup>4</sup>: Այս տեսակետից, հասարակությունն ըմբռնվում է որպես «օտարների հավաքատեղի», որոնց համար միակ նշանակալի արժեքը սեփական շահն է: Սակայն եթե դա այդպես է, ապա իսկապես, կարևոր են ոչ թե զգացումները, այլ հենց ընթացակարգերը, ինչը հասարակական դաշինքը դարձնում է ծայրաստիճան անկայուն: Եթե բարոյականությունն ապահովվում է ոչ թե զգացումներով, այլ ընթացակարգերով (ավելի ճշգրիտ, իրավական ընթացակարգերով), ապա հասարակությունը պահպանելու միակ եղանակը հանդիսանում է այդ ընթացակարգերի անխախտելիության հաստատումը: Դա կանխորոշում է ազատականների պահպանողական դիրքավորումը՝ սոցիալական ինստիտուտների և պրակտիկաների նկատմամբ «status quo»-ի պահպանման հարցերում: Տեղին է Ու.Կիմլիկայի կշտամբանքը՝ հասցեագրված ազա-

1 Տե՛ս նույն տեղում՝ էջ 172:

2 Տե՛ս նույն տեղում:

3 Տե՛ս նույն տեղում:

4 Տե՛ս նույն տեղում, էջ 27-28

տական մտածողներին՝ «ազատականության մեջ նրանց ինստիտուցիոնալ հայացքները ետ են մնում տեսականից»<sup>1</sup>: Այս հետևությունը վերաբերում է ինչպես Ռոուլսին, այնպես էլ նրա հետևորդներին: Ռոուլսն, ինչպես նշում է Կիմլիկան, չնայած բաշխման արդարության վերաբերյալ իր ողջ տեսական պայթոսին, «մեզ ոչինչ չի ասում այն մասին, թե մեր հասարակության մեջ ինչպես կարելի է հակազդել անարդարությանը, և, մանավանդ, ոչինչ չի ասում այն մասին, որ գոյություն ունի լուրջ անարդարություն, որին հարկավոր է հակազդել»<sup>2</sup>:

Արդարության ազատական հայեցակարգի տեսական և գործնական անկատարելությունը, նույնիսկ իր չափավոր տարբերակով, որը ներկայացված է Ռոուլսի մոդելով, մեզ ստիպում է անդրադառնալ մեկ այլ տեսության, մեկ այլ խմբի, որտեղ նախապատվությունը տրվում է ոչ թե ազատությանը, այլ բարիքին՝ իր դասական մեկնաբանությանը՝ որպես առաքինություն:

Ժամանակակից քաղաքական դիսկուրսի գլխավոր առանձնահատկությունը հանդիսանում է շրջադարձը անհատապաշտական արժեքներից դեպի հանրային և հանրային արժեքները: Արևմտյան գրականության մեջ ծագել է «կոմունիտարիզմ» եզրույթը (community – հանրություն):

Գլխավոր պրոբլեմը, որի յուրօրինակ պատասխանն է կոմունիտարիզմը, հանդիսանում է Արևմուտքում ժամանակակից ազատական ժողովրդավարության խորը ճգնաժամը: Դրա դրսևորումները տեսանելի են ազատական-ժողովրդավարական հասարակություններում՝ քաղաքացիական մշակույթի թուլացման, անհատապաշտական արժեքների համեմատությամբ

քաղաքացիական (քաղաքական) արժեքների նշանակության նվազման միտումների մեջ: Այդ գործընթացի արտաքին արտահայտություններն են դարձել հասարակական կյանքի աճող բյուրոկրատացումն ու կենտրոնացումը, մարդկային զանգվածների օտարվածությունը քաղաքականությունից (քաղաքական ապատիա), խորացող սոցիալական շերտավորումը (արևմտյան հասարակության մերիտոկրատացումը), միջին դասակարգի ձգնաժամը<sup>3</sup>:

Արդարությունը որպես քաղաքական փիլիսոփայության և էթիկայի հիմնախնդիր արծարծվել է նաև մի շարք հետխորհրդային փիլիսոփաների աշխատանքներում: Դրան անցնելով՝ նախապես նշենք, որ այդ հիմնախնդրին անդրադարձել են նաև որոշ խորհրդային փիլիսոփաները՝ արդարության ժամանակակից բուրժուական հայեցակարգերի գաղափարախոսական քննադատության դիրքերից<sup>4</sup>:

Այստեղ, նախքան բուն Ռոուլսի հայեցակարգի քննադատությանն անցնելը, անհրաժեշտ ենք համարում հիշատակել հայտնի ռուս փիլիսոփա Տ.Ա.Ալեքսեևայի անունը: Հենց նա է սկզբնավորել Ջ.Ռոուլսի արդարության տեսության, ինչպես նաև ամերիկյան քաղաքական փիլիսոփայության մեջ Ռոուլսի հայացքների հայտնի քննադատների հայեցակարգերի փիլիսոփայական վերլուծության հետխորհրդային ավանդույթը<sup>5</sup>:

3 Տե՛ս Лэш К. Восстание элит и предательство демократии. – М.: Логос, Прогресс, 2002, 224 էջ:

4 Տե՛ս Гринберг Л.Г., Новиков А.И. Критика современных буржуазных концепций справедливости. – Л.: Наука, 1977 – 162с.; Мальцев Г.В. Буржуазный эгалитаризм. Эволюция представлений о социальном равенстве. – М.: Мысль, 1984 – 285с.:

5 Տե՛ս Алексеева Т.А. Справедливость: морально-политическая философия Джона Роулза. – М.: Наука, 1992 – 112с.; Алексеева Т.А. Джона Роулз и его теория справедливости. – Вопросы философии. – 1994, № 10, с.26-37; Алексеева Т.А. Справедливость как политическая концепция: очерк современных западных дискуссий. – М.: МОНФ, 2001 – 241 с.:

1 Տե՛ս Кимлика У. Либеральное равенство. – В сб.: Современный либерализм (под ред.Л.Б.Макиевой). – М., 1997, էջ 183:

2 Տե՛ս նույն տեղում՝ էջ 187:

«Ռոուլսագիտության» ավանդույթը շարունակել են ռուս փիլիսոփաներ Բ.Ն.Կաշնիկովը, Ն.Վ.Պեչերսկայան, Ռ.Կ.Շամիրևան և Բ.Լ. Մակենան<sup>1</sup>:

Արդիականացման և գլոբալացման գործընթացների հետ կապված սոցիալական ու քաղաքական արդարության ասպեկտներն ուսումնասիրվել են ռուս փիլիսոփաներ Վ.Գ.Ֆեդոտովայի, Ա.Գ.Միլիվչենկոյի, Ն.Ն.Զարուբինայի, Ա.Յու.Զուդինի, Ա.Վ.Կիվայի և ուրիշների աշխատանքներում<sup>2</sup>:

Ժամանակակից հետազոտությունները հաստատում են, որ արդարության ազատական ըմբռնմանը գալիս է փոխարինելու հասարակական բարօրության և ազատության սկզբունքների օրգանական միավորման կամ դրանց համադրության գաղափարը: Դրա ջերմեանդ պաշտպաններից են Չիկագոյի

համալսարանի էթիկայի և իրավունքի ֆակուլտետի պրոֆեսոր Մարթա Նասբաունը և հնդիկ փիլիսոփա և տնտեսագետ, նոբելյան մրցանակի դափնեկիր (1988թ.) Ամարտի Սենը: Այդ գաղափարը ոչ միայն ավելի համահունչ է արդարության սոցիալ-դեմոկրատական մոդելին, այլև համապատասխանում է հետխորհրդային հասարակություններում սոցիալական անվտանգության, օտարման աստիճանական հաղթահարման կամ մեղմացման սոցիալական ռազմավարության հրամայական պահանջներին: Այդօրինակ գաղափարը, կամ, որ նույնն է, արդարության հիմնախնդրի լուծման նկատմամբ «չափավոր» մոտեցումը սեղմ բնութագրել է Ա.Սենը. «Ի՞նչն է մեզ հետաքրքրում անհատի գործունեությունը որպես հասարակության անդամի և տնտեսական, սոցիալական և քաղաքական գործողությունների մասնակցի (շուկայում նրա մասնակցությունից մինչև, ուղղակի կամ միջնորդավորված ներգրավվածությունը քաղաքական և այլ ոլորտներում՝ անհատական կամ համատեղ գործունեության մեջ)»<sup>3</sup> Բնութագրելով «ազատությունը որպես զարգացում» իր հայեցակարգը՝ Ա.Սենը արդարացիորեն ընդգծում է, որ ընդհանուր բարօրության ձգտումը ենթադրում է մարդկային հանրությունների համատեղ գործունեություն: Եվ որ այդ ձգտումն անիրագործելի է հասարակությունից դուրս, քանի որ առանձին մարդու համար հոգևոր և ֆիզիկական ուժերը բավարար չեն հռչակված նպատակի կենսագործման համար: Եվ որ սոցիալական զարգացման նպատակների ու միջոցների հիմքում ընկած է ազատության գաղափարը, քանի որ հնարավորությունների առկայության դեպքում յուրաքանչյուր մարդ հանդես է գալիս որպես իր ճակատագրի ակտիվ կեր-

1 Sten Kашников Б.Н. Либеральный утилитаризм и его критика в политической философии Дж.Роулза. – Общественные науки и современность. – 2003, № 2 – с.84-95; Печерская Н.В. Современный дискурс справедливости: Джон Роулз или Майкл Уолзер? – Общественные науки и современность. – 2001, № 2 – с.77-88; Шамилева Р.К. Модели справедливости в современной либеральной теории Запада. – М.: Макс Пресс, 2004, 260с.; Макеева Л.Б. Дискуссия между “либералами” и “коммунитаристами” в социальной философии и этике. – В сб.: История философии: Запад-Россия-Восток (книга четвертая: Философия XX века). – М.: “Греко-латинский кабинет” Ю.А.Шичалина, 1999. – с.425-427.

2 Федотова В.Г. Модернизация “другой” Европы. – М.: ИФРАН, 1997 – 255с.; Федотова В.Г. Третий путь. – Свободная мысль. – 2002, № 2, с.47-63; Федотова В.Г. Когда нет протестантской этики. – Вопросы философии. – 2001, № 10, с.27-44; Модернизация и глобализация: образы России в XXI веке (Отв.ред. В.Г.Федотова). – М.: 2002 – 208с.; Мысливченко А.Г. Перспективы европейской модели социального государства. – Вопросы философии. – 2004, № 1\4, с.3-12; Зарубина Н.Н. Этика служения и этика ответственности в культуре русского предпринимательства. Общественные науки и современность. – 2004, № 1 – с.96-105; Зудин А.Ю. Олигархия как политическая проблема российского посткоммунизма. Общественные науки и современность. – 1999, № 1 – с.45-65; Кива А.В. Российская олигархия: общее и особенное. Общественные науки и современность. – 2000, № 2, с.18-28.

3 Sten Сен А. Развитие как свобода. – М.: Новое изд-во, 2004, с.36.

տողն ու այն տնօրինողը: Մարդկային հնարավորությունների ամրապնդման և պահպանման գործում անգնահատելի է պետության և հասարակության դերակատարությունը: Այն «... ավելի շուտ ամփոփված է մարդկային գործունեության աջակցության, այլ ոչ թե պատրաստի բարիքների բաշխման մեջ»<sup>1</sup>: Մյուս կողմից՝ լիարժեք մարդկային գործունեությունը պահանջում է կազմակերպել նաև մասնավոր կյանքի ոլորտ, որն առերևույթ թվում է, թե կապված չէ սոցիալական բարօրության նպատակի իրագործման հետ:

Արդարության սոցիալ-դեմոկրատական հայեցակարգի ընդհանուր մեթոդաբանությունը կառուցված է երկու փոխկապված սկզբունքների վրա. առաջինն արտահայտում է մարդու բնական ձգտումը՝ համատեղ գործունեությամբ իրագործելու ընդհանուր բարօրության ապահովման սոցիալական նպատակը, իսկ երկրորդը նույնպիսի բնական ձգտումն է՝ անկախ, ինքնուրույն և ինքնավար գոյություն: Սոցիալ-դեմոկրատական հայեցակարգի մեջ ազատության այս երկու մեկնաբանություններին համապատասխանում են սոցիալական արդարության երկու՝ ինչ-որ իմաստով միմյանց հակադիր երկու մոդելներ: Մի կողմից՝ սոցիալական արդարությունը պահանջում է համակողմանի աջակցություն մարդկային գործունեությանը, ինչն, անտարակույս, որոշակի բարոյական պարտավորություններ է դնում այլ մարդկանց և պետության վրա: Ուրիշ խոսքով, հիմնարար մարդկային հնարավորությունները բովանդակում են դրանց զարգացման պահանջ, որը հասցեագրվում է ուրիշներին, մասնավորապես՝ պետությանը: Մյուս կողմից, ակներև է, որ արդարության գաղափարը ներառում է նաև յուրաքանչյուր մարդու իրավունքը՝ տնօրինելու իրեն ընձեռված հնարավորությունները և

ինքնուրույնաբար լուծելու այն խնդիրը, թե ինչպես կարելի է դրանք օգտագործել:

Այսպիսով՝ սոցիալ-դեմոկրատական մոտեցման շրջանակներում արդարությունը հանդես է գալիս և՛ որպես պետական աջակցության պահանջ՝ սոցիալական ընտրության համար համապատասխան հնարավորությունների ստեղծում, երկրորդ՝ քաղաքական մասնակցության և բյուրոկրատիայի դեմ պայքարի համար հնարավորությունների ստեղծում, և, երրորդ՝ մշակութային ինքնանույնականացման հնարավորությունների ստեղծում: Եվ, վերջապես, պետության կողմից անհատի մասնավոր կյանքին չմիջամտելու իրավական պահանջ:

Այստեղից արդեն բոլորովին հեռու չէ մինչև այն բանի քողարկված ընդունումը, որ սոցիալ-դեմոկրատական տեսությունը, չնայած վերոնշյալ տարբերություններին, փաստորեն վերաբրտարում է սոցիալական ազատականության ավանդական պահանջները, թեև այլ մեթոդաբանական հիմքով: Առաջին հերթին դա վերաբերում է այնպիսի ասպեկտներին, ինչպիսին են սոցիալական և տնտեսական գործընթացներում պետության առանձնահատուկ դերի ճանաչումը, անհատական ինքնավարության և անհատական իրավունքների պաշտպանությունը: Եվ, չնայած այն բանին, որ աշխարհայացքային (սոցիալ-փիլիսոփայական) էական տարբերությունները մնում են, այսուհանդերձ գործնական հետևությունների առումով վերոնշյալ երկու մոտեցումներն, ավելի շուտ, մեկը մյուսին լրացնում են, քան իրար հակասում:

Նույնը վերաբերում է նաև սոցիալական քաղաքականության առաջնահերթություններին: Մի կողմից՝ ակնհայտ է, որ սոցիալական քաղաքականության նպատակների և միջոցների ըմբռնման նկատմամբ սոցիալ-դեմոկրատական և ազատական մոտեցումների

1 Տե՛ս նույն տեղում՝ էջ 71:



միջև տարբերությունները հիմնարար բնույթ ունեն: Եթե ազատական մոտեցումն ուղղված է քաղաքական ինստիտուտների գործառնության բացասական հետևանքների (աղքատությունը, անհավասարությունը, զրկանքները և այլն) շտկման-վերացմանն, ապա սոցիալ-դեմոկրատական մոտեցումը՝ դրանց բուն պատճառների վերացմանը: Դրան համապատասխանում է նաև սոցիալական քաղաքականության իրականացման միջոցների տարբերությունը: Ազատականները շեշտը դնում են ռեսուրսների վերաբաշխման վրա («ռեսուրսիզմ»), իսկ սոցիալ-դեմոկրատները՝ այնպիսի ինստիտուտների համակարգի ստեղծման վրա, որը կբացառի ծայրաստիճան աղքատության և անհավասարության բուն հնարավորությունը («ինստիտուցիոնալիզմ»): Այդ իսկ պատճառով գարմանալի չեն թվում որոշ ազատական հեղինակների հետևություններն՝ ազատականության սոցիալական ծրագրի թուլության մասին, և նույնքան միամտություն են այդ ծրագիրը ավելի արմատական դարձնելու առաջարկությունները<sup>1</sup>:

Այսպիսով՝ ի տարբերություն ժամանակակից ազատականության, որը մեկուսացել է կոնկրետ ինստիտուցիոնալ հիմնախնդիրների լուծումներից, սոցիալ-դեմոկրատիայի գործունեությունն ուղղված է սոցիալ-քաղաքական համակարգի վերափոխմանը՝ մարդկային կյանքի պայմանները իրապես բարելավելու նպատակով: Սոցիալական զարգացման տվյալ ռազմավարության հաջող մարմնավորման կոնկրետ օրինակ է ծառայում Շվեդիայում, Ֆինլանդիայում, Նորվեգիայում սկանդինավյան սոցիալ-դեմոկրատիայի գործառնության պրակտիկան:

Սակայն, մյուս կողմից, սոցիալ-դե-

մոկրատիայի արմատական քաղաքական հռետորաբանությունը և սոցիալական ազատագրության պաթոսը գուցակցվում է մասնավոր սեփականության և ներկայացուցչական ժողովրդավարության ավանդական ազատական ինստիտուտների ճանաչմամբ: Այս ամենը ևս մեկ անգամ հաստատում է մեր գլխավոր հետևությունն այն մասին, որ արդարության հիմնախնդրի լուծման նկատմամբ ազատական և սոցիալ-դեմոկրատական մոտեցումների միջև գոյություն ունեն ոչ թե դիմակայության, այլ փոխլրացումայնության հարաբերություններ: Այսինքն՝ ժամանակակից ազատականների և կոմունիտարիստների դիրքավորումները ավելի շուտ մեկը մյուսին լրացնում են, քան թե գտնվում են առձակատման մեջ: Պետք է խոստովանել, որ արդարությունը, որպես քաղաքագիտական կատեգորիա, ազատական և կոմունիտարիստական հեռանկարներում արտահայտում է սկզբունքորեն տարբեր արժեքներ (մի դեպքում՝ անհատապաշտական, իսկ մյուս՝ հանրային արժեքները), սակայն և՛ մեկը, և՛ մյուսը հավասար չափով անհրաժեշտ են ժամանակակից հետխորհրդային հասարակության արդիականացման, առաջընթացի զարգացման համար: Այլ խոսքերով՝ հիմնարար դրական լուծումը ոչ թե այն է, որ միանշանակորեն նախապատվությունը տրվի իրավունքին կամ բարօրությանը, անհատին կամ հանրությանը, այլ ազատության և բարօրության օրգանական միասնությունն է:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝  
08.03.2015

1 Сид Кимлика У. Либеральное равенство. – Современный либерализм. – М.: Дом интеллектуальной книги, Прогресс-Традиция, 1998, с.138-190.

## ҚҰҚАҢНАМА

1. Роулз Дж. Теория справедливости. – Новосибирск: изд-во Новосибирского университета, 1995
2. Лэш К. Восстание элит и предательство демократии. – М.: Логос, Прогресс, 2002
3. Алексеева Т.А. Современные политические теории. – М.: Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2000
4. Кимлика У. Либеральное равенство. – В сб.: Современный либерализм (под ред.Л.Б.Макеевой). – М., 1997
5. Гринберг Л.Г., Новиков А.И. Критика современных буржуазных концепций справедливости. – Л.: Наука, 1977
6. Мальцев Г.В. Буржуазный эгалитаризм. Эволюция представлений о социальном равенстве. – М.: Мысль, 1984
7. Алексеева Т.А. Справедливость: морально-политическая философия Джона Роулза. – М.: Наука, 1992
8. Алексеева Т.А. Джона Роулз и его теория справедливости. – Вопросы философии. – 1994, № 10
9. Алексеева Т.А. Справедливость как политическая концепция: очерк современных западных дискуссий. – М.: МОНФ, 2001
10. Кашников Б.Н. Либеральный утилитаризм и его критика в политической философии Дж.Роулза. – Общественные науки и современность. – 2003, № 2
11. Печерская Н.В. Современный дискурс справедливости: Джон Роулз или Майкл Уолцер? – Общественные науки и современность. – 2001, № 2
12. Шамилева Р.К. Модели справедливости в современной либеральной теории Запада. – М.: Макс Пресс, 2004
13. Макеева Л.Б. Дискуссия между “либералами” и “коммунитаристами” в социальной философии и этике. – В сб.: История философии: Запад-Россия-Восток (книга четвертая: Философия XX века). – М.: “Греко-латинский кабинет” Ю.А.Шичалина, 1999.
14. Федотова В.Г. Модернизация “другой” Европы. – М.: ИФРАН, 1997
15. Федотова В.Г. Когда нет протестантской этики. – Вопросы философии. – 2001, № 10
16. Модернизация и глобализация: образы России в XXI веке (Отв.ред. В.Г.Федотова). – М.: 2002
17. Мысливченко А.Г. Перспективы европейской модели социального государства. – Вопросы философии. – 2004, № 1\4
18. Зарубина Н.Н. Этика служения и этика ответственности в культуре русского предпринимательства. Общественные науки и современность. – 2004, № 1
19. Зудин А.Ю. Олигархия как политическая проблема российского посткоммунизма. Общественные науки и современность. – 1999, № 1
20. Кива А.В. Российская олигархия: общее и особенное. Общественные науки и современность. – 2000, № 2
21. Сен А. Развитие как свобода. – М.: Новое изд-во, 2004

### ПОПЫТКА СРАВНИТЕЛЬНОГО АНАЛИЗА ЛИБЕРАЛЬНОГО И СОЦИАЛ-ДЕМОКРАТИЧЕСКОГО ОСМЫСЛЕНИЯ СОЦИАЛЬНОЙ СПРАВЕДЛИВОСТИ

#### АЙК ТАДЕВОСЯН

*Национальная Академия Наук НАН РА,  
Института Философии, социологии и права, аспирант*

Статья посвящена политологическому сопоставительному анализу либеральной и социально-демократической концепций социальной справедливости. Раскрыта сущность этих концепций, моделей, рассмотрены механизмы их воспроизводства.

Дата представления статьи: 08.03.2015

AN ATTEMPT OF COMPARATIVE ANALYSIS OF LIBERAL AND  
SOCIAL DEMOCRATIC CONCEPTS OF SOCIAL JUSTICE

**HAYK TADEVOSYAN**

*PhD student at National Academy of Sciences of the Republic of Armenia,  
Institute of Philosophy and Law, Postgraduate Student*

The article is devoted to the liberal and comparative political analysis of social justice and social-democratic concepts. The essence of those concepts, models, their reproduction mechanisms have been observed, the decisive role of social-democratic conception of justice for the social system of some European countries has been shown.

Article submission date: 08.03.2015

**NAIRA HAKOBYAN**

*International Scientific-Educational Center of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Dean, Doctor of Psychological Sciences, Professor*

**ANNA KHACHATRYAN**

*Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Applicant*

## CAREER MANAGEMENT PROBLEMS AND DEVELOPMENT TRENDS

The article presents the current problems of career management and the trends of its development. It is noted that career management problems are theoretical issues which relate to human behavior and mentality models. Career management strategies making people more competitive in today's job market are also presented. Career development trends, particularly, development of self-management skills are discovering. They are given some examples of practical trainings promoting career management development.

**Key words and expressions:** career management, strategy, career management anchor, self-esteem, life-long learning, network of relationship, development trends.

Career management is the lifelong process of investing resources to achieve career goals for everyone. Career management is not a singular event but a continuing process that is a necessity for adapting to the changing demands of the 21st century economy [8].

We have probably heard the term "career management" in the early phase of our work life. Career management uses the concepts similar to good financial management, to disciplined investment, made on a regular basis and implies a greater return. We have also probably heard that in the future we need to be responsible for our careers. But what career management is and how we do it!

Among many definitions of career management problems there are some theoretical issues which help to understand and present the importance of these problems for everyone. Edgar Schein identified eight patterns which determine the spheres of career management problems: autonomy/independence, security/stability, technical/functional competence, general managerial competence and entrepreneurial creativity, service to a cause, pure challenge, and life style [12]. The relative importance of each of these patterns to an individual will determine the career choices that they make. These patterns are representing some certain anchors as the behavior and mentality models. For example, individuals anchored by autonomy/independence would resist joining a traditional organization and be more likely to become independent professionals or entrepreneurs, or to join an organization that offers them high levels of autonomy. Alternatively, individuals anchored by technical/functional competence desire to improve their craft, and are attracted to roles that allow them to emphasize the technical side of their work. The most important function of these career anchors in career management is the recognition that straying from the anchors will usually result in unhappiness. Focus on the intrinsic components of a career rather than the extrinsic characteristics (salary,

social status and so on). So, these patterns as the career anchors must also be considered in relation to the current environmental trends. Some anchors are better adapted to the emerging career opportunities than others. Many individuals have a technical/functional anchor. These individuals may become the independent professionals who contract their expertise to other organizations. The risk is that the expertise will become obsolete. Consequently, the importance of continual lifelong learning is underscored. Individuals with autonomy/independence anchors will find their anchors congruent with current environmental trends. Gaining an understanding of our anchors is critical to understanding ourselves and assessing our opportunities in the current environment. Let's describe the above-mentioned patterns of career management anchors and give their short definitions. **Autonomy/Independence** desires work situations that provide maximum freedom to independently pursue career interests; **entrepreneurial creativity** motivates by the desire to create and develop new products and services. **General management competence** can be motivated by the opportunity to develop and use interpersonal and problem-solving skills to climb to general management levels. **Job security** concerns with long-run stability and security of employment and benefits. The other anchor - **life style** - means to integrate personal, family and career needs and to maintain flexibility. **Pure challenge** is motivated by the desire to overcome the odds, solve unsolved problems, and win out over competitors. **Service-dedication** - uses interpersonal and helping skills in the service of others. Finally, **technical/functional** anchor is intrinsically motivated by the work itself, its technical aspects, and the desire for enhanced technical competence and credibility [12].

In general, the career anchor patterns mentioned above are named to settle any career management problems and to provide

the "career success cycle" which involves setting goals, exerting effort, attaining goals, and feeling successful. Successful feelings build self-esteem and lead to the formulation of more challenging goals. So the cycle can be repeated. If success is not achieved a negative cycle of psychological failure is created, resulting in loss of self-esteem. Career setbacks are expected. However, the negative effect of a career setback on self-esteem may be greater than the damage to the career itself. The patterns of success and self-esteem differ between individuals, depending on the stage in their life cycle and the nature of their goals. Early in a career, the establishment of success patterns is crucial. Consequently, individuals must carefully consider their definition of success and differentiate it from society's definition and what they are capable of achieving. Nathaniel Branden notes that an individual's ability to develop self-esteem originates from an ability to act congruently with their underlying persona, desires and needs. Success in the pursuit of false goals will not create the career success cycle outlined above [5].

Finally, the other important problem in career management is the past success which can become a significant barrier to future learning if an individual becomes captive of their past approaches and strategies. Environmental and personal stresses must be approached with a commitment to questioning, learning and continued development, rather than an unconscious commitment to simply employing techniques that worked in the past. So, each of career management patterns will both serve and limit.

There are several species of career management metaphors, such as climbing, pyramid, timetable or tournament which determine several problems of career management. If you are competing for a promotion, then a tournament image may be helpful. Similarly, a sense of timetable is

important if you intend on progressing to the position as president of a multinational. But, if you wish to become a leading expert in a particular area, a timetable loses much of its meaning as it is difficult to define the point at which one becomes the most knowledgeable person in the world and how to chart that progress. One of the most common images still held today is that of a career as a ladder or pyramid, symbolizing career progress. In the new job environment, this pattern no longer holds as the traditional assumptions concerning careers are invalid. Consequently, the metaphor becomes increasingly blurred. These competencies may be applied in three situational areas: leadership, management and operational. The situational areas relate closely to levels in an organizational hierarchy. Leadership provides the sense of direction and obtains resources; management provides the planning, organizing, and the operational area focuses on the “doing” of the task or the actual implementation [3; 9].

To be competitive in today’s job market you can adopt one of three career strategies [2]:

- Continue with current skills, but perform them more efficiently;

- Reengineer your skills and continuously improve;

- Develop new skills and competencies either in depth or breadth.

In the first case the risk is that others will do similar things, lessening the value of your skills. The second strategy model allows adding new values to your skill set and becoming “better”. And, in the third case, you can establish distinction which also adds value to your services.

These strategies form general trends of career development. They are useful only if they reflect who you are. Although many people believe they have self-awareness, few have put this understanding into words, quantified it, assessed it in the face of experience, and learned from it. By

consciously articulating your understanding of yourself, you will be better able to assess the fit between you, the career opportunity and the environment. Further, if your assessment proves inaccurate, you will be better able to consciously learn from the experience and refocus. Alternatively, if your assessment proves accurate, then your understanding of yourself will be validated and you will be better able to move into the future.

Although the tactics will vary, career management focuses on two key investment assets to manage throughout our working years, our personal lifelong learning and our network of relationships [10].

Lifelong learning helps us to understand how much of our day-to-day work is now based around technology. Computers and other scientific advancements have radically altered the way in which we conduct work. How well we are able to adapt to these ongoing innovations will be directly related to how current we keep our knowledge and skills.

Network of relationships has become an increasingly critical asset. Not only do our relationships help us accomplish our day-to-day tasks with colleagues, vendors, customers and competitors, these relationships will be the source of information about how fields and industries are evolving. We also have relationships outside of our work environments that may be affiliated with our hobbies, children, and spiritual or community networks. These personal and professional relationships will transcend specific companies, industries and communities. How we interact, respond and connect in all our relationships will impact our present performance and future opportunities.

Keeping connected and knowing how to build good relationships are more important than ever before. These skills can be developed in applied communication courses, mastering contact management

software, effective listening and genuine desire to get to know people better.

Lifelong learning and relationship management form the backdrop of successful career management. Creating a vision and plan are also essential to guiding informed investment decisions and establishing annual goals. The career vision we establish should be broad enough to be flexible, but specific enough to be actionable. This career vision, built on a profile of our unique traits, directs our choices to develop what we need to be satisfied and be able to successfully contribute in different work environments over the years.

Besides lifelong learning and relationship management education is becoming increasingly critical to career success. Until recently, education preceded practical experience. Now, the popularity of concurrent completion of education and practical experience is growing. For example, universities offer programs which combine education with practical experience and many organizations are recognizing the importance of formal training [6].

In addition to a base of education and experience, effective career management requires an analysis of changes in the job environment and an ability to adapt to meet the changing needs of organizations.

Given the organizational changes that have occurred in recent years (downsizing, delayering, decentralization, reorganization, cost-reduction, IT innovation, competency measurement, and performance related measurement), and their potential negative psychological impacts (anxiety, lowered self-esteem, competitive behaviors, frustration, stress, lowered self-efficacy, and low trust behaviors), a positive framework is required for approaching the future.

Nicholson offers a positive alternative for career management based on: teamwork; the development of competencies; payment based on outputs; a contract of employability and flexibility; and a move to self-managed

careers [10].

Career management is the combination of structured planning and the active management choice of our own professional careers. The outcome of successful career management should include personal fulfillment, work/life balance, goal achievement and financial security.

There are many definitions by management scholars of the stages in the managerial process [1]. The following classification system with minor variations is widely used:

Development of overall goals and objectives,

Development of a strategy (a general means to accomplish the selected goals/objectives),

Development of the specific means (policies, rules, procedures and activities) to implement the strategy, and

Systematic evaluation of the progress toward the achievement of the selected goals/objectives to modify the strategy, if necessary.

The time horizon for the achievement of the selected goals or objectives – short term, medium term or long term – will have a major influence on their formulation.

Short term goals (one or two years) are usually specific and limited in scope. Short term goals are easier to formulate.

Intermediate goals (3 to 20 years) tend to be less specific and more open ended than short term goals. Both intermediate and long term goals are more difficult to formulate than short term goals because there are so many unknowns about the future.

Long term goals (over 20 years), of course, are the most fluid of all. Lack of life experience and knowledge about potential opportunities and pitfalls make the formulation of long term goals/objectives very difficult. Long range goals/objectives, however, may be easily modified as additional information is received without a great loss of career efforts because of

experience/knowledge transfer from one career to another.

Other elements of career management include career planning, which consists of strategic planning and marketing, self-assessment and self-development.

It is important to come up with your career planning as it gives you the much needed direction and makes it clear there where you see yourself in future [4]. A large proportion of our life is spent in achieving our career goals, thus it is very important to make sure that right steps were taken and correct planning was done in the early years of our life. There are very few lucky ones who are born with a clear mind and who knows what they want to do and where they see themselves in life ahead. But majority of us are not sure what we want from life and so it is very important to plan out things. Thus career planning is what gives your career and in some way your life, true meaning and purpose.

The process of career planning is also known as career development stages and career development model. These steps help you in planning your career and deciding about your future [7].

Self-assessment is a process that helps you in assessing your skills, your potential, your strengths and your ability to fulfill your aims. It promotes your self-development and allows seeing what are the qualities and skills that are required to help you achieve your aims and goals [10].

The best way to come with an action plan is to come up with small goals for oneself. Once these small goals are achieved, we can see that how much close we are to our main aim and major goal. This small step acts as a path way to the main aim.

Once you are done with small goals and the main aim, the next step remains to start implementing your plans. For this task's realization it is very helpful to know and use some ways of practical trainings such as "Road map", "Self-description boxes", "Characteristics if the ideal organizational climate" and so on [7; 10].

### **"Road map"**

In the space below, draw the road map of your life. Put a check mark where you are today and identify the incidents and events that have been most important in your development. Include the detours, side-tracks, hills and valleys, dead-ends, stops, stations, autobahns, and high-speed connections that have characterized your journey to date. Consider the most influential people and critical incidents in shaping your identity, when you learned the most about yourself, what interests, themes, patterns and motivations have emerged and evolved over time. These help you to understand what gives you the greatest sense of meaning, fulfillment and satisfaction.

Extend your road map into the future. Consider alternative scenarios and how the patterns and themes will repeat.

### **Personal Road Map**



### **"Self-description boxes"**

Answer the question 'Who Am I?' in the boxes provided. Number the boxes – in order of importance. Consider the themes/patterns and motivations that link

the responses and the indications of what give you a sense of meaning, fulfillment, and satisfaction. Cross out 2 or 3 of the boxes. Consider how you would feel if these



characteristics were missing, including any insights into the underlying connections,

themes/patterns and motivations.

<b>I am a person who</b>	<b>I am a person who</b>
<b>I am a person who</b>	<b>I am a person who</b>
<b>I am a person who</b>	<b>I am a person who</b>

**“Characteristics of the ideal organization climate”**

For each of the climate dimensions consider what you would be looking for in an ideal organization to work for. Consider

your reaction to situations where standards were very high versus absent; where individuals were held responsible versus a lack of accountability; and where activities were highly versus loosely structured.

<b>Climate dimension</b>	<b>Rating of dimension (i.e., what is optimal for you?)</b>
Standards	Low High
Responsibility	1 2 3 4 5 6 7
Structure	1 2 3 4 5 6 7
Rewards	1 2 3 4 5 6 7
Warmth	1 2 3 4 5 6 7
Risk	1 2 3 4 5 6 7
Support	1 2 3 4 5 6 7
Conflict	1 2 3 4 5 6 7
Identity	1 2 3 4 5 6 7

Recognizing the relationship between the organization and careers is fundamental to effective career management. In reality, individuals normally lack the ability to alter organizations in fundamental ways. Although an individual may have little impact on organizational climate, the impact of the climate on the individual is significant. Consequently, we need to understand the climate and how it will affect the organization’s view of us, and our view of ourselves and the organization. Finally, while traditional departments and functions are likely to co-exist with more future oriented ones for some time, they will be under increasing pressure to change.

This statement is very important to

form and realize self-management skills reflecting your strengths and weaknesses and supporting these beliefs. Development of self-management skills promotes the most personally fulfilling and satisfying. Their awareness can build upon and develop your career management in future. So we are able to mean the general development trends of person’s career management through realization self-management skills such as abilities to make a decision and to effectively balance flexibility and firmness, openness to new ideas and integration skills, tolerance for stress and self-control [5].

Article submission date: 15.03.2015

## LITERATURE

1. Аверин А.Н., Управление персоналом, кадровая и социальная политика организации, М., 2005, 224 с.
2. Виханский О.С., Стратегическое управление: учебник, М., 2005. 340 с.
3. Allred Brent B., Charles C. Snow, and Raymond Miles, Characteristics of Managerial Careers in the 21st Century, Academy of Management Executive, vol. 10, No 4, 1996, p. 17.
4. Andy F., What is Career Planning? – Overview of the Five Basic Steps to Career Planning, February 26, 2010
5. Branden N., The Power of Self-Esteem, L, 1992, 324 p.
6. Butler T., James W., Discovering Your Career in Business, Addison-Wesley, 1997, p.17.
7. Dawn R. McKay, The Career Planning Process, Planning Your Career Step-By-Step, [http://careerplanning.about.com/cs/choosingacareer/a/cp\\_process.htm](http://careerplanning.about.com/cs/choosingacareer/a/cp_process.htm))
8. Hall Douglas T., Protean Careers of the 21st Century, Academy of Management Executive, vol. 10, No 4, 1996, p. 8.
9. Herriot P., The Career Management Challenge, London, 1992.
10. <http://www.careercentre.dtwd.wa.gov.au/careerplanning/Pages/CareerPlanning-4StepPlanning-Process.aspx>
11. Nicholson N., “Career Systems in Crisis: Change and Opportunity in the Information Age,” Academy of Management, Executive, vol. 10, No 4, 1996, p. 40.
12. Schein Ed. H., Career Anchors Revisited: Implications for Career Development in the 21st Century, Academy of Management Executive, Vol. 10, No 4, 1996, p. 80.

### ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

#### **ՆԱԻՐԱ ՀԱԿՈՒՅԱՆ**

*ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Գիտակրթական միջազգային կենտրոն, դեկան,  
հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

#### **ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*Հայկական պետական մանկավարժական համալսարան, հայցորդ*

Հոդվածը ներկայացնում է կարիերայի կառավարման ներկա հիմնական դիրքերը և դրա զարգացման միտումները: Նշվում է, որ կարիերայի կառավարման հիմնական դիրքերը անձի վարքային մոդելները արտահայտող տեսական դրույթներ են: Ներկայացվում է նաև կարիերայի կառավարման ռազմավարությունների կարևորությունը ժամանակակից աշխատանքային շուկայում անձի մրցունակության պահպանման համար: Բացահայտվում են նաև կարիերայի կառավարման զարգացման, մասնավորապես՝ ինքնակառավարման հմտությունները, միտումները: Տրվում են խնդրին առնչվող գործնական թրեյնինգների օրինակներ:

Հոդվածի ներկայացման տարեթիվ՝ 15.03.2015

## ПРОБЛЕМЫ И ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЕ КАРЬЕРНОГО МЕНЕДЖМЕНТА

**НАИРА АКОПЯН**

*Национальная академия наук НАН РА,  
Международный научно-образовательный центр, декан,  
доктор психологических наук, профессор*

**АННА ХАЧАТРЯН**

*Армянский государственный педагогический университет им. Х.Абовяна, соискатель*

В статье представлены проблемы и тенденции развития карьерного менеджмента личности, в контексте которого важную роль играет реальный выбор стратегии карьерного менеджмента, в частности, с точки зрения конкурентоспособности личности на рынке труда. Рассматривается обеспечение последовательности развития способностей, возможностей и умений в процессе карьерного менеджмента.

В статье представлены примеры психологических тренингов, связанных с рассматриваемой проблемой.

Дата представления статьи: 15.03.2015

**ՄԵԼՍ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**

*Իտալացի Արտյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ, հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

**ԼԻԼԻԹ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**

*Իտալացի Արտյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ, հոգեբանության տեսության և պատմության ամբիոն, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

**ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

*Հովհաննես Թումանյանի անվան Վանաձորի պետական մանկավարժական համալսարան, մանկավարժության ֆակուլտետ, փոխդեկան, հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի դասախոս*

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՐՄԱՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆ ԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ**

Հոդվածում քննարկվում են սոցիալական լարվածության պայմաններում սովորողների հարմարման և հոգեբանական անվտանգության պահպանման հիմնախնդիրները: Հեղինակները հարմարման գործընթացը դիտարկում են որպես օրգանիզմի հոգեֆիզիոլոգիական համակարգերի ակտիվ համագործակցություն, որի արդյունքում օրգանիզմի ամբողջականության պահպանման և սովորողների անձի հոգեբանական անվտանգության ապահովման համար կոորդինացվում է նրա հոգեֆիզիոլոգիական ենթահամակարգերի փոխգործունեությունը: Հետազոտական ճանապարհով բացահայտված են միջանձնային փոխհարաբերություններում սովորողների վարքային փոփոխությունների յուրահատկությունները, ինչպես նաև հոգեբանական անվտանգության պահպանման գործընթացի տարիքային և սեռային տարբերակման առանձնահատկությունները:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** ձգնաժամային պայմաններ, հարմարում, հոգեբանական անվտանգություն, գործառույթային վի-

ձակ և հնարավորություններ, հոգեկան առողջություն, հետվնասվածքային սթրեսային խանգարումներ:

21-րդ դարի առաջին տասնամյակները նշանավորվեցին միջազգային ահաբեկչական գործողությունների ակտիվացմամբ (Մանհետտեն-ԱՄՆ, Բեալան-Ռուսաստան, Մադրիդ-Իսպանիա և այլն), տարբեր երկրների միջև ռազմաքաղաքական մեծ ու փոքր բախումներով (Սիրիա, Իրաք, Ուկրաինա) համաշխարհային տնտեսական ճգնաժամերով (2008, 2014), բնական և տեխնածին աղետներով և այլն: Այդ ամենին առնչվեց նաև ՀՀ-ը, որը դեռևս մինչ օրս չի ձերբազատվել անցյալ դարի ութսունական և ինստունական թվականների բնական աղետի, սոցիալ-տնտեսական ճգնաժամի, շրջափակման բացասական հետևանքներից: Ճգնաժամային, արտակարգ ու դրանց հետևանքով առաջացող սոցիալական տագնապի պայմաններին բնորոշ է կենսակերպի անկումը, տարբեր դեֆիցիտների, անհարմարությունների առաջացումը, սոցիալ-հոգեբանական, քաղաքական լարվածության ավելացումը [1,7,8]:

Արտակարգ, ճգնաժամային և նմանատիպ երևույթների առաջացման դեպքում, սովորաբար բացասական գործոնների ազդեցության հետևանքներն առաջին հերթին կրում են մարդիկ: Մյուս կողմից էլ, որպես օրինաչափություն, դրանցում ավելանում են մինչ այդ գոյություն չունեցող դժվարություններ: Երկրի ներսում առաջացած դեֆիցիտների պատճառով տարբեր կազմակերպությունների միջև թուլանում կամ խզվում են սոցիալ-տնտեսական կապերը, սրվում առևտրատնտեսական, սոցիալ-հոգեբանական փոխհարաբերությունները: Նմանատիպ պայմանները ուղղակիորեն անդրադառնում են մարդկանց ընդհանուր և հոգեկան առողջության վրա, արտահայտվում նյարդային լարվածությամբ, ֆրուստրատիվ վիճակներով, սթրեսի, ներողների դրսևորումներով [1,6]: Բացասական գործոնների տևական ազդեցությունը ժամանակի ընթացքում մարդկանց հոգեկան ոլորտում ձևավորում է կառուցվածքային և խորքային փոփոխություններ [6]: Մասնագիտական գրականության մեջ այդպիսի փոփոխությունները դիտարկվում են որպես անձի հետվնասվածքային սթրեսային խանգարումներ (Posttraumatic Stress Disorder (PTSD)) [2,3]: Ըստ Հ. Սելյեի՝ օրգանիզմի կողմից դրսևորվող հակազդումների բազմազանությունն ուղղված է ստեղծված պայմաններին հարմարվելուն (օրգանիզմի կողմից փոփոխված պայմաններին հարմարման համախտանիշ) [4]:

Կենսաբանական տեսանկյունից՝ օրգանիզմը համակարգերի ամբողջություն է և նրա նորմալ կենսագործունեությունը պայմանավորված է ներքին միջավայրի (օրգանական) սերտ համագործակցությամբ, ինչպես նաև արտաքին միջավայրի հետ ակտիվ փոխներգործությամբ, որում տեղի է ունենում նրա կենսագործունեությունը: Այս տեսանկյունից՝ օրգանիզմի առողջությունը, նրա գործունեության արդյունավե-

տությունը, միջավայրում անձի լիարժեք հոգեբանական անվտանգությունը պայմանավորված է օրգանիզմի հոգեֆիզիոլոգիական համակարգերի հարմարման գործընթացների արդյունավետությամբ: Հարկ է նշել, որ հարմարումը անընդհատ գործընթաց է: **Հարմարումը փոփոխվող միջավայրի նկատմամբ օրգանիզմի բոլոր համակարգերի (կենսաբանական, հոգեբանական, ֆիզիկական և այլ) գործառույթային վերակառուցման այնպիսի ակտիվություն է, որի դեպքում նրա հիմնական գործառույթների պահպանմամբ կատարվում են համակարգի կառուցվածքային կապերի, համակարգությունների «մասնագիտացված» գործունեության արդյունավետությանն ուղղված նպատակահարմար գործառույթային փոփոխություններ, որոնք չխախտելով օրգանիզմի ամբողջականությունը», դրսևորում են փոփոխվող միջավայրին համապատասխան ակտիվություն [5,8]:** Հարմարումը կենսաբանական մակարդակում օրգանիզմի ամբողջականության պահպանմանն ուղղված համակարգերի ակտիվության բնական գործընթացն է: Հոգեբանական մակարդակում՝ այն գիտակցված, նպատակաուղղված, կառավարվող գործառույթների ակտիվություն է, որը նաև իրական և հավանական սպառնալիքների պայմաններում անձի հոգեբանական անվտանգության պահպանմանն ուղղված հակազդումների ամբողջություն է [2,7]: Արտակարգ, ճգնաժամային իրավիճակներում հոգեբանական հարմարումը գույակցվում է կենսաբանական տեղաշարժերի համապատասխան բնութագրերով: Այդ համակարգերի փոփոխության օրինաչափությունների ու դրանց կառավարման մեխանիզմների իմացությունը հնարավորություն կստեղծի ճգնաժամային, արտակարգ պայմաններում ապահովելու սովորողների անձի ամբողջականությունն ու հոգեբանական անվտանգու-

թյան գործընթացը:

Արտակարգ, ձգնաժամային իրավիճակներում հոգեբանական անվտանգության ապահովման հիմնահարցը առնչվում է նաև անձի ընդհանուր և հոգեկան առողջության փաստացի բնութագրերի հետ: Այս տեսանկյունից՝ առաջնային պլան է մղվում սովորողների առողջության բնութագրերի ուսումնասիրումը: Ըստ համաշխարհային առողջապահական կազմակերպության (ՀԱԿ) բնորոշման՝ անձի առողջությունը բնութագրվում է որպես հիվանդությունների ու վնասվածքների (այդ թվում նաև հոգեկան) բացակայություն, ինչպես նաև մարմնական (օրգանական) և սոցիալական լիարժեք բարեկեցության վիճակ [7]: Ճգնաժամային, արտակարգ իրավիճակներում առավել վտանգվում է մարդու հոգեբանական անվտանգության զգացումը, հոգեկան առողջության բնութագրերն արտացոլող հոգեֆիզիոլոգիական ցուցանիշները: Ըստ ՀԱԿ-ի բնորոշման՝ հոգեկան առողջությունը իր մեջ ընդգրկում է երեք կարևորագույն բնութագրեր.

ա) արտահայտված հոգեկան խանգարումների բացակայություն,

բ) պահեստային հնարավորությունների չափավոր արտահայտվածություն, որով անձը կարող է հաղթահարել օրգանիզմին առաջադրվող դժվարություններն ու անբարենպաստ հոգեվիճակները՝ պահպանելով օրգանիզմի հավասարակշռությունն ու ամբողջականությունը,

գ) անձի օրգանիզմի և շրջապատող միջավայրի միջև հավասարակշռության վիճակ, անձի և հասարակության միջև ներդաշնակության զգացում, օբյեկտիվ իրականության վերաբերյալ իր և ուրիշների պատկերացումների համընկում:

Հոգեկան առողջության բնութագրերի այս երեք պահանջների հիմքում ընկած է անձի ներդաշնակության, ֆիզիկական և օրգանական համակարգերի օպտիմալ զարգացվածության և միջա-

վայրի հետ ակտիվ կապերի մեջ մտնելու ներքին հնարավորությունների առկայությունը: Արտակարգ, ձգնաժամային իրավիճակներում օրգանիզմի և միջավայրի միջև գոյություն ունեցող կապերի խախտման պատճառով վտանգվում են նրա հոգեբանական անվտանգության, ընդհանուր և հոգեկան առողջության վիճակն ապահովող համակարգերի հիմնական գործառույթները [2,5,8]:

Սովորողների հարմարման գործընթացի և անձի հոգեբանական անվտանգության առանձնահատկությունների ուսումնասիրությունները պահանջում են նրանց առողջության, հոգեկան գործառույթների փոփոխության նկատմամբ ամբողջական մոտեցում, որում հնարավորինս հաշվի պետք է առնվեն հիմնախնդրին առնչվող բոլոր գործոնները:

Այս տեսանկյունից՝ հետազոտության ընթացքում փորձ է արվում բացահայտելու՝

- սովորողների հարմարման գործընթացի և հոգեբանական անվտանգության բնութագրերի դրսևորման դինամիկայի յուրահատկությունները, հուզական վիճակների արտահայտվածության առանձնահատուկ դրսևորումները.

- սովորողների միջավայրի, հասակակիցների, ծնողների և ուսուցիչների հետ փոխհարաբերությունների ու դրանցում դրսևորվող անձնային հատկանիշների ձևափոխումները.

- հարմարման գործընթացում սովորողների հոգեբանական անվտանգության ենթահամակարգերի գործառույթային փոփոխությունների առանձնահատկությունները.

- ձգնաժամային պայմաններում սովորողների ընդհանուր և հոգեկան առողջության, առողջ ապրելակերպի, նրանց հոգեֆիզիոլոգիայի արդյունավետ կազմակերպման գործընթացում անձնային հատկանիշների փոփոխության առանձնահատկությունները:

Ճգնաժամային պայմաններում սովոր-

րողների հոգեբանական անվտանգության և հարմարման գործընթացների ուսումնասիրություններում որպես ընթացիկ խնդիրներ՝ կարևորվել են նաև նրանց նկատմամբ իրականացվող դիտումներն ու նախնական ախտորոշիչ հարցազրույցները:

Հետազոտական ճանապարհով բացահայտվել են սովորողների հոգեբանական անվտանգության խաթարման սոցիալ-հոգեբանական դետերմինանտները, ագրեսիվության մակարդակի, միջանձնային փոխհարաբերությունների, ծնողների վերաբերյալ նրանց կարծիքի (ADOR մեթոդ), անձի հաղորդակցական դիրքորոշումների, հավակնությունների մակարդակի և ինքնագնահատականի դրսևորման առանձնահատկությունները:


Աշխատանքների նմանատիպ կազմակերպումը կարևոր հիմք է հանդիսանում սովորողների հետագա գործունեության արդյունավետության ապահովման, ինչպես նաև նրանց անձի ներդաշնակ զարգացման համար:

Հետազոտության համակազմում ընդգրկվել են 11-17 տարեկան 120 դպրոցականներ, և ՀՀ տարբեր ԲՈՒՀ-երում սովորող 60 ուսանողներ: Ուսանողներից 20-ը հանդիսացել են ՀՀ սահմանամերձ շրջանների բնակիչներ: Դպրոցա-

կանները բաժանվել են երկու խմբերի՝ 1-ին խմբում ընդգրկվել են 11-14, 2-րդ խմբում՝ 15-17 տարեկանները: Ուսանողների 2 խմբերում ընդգրկվել են սահմանամերձ շրջաններում ապրող 15 տղաներ և 15 աղջիկներ, ինչպես նաև ՀՀ տարբեր շրջաններում ապրող 30 ուսանողներ: Հետազոտվող բոլոր խմբերում ներառվել են հավասար քանակությամբ տղաներ և աղջիկներ:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տվել բացահայտելու մի շարք օրինաչափություններ: Այսպես՝ սոցիալական տազնապի պայմաններում ապրող սովորողների միջանձնային հարաբերությունների հետազոտման արդյունքում բացահայտվել է ագրեսիվ դեռահասների վարքային հակադիր դրսևորումների միաժամանակյա արտահայտվածություն, որը արտահայտվում է եսասիրության ու ալտրոիզմի, ավտորիտարիզմի ու ենթարկվողության, կասկածամտության ու կախվածության դրսևորումներով: Արդյունքների այսպիսի բազմազանությունը վկայում է դեռահասների ներքին կոնֆլիկտայնության, սեփական «ես»-ի ու արժեքների նկատմամբ նրանց հակադիր պատկերացումների մասին:

(գծապատկեր թիվ 1)



Թիվ 1 գծապատկերի և թիվ 1 աղյուսակի ցուցանիշներում նշված են սովորողների անձնային հատկանիշների չափումներից ստացված հանրագումարային արդյունքների տոկոսային արտահայտվածությունը և ագրեսիայի միջև եղած կապը՝ ըստ Սպիրմենի սանդղակի: Վերլուծությունները ցույց են տալիս, որ սովորողների ագրեսիայի բարձր մակարդակի և «կեղծ» պտրոլիզմի, ինչպես նաև կասկածամտության միջև գոյություն ունի ակտիվ, փոխկապակցվածության կապ:

աղյուսակ թիվ 1

ագրեսիվության բարձր մակարդակ	
կասկածամտություն	$r_s = 0.727$
«կեղծ» պտրոլիզմ	$r_s = 0.645$
կախվածություն	$r_s = 0.375$

Հետազոտության արդյունքների ու վիճակագրական տվյալների վերլուծությունը հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ սոցիալական լարվածության պայմաններում ագրեսիայի բարձր մակարդակն ուղիղ համեմատական է դեռահասների խմբում գտնվող սովորողների համարժեք սոցիալական ընկալման հնարավորություններին, համաձայն որի՝ որքան մեծ է դեռահասների ագրեսիայի մակարդակը, այնքան ցածր է նրանց կողմից իրականության օբյեկտիվ ընկալման և գնահատման կարողությունը, միջավայրի հարաբերությունների նկատմամբ հանդուրժողականությունը:


Այնուհետև համեմատվել են դեռահասների ոչ համարժեք ինքնագնահատականի, հավակնությունների մակարդակի և ագրեսիայի կապի բացահայտման չափումների արդյունքները: Այսպես՝ ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող դեռահասների խմբում նկատվում է ցածր ինքնագնահատականի միտում գրեթե բոլոր սանդղակների ցուցանիշներում հատկապես հեղինա-

կության և ինքնավստահության սանդղակներում. բացառություն է կազմում բնավորությունը: Հետազոտվողների խմբերում բնավորությունը, նրանց կողմից գնահատվելով սանդղակի միջին և նույնիսկ բարձր մակարդակներում, վկայում է այն մասին, որ ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող դեռահասները չեն կարողանում գիտակցել և օբյեկտիվորեն գնահատել իրենց ագրեսիվության բնութագրերը: Նրանց կարծիքով՝ դա նույնիսկ իրենց միջավայրում ընդունվող վարքի լավագույն տարբերակներից մեկն է: Դեռահասների ցածր ինքնագնահատականը զուգակցվում է հավակնությունների բարձր մակարդակի հետ, որն ինքնին ներքին հակամարտության կոնֆլիկտայնության արդյունք է: Հավակնությունների բարձր մակարդակ է նկատվում նաև 15-17 տարեկան պատանիների մոտ, որը սակայն չի ուղեկցվում ցածր ինքնագնահատականով:

Սովորողների հաղորդակցական դիրքորոշման չափումների արդյունքում ԲՈՒՀ-երում սովորող ուսանողները կարողանում են հնարավորինս օբյեկտիվորեն գնահատել իրենց հետ տեղի ունեցող ներքին ու վարքագծում արտացոլվող փոփոխությունների բնութագրերը: Մինչդեռ սահմանամերձ գոտում ապրող ուսանող աղջիկների 48%-ը իրենց բնութագրում են որպես «սահմանափակ մեծահասակ», իսկ 45%-ը՝ «կոնֆլիկտային մեծահասակ»: Ուսանող աղջիկների 93%-ի մոտ առկա է «ձևական ծնող» միտումը:

Ծնողների վերաբերյալ դեռահասների և ուսանողների կարծիքը պարզաբանող մեթոդիկայի («ADOR») արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ դեռահասները իրենց ծնողների վերաբերմունքը գնահատում են որպես դիրեկտիվ, թշնամական, դիտարկվում են նաև սեռային տարբերություններ: Իրենց մայրերին գնահատելիս տղաների ցուցանիշներում գերակշռում է թշնամանքն ու ավտորիտարությունը:





Թիվ 2 գծապատկերների արդյունքների վերլուծությունները ցույց են տալիս որոշ օրինաչափությունների առկայություն: Այսպես՝ տղաների նկատմամբ մոր թշնամությունն արտահայտվում է միջանձնային փոխհարաբերություններում մոր կողմից դրսևորված ագրեսիվության և չափազանց խստության մեջ: Մայրերի համար տղաներն ընկալվում են որպես մրցակից, որին անհրաժեշտ է ձնշել՝ սեփական կարևորությունը հաստատելու համար: Հետագոտության ավտորիտարության սանդղակը ցույց է տալիս, որ որդիների հետ իրենց փոխհարաբերություններում մայրերի ինքնուրույնությունն ընկալվում է որպես իշխանության միանշանակ թելադրանք: Դիտարկվում է նաև համոզմունք, որ մայրերը իրենց չեն ընկալում որպես ինքնուրույն անձ, որ դեռահասները ունեն իրենց սեփական մտքերը, զգացմունքները, պատկերացումները: Մայրերը ներկայանում են որպես «կույր» իշխանություն, ուժ, որին պետք է ենթարկվել:

Հայրերի նկատմամբ տղաների գնահատականի ցուցանիշների քննարկումները ցույց են տալիս, որ այստեղ ևս գերակշռում է ավտորիտարության սանդղակը: Ըստ հայրերի կարծիքի՝ որդին պետք է ամեն ինչ իմանա ինքնուրույն: Աղջիկների գնահատականը մոր նկատմամբ ցուցանիշներում գերակշռում են դիրեկտիվության, ավտորիտարության սանդղակները:

Մայրերին դիրեկտիվ գնահատող աղջիկներն ընդգծում են նրանց կողմից դրսևորվող խիստ և դաժան հսկողությունը, ամեն ինչում իրենց նկատմամբ անհարկի միջամտություններն ու արարքների նկատմամբ բացասական գնահատականները, որոնք գերադասում են խիստ պատիժը՝ համոզված լինելով իրենց արարքների ու գնահատականների ձմարտացիության ու արդարության մեջ: Ավտորիտարության սանդղակի ցուցանիշներում դեռահասների կարծիքով մայրերը գրեթե հոգ չեն տանում իրենց նկատմամբ, չեն կիսում նրանց զգացմունքները և ապրումները: Այսպիսի հարաբերություններում գերակշռում է օտարացումը:

Հայրերի նկատմամբ աղջիկ դեռահասների գնահատականներում գերակշռում են ավտորիտարության և թշնամանքի սանդղակները: Հոր վերաբերմունքը գնահատելով թշնամական՝ աղջիկ դեռահասների մոտ նկատվում է հարաբերությունների կառուցման այնպիսի ոճ, որը տանում է հայրերի և դուստրերի միջև հուզական կապերի խախտման, ինչն էլ իր հերթին հանգեցնում է լարվածության աճի և դեռահասի հոգեկան վիճակի ու վարքագծի անկայունության: Հայրերին գնահատելով ավտոնոմ՝ դեռահաս աղջիկները նրանց ընդունում են որպես մարդու, ում հետ հնարավոր չէ համագործակցել կամ բանակցել: Դեռահասների ագրեսիվություն-

նը հանդիսանում է որպես ստեղծված փոխհարաբերություններում հարմարմանն ուղղված պաշտպանական հակազդում սեփական անձը հաստատելու, իր իրավունքներն ու ազատությունն ընդգծելու համար:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ դեռահասների և ծնողների փոխհարաբերություններում դիտարկվում է հոգեբանական անջրպետ, որն իր հերթին արգելում է մտերմիկ, հուզական կապերի զարգացումը, ինչը հանգեցնում է փոխադարձ անվստահության, դեռահասների հիմնախնդիրներին ծնողների անտեղյակության, դեռահասների օտարացման, հոգեբանական անվտանգության կորստի զգացման խորացման:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ սոցիալական տազնապի պայմաններում ապրող դեռահասների անձնային որակների հենքային բաղադրամասերի ձևավորման գործընթացը, որպես օրինաչափություն, վտանգված է:

Դիտարկվող հակազդումները, որոնք ուղղված են կյանքի ամենատարբեր իրավիճակների, դժվարությունների, կենսագործունեության տարբեր պայմանների, ինչպես նաև միջանձնային փոխհարաբերություններում կոնֆլիկտների հաղթահարմանը, բնութագրում են նաև սովորողների հոգեբանական անվտանգության պահպանմանն ուղղված գիտակցված ու չգիտակցված մոտիվների առանձնահատկությունները ( : Ելնելով հետազոտության արդյունքներում դիտարկվող բացասական երևույթների արտահայտվածության վտանգավոր միտումներ ունեցող բնութագրերից, միջանձնային հարաբերություններում դրսևորվող անձնային հակասական որակներից՝ կարող ենք եզրակացնել, որ հոգեբանական անվտանգության պահպանման գործընթացը շարունակական է, դինամիկ, և միևնույն ժամանակ այն ընթանում է սովորողների հարմարման ակտիվ գործընթացին զուգահեռ:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝  
13.02.2015

## ՊԵՐՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մ.Պ. Մկրտումյան, Արտակարգ պայմաններում մարդկանց կենսագործունեության և հոգեկան առողջության պահպանման առանձնահատկությունները, Երևան, 1999թ., 180 էջ:
2. Մ.Պ. Մկրտումյան, Ճգնաժամային իրավիճակներում կամային ինքնակարգավորման հոգեբանական մեխանիզմները (Կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները) միջբուհական գիտական հոդվածների ժողովածու: Երևան, 2007թ., էջ 71-80:
3. Вологодина Н.Г. Детские страхи днем и ночью. Ростов н/Д.:Феникс,2006.-224с.
4. Громбах С.М. Школа и психическое здоровье учащихся. М. Медицина. 1988. -272с .
5. Джинотт Х. Дж. Групповая психотерапия с детьми. Теория и практика игровой терапии. -М.:Апрель Пресс, изд-во ЭКСМО-Пресс, 2001. -272с.
6. Куликов Л. В. Психогигиена личности. Вопросы психологической устойчивости и психопрофилактики:Учебное пособие. -СПб.:Питер, 2004. -464с.
7. Почебут Л. Г., Маижне И.А. Социальная психология,Спб: Питер, 2010. -672с.
8. Раен А. А., Кудашов А.р., Баранов А.А. Психология Адаптации личности. СПб, 2006. -418с
9. Фролова С.В. Психология преодоления ситуации насилия в семье (Феноменология переживания и пути оказания психологической помощи). -СПб.:Речь, 2012. -112с.

## АДАПТАЦИЯ КАК ОСНОВНАЯ ФУНКЦИЯ ОБЕСПЕЧЕНИЯ ПСИХОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ УЧАЩИХСЯ В УСЛОВИЯХ СОЦИАЛЬНОГО НАПРЯЖЕНИЯ

**МЕЛЬС МКРТУМЯН**

*Армянской государственной педагогической университет имени Хачатура Абовяна заведующий кафедрой теории и истории психологии, доктор психологических наук, профессор*

**ЛИЛИТ МКРТУМЯН**

*Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна, доцент кафедры теории и истории психологии, кандидат психологических наук*

**АННА ГЕВОРГЯН**

*Ванадзорский государственный университет имени Ованеса Туманяна, преподаватель кафедры психологии и социологии, замдекана факультета педагогики*

В статье обсуждаются проблемы адаптации и психологической безопасности учащихся в условиях социального напряжения. Авторы рассматривают процесс адаптации как активное взаимодействие психофизиологических систем организма, вследствие чего координируется взаимодействие функциональных подсистем для сохранения целостности организма и процесса обеспечения психологической безопасности личности учащихся. Экспериментальным путем выявлена специфика поведенческих изменений, а также особенности половых и возрастных различий психологической безопасности учащихся.

Дата представления статьи: 13.02.2015

## ADAPTATION AS THE MAIN FUNCTION OF PSYCHOLOGICAL SAFETY PROVISION TO STUDENTS UNDER CONDITIONS OF SOCIAL TENSION

**MELS MKRTUMYAN**

*Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,  
Head of the Chair of Theory and History of Psychology  
Doctor of Psychological Sciences, Professor.*

**LILIT MKRTUMYAN**

*Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,  
Chair of Theory and History of Psychology,  
Candidate of Psychological Sciences, Associate Professor*

**ANNA GEVORGYAN**

*Vanadzor State Pedagogical Institute named after H. Tumanyan  
Department of Psychology and Sociology, Lecturer  
Deputy Dean of the Pedagogical Faculty*

The article discusses the problems of adaptation and psychological security of student individuals in conditions of social tension. The authors consider the adaptation process as an active interaction of psycho-physiological system of the organism, as a result of which functional subsystems of interaction are coordinated, so as to preserve the integrity of the organism and the process of ensuring psychological security of the student-individuals.

By experiment specificity of behavioral changes and also peculiarities of sex and age differences were revealed in the psychological safety of students.

Article submission date: 13.02.2015

ՇՓՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱՆՁԻ ԲԱԶԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՄՈՒՆՔ

Հոդվածում խոսվում է շփման մասին՝ որպես անձի բազային պահանջունք: Տրվում է շփման սահմանումը, առանձնացվում նրա տիպերը, ֆունկցիաները և տեսակները: Ադրադարձ է կատարվում շփման գաղափարի առաջացմանը փոքր պատմական էքսկուրսի տեսքով, ինչպես նաև մեծ ուշադրություն է դարձվում աշխարհի հեղինակավոր մասնագետների կարծիքներին: Դիտարկվում և վերլուծվում են նրանց կողմից առաջ քաշված հակասական գաղափարները:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** փսևդո-համապատասխանող, ասիմետրիկ-համապատասխանող, ռեակտիվ-համապատասխանող, փոխադարձ-համապատասխանող, ֆորմալ-դերային, աշխարհիկ շփում:

Մեր օրերում շփումն իր ավանդական իմաստով սկսում է աստիճանաբար դուրս մղվել կենցաղից. մարդ – մարդ շփումն իր տեղը գնալով զիջում է մարդ – տեխնիկա հարաբերություններին, ինչի արդյունքում մարդկանց միջև անձնական շփումը խիստ պակասում է: Մարդիկ իրար հետ շփվում են հեռախոսների, սոցիալական ցանցերի և այլ հեռակոմունիկացիոն միջոցներով: Արդյունքում թվում է, որ շփվում ենք իրար հետ, սակայն իրականում շփման պահանջունքը մեզանում մնում է չբավարարված, ինչը, բնականաբար, չի կարող չանդրադառնալ մեր հոգեկան աշխարհի, արժեհամակարգի միմյանց ընկալելու և մեզ՝ շրջապատում մատուցելու, այսինքն՝ ընդհանուր առմամբ մեր վարքի վրա: Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում շփումը, կամ ի՞նչու է այն մեզ համար այդքան կարևոր:

Նախ պետք է տալ այս գաղափարի

սահմանումը, որից հետո միայն անդրադառնալ նրա՝ անձի հոգեբանության վրա թողած ազդեցությանը: Հոգեբանության մեջ շփումը բնորոշվում է որպես երկու և ավելի մարդկանց փոխգործունեություն, որոնց միջև տեղի է ունենում ճանաչողական կամ աֆեկտիվ-գնահատողական (հուզական-գնահատողական) բնույթի տեղեկատվության փոխանակում [1, էջ 232]:

Կատարենք մի փոքր պատմական էքսկուրս. շփումը որպես հոգեբանական խնդիր սկսեց ձևավորվել 20-րդ դարի 20-30-ական թվականներին. հիշյալ ժամանակահատվածում այդ խնդրի ձևավորման աշխատանքները զուգահեռաբար կատարվում էին աշխարհի գրեթե բոլոր աշխարհամասերում: Այս խնդրի լուսաբանման առաջին փորձառուներից էր ռուս հայտնի հոգեբան, Ռուսաստանում ռեֆլեքտոլոգիայի հիմնադիր Վ.Մ. Բեխտերյևը, ով գրել է, որ շփումը ծառայում է որպես մարդկանց՝ խմբերում միավորելու մեխանիզմ և անձի սոցիալականացման պայման: Նա տարանջատել է շփման երկու յուրահատուկ տիպ՝ ներշնչում և ընդօրինակում [2, էջ 8]: Վ.Մ. Բեխտերյևը շփման ժամանակ մի մարդու՝ մյուսի վրա ազդելու գործընթացում առանձնահատուկ դեր է հատկացրել գաղափարների, զգացումների և զգացումների անգիտակցական ներշնչմանն առանց համոզմունքների և ապացույցների տրամաբանական ձևերի [3, էջ 16-21]: Շփման մնացյալ տիպերին կանդրադառնանք ներքոշարադրյալում, սակայն մինչ այդ, ավելի հասկանալի լինելու համար, հիշատակենք շփման մի քանի սահմանումներ:

Հոգեբան Ա. Վոլկովան իր «Շփման հոգեբանություն» գրքում տալիս է հետևյալ սահմանումը. «Շփումը – բարդ և բազմակողմանի գործընթաց է, որը նույն ժամանակահատվածում կարող է հանդես գալ և՛ որպես մարդկանց՝ միմյանց հանդեպ հարաբերության գործընթաց, և՛ որպես միմյանց վրա ազդեցության գործընթաց, և՛ որպես միմյանց փոխադարձ հասկանալու, միմյանց ապրումները կիսող գործընթաց»: Նա նշում է, որ հոգեբանության մեջ բացակայում է շփման ընդունված միասնական սահմանումը: Որպես կանոն՝ տրվում է նկարագրող սահմանում, որը մատնանշում է հիմնականում շփման կողմերը կամ ֆունկցիաները [4, էջ 50–51]:

Շփումը կարելի է դիտարկել որպես կոմունիկացիա, սուբյեկտների փոխգործակցության յուրահատուկ ձև կամ գործունեություն: Գաղտնիք չէ, որ անգլալեզու մշակույթում «շփում» բառ գոյություն չունի, դրան փոխարինում է «կոմունիկացիա» բառը: Այդ իսկ պատճառով արևմտյան հրապարակումներում խոսվում է միայն կոմունիկատիվ գործընթացների մասին, որի հետևանքով մեզ մոտ կարող է առաջանալ «շփում» և «կոմունիկացիա» բառերի հոմանիշ լինելու միտքը: Ռուս հոգեբան Վ.Ի. Ֆեֆելովան իր աշխատություններից մեկում նշում է, որ «շփում» բառի մեջ ներդրված է ավելի անձնական, գրուցակիցների հոգևոր կապ, իսկ «կոմունիկացիան» ենթադրում է ավելի գործնական, սուբյեկտների փոխգործակցության ռացիոնալ գաղափարական ուղղվածություն [5, էջ 34]: Նա ենթադրում է, որ վերոհիշյալ երկու գաղափարների փոխհարաբերությունը տարբեր է, մասնավորապես՝ ընդհանուրի հարաբերություն (կոմունիկացիա) և մասնավորի հարաբերություն (շփում): Ոչ միշտ են կոմունիկացիաների տեսակները հանդիսանում շփում, սակայն ցանկացած շփում հանդիսանում է կոմունիկացիայի մասնավոր ձև: Կոմունիկացիա ասելով՝ հասկանում ենք երկու

համակարգերի համագործակցություն, որի ընթացքում մի համակարգից մյուսին փոխանցվում է տեղեկատվություն կրող ազդանշան: Կոմունիկացիան բնորոշ է և՛ տեխնիկական համակարգերին, և՛ մարդ-տեխնիկա փոխհարաբերությանը, և՛ մարդկանց փոխհարաբերությանը: Վերջին տեսակը վերաբերում է շփմանը:

Անդրադառնանք շփմանը՝ որպես սուբյեկտների փոխգործակցության յուրահատուկ ձևի: Հաճախ շփումը հասկացվում է որպես սուբյեկտների փոխգործակցություն: Բ.Ֆ. Լոմովը դիտարկում է շփումը որպես մարդու՝ այլ անձանց հետ փոխգործակցության ձև: Ոչ անմիջական կենդանի շփումը ենթադրում է, համաձայն Կ.Ս. Ստանիսլավսկու խոսքերի, «հանդիպակաց հոսանք»: Նրա յուրաքանչյուր ակտում շփվող մարդկանց գործողությունները միավորված են նոր որակներ ունեցող (համեմատած մասնակիցներից յուրաքանչյուրի առանձին գործողությունների հետ) ինչ-որ ամբողջության մեջ: Շփման «միավոր» են հանդիսանում դիրքորոշումների, պատկերացումների, տեսակետների փոխհարաբերություններն արտահայտող ինքնատիպ ցիկլերը, որոնք շատ ինքնատիպ ուղիղ և անուղղակի փոխակերպվում են շրջանառվող տեղեկատվության հոսքում: Այսպիսով՝ շփման կատեգորիան ընդգրկում է հարաբերությունների հատուկ դաս, մասնավորապես՝ «սուբյեկտ-սուբյեկտ» փոխհարաբերությունը: Այդ փոխհարաբերությունների վերլուծության արդյունքում բացահայտվում են ոչ թե այս կամ այն սուբյեկտի գործողությունը կամ իրար նկատմամբ ազդեցությունը, այլ իրենց փոխհարաբերությունների գործընթացը, որում հայտնաբերվում է օժանդակություն (կամ հակազդեցություն), համաձայնություն (կամ հակասություն) և այլն [6, էջ 249]: Սակայն կան հոգեբաններ, որոնք յուրովի են մոտենում շփմանը և փոխգործակցությանը՝ դիտարկելով վերջինս միայն որպես շփման կողմերից մեկը:

Ռուս սոցիալական հոգեբան և սոցիոլոգ Գ.Մ. Անդրեևսն շփման մեջ առանձնացնում է պերցեպտիվ, կոմունիկատիվ և ինտերակտիվ երեք փոխկապակցված կողմեր: Շփման պերցեպտիվ կողմը կազմված է գրուցակիցների՝ իրար ընկալումից և այդ հիմքի վրա փոխըմբռնման հաստատումից, կոմունիկատիվ կողմը՝ գրուցակիցների միջև տեղեկատվության փոխանակումից, իսկ ինտերակտիվ կողմը՝ գրուցակիցների միջև փոխգործակցության կազմակերպումից: Այս գաղափարի հեղինակը պնդում է, որ հիշյալ կողմերն իրական շփման ժամանակ արտահայտվում են միասին այս կամ այն աստիճանի ընդգծվածությամբ: Շփման կողմերի առանձնացումը հնարավոր է միայն որպես վերլուծության հնարք, որքան էլ ջանանք առանձնացնել «մաքուր» կոմունիկացիա առանց ընկալման և փոխգործակցության, կամ «մաքուր» ընկալում [7, էջ 64-90]:

Կլինիկական հոգեբան Էդվարդ Է. Ջոունսը և հոգեվերլուծաբան Հարոլդ Բ. Ջերարդը, հիմք ընդունելով միմյանց հակազդումների համապատասխանության գաղափարը, առանձնացրել են փոխգործակցության 4 տիպեր՝

- փսևդո-համապատասխանող.
- ասիմետրիկ-համապատասխանող.
- ռեակտիվ-համապատասխանող.
- փոխադարձ-համապատասխանող:

Հակիրճ անդրադառնանք վերոհիշյալ տիպերից յուրաքանչյուրին. փսևդո-համապատասխանող կոչվում է այն փոխգործակցությունը, երբ գրուցակիցներից ոչ մեկը ուշադրություն չի դարձնում դիմացինին՝ բացառելով խոսելու ժամանակի հարցը: Այդպիսի օրինակ է հանդիսանում խաղերի ժամանակ միասնական ծիսակարգերի կատարումը, ինչպիսիք են՝ հանդիպումը, բաժանումը, ողջունումը, պաշտոնական արարողությունների ժամանակ փոխգործակցությունը:

Ասիմետրիկ-համապատասխանող

փոխգործակցության ժամանակ մասնակիցներից մեկն է ունենում գործողությունների պլան, այն դեպքում, երբ մյուս մասնակիցը կարող է միայն արձագանքել դիմացինի գործողություններին՝ ունենալով սեփական նախաձեռնությունները իրականացնելու խիստ սահմանափակ հնարավորություններ: Այսպիսի օրինակ կարող է հանդիսանալ դասավանդումը, հարցազրույցը:

Ռեակտիվ - համապատասխանող փոխգործակցությունն ենթադրում է, որ մասնակիցներից յուրաքանչյուրն արձագանքում է միայն դիմացինի վերջին գործողությանը՝ չունենալով փոխգործակցության սեփական պլան, ինչպես դա լինում է ոչ կապակցված, անկանոն գրույցների ժամանակ, երբ գրուցակիցները մի թեմայից անցնում են մեկ ուրիշի: Այսպիսի փոխգործակցությունը սահմանափակ է հասարակության մեջ ընդունված ընդհանուր և մասնավոր կանոններով, որը թելադրում է տվյալ իրավիճակը: Վերը շարադրածից կարող ենք ասել, որ մարգարահիլձում «ռեակտիվ» զրույցը տարբերվում է քաղաքական ակումբում տեղի ունեցող «ռեակտիվ» զրույցից:

Փոխադարձ-համապատասխանող փոխգործակցությունն ենթադրում է մասնակիցների մոտ առկա նպատակ և պլան, ինչպես նաև միմյանց գործողությունների հանդեպ արձագանք: Այսպիսի օրինակ են հանդիսանում բանակցությունները կամ գիտական բանավեճերը:

Ամերիկյան հոգեբաններ Ստեյնբերգը և Միլլերը վերլուծել են փոխգործակցությունը նույն դիրքերից՝ մասնակիցների համար առանձնացնելով երկու հիմնական հնարավոր կողմնորոշումներ՝ հսկողության և հասկացողության: Հսկողության կողմնորոշումը ենթադրում է իրավիճակի և դիմացինների վարքի հսկողության, կառավարման ձգտում, իսկ հասկացողության կողմնորոշումն իր մեջ ներառում է ուրիշների վարքը և իրավիճակը հասկանալու ձգտում: Հե-

ղինակները մատնանշում են, որ վերոհիշյալ երկու կողմնորոշումները շատ հաճախ գոյակցում են, կարող են հասվել, նրանց միջև սահմաններ չկան: Այս երկու կողմնորոշումների առանձնացման վերլուծությունը թույլ է տալիս շոշափել շփման որոշակի հետաքրքիր օրինաչափություններ: Այդպիսով՝ «հսկողները» և «հասկացողները» զրույցի ժամանակ ունենում են խոսելու և լռելու ամբողջովին տարբեր ռազմավարություններ. «հսկողները» հաճախ խոսում են ավելի շատ, քան այլ զրուցակիցները, նրանք, կարծես թե, փորձում են մոնոպոլիզացնել ազդեցությունը, ամբողջովին կապել այն իրենց թեմաների և նպատակների հետ, իսկ «հասկացողները» սովորաբար լռում են, լսում են, դիտում են, փորձում են հասկանալ [8, էջ 157-159]:

*Շփումը որպես գործունեություն.* Բ.Ֆ. Լոնովը գրում է, որ լայն տարածում է գտել շփումը որպես գործունեություն արտահայտությունը: Շփումը դիտարկվում է որպես «գործունեության ձևերից» մեկը, որպես «շփման գործունեություն», «կոմունիկատիվ գործունեություն»: Մասնավորապես՝ հաճախ նրան սահմանում են ոչ թե որպես գործունեության, այլ որպես «գործունեության պայմանի» կամ որպես նրա « գործունեության կողմի» [5, էջ 245]: Հայտնի հոգեբան և լինգվիստ Ա.Ա. Լեոնտևը գտնում է, որ շփումը գործունեության հատուկ տեսակ է և հանդես է գալիս որպես կոմպոնենտ, բաղկացուցիչ մաս (միաժամանակ պայման) այլ ոչ կոմունիկատիվ գործունեության: Այս գաղափարները կիսել են Ա.Վ. Մուրրիկը, Վ.Մ. Ցելույկոն և այլք, ինչպես նաև հակադարձել են մի շարք հոգեբաններ՝ Լ.Մ. Արխագելսկին, Դ.Ի. Դուբրովսկին, Վ.Գ.Աֆանասևը և այլք [9, էջ 19]:

Շփումն առավել ամբողջական բնութագրելու համար դիտարկենք նրա տիպերը: Ամենաընդհանուր դասակարգումը հանդիսանում է անմիջական և միջնորդավորված շփումը. *անմիջական*՝ առանց միջնորդների ուղիղ շփում, *միջնորդա-*

*վորված*՝ եթե այն պայմանավորված է արտաքին գործոններով: Դա կարող է լինել նախորդող սերունդների փորձը, զանգվածային կոմունիկացիաների տեխնիկական միջոցները: Մենք ապրում ենք հասարակության մեջ և մեզանից յուրաքանչյուրը կատարում է բազմաթիվ ֆունկցիաներ՝ ծառայողական (պետ, ենթակա, ուսանող, բժիշկ, դատավոր), ընտանեկան (մայր, հայր, ամուսին, կին, դուստր, որդի, եղբայր) և այլն:

Սոցիալական ֆունկցիաներով պայմանավորված շփումը կանոնակարգված է ինչպես բովանդակությամբ, այնպես էլ ձևով: Այդպիսի շփումն անվանում են ֆորմալ: Այս դեպքում զրուցակիցները կարող են միմյանց մասին ոչինչ չիմանալ, քանի որ դրա անհրաժեշտությունը չկա. զրուցակցի անձն իմանալու փոխարեն վերլուծում են նրա սոցիալական դերի մասին տեղեկատվությունը: Ֆորմալ շփմանը հակառակ գոյություն ունի ոչ ֆորմալ շփումը: Դա ավելի շատ հագեցած է անձնական իմաստով, պայմանավորված է այնպիսի անձնական հարաբերություններով, որոնք հաստատվել են զրուցակիցների միջև: Ոչ ֆորմալ շփման բարձր ձևն ընկերությունն է [10, էջ 15-16]:

Կախված շփման ժամանակ օգտագործվող տեխնիկաներից և նպատակներից կարելի է առանձնացնել հետևյալ տիպերը.

ա. *Ֆորմալ-դերային շփում.* կանոնակարգված է և՛ պարունակությունը, և՛ շփման միջոցները զրուցակիցների սոցիալական դերերով՝ հսկիչ և գնացքի ուղևոր, ոստիկան և օրինախախտ, հոգեբան և հաճախորդ:

բ. *Աշխարհիկ շփում.* որոշվում է ֆորմալ ջերմությամբ: Յուրահատկությունն այն է, որ մարդիկ գրեթե չեն շփվում, խոսում են ոչ թե այն, ինչ մտածում են, այլ այն, թե ինչ է պետք ասել նմանատիպ իրավիճակներում: Մարդկանց կարծիքները այս կամ այն հարցի շուրջ չունեն ոչ մի նշանակություն և չեն որոշում կոմունիկացիաների բնույթը: Աշխարհիկ շփում-

մը կրում է ծիսակարգային բնույթ:

գ. «Դիմակների կոնսրակտ». ֆորմալ շփում, որի ընթացքում բացակայում է հասկանալու և գրուցակցի անձնային առանձնահատկությունները հաշվի առնելու ձգտումը: Շփման այս գործընթացում օգտագործվում են քաղաքավարության, խստության, անտարբերության, մասնակցության և այլ դիմակներ, այսինքն՝ դեմքի արտահայտություն, ժեստեր, ստանդարտ արտահայտություններ, որոնք թույլ են տալիս քողարկել գրուցակցի հանդեպ վերաբերմունքը: Որոշ դեպքերում դիմակների կոնտակտն անհրաժեշտ է, որպեսզի անձը չունենա անձնական շփում դիմացի հետ:

դ. Միջանձնային հոգևոր շփումը. մարդկանց միջև բացահայտում է անձի խորքային համակարգը: Հոգևոր շփումը բնութագրվում է մարդկանց միջև փոխըմբռնումով, իսկ նրա հիմքում ընկած է գրուցակցի հանդեպ վստահությունը:

ե. Մանիպուլյատիվ շփում. ուղղված է գրուցակցից միակողմանի օգուտ քաղելուն՝ օգտագործելով ազդեցության մանիպուլյատիվ տեխնիկաներ՝ շողոքորթություն, սուտ, ուժի, թուլության, բարության ցուցադրություն, ահաբեկում գրուցակցի վրա՝ կախված նրա անձնային հատկանիշներից:

զ. Գործնական շփում. ուղղված է մարդկանց ջանքերի համախմբմանը և համաձայնեցմանը՝ ընդհանուր արդյունքի հասնելու և հարաբերությունների կարգավորման նպատակով [11, էջ 634-635]:

Ձեզ մոտ կարող է հարց ձագել, թե որն է շփման ֆունկցիան: Նշեմ, որ շփման ֆունկցիա ասելով՝ հասկանում են այն դերերն ու խնդիրները, որոնք ստանձնում է շփումը մարդու կենցաղում: Շփման ֆունկցիաները բազմազան են և գոյություն ունեն դասակարգման տարբեր հիմքեր: Դասակարգման ընդունված հիմքերից են շփման փոխկապակցված երեք կողմերը կամ բնութագրերը.

ա. *պերցեպտիվ*՝ շփման ընթացքում

մարդկանց՝ միմյանց ընկալելու և հասկանալու գործընթաց,

բ. *տեղեկատվական*՝ տեղեկատվության փոխանակման գործընթաց,

գ. *ինտերակտիվ*՝ շփման ընթացքում փոխգործողության գործընթաց:

Վերոհիշյալին համապատասխան՝ առանձնացվում են աֆեկտիվ-կոմունիկատիվ, տեղեկատվական կոմունիկատիվ և կանոնավոր – կոմունիկատիվ շփման ֆունկցիաներ.

1. *աֆեկտիվ-կոմունիկատիվ (պերցեպտիվ) ֆունկցիայի* հիմքում ընկած է դիմացինին ընկալելը և հասկանալը, որն ուղղված է մարդու հոգեկան ոլորտի կարգավորմանը, քանի որ շփումը հանդիսանում է մարդու հուզական վիճակի կարևոր դետերմինանտ: Անձի հուզական յուրահատկությունների ամբողջ սպեկտրը առաջանում և զարգանում է մարդկանց շփման ժամանակ. կատարվում է կամ հուզական վիճակների մոտեցում, կամ բևեռացում, փոխադարձ ուժեղացում կամ թուլացում:

2. *տեղեկատվական – կոմունիկատիվ ֆունկցիան* երկու անհատների միջև ցանկացած ձևի տեղեկատվության փոխանակումն է: Մարդկային շփման ժամանակ տեղեկատվության փոխանակումն ունի իր առանձնահատկությունը. կատարվում է երկու անհատների միջև, որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում է ակտիվ սուբյեկտ. նա անպայման ենթադրում է գրուցակիցների մտքերի, զգացմունքների և վարքի փոխգործակցություն:

3. *կանոնավոր – կոմունիկատիվ (ինտերակտիվ) ֆունկցիան* մարդկանց փոխգործակցության ընթացքում միասնական գործունեության ժամանակ վարքի կարգավորումն է և անմիջական կազմակերպումը: Այդ գործընթացում մարդը կարող է ազդել մոտիվների, ծրագրերի, նպատակների, գործողությունների կատարման և հսկողության, որոշումների ընդունման վրա, այսինքն՝ իր գրուցակցի գործողությունների ամբողջ պարու-



նակության վրա, այդ թվում փոխադարձ ստիճանակալի և վարքի կորեկցիայի վրա [12, էջ 126-127]:

Կարծում ենք, որ այս ամենից զատ, շատ կարևոր է հասկանալ շփման նպատակը: Վերջինս կարող է լինել ֆունկցիոնալ և օբյեկտային: Շփման ֆունկցիոնալ նպատակ կարող են հանդիսանալ՝

- այլ մարդու օգնություն ցույց տալը.
- օգնության ստացումը.
- գրուցակցի, համատեղ խաղի մասնակցի, գործընկերոջ փնտրումը.
- անձի փնտրումը, որը կարող է հասկանալ, կարեկցել, գովել.
- ինքնաարտահայտումը (շփումը նրանց հետ, ովքեր հնարավորություն են տալիս ցուցադրելու ուժ, խելք, կարողություններ, ընդունակություններ).
- այլ անձին (անձանց) սեփական կամ համամարդկային արժեքներ (*ուսում, դաստիարակություն*) հրամցնելը.
- դիմացինի կարծիքի, մտադրությունների, վարքի փոփոխություն:

Օբյեկտային նպատակները կապված են գրուցակցի ընտրության հետ [9, էջ 34]:

Որպես հողվածի եզրափակիչ մաս՝ անդրադարձ կատարենք նաև շփման և անհատի խառնվածքի փոխկապակցվածությանը:

Անձի խառնվածքի հետ կապված անհատական առանձնահատկությունները թողնում են իրենց ձեռագիրը շփման պրոցեսի ընթացքում: Այդ իսկ պատճառով կարևոր է դիտարկել շփման առանձնահատկությունները տարբեր խառնվածքներ ունեցող գրուցակիցների միջև: Դիտարկելով խառնվածքը՝ մենք նկատի ունենք շփման ընթացքում գրուցակցի հետ կառուցողական կողմը. մարդու բարոյական հիմքերը պայմանավորված են իր բնավորությամբ: Այսպիսով՝ ուսումնասիրելով սեփական խառնվածքի և բնավորության ուժեղ և թույլ կողմերը, հնավարավորություն կստեղծվի հասկանալ և ռեֆլեքսների աստիճանի հասցնել վարքը, այսինքն՝ անհատը կստ-

վորի կառավարել ինքն իրեն, իր հույզերը և արարքները:

#### *Շփում և խառնվածք:*

Կոմունիկատիվ որակների զարգացվածության աստիճանը մեծամասամբ կանխորոշվում է խառնվածքի առանձնահատկություններով, որոնք կազմում են անձի անհատական հատկանիշները: Խառնվածք անվանում են այն հատկությունների համախումբը, որոնք բնութագրում են անձի վարքի և հոգեկան գործընթացների դինամիկ առանձնահատկությունները՝ ուժը, առաջացման արագությունը, դադարումը և փոփոխությունը:

Խառնվածքն ունի իր զգալի ազդեցությունը անձի բնավորության և վարքի ձևավորման գործում, որոշում է նրա արարքները, անհատականությունը, այլ անձանց հետ հարաբերությունների առանձնահատկությունները: Խառնվածքն է որոշում անձի դինամիկությունը, սակայն չի բացահայտում նրա համոզմունքները, հայացքները, հետաքրքրությունները, ունակությունները:

Չկան լավ կամ վատ խառնվածքներ: Յուրաքանչյուրն ունի իր դրական կողմերը, այդ պատճառով գլխավոր ջանքերը պետք է ուղղված լինեն ոչ թե նրա փոփոխման, որը հնարավոր չէ ձեռքբերովի չլինելու պատճառով, այլ նրա առավելությունների խելամիտ օգտագործմանը հստակ գործունեության ժամանակ [2, էջ 116-117]

Ռուս մեծանուն գիտնական, ֆիզիոլոգ Ի.Պ. Պավլովը կատարել է խորը ուսումնասիրություններ բարձրագույն նյարդային գործունեության տիպերի վերաբերյալ, որը ստեղծել է գիտականան հիմք՝ խառնվածքը հասկանալու համար: Վերոհիշյալ գիտնականը փորձարարության միջոցով հայտնաբերել է նյարդային գրգռվածության և արգելակման գործընթացների երեք հատկություններ՝

- նյարդային գործընթացների ուժը. որոշում է նյարդային համակարգի դիմացկունությունը, մարդու աշխատու-

նակությունը, տարբեր աստիճանի ծանրաբեռնվածությունների փոխադրումը նյարդային համակարգի վրա.

- հավասարակշռությունը. բնորոշում է գրգռվածության և արգելակման գործընթացների հարաբերակցությունը.

- շարժունակությունը. որոշում է նյարդային գործընթացների ի հայտ գալու և փոփոխվելու արագությունը:

Պավլովը նյարդային գործընթացներն, ըստ ուժգնությամբ, տարանջատել է երկու մասի՝

ա) ուժեղ նյարդային համակարգ՝ անհավասարակշիռ (*խոլերիկ*)

հավասարակշռված՝ շարժուն (*սանագ-վինիկ*) և չեզոք (*ֆլեգմատիկ*)

բ) թույլ նյարդային համակարգ (*մեյնսխոլիկ*) [12, էջ 116-124 ]:

Կախված մարդու խառնվածքից և բնավորությունից՝ առանձնացվում է նաև շփման մեջ մտնելու մարդկանց հետևյալ մոտիվացիաները՝

**Աֆֆիյացիա:** Աֆֆիյացիան մարդու պահանջմունքն է, որն արտահայտվում է նրա մշտապես մարդկանց հետ լինելու, նրանց հետ դրական փոխհարաբերություններ հաստատելու և պահպանելու ցանկության և ձգտման մեջ: Աֆֆիյացիայի մեջ առանձնացնում են երկու կողմ, որոնցից մեկը կապված է ընդունված լինելու ձգտման հետ՝ աֆֆիյացիայի դրական կողմը, իսկ մյուսը՝ մերժված լինելու վախ՝ աֆֆիյացիայի բացասական կողմը: Ընդ որում այս պահանջմունքի հիմքը համարվում է մերժված լինելու վախը: Հենց դրա համար էլ մարդիկ ձգտում են այլ մարդկանց կողմից լինել ընդունված: Այդ պատճառով էլ աֆֆիյացիայի պահանջմունքը (ընդունված լինելու ձգտում) և մերժվելու վախը կապված են միմյանց հետ, սակայն այն ուղղակի կապ չէ, այլ հակադարձ է. ինչքան քիչ է մերժված լինելու վախը, այնքան շատ է արտահայտված ընդունված լինելու ձգտումը, և հակառակը: Այլ հետազոտողներ խոսում են աֆֆիյացիայի այս երկու կողմերի ինքնուրույնության մասին, քանի որ ընդուն-

ված լինելու և մերժման վախի պահանջմունքի կորելյատները տարբեր են:

**Օստրակիզմ:** Օստրակիզմը մարդուն չընդունելը կամ արհամարելն է: Այն գրկում է մարդուն իր աֆֆիյացիայի պահանջմունքը իրացնելուց: Օստրակիզմը սոցիալական վարքի կարգավորման դեր է խաղում: Մարդիկ օստրակիզմին արձագանքում են վատ տրամադրությամբ, նյարդայնությամբ, հարաբերությունների վերականգնման կամ վերջնականապես՝ խզման փորձերով:

Մարդու հետ չխոսել՝ նշանակում է նրա նկատմամբ դրսևորել հուզական դաժանություն և գործի դնել ամենասարսափելի զենքը: Այսպիսին է այն մարդկանց կարծիքը, որոնք ենթարկվել են օստրակիզմի:

Նույնիսկ անծանոթ մարդկանց կողմից արհամարանքը (օրինակ, երբ մարդը հայտնվում է անծանոթ շրջապատում կամ նրա էլեկտրոնային նամակը մնում է անպատասխան) առաջացնում է բացասական ապրումներ:

Նորածնի զարգացող հոգեկանի վրա մեծերի ուշադրությունն ազդում է լավագույն կերպով: Երեխային կանոնավոր կերակրում, լողացնում, տակդիրը փոխում են, բայց առանց փաղաքշական խոսքերի: Երեխայի անհամբեր սպասումը թեկուզ մեկ հայացքի, թույլ ժպիտի չի իրականանում: Չեք խաղում նրա հետ, երգ չեք երգում, չեք գրկում կամ զբաղեցնում՝ մտածելով որ հանգիստ պառկած է, ինչ կարիք կա, չէ որ կուշտ է, մաքուր: Հետո տեսնում ենք՝ ա՛յ քեզ փորձանք, երեխան չափից դուրս հանգիստ է, նույնիսկ թուլացած, շրջապատին անհաղորդ. նրա զարգացումը հապաղել է մեծահասակների անտարբերությունից:

Վերջ ի վերջո, հետազոտությունները ցույց են տվել, որ որոշ մանկական հաստատություններում մահացությունների բարձր ցուցանիշը ոչ թե վատ խնամքի հետևանք է, այլ ավելի շատ փաղաքշանքի և շփման պակասի [14, էջ 12-13 ]:

**Մենություն:** Մենությունն բառը և փի-

լիստփայության, և հոգեբանական գրականության մեջ միանշանակ չի մեկնաբանվում: Օ.Ն.Կուզնեցովը և Վ.Ի. Լեբեդևը այն համարում են սենսորային դեպրիվացիա: Ա.Մասլուն, Ի.Յալունը, Յ.Մ.Շվաբը և Օ.Վ.Դանչեվան բացատրում են այս հասկացությունը մեկուսացվածությամբ և առանձնացվածությամբ: Մարդը սպասում է, որ իր անհատականությունը կհասկանան ու կնդունեն, զգում է սիրո պահանջ: Եթե սա տեղի չի ունենում, նա գիտակցում է՝ շրջապատից իր օտարված լինելը, և ապրում է այն՝ որպես մենություն:

Դ. Ռաադշելդերսն առանձնացնում է հուզական մենության հետևյալ տեսակները.

- անհույս միայնակներ, մարդիկ, որոնք բավարարված չեն իրենց հարաբերություններով և ունեն դատարկության, լքվածության, անապահովվածության զգացողություն.

- պարբերաբար և ժամանակավորապես միայնակներ. մարդիկ, որոնք օժտված են ավելի շատ սոցիալական ակտիվությամբ.

- պասիվ կայուն միայնակներ. մարդիկ, որոնք համակերպվել են միայնության հետ և հոգնել են նրանից.

Մարդիկ, որոնք միայնակ չեն (որոնք չունեն նման զգացողություն), նրանց մոտ կարող է առանձին դեպքերում դիտվեն սոցիալական մեկուսացման դեպքեր, որոնք կրում են կամավոր և չձանձրացնող բնույթ:

Միայնությունը միշտ կապված է հասարակության հետ կապերի չբավարարվածության զգացման հետ: Միայնակները, սովորաբար, այնքան էլ չեն սիրում ուրիշներին, հատկապես՝ շփվողներին ու երջանիկներին, որոնք իրենց պահվածքով նրանց մոտ առաջացնում են պաշտպանողական ռեակցիա՝ դրանով բարդացնելով նրանց շփումը մյուսների հետ: Միայնակները կենտրոնացված են իրենք իրենց վրա, իրենց խնդիրների ու ապրումների վրա: Նրանց համար բնու-

թագրական է տագնապայնությունը:

Միայնակ մարդկանց մոտ բարձր է ինքնաքննադատողականությունը, ունեն ցածր ինքնագնահատական, իրենց զգում են անպետք, ոչ կոմպետենտ, չսիրված: Նրանք շատ քիչ են վստահում ուրիշներին, ինչն արտահայտվում է նրանում, որ դժվարությամբ են ընդունում իրենց հասցեին արված հաճոյախոսությունը:

Մարդու՝ իր միայնության արձագանքը կախված է նրանից, թե ինքն ինչով է բացատրում իր միայնակ լինելը: Վերահսկման ներքին անկյուն, որի դեպքում մարդը համարում է, որ այն, ինչ իր հետ տեղի է ունենում, միակ պատճառն ինքն է և այս տիպի միայնակների մոտ հաճախ առաջանում է դեպրեսիա, իսկ վերահսկման արտաքին անկյան պարագայում, երբ ամեն ինչ բարդվում է արտաքին աշխարհի վրա, առաջանում է ագրեսիա: Այդ պատճառով, միայնակ մարդը հակված է կամ հնազանդության կամ թշնամանքի [9, էջ 194-204 ]:

Շփման պահանջումնքը, ինչպես ցույց տվեց մի շարք հեղինակների հետազոտությունների վերլուծությունը, համարվում է մարդու հիմնական (բազային) պահանջումնք: Շփման պահանջումնքը բազային պահանջումնք է համարվում նաև այն բանի պատճառով, որ «Այն թելադրում է մարդու վարքը ոչ պակաս, քան, օրինակ, այսպես կոչված, վիտալային (կենսական) պահանջումնքները» [6, էջ 253]: Շփումն անհրաժեշտ է մարդուն՝ որպես հասարակության լիիրավ անդամի և որպես անհատականության, նորմալ զարգանալու համար. շփումը մարդու հոգեկան և ֆիզիկական առողջության նախապայմանն է: Այդ իսկ պատճառով, որքան էլ զարգանան տեղեկատվական, հեռակոմունիկացիոն տեխնոլոգիաները, մարդ-մարդ շփումը չպետք է առօրյայում զիջի իր տեղը մարդ-տեխնիկա հարաբերություններին:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝  
30. 03.2015

## ՊՐԱՇԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Зинченко В.П., Мещерякова Б.Г. Психологический словарь. — М.: Педагогика-Пресс, 1999
2. Бехтерев В.М. Коллективная рефлексология.- Колос, 1921
3. Бехтерев В.М. Внушение и его роль в общественной жизни.-К.Л.Риккера, 1903
4. Волкова А. И. Психология общения. – Ростов-на-Дону, 2007
5. Фефелова В.И. Понятия «общение», «коммуникация» и «коммуникативная культура» в философском аспекте//Прикладная психология и психоанализ.-Москва, 2007
6. Ломов. Б.Ф.Методологические и теоретические проблемы психологии.-Наука, 1984
7. Андреева Г.М. Социальная психология. – Москва, 2001
8. Крижанская Ю.С., Третьяков В.П. Грамматика общения.-Ленинград, 1990
9. Ильин. Е.П. Психология общения и межличностных отношений.-Питер, 2014
10. Леонов Н.И. Психология делового общения. – Москва-Воронеж, 2005
11. Столяренко Л.Д. Основы психологии. – Ростов на Дону: Феникс, 1997
12. Лавриненко В.Н. Психология и этика делового общения – Юнити, 2005
13. Ефимова Н.С. Психология общения.-Ид «Форум» – Инфра-М, 2012
14. Войскунский А.Е. Я говорю, мы говорим: Очерки о человеческом общении –Москва, 1982

## ОБЩЕНИЕ КАК БАЗОВАЯ ПОТРЕБНОСТЬ ЧЕЛОВЕКА

**АРТЕМ ГЕВОНДЯН**

*Ереванский государственный университет,  
кафедра общей психологии, соискатель*

В статье рассматривается категория общения как базовая (основная) потребность человека. Дается определение общения, выделяются его виды, функции и типы. Идея формирования общения приводится в виде небольшого исторического экскурса. Большое внимание уделено мнению ведущих мировых экспертов. Рассматриваются и анализируются выдвинутые ими спорные идеи.

Дата представления статьи: 30.03.2015

## COMMUNICATION AS A BASIC NEED OF A PERSON

**ARTYOM GHEVONDYAN**

*Yerevan State University  
Applicant at the department of General Psychology*

This article is about communication as a basic (main) need of a person. The definition for communication is formulated, its types, functions and classes are differentiated. Reference is made to the origin of the concept of communication in a form of a small historical excursus as well as a great attention is drawn to the opinions of the world's leading experts. Contradicting ideas put forward by them are considered and analyzed.

Article submission date: 30.03.2015

**ՄԱՐԴՈՒ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.  
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՍԴԵԿՏՆԵՐԸ**

Մարդու և բնության փոխգործակցությունը բարդ և դինամիկ միասնության մեջ գտնվող գործընթաց է: Այդ փոխհարաբերությունների նկատմամբ ինչպես գիտական, այնպես էլ բնության գործոններով (հիվանդություններ, կլիմայական պայմաններ և այլն) պայմանավորված մարդու կախվածության վերաբերյալ պատկերացումներն ու հետաքրքրությունները մշտապես դրսևորվում են իրենց արդիականությամբ: Եվ պատահական չէ, որ մարդու վրա շրջակա միջավայրի ազդեցության վերաբերյալ Հիպոկրատյան տեսությունը իրեն արդիականությամբ շարունակում է մնալ բոլոր ժամանակների գիտնականների հետազոտությունների կիզակետում:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** մարդու և բնության փոխներգործություն, էկոլոգիական գիտակցություն, հուզական լարվածություն, տարերային աղետ:

Ժամանակակից գիտության մեջ մարդու և բնության փոխգործակցության հիմնախնդրի հոգեբանական ասպեկտները դիտարկվում են հետևյալ ուղղություններով՝

- 1) մարդու էկոլոգիական գիտակցության և բնության հանդեպ նրա սուբյեկտիվ վերաբերմունքի հետազոտության տեսանկյունից.
- 2) բնածին և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների պայմաններում մարդու հոգեպատոլոգիական հետևանքների հետազոտության բնագավառում:

Էկոլոգիական գիտակցության յու-

րահատկությունների և դինամիկայի՝ բնության հանդեպ մարդու սուբյեկտիվ վերաբերմունքի հարցերին շարքային անդրադարձ է կատարվել պրոֆեսորներ Ս. Դ. Դերյաբոյի և Վ. Ա. Լևինի կողմից (Դերյաբոյ՝ 1999, Լևին՝ 2000), մարդու վերաբերմունքը դիտարկվում է իբրև էկոլոգիական իրավիճակի և բնության հանդեպ մարդու դիրքորոշման բարելավման գործոն:

Հիշատակված հեղինակների տեսանկյունից բնության սուբյեկտիվ ընկալումը և վերաբերմունքը մարդու էկոլոգիական գիտակցության և աշխարհապատկերման բաղադրիչ մասն է, ինչը միաժամանակ ազդում է բնության հանդեպ նրա վերաբերմունքի վրա:

Տվյալ հետազոտություններում բնությունը առավելապես դիտարկվում է իբրև ստատիկ երևույթ, որը խնդրահարույց է դառնում նրա հետ փոխգործակցող մարդու համար: Վ.Ա. Լևինը նույնպես ընկալում է բնական օբյեկտի հանդեպ մարդու վերաբերմունքի ձևավորման համար բնության հանդիպակած ակտիվության կարևոր դերակատարությունը (Լևին՝ 2000):

Բնության օբյեկտների «պատասխանները» կարող են լինել տարաբնույթ՝ անտրոմորֆային վիճակից մինչև երկրաֆիզիկական և մեխանիկական: Վերջին տեսակի «պատասխանները» հատուկ հետաքրքրություն են ներկայացնում:

Իբրև պատասխան՝ գործնականում խոսքը կլիմայաերկրաֆիզիկական երևույթի վերծանման մասին է, ինչը լիովին կառուցվում է մարդու կողմից և վե-

րագրվում բնության օբյեկտին, մարդու և ոչ կենդանի բնության փոխգործակցության համատեքստում:

Ըստ Վ.Ա. Լևինի՝ երկրաֆիզիկական պատասխանը որևէ բնական երևույթի (ամպրոպ, երկրաշարժ և այլն) վերծանումն է, իբրև հակադրում, երբ հարուցիչ գործողություն դիտարկվում են նախկինում մարդու կողմից իրականացված գործողությունները:

Մարդու գիտակցության մեջ ստեղծվում է պատճառահետևանքային կապ, որը, ըստ էության, իրականում բացակայում է: Որոշ դեպքերում, մասնավորապես տեխնածին և էկոլոգիական աղետների դեպքում այդպիսի արձագանքը կարող է պայմանավորվել մարդու գործունեությամբ:

Բնականաբար այդպիսի «պատասխանները» կարող են լինել թե դրական և թե բացասական: Եվ եթե բնության «պատասխանը» չի համապատասխանում մարդու սպասումներին, գործի են դրվում հոգեբանական պաշտպանության մեխանիզմները: Սկսում է աշխատել բնության հանդեպ սուբյեկտալեթիկական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող վարանամտության ռեֆլեքսիայի մեխանիզմը, կամ էլ նրա հանդեպ օբյեկտալրագմատիկ վերաբերմունքը հաստատող ռազիոնալիզացիայի մեխանիզմը: Ըստ հետազոտությունների տվյալների՝ տարերային արհավիրքի վերծանումը, իբրև «պատասխան», մասնավորապես՝ կրոնական համոզմունքների ներքո, մարդուն թույլ է տալիս ավելի հեշտ հաղթահարել տարերքի հետ կապված հոգեբանական ցնցումները (Թեյլոր՝ 2001):

Ըստ այդմ՝ հոգեբանության դիրքերից մարդու և բնության փոխգործակցության վերլուծության շուրջ անհրաժեշտ է իրականացնել համապատասխան հետազոտություններ՝ պարզելու աշխատողի աշխարհագրական և արտադրական պայմանները և նրա հոգեֆիզիոլոգիական և հոգեբանական հնարավորու-

թյունների համապատասխանությունը:

Այդպիսի վերլուծությունը հնարավորություն է ընձեռում մշակելու առավել բարենպաստ չափանիշներ, որոնք հնարավորություն են ընձեռում արտակարգ իրավիճակների հոգեբանության պահանջների հաշվառմամբ առավել իրատեսորեն նախագծելու աշխատանքի և հանգստի: Արտադրական միջավայրի բոլոր գործոնների ամբողջականությունը հնարավորություն է ընձեռում հաշվառելու մարդու վրա ներգործող միջավայրի կլիմաաշխարհագրական պայմանների ազդեցությունը: Մարդ և բնություն փոխգործակցության բարդ պայմանների առկայության պարագայում աշխատանքային գործունեության ընթացքում նա առավելապես հարաբերական ոչ հարմարավետ և էքստրեմալ պայմաններում է գտնվում, քան թե հակառակը:

Մարդու և բնության փոխգործարկման կարևոր կողմերից է գոյատևման փոփոխված պայմաններում վարքի և գործունեության ուսումնասիրումը: Մարդու և բնության փոխգործակցման պրոցեսների խաթարման դեպքում մարդկանց մոտ սթրես է առաջանում, ինչը փոփոխություններ է մտցնում նրանց փոխհարաբերություններում: Դիտարկվում են փոփոխություններ հոգեկան գործունեության ժամանակ, ինչը հանգեցնում է գործունեության ակտիվության անկմանը, բացասական հուզական ապրումների և ընդհարումների:

Մարդ և բնություն փոխգործակցության բարդ պայմաններում մարդու հոգեվիճակների բավականաչափ հստակ դասակարգում մինչ օրս մշակված չէ:

Բարդ բնական պայմաններում գտնվող մարդու վիճակների նկարագրման և վերլուծության ընթացքում հույժ կարևոր դեր է խաղում դրանց սուբյեկտիվ կողմը, այսինքն՝ «օրգանիզմի վիճակի և այն բնորոշող պայմանների սուբյեկտիվ արտացոլումը» (Դուշկով՝ 1987): Օրինակ՝ մարդու և բարդ բնական

պայմանների փոխգործակցության պրոցեսում առաջացած հոգեկան վիճակների հիմնական տեսակներից մեկը՝ հոգեկան լարվածությունը, ինչը գուցորդվում է նյարդահոգեկան գործունեության համախմբմամբ, զգայական համակարգերի վերակառուցմամբ, վերջիններս, ըստ էության, ուղղված են օրգանիզմի կենսատոնուսի կայունացման և ստեղծված հանգամանքներում կանոնավոր գործունեության համար անհրաժեշտ օրգանիզմի օպերատիվ պատրաստականության ապահովմանը:

Մարդ և բնության փոխգործակցության վրա ազդող անբարենպաստ գործոնների հետ կապված վերլուծությունը վկայում է, որ հուզական լարվածության մեջ բացառիկ դերակատարում ունեն նրա հոգեկան բաղադրիչները: Որպես կանոն՝ սման լարվածություն առաջանում է մարդու մոտ, երբ նա հայտնվում է էքստրեմալ ծանրաբեռնվածությամբ հարուցված ծանր պայմաններում, կացության միջավայրի փոփոխման, առողջությանն ու կյանքին իրական կամ երևակայական սպառնալիքի դեպքում և կախված է անձի առանձնահատկություններից, նրա բարոյական, մտավոր անձնային առանձնահատկություններից և բնավորությունից:

Բոլոր այդ փոփոխությունները արտահայտվում են գործունեության մակարդակի դինամիկայում: Այսպես՝ մարդու հուզական լարվածության զարգացմանը նպաստում են հետևյալ պատճառները՝ աշխատելու հոգեկան անպատրաստվածությունը, տարբեր ծագումի ֆիզիկական կամ հոգեկան հոգնածությունը, մասնավորապես՝ անբարենպաստ բնական ազդեցությունների՝ սպասման հետ կապված գործունեությանը նախորդող մշտական լարվածությունը կամ հենց այդ պայմաններում գործունեության հետ կապված լարվածությունը:

Հուզական լարվածության կանոնավոր մակարդակը օգնում է մարդուն իր

մասնագիտական աշխատանքում, քանի որ դրա օրոք կատարվում է օրգանիզմի պաշարների մոբիլիզացիա: Հուզական լարվածության երկարատև վիճակը բացասական է անդրադառնում գործունեության պրոցեսի վրա, ընդհուպ հարուցելով նյարդահուզական խանգարում:

Սակայն, մարդու և բնության փոխգործակցության պրոցեսում առաջացած բարդ իրավիճակները մարդու վրա ունենում են ոչ միայն անբարենպաստ ազդեցություն, այլև կարող են արդիականանալ և ակտիվանալ սովորական պայմաններում աննկատ ներուժային հնարավորությունները:

Այդպիսով՝ մարդու և բնության փոխգործակցության պրոցեսում սթրեսի գործոնի հետագա ուսումնասիրումը հնարավորություն կտա վերջինս օգտագործելու կլիմա-երկրագնդիկական միջավայրի կրիտիկական գործոններին մարդու հարմարվելիության հիմնախնդիրը հաջողությամբ լուծելու համար:

Մարդ-բնություն փոխգործակցության բարդ պայմաններում մարդու հուսալիության կանխատեսման ընթացքում բացի հոգեվիճակի ցուցանիշներից՝ հարկավոր է հաշվի առնել այնպիսի պարամետրեր, ինչպիսիք են՝ անհատական առանձնահատկությունները, ռիսկի հակումը, որոշումների կայացման անհատական առանձնահատկությունները, ինքնակարգավորման և ինքնավերահսկման հմտությունները, արժեքային համակարգը (Նիկիֆորով՝ 1977):

Մարդու արժեհամակարգը որոշվում է նաև նրա մասնագիտական գործունեության ընտրությամբ: Նպատակները և այն գինը, որը մարդը պատրաստ է վճարել իր առջև դրված նպատակներին հասնելու համար: Վեհ նպատակների դեպքում նա հասկանում է, որ մեծ արդյունքների նա պատրաստ է: Հակառակ դեպքում ենթադրում է միշտ խուսափել գոհերից՝ դժվար պահին, ինքնագոհաբերման անհրաժեշտության դեպքում, նա չի կարող լիովին մոբիլիզացնել իր

ուժերը, ցուցաբերել արհուրյուն և անձնագոհություն, նա բարոյապես պատրաստ չէ դրան:

Անձի ֆունկցիոնալ հուսալիության հիմնախնդիրը դիտարկվում է կանոնավոր և էքստրեմալ պայմաններում պրոֆեսիոնալ գործունեության պահանջները ապահովող հոգեբանական և ֆիզիոլոգիական որակներին դինամիկ կայունության դրսևորման դրիքերից: Հուսալիություն հասկացությունը ներառում է երկարատև դինամկունություն արտակարգ լարվածության և գերլարվածության հանդեպ սթրեսակայունություն (Կիտան-Սմիկ, Թոթրովա՝ 1988) կայունություն միջավայրի գործոնների ազդեցության հանդեպ (Նեբիլիցի՝ 1991): Արտակարգ իրավիճակներում մարդու գործունեության հիմնախնդրով պայմանավորված՝ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում վերջին երկու ասպեկտները:

Ուստի որոշ հեղինակներ հակված են այն տեսակետին, որ հուսալիության անհատական հատկանիշների դրսևորման համար անձը պետք է հայտնվի ծայրահեղ էքստրեմալ իրավիճակում և դրա հաղթահարման հնարավորությունների ուսուցանումը նույնպես պետք է իրականացվի էքստրեմալին մոտ իրավիճակներում:

Բազմաթիվ վնասաբեր գործոններ են ազդում էքստրեմալ կամ էքստրեմալին մոտ հանգամանքներում գտնվող մարդկանց վրա: Ընդ որում՝ այդ պայմանների հոգեծին ազդեցությունը բաղկացած է ոչ միայն մարդու կյանքի ուղղակի, անմիջական սպառնալիքից, այլև միջնորդված՝ կապված դրա իրագործման սպասումից: Կան տվյալներ այն մասին, որ մարդկանց ճշող մեծամասնությունը հանկարծակի ստեղծված իրավիճակում դառնում են գործնականում անաշխատունակ, նույնիսկ՝ ֆիզիկական վնասվածքի բացակայության պարագայում (հատկապես իրավիճակի զարգացման առաջին փուլում. Ալեքսանդրովսկի՝ 1991):

Ժամանակակից արտասահմանյան գրականության մեջ առկա են մարդբնություն փոխգործակցության տարբեր ասպեկտները դիտարկող մի շարք ուղղություններ: Դրանք են՝ շրջակա միջավայրի հոգեբանությունը, վարքային աշխարհագրությունը, էկոլոգիական հոգեբանությունը և աղետների հոգեբանությունը:

Շրջակա միջավայրի հոգեբանության, էկոլոգիական հոգեբանության և վարքային աշխարհագրության շրջանակներում դիտարկվում են բնական լանդշաֆտների ընկալման առանձնահատկությունները, քաղաքային և գյուղական աշխարհագրական միջավայրի գնահատումը և մարդու ու բնության հարաբերական հանգիստ ( ոչ էքստրեմալ) փոխգործակցությունը:

Էկոլոգիական հոգեբանությունը հետազոտում է կապը միջավայրի փոփոխականների և մարդու հոգեկան կառուցվածքի տարբեր բնութագրերի միջև: Մարդը դիտարկվում է իրեն շրջապատող միջավայրի դինամիկ փոխգործակցության մեջ: Մարդու և շրջապատող միջավայրի փոխգործակցության գլխավոր փոփոխականներն են դառնում ըմբռնումն ու ընկալումը՝ մտածողության գործունեության պրոցեսներ, որոնք թույլ են տալիս մարդուն ըմբռնել, ընկալել և իմաստավորել շրջակա միջավայրը և դրա վերաբերյալ որոշումներ կայացնել (Գոլդ՝ 1990): Գոլդի տեսանկյունից մարդու և շրջակա միջավայրի փոխգործակցությունը հասկանալու համար մեծ նշանակություն ունեն մարդու դրդապատճառները, հույզերը և կենսանախադրյալները:

Վարքային աշխարհագրությունը՝ աշխարհագրությունում բիհեյվորիզմի արտահայտումն է: Նրա ուշադրության կենտրոնում են գտնվում ֆիզիկական և սոցիալական միջավայրին մարդու հարմարվելիության մեխանիզմները: Վարքային աշխարհագրության սկզբունքային առանձնահատկությունը նրա



միջառարկայական բնույթն է: Նրանում տարանջատվում են «օբյեկտիվ միջավայրի կամ անմիջականորեն չափվող իրական աշխարհի և վարքային միջավայրի», այսինքն՝ գիտակցական աշխարհի հասկացությունները: Իր վարքի արտաքին գործոնների մասին մարդու պատկերացումները կարող են էականորեն տարբերվել այն բնական միջավայրի իրական արտաքին հանգամանքներից, որում մարդը ապրում և արարում է (Գոլդ՝ 1990):

Վարքային աշխարհագրությունը ուսումնասիրում է նաև մարդու վրա աղետների ազդեցությունը: Աշխարհագետներին նախ և առաջ հետաքրքրում են երկրաֆիզիկական բնույթի բնական աղետները, այսինքն՝ կապված կլիմայի և ռելիեֆի հետ, քանի որ դրանք շեշտակի տարբերվում են կենսաբանական և էկոլոգիական բնույթի աղետներից: Մարդու վրա տարերքի ներգործության զուտ հոգեբանական հետազոտությունները հիմնականում նվիրված են հետվնասվածքային սթրեսի առանձնահատկությունների բացահայտմանը և պրոֆիլակտիկային, ինչպես նաև աղետալի իրավիճակում հաղթահարման վարքին:

Հետաքրքրական են սոցիոլոգիական հետազոտությունները մարդու խոցելիության համատեքստում, որոնք իրականացրել են Դիբեն և Չեստերը (1999): Հետազոտությունների արդյունքների համաձայն՝ մարդու խոցելիությունը ներառում է տարբեր տարրերի բարդ համագործակցություն: Այն հարկավոր է հաշվի առնել մարդու վրա բնական սպառնալիքների ազդեցության նվազեցման ծրագրերում՝ ի լրումն սովորաբար հաշվառվածների (ֆիզիկական անվտանգության սպառնալիքի բնույթը, տեղակայումը, ռեգիոնի և նրա բնակիչների տնտեսական վիճակը): Հարկավոր է նույնպես հաշվառնել անհատական սոցիոլոգիական ենթատեքստը, բազմաթիվ հոգեբանական և հոգեֆիզիո-

լոգիական պարամետրեր: Հեղինակները բացահայտեցին, որ հրաբխային ակտիվության հանդեպ խոցելիությունը մեծապես պայմանավորված է ռեգիոնի պատմությամբ և զարգացմամբ: Առանձին անհատների կողմից որոշումներ կայացնելու գործընթացը կրում է հիմնարար բնույթ, բայց չի կարող տարանջատվել սոցիալական ենթատեքստից: Խոցելիության վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել այն հանգուցային կետերը, որտեղ բնական սպառնալիքների բացասական ներգործության մեղմացման տեսանկյունից կարող են լինել առավել արդյունավետ:

Համաձայն Նոր Զելանդիայում հրաբխի ժայթքման սպառնալիքի հանդեպ բնակչության ընկալմանը նվիրված Ջոնստոնի և Բենտոնի (1998) հետազոտության արդյունքների՝ պարզվեց, որ չնայած այդպիսի իրադարձության ցածր հավանականության և վստահության, որ այն տեղի չի ունենում տեսանելի ապագայում՝ հարակից տարածքների բնակիչների մեծ մասը կարծում է որ անձնապես իրենց մոտ շատ մեծ է հավանականությունը դառնալու այդ տարերային աղետի զոհերը: Սակայն հրաբխին անմիջական մոտիկության ապրող մարդիկ նվազեցնում կամ ընդհանրապես անտեսում են աղետի հավանականությունը: Հետազոտությունը բացահայտել է ռիսկի մասին իրական տեղեկատվություն ստանալու մարդկանց ցածր շահագրգռվածությունը, պետական կառույցների վրա հույսը դնելու նրանց հակվածությունը՝ չձեռնարկելով իրենց անվտանգությունն ապահովելու սեփական փորձերը:

Տոբինի և Օլենբուրգերի (1996) հետազոտությունը նվիրված է ջրհեղեղի արդյունքում մեծահասակների մոտ հետաքրքրային սթրեսի մակարդակի կանխատեսմանը: Պարզվեց, որ բնավտանգ ռեգիոններում ապրելու հետ կապված սթրեսը կապված է տնտեսական կարգավիճակի, սեռի, միջանձնական հրա-

բերությունների, հոգեկան առողջության սոցիալ-հոգեբանական բնագծերի, հանրության կառուցվածքի և տարրերային աղետալի երևույթների հաղթահարման նախկին փորձի հետ: Որպես սթրեսի արտահայտիչներ՝ հեղինակները դիտարկել էին տագնապը, ընկճախտը և գործունեության արդյունավետությունը:

Հետազոտությունը իրականացվել էր ջրհեղեղից 3 ամիս հետո, իսկ հետվնասվածքային սթրեսի ախտանիշները ի հայտ էին եկել հետազոտողների 71% -ի մոտ: Ախտանիշների ծանրության կանխատեսման առումով առավել կանխատեսելի էին աղետին նախորդող առողջության վիճակը, տագնապելիությունը, աշխատանքի բացակայությունը ու աղետը բացասական տերմիններով մեկնաբանելու հակումը: Հետազոտությունը ՀՎՄՐ ախտանիշների արտահայտման աստիճանի ու ռիսկի ավանդական գործոնների (հասակը, սեռը ու եկամուտի չափը) միջև կապ չի հայտնաբերել:

Ֆիֆերի (1990) հետազոտությունը նվիրված էր բնական աղետի արդյունքում ի հայտ եկած ու տարեցների բարձր խոցելիությամբ պայմանավորված հոգեբանական սթրեսի և հոգեմարմնական ախտանիշների խնդրիներին: Ջրհեղեղից 18 ամիս հետո տարեցների մոտ դիտարկվում էին տագնապի, ընկճախտի ախտանիշներ և մարմնական գանգատներ: Պարզվեց, որ մշտական աշխատանք չունեցող տարեց տղամարդիկ ավելի խոցելի են աղետի հանդեպ: Ջրհեղեղից հետո առողջության վատթարացումը կապված չէր տարեց մարդկանց հասարաժողովրդագրական բնութագրերի հետ: Նորիսի և Կանաստիի աշխատանքում ուսումնասիրվել է աղետի ժամանակ աջակցության դերը: Ուսումնասիրվել էր տարեց մարդկանց ՀՎՄՐ ախտանիշների ծանրության վրա օտար մարդկանց հարազատների ընկալվող աջակցության և հանրային ներգրավածության ազդեցությունը: Սթրեսը մեղմացնելու համար առավել

նշանակալի է հանրային ներգրավման և օտար մարդկանց աջակցության ազդեցությունը, իսկ հարազատների աջակցությունը շատ ավելի քիչ նշանակություն ուներ: Տվյալ հետազոտությունը հաստատում է ՀՎՄՐ պրոֆիլակտիկայի համար հանրային աջակցության նշանակությունը:

Նայթի, Գացի, Հելերի և Բենգստոնի (2000) հետազոտությունում ցույց է տրված, որ տարիքը էապես չի ազդում երկրաշարժի հետ կապված հուզական ռեակցիայի վրա: Առավել ևս՝ երկրաշարժերի հաղթահարման նախորդ փորձը արտահայտվում էր սպառնացող բնական երևույթին ի պատասխան՝ ընկճախտի ցուցանիշների նվազմամբ:

Նոլեն-Հեքսեմի և Մորրուի (1991) տվյալների համաձայն՝ այն ուսանողները, որոնք ունեին տագնապի և ընկճախտի ախտանիշներ, մինչև երկրաշարժը ավելի շատ էին ենթարկվել բնական ազդեցությանը: ՀՎՄՐ ավելի արտահայտիչ ախտանիշներ են ունեցել նաև այն ուսանողները, որոնք ենթարկվել էին տարերքի ավելի հուժկու ազդեցությանը: Ուսանողների հոգեվիճակի վրա բացասական էին ազդում նաև տարերքից ստացած հարվածի մասին մշտական մտորումները: Երազներում վերապրած տարերային երևույթների արտացոլման հետազոտությունը (Վուդ.Բուտին, Ռոզենհան Նոլեն-Հեքսեմ՝ 1992) ցույց տվեց, որ գիշերային մղձավանջների հաճախականությունը երկրաշարժը վերապրած ուսանողների մոտ ավելանում էր երկու անգամ՝ համեմատ ստուգիչ խմբի ուսանողների հետ, սակայն այդ գիշերային մղձավանջները այնքան հուզական չէին, քան սովորականները:

Տարերային աղետի արդյունքում առաջացած արժեքների բախումը ուսումնասիրվել է Թեյլորի (Թեյլոր՝ 1999, 2001) կողմից: Վերլուծվել է ավանդական քրիստոնեական արժեքների դերը, ինչպես նաև տարերային աղետով հարուցված հոգեբանական վնասվածքի

վերծանմամբ և համակերպմամբ մեղքի և քավության պատկերացումները: Համաձայն Պիկուի՝ 1996 թ., կապված ընկալվող սթրեսի աղբյուրից, աղետալի իրադարձությունից, սթրեսի հանդեպ ռեակցիաները կարող են էապես փոփոխվել: Տեխնածին աղետները թողնում են ավելի երկարատև սոցիալական և հոգեբանական հետևանքներ, քան տարերային աղետները: Մարդու և հանրության վրա տարբեր բնույթի աղետների բնածին, տեխնածին ազդեցության հետազոտման ընթացքում կարևոր է հասկանալ ապասթրեսային աղբյուրները և այդ գիտելիքները օգտագործել բացասական սոցիալական և հոգեբանական ազդեցությունները մեղմելու համար: Մեծ գումարներ են ծախսվում շրջակա բնական միջավայրի և ենթակառուցվածքների վերականգման համար: Վերականգնել հարկավոր է նաև սոցիալական շրջապատը, ինչպես նաև բնական կենսաֆիզիկական միջավայրի և մարդկային հանրության միջև բուն փոխգործակցությունը (Պիկու՝ 1996): Գործունեության ուղղություններ են հանրությունում կոնֆլիկտի մեղմացումը, անորոշության վերացումը և շարունակական հոգեբանական սթրեսի նվազեցումը: Առանց մեղմացնող միջոցառումների պահպանվող մշտական սպառնալիքը, անորոշությունը, տնտեսական և էկոլոգիական հանգուցալուծման բացակայությունը, կշարունակեն հարուցել խրոնիկական հոգեբանական սթրես:

Տարերքի տարբեր աստիճանի ուժգնության հարվածների բացասական ազդեցությանը մարդկանց վրա տարբերվում է՝ կախված շատ պարամետրերից: Դա կախված է մարդկանց նյութական բարեկեցության աստիճանից, սոցիալապես ավելի քիչ պաշտպանված բնակչության շերտերը իրենց հոգեբանական բարձր խոցելիության պատճառով կրում են ավելի ուժեղ և երկարատև բացասական ազդեցություն (Յանգ, Ֆորդ,

Ռուզել, Ֆրիդման, Գուսման՝ 1998): Տարերքի հանդեպ նույնպես խոցելի են կանայք, երեխաները և տարեց մարդիկ: Բնական աղետները ավելի երկարատև և արտահայտված բացասական ազդեցություն ունեն զարգացող երկրների, քան զարգացածների վրա (Գոլդ՝ 1990): Զարգացած երկրներում վնասը հաճախ արտահայտվում է դոլլարային համարժեքով, այսինքն՝ վերաբերում է սեփականությանը, իսկ նվազ զարգացածներում՝ աղետի զոհերի քանակը արտահայտող թվերով:

Այդ հարցին վերաբերող արտասահմանյան գրականությունում համոզիչ կերպով ցույց է տրված, որ բնական բնույթի աղետները շատ ավելի քիչ բացասական ազդեցություն ունեն մարդու հոգեվիճակի վրա, քան այն աղետները, որոնք հարուցվել են մարդու տնտեսական գործունեությամբ (Յոսի՝ 1996; Գոլդի՝ 1990) տվյալներով՝ բնական աղետների զոհերի քանակի առումով կա մեծ տարբերություն զարգացած և զարգացող երկրների միջև: Վերջիններում զոհերի թիվը անհամեմատ մեծ է: Դա նա բացատրում է նրանով, որ զարգացած երկրներում մարդիկ ավելի լավ են կառավարում բնական պրոցեսները, որոնք պոտենցիալ վտանգ են պարունակում նյութական բարեկեցության և մարդկանց կյանքի համար, ինչի արդյունքում նվազեցնում է զոհերի քանակը, իսկ երրորդ աշխարհի երկրները չունեն բավարար հնարավորություններ՝ այդպիսի միջոցառումներ իրականացնելու համար: Բացի դրանից՝ այդ երկրների բարձր ռիսկի տարածքներում ժողովրդագրական և տնտեսական ծանր խնդիրները հաճախ էականորեն բարձրացնում են մարդկանց խոցելիությունը: Ավելի քիչ ուժգնության տարերային աղետները ավիրելով հաղորդակցության ուղիներ և բնակելի ֆոնդը, վնաս են հասցնում մարդկանց առօրյա կյանքի անվտանգությանը և հարմարությանը: 2001թ. սեպտեմբերի սկզբին ընդամենը 3-4 բալ

MSK սանդղակով երկրաշարժերի պարսր շարքից հանեց Յուժնո-Սախալինսկ քաղաքի ջեռուցման համակարգը, ինչը բերեց նրան, որ աշնանը քաղաքում ջեռուցում միացվեց մեկ ամիս պլանայինից ուշ: Դա հարուցեց երկրորդային սթրես՝ անուղղակի կապված առաջնային տարերքի բացասական ազդեցության հետ:

Հարց է ծագում՝ «ինչքանով են բնական տարերային աղետները»: Արևմտյան հետազոտողների կարծիքով՝ տարերային աղետի ծանրությունը, համեմայն դեպս, մասնակի հանդիսանում է տվյալ ռեգիոնում իշխող տեխնիկատնտեսական համակարգի հետևանք (Գոլդ՝ 1990): Հետևաբար թե՛ ուժեղ և թե՛ նվազ տարերային աղետների ազդեցությունը պետք է գնահատել ելնելով պայմանների ամբողջ համակարգից և հաշվի առնելով ինչպես տարերքի ուժգնությունը, այնպես էլ կյանքի ընդունելի մակարդակի վերականգման համար անհրաժեշտ հանրության ռեսուրսները և սոցիալ տնտեսական համատեքստը:

Աղետների հետևանքների գնահատման ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձնել նրանց ազդեցությանը, մարդկանց վրա, քանի որ անկախ աղետի մեծությունից այն չի կարող գոյություն ունենալ առանձին՝ նրան հարմարվելու համար մարդու կողմից գործադրվող ջանքերից:

Գրականությունում կան աղետների արդյունքում նյութական վնասի և մարդկանց առողջությանն ու կյանքին պատճառած վնասի վերաբերյալ բազմաթիվ վիճակագրական տվյալներ: Համեմատաբար քիչ է հայտնի մարդու հոգեկան կառուցվածքին պատճառած վնասի մասին: Հիմնականում, խոսքը գնում է հոգեպաթոլոգիական ավտորոշիչների, սուր աֆֆեկտային ռեակցիաների (ՄԱԲ) աշխատունակության անկման, տարբեր բնույթի հոգեծինների մասին, իսկ որպես բնական աղետի հեռահար հետևանք՝ հետվնասվածքային սթրեսային խանգարումների մասին:

Բնական արհավիրքների առավել բնորոշ հետևանքներն են համարվում՝ սուր աֆեկտային ռեակցիաները, հոգեծինները և հետվնասվածքային սթրեսային խանգարումները: Վերջինները գոյանում են որպես այն հոգեկան տրավմայի հետաձգված ռեակցիա, որը հարուցված է տարերային աղետով և նրանով պատճառած նյութական կորուստներով:

Բնական ծագումով միևնույն տրավմածին իրադարձություն մարդկանց կողմից ընկալվում և վերապրվում է տարբեր ձևերով: Համապատասխանաբար սթրեսային ռեակցիաների գոյացման ռիսկը նույնպես տարբեր է (Հելի-Յանգ, Ջերիթի՝ 1994): Հետվնասվածքային սթրեսային խանգարումների գոյացման ռիսկի կապակցությամբ հիշատակվում են այնպիսի գործոններ, ինչպիսիքն են՝ ազգամշակութային ավանդույթներ, համոզմունքների համակարգ, արժեհամակարգ, ռեգիոնի ռեսուրսներ և ավանդույթներ, ընտանեկան ժառանգություն և դինամիկա, անհատական սոցիալական և պրոֆեսիոնալ ռեսուրսները և սահմանափակումները, անհատական կենսասահոգե սոցիալական ռեսուրսները և խոցելիությունը, տրավմածին իրադարձությունների ազդեցության հանդեպ նախորդող հակվածություն, ինչպես նաև յուրահատուկ սթրեսային կամ հնարավոր վնասվածքաբանական փորձառություն աղետի ժամանակ և հետո (Յանգ, Ֆորդ, Ֆրիդման Ռուզել, Գուսման՝ 1998): Հարկավոր է նաև հաշվի առնել ոչ միայն անհատին պատճառած աղետի վնասը, մոտիկ մարդկանց մահը կամ պատճառած վնասը, սեփականության կորուստը, հարկադրված տեղափոխություն, նախորդող սթրեսներ, վնասվածությունը և աղետների վերապրման փորձը, աղետի հանդեպ անձնական կամ պրոֆեսիոնալ պատրաստվածության մակարդակը, այլ նշանակալից սթրեսային ռեակցիան, կատարվածի պատճառների ընկալում և մեկնաբանում, սոցիալական աջակցու-

թյան մակարդակը, իր և իր ապագայի հետ կապված անհատի սպասումները:

Հետվնասվածքային հոգեխանգարման ռիսկի գոյացման գնահատման ժամանակ սկզբունքային նշանակություն ունեն անհատի վրա աղետի ներգործության բաժնեչափերը: Ինչքան ուժեղ է ընկալվում կյանքի համար սպառնալիքը և ինչքան երկարատև է մարդու օրգանիզմի զգայական համակարգերի վրա աղետի ուղղակի ներգործությունը, այնքան ավելի արտահայտիչ են նրա ռեակցիաները: Մակայն աղետի ուղղակի զոհերը միակը չեն, որոնք կարող են ենթարկվել հետվնասվածքային սթրեսային ռեակցիաների զարգացման ռիսկին: Հետվնասվածքային սթրեսային ռեակցիաների և խանգարումների զարգացման ռիսկը ունեն` 1. Առաջին մակարդակի զոհեր` նրանք, ովքեր անմիջականորեն իրենց վրա զգացել և դարձել են աղետի զոհ, 2. երկրորդ մակարդակի զոհեր` նրանք, ովքեր առաջին մակարդակի զոհերի հետ ունեն սերտ անհատական և ընտանեկան կապեր, 3. երրորդ մակարդակի զոհեր` նրանք, որոնց մասնագիտությունը կախված է աղետի բոլոր տեսակների հետևանքների վերացումը` նյութականից մինչև հոգեբանականը և բժշկականը, 4. չորրորդ մակարդակի զոհեր` նրանք, ովքեր ապրում են աղետի գոտուց դուրս, ով անտարբեր չէ կատարվածի հանդեպ և ով օգնում, աջակցում է տուժածներին (Յանգ, Ֆորդ, Ֆրիդման, Ռուզել, Գուսման` 1998):

Հետազոտվողների մոտ հետվնասվածքային սթրեսային խանգարումների միջին տարածվածությունը տարբեր գնահատականներով կազմում է 1,5%-9%: Ինչ վերաբերում է այնպիսի աղետին, ինչպիսին երկրաշարժն է, ապա այն հարուցում է հոտվնասվածքային սթրեսային խանգարումներ 32-60% տիրույթում, իսկ երեխաների մոտ 25%-95% տիրույթում: Արտասահմանյան հետազոտությունները նվիրված են նաև մար-

դու վրա աղետի բացասական ներգործության մեղմացման հարցերին, որտեղ հատուկ դերակատարում ունեն սոցիալական աջակցությանը և բնական աղետների հանդեպ մարդու խոցելիության գործոններին (Դիբեն, Ջեստեր` 1999), բացասական հետևանքների մեղմացման գործում հոգեկան առողջության ծառայության կազմակերպած աջակցմանը (Դինգման, Գինտեր` 1995, Էվերլի, Ջորջ` 1995), հետվնասվածքային սթրեսի հիմնախնդրին, աղետի զոհերի ախտորոշում և շտկում (Գրին` 1991): Հետազոտություններում նույնպես ուսումնասիրվում են աղետին բնակչության պատրաստվածության աստիճանի բարձրացման գործում սպառնալիքի մասին հավաստի տեղեկատվության դերը (Դրոգ-Սյոբերգ` 2002, Հումեն, Մակուայր` 1997, Շուտց, Վիդման` 2002) վտանգավոր երկրաֆիզիկական երևույթների հետ կապված ռիսկերի ընկալումը և գնահատումը նրանց հետ, ովքեր ապրում են բնական աղետների բարձր ռիսկի գոտում (Գոու` 2002, Ջոնսոն, Բենտոն` 1998):

Հետազոտությունների առարկան նաև ժամանակավոր կողմնորշման առանձնահատկությունները և տրավմայի հաղթարման խնդիրները (Հոլման, Սիլվեր` 1998), բնական վտանգավոր երևույթների հանդեպ ռեակցիաների առանձնահատկությունը` կապված սեռից և հասակից (Նայթ, Գաց, Հելլեր, Բենգտսոն` 2000): Բազմաթիվ աշխատանքներ նվիրված են ռեակցիաներիկ առանձնահատկությանը` կապված աղետի բնույթից (Լևի, Կոլսեր, Էրուդ` 2002, Մակմիլան, Ֆիշ, Սմիտ` 1997): Առավել հաճախ տարբերվում են մարդկանց ռեակցիաները զուտ բնական բնույթի աղետների հանդեպ` այսպես կոչված բնածին աղետներ և էկոլոգիական և տեխնածին բնույթի աղետներ կամ մարդածին աղետներ:

Հոդվածի ներկայացման տարեթիվը` 03.03.215

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Дерябо С.Д. Экологическая психология: диагностика экологического сознания. –М.:МП-СИ,1999.–310с.
2. Levi, D., Kocher, S., Aboud, R. Technological disasters in natural and built environment II Environment & Behavior, Jan2001, Vol. 33 Issue 1 – p78 –93.
3. Taylor AJ.W. Spirituality and Personal Values: Neglected Components of Trauma Treatment II Traumatology, vol.7 No 3.2001 – 9р.
4. Душков В.А. География и психология: подход к проблемам. – М.: Мысль, 1987. –288 с.
5. Никифоров Г.С. Самоконтроль человека. – Л.: ЛГУ, 1977. –112.с.
6. Березин Ф.Б. Психическая и психофизиологическая адаптация человека. –Л.: Наука, 1989.–270 с.
7. Леонтьев ДА. Психология смысла: природа, строение и динамика смысловой реальности. – М.: Смысл, 1999. – 487 с.
8. Александровский Ю.Л., Лобастое О.С., Спивак Л.И., Щукина БЛ. Психогении в экстремальных условиях. – М.: Медицина, 1991 – 96 с
9. Китаев-Смык Л.А. Психология стресса М.: 1986. – 368 с.
10. Небылицыш В.Д. Надежность работы оператора в сложной системе управления. // Инженерная психология. М.: В.Ш, 1991. – с .238-249.
11. Короленко ЦЛ. Крайние варианты нормы психофизиологической адаптации к экстремальным условиям // Психология чрезвычайных ситуаций. – Минск: Харвест, 2001. С.135-153.
12. Решетников М.М., Баранов Ю.А., Мухин А.Л., Чермянин С.В. Психофизиологические аспекты состояния, поведения и деятельности пострадавших в очаге стихийного бедствия // Психол. журнал, 1989. № 4. Т. 10, – с. 125-128.
13. Тарабрина Н.В. Практикум по психологии посттравматического стресса: –СПб.: Питер, 2001. – 272 с.
14. Голд Дж. Психология и география: Основы поведенческой географии. ( Пер. с англ. – М.: Прогресс, 1990. – 304 с.
15. Dibben C, Chester D. K. Human vulnerability in volcanic environments: the case of Furnas, Sao Miguel, Azores II Journal of Volcanology and Geothermal Research Volume 92, Issues 1-2, September 1999 – p. 133-150.
16. Johnston D., Benton K. Volcanic hazard perceptions in mglewood, New Zealand II The Australasian Journal of Disaster and Trauma Studies ISSN: 1174-4707 Volume: 1998-2 – URL: ht^://www.massey.ac.nz/~trauma/issues/1998-2/johmton.htm.
17. Tobin, G. A.; Ollenburger, J. C Predicting levels of postdisaster stress in adults following the 1993 floods in the uper midwest II Environment & Behavior, May, 1996, Vol. 28 Issue 3–p.340-358.
18. Picou J., Steven J. The Exxon Valdez Oil Spill and Chronic Psychological stress II Proceedings of the Exxon Valdez Oil spill Symposium, American Fishery Society, Bethesda, Maryland, 1996 – p.879-893.
19. Young B.H, Ford J. D.,Ruzek J. L, Friedman M. J., Gusman F. D. Disaster Mental Health Services: A Guidebook for Clinicians and Administrators ( NCPTSD, 1998 – URL
20. Dingman, R. L., Ginter, E. J. Disasters and crises: The role of mental health counseling II Journal of Mental Health Counseling, Jul95, Vol. 17 Issue 3 – p. 259-264

## ВЗАИМОДЕЙСТВИЕ ЧЕЛОВЕКА И ПРИРОДЫ: ОСОБЕННОСТИ И ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ СРАВНИТЕЛЬНОГО ИССЛЕДОВАНИЯ

**АРЕВИК ЕРИЦЯН**

*Академия государственного управления РА, кафедра психологии, соискатель*

Взаимодействие человека и природы – сложный и динамичный процесс их единства. Внимание и представления о зависимости человека от этих взаимоотношений, обусловленные как научными, так и природными факторами (болезни, климатические условия и т.д.) всегда актуальны. И неслучайно, что теория Гипократа о воздействии окружающей среды на человека во все времена продолжает оставаться злободневной и находится в центре внимания ученых.

Дата представления статьи: 03.03.2015

## INTERACTION BETWEEN MAN AND NATURE: FEATURES AND PSYCHOLOGICAL ASPECTS OF THE COMPARATIVE STUDY

**AREVIK YERITSYAN**

*Academy of Public Administration of RA, Applicant*

Interaction between man and nature is a formed and dynamic process of their unity. Attention and notion of human dependence of these relationships due to both scientific and natural factors (diseases, climatic conditions, etc.) are always actual. It is not an accident that the theory of Hippocrates on the impact of the environment on the person in all times continues to be topical and is in the spotlight of scientists.

Article submission date: 03.03.2015

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ  
ՀԱՐԳԱԳՐՈՒՅԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հոդվածում ներկայացված է աշխատակազմի ընտրության գործընթացում հարցազրույցի դերն ու նշանակությունը և կիրառման հոգեբանական առանձնահատկությունները: Աշխատակազմի ընտրության գործընթացի արդյունավետությունը, պայմանավորված լինելով բազմաթիվ գործոններով, առաջնահերթ կախված է հարցազրույցի ձևաչափից և նրանում ընտրված հոգեբանական չափանիշներից:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** կառավարում, աշխատակազմի ընտրություն, հարցազրույց, կիրառման առանձնահատկություններ:

Կառավարման հոգեբանության ոլորտում մեծ տեղ է հատկացվում աշխատակազմի ընտրությանը: Պրոֆեսիոնալ հոգեբանական ընտրության ծագումը հիմնականում պայմանավորված է երկու խումբ գործոնների առկայությամբ: Առաջին խումբը կապված է միսինալ ծախսի դեպքում մաքսիմալ եկամուտ ստանալու ձգտման հետ: Երկրորդը՝ մարդկանց միջև այնպիսի տարբերությունների առկայության, որոնք որոշակի մակարդակում որոշում են կոնկրետ աշխատանքային գործունեության ոլորտում հաջող պրոֆեսիոնալ գործունեության հավանականությունը:

Ներկայիս դրությամբ շատ զարգացած երկրներում պրոֆեսիոնալ հոգեբանական ընտրությունը ստացել է շատ լայն տարածում: Պրակտիկայում պրոֆեսիոնալ հոգեբանական ընտրությունը իրականացնում են հոգեբանները, ինչը կարևոր խնդիր է կազմակերպչական հոգեբանության բնագավառում: Շուկայական հարաբերություններում, աշխատակազմի ընտրության խնդիրը

ամենակարևորներից մեկն է: Կարևոր և հիմնական նպատակը այն է, որ մարդկանց ընտրեն՝ ելնելով օբյեկտիվ չափանիշներից, ինչպիսիք են՝ մարդու պրոֆեսիոնալ առանձնահատկությունները, հոգեբանական համապատասխանությունը: Հաջորդ կարևոր նպատակը այն է, որ համապատասխան աշխատողները և ղեկավարները գտնեն միմյանց:

*Մեր աշխատանքի նպատակն է՝* ուսումնասիրել կազմակերպության աշխատակազմի ընտրության կազմակերպման սկզբունքները և այդ համակարգում՝ հարցազրույցի կիրառման հոգեբանական առանձնահատկությունները:

Մեր հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդիկաները՝

1. կոնտենտ-վերլուծության կամ փաստագրական նյութի ուսումնասիրության մեթոդը:

2. Ա. Ն. Կոշեյովայի՝ մասնագիտական կողմնորոշման անձնային նշանակության թեստը: [7]

3. հարցազրույցի մեթոդը:

Մեր հետազոտության ժամանակ կոնտենտ-վերլուծության ենթ ենթարկել այն կայքերը, որտեղ մարդիկ փնտրում են աշխատանք: Ընդհանուր առմամբ առանձնացրել ենք տասը ամենատարածված կայքերը, որի միջոցով մարդիկ կարող են գտնել աշխատանք: Այդ կայքերը հետևյալներն են՝ job.am, list.am, ashxatanq.am, jobfinder.am, HR.am, armjob.am, freeshop.am, zangir.am, tanger.am, careercenter.am: Հետազոտության ժամանակ մենք առանձնացրել ենք կոնտենտ - վերլուծության հիմնական կատեգորիաները, որոնք չորսն են՝ աշ-



խատանքային փորձ, հարցազրույցի հրավեր, պարտադիր CV և անձի հոգեբանական առանձնահատկությունները:

Կոնտենտ-վերլուծության ենթարկելով վերը նշված կայքերը՝ մենք առանձնացրել ենք, թե որ կայքերում որ չափանիշներն են հանդիսանում պարտադիր պայման: *Առաջին կատեգորիան* աշխատանքային պարտադիր փորձի առկայությունն է, և մեր հետազոտության արդյունքում մենք պարզեցինք, որ 10 կայքերից 7-ում աշխատանքային փորձի առկայությունը պարտադիր պայման է: Կոնտենտ-վերլուծության *երկրորդ կատեգորիան* հարցազրույցների պարտադիր հրավերն է: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ 10 կայքերից 6-ում մեծ տեղ է հատկացվում հարցազրույցներին: Երկրորդ կատեգորիան առանձնահատուկ նշանակություն ուներ հետազոտության ժամանակ, քա-

նի որ մեր հետազոտության նպատակն էր՝ ուսումնասիրել հարցազրույցի հոգեբանական առանձնահատկությունները: *Երրորդ կատեգորիան* պարտադիր CV-ի առկայությունն էր, որը պահանջում էր մեր ուսումնասիրված կայքերից ընդամենը 4 կայք: *Չորրորդ* և, գուցե, ամենակարևոր կատեգորիան էր *հոգեբանական չափանիշները*: Եթե գլոբալ դիտենք այս հարցը, ապա աշխատակազմի ընտրության հարցում համապատասխան հոգեբանական չափանիշների առկայությունը պետք է հանդիսանար առաջնայինը, սակայն ինչպես ցույց է տալիս մեր հետազոտությունը, 10 կայքերից միայն 5-ում են ուշադրություն դարձնում համապատասխան հոգեբանական չափանիշների առկայությանը: Կոնտենտ - վերլուծության տվյալները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1**

Կայքերի անվանումները	Կոնտենտ-վերլուծության			Կատեգորիաներ
	Աշխատանքային փորձ	Հարցազրույցի հրավեր	Պարտադիր CV	Հոգեբանական չափանիշներ
job.am	✓	-	-	-
List.am	✓	-	✓	✓
ashxatanq.am	✓	-	✓	-
Jobfinder.am	-	✓	-	✓
HR.am	✓	✓	✓	✓
armjob.am	-	-	-	-
freeshop.am	✓	✓	-	-
zangir.am	-	✓	-	-
tanger.am	✓	✓	✓	✓
careercenter.am	✓	✓	-	✓
<b>Ընդհամենը</b>	<b>7</b>	<b>6</b>	<b>4</b>	<b>5</b>

Մեր հետազոտության հաջորդ մեթոդը Ա. Ն. Կոշելյովայի՝ մասնագիտական կողմնորոշման անձնային նշանակության թեստն է: Բացի նշված թեստից՝ հետազոտության ժամանակ կիրառվել է նաև հարցազրույցի մեթոդը: Հետազոտությանը ընդհանուր մասնակցել են 25 հոգի, որոնք բոլորն էլ երիտասարդ կադրեր

են և փնտրում են աշխատանք: Հետազոտության պարտադիր պայմաններն էին բարձրագույն կամ թերի բարձրագույն կրթությունը և տարիքը՝ 19-25 տարեկան:

Մասնագիտական կողմնորոշման յուրահատկությունները որոշվում են՝ ըստ մարդու վերաբերմունքի, կյանքի հանդեպ, ապագայի, մասնագիտական

գործունեության, հաջողության և գործազրկության: Հետազոտության ժամանակ կիրառվել է նաև այս թեստը բացահայտելու համար երիտասարդների վերաբերմունքը՝ կապված նրանց ապագայի, հաջողությունների, մասնագիտական գործունեության հետ: Տվյալ թեստը անցկացրել են երիտասարդների նույն խմբի հետ, ովքեր փնտրում են աշխատանք և արդյունքում ստացել են շատ հետաքրքիր պատասխաններ: Հետազոտվողների մեծամասնությունը իր կյանքը համարում է սեփական «ես»-ի որոնումը՝ այն համարելով էմոցիոնալ դրական գնահատական, և հետազոտվողներից 25-ից միայն 4 էր իր կյանքը համարում էմոցիոնալ բացասական գնահատական: Կարող ենք ասել, որ երիտասարդների մոտ կյանքի հանդեպ կա դրական տրամադրվածություն: Մասնագիտությունը, աշխատանքը, ընտանիքը իրենց յուրահատուկ տեղն են գրավում մարդու կյանքում: Մասնագիտական գործունեության վերաբերյալ հետազոտվողների վերաբերմունքը տարբեր էր: Ընդհանրացնելով տվյալները՝ նշեմ, որ ներկայիս դրությամբ նրանց համար ամենակարևորը կյանքի բնականոն ընթացքն է, իսկ աշխատանքը հանդիսանում է պարզապես եկամտի աղբյուր, միայն հետազոտվողներից մի քանի հոգի նշեցին, որ աշխատանքը իրենց համար հետաքրքրություն է և ինքնաիրացման հնարավորություն: Մասնագիտության և կարիերայի պլանավորման վերաբերյալ պատասխանները, կարելի էր ասել, որ հակասական էին: Հետազոտվողներից 25-ից 15-ը նշեց, որ կարիերայի պլանավորումը շատ կարևոր և օգտակար գործընթաց է, բայց միևնույն ժամանակ կարիերայի պլանավորումը նրանց համար չէր հանդիսանում կյանքի կարևոր մաս, քանի որ, ըստ պատասխանների, հետևում էր, որ կարիերայի պլանավորումը առաջնայինը չէ, այլ որ ամենակարևորը՝ կյանքում ընտանիքն է և ներկայիս ժամանակներում ընտանիքը հանդիսանում է կյանքի ամենակարևոր արժեքը:

Մեծ նշանակություն ունի նաև այն, թե ինչպես են ներկայիս երիտասարդ կադրերը վերաբերվում իրենց հաջողություններին, ապագային, ինչպիսին են իրենց պատկերացում մի քանի տարի հետո: Թեստի արդյունքներից պարզ դարձավ, որ նրանց համար հաջողությունը մարդու արժանիքն է, նրա աշխատանքի արդյունքը և հաջողությունը՝ որպես հույզ, շատ հաճելի է և լավ: Միայն մի քանի հոգի նշեցին, որ հաջողության հասնելը իրենց կյանքի նպատակն է: Ապագայի վերաբերյալ պատկերացումները շատ տարբեր են: Թեստի արդյունքներից պարզ դարձավ, որ մեծամասնության համար որպես ապագայի նպատակ է նրանց ունեցած ձգտումը: Ըստ նրանց՝ նրանք ապագայում կհասնեն այն ամենին, ինչին ձգտում են: Հետազոտվողները նշեցին նաև, որ որպես իրենց ապագայի բաղկացուցիչ մաս՝ պատկերացում են իրենց մասնագիտությունը և աշխատանքը, չնայած որ ապագան կապված է ընտանեկան կյանքի հետ: Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ ապագայի հանդեպ տրամադրվածությունը նույնպես դրական է, քանի որ հետազոտվողներից միայն մեկը նշեց, որ ապագայի հանդեպ ունի անորոշության զգացում, անվստահություն և որ վստահ չէ՝ իր հետ ինչ կլինի ապագայում:

Ներկայիս մարդկանց համար գործազրկությունը հանդիսանում է շատ կարևոր խնդիր և այն, թե ինչն է մարդկանց համար կյանքում ամենակարևորը: Թեստի արդյունքները ցույց տվեցին, որ հետազոտվողների համար ամենակարևորը կյանքում ընտանիքն է, ապա մարդկանց հետ շփումը, հարգանքը, այնուհետև՝ սեփական առողջությունը, իսկ գործազրկության վերաբերյալ պատկերացումները տարբեր էին: Շատ կարևոր էր այն, որ ներկայիս երիտասարդները գործազրկությունը դիտում էին որպես ժամանակավոր երևույթ՝ նշելով, որ դա պետության ոչ ստաբիլ վիճակն է և հասարակության համար դժբախտություն: Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ ներկայիս

երիտասարդությունը հավատով է լցված ապագայի հանդեպ և հույս ունի, որ կարձ ժամանակահատվածում այդ խնդիրը կշտկվի: Հարցարանը կազմվել է հետազոտության նպատակով՝ բացահայտելու համար աշխատաշուկայում աշխատանքի որոնման ուղիները: Անմիջական հարցում են անցկացրել երիտասարդ կադրերի հետ, ովքեր փնտրում են աշխատանք: Հարցմանը մասնակցել են 25 հոգի, որոցից մեծամասնությունը ունի բարձրագույն կրթություն, իսկ մյուս մասը՝ թերի բարձրագույն, իսկ տարիքը չէր գերազանցում 25-ը: Հարցմանը մասնակցած երիտասարդները ունեն տարբեր մասնագիտություններ: Հիմնական գերակշռող մասնագետներն են՝ տնտեսագետները, սոցիոլոգները և հոգեբանները: Հարցմանը մասնակցել են նաև լեզվաբաններ, արևելագետեր և քիմիկոսներ: Նշեմ նաև, որ հարցմանը մասնակցել են ինպես տղաներ, այնպես էլ աղջիկներ, քանի որ աշխատանք փնտրելիս սեռը նշանակություն չունի:

Հարցազրույցի միջոցով մենք ցանկանում էինք պարզել՝ որքան ժամանակ է նրանք աշխատանք են փնտրում և ինչ միջոցների են դիմել՝ աշխատանք գտնելու համար, արդյոք ցանկանո՞ւմ են աշխատել իրենց մասնագիտությամբ, թե դա նշանակություն չունի և, ինչի վրա հիմնվելով են ընտրել իրենց մասնագիտությունը, մասնակցել են հարցազրույցների, թե ոչ: Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ հարցվողների մեծամասնությունը արդեն 1 տարի և ավել է, ինչ փնտրում է աշխատանք: Իսկ այն հարցին, թե նրանք ինչ աշխատանք են փնտրում՝ մասնագիտական, թե այլ, հարցվողներից 14-ը պատասխանել է՝ մասնագիտական, իսկ 11-ը՝ նշանակություն չունի: Այն երիտասարդները, ովքեր նախընտրում են իրենց մասնագիտությամբ աշխատել, տնտեսագետներն ու սոցիոլոգներն էին, ինչպես նաև լեզվաբանները: Նշեմ նաև, որ հարցմանը մասնակցել են նաև հեռակա բաժնի ուսանողներ, ովքեր դեռ չունեն բարձրագույն կրթություն և, գու-

ցե, պատճառը հենց դա էր, որ մի մասի համար նշանակություն չունե՞ր՝ աշխատանքը կլինի մասնագիտական, թե ոչ:

Հարցման ժամանակ մեծ հետաքրքրություն առաջացրեց այն հարցը, թե ներկայիս երիտասարդությունը ինչպես է մասնագիտությունը ընտրել: Եվ հետաքրքիրն այն էր, որ հարցվողներից ոմանք առաջարկվող տարբերակներից և ոչ մեկը չընտրեցին, այլ իրենք առաջարկեցին համապատասխան տարբերակը: Չնայած դրան՝ նշեմ, որ հարցվողների մեծամասնությունը մասնագիտությունը ընտրել է՝ ըստ իր նախասիրությունների, իսկ ոմանք՝ ըստ խորհուրդների և ուղղորդումների և ըստ աշխատանքի պահանջվածության: Հարցվողներից մեկը նշեց, որ նա իրականում ցանկացել է ընդունվել բժշկական համալսարան, սակայն ստացված միավորները չեն բավարարել, և նա ընդունվել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը և բժիշկ դառնալու փոխարեն դարձել է քիմիկոս: Իսկ մեկ այլ հարցվող նշեց, որ նա ընտրել է իր մասնագիտությունը՝ ելնելով բուհի հեղինակությունից: Հարցազրույցի ամենակարևոր կետը այն էր, թե ինչ միջոցների են դիմում մարդիկ՝ աշխատանք գտնելու համար: Հարցման արդյունքում շատ հետաքրքիր պատասխաններ նշվեցին: Պարզվեց, որ հարցվողների մեծամասնությունը, աշխատանք գտնելու համար, դիմում է իր ծանոթներին: Մյուս կարևոր միջոցը աշխատանք գտնելու կայքերն են, ապա գործակալությունները, և հարցվողների շատ չնչին մասն էր օգտվում թերթերից՝ աշխատանք գտնելու նպատակով: Իսկ այն հարցին՝ «արդյո՞ք գործակալությունները օգտակար եղել են աշխատանքի որոնման հարցում», հարցվողներից միայն մեկը տվեց դրական պատասխան, իսկ մյուսները նշեցին, որ, եթե նույնիսկ դիմել են, ապա գործակալությունները նրանց ոչնչով օգտակար չեն եղել:

Աշխատանք փնտրելու ժամանակ մեծ նշանակություն ունի նաև հարցազրույցների դերը, այսինքն՝ երիտասարդները արդյոք մասնակցել են հար-

ցազրույցների, թե՛ ոչ: Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ հարցվողներից 20-ը մասնակցել է հարցազրույցների, և միայն 5 հոգի չէր մասնակցել և ոչ մի հարցազրույցի: Անդրադարձանք նաև այն հարցին, թե ինչ մակարդակով են անցել հարցազրույցները և արդյոք նրանք գոհ են եղել: Չնայած այն հանգամանքին, որ շատ երիտասարդներ, մասնակցելով հարցազրույցների, աշխատանք չէին ստացել, իրականում գոհ էին եղել հարցազրույցից, նշելով, որ հարցազրույցները ընթացել են շատ հանգիստ և լավ: Հետաքրքիրն այն էր, որ չնայած, որ հարցվողների զգալի մեծամասնությունը մասնակցել էր հարցազրույցների, սակայն նրանցից շատ քչերն էին, որ գնացել էին հարցազրույցի նախապես պատրաստված: Ընդհանուր 25 հարցվողներից միայն 4 հոգին են ներկայացել հարցազրույցի նախապես պատրաստված, իսկ մնացած 21-ը՝ առանց նախապես պատրաստվելու:

Հիշեցնենք, որ մեր աշխատանքի նպատակից բխում էր ուսումնասիրել կադրերի ընտրության գործընթացում հարցազրույցի հոգեբանական առանձնահատկությունները, և դա էլ հիմք հանդիսացավ, որ մենք ավելի երկար կանգ առնենք այդ հարցի շուրջ:

Աշխատանք փնտրելու համար մեծ նշանակություն ունի նաև այն հարցը՝ «արդյո՞ք ներկայիս երիտասարդները տեղեկացված են CV-ները ներկայացնելու կարգին»: Եվ հարցման արդյունքում պարզ դարձավ, որ մեծամասնությունը տեղյակ են, որոշ մարդիկ նշեցին մասամբ, իսկ բացասական պատասխան չգրանցվեց:

Արդյունքում մենք հանգեցինք մի շարք եզրակացությունների: Հետազոտության ժամանակ մենք կատարեցինք կայքերի կոնտենտ-վերլուծություն և հանգեցինք այն եզրակացության, որ կայքերում աշխատակազմի ընտրության ժամանակ մեծ տեղ է հատկացվում հարցազրույցներին, և աշխատանքային փորձի առկայությունը կայքերի

մեծամասնությունում հանդիսանում է պարտադիր պայման: Իսկ համապատասխան հոգեբանական չափանիշների առկայությանը ուշադրություն էին դարձնում կայքերի միայն մի մասում:

Երկրորդ մեթոդի՝ թեստի արդյունքերը վերլուծելով՝ մենք հանգեցինք այն եզրակացության, որ ներկայիս երիտասարդությունը դրական է տրամադրված ապագայի հանդեպ և գործազրկությունը դիտում է որպես ժամանակավոր երևույթ: Չնայած նրանք մեծ տեղ էին հատկացնում իրենց մասնագիտության և կարիերայի պլանավորմանը, այնուամենայնիվ, հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ նրանց համար կյանքում ամենակարևորը ընտանիքն է, իսկ կարիերան գտնվում է երկրորդ տեղում: Հարցազրույցի արդյունքները մեկնաբանելով մենք հանգեցինք այն եզրակացության, որ ներկայիս երիտասարդությունը իր մասնագիտությունը ընտրում է՝ ըստ իր նախասիրությունների և աշխատանք է փնտրում իր մասնագիտությանը համապատասխան: Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ հետազոտվողների մեծ մասը աշխատանքի որոնման հարցում դիմում է ծանոթներին, ապա նոր աշխատանք փնտրում կայքերի, թերթերի կամ գործակալությունների միջոցով: Կարևորելով հարցազրույցների նշանակությունը՝ նշեմ նաև, որ հետազոտվողների մեծ մասը մասնակցել էր տարբեր հարցազրույցների և գոհ էր եղել հարցազրույցի անցկացման մակարդակից: Այսպիսով՝ կարող ենք ասել որ մեր աշխատանքի արդյունքը կարևորվեց նրանով, որ հետազոտության համար մենք ընտրել էինք տարբեր մեթոդներ, և մի քանի մեթոդներ օգտագործելով՝ մենք կարողացանք ցույց տալ աշխատակազմի ընտրության գործընթացում հարցազրույցի կիրառման առանձնահատկությունները:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝  
16.02.2015

## ՊՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հ. Մ. Ավանեսյան, Փորձարարական հոգեբանություն; Երևան, «Էդիթ պրինտ», 2010, 287 էջ:
2. Герцена А. И. Психология менеджмента. Санкт-Петербург, 2004.-267с.
3. Карпов А.В. Психология менеджмента. Москва, 2005.-584с.
4. Купер Д., Робертсон А. Психология в отборе персонала. Санкт-Петербург, 2003.- 240с.
5. Маклаков А. Профессиональный психологический отбор персонала. Теория и практика. 2008. - 389с.
6. Почебут Л. ., Чикер В. А. Организационная социальная психология. Санкт-Петербур. 2002.- 298с.
7. Психодиагностика, под общ. ред. С. Т. Посоховой. Москва. 2006.-671с.
8. Станкин М. И. Психология делового человека. Москва. 2003.-275с.
9. Урбанович А. А. Психология управления. Учебное пособие. Харвест. 2003.-640с.
10. Чередниченко И. П., Тельных Н. В. Психология управления. 2004.-345с.

### ՄՐԻՆՑԻՊՆԵՐ ԵՐ ԲՐՈՑԵՍՈՒ ՄԵԼՈՐԱՆԵՐԻ ՄԵԼՈՐԱՆԵՐԻ ԵՐ ԵՍԵՍԵՏՈՒՄԻ ՄԵԼՈՐԱՆԵՐԻ

#### ՋՕԶԵՖԻՆԱ ԵՏԱՅՈՒ

*Երևանский государственный университет,  
факультет философии и психологии, магистрант*

В статье представлены ключевая роль и значение собеседования в процессе отбора персонала и особенности психологических подходов. Эффективность процесса отбора кадров обусловлена многочисленными факторами, главным образом она зависит от формата собеседования и и его психологических критериев.

Дата представления статьи: 16.02.2015

### ՄՐԻՆՑԻՊՆԵՐ ԵՐ ԲՐՈՑԵՍՈՒ ՄԵԼՈՐԱՆԵՐԻ ԵՐ ԵՍԵՍԵՏՈՒՄԻ ՄԵԼՈՐԱՆԵՐԻ

#### ՋՕԶԵՖԻՆԱ ԵՏԱՅՈՒ

*Yerevan State University, Faculty of Philosophy and Psychology  
Master student*

The article presents the role and significance of the interview in staff recruitment and the psychological features of interviewing. The effectiveness of staff recruitment process conditioned with numerous factors, first of all, depends on the interviewing format and selected psychological criteria.

Article submission date: 16.02.2015

## ПСИХОЛОГИЧЕСКАЯ АДАПТАЦИЯ ПЕРВОКЛАССНИКОВ К ШКОЛЬНОМУ ОБУЧЕНИЮ

Поступление в школу вносит большие перемены в жизнь ребенка. Из привычного мира семьи или детского сада они попадают в разновозрастную и многоликую среду, где вместо игры им предлагают систематический умственный труд. Адаптация к школе многоплановый процесс и в одинаковой мере зависит от физиологического, социального и психического развития ребенка. Это не разные проблемы, а разные стороны ее проявления в различных формах активности. Школа с первых дней ставит перед ребенком целый ряд задач, требующих мобилизации его интеллектуальных и физических сил. Поэтому необходимо время, чтобы произошла адаптация к школьному обучению, ребенок привык к новым условиям и научился соответствовать новым требованиям. Все дети проходят период адаптации к школе, даже те, которые имеют хорошую предварительную подготовку. При нормальном протекании школьной адаптации эмоциональное самочувствие и самооценка стабилизируются, если же процесс адаптации ребенка в I классе затруднен, может наблюдаться деформация его личностного развития.

**Ключевые слова и словосочетания:** умственный труд, школьная адаптация, дезадаптация школьная, социально-психологическая адаптация, эмоциональное самочувствие, стрессогенный характер.

Термин «адаптация» происходит от лат. *adaptatio* – приспособление, прилаживание. Под ним понимают приспособление организма и его функций, органов и клеток к условиям среды. Адаптация направлена на сохранение сбалансированной деятельности систем, органов и психической организации индивида при изменившихся условиях жизни. [5]

Период адаптации ребенка к школе может длиться от 2–3 недель до полугода, это зависит от многих факторов: индивидуальные особенности ребенка, характер взаимоотношений с окружающими, тип учебного заведения (а значит, и уровень сложности образовательной программы) и степень подготовленности ребенка к школьной жизни. Немаловажным фактором является поддержка взрослых – мамы, папы, бабушек и дедушек. Чем больше взрослых окажут сильную помощь в этом процессе, тем успешнее ребенок адаптируется к новым условиям.

Школьная адаптация понимается как приспособление ребенка к новой системе социальных условий, новым отношениям, требованиям, видам деятельности, режиму жизнедеятельности. Однако адаптация это не только приспособление к успешному функционированию в данной среде, но и способность к дальнейшему психологическому, личностному, социальному развитию. [6]

Наряду с термином «адаптация» широко используется термин «дезадаптация» применительно к детям, испытывающим трудности приспособления к школе. Термин «дезадаптация» обозначает нарушение процессов взаимодействия человека с окружающей средой.

Деадаптация школьная – невозможность школьного обучения и адекватного взаимодействия ребенка с окружением в условиях, предъявляемых данному конкретному ребенку той индивидуальной микросоциальной средой, в которой он существует.

Педагогический диагноз школьной дезадаптации обычно ставится в связи с неуспешностью обучения, нарушениями школьной дисциплины, конфликтами с учителями и одноклассниками. Иногда школьная дезадаптация остается скрытой и от педагогов и от семьи, ее симптомы могут не сказываться отрицательно на успеваемости и дисциплине ученика, проявляясь либо в субъективных переживаниях школьника, либо в форме социальных проявлений. [8]

Социально-психологическая адаптация младших школьников к условиям школы представляет собой процесс усвоения норм и способов поведения, одобряемых родителями и учителями, в условиях взаимодействия со сверстниками под влиянием различных социальных институтов: семьи, школы, внешкольных учреждений. В общении со взрослыми и сверстниками у ребенка формируются нормы поведения, приемлемые в его социальном окружении и в обществе в целом.

Новая социальная ситуация вводит ребёнка в строго нормированный мир отношений и требует от него организованной поведенческой произвольности, ответственной за дисциплину, за развитие исполнительских действий, связанных с обретением навыков учебной деятельности. Ситуация школьного обучения

приводит ранее свободного в своих желаниях ребёнка в состояние зависимости мотива «Я хочу» от мотива «Я должен». Учебная деятельность требует от первоклассника нормативных достижений, школьная жизнь ставит его в ситуацию зависимости от мнения и оценок учителя, которые отражаются на системе его межличностных отношений. Новая социальная ситуация предъявляет высокие требования к эмоционально-волевой сфере ребёнка и ограничивает возможности непосредственного эмоционального реагирования. Закономерным является тот факт, что ситуация школьного обучения имеет для ребёнка стрессогенный характер и ставит его перед необходимостью приспособливаться к её требованиям. [4] Понятие «школьная адаптация» комплексное явление, предполагающее согласование двух критериев: внешнего, отражающего соответствие психологических и психофизиологических особенностей ребёнка требованиям ситуации школьного обучения, и внутреннего, связанного с его общим психическим благополучием. Выделяют три структурных компонента школьной адаптации, это: когнитивный компонент; эмоционально – оценочный, или личностный компонент; поведенческий компонент.

Когнитивный компонент предполагает интеллектуальный успех ребёнка в обучении по школьной программе и выражается в академической успеваемости, полноте общеобразовательных сведений при достаточной системности знаний и учебных навыков.

Эмоционально – оценочный, или личностный компонент выражается в устойчивом позитивном отношении к школьным предметам, педагогам, обучению в целом и имеет следующие признаки: достаточный уровень работоспособности ребёнка, стабильность настроения, желание посещать школу. Поведенческий компонент школьной адаптации ре-

бёнка предполагает отсутствие систематически повторяющихся нарушений его поведения в процессе обучения и в школьной среде. Поведенческими индикаторами этого компонента являются: ориентация ребёнка на школьные нормы и правила, открытость и доброжелательность по отношению к взрослым и сверстникам, умение контактировать с ними, способность занять для себя оптимальную позицию в этих отношениях.

Природа школьной адаптации обусловлена различными психологическими и социально – психологическими факторами. Интегративным фактором школьной адаптации можно считать психологическую готовность ребёнка к школьному обучению. В отечественной психологии теоретическая разработка этой проблемы основана на трудах Л.С. Выготского, Л.И. Божович, Д.Б. Эльконина и др. Так, Л. И. Божович выделяла несколько параметров психического развития ребёнка, наиболее существенно влияющих на успешность обучения в школе: достаточный уровень развития интеллектуальной сферы; определённый уровень развития мотивационной сферы; достаточное развитие произвольной сферы. [6]

Основным критерием интеллектуальной готовности ребёнка к школьному обучению является умение обобщать и дифференцировать в соответствующих категориях предметы и явления окружающего мира.

Среди внутренних психологических факторов школьной адаптации также следует выделить такие личностные образования, как самооценка и уровень притязаний. Их адекватный уровень способствует успешному вхождению ребёнка в новую ситуацию межличностного взаимодействия. Адекватность самооценивания выражается в уверенности ребёнка в своих силах, самоуважении, предполагает соответствие его представлений о себе и своих возможностях.

Адекватная самооценка и связанный с ней уровень притязаний в определённой степени обеспечивают ребёнку психологическое благополучие, способствуют возникновению у него чувства удовлетворённости результатами своей деятельности и межличностным общением.

К. Блага и М. Шебек отмечали, что ошибки ребенка при выполнении учебных заданий могут быть связаны не со сложностью задания, а с тем, что у школьника есть определенное представление о себе, которое и создает соответствующий тип поведения. «Образ себя, – пишут они, – и самоверие способствуют достижениям ребенка в школе. Негативный образ себя и недостаток самоверия ведут к снижению успеваемости ученика. Уровень его ожиданий влияет на цели, на выбор предмета взаимодействия с другим человеком, на выбор собственной позиции взаимодействия».

Среди психофизиологических факторов школьной адаптации, в первую очередь, выделяется здоровье ребёнка. Имеющиеся в психологической литературе данные говорят о том, что соматически ослабленные дети с трудом справляются со школьными нагрузками, у них наблюдается низкая работоспособность, высокая утомляемость. Это может вызвать непосильное нервно-психическое напряжение, что становится причиной школьной дезадаптации. Из этого следует, что более здоровые дети легче адаптируются к школе, чем дети с ослабленным здоровьем. Однако состояние здоровья ребёнка входит в группу факторов школьной адаптации. (Б.В. Воронков, Е.К. Глушкова, Д.Н. Исаев, Н.М. Попова и др.)

Среди отечественных авторов наибольший интерес представляет исследование Е.Е. Кравцовой, в котором отношение ребёнка к взрослому и сверстникам соотносится с основными компонентами учебной деятельности и рассматривается



как фактор, определяющий его успешность в ситуации школьного обучения. [9]

Большинство современных психологов, занимающихся этой проблемой, считает, что процесс школьной адаптации вызывает трудности у всех без исключения детей. (Н.И. Гуткина, И.В. Дубровина, В.С. Мухина, И.М. Никольская и др.) Это вызвано той нагрузкой, которую испытывает психика ребёнка, его организм в связи с резким изменением образа жизни, значительным увеличением и качественным усложнением тех требований, которым ребёнок должен соответствовать. Однако несмотря на это, процесс школьной адаптации протекает у всех детей неодинаково. [7,11]

Таким образом, в самом распространенном значении школьная адаптация – это приспособление ребенка к новой системе социальных условий, новым отношениям, требованиям, видам деятельности, режиму жизнедеятельности. Результатом адаптации является «адаптированность», которая представляет собой систему качеств личности, умений и навыков, обеспечивающих успешность последующей жизнедеятельности ребенка в школе. Только успешная адаптация в младшем возрасте способствует дальнейшему развитию ребенка как личности в будущем.

Дата представления статьи: 05.02.2015

#### **ЛИТЕРАТУРА**

1. Абрамова Г.С. Возрастная психология. – М.: Академический проект, 2001, с.459
2. Александровская Э.М. Социально-психологические критерии адаптации к школе / Э.М. Александровская. – М., 1988. – 153с.
3. Андрющенко Т.Ю. Коррекция психологического развития младших школьников на начальном этапе обучения ( Андрющенко Т.Ю., Карабекова Н.В. // Вопросы психологии. – 1993, №1.
4. Артемов, С.Д. Социальные проблемы адаптации // С.Д. Артемов. – М., 1990. – 180с.
5. Балл Г.А. Понятие адаптации и её значения для психологии личности ( Балл Г.А. ) Вопросы психологии. – 1989, №1.
6. Божович Л.М. Личность и ее формирование в детском возрасте // Л.М. Божович. – М., 1968. – 267с.
7. Гуткина Н. И Психологическая готовность к школе 4-е издание Серия «Учебное пособие» © ЗАО Издательский дом «Питер», 2004, 208с.
8. Дорожевец, Т.В. Изучение школьной дезадаптации // Т.В. Дорожевец. Витебск, 1995. – 182с.
9. Кравцова Е.Е. Психологические проблемы готовности детей к обучению в школе ( Е.Е. Кравцова. – М.: Педагогика, 1991. – 152 с.
10. Крутецкий В.А Психология.- М.: Просвещение,1988, с.188
11. Мухина В.С. Детская психология / В.С. Мухина. – М.: ООО АПРЕЛЬ Пресс, 2000. – 352с.
12. Овчарова Р.В. Практическая психология образования: Учеб. пособие для студ. психол. фак. университетов. — М.: Издательский центр «Академия», 2003, с.240
13. Эльконин Д.Б. Психологические вопросы формирования учебной деятельности в младшем школьном возрасте. Под ред. Д.И. Фельдштейна: издание 2-е, дополненное. – М.: Институт практической психологии, 1996. – 304 с.

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՈՒՄԸ  
ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՄԱՆԸ

**ԼԻԼԻԹ ՀԱՋՈՅԱՆ**

*ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Գիտակրթական միջազգային կենտրոն,  
սոցիալական հոգեբանության բաժնի մագիստրանտ*

Դպրոց ընդունվելը երեխայի կյանքում մեծ փոփոխությունների է բերում: Սովորական ընտանեկան աշխարհից կամ մանկապարտեզից նրանք ընկնում են տարբեր տարիքի և բազմատիպ մարդկանց միջավայր, որտեղ խաղի փոխարեն նրանց առաջարկում են համակարգված մտավոր աշխատանք: Դպրոցին հարմարվելը բազմապլան գործընթաց է և հավասարաչափ կախված է երեխայի ֆիզիոլոգիական, սոցիալական ու մտավոր զարգացվածությունից: Դրանք ոչ թե տարբեր խնդիրներ են, այլ՝ գործունեության տարբեր ձևերում դրա դրսևորման տարբեր կողմեր: Դպրոցն առաջին իսկ օրերից երեխայի առաջ դնում է մի շարք առաջադրանքներ, որոնք պահանջում են նրա մտավոր և ֆիզիկական ուժերի մոբիլիզացում: Դրա համար ժամանակ է անհրաժեշտ, որպեսզի տեղի ունենա հարմարեցում դպրոցական ուսուցմանը, երեխան հարմարվի նոր պայմաններին և սովորի համապատասխանել նոր պահանջներին: Բոլոր երեխաներն անցնում են դպրոցական ադապտացիոն շրջան, նույնիսկ նրանք, ովքեր ունեն լավ նախնական պատրաստվածություն: Դպրոցական ադապտացիայի նորմալ հոսքում էնոցիոնալ ինքնազգացողությունն ու ինքնազնահատականը կայունանում են, իսկ եթե երեխայի ադապտացիայի գործընթացն առաջին դասարանում դժվարանում է, կարող է առաջանալ նրա անհատական զարգացման աղավաղում:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝ 05.02.2015

PSYCHOLOGICAL ADAPTATION OF THE FIRST-GRADERS TO SCHOOL

**LILIT HAJOYAN**

*International Scientific-Educational Center of the National Academy of Sciences  
of the Republic of Armenia,  
Master Student at the Department of Social Psychology*

Entering school brings big changes in a child's life. From the familiar world of the family or kindergarten they fall into an environment of numerous people with different ages, where they are offered a systematic mental work instead of playing. Adaptation to the school is a multifaceted process and equally depends on the physiological, social and mental development of the child. They are not different problems, but different sides of its manifestation in various forms of activity. From the first day at school a number of tasks are set before the child that require a mobilization of his mental and physical strength. Therefore, time is required for the child to adapt himself to school education, get accustomed to the new conditions and learn to comply with the new requirements. All children go through school adaptation period, even those who have a good elementary education. Under normal flow of school adaptation the emotional health and self esteem are stabilized, but if the child's adaptation process in the I class gets complicated distortion of personal development may occur.

Article submission date: 05.02.2015

ԱՆԳԻՏԱԿՑԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ ՀԱՆՈՒՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ. ԱՐՇԻԼ ԳՈՐԿԻ

*«Ես խելագար չեմ, իմ դժբախտությունն այն է, որ ոգիս  
մարմնիցս անջատ ապրում է իմ Հայրենիքում...»  
Արշիլ Գորկի*

Սույն հոդվածում խոսվում է հայոց ցեղասպանությունը վերապրած՝ հայ մեծ նկարիչ Արշիլ Գորկու ապրած տրավմայի և դրա հնարավոր ազդեցությունների մասին: Նշվում է Արշիլ Գորկու անգիտակցական պայքարի և որպես նկարիչ իր վրա կրած կոլեկտիվ անգիտակցականի արտահայտման՝ արխետիպերի մասին: Հետևություն է արվում, որ տրանսգեներացիոն տրավման, այս դեպքում եղեռնը, հնարավոր է դրսևորվի, որպես հայ ժողովրդի կոլեկտիվ արխետիպ:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** կոլեկտիվ անգիտակցական, արխետիպեր, տրանսգեներացիոն հիշողություններ և տրավմաներ, հոգեմարմնական հիվանդություն:

20-րդ դարի սկզբին՝ 1915-1923 թթ., իր գագաթնակետին հասավ դեռևս 1890-ական թվականներին Արդուլ Համիդի օրոք հայ ժողովրդի դեմ սկսված բնաջնջման և զանգվածային տեղահանման քաղաքականությունը: 1908 թվականին իշխանության գալով՝ երիտթուրքերը Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Օսմանյան կայսության այլ բռնազավթած տարածքներում կոտորեցին ավելի քան մեկ ու կես միլիոն հայերի: 1915 թվականի արյունոտ ապրիլը Հայոց պատմության ամենաողբալի էջերից է [1, 2]:

Հայոց ցեղասպանության ականատեսներից է ամերիկահայ մեծ նկարիչ Արշիլ Գորկին՝ Ոստանիկ Ադոյանը: Նա իր քրոջ և մոր հետ մեծ դժվարությամբ

փրկվում է ջարդերից և գաղթում Արևելյան Հայաստան:

Ստեղծագործ մարդիկ միշտ էլ եղել են հոգեբանների ուշադրության կենտրոնում, քանի որ ստեղծագործական ողջ գործընթացը իր մեջ պարունակում է բազմաթիվ հոգեբանական գործընթացներ:

Հոգեվերլուծության հիմնադիր Զ. Ֆրեյդն առաջինն էր, որ ուսումնասիրեց ստեղծագործող անհատին և նրա ստեղծագործությունները հոգեբանության տեսանկյունից և այդքան խորությամբ: Նա գտնում էր, որ ինքը գտել է դեպի արվեստի տվյալ ստեղծագործություն տանող ուղին, որը գտնվում է ստեղծագործողի անհատական փորձի մեջ:

1909 թվականին Զ. Ֆրեյդը սկսեց ուսումնասիրել Լեոնարդո դա Վինչիի (1452-1519 թթ.) ստեղծագործական ուղին, կենսագրական տվյալերը: Հոգեվերլուծական ուսումնասիրություններ կատարելիս Ֆրեյդը խորանում է Լեոնարդո դա Վինչիի վաղ մանկական հիշողությունների մեջ: Նա ուսումնասիրում է Լ. դա Վինչիի հոգեսեռական զարգացման փուլերը և գտնում էր, որ նկարիչների հոգեսեռական զարգացումը այլ կերպ է ընթանում, տարբեր ինֆատիլ ավտոէրոգեն հատկանիշներով [3, 4]:

Կ. Գ. Յունգը այնքան էլ համամիտ չէր Ֆրեյդի սույն մեկնաբանության հետ, նա համարում էր, որ այս մեկնաբանությունը ճիշտ է՝ նկարիչը՝ որպես մարդ, բայց սխալ՝ մարդը՝ որպես նկա-

րիչ հարաբերության դեպքում: Յունգը համարում էր, որ նկարիչը համարվում է հենց իր ստեղծագործությունը. դա մի միասնություն է: Յուրաքանչյուր ստեղծագործ անհատ, ըստ Յունգի, համարվում է երկակիություն կամ սինթետիկ երկու բացարձակապես հակառակ հատկություններով: Մի կողմից՝ մարդն է իր անհատականությամբ, մյուս կողմից՝ ստեղծագործական պրոցես: Նա սխալ էր համարում այն մոտեցումը, որ նկարիչը ունի միայն իր սեփական կամքը, քանի որ արվեստը թելադրում է իր կամքը: Նա, որպես մարդկային էակ, ունի իր սեփական ցանկությունները, սակայն նա, որպես նկարիչ (մարդ), ավելի բարձր իմաստ ունի՝ նա կոլեկտիվ անգիտակացականը արտահայտող, համայն մարդկության անգիտակցականը կերտող անհատ է: Ստեղծագործական գաղափարները իրենք են լողում դեպի նա և նա պետք է արարի: Ըստ Յունգի՝ կոլեկտիվ անգիտակցականի արխետիպերը դրսևորվում են նաև գեղարվեստական ստեղծագործությունների տեսքով, որոնք իրենց հերթին իրենցից ներկայացնում են, որոշակի սիմվոլներ [3]: Ստեղծագործական գաղափարները պարուրեցին նաև փոքրիկ հայ գաղթականին՝ Արշիլ Գորկուն:

Արշիլ Գորկու կյանքը իրենից ներկայացնում է առեղծված, որը հոգեվերլուծական տեսանկյունից դեռևս ուսումնասիրված չէ, նրա ստեղծագործությունները՝ նույնպես, սակայն այս հոդվածում մենք չենք քննարկելու նրա ստեղծագործությունները:

Արշիլ Գորկին (Ոստանիկ Ադոյանը) ծնվել է Վանի Խորգոմ գյուղում 1904 թվականին: Նա 3 տարեկանից սկսել է նկարել, սակայն չի խոսել և ինչպես հետագայում պատմել է մեծ քույր՝ Ագապին. «Նա նկարում էր անգամ քնի մեջ, գիշերը դուք կարող էիք տեսնել, թե ինչպես էր նա շարժում իր ձեռքերը» [5, 6]:

Մանկական հասակում չխոսելը կարող էր տարբեր պատճառներ ունենալ,

սակայն, ըստ մեր վերլուծությունների, հնարավոր է, որ դա միջսերնդային տրավմայի դրսևորման մի յուրովի դեպք լինի: Միջսերնդային տրավման կարող է տարբեր դրսևորումներ ունենալ:

Հասկանալու համար միջսերնդային տրավմայի և խոսել չկարողանալու, կամ օրգանիզմում որևէ ախտանիշ առաջացնելու միջև կապը և հստակ հիմնավորում կատարելու համար նախ և առաջ կքննարկենք՝ Վիլիի Բարալի նկարագրած դեպքը, որի մասին նա խոսում է իր «Երեխայի մարմինն իր ծնողների պատմության լեզուն է. Էվելինի կակազությունը» հոդվածում: Էվելինը քսաներեքամյա երիտասարդ կին էր, ով տառապում էր կակազությամբ: Նա 2 տարեկանից սկսել էր խոսել, իսկ երեքից՝ կակազել, և նա 5 տարի շարունակ նույն մոձավանջն էր տեսել: Երբ Վ. Բարալին հարցնում է, ըստ Էվելինի, որն էր նրա կակազության պատճառը, կինը պատասխանում է, որ հնարավոր է դա ծննդավայրը փոխելու արդյունք է, հիմնավորելով, որ դա իր առաջին հոգեկան խորը ցնցումն էր: Կատարված երկարատև հոգեվերլուծական աշխատանքից հետո, պարզ է դառնում, որ հիվանդության արմատները ձգվում են մինչև Էվելինի ծնողների մանկություն՝ տեղի ունեցած մի սպանություն, որը երկար տարիներ գաղտնի է պահվել: Այդ սպանությունը կատարել էր հորեղբայրը փոքր հասակում, և որի ականատեսը եղել էր Էվելինի հայրը: Բարալիի թերապևտիկ աշխատանքից հետո, Էվելինի մոտ վերանում է այդ արատը [7]: Այժմ փորձենք քննարկել Ա. Գորկու չխոսելու մեր կողմից քաշված վարկածը: Փորձենք Արշիլ Գորկու չխոսելու պատճառը փնտրել նրա ծնողների կենսագրական մանրամասների մեջ: Արշիլ Գորկու մայրը՝ Շուշանիկ տեր Մարտիրոսյանն էր, հայրը՝ Սեդրակ Ադոյանը: Դեռևս 1896 թվականին նրանք ամուսնացած են եղել, սակայն տարբեր մարդկանց հետ: Ե՛վ հայրը և՛ մայրը առաջին

ամուսնությունից երկու երեխա են ունեցել: Շուշանիկի ամուսնուն և Սեդրակի կնոջը սպանում են Աբդուլ Համիդ 2-ի ժամանակաշրջանում կատարված ջարդերի ժամանակ: Արշիլ Գորկին երկուսի դեպքում էլ 2-րդ ամուսնության գավակն էր [5, 6, 2]:

Ըստ մեր կարծիքի և համեմատություն անցկացնելով Էվելինի դեպքի հետ՝ փորձենք մեկնաբանել պատճառահետևանքային կապը: Ինչպես վերը նշեցինք, փոքրիկ Արշիլը ավելի շուտ սկսել է նկարել, քան խոսել. ո՞րն էր պատճառը: Նրա ծնողների հետ անարդար են վարվել, այդ անարդարությունը նրանք կրել են իրենց անգիտակցական մակարդակում, և այդ ինֆորմացիան, տեղ գտնելով կոլեկտիվ անգիտակցականի մեջ, փոխանցվել է Ա. Գորկուն՝ որպես արխետիպ, և արտահայտվել ստեղծագործելու ձևով: Իսկ համեմատելով Էվելինի հետ, կտեսնենք, որ եթե Էվելինի դեպքում կակազությունը չի վերանում այնքան ժամանակ, մինչև նա դիմում է հոգեբանին, ապա Ա. Գորկու դեպքում՝ անգիտակցականում տեղի ունեցող այդ ինտենսիվ գործընթացները որոշ չափով հանդարտվել են, քանի որ տեղի է ունեցել սուբլիմացիա, այսինքն՝ այդ գործընթացը դուրս է եկել գիտակցական մակարդակ: Եվ նա սկսել է խոսել:

Այս դեպքը միակը չէ Ա. Գորկու կյանքում, որ մանրամասն վերլուծության կարիք ունի: 1908 թվականին հայրը, խուսափելով թուրքական ոստիկանության հետապնդումից, մեկնում է Ամերիկա՝ կնոջն ու չորս երեխաներին միայնակ թողնելով [5, 6]: 1915 թվականին Արևմտյան Հայաստանում սկսվում են ջարդերը Արշիլ Գորկին քույրերի և մոր հետ փախչում է Արևելյան Հայաստան: Մայրը տան բակում թաղում է իրենց ունեցվածքը՝ մտածելով, որ հետ կդառնան [5, 6]:

Եթե շարունակենք մեր ներկայացված վարկածը՝ մեկնաբանելու համար հետագայում նրա անցած ուղին,

ապա կարծում եմ, որ մոր կերպարը և հայրենիքի կերպարը նրա մեջ արտացոլվում են նույն դիմագծերով, որպես հզոր արխետիպ. արդյո՞ք ողջ հայ ժողովուրդը չէր, որ պիտի խոսեր Արշիլ Գորկու նկարների լեզվով: Դա արդյո՞ք Գորկին էր ստեղծում նկարները, թե՞ իր նկարներն էին, որ կերտում էին նրան, ավելի շուտ՝ դա հայն էր, որ կերտում էր նկարները՝ իր մեջ ներառելով բոլոր հնարավոր նախատիպերը, որոնք փոխանցվում էին սերնդեսերունդ: Ինչպես արդեն խոսել էինք Յունգի կոլեկտիվ անգիտակցականի տեսության մասին, նա իր «Նկարիչը և հոգեվերլուծությունը» գրքում հենց նույն մեկնաբանությունն է տալիս, երբ գրում է Գյոթեի «Ֆաուստ» ստեղծագործության հոգեբանական վերլուծության մասին [3]: Արշիլ Գորկին տարիներ շարունակ (1926–1938 թթ.) փորձում էր կերտել մոր և իր լուսանկարի հիման վրա գեղանկարչական աշխատանքը, սակայն նա նկարում կիսատ է թողնում մոր ձեռքերը: Մենք կարծում ենք, որ նա մոր կերպարի մեջ մարմնավորում էր ողջ հայ ազգին:

1919 թվականին իր ձեռքերին սովամահ է լինում մայրը: Այս դեպքերից հետո գնում է ԱՄՆ: 1925 թվականից վերցնում է Արշիլ Գորկի կեղծանունը: Գորկի ազգանունը վերցնում է ռուս մեծ գրող Մաքսիմ Գորկուց, իսկ անունը Արշակ անվան ձևափոխված տարբերակն է [5, 6, 10]: Հասկանալու համար Ա. Գորկու կյանքի այսքան տարաբնույթ դեպքերի ազդեցությունները նրա հոգեկան գործընթացների վրա՝ հարկավոր է կատարել նրա կյանքի յուրաքանչյուր դրվագի համակողմանի ուսումնասիրություն: Հաջորդ վարկածը, որ ցանկանում ենք առաջարկել, մենք կապում ենք նրա անվան փոփոխության հետ: Նա ստիպված էր թաքցնել իր ինքնությունը, ազգը՝ փոխելով իր անունը. պետք է հաշվի առնել նաև նրա ապրած ժամանակաշրջանը [2, 5, 6]: Կարծում եմ՝ հնարավոր չէ, որ անձը թաքցնի իր դառը

ճակատագիրը, իր ուժ լինելը, և դա չազդի իր հոգեկան գործընթացների վրա: Կլոդիին Վեգի կարծիքով՝ պահպանված գաղտնիքը, կապված՝ մահվան հետ, այնպիսի մեծ ազդեցություն է ունենում, որ խանգարում է հոգեկանի նորմալ գործընթացին: Ավելի լավ է իմանալ ճշմարտությունը՝ անգամ դառը, ամոթալի և ցավալի, քան թաքցնել այն, քանի որ այն, ինչ որ թաքցնում է մեկը, մյուսները զգում են կամ գուշակում: Եվ այդ չափած գաղտնիքը դառնում է ավելի լուրջ տրավմա: Գաղտնիքները միշտ խնդիրներ են առաջացնում [8]:

Ֆրեյդը կարծում էր, որ անվան ընտրությունը շատ կարևոր է: Անունը կարող է մարդուն վերածել ուրվականի, քանի որ անվան հետ տեղի է ունենում ճակատագրի նույնականացում [8]:

Վերցնելով ինչ-որ մեկի անունը՝ մարդը ինքնստիճյան նույնականանում է նրա հետ՝ իր վրա կրելով նաև նրա ճակատագիրը:

Համաձայն մեր հետևյալ եզրահանգման, որ Արշիլ Գորկին, վերցնելով Մաքսիմ Գորկու ազգանունը նույնականացրել, կողավորել է իր ճակատագիրը: Ուսումնասիրելով նրանց կենսագրությունները և համեմատելով դրանք՝ տեսնում ենք, որ նրանց ճակատագրերում կան շատ նման իրադարձություններ՝ և՛ Արշիլ Գորկին, և՛ Մաքսիմ Գորկին վաղ տարիքում որբացել են, երկուսն էլ ունեցել են շատ դժվար ճակատագիր, երկուսն էլ ոչ իրենց կամքով հեռացել են երկրից, և երկուսի մահն էլ առեղծվածային է [10, 5, 6]:

1941թ-ին Արշիլ Գորկին ամուսնանում է Ազնես Մագրուդերի հետ, 1943թ-ին ծնվում է դուստրը՝ Մարոն, իսկ 1945թ-ին ծնվում է երկրորդ աղջիկը՝ Նատաշան: Այս ուրախալի դեպքերին հաջորդում են ցավալի դեպքեր:

1946թ-ին Շերմանի արվեստանոցի հրկիզման պատճառով ոչնչանում են մեծ քանակությամբ Գորկու նկարներն ու գծանկարները: Նույն թվականին նրա

մոտ հայտնաբերվում է քաղցկեղ և նա վիրահատվում է [5, 6]:

Ըստ Լուիզա Հեյի, ով կազմել է հոգետնատիկ հիվանդությունների ցանկը և մեկնաբանել դրանք՝ քաղցկեղը առաջանում է այն դեպքում, երբ տվյալ մարդը բավականին երկար ժամանակ իր մեջ է կրում վիրավորանքը, խորը վերքերը, այն հոգեկան ցավերը, որը երկար ժամանակ թաքցրել է, այդ ցավն է, որ հոշոտում է մարդուն հենց ներսից [9]:

1947թ-ին մահանում է հայրը՝ Մեդրակ Ադոյանը: 1948թ-ի հունիսի 25-ին ավտովթարի հետևանքով վնասվում է Գորկու պարանոցը, և անդամալույծ է դառնում:

1948թ-ի հուլիսին նրանից հեռանում է կինը երկու երեխաների հետ: 1948թ-ի հուլիսի 21-ին 44 տարեկան հասակում Արշիլ Գորկին ինքնասպանություն է գործում՝ կախվելով, մահվանից առաջ ձախ ձեռքով կտավակալի վրա կնքելով իր վերջին խոսքերը՝ մնաք բարով սիրելիներս [5, 6]:

Ինչպես արդեն տեսանք Արշիլ Գորկին ունեցել է շատ դժվար ճակատագիր: Կարծում ենք, որ նա, անդադար փնտրելով իր կորսված հայրենիքը, նա ինքը կերտել է իր հայրենիքը իր մեջ և իր նկարներում: Այս դեպքում նա ինքն է վերածվել մի ողջ ազգի արխետիպի: Մենք գտնում ենք, որ իր կյանքի վերջին տարիները նա անգիտակցորեն նույնականացրել է հայրենիքի ճակատագրին՝ այն ժամանակաշրջանի հետ, երբ տեղի է ունեցել հայոց ցեղասպանությունը: Մենք գտնում ենք, որ արվեստանոցի հրդեհը այրում է ոչ միայն տվյալ ստեղծագործությունները, այլ նաև իր իսկ նկարներում կերտած հայրենիքը: Եվ նա սկսում է իր հայրենիքը փնտրել իր մեջ և անգիտակցորեն նույնականանում հայրենիքի ճակատագրի հետ:

Սկսենք վերլուծությունը՝ նրա մոտ հայտնաբերված քաղցկեղը այն գաղտնի ահագանգն էր, որ հայերի դեմ դավ է նյութվում: Հոր մահը կարող ենք հա-

մենատել հետևյալ կերպ՝ հայ ժողովուրդը իր հույսը միշտ կապել է հեռվում գտնվող ազգերի հետ (կարող ենք հիշել հայ մտավորականության բազմաթիվ գործուղումները ու կնքված պայմանագրերը), որը ժողովրդի կուլեկտիվ անգիտակցականում ընդհանրանում է պաշտպանող հոր կերպարում, ով սակայն վաղուց հեռացել էր, իսկ այժմ մահացավ (սկզբում հայ ազգը հավատում էր, իսկ հետո հույսը մարեց): Ավտոթարի հետևանքով Արշիլը վնասում է պարանոցը, և անդամալույծ է դառնում, ցեղասպանության ժամանակ, բոլորիս քաջ հայտնի է, որ նախ և առաջ անդամահատեցին ձեռքը, այսինքն՝ ջարդը սկսվեց նախ տղամարդկանցից: Նրանց բանակի պատրվակով հավաքեցին և կոտորեցին, այսինքն՝ անշարժացավ ձեռքը, այնուհետև վնասվեց վիզը, այսինքն՝ անշարժացավ գլուխը, ցեղասպանության ժամանակ հենց ապրիլին հավաքեցին հայ մտավորականներին և կոտորեցին, այսինքն՝ կտրեցին գլուխը: Իսկ հետո կինը, երեխաների հետ հեռացավ, այսինքն՝ գաղթեցին ողջ մնացած հայերը՝ Արևմտյան Հայաստանը հայաթափվեց: Իսկ վերջում ինքնասպան եղավ՝ կախվելով, այսինքն՝ անշնչացավ, իսկ դատարկված հայրենիքը նույնպես անշնչացել էր, քանի որ երկրի էթնիկ բնակչությունը արդեն չկար:

Այսպիսով՝ մենք փորձեցինք բոլոր հնարավոր վարկածները առաջ քաշել՝

հասկանալու համար ցեղասպանությունը վերապրած անձի հոգեկան գործընթացները: Ուսումնասիրեցինք նաև այն ինտերգեներացիոն և տրանսգեներացիոն կապերը, որոնք կարող էին ինչ-որ կերպ ազդել նրա հետագա կյանքի և ապրելակերպի վրա: Չնայած այն հանգամանքին, որ յուրաքանչյուր անհատի դեպքում ցեղասպանությունը կարող է յուրովի անդրադառնալ, մենք փորձեցինք Արշիլ Գորկու հոգեբանական նկարագրությունը կազմելով՝ հնարավորինս հասկանալ ցեղասպանության մյուս ականատեսների հոգեբանությունը, նրանց տարած տրավման և հետագայում առաջացող վատ հետևանքները: Պետք է հաշվի առնենք, որ դեռևս չկան բավականաչափ ուսումնասիրություններ՝ եզրահանգումներ կատարելու ցեղասպանության ականատեսների և նրանց հետագա սերունդների վրա ունեցած ազդեցությունների շուրջ: Ճիշտ է՝ կան ուսումնասիրություններ այլ ցեղասպանությունների ազդեցությունների մասին, բայց պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր էթնիկական համակարգում յուրաքանչյուր ազգի մոտ կարող է նույն իրավիճակը տարբեր հետևանքներ ունենալ և տարբեր հոգեբանական գործընթացների պատճառ դառնալ:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝ 15. 03. 2015

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. [http://www.genocide-museum.am/arm/armenian\\_genocide.php](http://www.genocide-museum.am/arm/armenian_genocide.php)
2. [http://www.armeniansgenocide.am/am/Encyclopedia\\_of\\_armenian\\_genocide\\_Abdul\\_Hamid\\_II](http://www.armeniansgenocide.am/am/Encyclopedia_of_armenian_genocide_Abdul_Hamid_II)
3. К. Юнг, Э. Нойманн - Психоанализ и искусство, М. : Рефл-бук, Ваклер 126 с.
4. Фрейд Зигмунд, Леонардо да Винчи. Воспоминание детства М. : Олимп; ООО «Издательство АСТ-ЛТД» 1998 16 с.
5. Nouritza Matossian. Black Angel: The Life of Arshile Gorky. Overlook Press. 2000. 576pp.
6. [http://arshilegorkyfoundation.org/gorkys-life/chronology#\\_edn3](http://arshilegorkyfoundation.org/gorkys-life/chronology#_edn3)
7. Վիլիի Բարալի- Երեխայի մարմինն իր ծնողների պատմության լեզուն է. Էվելինի կակազությունը
8. Шютценбергер А. -Синдром предков— М. : Изд-во Института Психотерапии, 2001. — 240 с.
9. <http://www.docme.ru/doc/227422/psihosomatika-zabolevanij-tablica-luizy-hej>
10. <http://www.c-cafe.ru/days/bio/6/058.php>

## БОРЬБА ЗА СПРАВЕДЛИВОСТЬ: АРШИЛ ГОРКИ

**МАРИАМ ЕРГНЯН**

*Национальная Академия наук РА,  
Международный научно-образовательный центр,  
магистрант кафедры социальной психологии*

Никто не забыт, ничто не забыто.

Все поколения навсегда запомнят геноцид, который произошел в начале прошлого века. Если не восторжествует правосудие, последствия геноцида останутся в бессознательной памяти человечества. Один из выживших в этой резне выдающийся художник современности – Аршил Горки, кто привнес боль геноцида в свою судьбу.

Дата представления статьи: 15.03.2015

## THE UNCONSCIOUS STRUGGLE FOR JUSTICE. ARSHILE GORKY

**MARIAM HERGNYAN**

*International Scientific-Educational Center of the National Academy of Sciences  
of the Republic of Armenia  
Master Student at the Department of Social Psychology*

No one is forgotten, nothing is forgotten.

All the generations will always remember the genocide committed at the beginning of the last century. Unless justice is done the consequences of genocide will remain in the unconscious memory of mankind. One of the survivors of that massacre is the Armenian outstanding artist Arshile Gorky who suffered the fate of the devastating genocide.

Article submission date: 15.03.2015



# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՆԱՐԻՆԵ ՎԱՐԳԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի կրթության որակի ապահովման բաժնի պետ

## ԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի «Հայոց լեզու և գրականություն» բաժնի մագիստրանտ

### ՀԵՔԻԱԹԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հեքիաթը, որպես գեղարվեստի յուրատիպ ժանր, բավական լայն ընդգրկումներ ունի, որը ներառում է ինչպես բանահյուսական՝ նախատիպային հեքիաթը, այնպես էլ դրա մշակման ճանապարհով ստեղծված գրական տարբերակները և հեղինակային ինքնուրույն ստեղծագործությունները: Հեքիաթի տարատեսակների այսպիսի բազմազանությունը, բնականաբար, լեզվական նույն օրինաչափություններին չի ենթարկվում: Հոդվածի շրջանակներում քննության են ենթարկվել ա) հեքիաթը բացող բանաձևերը, բ) դարձվածքների կիրառությունը, գ) բայական ձևերի, դ) դերանունների, ե) շաղկապների կիրառական առանձնահատկությունները բանահյուսական և գրական հեքիաթներում:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** հեքիաթ, հեքիաթը բացող բանաձևեր, դարձվածքների կիրառությունը հեքիաթներում, հեքիաթի լեզու և ոճ

Հեքիաթը, որպես գեղարվեստի յուրատիպ ժանր, բավական լայն ընդգրկումներ ունի, որը ներառում է ինչպես բանահյուսական՝ նախատիպային հեքիաթը, այնպես էլ դրա մշակման ճանապարհով ստեղծված գրական տարբերակները և հեղինակային ինքնուրույն ստեղծագործությունները: Հեքիաթի

տարատեսակների այսպիսի բազմազանությունը, բնականաբար, լեզվական նույն օրինաչափություններին չի ենթարկվում: Անշուշտ, հեքիաթներին հատուկ լեզվաոճական մեկ ընդհանուր բնութագիր կարող ենք տալ՝ նկատելով նրան բնորոշ պարզ ու անմիջական ոճը, ժողովրդական պատկերավորման միջոցներով հարուստ լինելը, կայուն ավանդական բանաձևերի առատությունը: Պետք է նշել սակայն, որ յուրաքանչյուր առանձին դրսևորման պարագայում հեքիաթի լեզուն տարբերվում է: Օրինակ, ժողովրդական հեքիաթը, որը պատմվում է կոնկրետ որևէ բարբառակրի կողմից, բնականաբար, ամբողջությամբ փոխանցում է տվյալ բարբառին հատուկ դրսևորումները՝ սկսած բառապաշարից և դրա հնչյունական յուրահատուկ դրսևորումներից, վերջացրած ձևաբանական և շարահյուսական միջոցներով: Ժողովրդական հեքիաթի բանասացը, բնականաբար, լիովին տիրապետում է իր բարբառին, և հաճախ նույնիստ չի էլ կարողանում խոսել մաքուր, գրական լեզվով: Այսպիսի պատումները յուրահատուկ գանձ են բարբառներ ուսումնասիրող լեզվաբանների համար, որովհետև պատմվում են անմիջականորեն՝ փոխանցելով ժողովրդական լեզվի ողջ հյութեղ աշխարհը:

Բարեխիղճ բանահավաքը, անշուշտ, պարտավոր է փոխանցել նյութը թղթին նույնությամբ՝ չաղարտելով բանասացի պատումի լեզվական որևէ դրսևորում: Այլ բան է հեքիաթի մշակումների լեզուն: Այս դեպքում ուսումնասիրողը գործ ունի հեղինակային գիտակցված մոտեցման արդյուքում ստեղծված լեզվի հետ: Հեքիաթ մշակող հեղինակները, սովորաբար, գիտակցաբար փորձում են պահպանել պատումի ժողովրդականությունը, այլապես հեքիաթը կկորցնի իր ակունքների հետ կապը և բանավոր պատումին բնորոշ հրապույրը: Ժողովրդական հեքիաթների մշակման փայլուն և մինչ օրս անգերազանցելի մշակման նմուշներ են Հովհ. Թումանյանի կատարած մշակումները, որոնք մեծապես նպաստեցին հետագա մշակումների լեզվի ժողովրդականության սկզբունքների ձևավորմանը: Ի տարբերություն ժողովրդական հեքիաթների մշակումների, հեղինակային հեքիաթների ստեղծողները պարտավորված չեն իրենց ստեղծագործություններում հատուկ ընդգծել ժողովրդականությունը: Այսպիսի ստեղծագործությունները կարող են ստեղծվել գրական մաքուր՝ բարբառայնությունից ազատ լեզվառձական միջոցներով, ինչպիսին են, օրինակ, Հանս Քրիստեան Անդերսենի, Օսկար Ուայլդի հիանալի հեքիաթները:

Մեր օրերում հեքիաթը բավական հաճախ է հայտնվում հայ հեղինակների հետաքրքրության տեսադաշտում: Այսօր, ժողովրդական հեքիաթների նորանոր գրանցումներին և տպագրված ժողովածուներին զուգահեռ տպագրվում են նաև հեքիաթների մշակումների ժողովածուներ, ինչպես նաև բավական սովոր ծավալ են կազմում հեղինակային հեքիաթների ժողովածուները: Ուշագրավ է դիտարկել արդի գրական հեքիաթի լեզվառձական առանձնահատկությունները, որոնք մինչ օրս քննության հատուկ առարկա չեն հանդիսացել հայ հեքիաթագետների համար: Սույն հոդվածի

շրջանակներում քննության կենթարկենք Լևոն Խեչոյանի «Տան պահապան հրեշտակը» ժողովածուն՝ որպես բանհյուսական նախատիպային հեքիաթի գրական մշակում, ինչպես նաև ժամանակակից գրողներ Արմինե Անդայի (Արմինե Աբրահամյան) «Անկիմյուրի բնակիչները» հեքիաթ-վեպը, Երազիկ Գրիգորյանի «Ձերդ գերագանցություն վատ կախարդ պառավ» հեքիաթը՝ որպես ժամանակակից հեղինակային հեքիաթի ինքնատիպ նմուշներ: Ժողովրդական հեքիաթների վկայակոչումները կկատարվեն «Հայ ժողովրդական հեքիաթներ» ակադեմիական բազմահատորյակից:

Քննությունը հատկապես կներառի հեքիաթը բացող բանաձևերի, դարձվածքների կիրառության, բայական ձևերի, դերանունների և շաղկապների կիրառությունների դիտարկումն ինչպես բանահյուսական, այնպես էլ գրական հեքիաթներում:

ա. «Հեքիաթը պատմվում է ժամանցի նպատակով, և ոչ ասացողը, ոչ էլ լսարանը նրա իսկությանը չեն հավատում, որի վկայությունն է հենց «լինում է, չի լինում», «կար, չկար» երկբայական բանաձևային սկսվածքը» [10, 2009, 16]: Ե՛վ բանահյուսական, և՛ գրական հեքիաթներում հեքիաթը բացող բանաձևված մտքերը, բանահյուսական հնարքները ընդգրկում են իմաստային, ժամանակային, տարածքային ամբողջություն: Բանահյուսական հեքիաթներում բանաձևված մտքերն ավելի պարզ ու կարճ են, իսկ նույն հեքիաթների ժամանակակից մշակված տարբերակներում մշակող հեղինակը գիտակցված վերստեղծում է բնագրային ձևերը՝ ապահովելով բանահյուսական կոլորիտը, սակայն կիրառում է նաև սեփական լեզվամտածողությունն ընդգծող ոճական ձևեր: Եթե ժողովրդական հեքիաթների բարբառային դրսևորումներին բնորոշ է ժողովրդախոսակցական լեզվամտածողությունը, ապա գրական տարբերակներում գերիշխում է ոճահնարությունը,

որը քերականական և ոճաբանական դրսևորումներով էականորեն տարբերվում է բարբառային ձևերից:

Ժամանակակից հեքիաթների հեղինակային տարբերակներում բանահյուսական կաղապարներն ավելի քիչ են, իսկ բանաձևված մտքերին զուգահեռ կիրառվում է «պետք է ասել», «ի վեր-

ջո», «մի խոսքով», «և հետո» և նման այլ բառակապակցություններ: Մեր կարծիքով՝ հեղինակային նման մոտեցումները նպաստում են խոսքի մատչելիությանը, խոսքի ամփոփմանը:

Քերենք ժողովրդական և համարժեք գրական մշակման ենթարկված հեքիաթների համադրման մի քանի օրինակներ:

<ol style="list-style-type: none"> <li>1. Ըլնում են չեն ըլնում մի մարդ ու կնիկ [6, 8, 1977, 20]:</li> <li>2. Օրերն մե օր քաղքի չոբանը իրեն օջ-խարը կտանի էդ մաղարի քովը արծացնելու [5, 4, 1963, 181]:</li> <li>3. «Շատ կերթա, քիչ կերթա, օր կը բերրի՝ կը նստի սարի մե յաղդըրական, օր մեղո-հաթի, ջուր խմե, էլման էրթա ուր ճամպեն» [7, 10, 1967, 17]:</li> <li>4. Ժամանակով մի մարդ կար, ըդրան ուներ մի տղա [4, 2, 1957, 507]:</li> <li>5. Ըլնում ա, չի ըլնում՝ շատ հարուստ թագավոր ա ըլնում [6, 1977, 57]:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Լինում է չի լինում մի մարդ ու կնիկ [8, 1990, 22]:</li> <li>2. Եվ ահա, օրերից մի օր քաղաքի չոբանը հոտը պատահական տանում է այդ քարանձավի մոտերքը արածացնելու [3, 2002, 41]:</li> <li>3. Նա երկու-երեք տարի թափառում է երկրից երկիր և ոչ մի տեղ չի հանդիպում այն աղջկան, որին ինքն էր հորինել [3, 2002, 58]:</li> <li>4. Ժամանակով մի մարդ է լինում. Ունենում է մի տղա [8, 1990, 99]:</li> <li>5. Լինում է, չի լինում՝ մի շատ հարուստ թագավոր է լինում [8, 1990, 135]:</li> </ol>
--	--

Գրական հեքիաթների դեպքում, լեզուն արդեն նորմավորված հայերենն է, և ժողովրդախոսակցական տարրերն այստեղ լայն կիրառություն չունեն: Օրինակ՝

<ol style="list-style-type: none"> <li>1. Շատ, տարիներ առաջ, երբ թևավոր ճարտարապետները կառուցեցին Անկիմյուրը ու թռան, մի գրություն թողեցին Անկիմյուրի քարերից մեկի վրա [1, 2010, 192]:</li> <li>2. Երկնքից երեք խնձոր էր ընկնում: Տատը խնձորները թոռներին է բաժանում, իսկ մկ-րատը ... մկրատն էլ իրեն է պահում [2, 2011, 38 ]:</li> <li>3. Լինում է, չի լինում, մութ գիշեր է լինում ու գիշերից մթնած երկինք է լինում: Մուր երկնքում դեղին ու կլոր լուսին է լինում [2, 2011, 29]:</li> </ol>
--

բ. Դարձվածքները լայն կիրառություն ունեն բանահյուսական և գրական հեքիաթներում: Դարձվածքները բանահյուսական հեքիաթներում բաղադրիչային, կառուցվածքային առումով կայուն են, իսկ հեղինակային մշակումներում նկատելի է, որ նույնությամբ չեն փոխադրվում և ամբողջությամբ չեն գրականացվում: Կարծում ենք, որ սա կապված է հեղինակների ոճաընկալման հետ:

Դարձվածքները ստեղծվել են այն ժամանակ, երբ մարդը ձեռք բերեց վերացարկված մտածելու կարողություն:

Դրանք առավելապես ժողովրդախոսակցական ոճին բնորոշ միավորներ են, որոնք լավագույնս ներկայացնում են սովյալ ժողովրդի լեզվամտածողությու-նը, բարբերն ու սովորույթները, կենցաղն ու ապրելակերպը, ինչպես նաև հոգեկան, հոգեբանական խառնվածքն ու կենսափիլիսոփայությունը: Գեղարվեստական խոսքում հատկապես դարձվածքների կիրառմամբ խոսքը դառնում է առավել տպավորիչ և պատկերավոր, նրանց կիրառությունը նպաստում է խոսքի հակիրճությանը և սեղմությանը, ազգային երանգավորում է հաղորդում և՛ հեղինակ-

կի, և՛ կերպարների խոսքին: Դարձվածքի ամենակարևոր հատկանիշներից մեկը նրա փոխաբերական–այլաբանական իմաստն է, որով հարուստ են հայկական ժողովրդական հեքիաթները: Դարձվածքի փոխաբերական – այլաբանական իմաստը ժամանակակից հեքիաթներում հաճախ դրսևորվում է մեկ բառով, հաճախ վերահիմաստավորվում է, որով ավելի տեսանելի է դառնում գրական հեքիաթների լեզվապատկերային դրսևորումը: Եթե բանահյուսական հեքիաթներում գերակշռում են դարձվածքները, ապա պետք է նկատել, որ գրական կամ

փոխադրված տարբերակներում դրանք, ինչպես արդեն նշվեց, հաճախ հանդես են գալիս պարզ ձևով՝ հիմնականում մեկ բառով, սակայն պետք է չանտեսել նաև այն հանգամանքը, որ դարձվածքային միավորներն իրենց փոխաբերական–այլաբանական իմաստի շնորհիվ հատուկ են հեքիաթներին ընդհանրապես, և հաճախ ինչպես բանահյուսական, այնպես էլ փոխադրված տարբերակում դրանք կարող են կրկնվել գրեթե նույնությամբ՝ դրսևորելով միայն որոշակի բառային համանիշային շարքի փոփոխություններ: Օրինակներ՝

<ol style="list-style-type: none"> <li>1. «...Յելենն էրթամ՝ տեսնանք իմ քոռ բախտը ինչ կը բերե գլուխսի» [7, 10, 1967, 18]:</li> <li>2. «...հենց էկավ բացելու վախտերքը, սատանական քունս տարավ...»[4, 2, 1959, 502]:</li> <li>3. Մերը իրիգնաժամիցը տուն ա գալիս, տեսնում, որ տղեն ունքերը կիտած, մոռթը կախ արած, օջախի դրաղին նստած ա [6, 8, 1977, 22]:</li> <li>4. Մի օր աղվեսը սոված, փորը վեց – վեց անելոն էս ավչու մեշի միջովը անց էր կենում [4, 2, 1959, 255]:</li> <li>5. Էն դայդի սիրուն, որ մարդ տեսներ, կոսեր՝ ո՛նչ ուտեմ, ո՛նչ խմեմ, նրա շիմշատ բոյուն մտիկ անեմ կենում [6, 8, 1977, 57]:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. «...Տղան ճանապարհվում է որոնելու նրան, ում պատկերը ստեղծել է իր ներսում՝ գիշերները լուսնի կապույտ լույսով շրջելիս» [3, 2002, 58]:</li> <li>2. «...հենց եկավ Աննահական վարդի բացվելու ժամանակը...և ես քնեցի...» [3, 2002, 26]:</li> <li>3. Մերը իրիկնաժամից տուն է գալիս, տեսնում, որ տղան ունքերը կիտած, մոռթը կախ օջախի կողքին նստած է [8, 1990, 22]:</li> <li>4. Օրերից մի օր աղվեսը սոված, փորը վեց – վեց անելով անտառի միջով անց էր կենում[8, 1990, 62]:</li> <li>5. «...էն տեսակ սիրուն, որ մարդ տեսներ, կասեր՝ ո՛չ ուտեմ, ո՛չ խմեմ, նրա շիմշատ բոյին մտիկ անեմ» [8, 1990, 135]:</li> </ol>
--	--

գ. Ուսումնասիրելով բանահյուսական և գրական հեքիաթների բայական ձևերը՝ նկատում ենք, որ հարուստ կիրառություն ունեն սահմանական եղանակի, մասնավորապես սահմանական ներկա ժամանակաձևի կիրառությունները, որոնք կիրառվում են ընդհանրական ներկայի իմաստով: Գիտական գրականության մեջ այս ժամանակաձևը բնութագրվում է նաև որպես հեքիաթական ներկա [9, 1990, 265]: Սրան զուգահեռ՝ որպես պատումի հիմնական ժամանակաձև, կիրառվում են նաև անցյալ անկատարն ու անցյալ կատարյալը: Վերջինն առավելապես հանդես է գալիս իրապատում հեքիաթներում, որի կիրա-

ռությունը միտված է հավաստիություն հաղորդելու պատումին [10, 2009, 56]:

Հեքիաթների բարբառային ձևերում սահմանական ներկա ժամանակաձևի ոչ նորմատիվ «ա»-ի կիրառությունը գրական տարբերակներում հիմնականում անցնում է սահմանական ներկա ժամանակաձևի «է» օժանդակ բային: Նշենք նաև, որ որոշ բարբառներում սահմանական ներկա ժամանակաձևի բայերը կազմվում են կ-եղանակիչով, որը տեսքով նման է ժամանակակից հայերենի ենթադրական ապառնիին, սակայն իմաստով համարժեք է սահմանական ներկա ժամանակաձևին: Օրինակներ՝

<ol style="list-style-type: none"> <li>1. Հիմա խեղճ թագավորը ինչ անում ա, չի անում, ինչ կատեպան բռնում ա, ինչքամ մուղաթ են կենում, չիլնում...խասոր գալիս ա էդ վարդն ուտում էլթում [4, 2, 1959, 501]:</li> <li>2. «-2է,- կըսե,- վալա իմ աչք ու ականջ ընձի խաբին...»[7, 10, 1967, 18]:</li> <li>3. Տղեն կը թռա, հեծնա ձին, թուր կառնե ձեռք, խառ կը քշե կէրթա հասնի մեշեն [7, 10, 1967, 19]:</li> <li>4. «-Տղեն կը սրտապնդվի, ձին կը քշե յառաջ, գթուր կը փլփլացրու, կը տանե-բերե, գիջու վըր թագավորի վզին...» [7, 10, 1967, 20]:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Բայց թագավորը ինչ անում, չի անում, ինչ պարտիզպան էլ վարձում է, ինչ պահակ էլ կանգնում է...հողի տակից հասնում-ուտում գնում է [3, 2002, 26]:</li> <li>2. Ասում է. «2է, հաստատ իմ աչք ու ականջ ինձ խաբում են...» [3, 2002, 59]:</li> <li>3. Տղան հեծնում է ձին, գնում հասնում է անտառի մութ խորքը [3, 2002, 59]:</li> <li>4. Սրտապնդվում, սուրն է աջ ու ձախ քաշում, տանում-բերում, արևի դեմ պսպղացնում և հարվածում է անտառի թագավորին [3, 2002, 59]:</li> </ol>
--	---

դ. Բանահյուսական և գրական հեքիաթների լեզվառձական առանձնահատկություններում մեծ դեր են խաղում դերանունները, մասնավորապես՝ ցուցական դերանունները: Դերանունների ոճականությունը յուրաքանչյուր խոսվածքին բնորոշ համապատասխան դրսևորման և հաճախակի կիրառության մեջ է: Բարբառային ձևերում հաճախ երկինչյունները վերածվում են պարզ ձայնավորի (օրինակ՝ **այ-է** փոխակերպմամբ): Արդյունքում *այս, այդ, այն, այսպես, այդպես, այնպես* դերանուններն ունենում են խոսակցական *էս, էդ, էն, էսպես, էդպես էնպես* տարբերակները: Գրական հեքիաթների մի մասում նույնությամբ պահպանվում են բարբառային ձևերը, մի մասում՝ փոխվում: Վերոհիշյալ դերանունների խոսակցական տարբերակի կիրառությունը շատ է հանդիպում նաև Հովհ.Թումանյանի հեքիաթներում,

ինչն էլ ժամանակին քննադատության է արժանացել: Թումանյանին մեղադրել են հայոց լեզուն պարզունակ դարձնելու համար: Հետագայում Հովհ. Թումանյանը մեկնաբանում է, որ այդ հնարքը կիրառել է ժողովրդական բառ ու բանի համն ու հոտը պահելու նպատակով: Նկատենք, որ թեև 20-րդ դարասկզբում քննադատվել է դերանունների նման կիրառությունը՝ համարվելով լեզվական ոչ նորմատիվ կիրառություն, այնուամենայնիվ այսօր գրական հեքիաթներում այն համարվում է հեղինակային անհատական գրելաոճի դրսևորում: Չնոռանանք, որ դերանունների խոսակցական տարբերակները գրական տարբերակների հոմանիշներ են, որոնք բանահյուսական կոլորիտ են ստեղծում հեղինակային մշակված տարբերակներում: Օրինակներ՝

<ol style="list-style-type: none"> <li>1. Էս թագավորը իրա ամարաթի աղաքին մի լավ գյուլի բաղ ա ունենում՝միջին մի Անմահական վարդի ծառ [4, 2, 1959, 501]:</li> <li>2. Ըսենց անց ա կենում մի տարի, երկու տարի, իրեք, էդ թագավորը մնում ա հարաթ էդ վարդի ֆոտին [4, 2, 1959, 501]:</li> <li>3. «...էդ թռոն ա,.... թե առնուլ չես՝էդ թռոն ա» [6, 8, 1977, 20]:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Էս թագավորը զարմանահրաշ ծաղիկներով պարտեզ է ունենում և մի Անմահական վարդ [3, 2002, 26]:</li> <li>2. «Այսպես անցնում է մի տարի, երկու տարի, երեք, չորս ու հինգ տարի...ամեն մարդ ձգտում է Անմահական վարդի անհայտ գեղեցկության հետ հանդիպելու մասին» [3, 2002, 26]:</li> <li>3. Թե կառնես՝ էդ ուռկանն է,թե չես առնի՝ էդ ուռկանն է [8, 1990, 23]:</li> </ol>
--	--

ե. Չնայած շաղկապները նյութական իմաստից գուրկ միավորներ են, բայց և այնպես բանահյուսական և գրական հեքիաթներում ունեն գործածության մեծ հաճախականություն. սրանց տեղին կիրառությամբ ստեղծվում է տվյալ բարբառին բնորոշ կոլորիտ: Բանահյուսական հեքիաթներում առավել հաճախ են կիրառվում միավորիչ-հավելական, մեկնական շաղկապները: Գրական որոշ հեքիաթներում պահպանվել են բանահյուսական նախատիպային հեքիաթների հնաբանական և գրաբարյան ձևերը, իսկ

որոշ հեքիաթներում՝ փոփոխվել է (շաղկապ-շաղկապ, շաղկապ-դերանուն): Ոճական նման հնաբանության հաճախակի կիրառությունն ավելի է ընդգծում տրամաբանական պատճառահետևանքային առարկա-երևույթ կապը: Հատկապես հետաքրքիր է **ու**, **և** շաղկապների համաժամանակյա համադրական գործածությունը միևնույն նախադասության մեջ: **Ու** շաղկապը հնչյունային կազմով ավելի սեղմ է, կապում է ավելի սերտ միություն, իսկ **և**-ի ծավալային ընդգրկումը ավելի մեծ է: Օրինակներ՝

<ol style="list-style-type: none"> <li>1. Աչք ու ականջ: [7, 10, 1967, 18]</li> <li>2. «Գարունը գալիսա թե չէ...» [4, 2, 1959, 501]:</li> <li>3. Թե հավքի օսկոռներով երկինքը սարայի մի կու շինես...» [5, 4, 1963, 347]:</li> <li>4. Ընում են չեն ընում՝մի մարդ, մի կնիկ [6, 8, 1977, 20]:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Աչք ու ականջ [3, 2002, 59]:</li> <li>2. «Հենց գարունը գալիս է թե չէ...» [3, 2002, 26]:</li> <li>3. «Եթե ձեր թագավորը կարողանա հավքերի ոսկոռներով մի պալատ շինել...» [3, 2002, 61]:</li> <li>4. Ընում է, չի լինում՝ մի մարդ ու կնիկ [8, 1990, 22]:</li> </ol>
--	--

Այսպիսով, թեև մշակված, փոխադրված ու հեղինակային հեքիաթների լեզվաոճական կառուցվածքի վրա ակնհայտորեն զգալի է բանահյուսական հեքիաթների լեզվաոճական ազդեցությունը, այնուամենայնիվ, ժողովրդական հեքիաթում խոսքը ձևակերպված է ավելի պարզ, մատչելի, դիպուկ ու կարճ: Բանահյուսական հեքիաթների

մշակված տարբերակներն ավելի նորմավորված են, հարուստ են լեզվական արտահայտչամիջոցների ձևավորմամբ: Լեզվաոճական նման առատ կիրառությունները ստեղծում են գեղարվեստական պատկեր, խոսքը դարձնում առավել ձկուն, հասցնում պերճախոսության: Հողվածի ներկայացման տարեթիվը՝ 23.02.2015

### ՊԵՐՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Անդա Ար., Անկիմյուրի բնակիչները, Հեքիաթ – վեպ, Երևան, 2010:
2. Եր. Գրիգորյան, Ձերդ գերազանցություն վատ կախարդ պառավը, Երևան, 2011:
3. Լ. Խեչոյան, Տան պահապան հրեշտակը, Երևան, «Անահիտ» հրատ., 2002:
4. «Հայկական ժողովրդական հեքիաթներ», հ. 2, կազմ. Ա. Մ. Նազիսյան, խմբ. Կ. Ա. Մելիք – Օհանջանյան, Երևան, 1959:
5. «Հայկական ժողովրդական հեքիաթներ», հ. 4, կազմ. Մ. Ա. Մկրտչյան, խմբ. Հ. Մ. Մկրտչյան, Երևան, 1963:
6. «Հայկական ժողովրդական հեքիաթներ», հ. 8, կազմ. Ա. Մ. Նազիսյանի, և Ռ. Հ. Գրիգորյանի, խմբ. Հ. Մ. Մկրտչյան, Երևան, 1977:
7. «Հայկական ժողովրդական հեքիաթներ», հ. 10, կազմ. Ս. Տարոնցի, խմբ. Ս. Հարությունյան, Երևան, 1967:
8. «Հայկական ժողովրդական հեքիաթներ», Արտաշես Նազիսյանի մշակմամբ, Երևան, «Արևիկ» հրատ., 1990:
9. Պ. Մ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Գիրք առաջին, Երևան, 1990:
10. Նվ. Վարդանյան, Հայոց իրապատում հեքիաթը. ժանրային տիպաբանական քննություն, Երևան, 2009:

## О НЕКОТОРЫХ ЛИНГВОСТИЛИСТИЧЕСКИХ ОСОБЕННОСТЯХ СКАЗКИ

**НАРИНЕ ВАРДАНЯН**

*Международный научно-образовательный центр НАН РА,  
заведующая отделом обеспечения качества образования*

**АНИ ГЕВОРКЯН**

*Международный научно-образовательный центр НАН РА,  
кафедра армянского языка и литературы, магистрант*

Сказка как своеобразный жанр искусства выделяется в двух формах: сказка фольклорная как компонент народного творчества и сказка литературная, созданная путем переработки народной сказки, или самостоятельное авторское произведение. Такое многообразие разновидностей сказки, естественно, не может подчиняться одним и тем же языковым закономерностям. В статье обсуждаются: а) преамбула, вступительная часть сказки, б) употребление оборотов речи, в) особенности использования глагольных форм, местоимений, союзов в фольклорной и литературной сказке.

Дата представления статьи: 23.02.2015

## ABOUT SOME LINGUISTIC-STYLISTIC PECULIARITIES OF A FAIRY TALE

**NARINE VARDANYAN**

*International Scientific-Educational Center of NAS RA  
Head of the QA Department*

**ANI GEVORGYAN**

*International Scientific-Educational Center of NAS RA  
Department of "Armenian language and literature"  
Master's degree student*

Fairy tale as a unique genre of Fine Arts, has quite broad dimensions, which includes both folklore-archetypal fairy tale, as well as corresponding literary versions created through their processing and own works of the author.

Such a diversity of fairy tale types, is not exposed to the same linguistic criterion. Within the frameworks of the article we studied a) fairy tale opening formulas, b) usage of phrases, c) Verbal forms, d) Pronouns, e) Applied features of conjunctions in folklore and literary fairy tales.

Article submission date: 23.02.2015

**ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՍԹԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.  
ՏԵՍԱԿԱՆ ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ**

Հոդվածում քննության է առնված 20-րդ դարի մոդեռնիստական արձակի հնարքներից մեկը՝ գիտակցության հոսքը: Երևույթը դիտարկվում է անվանումների բազմազանության համատեքստում՝ գիտակցության հոսք, մտքի հոսք, ներքին մենախոսություն՝ փորձելով հիմնավորել գրական սույն երևույթի համար ամենաբնորոշ ձևակերպումը: Ինչպես նաև դիտարկվում է գիտակցության հոսքը որպես ժանր, ոճ, ուղղություն և տեխնիկա վիճահարույց բնորոշումներում: Անդրադարձ է կատարվել նաև Վ. Վուլֆի, Ու. Ֆոլքների, Զ. Զոյսի և Տիրան Չրաքյանի ստեղծագործություններին:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** գրականություն, գիտակցության հոսք, մտքի հոսք, գրական տեխնիկա, ոճ, ժանր, Վ. Վուլֆ, Ու. Ֆոլքներ, Զ. Զոյս:

Մոդեռնիստական գրականության՝ մասնավորապես էպիկական ձևերին բնորոշ գրական հնարք է գիտակցության հոսքը, որը հիմնովին փոխում է արձակի պոետիկան, տարածաժամանակային ընդգրկումն ու ընկալումը:

Գրական այս երևույթն ունի մի քանի անվանումներ, ինչպես գիտակցության հոսք, մտքի հոսք, սուբյեկտիվ կյանքի հոսք, ներքին մենախոսություն: Երևույթի անվանման այս բազմաձևությունը, մեր կարծիքով, բխում է Ու. Զեյմսի (1842-1910) «Հոգեբանության տեսության» դրույթներից, որից անմիջականորեն ազդվել է 20-րդ դարի գեղարվեստական մտածողությունը: Գրքում

առաջին անգամ խոսելով մարդկային գիտակցության բնույթի մասին՝ հեղինակը նշում է, որ մարդու գիտակցությունը գետ է, որը երբևէ կանգ չի առնում, և որում մտքերը, զգայությունները, հիշողությունները և անակնկալ ասոցիացիաները անդադար ընդհատում են մեկը մյուսին և արտասովոր կերպով, անտրամաբանորեն միահյուսվում են: «Եվ այսուհետև դրա մասին խոսելով՝ մենք այն կանվանենք մտքի, գիտակցության կամ սուբյեկտիվ կյանքի հոսք»<sup>1</sup>: Տեսական միտքը առավելապես նախապատվությունը տալիս է «գիտակցության հոսք» ձևակերպմանը՝ զուգահեռ երբեմն կիրառելով նաև «մտքի հոսք» ձևակերպումը: Առաջին հայացքից կարող է թվալ, որ այս երկու ձևակերպումների մեջ էական տարբերություն չկա, սակայն, մեր կարծիքով, գրական (և ոչ միայն, քանի որ գեղարվեստական այս հնարքը հատկապես վերջին ժամանակներում սկսել է լայն կիրառություն ստանալ նաև կինոմատոգրաֆիայում) այս երևույթը իր իմաստի ըստ էության արտահայտությունը ձեռք է բերում «մտքի հոսք» ձևակերպման մեջ, եթե ի նկատի ենք ունենում այն նպատակը, որով առաջնորդվում են հեղինակները՝ կիրառելով այս հնարքը՝ որպես ճանաչողության, մարդուն ճանաչելու մի նոր, բացարձակ նոր տեսադաշտ, որպես մարդու անգիտակցականի և ենթագիտակցականի մեջ մուտք գործելու և մարդուն ավելի խորքից ճանաչելու

1 <http://www.psychology.ru/library/00023.shtml>



հնարավորություն: Այս ի նկատի ունենալով՝ հեղինակները, դիմելով հերոսի՝ մտքի անկառավարելի ընթացքի հոսքին, հոգեբանորեն փորձում են ներկայացնել հերոսին ենթագիտակցական շերտերի բացահայտման հորձանուտում: Եթե ի նկատի ենք ունենում այս հանգամանքը, ապա գիտակցության հոսք ձևակերման մեջ մենք մտքի անկառավարելի ընթացքը դնում ենք գիտակցական գործընթացի մեջ, այնինչ մտքի հոսք ձևակերպումը գերծ է պահում մտածողական անկառավարելի գործընթացը գիտակցության վերահսկողությունից, ինչն էլ լավագույնս արտացոլում է գրական հնարքի բուն նպատակը: Այս կապակցությամբ ուշագրավ է Ա. Բրետտնի «Սյուրռեալիզմի մանիֆեստ»-ում տեղ գտած հետևյալ ընդհանրացումը, որում նա նշում է մտքի և գիտակցության տարբերությունը. «Սյուրռեալիզմ-գուտ հոգեկան ավտոմատիզմ, որը նպատակ ունի գրավոր կամ բանավոր կամ որևէ այլ միջոցով արտահայտելու մտքի ռեալ գործառնությունը: Մտքի թելադրանք՝ առանց գիտակցության որևէ վերահսկման, անկախ գեղագիտական կամ բարոյական որևէ ըմբռնումից»<sup>1</sup>: Սյուրռեալիստները նույնպես փորձում էին գտնել մտքի անկառավարելի հոսքի՝ բացարձակ ավտոմատիզմի մեխանիզմները, ու իրենք լուծումը գտան ավտոմատ գրի մեջ: Սակայն մտքի հոսքը սյուրռեալիստական ավտոմատ գրից տարբերվում է նրանով, որ ի տարբերություն վերջինիս՝ վերահսկվում է հեղինակի կողմից, կամ ավելի ստույգ՝ ենթադրվում է, որ պետք է վերահսկվի հեղինակի կողմից, քանի որ շատ հաճախ հերոսի հոգեբանական շերտերում այն սպրդում է հեղինակի վերահսկողությունից:

Եթե անդրադառնանք գիտակցության հոսք և ներքին մենախոսություն ձևակերպումների միջև նախընտրության հարցին, ապա Լ. Զ. Սյուրմեյա-

նը էական տարբերություն չի տեսնում ներքին մենախոսության և գիտակցության հոսքի միջև՝ համարելով, որ վերջինս ավելի ընդգրկուն է, և որ այն իր մեջ ներառում է առաջին դեմքով գրված ներքին մենախոսությունը: Այս կապակցությամբ Սուրմեյանը ներքին մենախոսությունը հակադրում է սովորական մենախոսությանը՝ հիմնական առանձնահատկությունը տեսնելով հետևյալում. ըստ Սյուրմեյանի՝ ավանդական մենախոսությունը ունի կամ ենթադրում է հասցեատեր, այնինչ ներքին մենախոսության դեպքում հասցեատերը սկզբունքորեն բացակայում է: Մյուս առանձնահատկությունը, որ նշում է հեղինակը, այն է, որ ներքին մենախոսությունը գրված է առաջին դեմքով, հեղինակ-պատմողի կոմպոզիցիոն ձևը դուրս է թողնված, և երրորդ առանձնահատկությունն այն է, որ այն գրանցված է հենց տեղի ունենալու պահին, այն խոսք է իր բնօրինակ, անմշակ փուլում: Սուրմեյանը նաև գտնում է, որ ներքին մենախոսություն և գիտակցության հոսք եզրույթները առավելապես աշխարհագրական տարբերություն ունեն, և ոչ սկզբունքային. ներքին մենախոսությունը առավել կիրառվում է Ֆրանսիայում, Գերմանիայում, Ռուսաստանում, այնինչ գիտակցության հոսքը՝ առավել Անգլիայում և Ամերիկայում<sup>2</sup>:

Մեկ այլ խնդիր, որը կապվում է մտքի հոսքի հնարքի հետ, այն է, թե ինչ է սա ի վերջո: Գրականագիտական-տեսական միտքը վերջնականապես չի ձևակերպել ցայսօր երևույթը. ինչ է սա գրականության մեջ՝ մասնավորապես արձակ ձևերում՝ ուղղություն, ոճ, տեխնիկա, ժանր: Եթե ընդունում ենք, որ այն ուղղություն է, ապա պետք է ընդունենք, որ բնորոշ պետք է լինի նաև այլ ժանրերի՝ հատկապես երևույթի հետևողական և սկզբունքային կիրառմամբ գեղարվես-

1 Գարուն, հուլիս, 1996 թ., էջ 56:

2 Այս մասին մանրամասն տես Լ.Զ.Սյուրմեյան, Արձակի տեխնիկա., Եր., 2008:

տական տեքստում՝ ի նկատի ունենալով հատկապես այն հանգամանքը, որ հատկապես ծավալուն ներքին մենախոսությունների վրա սկսեց կառուցվել 20-րդ դարի արձակը, ինչը շրջում է ժանրը ոտքից գլուխ. երևույթ, որը սկիզբ դրեց նոր վեպին, մոդեռնիստական վեպին և դրա առանձնահատկություններին համաշխարհային գրականության մեջ: Սակայն, ինչպես տեսնում ենք, ներքին մենախոսության ծավալուն, հետևողական կիրառությունը բնորոշ է դառնում հատկապես էպիկական ստեղծագործություններին և այլ գրական ժանրերում նման ծավալով և ամբողջականությամբ հանդես չի գալիս, հետևաբար այն ուղղություն անվանելը, կարծում ենք, ճիշտ չի լինի: Եթե փորձենք ձևակերպել երևույթը որպես ոճ, ապա խախտվում են ոճի մասին մեր ավանդական գիտելիքներն ու պատկերացումները, քանի որ ոճը, այնուամենայնիվ, ինչպես ձևակերպված է բազմիցս, անհատական խնդիր է, նույնիսկ ամենաստիլիզացված ստեղծագործություններում առավել քան երբևէ ցայտուն դրսևորվում է հեղինակային եզակի և անկրկնելի ոճը: Հետևաբար համարել սա ոճ այնքան էլ, կարծում ենք, ճիշտ չի լինի, քանի որ այլ է ֆոլկլորյան մտքի հոսքի գրականությունը, այլ է ջոյսյանը, այլ է վուլֆյանը, այլ է մաթևոսյանականը: Եթե փորձենք դիտարկել երևույթը ժանրային, ավելի ստույգ ներժանրային սահմանման շրջանակներում, ապա այս պարագայում խախտվում են ժանրի և ներժանրային դասակարգման սկզբունքն ու տրամաբանությունը, քանի որ ներժանրային նման դասակարգումը հիմնականում կատարվում է՝ թեմատիկ-գաղափարական առանձնահատկություններից ելնելով՝ արկածային վեպ, գիտաֆանտաստիկ վեպ, սիրավեպ և այլն, սակայն եթե համապատկերի մեջ փորձենք անդրադառնալ գիտակցության հոսքի սկզբունքով գրված զանազան վեպերին, ակնհայտ է դառնում, որ թե-

մատիկ-գաղափարական որևէ ընդհանրական սկզբունք դրանց չի միավորում: Տեխնիկա. սա թերևս երևույթը բնորոշելու ամենաձշմարտանման բնորոշումն է, ինչին հակվում է նաև Սյուրմեյանը միայն մեկ վերապահությամբ. մոդեռնիստական վեպում կիրառվող տեխնիկա կամ մոդեռնիստական վեպի հնարքներից մեկը (քանի որ մոդեռնիստական շատ վեպերում, ինչպես, օրինակ՝ Կաֆկայի արձակում, այս տեխնիկան չի կիրառվում), որը քայքայում է վիպական կառույցը, խախտում է էպիկական պատումի տարածա-ժամանակային ընդգրկումը, հակվում է հերոսի ներաշխարհային ոլորտներին՝ շրջելով էպիկական պատումի պոետիկան:

Մտքի հոսքի տեխնիկան մոդեռնիստական արձակում արձակի զարգացման փուլերից մեկն է, էպիզմի քայքայման ընթացքի օղակներից մեկը: Այս պարագայում կոմպոզիցիոն ձևերի փոփոխությունից է առաջանում ժանրի քայքայումը. ի նկատի ունենք պատմողի կերպարը՝ որպես կոմպոզիցիոն ձև: Ի սկզբանե էպիզմի հիմնական տարրերից եղել է պատմողի կերպարը, որը հանդես է եկել առավելապես հեղինակի միջոցով, ինչն իրականությունը հնարավորինս օբյեկտիվ պատկերելու նպատակն է հետապնդում՝ դեպքեր, ժամանակ, տարածություն՝ հնարավորինս պատմողի կերպարի անաչառ դիրքորոշմամբ: Պատմողի կերպարի՝ այլ ձևերի ընդունումը, երբ պատմողը գլխավոր հերոսն է, կամ երկրորդական հերոսը, կամ ականատեսը, սահմանափակում է օբյեկտիվության հնարավորությունը էպիկական դաշտում: Առավելապես, եթե հերոսը երկրորդական պլանի կերպար է: Հերոսի ծավալուն ներքին մենախոսության վրա հիմնված պատումը աստիճանաբար քայքայում է ժանրը՝ նեղացնելով, սեղմելով արտաքին երևույթների պատկերման և գնահատման հնարավորությունները, առավելապես մեծացնելով հերոսի ներքին

տարածքի զննման հնարավորությունը: Հետաքրքիր է այս առումով նաև ներժանրային այնպիսի ձևերի տարածումը, ինչպիսիք են օրագրային ժանրը, էպիստոլյար ժանրը, հուշագրությունը: Մտքի հոսքի գրականությունը հնարավորինս մաքսիմալի է հասցնում էպիգրամի քայքայումը՝ գեղարվեստական իրականության տեսադաշտը կենտրոնացնելով ներաշխարհի տիրույթների վրա. պատահական չէ, որ վեպի այս ձևն անվանում են նաև «центральные романы»՝ «կենտրոնախույզ վեպ»: Միկրո և մակրո կոսմոսների հարաբերությունն է փոխվում: Կոնֆլիկտը առավելապես կենտրոնանում է անձի ներսում՝ անձ – արտաքին աշխարհ, հասարակություն կոնֆլիկտի փոխարեն: Ժանրի նման փոփոխություններն անուրանալիորեն կապված են նաև արտաքին ազդակների հետ, մասնավորապես՝ իրերի և երևույթների հանդեպ փիլիսոփայական նոր հայացք և ելակետեր՝ իռացիոնալիզմ (Ա. Բերգսոն, Ֆ. Նիցշե, Ս. Կիերկեգոր), մարդու բացահայտման նոր մոտեցումներ՝ մասնավորապես հոգեբանության մեջ (ֆրոյդյան, հասկապես Ու. Ջեյմսի տեսությունները), գիտական նվաճումներ (հարաբերականության էնշտեյնյան տեսությունը, ռենտգենյան ճառագայթների գյուտը), հասարակական աննախադեպ կատակլիզմներ (համաշխարհային պատերազմներ), և այլն. այստեղ ի նկատի է առնվում այն արտաքին տարածքը, որում ձևավորվում է նաև մոդեռնիզմը:

Մտքի հոսքի դրսևորումներ՝ առավելապես ներքին մենախոսության արտահայտություններով, հայտնի են գրականության պատմությանը, նման օրինակներ կան «Իլիական»-ում, «Մասնա ծերեր»-ում, «Ոճիր և պատիժ» վեպում, Շեքսպիրի դրամաներում և այլն, սակայն մոդեռնիստական արձակի այս տեխնիկան առանձնանում է իր ծավալով և ընդգրկմամբ: Այս տեխնիկայի խոշորագույն դեմքերից է Զ. Զոյսը, սա-

կայն, ինչպես վերջինս խոստովանում է «Ուլիսեսի» առաջին հրատարակության առաջաբանում, ինքը մեծապես ազդվել է Էդուարդ Դյուժարդենի (1861–1949) «Դավինիները քաղված են» (1887) ստեղծագործությունից, որի մասին ինքը՝ հեղինակը, ցավալիորեն նշում է, որ ժամանակին անտեսվել է՝ չարժանանալով գրեթե որևէ արձագանքի: Հարցի պատմության քննության առումով, մեր կարծիքով, բավականին ուշագրավ նյութ է հանդիսանում արևմտահայ հեղինակ Տիրան Չրաքյանի «Ներաշխարհ» ստեղծագործությունը: Գրված լինելով 1800–ականների վերջին՝ գիրքը լույս է տեսնում միայն 1906 թվականին՝ և տարաբնույթ արձագանքների արժանանում. հիմնականում քննադատողներն ավելի շատ էին, քան քննողներն ու հասկացողները. այս է պատճառը, որ հեղինակը հարկադրաբար նաև պետք է հետո առանձին մի հոդվածով հանդես գար՝ «Ներաշխարհն իր հեղինակն էր դիտված», որտեղ պետք է փորձեր պատասխանել իր ընդդիմախոսներին և բացատրել իր իսկ ստեղծագործությունը: «Ներաշխարհ»-ը իրապես չափազանց բարդ հյուսվածք լինելու պատճառով մենք չենք հանդգնի վերջնական ձևարտությունների հանգել, սակայն որոշ դիտարկումների արդյունքում ակնհայտ է դառնում, որ Ինտրայի «Ներաշխարհ»-ը ստեղծագործական հյուսվածքի ներքին շերտերում առնչակցվում է մտքի հոսքի տեխնիկային: Պնդել, որ ամբողջովին այն գրված է մտքի հոսքի տեխնիկայի գեղագիտական օրինաչափություններով, իհարկե, չենք կարող, քանի որ այստեղ խախտվում են այս տեխնիկայի հիմնական սկզբունքները.

1 Սա հատկապես ուշագրավ փաստ է, քանի որ համաշխարհային գրականության մեջ մտքի հոսքի գրականության մեծագույն վարպետները իրենց վեպերը գրել են 1910-30-ական թվականներին՝ Զ. Զոյսն իր «Ուլիսեսը» գրել է 1914-1921 թվականներին, Ու. Ֆոկները «Շառաչ և ցասումը» վեպը գրել է 1929-ին, Վ. Վուլֆը «Միսիս Դելոուեյ» վեպը գրել է 1925-ին:

այն է, հասցեատիրոջ առկայությունը՝ Աստված և Իռենեն, որոնց կերպարները միանշանակ մեկնել, իհարկե, անհնար է, քանի որ Իռենեն, օրինակ, մեկ ներկայանում է որպես հեղինակի սիրո, տենչանքի, երազների և իղձերի մարմնավորում, այնուհետև գրվածքի վերջում անսպասելիորեն վեր է ածվում սիմվոլիստական քրոջ պատկեր-գաղափարի, երկնային քրոջ, այն է՝ աստվածային սիրուն: Ակնհայտ է, որ սիմվոլիզմը նույնպես իր կնիքը թողել է ստեղծագործության վրա, ինչը շատ հաճախ օտարում և հեռացնում է գրվածքը մոդեռնիստական վեպի սկզբունքներից մեկից. որքան էլ մտքի հոսքի գրականության համար տարածական հիմնական ընդգրկումը հերոսի ներաշխարհն է, այնուամենայնիվ, այդ ներաշխարհը հազար ու մի թելերով կապված է և սնվում է իրական, արտաքին աշխարհից, որի պատկերումը մտքի հոսքի վեպերում շատ ռեալիստորեն է արվում: Ինտրայի ստեղծագործության պարագայում մենք ունենք ներաշխարհ և արտաքին աշխարհ բավականին հեղհեղուկ կապի հետ, անորոշ տարածության, ինչի պատկերումը մեծավ մասամբ դրսևորվում է սիմվոլիկ պատկերների՝ ծովի, բնության, եկեղեցու, լքված հյուղակի միջոցով: Ստեղծագործության մեջ թերևս միակ ռեալ կետը արտաքին աշխարհի հետ կապող խենթի, հարբեցողի և հոր կերպարն է: Խախտվում է նաև մտքի հոսքի մեկ այլ հիմնական սկզբունք՝ մտքի հոսքի իրականացումը բացառապես ներկա ժամանակում, քանի որ ժամանակը, ինչպես նաև տարածությունը՝ որպես այդպիսին, սիմվոլիկ պատկերում ունի «Ներաշխարհ»-ում: Այսքանով հանդերձ, Ինտրայի «Ներաշխարհ»-ը վերնագրով մեզ հուշում է գրվածքի և մոդեռնիստական մտքի հոսքի տեխնիկայի գեղագիտության հետ առնչակցությունը: Ներաշխարհային ոլորտների, տարածության և իրականության բացահայտմանն ուղղված մի հրաշալի գեղարվեստական օրինակ է

սա, որը ամբողջովին կառուցվում է հեղինակ-հերոս ներքին մենախոսության, հուշ-ապրումների հեղեղի վրա:

Մտքի հոսքի գրականության, տեխնիկայի կիրառման առումով բավականին ուշագրավ է Վ. Վուլֆի և Ու. Ֆոլկների արձակը: Վուլֆի արձակում, մասնավորապես ի նկատի ունենք «Միսիս Դելոուել» վեպը, մտքի հոսքը տարվում է երրորդ դեմքով, սակայն ամբողջ պատումը կառուցված է հենց բոլոր հերոսների ներքին մենախոսության պատահիկների վրա: Հերոսները՝ գլխավոր հերոսուհին՝ Կլարիսսան, նրա վաղեմի բարեկամը՝ Պիտեր Ուոլշը, Սեպտիմուսը, Լուկրեցիան ինքնաքննման, ինքնաճանաչման ընթացք են անցնում, արդյունքում ակնհայտ է դառնում, որ նրանցից և որևէ մեկը, ըստ էության, երջանիկ չէ:

Ու. Ֆոլկներն իր «Շառաչ և ցասում» վեպի մասին ասել է, որ այն իր ամենամեծ պարտությունն է, անհաջողությունը: Սակայն հարցազրույցներից մեկում, առավել որոշակիացնելով իր միտքը, նշում է. «Ես որոշեցի պատմել պատմությունը մտավոր թերհաս եղբոր կողմից և անհաջողություն ունեցա, ապա որոշեցի պատմել այն Քվենթինի միջոցով, կրկին անհաջողության հանգեցի, որոշեցի պատմել այն մյուս եղբոր՝ Ջեյսոնի կողմից և նորից անհաջողություն ունեցա և վերջապես որոշեցի ինքս այն պատմել և կրկին անգամ չհաջողեցի»: Այս պարտությունը, կամ ավելի ստույգ պարտության նման զգացողությունը շատերը կապում են հեղինակի ծագման և հարավի զավակ լինելու միֆի հետ, այն, որ քաղաքացիական պատերազմում հարավն ի վերջո պարտվող կողմ հռչակվեց, ինչը հոգեբանական մեծ հետք թողեց հեղինակի կայացման վրա, ինչի կապակցությամբ նա մի անգամ ասել է. «Պատերազմը հաղթելու միակ միջոցը այն պարտվելն է»: Վեպի համար էական է նաև Շեքսպիրից վերցված բնաբանը. «Կյանքը պատմություն է՝ պատմված խե-

լագարի կողմից՝ շառաչ և ցասում»:

Ֆոլկների այս ստեղծագործության մեջ հեղինակը կարծեք լուծում է մի քանի հիմնական խնդիր.

ա. արձանագրել մարդու մտքային վիճակը. մարդու ուղեղում տարբեր ժամանակների համաժամանակյա անդադար ներկայությունը,

բ. ժամանակի հաղթահարման միտումը,

գ. տարածության հաղթահարումը,

դ. գեղարվեստի դասական ձևերի հաղթահարումը,

ե. մտքի հաղթահարումը,

զ. քայքայման հաղթահարումը, և այդ ամենը արվում է բազմաձայնության միջոցով, և այս ամենի տապալումը՝ պարտությունը առաջացնում է աղմուկ և ցասում (կարծում ենք՝ հայերեն թարգմանության մեջ շառաչ բառը շատ պոետիկ է հնչում, սակայն, ըստ

էության, գեղարվեստական կառույցի բուն իմաստը չի փոխանցում: Եվ որքան էլ տեքստը ներքին տարածքում չափազանց լուռ է, բայց սարսափելի մեծ աղմուկ է առաջացնում):

Փորձելով ընդհանրացնել՝ կարող ենք ասել, որ մտքի հոսքի տեխնիկային բնորոշ են թեմատիկ և բովանդակային ընդգրկման բազմաշերտությունը, ներքին տարածության և ժամանակի առկայությունը, պատճառահետևանքային կապի խախտումը, պլոթեի բացակայությունը կամ ընդգծված թույլ արտահայտված պլոթեն, կերպարի ենթագիտակցական շերտերի բացահայտումը: Եվ ի վերջո, այստեղ պատմելու ձևն առավել կարևոր է դառնում բուն պատմությունից:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝  
19.02.2015

## ԳՐԱՎՆԱԽՈՅՈՒՆ

1. Տ. Չրաքյան (Իստրա), Ներաշխարհ, Եր., 1981:
2. Վ. Վոլֆ, Միսիս Դելուեյ:  
[http://royallib.com/book/vulf\\_virdginiya/missis\\_dellouey.html](http://royallib.com/book/vulf_virdginiya/missis_dellouey.html)
3. ՈՒ. Ֆոլքներ, Շառաչ և ցասում, Եր., 2003:
4. Լևոն Զավեն Սյուրմեյան, Արձակի տեխնիկա: Չափ և խենթություն, Եր., 2008:
5. У.Джемс., Поток Сознания., <http://www.psychology.ru/library/00023.shtml>  
<http://feb-web.ru/feb/kle/kle-abc/ke5/ke5-9171.htm>

## ЛИТЕРАТУРА “ПОТОКА СОЗНАНИЯ”: НЕКОТОРЫЕ ТЕОРЕТИЧЕСКИЕ ЗАМЕТКИ

### АЛВАРД СЕМИРДЖЯН-БЕКМЕЗЯН

*Ереванский государственный университет, филологический факультет,  
кафедра теории литературы и критики, кандидат филологических наук*

В статье рассматриваются некоторые аспекты литературы “потока сознания”. В частности, сравниваются термины “поток сознания”, “поток мысли” и “внутренний монолог”, имея целью выявить, которое из этих названий лучше выражает смысл одного из литературных течений XX века, особенно распространенного в модернистической прозе. Рассматривается также литература “потока сознания” в контексте жанра, стиля и техники.

Дата представления статьи: 19.02.2015

THE LITERATURE OF THE STREAM OF CONSCIOUSNESS:  
SOME THEORETICAL NOTES

**ALVARD SEMIRJYAN-BEKMEZYAN**

*Yerevan State University,  
Assistant at the Chair of Theory of Literature and Literary Criticism,  
Candidate of Philological Sciences*

The article discusses some aspects of the literature of the 'stream of consciousness'.

In particular, the terms stream of consciousness, flow of thoughts and internal monologue are compared, in order to identify which of these names better expresses the meaning of one of the literary movements of the twentieth century, especially common in modernistic prose.

Literature of the 'stream of consciousness' in the context of genre, style and technique is also considered.

Article submission date: 19.02.2015

*Երևանի պետական համալսարան, հայ բանասիրության ֆակուլտետ,  
գրականության տեսության և գրաքննադատության ամբիոն,  
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*

**ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑԻ «ԱՐՁԱԿ ԷՋԵՐԸ».  
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՁԱԿ**

Միսաք Մեծարենցը արևմտահայ ինքնատիպ բանաստեղծներից մեկն է, որի գրական ժառանգությունը առ այսօր հիացնում է ընթերցողին իր գեղարվեստական պատկերի արտահայտչականությամբ, քնարական հերոսի նրբագեղությամբ և բնության ու կյանքի նկատմամբ բացառիկ սիրով: Հոգվածում դիտարկվում են բանաստեղծի «արձակ էջերի» կառուցվածքային, կոմպոզիցիոն-ժանրային առանձնահատկությունները, վեր են հանվում արձակի և չափածոյի այն միտումները, որոնք հնարավորություն են ընձեռում եզրակացնելու, որ բանաստեղծ Մեծարենցը դրսևորում է որոշակի հակումներ արձակի նկատմամբ, որոնք յուրահատկություն են հաղորդում նրա բանաստեղծական ստեղծագործություններին և եկթադրել են տալիս, որ հետագայում Մեծարենցը կարող էր անցնել արձակով ստեղծագործելուն:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** արձակ և չափածո, ռիթմ, տաղաչափություն, արևմտահայ բանաստեղծություն, ժանր:

Մ. Մեծարենցի գրական ժառանգությունն ուսումնասիրելիս բախվում ես մի ուշագրավ երևույթի. լինելով բացարձակապես բանաստեղծ՝ հեղինակի որոշ ստեղծագործություններ մտածել են տալիս, որ աշխարհի՝ մեծարենցյան գեղարվեստական մատուցումը երբեմն դրսևորում է արձակ կառույցին բնորոշ ինչ-ինչ հատկանիշներ, որոնք կարող

է և հետագայում ձևավորվելին որպես յուրահատուկ պատմողականության օրինակներ: Այս երևույթի վկայությունն են թվով սահմանափակ, բայց թեմատիկայով և գեղարվեստականությամբ արտակարգ վառ ու հմայիչ «Արձակ էջերը»: Այս խորագրի տակ ամփոփված են թվով ինը ստեղծագործություն՝ «Ցայգային», «Հատվածիկներ», «Տկճորին երգը», «Առտուն», «Մեծ մայրիկը», «Որթին տերևը», «Ջրին ծառը», «Ձեռքերը», «Աշներգ», (էջ 207–237) որոնք, բացառությամբ «Մեծ մայրիկի», արձակ են այնքանով, որ, կարելի է ասել, չափածոյատիպ չեն գրված: Սրանք, իրավամբ, կարելի է կոչել «արձակ բանաստեղծություններ», քանի որ թե՛ թեմաների մատուցման ձևով, թե՛ պատկերավորման միջոցներով և թե՛ իրենց ծավալով ավելի հակվում են դեպի քնարական – չափածոն, քան արձակը: Մեծարենցը ինքը երբեմն իր՝ չափածո գրվածը վեր է ածել արձակի, երբեմն էլ՝ արձակը՝ չափածոյի: Մեզ են հասել այս երևույթն ապացուցող երկու օրինակ՝ «Մեռելոց» բանաստեղծությունը, որը բանաստեղծը չափածո հրատարակելուց հետո վեր է ածել արձակի և արձակ տարբերակով էլ է այն լույս ընծայվել, ապա և «Հովը» արձակ բանաստեղծությունը, որը հետագայում հեղինակը դարձրել է չա-

1 Բոլոր մեջբերումները Մ. Մեծարենց, Երկերի ժողովածու, Երևան, 1956թ. գրքից (տեքստում կնշվեն միայն էջերը):

փածո՝

Այս առումով նաև հարկ է նշել, որ Մ. Մեծարենցի պարագայում շատ հաճախ նույնիսկ դժվար է կողմնորոշվել, թե նրա այս կամ այն արձակ բանաստեղծությունն է ավելի ռիթմիկ, հանգավորված, գրված չափածոյի բոլոր կանոններով, թե չափածո ստեղծագործություններից ոմանք: Օրինակները բազում են, դիցուք՝ «Առտուն» արձակ և «Տեսիլ» չափածո բանաստեղծությունները:

«Առտուն» արձակ բանաստեղծությունից հատված.

*Ինչպես բարի քույր մը, գորովազեղ սուտուն, իր խունկ ձեռքերով ամենն ալ գգվեց, գգվեց ամենն ալ ցավիս ծաղիկներուն, որոնց բաժակները բարձրացան, բարձրացան՝ անոր նայվածքին լույսովը թրջվելու ( էջ 214):*

«Տեսիլ» բանաստեղծությունից.

*Երբեմն ամպոտ երկինք մը՝ շուր կը պարզվի,*

*ու լեղակի լիճ մը կ'ըլլա՝*

*հոգույս շլացիկ ծովուն դիմաց ( էջ 142) և այլն:*

Եթե «Առտուն» արձակ բանաստեղծությունը մեկ-երկու աննշան փոփոխությունների ենթարկենք, տողատենք և տողերի՝ ազատ ոտանավորին բնորոշ արտասանական ինքնուրույնությունը շեշտենք, այն կդառնա կատարյալ ազատ ոտանավորի օրինակ, ինչպես, «Տեսիլն» է:

Ի վերջո, այս օրինակները ի՞նչ ընդհանրացման են հանգեցնում. այն, որ բանաստեղծ Մ. Մեծարենցի քնարականությունը բուն է, հախուն, որ նրա արձակն ու չափածոն հաճախ տարբերակելն իսկ դժվար է, ուստի ընդգծված և անվերապահ սահմանագիծ քաշել նրա բանաստեղծությունների և «արձակ էջերի» միջև անհնար է: Ընդ որում, այս առանձնահատկությունը ի

հայտ է գալիս բանաստեղծի երկերի ոչ միայն կառուցվածքային-կոմպոզիցիոն և ոճական առումով, այլև թեմատիկայի ընտրության մեջ, ստեղծագործությունների լեզվական պատկերավորման միջոցների կիրառման տիրույթներում:

Ընդհանրությունների վերոնշյալ թվարկումը զանց չի առնում նաև այն պարագան, որ Մեծարենցի արձակ երկերը իրենց ամբողջության մեջ դրսևորում են ներքին՝ բավականին ուշագրավ առանձնահատկություն և ինքնատիպություն, որ եզակիորեն յուրահատուկ է և իրավունք է տալիս կանխանշելու հեղինակի ստեղծագործական ուղու հետագա միտումները, որոնք, դժբախտաբար, չիրականացան ձակատագրական անկասելի պատճառների հետևանքով: Խոսքը հետագայում նորավեպի ժանրով ստեղծագործելու ներուժի մասին է, որ դրսևորվում է բանաստեղծի թողած գրական ժառանգության մեջ:

«Արձակ էջեր»-ում էլ, ինչպես և իր չափածո ստեղծագործություններում, բանաստեղծին հուզում են բնությունը, գիշերը, առավոտն ու աշունը, գյուղը, իր *լուսնայանքի երգած երգը փրփումության, հիշարակներու փոշին՝ հոգիին մեջ, իրիկնայույսին ծիրանի ծովը, մշուշի խոպոպները, երազի անուշ ծաղիկները*, և այս ամենով ինքը իսկապես դառնում է *փիեզերական հարաբերականության մը լարը*, որ *փրփում է գոյություններու...թրթռումներովը...*

«Արձակ էջերը», ժանրաստեղծիչ կառույցների առանձնահատուկ դրսևորումների համաձայն, կարելի է որոշ ենթատեսակների բաժանել.

1. ստեղծագործություններ, որոնցում բացարձակապես բացակայում է գործողությունը, իշխողը հիմնականում պատկեր-զգացմունքն է ու բնության տեսարանների նկարագրությունը. դրանք են «Ցայգային», «Հատվածիկներ», «Առտուն», «Ձեռքերը», «Աշներգ» արձակ բանաստեղծությունները,

2. ստեղծագործություններ, որոն-

1 Հմմտ. էջեր 97 և 348՝ «Մեռելոց», և էջեր 115 և 348՝ «Հովր»:



ցում թեպետ շատ սեղմ, բայց կա գործողության որոշակի ընթացք, ավելի նկատելի են արձակի տարրերը. խոսքի բանաստեղծական ռիթմը տեղի է տալիս արձակին, բացի քնարական հերոսից կան նաև այլ՝ կոնկրետ կերպարներ: Դրանք են «Տկճորին երգը», «Որթին տերևը», «Ջրին ծառը»,

3. ստեղծագործություն, որն իր հատկանիշներով համապատասխանում է նորավեպ լինելու սկզբունքներին՝ «Մեծ մայրիկը»:

Մեծարենցը վարպետորեն միաձուլում է երևույթները, մարդուն, նրա մտածումներն ու խոհերը, դաշտն ու անտառը և այս ամենը ի մի բերում որպես Բնություն. Բնություն՝ գլխատառով... Բանաստեղծը փախչել է ուզում ինքն էլ չգիտի ինչից՝ իր ցավատանջ հոգու՞ց, *ուր փառապանքը լոկ երգեց երգը անծանոթ ու խորին փրփրմության՝ որ իր էության մեջ կ'ապրի...* Հորդառատ ծուխ է ձգվում նրա տենչանքի խորտակող բոցից... Մահերգը մշուշի միջից հայտնում է նրան *ծաղկափի աղջկա* մահը, որ իր անգոյությունն է ապրում հիմա... Մինչդեռ բանաստեղծին թվում էր, թե զգացմունքի ուժգնության հանդեպ մահը անգոր կգտնվի... Մահը ճնշում է նրա հոգին, մահական վանկերը սառը հանդարտությամբ նվազի նման թմրեցնում են նրան... Ճնշող է մթնոլորտը, միապաղաղությունը ծանրանում է... և հանկարծ.

*...Բայց չի լռեր երբեք աղաղակը հոգվույս՝ որ դեպի կյանք կը վազե, իսանդավատ ու բաղձալից....* ( էջ 209-210):

Ահա Մեծարենցի լավատեսությունը, կյանքի նկատմամբ նրա ունեցած սերը, ապրելու տենչի մեծությունը: Դեպի կյանք վազելը զգացմունքի մակերեսայնություն չէ, որ կարող է թվալ առաջին հայացքից. ողբերգական պահին, երբ իդձերիդ էակն է մահացել, դու կյանք ես տենչում... Կյանքի այս սերը տառապանքի խորությունից է գալիս, տանջանքի մեծությունից, ու սրա-

նով է այս ձգտումը, ապրելու, կյանքին վերադառնալու ձգտումը գեղեցիկ ու ցանկալի...

Բնությունն իսկապես երգում է Մեծարենցի գրչի տակ, պատկերներն այնքան դիպուկ են, անթերի ընտրված, որ ընթերցողը կարդալիս իր ամբողջ էությանը զգում է բանաստեղծի ասածը, զգում է առարկայորեն, շոշափելի... Նույնը և «Աշներգ» - ում ( էջ 232):

Հարկ է նշել, որ «Աշներգ» - ում և հատկապես «Ձեռքերը» - ում այլաբանական միտումները և շեշտադրումները շատանում են: Այլաբանական այս տարրերի առկայությունն էր նաև, որ ոմանք Մեծարենցին անվանեցին «խորհրդապաշտ», և որոնց դեմ բանաստեղծը հանդես եկավ հողվածով՝ «Քննադատությունը» ( էջ 282-290), որտեղ էլ վեր հանեց և մեկնաբանեց իր բնապաշտական տրամադրություններն ու նախասիրությունները: Անշուշտ, իրավացի էր բանաստեղծը. այլաբանական պատկերներ, արտահայտչականություն ստեղծելը դեռևս խորհրդապաշտ լինել չի նշանակում: Այլաբանություններին նա դիմում է մի փոքր ավելի *միափոք*, ինչպես ինքն է ասում, վերացական տրամադրություն ստեղծելու համար: Մեծարենցի խորհրդանիշերի *առողջ ու բեղմնավոր* լինելը ավելի ընդգծված է երևան գալիս նրա «Տկճորին երգը», «Որթին տերևը», «Ջրին ծառը» արձակ բանաստեղծություններում: Սրանք կարելի է ձոն, ցնծություն, տոն անվանել՝ նվիրված հայրենի գյուղին, մշակներին, բնությանը... Բանաստեղծը, որն իր՝ արոտների շունչով լեցուն, հնձված արտերի ու հերկված հողերի բույրով արբեցած երգը անհամար թրթռումներով լցրել է իրիկնալույսի ծիրանի ծովի մեջ կղզիացած արտասվող ուռենիների շուքի տակ, հանգստի է կանչում *խոնջացած, ձերմակ լաթերով դաշտի մշակներին*. բավական է, որքան նրանք հերկեցին, որքան հակված մնացին հողին, պետք է տուն դառնալ արդեն նրանց

մոտ, որ *ձեռքերնին ձակտին քիվ արած կարոտով կսպասեն*. Բանաստեղծն էլ է սպասում մշակներին՝ իր երգը խառնած ծիծեռնակների արբեցնող ձայների անծանոթ նվագին... Պիտի վերադառնան մշակները ու երգի, նվագի, տանը իրենց գրկաբաց սպասողների ամոքանքի հետ պիտի խաղաղվեն, պիտի հավվեն ու ձուլվեն բնությանն ու գիշերին՝ մինչև ցայգերգ... Ահա այն գլխատառով «Մերը», որով ներծծված էր ինքը՝ Մեծարենցը, և որը այսպիսի ձևակերպումներով, այսքան ըմբռնումով և ոգևորությամբ է ներկայացնում, այնպես է մատուցում, որ ապրեցնում է ընթերցողին, ազնիվ ու անկաշառ զգացմունքներով լցնում նրա հոգին...

Ա. Հարությունյանին ուղղված մի նամակում Մեծարենցը գրում է, որ իր մտահոգությունը իսկատիպ գրականություն ստեղծելն է, և այդ պատճառով ինքը անհրաժեշտություն է զգում *հողին ու ջուրին ու քարին հեպ սպրելու*: Բնության հետ լինելու, բնության հետ ապրելու, բնությամբ շնչելու և այն գեղարվեստորեն մատուցելու ինքնատիպ կողմնորոշումն էր, որ հասցրեց բանաստեղծին *իսկատիպ գրականություն* ստեղծելու աստիճանին: «Տկճորին երգի» նման բնութենապաշտ հրճվանք է պոռթկում և «Որթին տերևը» ստեղծագործության մեջ: Այստեղ էլ մի իրիկնավերջ, որ ինքն իսկ արբած է խաղողով ու գինիով, իր ձայնը պահի գեղեցկությունից հաճախ մոռանում է շարժումի գաղափարը, ամեն ինչ իր սքանչացումի մեջ է արձանացած, և ամբողջ հեռատանը՝ ընդարձակ ու անվերջ այգիներով, այգիներով, այգիներով է լեցուն... Ողջ գետինը, օդը, երկինքը պատված են որթի խնկագույն տերևներով. նրանք ամենուր են՝ նուրբ, շրջապատված մութ երիզով, քնքուշ երակիկներով, մեղրամոմի պես քնքուշ, լուսաշող, մեծ ու փոքր, հեռու ու մոտիկ, թաքուն ու հսկայական, տարածուն... և կանչում է բանաստեղծին, հմայում, դյուրում...

Անէացել է արդեն ինքը, բարձրանում է որթի տերևով դեպի վեր, դեպի կոթունը, հասնում է արդեն կոթունին, անցնելու է կոթունն էլ ու պիտի սուզվի դալարի մեջ, և հանկարծ ձայն. ողջունում է իրեն մեկն իրենց գյուղից. կոթունը դառնում է գյուղամիջյան ճամփան, մոմագույն երակիկները փողոցներն են գյուղի, ինքը՝ տերևը, իր գյուղն է դարձել... Եվ բանաստեղծը շարունակում է ցնձալ.

*Վախ, տեսիլքը փախեր է, բայց իրականությունը հոն է. իմ մշկենի, ծաղիկ ու ծափ գյուղս հոն է: Երագը գնաց, բայց խանդաղապրանքը դեռ կը մնա...*(Էջ 221-223)

Ինչպես վերևում նշվեց, այս երկու ստեղծագործություններում, հատկապես «Ջրին ծառ»-ում արձակ բանաստեղծության կառուցվածքային ինքնատիպությունների հետ երևան է գալիս ևս մեկ հատկանիշ. բացի քնարական հերոսից՝ այստեղ հանդես են գալիս նաև այլ, թեկուզ ակնարկով նշված կերպարներ («Որթին տերև»-ում, օրինակ, բանաստեղծին ողջունողը): «Ջրին ծառը»-ում այս երևույթը ավելի նկատելի է դառնում: Հեղինակի պատմությունն այստեղ այն մասին է, թե ինչպես իրենց գյուղի հախտոն, անզուսպ գետը հարձակվում է իր ափերի վրա, կլանում է, ինչ որ պատահի, մի անգամ նույնիսկ երկու մանուկի էլ անխղճորեն հափշտակեց և իր ծոցը տարավ, ու հիմա ամենախսաղաղ թվացող տեղում *մի՛* ի նման վեր է խոյանում գետը կիսող մի ծառ: Հեղեղումներից հետո այդտեղ, ծառի զգուշացումը հաշվի չառնելով, երկու հոգի ցանկացան լողալ, բայց գետի խորքի նենգ ջրապտույտը նրանց կուլ տվեց... Հիմա բազուկները դուրս կարկառած ծառի լեզուն հասկանում են, ու ջրի պտույտը էլ ոչ մեկին խաբել չի կարող... Նախ այն երկու մանուկը, հետո լողալ ցանկացողները, անգամ ծառի ու գետի շնչավորումը, գործողությունների որոշակի դրվագների սյուժետավո-

րուճը երկը հակում է դեպի արձակ և ինչ-որ նովելային երանգ է հաղորդում նրան. հատկապես եթե փաստենք նաև անսպասելի, անակնկալ ավարտի առկայությունն էլ, որ կա այս գործերում:

Նովելի այս հատկանիշները ավելի ընդգծված ի հայտ են գալիս «Մեծ մայրիկը» – ում: Այս ստեղծագործությունը արդեն նովելի տիպիկ օրինակ է. մեծ մայրիկին գրկել են աղջկա մահից հետո տեսնվել իր թոռնուհու հետ, ինքն աշխարհում միայն նրան ունի, նրանով է ապրում: Ու հիմա մի բարի հարևանուհի համաձայնվել է թույլ տալ տեսնել թոռնուհուն իրենց պատուհանից, երբ նա կգրուցի իր աղջկա հետ: Հուզված է մեծ մայրիկը, կարոտը, խանդադատանքը գսպել չի լինում, ու ի վերջո մեկնում է Իսկյուտար... Եվ տեսնում է թոռնուհուն... Օ՛, որքա՛ն սիրում է ինքը իր Արփիներին՝ իր միակին... Եվ հանկարծ... *մեծ մայրիկը մեռեր էր...*:

Այս ստեղծագործությունն արդեն արձակ բանաստեղծություն չէ, այն նովել է՝ իր բոլոր առանձնահատկություններով: Ճիշտ է, շարադրանքը շատ բանաստեղծական է, հուզիչ, բայց արձակ երկ է: Եթե նկատի առնենք, որ «Մեծ մայրիկը» գրված է ուշ շրջանում (1907-ին է հրատարակվել), և նովելային հատկանիշներ դրսևորվում են նաև բանաստեղծի այլ երկերում, կարելի է թույլ տալ ենթադրել, որ հավանական է, իր ստեղծագործական կյանքի հետագա շրջանում (եթե անբուժելի հիվանդությունը իրենը չաներ) բանաստեղծ Մ. Մեծարենցը հանդես գար և «մաքուր» արձակով, օրինակ՝ նովելներով: Նովելային այս ժանրային հատկանիշները, որ առկա են նրա արձակում, կարելի է համարել մեծարենցյան ստեղծագործությունների ինքնատիպություններից մեկը:

Մ. Մեծարենցի արձակ երկերի մյուս առանձնահատկությունն էլ նրանց լեզվական պատկերավորությունն է. որքան էլ արձակ, սրանք գերհագեցած

են համեմատություններով, այլաբերություններով, մակդիրներով, բառական կրկնություններով, որոնցով հենց բանաստեղծի արձակը ձեռք է բերում ընդգծված քնարականություն: Փոխաբերություններ և այլաբանություններ առանձնացնելը գործնականում դժվար է, քանի որ բոլոր ստեղծագործություններն էլ գրված են միայն այսպես.

*...ծիծեռնակները՝ իրենք այ թանձրացած մարմնական սպվերներ՝ խուսափական լույսերուն հեղր գրկված կը պարեն իրենց իրիկնային պարը... և այսպես բոլոր արձակ էջերում, բոլոր պատկերներում: Նույնն է նաև բառընտրությունն ու բառօգտագործումը՝ երագի անուշ ծաղիկներ, մեղրիկ նայվածք, դողահար հով, հիշարակներու փոշի, մշուշի խույույներ... և այսպես շարունակ:*

Մի առիթով նա ասում է, որ բառերը միշտ էլ նույնն են եղել, բանաստեղծն է, որ պիտի կարողանա նրանց շունչ ու հոգի տալ, և հենց այդպես էլ վարվում է ինքը: «Տկճորին երգ»-ում՝ «...*Իմ երգս՝ իղձի մը, արցունքի մը պես պարզ ու վճիպ... կը թռչի սարերն ի վեր, կայույրն ի վեր...*», «Մեծ մայրիկը»-ում՝ «...*Տարափր... չարածձի ձեռքի մը նման զգվական ծեծիկներ կուտար ապակիներու երեսին...*», «Որթին տերևը»-ում՝ «...*գյուղակները մանուկներու պես նսրեր են բլրակներու ծունկին, հովիպներուն գոգը, կամ գետին քղանցքին մոտ...*»:

Հաճախակի կիրառվող կառույց է այս շարքում բառային կամ բառակապակցական կրկնակը: «Տկճորին երգ»-ում *սհավասիկ իմ երգս* և *ուռենիներու շուքին փակ* արտահայտությունները, «Առտուն»-ում՝ *ինչպես բարի քույր մը, սպիտակ առյուծն*, կամ *ցանկալի առյուծն*, կամ *գորովազեղ առյուծն*, և բոլոր ստեղծագործություններում՝ նույն սկզբունքի կիրառությունը:

Ի մի բերելով վերլուծությունները՝ կարելի է ընդհանրացնել, որ.

ա. Մ. Մեծարենցի «Արձակ էջերը» իրենց բանաստեղծականությամբ,

ինքնատիպ և պատկերավոր մտածողությամբ, գեղարվեստական ձևերի կատարելությամբ արձակ բանաստեղծության եզակի նմուշներ են հայ գրականության մեջ,

բ. «Արձակ էջերը» Մ. Մեծարենցի ստեղծագործության մեջ էլ իրենց ուրույն և կարևոր տեղն ունեն և արժանի են նույնպիսի գնահատության, ինչպես գնահատված է բանաստեղծի չափա-

ծոն,

գ. իրենց անթերի քնարականության հետ նրանց հատկանշական են և բարձրարժեք արձակի առանձնահատուկ գծեր, որոնք, ցավալիորեն, իրենց զարգացումը չկարողացան ունենալ:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝  
21.03.2015

### ՊՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մ. Մեծարենց, Երկերի լիակատար ժողովածու, Եր. 1981:
2. Մ. Մեծարենց, Երկերի ժողովածու, Եր., 1956:
3. Էդ. Ջրբաշյան, Գրականագիտության ներածություն, Եր. 2011:
4. Ю. Лотман, Анализ поэтического текста, Л., 1972:
5. В. Хализев, Теория литературы, М., 2009:
6. Краткая литературная энциклопедия. т.4. М., 1967:

### “СТРАНИЦЫ В ПРОЗЕ” М. МЕЦАРЕНЦА: ОТ ПОЭЗИИ К ПРОЗЕ

#### АСТХИК БЕКМЕЗЯН

*Ереванский государственный университет, филологический факультет, кафедра теории литературы и критики, кандидат филологических наук, доцент*

М. Мецаренц один из самобытных западно-армянских поэтов, литературное наследие которого восхищает читателя выразительностью художественного образа, изысканностью литературного героя, исключительной любовью к природе, жизни. В статье рассматриваются структурные, композиционно – жанровые особенности <Страницы в прозе> поэта, в которых выявляются тенденции особенностей прозы и дают право на вывод, что у поэта Мецаренца намечалась склонность к прозе, что придает своеобразную фактуру стихотворным произведениям поэта.

Дата представления статьи: 21.03.2015.

“PAGES IN PROSE” BY M. METSARENTS: FROM POETRY TO PROZE

**ASTGHİK BEKMEZYAN**

*Yerevan State University,  
Chair of Theory of Literature and Literary Criticism,  
Candidate of Philology, Associate Professor*

M. Metsarents one of the distinctive Western-Armenian poets, whose literary heritage delights the reader by the expressiveness of the artistic image, exquisite literary hero, the exceptional love of nature and life.

The article deals with structural, compositional – genre features of «Pages in prose» of the poet, in which trend characteristics of prose are identified and give the right to conclude that M. Metsarents the poet tended to be prosaic, which gives a peculiar texture to poetic works of the poet.

Article submission date: 21.03.2015

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՏԱՐԱԾՄԱՆ  
ՀԱՐՑԵՐԸ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Գիտական իր գործունեության ընթացքում Հրաչյա Աճառյանը անդրադարձել ու համակողմանի քննության է ենթարկել հայոց լեզվի ուսումնասիրության ամենատարբեր ոլորտներ՝ հայ լեզվաբանության մեջ հիմք դնելով մի շարք գիտաճյուղերի՝ բառարանագրություն, բարբառագիտություն, լեզվի տեսություն և վերջապես հայոց լեզվի պատմություն: Որպես հայոց լեզվի պատմության հիմնադիր՝ Հրաչյա Աճառյանը կատարել է հայոց լեզվի պատմության տարբեր փուլերի շրջանաբաժանումը և այդ փուլերին գիտական ճշգրիտ անվանումներ է տվել, որը, ի համեմատություն իրենից առաջ կատարված շրջանաբաժանումների, ըստ էության առավել ճշգրիտ է արտացոլում լեզվի զարգացման իրական վիճակը: Ինչպես նշում է Գ. Զահուկյանը, նախկինում հայոց լեզվի զարգացման փուլերը առանձնացվել են հայ գրականության պատմության փուլերին համապատասխան, ապա լեզվի պատմության փուլերը դիտարկվել են իբրև գրաբարի աղավաղման հաջորդական փուլեր՝ ոսկեդարյան, արծաթի, պղնձի, երկաթի և այլն<sup>1</sup>, կամ առանձնացվել են աշխարհաբարի հետքեր որոնելով (Ա. Այտընյան) և այլն: Այսպես, Աճառյանը առանձնացնում է հնդեվրոպական նախահայրենիքից հեռանալու լեզվական վիճակը որպես «նախահայերեն», որի ժամանակագրական սահմանները

իր հստակ չեն<sup>2</sup>, ապա Հայաստանում հաստատվելու շրջանի հայոց լեզուն՝ ազդեցություն կրած տեղական և շրջակա ժողովուրդների լեզուներից, որը տվյալ փուլում իր մեջ էր ձուլում այդ լեզուները<sup>3</sup>: Հաջորդ փուլը Աճառյանն անվանում է «վիպասանական հայերեն»՝ «հանուն այն երգիչների կամ վիպասանների, որոնք (հատկապես Գողթն գավառից) շրջում էին Հայաստանի այլևայլ կողմերը և ժողովրդի մեջ երգում փանդիոի վրա այն վիպական երգերը, որ իրենք էին հնարում դյուցազների, քաջ թագավորների և նշանավոր հերոսների վրա»<sup>4</sup>: Գրերի գյուտից մինչև 460 թվականը գործածված լեզուն Աճառյանն անվանում է «մեսրոպյան հայերեն»<sup>5</sup>, որը հիմնականում նույնն էր վիպասանական հայերենի հետ, իսկ 461 թվականից մինչև XI դարի հայերենը՝ «հետին կամ հետմեսրոպյան հայերեն»: Ընդ որում, թեև Աճառյանը նշում է, որ հետմեսրոպյան հայերենն ունի զանազան շրջաններ, բայց դրանց ժամանակագրությունն ու առանձնահատկությունները չի առանձնացնում: XI դարը Աճառյանը սահմանում է որպես բարբառների առաջացման սկիզբ և միջին հայերենի զարգացման շրջան<sup>6</sup>: Թեև միջին հայերենի և աշխարհաբարի միջև հստակ

1 Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Ե., հ. 2, 1964, էջ 12:

2 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ե., հ. 1, 1940, էջ 105:  
3 Տե՛ս Նույն տեղում, էջ 203-204:  
4 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ե., հ. 2, 1951, էջ 65:  
5 Տե՛ս նույն տեղում, էջ 77:  
6 Տե՛ս նույն տեղում, էջ 377:

սահման կամ որոշակի թվական չի նշում, բայց աշխարհաբարի հնագույն նմուշը համարում է 1358 թվականի Բջնիի արձանագրությունը՝ հետևելով Այտընյանին<sup>1</sup>: Չնայած Աձառյանը նշում է աշխարհաբարի առաջին նմուշը, այնուամենայնիվ որոշակիորեն ներկայացնում է նաև բարդությունն այդ հարցում, քանի որ անգամ «Հայտնի չէ, թե առաջին անգամ երբ գրվեց աշխարհաբարը, իսկապես, կարելի էլ չէ հին դարերի համար որոշել այդ բանը, որովհետև երկու լեզուներն այնպես են նման միմյանց, որ գրեթե խտրություն չկա, զանազան հեղինակների մոտ պատահած ինչ-ինչ հասարակ բացատրությունները ոմանք համարում են աշխարհաբար իրավացի կամ անիրավ կերպով»<sup>2</sup>:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ մինչև հայոց լեզվի զարգացման աշխարհաբարյան փուլի առաջացման ու զարգացման ընթացքը նկարագրելը Աձառյանը անդրադառնում է տերմինների խնդրին. «...պետք է ասել *աշխարհաբար՝ն*, թե՞ *աշխարհաբար* (ինչպես և *գրաբար՝ն*, թե՞ *գրաբար*), այսինքն՝ այս բառը կազմված է *բառ* բառով, թե՞ *-աբար* մասնիկով<sup>3</sup>: Խորամուխ չլինելով տերմինների երկու տարբերակների ձգբրության մասին եղած վեճերին՝ ամփոփելով նշում է. «...հաղթահարեց այն կարծիքը, թե երկրորդ ձևն է ուղիղ, որին հետևում է այժմ գրողների ամենամեծ ու լավագույն մասը<sup>4</sup>»: Ըստ նրա՝ հիմնական ապացույցը *ռամկորեն* բառն է՝ կազմված *օրեն* մասնիկով, ապա նաև՝ *աշխարհօրեն* բառը՝ գործածված Շնորհալու կողմից Ս. Պարսամի վկայաբանության հիշա-

տակարանում. «Ըստ Ասորոց (բնագրի) շաղփաղփի և ծամածուռ, անյարմար և աշխարհօրէն բանիցն գոյր»<sup>5</sup>: Ըստ Աձառյանի՝ ժամանակագրական առումով մյուս հիշատակարանը, որը կրում է աշխարհաբարի կնիքը, Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպետը»-ն է՝ գրված 1478 թվականին. «այստեղ ավելի լավ է զգում մարդ աշխարհաբարի շունչը»<sup>6</sup>: Թեև Աձառյանը նշում է «ինչպես որ միջին հայերենի սահմանը որոշելու համար կարելի չէ դնել մի որևէ վճռական կետ, նույնպես նաև միջին հայերենի և աշխարհաբարի համար»<sup>7</sup>, այնուամենայնիվ բերում է *կու* մասնիկը՝ որպես միջին հայերենի բացարձակ որոշիչ նշան, իսկ հայցականի *զ* նախդիրի բացակայությունը դիտում է որպես աշխարհաբարը միջին հայերենից բաժանելու չափանիշ<sup>8</sup>: Բայց այս կետում Աձառյանը նկատում է երկու անպատեհություն, նախ՝ կան բարբառներ, որ հայցականի *զ* նախդիրը շարունակում են գործածել (Մուշի, Սիրիայի, Լեհաստանի և այլն), կամ որոշ բարբառներ, որ ժամանակի ընթացքում կորցրել են կամ դրսևորում են անմիօրինակություն գործածելու հարցում (Տիգրանակերտ, Պոլիս և այլն): Եվ ապա՝ հեղինակների գրաբարագիտության արդյունքում կարող էր տեքստերում հանդիպել *զ* նախդիրը, ինչի հետևանքով հայցականի *զ* նախդիրի գործածության ձգբրիտ ժամանակը որոշելը դժվարանում է:

Աձառյանը գտնում է, որ աշխարհաբարի տիրապետության շրջանը 19-րդ դարն է և այս շրջանի աշխարհաբարի նմուշներին բնորոշ երկու առանձնահատկություն է առանձնացնում. «1. Գրաբարի առատ խառնուրդ. 2. Տեղական բարբառների կնիքը: Այնպես որ կարելի է ասել, թե ամեն մի գա-

1 Տե՛ս Հ. Աձառյան, Հայոց լեզվի պատմություն, Ե., հ. 2, 1951, էջ 441:

2 Հ. Աձառյան, Պատմություն հայոց նոր գրականության, պր. Ա, Վարդաշապատ, 1906, էջ 11-12:

3 Նույն տեղում, էջ 440:

4 Նույն տեղում, էջ 440:

5 Նույն տեղում, էջ 440

6 Նույն տեղում, էջ 442:

7 Նույն տեղում, էջ 441:

8 Նույն տեղում, էջ 443:

վառ ունի իր տեղական առանձին աշխարհաբարը, որ գրողի գիտության համեմատ մոտենում կամ հեռանում է գրաբարից»<sup>1</sup>: Այստեղ աշխարհաբար ասելիս Աճառյանը թերևս նկատի է ունեցել առանձին գավառների ժողովրդախոսակցական լեզվի տարբերակները, որոնք գավառից գավառ տարբեր բարբառային կնիքով են հանդես գալիս. 16-18-րդ դարի նմուշներում նա առանձնացնում է մերթ Երևանի բարբառի, մերթ Պոլսի բարբառի ու թուրքերենի բառապաշարի խառնուրդներով տեքստեր. իր խոսքերով՝ «գրաբարը միացած Պոլսի ռամկականի հետ՝ թուրքերեն բառերով խառն»<sup>2</sup>:

Այս շրջանի գրական տեքստերի լեզվի մասին կարևոր դիտարկումներ է անում, ինչպես, օրինակ՝ գրության մեջ իրարից բաժանված չեն *մը, նէ, կոր, կը, պէս, է*, որոնք կցվում են բուն բառին<sup>3</sup> և այլն: Այսպես, 19-րդ դարում աշխարհաբարը հասկանալի դարձնելու երեք ուղի է առանձնացնում. «...նախ՝ հրաժարվել գրաբար քերականությունից և ընդունել աշխարհաբարի քերականությունը. երկրորդ՝ օտար (ընդհանրապես թուրքերեն) բառերի տեղ դնել նրանց համապատասխան հայերենը. երրորդ՝ խուսափել տեղական բարբառային ձևերից»<sup>4</sup>: Աճառյանն առաջին կետից բխեցնում է մի հարց. «Ո՞ր բարբառը ընդունել հիմք», և հաջորդիվ Պոլսի բարբառի աշխարհաբարի հիմք դառնալու և նրա քերականությունը որպես գրական լեզվի հիմք ընդունելու փաստը միանշանակ է ընդունում ու բացատրում. «Եթե այդ հարցը դրված լիներ մի այնպիսի ժամանակ, երբ հայ ժողովուրդը ամեն տեղ մամուլ, դպրոց և գրականություն ունեցած լիներ, իսկապես լուծումը շատ դժվար

պիտի լիներ և տեղի տար մեծամեծ վեճերի և տարաձայնությանց»<sup>5</sup>: Բայց նա, մամուլի և տպագրության վայրերի եզակի լինելու օրինակով (Վենետիկ, Պոլիս, Զմյուռնիա, Հնդկաստան) և Հռոմի ու Ամստերդամի փակված տպարանները վկայակոչելով, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան հայրերի՝ պոլսական ծագման օրինակով և Պոլսի՝ գերակա ու կենտրոնական դիրք գրավելու փաստով, վերջնականորեն ցույց է տալիս, որ Պոլսի բարբառը պիտի հաղթանակեր առանց որևէ պատճառաբանության, թեկուզ միայն տեղի և հանգամանքների բերմամբ, և ապա արձանագրում. «Պոլսի բարբառի դիրքը՝ իբրև հիմք գրական լեզվի քերականության, վճռված էր»<sup>6</sup>: Պոլսի բարբառի՝ գրական լեզվի հիմք դառնալու հանգամանքների մասին նույնն է փաստում նաև բանասեր Գ. Օզանյանը. «...Կ.Պոլսոյ բարբառը, որ թէև կիլիկեանին մաքրութիւնը չունենալով՝ շատ գռեհիկ, աղաւաղուած և թրքացած էր, սակայն Նոր Աշխարհիկ լեզու ըլլալու հանգամանքներն ունէր: Եւ որովհետեւ Կ. Պոլիսը կեդրոն դարձած էր, եւ հոն մտաւորական շարժում մը կար, ուստի բաղդն այնպէս բերաւ, որ գրականանար անոր բարբառը, որ թէև սոսկալի կերպով անձանաչելի դարձած, այսու հանդերձ կը մնար մաքուր ու կոկիկ, իր էութեանը մէջ»<sup>7</sup>:

Անհրաժեշտ է ընդգծել, սակայն, որ 20-րդ դարի կեսերից կասկածի տակ է դրվել Պոլսի բարբառի՝ գրական արևմտահայերենի հիմք լինելու հանգամանքը: Այդ տեսակետը պնդողները սուր քննադատության են ենթարկել Աճառյանին ու նրա փաստարկներն այդ մասին: Այսպես, Տ. Շահբազյանը նշում է, որ Աճառյանը, «մեծ էրուդիցիայի ու փաստերի մեծ պաշարի տեր լինե-

1 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ե., հ. 2, 1951, էջ 445:

2 Նույն տեղում, էջ 457:

3 Տե՛ս նույն տեղում, էջ 463:

4 Տե՛ս նույն տեղում, էջ 470:

5 Տե՛ս նույն տեղում, էջ 470:

6 Նույն տեղում, էջ 470-471:

7 Գ. Օզանեան, Պատմութիւն հայ լեզուի և բանահիւսութեան, Մարգուան, 1913, էջ 118:



լով հանդերձ, հին դրույթները պաշտպանելու մեծ վարպետ էր՝ մարդկանց շլացնելու յուրահատուկ ներհուն իրոնիայով»<sup>1</sup>: Անդրադառնալով արևմտահայերենի ձևավորմանը՝ հեղինակը այն համոզմունքն է հայտնում, թե այն առաջացել է ժողովրդի զարգացմանը համընթաց միջին հայերենի և գրաբարի փոխներգործման հետևանքով. «Այդ լեզուն, սնվելով ու աճելով բարբառների ու գրաբարի ընդերքում որպես նոր որակ, տարբեր է ինչպես գրաբարից, նույնպես էլ ամեն մի բարբառից, ուրեմն երևույթի ռեալ վերլուծումը չի արդարացնում Պոլսո բարբառը արևմտահայ աշխարհաբար լեզվի հիմք համարելու տեսակետը»<sup>2</sup>: Շահբազյանը փորձում է բացահայտել Աճառյանի ու նրա հետևորդների տեսակետի հիմքերը և պատճառաբանել ու հիմնավորել այդ տեսակետի սխալ լինելը. «Ըստ երևույթին մեր լեզվաբաններից շատերը արևմտահայ աշխարհաբար լեզվի հաղթանակի ապահովման գործում Պոլսո հայության՝ 19-րդ դարի կատարած պատմական ու պատկառելի մեծ դերը ստեղծագործության տեղ են ընդունում և այդ պատճառով էլ Պոլսո բարբառն են համարում արևմտահայերենի հիմքը՝ հավասարության նշան դնելով ստեղծագործողի և արդեն գոյություն ունեցող երևույթի համար պայքարողի միջև»<sup>3</sup>:

Փաստորեն, աշխարհաբարի ծագման ու կազմավորման կենտրոնը Պոլիսն էր աշխարհագրական և քաղաքական պայմանների բերումով. Հայոց պատրիարքարանն ու ազգային կարևոր հիմնարկությունները այստեղ էին, տպագրական կենտրոն էր, մեծաթիվ ազդեցիկ գաղութ կար այստեղ, ի լրումն այս ամենի՝ գավառների այն ուսումնասեր անձինք, որոնք ուզում

էին գրականությամբ զբաղվել, իրենց գավառներում մամուլ չունենալու պատճառով ստիպված էին բնականաբար Պոլիս կամ Զմյուռնիա հաստատվել և հետևաբար մայրենի բարբառը թողնելով՝ մշակել պոլսականը: Բացի այդ, 18-րդ դարում Վենետիկի Սբ Ղազարն արդեն դառնում էր նոր գրական հայերենի մշակման կենտրոն. այստեղ գլխավորապես արևմտահայ բարբառների ներկայացուցիչներ էին՝ կապված Պոլսի ու Անատոլիայի և հիմնականում Հայաստանի արևմտյան շրջանների հայության հետ, հետևաբար Վենետիկում մշակվող նոր գրական լեզուն արևմտահայ երանգ պիտի ստանար:

Աշխարհաբարը հասկանալի դարձնելու Աճառյանի առաջարկած մյուս սկզբունքը, ինչպես արդեն նշել ենք, օտար բառերի դիմաց համապատասխան հայերենը դնելն էր, որի համար կար երեք ուղի. կա՛մ գրաբարից վերցնել համապատասխան բառը, կա՛մ գավառական բարբառների միջից ընտրել համապատասխան ձևը և կա՛մ կազմել ու հնարել նոր հայերեն տարբերակ: Ըստ էության, Աճառյանը այս դրույթներում հիմնականում հետևում է Այտընյանին և հիմնավորելով նրա ասածները՝ շարունակում նրան: Սա լրացուցիչ հավաստիության և գիտական բարեխիղճ վերաբերմունքի մասին է վկայում, ինչը ևս մեկ անգամ փաստում է Աճառյանի զգուշավոր ու հոգածու վերաբերմունքը ուսումնասիրվող նյութի նկատմամբ: Այսպես, անդրադառնալով փոխառություններին՝ Այտընյանը նշում է. «Նախնեաց ատենները, երբ դեռ լեզուն իւր սահմանին մէջն էր, օտարութեանց չափն էր՝ Չափավորութիւն. Ուր որ վերջին ժամանակներուս չափն եղած է՝ Անչափություն... Նոր ժամանակներուս հայերէնն աւելի օտար բառ կը համրէ իւր մէջը՝ քան բնիկ. եւ ազգին աւելի ծանօթ է օտար լեզու՝ քան իւր ազ-

1 S. Շահբազյան, Արևմտահայ աշխարհաբարի առաջացումը, Ե., 1963, էջ 189:

2 Նույն տեղում, էջ 190:

3 Նույն տեղում, էջ 194:

գայինը»<sup>1</sup>: Ահա Աճառյանն էլ փաստում է, որ հենց պոլսահայ բարբառում փոխառությունների չափազանցությունն էր պատճառը, որ ավելի խստորեն էին դուրս մղում, պայքարում օտար բառերի դեմ, ավելին, նա իրավացիորեն ընդգծում է, որ «եթե պոլսահայ բարբառը բավական չափավոր եղած լիներ իր փոխառությանց մեջ, երևույթը այք չպիտի ծակեր, և թերևս այդպես էլ մնար»<sup>2</sup>: Սակայն ինչպես յուրաքանչյուր ծայրահեղություն, այնպես էլ թուրքերեն բառերի գերակայությունը պոլսահայ բարբառում ծնեց ավելի մեծ ծայրահեղություն՝ բացարձակ մերժողական դիրքորոշում օտար տարրերի, բառերի նկատմամբ: Որպես հետևանք այս ծայրահեղ օտարամերժ վերաբերմունքի՝ ծայր առավ հնարավորինս շատ օտար բառերի թարգմանելն ու սովորելը՝ մի կողմից, և բառակերտությունը՝ մյուս կողմից: Այնուամենայնիվ, Աճառյանը հստակորեն ներկայացնում է այնպիսի դեպքեր, երբ թուրքերենից հայերենին անցած մասնիկները ևս դուրս են մղվում լեզվից, ինչպես, օր.՝ հարցականի *մի* մասնիկը (կերա՞ր մի, տեսա՞ր մի=թրք. *Yedin mi, gördün mi*), գերադրական ածականի *է՛ն* մասնիկը (է՛ն մեծ=թրք. *e'n böyük*): Դուրս մղված մասնիկներից է նաև շարունակականի *կոր* մասնիկը, որը Պոլսի բարբառին էր առանձնահատուկ, բայց որպես թուրքական մասնիկ շուտով դադարում է գործածվել<sup>3</sup>: Այս օտարաբան կառույցները մերժելու հետ մեկտեղ, սակայն, որոշ հայերեն մասնիկներ ևս դուրս մղվեցին, ինչպես, օր.՝ «ստորադասականի *նէ* մասնիկը (ուտեմ նէ՝ «եթե ուտեմ»)՝ սխալմամբ կարծելով, թե այդ

էլ է թուրքերեն»<sup>4</sup>: Մյուս հայերեն քերականական ձևը, որը ևս, թուրքերեն համարվելով, գրական լեզվից դուրս է մղվում, ստացական հոգնակի ձևն է. այս ձևի մասին խոսելիս ևս Աճառյանը գիտական ճշգրտությունը պահպանելու համար հղում է կատարում Այտընյանին և ըստ այնմ է բացատրում իրողությունը. «Վերանորոգիչները այս ձևերն էլ սխալմամբ թուրքերեն համարեցին, որովհետև ձայներն *իս*=թրք. *Seslerimiz* պատահաբար կրում էին նման վերջավորություն... Այս «կեղծեօք» նմանությունից խաբվելով՝ լեզվի նորոգիչները այդ ձևերը թուրքերեն համարեցին և գրական լեզվից դուրս վտարեցին»<sup>5</sup>:

Այսպիսով՝ կարելի է պնդել, որ Աճառյանը արևմտահայ աշխարհաբարի կազմավորման ու կանոնավորման սկզբնական ընթացքը նկարագրելիս, սեփական ուսումնասիրություններից ու եզրահանգումներից զատ (որոնք, գիտական նորամուծություններ լինելով, անգերազանցելի աղբյուր են դարձել հետագա հայագետների աշխատությունների համար, հիմնակետ են ծառայել հայոց լեզվի պատմության ուսումնասիրման յուրաքանչյուր փորձի ճանապարհին), հիմնվում է աշխարհաբարի քերականությունն առաջինը համակողմանիորեն քննած մեծանուն գիտնական Ա. Այտընյանի դրույթների վրա: Բացի այդ, այս փուլը քննելիս Աճառյանն առավելապես անդրադառնում է բառապաշարին, դրա մշակման ուղիներին ու կանոնավորման ընթացքին ու առանձնահատկություններին (և ոչ քերականական իրողություններին):\*

Հետաքրքիր է այն փաստը, որ մերժողական այս վերաբերմունքը տարածվում էր ոչ միայն թուրքերեն, այլ նաև եվրոպական բառերի նկատմամբ ևս. «Հայտնի է ամենքին արևմտահայ

1 Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, էջ 231-232:

2 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ե., հ. 2, 1951, էջ 473:

3 Տե՛ս նույն տեղում, 471-472:

4 Տե՛ս նույն տեղում, էջ 472:

5 Նույն տեղում, էջ 473:

գրողների այն սկզբունքը, որով ամեն մի եվրոպական բառ, ինչ էլ ուզում է լինի, վտարվում է հայերենից. այսպես նույն իսկ «իօդ, խլոր, էվոլուցիա, սոցիալիզմ» և նման միջազգային բառերը վտարված են արևմտահայ լեզվից, և նրանց տեղ հնարված են «մանիշ, կանչոն, բարեշրջութիւն, ընկերվարութիւն»<sup>1</sup>: 18-րդ դարի վերջից սկիզբ առած և 19-րդ դարում բուռն ընթացք ստացած լեզուն մաքրելու այս սկզբունքը տարածելու, լեզուն հասարակությանը հասկանալի դարձնելու գործուն միջոցներից էր թուրքերեն բառերը հայերեն համապատասխան բառերի կողքին (կամ փակագծերի մեջ) որպես բացատրություն դնելը. «Այս ձևով գրողները ռամիկ թուրքախոս ժողովուրդին հայերեն էին սովորեցնում»<sup>2</sup>: Շատ հեղինակներ թուրքերեն բառերը գործածում են նաև պարզապես հայերեն բառից անմիջապես հետո կամ, ինչպես երևում է նաև Աճառյանի բերած օրինակներից, կապում են իրար *«կամ»* շաղկապով (*պատմէշ կամ մէթէրիզ, վրանի կամ չայրի* և այլն):

Այսպիսով՝ կարող ենք հաստատապես պնդել, որ նոր գրական լեզվի մշակումը, բառապաշարի կանոնավորումը 18-րդ դարի վերջին, 19-րդ դարի առաջին կեսին կատարվում էին համատարած կերպով, բայց և այնպես այդ ամենը կատարվում էր անկազմակերպ ձևով, տարերայնորեն՝ առանց միօրինականացման որոշակի կանոնների ու ընդհանուր օրինաչափությունների, առանց միասնական մոտեցումների:

Որպես աշխարհաբարի կանոնարկման և այն հասկանալի դարձնելու գործուն միջոց՝ Աճառյանը առանձնացնում է նաև տեղական բարբառային ձևերից զերծ մնալու, դրանք գրական ձևերով փոխարինելու կարևոր սկզբունքը: Նա

միանգամայն պատճառաբանված է համարում նոր գրական լեզվի բառապաշարի հարստացումը Պոլսի բարբառի բառաձևերի հիմքի վրա նախ այն պատճառով, որ քերականության հիմքում Պոլսի բարբառն էր, ապա նաև այն, որ ի համեմատություն այլ բարբառների (Ջեյթունի, Վանի, Ագուլիսի ևն)՝ «Պոլսի բարբառը իր ձայնաբանական դրությամբ բավականին վաղնջական երևույթ ունի կամ, սովորական լեզվով խոսելով, «մաքուր» է»<sup>3</sup>: Ըստ էության, Պոլսի բարբառը առավել հասկանալի ու մատչելի էր մյուս բարբառակիրների համար և միջին տեղ էր գրավում մյուս բարբառների և գրական լեզվի միջև: Աճառյանը փաստում է, որ Պոլսի բարբառը չի դրսևորում բառերի առանձնապես մեծ ձևափոխություններ կամ արտասանական փոփոխություններ՝ ի տարբերություն, օրինակ, Ջեյթունի, Մարաղայի, Վանի, Ղարաբաղի բարբառների, ինչն էլ այն դարձնում է ավելի հասկանալի: Այս կետում, սակայն, Աճառյանը չի բացարձակացնում Պոլսի բարբառի՝ ձևափոխությունից զերծ լինելը և, դրսևորելով գիտական անկողմնակալություն, մատնանշում նաև այնպիսի դեպքեր, երբ բառերի ձևափոխությունները ակնհայտ մեծ են, օրինակ՝ *սկանջ>անկաձ, անձրև>արգև, դժգոհիլ>ձուշգուհալ, անդամալույծ>անդալուծ*: Այս ամենով հանդերձ՝ Աճառյանը բարեբախտություն է համարում Պոլսի բարբառի՝ գրական լեզվի հիմք ընտրվելու փաստը. «Որքա՛ն դժվար պիտի լիներ հին հայերենի ուսումը կամ նույնիսկ իրար հասկանալը, եթե Վանի կամ Ագուլիսի նման մի բարբառ ընդունված լիներ իբրև հիմք նոր գրականի, և քերականությունը փոխելուց հետո նաև բառարանը կամ ուղղագրությունը փոխված լիներ»<sup>4</sup>: Համեմատելով Պոլսի բար-

1 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ե., հ. 2, 1951, էջ 473:

2 Նույն տեղում, էջ 475:

3 Նույն տեղում, էջ 475:

4 Նույն տեղում, էջ 476:

բառի «մաքրությունը» այլ բարբառների հետ՝ Հր. Աճառյանը հակադրվում է նաև Մ. Աբեղյանին այն կետում, որ Երևանի բարբառն է մոտիկ գրաբարին ու ավելի մաքուր է: Հայտնի է, որ Աբեղյանն ասում էր, որ «Հին գրական լեզուի հիմք կազմող ոստանիկ բարբառի սերունդն է, ամենայն հաւանականութեամբ, արդի Արարատեան հարուստ բարբառը. Հին Երեւանի, Քանաքեռ, Վաղարշապատ, Օշական, Փարպի, Աշտարակ, Կողն և այլ գիւղերի բարբառը, որ և հիմք է դարձել մեր նոր գրական լեզուի համար և իր հնչիւններով ու բառերի անաղարտ պահպանումով շատ ատելի մօտ է գրաբարին, քան որեւէ ուրիշ բարբառ, ինչպէս, օրինակ, ունի գրաբարի պէս՝ հարսանիք և ոչ հարսնիք, խարսնիս, հրսանիք, և այլն, ինչպէս ուրիշ բարբառների մէջ»<sup>1</sup>: Եվ ահա այս պնդումն է հերքում Աճառյանը՝ գտնելով, որ Պոլսի բարբառը շատ կետերում ավելի «մաքուր» է, քան Երևանի բարբառը, որը գիտունները համարում են «ամենամաքուրը». «Երևանի բարբառով՝ ասում ենք «քիր, լիս, հաղ, հաղալ, էթալ, պտի», իսկ Պոլսի ռամիկ բարբառով՝ «քուր, լուս, խաղ, խաղալ, էրթալ, պիտի», որոնք ավելի մոտիկ և կամ մինչև անգամ նույնն են գրաբարի հետ: Չմոռանանք հատկապես էական բայի Գ դեմքի անախորժ «ա»-ն, որի դեմ Պոլիսն ունի մաքուր «է»<sup>2</sup>:

Փաստորեն, լեզուն բարբառային բառերից մաքրելու համար այդ ժամանակի գրողները դիմեցին գրաբարի բառազանձին և ձևափոխված բարբառային տարրերը փոխարինեցին գրաբարյան ձևերով: Որպես բացառություն լեզվանորոգության այս տարբերակին՝ Աճառյանը բերում է մի քանի պատճառ՝ կա՛մ գրողների հնասիրու-

թյունը, կա՛մ Պոլսից տարբեր և գրաբարին ավելի հարազատ ձևեր ունեցող գավառների ազդեցությունը, կա՛մ էլ օտար բառերը գրաբարով փոխարինելը դարձել էր նախադեպ ձևափոխված ու բարբառային ձևերը փոխարինելու համար և կա՛մ էլ այս բոլոր պատճառները միաժամանակ: Այնուամենայնիվ, եթե լեզվի նորոգության այս ընթացքը ու կերպը Այտընյանի կարծիքով «խկական յետաշրջութիւն մըն է», ըստ Աճառյանի՝ մեր պարագայում այն մեծ բարեբախտություն է, քանի որ՝

1. մեր զանազան բարբառները գունե գրականության մեջ ի մի ձուլվեցին, և հայության երկու մեծ հատվածները միայն մի գրական լեզու ունեցան.

2. ժամանակակից հայը չկտրվեց անցյալից, և Ե դարից սկսած մինչև այսօր հայերեն բառերը գրական լեզվի մեջ անփոփոխ պահեցին իրենց պատկերը<sup>3</sup>:

Անդրադառնալով լեզվի նորոգության, օտարաբանություններից ու գավառաբարբառներից լեզուն մաքրելու գործընթացը սկսողին ու ժամանակաշրջանին՝ Աճառյանը չնայած հղում է կատարում Այտընյանի այն խոսքերին, թե «ովն ու երբը բնականապես ընդհանրոյ վրայ կիյնա, և չի կրնար իրեն որոշեալ հեղինակ կամ որոշ ժամանակ մը ցուցիլ»<sup>4</sup>, այնուամենայնիվ, բերում է մաքուր աշխարհաբարով գրված առաջին աշխատությունների մի քանի օրինակ՝ հերքելով այն կարծիքը, թե լեզվի մաքրության վրա առաջին ուշադրություն դարձնողը Զմյուռնիայում 1839 թվականին տպագրված «Շտեմարան պիտանի գիտելեաց» պարբերականն էր: Նա բերում է 1687 թ. Վենետիկում տպված «Պարզաբանութիւն»-ը որպես բավականին մաքուր աշխարհաբարով

1 Մ. Աբեղյան, Հայոց Հին գրակ. Պատմ. Գիրք Ա, I, Պէրոս, 1955, էջ 90:

2 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ե., հ. 2, 1951, էջ 475:

3 Նույն տեղում, էջ 476:

4 Ա. Այտընյան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, էջ 249:

գրված աշխատության օրինակ, ապա՝ 1791 թ. Վենետիկում տպված Ղ. Ինձիձյանի «Տեսութիւն համառօտ հին և նոր աշխարհագրութեան», Եղիա Թովմաճանյանի «Դպրութիւն նամակաց» (1805, Վեն), Հ. Օղուլլուլայանի «Նիւթ բժշկական» (1806, Վեն), Մ. Բժշկյանի «Պատմութիւն Պոնտոսի» (1879 Վեն) և այլ աշխատություններ: Չնայած Աճառյանը թվարկում է մաքուր աշխարհաբարով գրված աշխատություններ, այնուամենայնիվ սրանց կողքին գրվում էին թուրքերենախառն ու բարբառային բառերով խեղդված գրքեր, հետևաբար լեզուն մաքրելու միտումը կատարվում էր առանց որևէ նորմավորման և միասնականացման, մինչդեռ 19-րդ դարի կեսերին արդեն պատկերը զգալիորեն փոխվում է:

Այսպիսով՝ վերոհիշյալ ուղիներով գրական նոր լեզուն աստիճանաբար մաքրվում ու կանոնավորվում է, և լեզվի ձևավորման փուլին հաջորդում է այն տարածելու ու ժողովրդականացնելու փուլը: Ահա այս մասին Շահբազյանն ասում է. «Լեզուն, որակապես կատարելագործվելով հանդերձ, դպրոցների, մամուլի ու թատրոնի միջոցով ոչ միայն մասսայականացավ ու հանրայնացավ, ...այլև «Մայրենի լեզուն ու մայրենի բարբառը» «Ախորժ ու ընտանի» դարձան ամեն մի հայի հոգու համար և ընդգրկեցին ամբողջ թրքախոս հայկական շրջանները...»<sup>1</sup>: Որպես լեզվի տարածման գործուն միջոցներ՝ Աճառյանն առանձնացնում է դպրոցը, լրագրությունը, թատրոնը, երգերն ու վեպերը և անդրադառնում սրանցից յուրաքանչյուրին առանձին-առանձին: Որպես ազգային դպրոցի հիմնադրի՝ Աճառյանը հստակորեն նշում է Շնորհք ամիրայի անունը: Վերջինս իր սեփական միջոցներով 1790 թ. Պոլսում հիմնում է առաջին հայկական

վարժարանները և ի լրումն՝ «մի դպրոց էլ աղջկանց համար», որոնց թիվը մեկ դար անց գերազանցում էր 53-ը: Հետևաբար դպրոցաշինության գործընթացը և նույն այս դպրոցներում ազգային արժեքների ու հատկապես նոր զարգացող լեզվի տարածումն ու մաքրումը լայն ընթացք են ստանում: Ազգային դպրոցների ավելացմանը զուգընթաց՝ լրագրությունը ևս ավելի գործուն ընթացք է ստանում հատկապես Պոլսում և Ջնյուռնիայում: Ջնյուռնիայի «Արշալոյս Արարատեանը», Վենետիկի Մխիթարյան միաբանության կողմից հրատարակվող «Բազմավեպը», Պոլսի պատրիարքարանի պաշտոնաթերթ «Մասիսը» (նախկինում՝ «Սուրհանդակ», ապա՝ «Հայաստան») և մյուս հայկական թերթերը փորձում են մաքրել և տարածել նոր գրական լեզուն: Այս առումով Աճառյանը հատկապես ընդգծում ու առանձնացնում է «Մասիս» պարբերականի դերը գիտական, գրական և այլ ոլորտների վերաբերյալ հայերեն բազմաթիվ նորակերտ բառերի ստեղծման գործում, ինչպես նաև դարձվածքների կազմման ու տարածման հարցում: Եվ որպես այս պարբերականի ունեցած դերի հստակ ու ըստ արժանվույն գնահատական՝ Աճառյանը մատնանշում է. «և եթե այսօր հայերս ունինք քիչ թե շատ մշակված լեզու, կանոնավոր գիտական ու պաշտոնական լեզու, ապա այդ բանում զգալի դեր է խաղացել «Մասիսը»<sup>2</sup>: Այս գնահատականը թերևս չափազանցություն չէ, բայց այսպիսի դեր կարող ենք վերագրել նաև «Բազմավեպին», «Հանդես ամսօրեային», քանի որ հենց այս պարբերականներն էին նպաստում և իրականացնում նոր գրական լեզվի կայացումը որպես ազգային հաղորդակցման նոր ձև, և նրանց էջերում էին ստեղծվում, մշակվում ու գործա-

1 S. Շահբազյան, Արևմտահայ աշխարհաբարի առաջացումը, Ե., 1963, էջ 179:

2 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ե., հ. 2, 1951, էջ 494:

ծուրթյան լայն ոլորտներ ստանալով՝ տարածվում գանազան բառեր, ոճեր, քերականական կառույցներ և այլն:

Անդրադառնալով լեզվի տարածման գործում թատրոնի դերին՝ Աճառյանը փաստում է, որ սկզբնական շրջանում թատրոն ասվածի շրջանակները բավականին նեղ էին, և ներկայացումները տեղի էին ունենում սահմանափակ հանրության համար, բայց թատրոնի դերակատարությունը ևս մեծանում է արդեն 1858 թվականից սկսած, երբ Պոլսում հիմնվում է առաջին հայկական կանոնավոր թատրոնը: Փաստորեն, այնուհետ «թատրոնը դարձավ հայ աշխարհաբար գրական լեզվի տարածման գլխավոր միջոցներից մեկը, հատկապես մեծ քաղաքներում»<sup>1</sup>:

Ուշագրավ են նաև երգի ունեցած դերը նոր գրական լեզվի տարածման գործում և Աճառյանի վերաբերմունքը դրան: Նա նշում է, որի տարբերություն նախորդ շրջանների, երբ հայերի երգերը հիմնականում եկեղեցական գրաբար շարականներ ու տաղեր էին կամ էլ թուրքերեն աշուղական երգեր, 19-րդ դարի կեսից դրանք արդեն գրական աշխարհաբարով ազգային երգեր էին: Բնականաբար, այս երգերի միջոցով ևս լեզուն հղկվում ու, ամենակարևորը, դառնում էր հայության լայն զանգվածների կողմից գործածելի: Վերջապես Աճառյանը փաստում է. «Դպրոցի և աշակերտության միջոցով ազգային երգը մտավ տուն և հայ ընտանիքների սիրելի զբոսանքը դարձավ... Ամեն աշակերտ ուներ իր ծոցի երգարանը: Երգում էին թե՛ արևմտյան և թե՛ արևելյան գրական բարբառով երգեր...»<sup>2</sup>: Ակնհայտ է, որ ազգային երգը աշխարհաբարով էր, և այս ճանապարհով ևս այն մտնում էր ընդհանուր գործածության ոլորտ: Անդրադառնալով վեպին՝

Աճառյանը փաստում է, որ ժողովրդի շրջանում վեպը գերադասելի էր կրոնական, բանաստեղծական ժանրերի համեմատությամբ՝ նրանցում գերակշռող արկածների, դավադրությունների, գողությունների, սպանության և նմանատիպ թեմատիկայի առկայության պատճառով: Հենց այս էր դրդիչ ուժը, որ այս շրջանում թարգմանական գործը լայն տարածում գտավ, և թարգմանվում էին ֆրանսիական սովորական վեպերը: Արդյունքը եղավ այն, որ «ժողովուրդը կարդաց, լսփեց այդ վեպերը անհուն հետաքրքրությամբ. ընթերցանությունը պահանջ դարձավ, և այդ ընթերցասիրության արդյունքը եղավ աշխարհաբար գրական հայերենի համատարած ուսումը»:

Այսպիսով՝ Աճառյանը բացահայտում է արևմտահայերենի ձևավորման ու զարգացման օրինաչափությունները և ցույց է տալիս նրա մաքրման, կանոնավորման ու տարածման ուղիները՝ իր արտահայտած կարծիքներով հիմք դառնալով հետագա ուսումնասիրությունների համար:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝  
18.03.2015

1 Տե՛ս Ն. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ե., հ. 2, 1951, էջ 495:

2 Նույն տեղում, էջ 495:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, Գիրք Ա, I, Պէյրոս, 1955:
2. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, Ե., հ. 1, 1940:
3. Աճառյան Հ., Պատմություն հայոց նոր գրականության, պր. Ա, Վաղարշապատ, 1906:
4. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, Ե., հ. 2, 1951:
5. Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866:
6. Շահբազյան Տ., Արևմտահայ աշխարհաբարի առաջացումը, Ե., 1963:
7. Զահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացման փուլերը, հ. 2, Ե., 1964:
8. Օզանեան Գ., Պատմություն հայ լեզուի և բանահյուսության, Մարզուան, 1913:

## ВОПРОСЫ ФОРМИРОВАНИЯ И РАСПРОСТРАНЕНИЯ ЗАПАДНОАРМЯНСКОГО АШХАРАБАРА В РАБОТАХ АЧАРЯНА.

### МАЙРАНУШ ШАУМЯН

*Ереванский государственный университет, филологический факультет, аспирант*

В данной статье рассматривается период формирования западноармянского ашхарабара и его становление как полноправной ступени развития в истории армянского языка на основе работ Ачаряна. В статье подчеркивается не только исторические и культурные предпосылки при выборе константинопольского диалекта как краеугольного камня при формировании нового официального языка, но прежде всего именно внутрилингвистические особенности данного диалекта как наиболее отчетливо передающих мироощущение народа, в виду сохранившихся в нем наиболее древних языковых средств, описывается систематизация нового литературного армянского языка и следующую за ней адаптацию и распространение среди широких масс.

Дата представления статьи: 18.03.2015

## ISSUES OF FORMATION AND DISSEMINATION OF WESTERN ARMENIAN ASHKHARABARH IN ACHARYAN STUDIES.

### MAYRANUSH SHAHUMYAN

*Yerevan State University, Faculty of Philology, Ph.D student*

Օրինակ՝ անգլ.՝ **Give up the ghost** իդիոմատիկ արտահայտությունը պետք է հասկանալ՝ «to die» («մահանալ»): Մեկ ուրիշ օրինակ՝ անգլ.՝ **Spill the beans** (զաղտնիքը հայտնել, բերանից խոսք թոցնել, բառերը շաղ տալ) Ընդհանրապես փոխաբերական իմաստ արտահայտող իդիոմներն ավելի հեշտ են ընկալվում, երբ մենք ծանոթ ենք լինում տվյալ արտահայտության առաջացման հետ կապված պատմությանը (այսինքն՝ ինչ առիթով է տվյալ արտահայտությունն առաջին անգամ գործածվել): Շատ հաճախ իդիոմատիկ արտահայտությունները թարգմանվում են բառացի՝ արտահայտելով հուզական վիճակ, այս կամ այն խնդրի կապակցությամբ, արձագանք, վերաբերմունք և այլն: Օրինակ՝ անգլ.՝ **To hang one's head** արտահայտությունը հայերեն բառացի թարգմանվում է՝ **գլուխը կախել** (ամոթից, շփոթմունքից և այլն) կամ անգլ.՝ **To throw up ones hands/arms** հայերեն թարգմանվում է՝ **ձեռքերը թափ տալ** (զարմանքից, շփոթմունքից և այլն) անգլ. – **To fall off the chair** – հայ.՝ **աթոռից ընկնել** (օրինակ՝ խիստ զարմանքի դեպքում և այլն) Երբեմն իդիոմատիկ արտահայտությունը կարող է բաղկացած լինել երկու գոյականից՝ միացված **and** և **or** շաղկապող բառերով: Օրինակ՝ անգլ.՝ **Cats and dogs (It is raining cats and dogs – ուժեղ անձրև է գալիս)**:

Ինչպիսի՞ խորհուրդ կարելի է տալ սովորողներին՝ իդիոմատիկ արտահայտությունները սխալ ընկալումից խուսափելու համար: Միանգամից ասենք, որ գոյություն ունեն համապատասխան բառարաններ, ուղեցույցներ, որոնք հաստատ կօգնեն անգլերեն լեզուն սովորողներին:

Օրինակ՝

“**Longman Dictionary of English Idioms.-Longman Group Limited, 1979, UK, 387 pp.**”;

**А. В. Кунин: Англо-русский фразеологический словарь, Москва, 1984, 942 стр.**

Անգլերեն ուսումնասիրողների մոտ մենք կարող ենք հանդիպել նաև մի շարք այլ սխալներ էլ, սակայն դրանք հաճախ անհատական բնույթ են կրում՝ կապված տարբեր հանգամանքների հետ (օրինակ, անուշադրություն, շտապողականություն, անփութություն և այլն): Ինչ խոսք, մեր շոշափած թեման բավական ընդգրկուն է և սույն հոդվածով անհնար է այդ ամենի մասին խոսել: Մեկ բան ակնհայտ է. եթե կա հոգեբանական արգելք կամ խնդիր, անվստահություն սեփական ուժերի և, ինչու չէ, մասնագետի նկատմամբ, ապա անհնար է խորանալ լեզուն ուսումնասիրելու մեջ և մեր ջանքերն էլ կլինեն գրեթե ապարդյուն: Ուրեմն, դասավանդող մասնագետի համար առաջնային խնդիրը պետք է լինի դասարանում կամ լսարանում ստեղծել բարոյա-հոգեբանական նպաստավոր մթնոլորտ, ձեռք բերել սովորողների վստահությունը և հավատ ներշնչել սեփական ուժերի նկատմամբ: Միայն փոխադարձ վստահության և փոխըմբռնման պայմաններում կարելի է հասնել ցանկացած արդյունքի: Իսկ ինչ վերաբերում է լեզվա-քերականական սխալներին, ապա դրանք հաղթահարելի են, եթե առկա են ճիշտ մշակված թեմաներ, որոնք ուղեկցվում են համապատասխան լեզվական և քերականական վարժություններով: Միայն համառ, քրտնաջան և հետևողական աշխտանքի դեպքում մենք կարող ենք հասնել դրական արդյունքի:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝ 13.01.2015

## ՊՐԱՇԱՆԻՅՈՒՆ

1. FLSP: Foreign Language for Special Purposes, –Yerevan State University, 2002, 177 pp.
2. T. J. Fitikides: Common Mistakes in English, 2000, England (Printed in Malaysia) 200 pp.
3. Longman Dictionary of English, 1979, UK, 387 pp.
4. Michael Vince with Paul Emmerson: Intermediate Language Practice, Macmillan Education, 2003, Oxford, 296 pp.
5. Michael Vince with Peter Sunderland: Advanced Language Practice, Macmillan Education, 2003, 326 pp.
6. <http://www.lingholic.com/learning-foreign-language-10-most-common-mistakes>
7. John Eastwood: Oxford Practice Grammar, p. 247, – Oxford University Press

### ПСИХОЛОГИЧЕСКИЕ ТРУДНОСТИ И ПРОБЛЕМЫ ОБУЧЕНИЯ ИНОСТРАННЫМ ЯЗЫКАМ: НАИБОЛЕЕ ЧАСТО ВСТРЕЧАЮЩИЕСЯ ЛИНГВО-ГРАММАТИЧЕСКИЕ ОШИБКИ И ПУТИ ИХ ПРЕОДОЛЕНИЯ В АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ

**АСМИК АБРААМЯН**

*Национальная Академия Наук РА, Международный научно-образовательный центр,  
преподаватель английского языка*

В данной статье обсуждаются те психологические проблемы, которые мешают учащимся общаться на английском. Рекомендуются способы преодоления данных психологических и языковых барьеров и проблем. На конкретных примерах раскрываются некоторые общие лингво-грамматические ошибки, с которыми учащиеся сталкиваются наиболее часто. Особое внимание уделяется развитию языкового мышления.

Дата представления статьи: 13.01.2015

### PSYCHOLOGICAL DIFFICULTIES AND THE PROBLEMS OF LEARNING A FOREIGN LANGUAGE: THE MOST COMMON LINGUISTIC GRAMMATICAL ERRORS AND WAYS TO OVERCOME IN ENGLISH

**HASMIK ABRAHAMYAN**

*International Scientific-Educational Center of the National Academy of Sciences  
of the Republic of Armenia, Lecturer of English*

The given article discusses the psychological problems that prevent students to communicate in English. Ways are recommended to overcome these psychological and language barriers and problems. Some common linguistic and grammatical errors are revealed on specific examples that students encounter most often. Particular attention is paid to the development of linguistic thinking.

Article submission date: 13.01.2015



*Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,  
մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոն, հայտորդ*

**«ՀԱՋՈՐԴԵԼԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ**

Հողվածում վերլուծության են ենթարկվել հաջորդելիության բոլոր սահմանումները և տարբեր հեղինակների մեկնաբանումները այս հասկացության վերաբերյալ: Արդյունքում՝ սույն հասկացության բազուն ու տարաբնույթ սահմանումները դասակարգել ենք և ներկայացրել «հաջորդելիություն» հասկացության պատմա-տրամաբանական զարգացումը հիերարխիկ աստիճանների տեսքով. փիլիսոփայական, գիտական, մանկավարժական և նեղ – մանկավարժական (մաթեմատիկայի դասավանդման տեսանկյունից): Որպես դասակարգման հիմք ենք վերցրել հաջորդելիության այն գործառույթը, որը դոմինանտ է տվյալ երևույթում:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** հաջորդելիության սկզբունք, սահմանում, բառարան, փիլիսոփայական, գիտական, մանկավարժական:

Գոյություն ունեն «հաջորդելիություն» հասկացության տասնյակից ավելի սահմանումներ, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է մեկնաբանում հաջորդելիության իմաստն ու նշանակությունը: Հաջորդելիության սահմանումներ գտանք հայալեզու, ռուսալեզու հանրագիտարաններում, բացատրական, փիլիսոփայական, մանկավարժական, սոցիալական բառարաններում, որոնցում «հաջորդելիություն» հասկացությունը բացահայտվում է տարբեր տեսանկյուններից: Որոշ հեղինակներ ուսումնասիրել են տարբեր երևույթների հաջորդելիության հարցը, մյուսները՝ ուսումնական առարկաների հաջորդելիությունը, երրորդները՝ միև-

նույն առարկայի տարբեր թեմաների, հաջորդները՝ ուսուցման տարբեր փուլերի հաջորդելիությունը: Հաջորդելիության յուրաքանչյուր գործառույթին համապատասխան տրվել են այս ֆենոմենի բազմաբնույթ սահմանումներ:

Փիլիսոփայական բառարանում հաջորդելիության սահմանումը հետևյալն է. «Հաջորդելիությունը զարգացման տարբեր փուլերի և աստիճանների միջև կապ է, որի էությունը կայանում է ամբողջի՝ որպես համակարգի փոփոխման դեպքում նրա կամ նրա առանձին կողմերի որոշ տարրերի պահպանման մեջ: Հաջորդելիությունը բացասման բացասման օրենքի կարևորագույն գծերից է:...» [1,360]: Հաջորդելիության փիլիսոփայական սահմանումն իր ծավալով շատ լայն է և ներառում է հաջորդելիության ընդհանուր, համատիեզերական և համարնական գործառույթները: Առաջին հերթին դրանք կապված են կենդանի աշխարհի հետ: Պետք է նշել, որ աշխարհում ամեն ինչ գտնվում է դիալեկտիկական զարգացման մեջ, այսինքն՝ առաջանում է, շարժվում ու փոփոխվում է, ի վերջո՝ հակասվում և ժխտվում է հաջորդների կողմից: Սերունդներին փոխարինում են մյուսները, նորը ժխտում է հինը, սակայն աստիճանաբար ինքն էլ հին դառնալով՝ ժխտվում է առավել նորի կողմից: Առանց հաջորդելիության անհնար է նոր տեսակների առաջացումը կենդանի բնության մեջ: Դիալեկտիկորեն ընկալված բացառումը ենթադրում է ոչ միայն հնի բացառում, քայքայում, ջնջում, այլև պահպանում և զարգացում է այն ռացիոնալի, որն արդեն իսկ ձեռք էր բերվել

նախորդ փուլում [1,15]: Պահել դրականը բացասականում և նկատել հաջորդի նախադրյալները ներկայիս արդյունքի մեջ. սա է գլխավորը աշխարհի բանական գիտակցման մեջ: Այսպիսով, սերունդից սերունդ պահպանվում և փոխանցվում են օրգանիզմների «լավ» հատկանիշները, նրանք էլ գումարվում, համալրվում են և վերածվում են ադապտացիայի՝ հարմարվողականության: Հաջորդելիությունը բնորոշ է նաև մարդկության պատմությանն ու մշակույթին: Չնայած պատմության և, հատկապես, մշակույթի սուբյեկտիվ ընկալմանը՝ գոյություն ունեն որոշ օբյեկտիվ օրինաչափություններ: Համաշխարհային մշակույթի պատմության ողջ ընթացքում գործող ամենակարևոր և ամենաընդհանրական ու օբյեկտիվ օրինաչափություններից մեկն է հաջորդելիությունը:

Ուսուցման հաջորդելիության խնդիրը կրթության հնագույն խնդիրներից է: Այն առաջացել է ավելի վաղ, քան ավագ սերնդի կողմից փորձ է արվել մատաղ սերնդին փոխանցել իր սոցիալական փորձը սովորույթների, ավանդույթների, արարողակարգերի, վարքի էթիկական նորմերի, համատեղ ապրելու կանոնների միջոցով: Սոցիալական փորձի փոխանցման պահանջմունքից էլ ձևավորվեցին կրթության ամբողջական համակարգերի նախատիպերը: Զարգացման ավելի բարձր մակարդակում ցածր մակարդակի որոշ հատկությունների պահպանման և կրկնման դեպքում միայն տեղի կունենա առաջընթաց: Այդպես, պատմական առաջընթացի աստիճանով քայլ առ քայլ բարձրանալով և անցնելով մի հասարակական – տնտեսական կազմավորումից մյուսին, մարդկությունն ամեն անգամ նորովի չի ստեղծում իր նյութական և հոգևոր մշակույթը, այլ հենվում է արդեն իսկ ձեռք բերած արդյունքների վրա: Այսպիսով, ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր մշակույթի զարգացման գործընթացը անխնաստ կլինի առանց հաջորդելիության [1,34]: Առաջիններից ուսուցման

հաջորդելիության հարցը այս կամ այն չափով շոշափել են դեռևս հին հույն և հռոմեացի մտածողները: Նրանց կողմից դիտարկվող հաջորդելիությունը լայն և ընդհանուր էր, տալիս էր հաջորդելիության փիլիսոփայական մեկնաբանումը և կապված էր «շարժում» և «զարգացում» հասկացությունների հետ: Անտիկ մտածողները կարևորել են «ուսուցչից» «աշակերտներին» տրվող գիտելիքները, ինչպես նաև դիտարկել են ուսուցման բոլոր փուլերի փոխկապակցվածությունը, նրանց որոշակի հաջորդականությունը: Մեծ է հաջորդելիության ազդեցությունը հասարակության օրինաչափ զարգացման վրա: Հաջորդելիությունը հանդես է գալիս որպես անընդհատ կրթության համակարգում մարդու զարգացման օրինաչափություն: Տարբեր մանկավարժական համակարգերում անընդհատ և առաջադիմական կրթության գաղափարներ հանդիպում ենք մի շարք հետազոտողների աշխատանքներում շատ ավելի վաղ, քան մանկավարժության մեջ հայտնվեց «հաջորդելիություն» եզրույթը (Մ.Ֆ. Կվինտիլիան, Տ. Կամպանելա, Տ. Մոր, Մ. Մոնտել, Յ.Ա. Կոմենսկի, Գ. Պեստալոցցի, Ա. Դիստերվերգ, Կ.Դ. Ուշինսկի): Հաջորդելիությունն ունի խորը փիլիսոփայական արմատներ: Այն դիտարկել է Հեգելը՝ որպես կրկնակի բացասման օրենքի կարևոր հատկանիշ, որը պայմանավորում է բոլոր առարկաների զարգացումը:

Փիլիսոփայական սահմանումը նշում է հաջորդելիության լայն գործառույթները, որոնցից է համամարդկային փորձի և մարդկության կուտակած գիտելիքների փոխանցումը: Իրականության վերաբերյալ օբյեկտիվ գիտելիքների մշակումը, տեսական համակարգումն ու փոխանցումը հաջորդելիության ընդհանուր գործառույթը բարձրացնում են գիտական մակարդակի վրա: Գիտական տեսության զարգացումը հնարավոր է միայն ժխտվող գիտելիքի բովանդակության մեջ դրականի պահպանման և նորի մեջ

ներառման դեպքում: Այսինքն՝ հաջորդելիության մեկնաբանումը գիտական տեսանկյունից իր ծավալով ավելի նեղ է, քան փիլիսոփայական՝ հաշվի առնելով, որ փիլիսոփայությունը է բոլոր գիտությունների «մայրն է»: Այսպիսով՝ հաջորդելիության գիտական և փիլիսոփայական սահմանումները հարաբերվում են՝ որպես տեսակը սեռին: Պատկերելով էյլեր-Վիեննի օղակներով՝ կունենանք



*Գծապատկեր 1.*

Ընդհանուր գիտական տեսանկյունից հաջորդելիություն հասկացության ամբողջական մեկնաբանման առաջին փորձերը կատարվել են 17-րդ դարում: Դրանք պատկանում են Յ. Ա. Կոմենսկուն: Գիտելիքը զարգանում է շարժման մեջ, մի վիճակից անցնելով մյուսին՝ դառնում համընդհանուր: Մի տեսություն հերքվում է մյուսով, բացահայտվում են փոփոխման օրենքներն ու կապերը՝ որպես նրա մի վիճակի հերքում հաջորդով: Ժխտվող վիճակը չի նետվում, այլ՝ պահվում է ձևափոխված տեսքով: Իրականությունն անհրաժեշտ է ուսումնասիրել ոչ թե ստատիկայում, այլ առաջին հերթին՝ դինամիկայում՝ շարժման և զարգացման մեջ: Գիտական մակարդակում հաջորդելիության սկզբունքի գործառնություններից առաջին հերթին պետք է նշել համակարգերի ստեղծումը: Համակարգերի զարգացման մեջ առկա է պատմական հաջորդելիությունը: Համակարգային մոտեցումը դիտարկում է ոչ այնքան օբյեկտի կառուցվածքը, նրա ստատիկ վիճակը, որքան այլ օբյեկտի հետ ունեցած կապն ու հաջորդելիությունը կամ էլ միևնույն օբյեկտի տարբեր վիճակների, որևէ օբյեկտի վերափոխումը

մեկ այլ՝ որակապես նրանից տարբերվող օբյեկտի: Նոր համակարգը ստեղծում ու ձևավորում է իր սեփական բաղադրիչները, որոնք պակասում էին նախկին գործառնություններն իրականացնելու և նպատակներին հասնելու համար:

Հաջորդելիություն հասկացության մեկնաբանումը մանկավարժության տեսանկյունից այդ ֆենոմենը բարձրացրեց այլ մակարդակի վրա և պայմանավորեց այդ սկզբունքի պատմա-տրամաբանական զարգացման երրորդ մակարդակը: Մանկավարժական բառարանում տրված է հաջորդելիության հետևյալ սահմանումը. «Առարկայի ուսուցման տարբեր աստիճաններում նրա մասերի միջև անհրաժեշտ կապերի և ճիշտ հարաբերակցության հաստատում: Հաջորդելիության հասկացության տակ հասկանում ենք նաև այն պահանջները, որոնք ներկայացվում են սովորողների գիտելիքներին և կարողություններին ուսուցման յուրաքանչյուր փուլում, ինչպես նաև նոր նյութի ուսուցման ձևերին, մեթոդներին և հնարներին: Հաջորդելիությունը բնորոշ է միևնույն պետության կամ տարբեր պետությունների հանրակրթական դպրոցների ուսումնական ծրագրերին, այն ապահովում է զուգահեռ դասարանցիների գիտելիքների ծավալների հավասարեցում և ուսումը շարունակելու հավասար հնարավորություններ [2,624]: Հաջորդելիության մանկավարժական սահմանումը ներառվում է այդ սկզբունքի գիտական մեկնաբանության մեջ: Նախ այն պատճառով, որ մանկավարժությունը՝ որպես գիտություն, ընկած է բոլոր գիտությունների բազմության մեջ: Ինչպես նաև հաջորդելիության սկզբունքի գիտական առաջին գործառնությամբ՝ համակարգաստեղծը, վերաբերում է նաև ուսուցման համակարգերին, որոնցում գործում են համակարգերի գոյության և զարգացման ընդհանուր օրենքները: Այս դեպքում էլ հաջորդելիության մանկավարժական և գիտական սահմանումները հարաբերվում են որպես տեսակը

սեռին: Այսպիսով՝ պատկերելով էլյեր-վիեննի օղակներով՝ կունենանք.




*Գծապատկեր 2.*

Մանկավարժական մակարդակում հաջորդելիությունը ուսումնասիրել են մի շարք մանկավարժներ, գիտնականներ, հոգեբաններ: Ուսուցման մեջ հաջորդելիության ապահովման առաջին լուրջ փորձերը նույնպես կարելի է կապել Յ.Ա. Կոմենսկու անվան հետ: Հեղինակի պնդմամբ՝ բոլոր պարապմունքները պետք է դասավորվեն այնպես, որ հաջորդը միշտ հենվի նախորդի վրա, իսկ նախորդը միշտ ամրապնդվի հաջորդով: 19-րդ դարում Կ.Դ. Ուշինսկին առաջիններից անդրադարձավ հին և նոր գիտելիքների միջև անհրաժեշտ կապերի հաստատման և գործնականում հաջորդելիության խնդրի հետազոտման հարցերին:

Մեթոդական մակարդակում հաջորդելիության վերաբերյալ կատարված հետազոտությունները կրկին ապացուցում են հետազոտվող սկզբունքի բազմաթեքությունն ու բազմիմաստությունը: Չնայած նրան, որ ուսուցման տարբեր առարկաներում հաջորդելիության կապերը բովանդակային և մեթոդական առումներով ունեն որոշակի առանձնահատկություններ, սակայն բոլոր դասընթացներում էլ հաջորդելիությունը ապահովում է նորի զարգացումը հնի մեջ, էապես նոր որակների կառուցումը հնի դրականի պահպանմամբ: Մեր աշխատանքում այն կդիտարկվի միայն մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի տեսանկյունից, երբ հաջորդելիությունը դրսևորվում է ուսում-

նական նյութի, ուսուցման միջոցների և կազմակերպման ձևերի համաձայնեցման մեջ: Հաջորդելիության մեկնաբանման մեթոդական մակարդակը ներառվում է մանկավարժական մակարդակի մեջ, քանի որ հաջորդելիության կապերի իրագործումը մանկավարժության մեջ ունի ավելի ընդհանուր բնույթ:



*Գծապատկեր 3.*

Մաթեմատիկայի դասավանդման՝ նեղ մասնագիտական տեսանկյունից, հաջորդելիությունը դիտարկվել է բազմաթիվ մաթեմատիկոս-մանկավարժների կողմից: Այս մակարդակում հաջորդելիության խնդիրը շոշափել է մեթոդական մի շարք հարցեր. դպրոցի շրջանավարտի՝ բուհում սովորելու մաթեմատիկական պատրաստվածության տեսանկյունից, մաթեմատիկական պատրաստվածության տեսանկյունից ուսանողի՝ ապագա մասնագիտությանը պատրաստ լինելը: Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում հաջորդելիության հիմնախնդրին սվիրված հետազոտությունները առավելապես միակողմանի բնույթ են կրում. այս կամ այն բովանդակային – մեթոդական գծերով, ըստ ուսումնական նյութերի, որոնք ներկայացնում են դասընթացի մի մասը, ուսուցման որոշակի աստիճանում: 90 – ական թվականների սկզբերին հրատարակվեց միջին մաթեմատիկական կրթության չափորոշի նախագիծ, որում արտացոլում գտան սովորողների մաթեմատիկական պատրաստվածությանը ներկայացվող պահանջները ուսուց-

ման երեք աստիճաններով՝ տարրական, հիմնական և ավագ: Սակայն այդ նախագծում ևս համապատասխան ուշադրություն չի դարձվել մաթեմատիկայի ուսուցման մեջ հաջորդելության կապերի զարգացմանը:

Այսպիսով՝ «հաջորդելություն» հասկացությանը նվիրված բոլոր աշխատություններն ուսումնասիրելով՝ մենք

կարողացանք հասկացության զարգացումը ներկայացնել հիերարխիկ աստիճանների տեսքով՝ կախված տվյալ բնագավառում հաջորդելության դոմինանտ գործառնությունից:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝  
15.03.2015

### **ՉՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Баллер Э. А., Преемственность в развитии культуры, Москва, 1967, 254 с.
2. Педагогический словарь, том 2, Москва, И.А. пед. Наук РСФСР, 1960, 766 с
3. Философская энциклопедия, “Советская энциклопедия”, том 4, 1967, 591 с

## **КЛАССИФИКАЦИЯ ОПРЕДЕЛЕНИЙ ПОНЯТИЯ ПРЕЕМСТВЕННОСТИ**

### **СЕДА КОЧАРЯН**

*Армянский государственный педагогический университет имени Хачатуря Абовяна,  
кафедра методики преподавания математики, соискатель*

В статье проанализированы все определения преемственности и толкование этого понятия разными авторами. Систематизированы различные определения преемственности и представлено историко-логическое развитие понятия в виде иерархических ступеней – философской, научной, педагогической, узко – педагогической(с точки зрения преподавания математики). За основу классификации взята та функция преемственности, которая доминантна в данном случае.

Дата представления статьи: 15.03.2015

## **THE CLASSIFICATION DEFINITION OF SUCCESSION PRINCIPLES**

### **SEDA KOCHARYAN**

*Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,  
Chair of the Methods of Teaching Mathematics, Applicant*

The article analyzes all the definitions of “Succession” and the interpretation of this concept by different authors.

Various definitions of the concept “Succession” are systematized and historical-logical development in hierarchical level is provided: philosophical, scientific, educational, pedagogical, narrow pedagogical (from the point of view of teaching mathematics). As a basis of classification is taken that function of succession, which is dominant in this case.

Article submission date: 15.03.2015

## ԱԼԵՔՍԱՆԳԻ ԳՈՒՇՉՅԱՆ

*Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,  
մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոն, դասախոս,  
մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր*

## ՍԵԳԱ ՔՈՉԱՐՅԱՆ

*Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,  
մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ*

### ՀԱԶՈՐԴԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հոդվածը նվիրված է մանկավարժական առումով շատ կարևոր թեմային. քննարկված են հաջորդելիության սկզբունքի իրագործման հնարավորությունները բուհական ուսուցման գործընթացում՝ մասնավորաբար մանկավարժական պրակտիկայի համակարգում: Հոդվածում առաջարկվում է մանկավարժական պրակտիկայի անցկացման նոր մոդել, որում հաջորդելիության գործառույթները իրագործվում են մանկավարժական համալսարան – դպրոց համակարգում:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** հաջորդելիության սկզբունք, մանկավարժական պրակտիկա, ուսանող, մոդել, բուհական ուսուցում, գործառույթ:

«Բարձրագույն կրթության բնագավառում պրակտիկայի կազմակերպումը շարունակում է մնալ որպես կրթական համակարգի «աքիլլեսյան գարշապատ», – իր ելույթում է նշել ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը 2013 թվականի հուլիս ամսին ՀՊՄՀ -ում տեղի ունեցած միջազգային գիտաժողովի բացման ժամանակ նվիրված «Անընդհատ (շարունակական) պրակտիկայի արդիականացումը և կազմակերպման մեխանիզմների ներդրումը բարձրագույն մանկավարժական կրթության համակարգում» թեմային [4]: Բազմադարյա փորձ ու խորը ակունք-

ներ ունեցող հայ մանկավարժության անեզր տարածքի ամենամանջակ հատվածը պատկանում է մանկավարժական պրակտիկային: Ցավոք, այդ փաստը նշում են ոչ միայն մանկավարժներ, այլև ուսանողներ գիտափորձի շրջանակներում անցկացված հարցումների ժամանակ: Հարցման թերթիկները համացանցով ուղարկվել են մանկավարժական համալսարանի ինչպես ներկա, այնպես էլ նախկին ուսանողներին: Հարցմանը մասնակցել է 86 մարդ:

Մանկավարժական պրակտիկան որակյալ մասնագետ պատրաստելու հիմնաքարն է: Այսօրվա մանկավարժին ներկայացվող պահանջներն էապես տարբերվում են նրանցից, որոնք ներկայացվում էին տասը, նույնիսկ հինգ տարի առաջ: Արդի հասարակությունը պահանջ է ներկայացրել վերանայելու կրթական համակարգը՝ կրթական միասնական դաշտ ինտեգրելով ուսուցման մեթոդներն ու ձևերը, և առհասարակ բոլոր այն բաղադրիչները, որոնց շնորհիվ կկերտվի մեր ժամանակների կիրթ անձնավորությունը: Մեր հանրապետությունում տարիներ շարունակ մանկավարժական պրակտիկայի անցկացման կարգը և եղանակը գրեթե անփոփոխ էին: Դա լուրջ խնդիր էր, հաշվի առնելով այն փաստը, որ հարցված ուսանողների մոտ 37 % (31 հոգի) կարծիքով՝

մանկավարժական պրակտիկայի անցկացումը կրում է ձևական բնույթ և չի ծառայում իր նպատակին: Մանկավարժական պրակտիկան, ըստ ուսումնական պլանի, օրինակ՝ մանկավարժական համալսարանի ֆիզիկայի, մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետում նախատեսվում էր երրորդ կուրսի երկրորդ կիսամյակում (առկա ուսուցմամբ չորս շաբաթ) և հինգերորդ կուրսի երկրորդ կիսամյակում (հեռակա ուսուցմամբ չորս շաբաթ): Երրորդ կուրսի ուսանողը, ով նոր-նոր է ծանոթանում մանկավարժության «գաղտնիքներին», լիարժեք չի տիրապետում այնպիսի առարկաների, ինչպիսիք են մանկավարժական վարպետությունը, մանկավարժական հաղորդակցումը և նման այլ առարկաներ, մտնում էր դասարան և որպես ուսուցիչ ներկայանում ամբողջ դասարանին: Ուսուցիչը սխալվելու իրավունք չունի, միաժամանակ բնական է, որ մանկավարժական փորձ չունեցող ուսանողը և՛ անվստահ կարող է լինել, և՛ շփոթված (հարցվածների 54%): Չի բացառվում նաև, որ ուսանողը չցանկանա երկրորդ անգամ դասարան մտնել: Դա իրոք խնդիր էր՝ հաշվի առնելով ուսանողի արդեն իսկ ընտրած ապագա մասնագիտությունը և երեք տարվա ուսումնառության փաստը: Փաստորեն՝ մանկավարժական պրակտիկայում իրեն վատ դրսևորած ուսանողը կամ կհեռացվի համալսարանից (ինքնակամ կհեռանա), կամ կհրաժարվի հետագայում մանկավարժ աշխատելուց, կամ էլ կստանձնի իր համար ոչ այնքան «հաճելի» ուսուցչի պաշտոնը: Երեք տարբերակներն էլ անցանկալի են ինչպես բուհի, այնպես էլ դպրոցի համար: Անհրաժեշտություն առաջացավ լուրջ վերանայելու մանկավարժական պրակտիկայի անցկացման ժամանակացույցը և ձևերը: Ապագա ուսուցչի մասնագիտական կարողությունների ձևավորման արդյունավետության բարձրացման նպատակով մանկավարժական համալսարանը, համագործակ-

ցելով Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի հետ, մշակել է մանկավարժական պրակտիկայի հայեցակարգ և կազմակերպման նոր մոդել, որն էլ ներդրվել է ուսումնական համակարգում: Մենք ողջունում ենք համալսարանի այս բարեփոխումը և կարծում, որ այն առաջին լուրջ քայլն է դեպի արդյունավետ և շարունակական մանկավարժական պրակտիկա:

Մանկավարժական պրակտիկայի արդիականացման խնդիրը դիտարկենք համամանկավարժական մի սկզբունքի տեսանկյունից, որը համեմատաբար վերջերս համալրեց մանկավարժական սկզբունքների շարքը, և որի անվանումը նույնիսկ բացակայում է հայկական բառարաններում: Դա հաջորդելիության սկզբունքն է: Հաջորդելիությունը կապ է զարգացման գործընթացի երևույթների միջև, երբ նորը, փոխարինելով հինն, իր մեջ պահպանում է հին առանձին տարրեր [3, 13]: Յուրաքանչյուր նոր որակ չի կարող ստեղծվել դատարկ տեղում, առաջանալ ոչնչից: Հաջորդելիությունն առաջընթաց զարգացման անհրաժեշտ պայմանն է: Ուսուցման գործընթացում հաջորդելիությունն ուսումնական նոր նյութի և յուրացվածի փոխադարձ կապն է, որտեղ նորն ամրապնդվում է, իսկ հինը կիրառություն է գտնում նոր պայմաններում: Հաջորդելիությունը ուսուցման տարբեր փուլերի կամ աստիճանների կապն է, զարգացման նոր ու հին գործընթացների օբյեկտիվ և անհրաժեշտ կապը [2, 15-16]: Գոյություն ունեն հաջորդելիություն հասկացության տասնյակից ավելի սահմանումներ, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է մեկնաբանում հաջորդելիության իմաստն ու նշանակությունը: Հաջորդելիության ուսումնասիրմամբ զբաղվել են բազմաթիվ փիլիսոփաներ, գիտնականներ, մանկավարժներ և հոգեբաններ: Նրանցից ոմանք ուսումնասիրել են տարբեր երևույթների հաջորդելիության հարցը, մյուսները՝ ուսումնական առարկաների հաջորդելիությունը, երրորդները՝ միև-

նույն առարկայի տարբեր թեմաների, հաջորդները՝ ուսուցման տարբեր փուլերի հաջորդելիությունը: Ուսանողի ուսումնական գործունեության ձևավորման հաջորդելիության տակ մենք հասկանում ենք անընդհատություն, հաջորդություն, դրդապատճառների համակարգված զարգացում, ուսումնա- դաստիարակչական գործընթացի յուրաքանչյուր փուլում գիտելիքների և գործունեության նոր ձևերի ձեռք բերում: Զարգացման յուրաքանչյուր փուլում փոխվում է ուսանողի գործունեության տեսակը: Հարցվածների 54%-ը նշում է, որ միայն երրորդ կուրսի վերջին կիսամյակում հասկացավ, որ ընտրած մասնագիտությունը «իրենն է»: Փաստորեն՝ առկա է մոտիվացիայի թուլացում կամ շեղում: Ընդունվելով բուհ՝ ուսանողներից շատերն ունեն մի նպատակ՝ ստանալ լավ կրթություն, դառնալ լավ մանկավարժ. տարիների ընթացքում այդ նպատակները փոխվում են: Դա էլ վկայում է հարցվածների 43%-ը, որոնք չեն աշխատում իրենց մասնագիտությամբ: Ուսանողների մոտիվացիայի շեղման պատճառ կարող է հանդիսանալ մանկավարժական պրակտիկայի՝ երրորդ կուրսում (մեր կարծիքով՝ ուշացած) կազմակերպման փաստը և կազմակերպման հնացած ու միատիպ եղանակները: Մեր հիմնական խնդիրներից է՝ դիտարկել ուսուցման յուրաքանչյուր փուլում ուսուցման նպատակների հաջորդելիությունը: Մեր կարծիքով՝ մանկավարժական պրակտիկայի ճիշտ կազմակերպումը կլուծի նպատակների հաջորդելիության հարցը, կուժեղացնի ուսանողների մոտիվացիան, վերջապես սերը դեպի ընտրած մասնագիտությունը:

Հաջորդելիության ուսումնասիրված լինելու հանգամանքը դեռևս լիարժեք չի բացահայտում այս ֆենոմենի էությունն ու հնարավորությունները, առավել ևս հայ մանկավարժության մեջ, որտեղ այն համարյա ուսումնասիրված չէ: Մենք փորձել ենք մանկավարժական պրակտիկայի հիմնաքար դարձնել հաջորդե-

լիության սկզբունքը և մեզ իրավունք ենք վերապահել առաջարկելու մանկավարժական պրակտիկայի կազմակերպման մի ձևաչափ: Մեր մոդելավորման օբյեկտն է մանկավարժական բուհի ուսանողի ուսումնական գործունեության ձևավորման հաջորդելիությունը մանկավարժական պրակտիկայի ժամանակ: Որպես միջոց՝ ուսուցիչ-աշակերտ հարաբերության նմանակը: Զևաչափի կառուցման հիմքում ընկած են այն պայմանները, որոնք ապահովում են հաջորդելիությունը մանկավարժական պրակտիկայի ժամանակ:

Նախ, վերանայելով պրակտիկայի անցկացման ժամանակացույցը, նշենք, որ լիովին համաձայն ենք Ուկրաինայի բարձրագույն մանկավարժական ուսումնական հաստատություններում մանկավարժական պրակտիկան առաջին կուրսից սկսելու կարգի հետ: Այնուհետև, ներկայանալով միանգամից ամբողջ դասարանին, անփորձ ուսանողը կարող է ,մեղմ ասած, «չընդունվել» նրա կողմից , ինչը ճակատագրական կարող է լինել նրա մասնագիտության համար: Այդ պատճառով՝ մենք առաջարկում ենք մանկավարժական պրակտիկայի անցկացման հետևյալ ձևաչափը. առաջին կուրսի յուրաքանչյուր ուսանողին «կցել» մեկ աշակերտ ընթացիկ նյութի յուրացումը ղեկավարելու համար: Ուսանողը կդառնա աշակերտի՝ այսպես կոչված ղեկավարը և, օգնելով նրան ընկալել նոր նյութը, ինքը կվերհիշի անցածը, կգտնի նյութը ճիշտ տեղ հասցնելու նորանոր ուղիներ՝ իր ունեցած գիտելիքները կկիրառի նոր պայմաններում, սակայն այս ամենը ուսանողը ինքնագլուխ չի ծավալում, այլ համալսարանի իր դասախոս- ղեկավարի և տվյալ դասարանում տվյալ առարկան դասավանդող ուսուցչի աջալուրջ հսկողության ներքո: Մանկավարժական պրակտիկայի նախօրեին կոնֆերանսի շրջանակներում կարևոր է դասախոս-ղեկավարի և դպրոցի ուսուցչի միասնական գործունեու-



թյունը, մի շարք խնդիրների լուծումը, այնպիսիք, ինչպիսիք են. որ ուսանողի ինչ աշակերտ պետք է կցել՝ ելնելով թե՛ ուսանողի, թե՛ աշակերտի հոգեբանական, իմացական և անհատական առանձնահատկություններից: Ցանկալի է նաև համաձայնեցնել ուսանողի՝ բուհական և աշակերտի՝ դպրոցում սովյալ պահին յուրացվող նյութերը, որպեսզի ուսանողը կարողանա նկատել առարկայի դպրոցական մակարդակի զարգացումը բարձրագույնի տեսանկյունից, և հակառակը, տեսնի բուհական դասընթացի տարրական դրսևորումները դպրոցում:

Առաջարկած ձևաչափը տեսականորեն հնարավորություն է տալիս բարձրացնելու մանկավարժական պրակտիկայի կազմակերպման արդյունավետությունը հաջորդելիության սկզբունքի ընդգծման և հաջորդելիության գործառույթների իրագործման պայմաններում: Դա են վկայում մոդելի առավելությունները.

Ուսանողի սովորելու և դասավանդելու փուլերը զուգահեռ են ընթանում. նրանց կապող օղակն էլ հաջորդելիությունն է:

Ուսանողը հնարավորություն ունի ամրապնդելու նոր նյութը, իսկ հինը կիրառություն է գտնում նոր պայմաններում:

Ապահովվում է հաջորդելիության սկզբունքի իրագործումը բուհ-դպրոց համակարգում ուսանող-աշակերտ համագործակցության շնորհիվ:

Որպես ղեկավար հանդես գալով՝ ուսանողը առաջին քայլերն է անում որպես ուսուցիչ-ղեկավար և դասի կառավարիչ:

Ամփոջական շփում ունենալով աշակերտի հետ՝ ուսանողը կարող է սերարթնացնել դեպի մանկավարժի մասնագիտությունը, այսինքն՝ որոշ չափով լուծել նաև մասնագիտական կողմնորոշման խնդիրը:

Իրագործվում է և՛ ներքին, և՛ արտաքին հաջորդելիությունը. ներքին

հաջորդելիության իրագործումը պայմանավորված է մոտիվացիոն-նպատակային բաղադրիչով, իսկ արտաքին հաջորդելիության իրագործումը՝ կազմակերպչամեթոդական բաղադրիչի առկայությամբ:

Այս ձևաչափի դեպքում ուսանողը հանդես է գալիս որպես ուսուցման կրկնակի սուբյեկտ մի դեպքում դասախոս-ուսանող, մյուս դեպքում ուսանող-աշակերտ փոխհարաբերության ժամանակ: Երկու դեպքում էլ ուսուցանողն ու ուսուցանվողը ձևավորվում և զարգանում են համատեղ գործունեության արդյունքում: Դասախոսի և ուսանողի համագործակցության ձևերի վերակառուցումը՝ կապված երկուսի անձի դիրքորաշումների փոփոխության հետ, ուսուցման յուրաքանչյուր փուլում բերում է ուսուցման սուբյեկտի հնարավոր փոփոխմանը:

Մանկավարժական պրակտիկայում հաջորդելիության գործառույթը կախված է նրանից, թե որ խնդրի լուծումն է առաջնային մեզ համար: Առաջնային է ուսուցման այս և յուրաքանչյուր հաջորդ փուլում ուսուցման նպատակների հաջորդելիության ապահովման խնդիրը: Առաջարկած ձևաչափը իրականացնում է հաջորդելիության հետևյալ գործառույթները՝

- ինտեգրացնող՝ ուսանողի գիտելիքների, կարողությունների և հմտությունների արդիականացում և համակարգում.

- կոորդինացնող գործառույթը պայմանավորված է միևնույն դասընթացը վարող ուսուցչի և դասախոսի համագործակցությամբ.

- համատեղ և միասնական գործունեության արդյունքում գնահատվում են միաժամանակ և՛ աշակերտը և՛ ուսանողը (իրականացվում է ստուգիչ գործառույթը):

Աշակերտը ձեռք է բերում նոր գիտելիքներ, իսկ ուսանողը հնարավորություն է ունենում վերհիշելու իր ունեցածները, կի-

րառելու դրանք նոր պայմաններում իրականացվում է կրթական գործառույթը:

Հաջորդելիության դաստիարակչական գործառույթը արտահայտվում է անձի մասնագիտական որակների ձևավորման մեջ, նրա արժեքային համակարգի և մոտիվացիոն գործողությունների կատարման մեջ, անձի մասնագիտական կայացման մեջ:

Զարգացնող գործառույթ. զարգանում են թե՛ աշակերտի, թե՛ ուսանողի մտածողությունը, խոսքը, ունակությունները:

Այսպիսով՝ հաջորդելիությունը ունիվերսալ սկզբունք է՝ բնորոշ մանկավարժական ցանկացած երևույթի, այդ թվում նաև՝ մանկավարժական պրակտիկային: Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման հիմքում պետք է դնել հաջորդելիության սկզբունքը, որպես ուսանողի մոտիվացիայի անշեղությունն ապահովող գործոն:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝  
15.03.2015

### ՓՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Անընդհատ (շարունակական) պրակտիկայի արդիականացումը և կազմակերպման մեխանիզմների ներդրումը բարձրագույն մանկավարժական կրթության համակարգում, Միջազգային գիտաժողով, Երևան, 2013:
2. Баллер Э. А., Преемственность в развитии культуры, Москва, 1967, 254
3. Нешков К.И. , Некоторые вопросы преемственности при обучении математике, „ Преемственность в обучении математике“, сост. А. М. Пышкало, Москва, Просвещение, 1978
4. armspu.am, 01.07.2013

## ПРИНЦИП ПРЕЕМСТВЕННОСТИ В СИСТЕМЕ ПЕДАГОГИЧЕСКОЙ ПРАКТИКИ

### АЛЕКСАНДР ГУЩЯН

*Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна, кафедра методики преподавания математики, кандидат педагогических наук, профессор,*

### СЕДА КОЧАРЯН

*Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна, кафедра методики преподавания математики, соискатель*

В работе рассматривается вопрос реализации принципа преемственности в учебной деятельности. В частности, рассматриваются особенности реализации принципа преемственности в системе педагогической практики. В статье предлагается новая модель проведения педагогической практики на первом курсе университета, которая реализует функции преемственности в системе педагогический университет-школа. Предлагаемая модель теоретически повышает эффективность проведения педагогической практики.

Дата представления статьи: 15.03.2015

## THE PRINCIPLE OF SUCCESSION IN THE SYSTEM OF PEDAGOGICAL PRACTICE

**ALEXANDER GHUSHCHYAN**

*Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan  
Chair of the Methods of Teaching Mathematics, Lecturer  
Candidate of Pedagogical Sciences, Professor*

**SEDA KOCHARYAN**

*Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan  
Chair of the Methods of Teaching Mathematics, Applicant*

The article discusses the realization of the principle of continuity in the educational activity. Particularly it considers the features of realization of succession principle in the system of pedagogical practice.

The article suggests a new model of pedagogical practice in the first year of university, which implements the functions of succession in pedagogical practice— university-school.

Theoretically the suggested model increases the efficiency of the pedagogical practice.

Article submission date: 15.03.2015

**Aram Simonyan**

*Lecturer at the International Scientific-Educational Centre of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Lecturer, PHD of Economics*

## **The Indirect Influence of Business Regulations on Corruption**

Both entrepreneurship and corruption are important factors in the way to establishing a competitive economic strategy of the country. Therefore all over the world steadily policy and regulatory reforms are being implemented in order to develop the Entrepreneurial Environment. Nevertheless the above carried out analysis shows that at the same time for developing countries i.e. like the Republic of Armenia the halfway battle could be managing the level and diffusion of corruption and bureaucracy as well as promoting genuine competition in the economy.

Key words: Entrepreneurship, Shadow economy, Corruption, Business Regulations, Competition

During the recent years there has been undeniable growing interest among the entrepreneurial scholars in the effects of business regulations on economic welfare (Nicoletti & Scarpetta, 2003) and particularly on entrepreneurship (Stel et al, 2007). This becomes especially vital why the other major impact factors on entrepreneurship such as socio-psychological (cultural) in spite of huge importance (Hayton et al., 2002) are more resistant and less change addicted per se during the same timeframe.

Hence without neglecting the other impact factors such as developed infrastructure that is availability of financial resources, attractiveness of taxation system, political stability, geographical position and

etc., adopting the “best” configuration of monetary (i.e. start-up costs and start-up minimum capital) and non-monetary (i.e. time and procedures) business regulations is a basis for forming a favourable entrepreneurial environment. Afterwards this combination outlines the success of country’s entrepreneurial environment and the competitiveness level of its participants’ in the world economy.

The administrative framework is indeed important for market entrants and their further performance. That is why worldwide, 114 economies implemented 238 regulatory reforms in 2012/13 making it easier to do business (The World Bank 2012, 2013). For example, Doing Business ranks countries business indices according to the regulatory environment’s conduciveness to the starting and operation of a local firm. Interestingly, some countries listed in the top ten of Starting a Business (e.g. Armenia 6, Rwanda 9, and Azerbaijan 10) are far beyond in Ease of Doing business (e.g. Armenia 37, Rwanda 32, and Azerbaijan 70). Thus attractive Business Regulations for start-ups seems not to guarantee per se an overall wealthy Entrepreneurial System.

Since De Soto (1989) one set of studies advocates free market entry in line with political and economic institutions as key determinant for economic growth. While analysing the role of policy and institutions for productivity and firm dynamics

Scarpetta et al. (2002) find significantly lower entry rates because of more rigid administrative and sector specific product market regulations. Furthermore they argue that the rate of entry of small and medium enterprises is negatively related to the number of regulations. Taking into consideration the aforementioned simplifying the entry and exit regulation seems way-out for entrepreneurship development.


However the whole picture isn't so trivial, one model cannot ideally fit to all the countries and industries whatever good it were. Reality turns out to be more nuanced—there can be no a priori assumption that an industry in a particular region of a country will benefit from or be harmed by liberalization (Aghion et al., 2005). Van Stel et al (2005) suggest paying more attention to difference in countries' economic development rate as clue for policy efficiency. They find that the effect on economic growth of entrepreneurial activity by nascent entrepreneurs and owner/managers of young businesses mostly varies according to the economic development stage of the countries'.

Gann et al (1998) suggest looking at the question from different angles. They conclude when “performance-based” building regulations are treated as static sets of technical requirements, their effect is

similar to more traditional prescriptive forms of regulation. A more progressive approach is possible in which regulations can be used as part of a portfolio of policies aimed at improving firm performance. In this respect the economic literature suggests that one of the main deterrents for Entrepreneurship could be considered bureaucracy (Block et al., 2008) and corruption (Anokhin & Schulze, 2009).

In fact, in order to evade the red tape of regulations in highly regulated markets entrepreneurs look for other, sometimes illegal possibilities to accelerate the firm registration. Dreher & Gassebner, 2011 state that the existence of a larger number of procedures required to start a business, as well as larger minimum capital requirements may generate corruption in highly regulated economies. In addition to higher corruption and larger unofficial economies, countries with heavier regulations of entry do not have better quality of public or private goods. Vice versa countries with more democratic and limited governments have lighter regulation of entry (Simeon Djankov et al., 2002). Thus existence of the red tape of regulations required to start a business may generate great corruption and a larger unofficial economy.

TABLE 1



Source: Enterprise Surveys 2013; Word Bank

Transparency International reminds that the abuse of power, secret dealings and bribery continue to ravage societies around the world (Transparency International). Indeed as we can see in the Table 1 Bribery and Corruption are still essential problems for the Entrepreneurs in the Republic of Armenia, as well as in the whole region with some proviso to Georgia. Therefore in line with the Entrepreneurial efficiency by the government appropriate attention should be paid to the diminution of illegality in the sector.

Bardhan (1997) mentions while corruption in one form or another has always been with us, it has had variegated incidence in different times at different places and with varying degrees. The theory and evidence suggest that efforts to foster entrepreneurship and innovations within an economy will be more productive if accompanied by policy reforms aimed at controlling corruption. Inasmuch as entrepreneurial and innovative activity may contribute to the accumulation of economic welfare, such efforts may serve a greater goal of contributing to economic development (Anokhin & Schulze, 2009). According to Schleifer and Vishny (1993), corruption may be costly for the economic development and they argue that economic and political competition can reduce the level of corruption and its adverse effects. Moreover the negative association between corruption and growth, is significant in both a statistical and an economic sense (Mauro, 2008) and better control of corruption will also be associated with rising levels of innovation and entrepreneurship (Anokhin & Schulze, 2009).

Moreover Greve & Salaff, 2003 explain while establishing a firm an important role plays social relations. Entrepreneurs use their social capital to access resources in each phase of the establishment process and there is a high proportion of family members in their networks. And those with

the highest proportion rely less on outsiders elevating trust. And some manifestations of trust in these networks can have not only positive but also negative implications for corruption. Namely a positive influence of a high trust in friendship and kinship influence on the probability of becoming engaged in corrupt dealings (Tonoyan, 2005). Also, where social networks are narrowly defined, obligations are unlikely to interfere with the performance of public duty. Social networks and personal relationships are strong ties which prevent people from transferring to the official economy (Schneider 2005) and forming network corruption (Granovetter, 2007). Finally, viewing illegal business activities as a widespread business practice provides the rationale for entrepreneurs to justify their own corrupt activities (Tonoyan et al. 2010).

Taking into consideration the above mentioned we come to a conclusion that it is crucial not only to promote Entrepreneurship but prevent its possible consequences such as corruption and illegality as well. In regard to the Republic of Armenia a possible solution could be cutting back the red tape of regulations simultaneously encouraging the genuine competition in the sector. Another important point for developing countries could be the establishment of good governance and the consistency of implementation of continuous policy reforms in Entrepreneurial environment.

Article submission date: 19.02.2015

## References

1. Aghion, P., Burgess, R., Redding, S., & Zilibotti, F. (2005). Entry Liberalization and Inequality in Industrial Performance. *Journal of the European Economic Association*, 3(2-3), 291-302.
2. Anokhin, S., & Schulze, W. S. (2009). Entrepreneurship, innovation, and corruption. *Journal of Business Venturing*, 24(5), 465-476.
3. Bardhan, P. (2006). The economist's approach to the problem of corruption. *World Development*, 34(2), 341-348.
4. Block, J., Brockmann, H., Klandt, H., & Kohn, K. (2008). FGF Arbeitskreis „Gründungen und Wirtschaftspolitik“ Diskussionspapier Gründungshemmnisse in Marktmechanismen und Marktumfeld – Facetten empirischer Evidenz Die Förderung von Unternehmen.
5. Djankov, S., La Porta, R., Lopez-de-Silanes, F. & Shleifer, A. (2002). The regulation of entry. *Quarterly Journal of Economics*, 117(1), 1-37.
6. Dreher, A., & Gassebner, M. (2011). Greasing the wheels? The impact of regulations and corruption on firm entry. *Public Choice*, 155(3-4), 413-432.
7. Gann, D. M., Wang, Y., & Hawkins, R. (1998). Do regulations encourage innovation? - the case of energy efficiency in housing. *Building Research & Information*, 26(5), 280-296.
8. Granovetter, M. (2007). *The Social Construction of Corruption*. Stanford University Press, 152-172.
9. Greve, A., & Salaff, J. (2003). Social networks and entrepreneurship. *Entrepreneurship theory and practice*, 28, 1-22.
10. Hayton J., Gerard G. & Shaker Z. (2002). National Culture and Entrepreneurship: A Review of Behavioral Research. *Entrepreneurship Theory and Practice*, 4 (26), 33.
11. Marquez, A. (1990). *The Other Path by Hernando De Soto*. Boston College Third World Law Journal, 10(1).
12. Mauro, P. (2008). Corruption and Growth. *The Quarterly Journal of Economics*, 110(3), 681-712.
13. Nicoletti, G., & Scarpetta, S. (2003). Regulation, productivity and growth: OECD evidence. *Economic Policy*, 18(36), 9-72.
14. Prantl, S. (2010). The impact of firm entry regulation on long-living entrants. *Small Business Economics*, 39(1), 61-76.
15. Shleifer A. & Mauro R. 1993, Stock market driven acquisitions. *Journal of financial Economics*, 70 (3), 295-311.
16. Scarpetta S., Hemmings Ph., Tressel Th. & Woo J. (2002). *The Role of Policy and Institutions for Productivity and Firm Dynamics: Evidence from Micro and Industry Data (April 22, 2002)*. OECD Economics Department Working Paper No. 329.
17. Schneider, F. (2005); Shadow economies around the world: what do we really know? *European Journal of Political Economy*, 21 (3); 598-642
18. Tonoyan V., Strohmeier R., Habib M., Perlitz M.(2010); *Corruption and Entrepreneurship: How Formal and Informal Institutions Shape Small Firm Behavior in Transition and Mature Market*. *Economies Entrepreneurship theory and practice*, 34 (5); 803-831.
19. Tonoyan, V. (2005); *The dark side of trust: Corruption and entrepreneurship—a cross-national comparison between emerging and mature market economies*. *Trust and entrepreneurship: A west-east perspective*, 39-58.
20. Transparency international (2012), *Indecis, surveys and reports on Corruption*, Berlin, Transparency International.
21. van Stel A., Carree M. & Thurik R. (2005). The Effect of Entrepreneurial Activity on National Economic Growth. *Small Business Economics*, 24(3), 311-321.
22. van Stel, A., Storey, D. J., & Thurik, a. R. (2007). The Effect of Business Regulations on Nascent and Young Business Entrepreneurship. *Small Business Economics*, 28(2-3), 171-186.
23. World Bank (2013), *Doing Business 2012/2013, Comparing regulations in 189 Countries*, Washington Dc, The World Bank.
24. World Bank (2013), *Enterprise Surveys 2012, Comparing different types of bribery in 135 Country*, Washington Dc, The World Bank.

## КОСВЕННОЕ ВЛИЯНИЕ РЕГУЛИРОВАНИЯ СФЕРЫ БИЗНЕС НА КОРРУПЦИЮ

**АРАМ СИМОНЯН**

*Международный научно-образовательный центр Национальной Академии Наук Республики Армения, заместитель заведующего кафедрой экономики, кандидат экономических наук*

Как предпринимательство, так и коррупция являются важными факторами на пути освоения конкурентоспособной экономической политики страны. Поэтому во всем мире постоянно осуществляются программные и нормативно-правовые реформы в целях развития предпринимательской среды. Однако же, как показывает проведенный анализ, параллельно реформам в развивающихся странах, например таких, как Республика Армения залог успеха лежит в управлении уровнем и распространением коррупции и бюрократии, а также в стимулировании реальной конкуренции в экономике.

Дата представления статьи: 19.02.2015

**ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՆՈՒՂՂԱԿԻ  
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՎՐԱ**

**ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն, դասախոս, փնտրելագիտության թեկնածու*

Եվ ձեռնարկատիրությունը, և կոռուպցիան կարևոր գործոններ են երկրի մրցունակ տնտեսական ռազմավարության ձևավորման ճանապարհին: Ուստի ողջ աշխարհում ձեռնարկատիրական միջավայրի բարելավման նպատակով պարբերաբար իրականացվում են ինչպես նախագծային, այնպես էլ նորմատիվաիրավական կարգավորումների բարեփոխումներ: Այնուամենայնիվ, ինչպես ցույց է տալիս իրականացված վերլուծությունը, մինևույն ժամանակ զարգացող երկրների համար, ինչպիսին օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունն է, հաջողության գրավական կարող է հանդիսանալ բյուրոկրատիայի և կոռուպցիայի սփռվածության աստիճանի կառավարումը, ինչպես նաև՝ ողջ տնտեսության մասշտաբով իրական մրցակցության խթանումը:

Հոդվածի ներկայացման տարեթիվ՝ 19.02.2015



# ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՍՏՂԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

*ԵՊՀ ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի ամբիոնի դոցենտ,  
բանասիրական գիտությունների թեկնածու*

### ԳՈՎԱԶԴԻԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ ՎՐԱ ԱԶԴԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄՂԵԼՈՒ ՄԵԹՈՒԴ

Կարծիքի ձևավորման հիմնական ինստիտուտները՝ զանգվածային լրատվության միջոցները, առանձնահատուկ տեղ են հատկացնում գովազդին: Գովազդային տեխնոլոգիաներն, ազդելով հանրային կարծիքի ձևավորման վրա, հասարակությանը մղում են որոշակի գործողությունների:

Գովազդի հիմնական նպատակը մարդկանց ապրանք վաճառելն է, բայց այն հիմնվում է տվյալ հասարակության մշակութային արժեքների վրա, երբ գովազդային ուղերձը կուլտիվացնում է առկա որոշակի արժեքներ և հարցականի տակ է դնում մյուսները՝ որդեգրելով գոյություն ունեցող կենսաոճն ու աշխարհայացքը: Հաճախ գովազդը ոչ թե մեզ առաջարկում է գնել ապրանքը, այլ և փորձում է փոխանցել որոշակի համոզմունքներ՝ ապակողմորելով դրանց լեզվական և պատկերային նշանները: Գովազդում տեղեկատվությունը ներկայացվում է գրավիչ ու յուրահատուկ ձևով, խոսքը հակիրճ է, պատկերավոր, հաճախ՝ հումորային և կարող է ունենալ գունային, ձայնային և պատկերային ձևավորում:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ**՝ գովազդ, հանրային կարծիք, գովազդային տեխնոլոգիաներ, Ջանգվածային լրատվության միջոցներ, տեղեկատվություն, ներազդման հնարքներ, գովազդի տեսակներ, սպառողական վարքագիծ, հաղորդակցական գործընթաց:

«Գովազդ» հասկացությունը ծագել

է ֆրանսերեն «reclame» բառից: Գովազդը նպատակ ունի տարբեր միջոցներով տեղեկացնելու սպառողներին նոր ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև դրանց սպառողական հատկությունների մասին:

Համեմատական հետազոտությունները թույլ են տալիս արձանագրել գովազդի տարբեր ձևաչափերի հետևյալ պատմական հերթականությունը արևմտյան հասարակություններում: Առաջինը՝ «արտադրանք-տեղեկատվություն» (product-information) է, որը գովազդի նախնական ձևն է և բնորոշ էր 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին<sup>1</sup>:

Գովազդի հնագույն տեսակներից են համարվում եգիպտական պապիրուսները, որոնք փարավոններն օգտագործում էին որպես հայտարարության տախտակներ՝ տեղեկացնելով ստրուկների առքուվաճառքի մասին: Այսօր Անգլիայի թանգարաններից մեկում պահպանվում է մի պապիրուս, որի վրա գրված է. «Վաճառվում է ստրուկ՝ քչախոս է, չի հոգնում, շատ է աշխատում»:<sup>2</sup>

Պատկերային տեխնոլոգիաների զարգացումը և տարածումը հանգեցնում է երկրորդ ձևաչափին՝ «արտադրանք-պատկեր» (product-image, 1920-1940-ական-

1 Տե՛ս, Мезенцев Е.А., Реклама в коммуникационном процессе, Учебное пособие, Омск: Изд-во ОмГТУ, <http://www.aup.ru/books/m1105/>

2 Տե՛ս, История развития рекламы, <http://reklama.web-3.ru/history/>

ներ): Երրորդ ձևաչափն ընդգրկում է 1950-1960-ականները՝ «անձնականացում (personalization): Չորրորդը՝ «կենսաճի (lifestyle) ձևաչափն է, որի տարածման շրջանը 1970-1980-ականներն էին:

Գովազդը կազմակերպության հաղորդակցական գործընթացի բաղկացուցիչ մաս է և կարգավորում է ապրանքների իրացման գործընթացը: Գովազդը չի պարտադրում գնել այդ արտադրանքը: Երբեմն այն միայն հիշեցնում է տվյալ ապրանքի ապրանքանիշը կամ ապրանքի (ծառայության) անվանումը՝ հնարավորություն ընձեռելով սպառողին կատարելու ընտրություն:

Ժամանակակից տեղեկատվական հագեցվածության պայմաններում յուրաքանչյուր հասուն մարդու օրական բաժին է ընկնում 20.000 պատահիկ տեղեկատվություն ավելի շատ, քան տասը տարի առաջ:

Ամենալայն սահմանմամբ **գովազդն** ապրանքի, ծառայության, գաղափարի մասին տեղեկատվության ոչ անհատական, նպատակաուղղված փոխանցումն է հասարակությանը տարբեր հաղորդակցական միջոցների (ԶԼՄ, տրանսպորտային միջոցներ, ցուցանակ, ինտերնետ) օգնությամբ, որոնց տեղի և ժամանակի համար պատվիրատուն վճարում է:

Գովազդի դասակարգման յոթ սկզբունք գոյություն ունի՝

**1. Ըստ թիրախ խմբերի՝** գովազդ ստեղծողները լավ գիտեն, որ գովազդի արդյունավետությունն ավելի բարձր է, երբ այն ուղղված է պոտենցիալ գնորդներին, այլ ոչ թե ամբողջ բնակչությանը: Հիմնական թիրախ խմբերը երկուսն են՝ սպառողական և գործարքային: Առաջինը ուղղված է վերջնական սպառողներին, մինչդեռ երկրորդի թիրախ խումբը կարող է լինել վերավաճառող, մեծածախ գնում իրականացնող: Գոյություն ունի չորս գործարքային գովազդ՝ արդյունաբերական, մասնագիտական, գյուղատնտեսական և արտադրական:

**2. Ըստ տարածական ընդգրկման՝** ա) համաշխարհային (օր.՝ Կոկա-Կո-

լայի գովազդը հասանելի է ամբողջ աշխարհում):

բ) համազգային, որն ուղղված է տվյալ երկրում ազգային որևէ արտադրանքի գովազդմանը (օր.՝ GrandTobacco ծխախոտի գովազդը ՀՀ-ում):

գ) տարածաշրջանային, որն ընդգրկում է որոշակի տարածք տվյալ երկրում (օր.՝ որևէ անշարժ գույքի գործակալության գովազդ, որն զբաղվում է միայն տվյալ տարածաշրջանի անշարժ գույքի առուվաճառքով):

դ) տեղական, եթե համազգային և տարածաշրջանային գովազդը կենտրոնացված է ապրանքների և ծառայությունների առավելությունների, հատկանիշների վրա, ապա տեղական գովազդում նշվում են ապրանքների և ծառայությունների իրացման վայրը, գները և այլն:

**3. Ըստ հաղորդակցման միջոցների՝** գովազդի միջոցներն այն «վճարովի միջնորդներն» են, որոնց օգնությամբ հաղորդագրությունը հասցվում է լայն հանրության: Այսպես, օրինակ՝ կարող է լինել թերթի, ռադիոյի, հեռուստատեսային, տպագիր և էլեկտրոնային վահանակների, հասարակական տրանսպորտի, համացանցային, լուսագրային գովազդ:

**4. Ըստ գործառույթների և նպատակների՝**

ա) ապրանքային և ոչ ապրանքային, եթե գովազդվում է անմիջապես ապրանք կամ ծառայություն (օրինակ՝ «Անի» պաղպաղակ կամ «Ֆորսաժ» տաքսի ծառայություն), ապա այդպիսի գովազդն ապրանքային է, իսկ երբ գովազդն ուղղված է տվյալ կազմակերպության, ընկերության գաղափարախոսության տարածմանը, հեղինակության ու վստահության ձեռքբերմանը, ապա այն ոչ ապրանքային է:

բ) կոմերցիոն և ոչ կոմերցիոն. կոմերցիոն գովազդը քարոզում է գնել ապրանք կամ օգտվել ծառայությունից, իսկ ոչ կոմերցիոն գովազդը ֆինանսավորվում է բարեգործական, հասարակական, կրոնական և քաղաքական կազմակերպությունների կողմից:

**5. Ըստ նպատակների** կարելի է առանձնացնել խթանող, տեղեկացնող, համեմատող, հիշեցնող, ներշնչող, իմիջաստեղծ գովազդ:

**6. Ըստ ազդման միջոցների** գովազդը լինում է ռացիոնալ և էմոցիոնալ: Ռացիոնալ գովազդը տեղեկացնում է, բերում է փաստարկներ, դիմում է մարդկանց բանականությանը, մինչդեռ էմոցիոնալ գովազդն ազդում է մարդու հուզական ներաշխարհի, գգացմունքների վրա:

**7. «Այլընտրանքային գովազդ»** հասկացությունը ենթադրում է այն, որ յուրաքանչյուրի ձեռքում կամ զգեստապահարանում կա մեկ իր, որի վրա կա խորհրդանիշ, կարգախոս կամ էլ ընկերության անվանումը: Այսպիսի գովազդն ազդում է մարդու ենթագիտակցության վրա, և գովազդի այս ձևը համարվում է արդյունավետ մեթոդներից մեկը: Օրինակ՝ սրճարաններում անձեռոցիկների, մոխրամանների, բաժակների վրա առկա գովազդը մարդը կարող է չնկատել, բայց ենթագիտակցության մեջ այն տպավորվում է:

**Արտաքին գովազդի** յուրահատկությունն այն է, որ չի տարածվում ԶԼՄ-ով. ըստ ընդունված չափերի՝ այն տեղակայվում է ճանապարհի որոշակի հատվածներում՝ ամենաարդյունավետ ներգործությունն ունենալով դիտողի վրա: Արտաքին գովազդը տեղաբաշխվում է բնակավայրերում պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցներով<sup>1</sup>:

**Սոցիալական գովազդը** բնակչության առողջության և առողջապահության, բնության պահպանության, սոցիալական պաշտպանության հարցերով ազգային շահեր ներկայացնող և առևտրային բնույթ չկրող գովազդի տեսակ է<sup>2</sup>:

Էլեկտրոնային լրատվամիջոցներով

հեռարձակվող գովազդի համար բնորոշիչ է հետևյալ դասակարգումը.

- **նկարագրական**, երբ ցույց է տրվում ապրանքը տարբեր կողմերից (հեռուստատեսություն) կամ պարզապես այն բնութագրվում է (ռադիո),

- **զգայական**, որոնք բնորոշ են յուրահատուկ ապրանքներին (օրինակ՝ օձանելիքներ, հրուշակեղեն, զարդեղեն), սովորաբար ուղեկցվում են երաժշտությամբ,

- **պարադոքսալ**, երբ հակադրություն է ստեղծվում երկու ապրաքատեսակների միջև, օրինակ՝ սկզբից ցույց է տրվում, թե ինչ ազդեցություն է գործել սովորաբար գործածվող լվացքի փոշին և ապա՝ գովազդվող լվացքի փոշու կախարդական ներգործությունը՝ կատարյալ մաքրություն և ձյունաձերմակ սպիտակություն,

- **անիմացիոն**, որը նախատեսված է երեխաների համար, գլխավոր կերպարներն ընտրված են հեքիաթից կամ մուլտֆիլմից, կամ ստեղծվում են նոր կերպարներ (օրինակ՝ «Բարնի» թխվածքաբլիթի գովազդը),

- **գրաֆիկական**, որն ստեղծվում է հատուկ գրաֆիկների, գծագրերի միջոցով (օրինակ՝ «Colgate» ատամի մածուկի հեռուստագովազդը):

Ամբողջացնելով՝ կարող ենք ասել, որ «գովազդ» հասկացությունը ենթադրում է ապրանքների, ծառայությունների և դրանք արտադրողների, առաջարկողների մասին նպատակաուղղված, վճարովի տեղեկություն զանգվածային լրատվության միջոցներով:

Գովազդի դասակարգումն իրականացվում է՝ հիմք ընդունելով նրա հատկանիշներից որևէ մեկը: Ըստ այդմ՝ խմբավորելով գովազդի տեսակները՝ արձանագրում ենք, որ գովազդի զարգացման արդի տեսակերը աճման միտում ունեն:

**Գովազդը ներագրում է սպառողի վարքագծի վրա:**

«Սպառողական վարքագիծ» ասելով՝ հասկանում ենք այն ակտիվություն-

1 Գովազդի մասին ՀՀ օրենք, հոդված 11. Արտաքին գովազդ, ընդունվել է 30.04.1996:

2 Տե՛ս նույն տեղում՝ հոդված 13:

նը, որը մարդիկ ցուցաբերում են իրենց պահանջունքները և ցանկությունները բավարարող ապրանքներ և ծառայություններ փնտրելու, ընտրելու, գնելու, օգտագործելու կամ օգտվելու, դրանք գնահատելու կամ մերժելու ժամանակ:

Գովազդը լինում է հինգ տեսակի.

- առաջնային, երբ շուկա են ներմուծվում նոր ապրանքներ կամ ծառայություններ կամ տեղեկացվում է նոր ֆիրմայի գործունեության մասին.

- մրցակցային, երբ ընդհանուր զանգվածից առանձնացվում է ապրանք կամ ծառայություն կամ ընկերություն՝ իրացման ծավալների ընդլայնման համար.

- հիշեցնող, երբ հիշեցվում է արդեն գովազդված ապրանքի մասին՝ նրա պահանջարկը ապահովելու համար:

Հասարակական, որը ընկերության կամ նրա ապրանքների և ծառայությունների հեղինակային գովազդն է, որը չի վճարվում հենց այդ ընկերության կողմից:

Ներկորպորատիվը գործում է յուրաքանչյուր կազմակերպության ներսում, ինչը կազմակերպության աշխատողների մոտ մրցակիցների նկատմամբ գերազանցության, հպարտության զգացում է առաջացնում:<sup>1</sup>

Գովազդի նպատակները պետք է սահմանված լինեն հստակ՝

- նոր ապրանքի իմիջի ստեղծում,
- գոյություն ունեցող ապրանքի իմիջի բարձրացում,

- համոզելու միջոցով բացառել այն, ինչ արգելվում է այդ ապրանքի վաճառքը և այլն:

Մինչ գովազդային արշավ սկսելը շուկայագետները իրականացնում են շուկայի հատվածավորում, թիրախ խմբի հայտնաբերում, ապա ուսումնասիրում են վերջիններիս պահանջունքները, կարծրատիպերը և ակնկալիքները:

1. Գովազդում գոյություն ունի AIDA

մոդելը (անգլերեն՝ Attention, Interest, Desire, Action բառերի հապավումն է, որոնք համապատասխանաբար նշանակում են՝ ուշադրություն, հետաքրքրություն, ցանկություն և գործողություն) նկարագրում է այն փուլերը, որոնց միջոցով պետք է անցնի սպառողը վաճառողի ներգործությամբ: Այն ավելի շատ վերաբերում է անհատական վաճառքին<sup>2</sup>:

2. Էֆեկտների հիերարխիայի ձևաչափը (Hierarchy of Effects Model) մշակվել է Ռոբերտ Լավիջի և Գարի Ստայների կողմից՝ գովազդի խնդիրների ձգարտման նպատակով: Ձևաչափի հիմնական գաղափարն այն է, որ գովազդի վերջնական արդյունքը կարող է երևալ ազդման պահից որոշակի ժամանակ հետո: Գովազդը չի կարող դրդել մարդկանց ակնթարթային գնումներ կատարելու<sup>3</sup>:

3. Նոր ապրանքի ընդունման ձևաչափը (Innovation Adoption Model) նկարագրում է այն փուլերը, որոնցով անցնում է սպառողը նոր ապրանք գնելիս: Անհրաժեշտ է հետաքրքրություն առաջացնել տվյալ ապրանքի նկատմամբ և հնարավորություն ընձեռել սպառողներին այն գնահատելու: Գնահատման լավագույն միջոցն ապրանքի անմիջական փորձարկումն է, որն իրականացվում է տարբեր տեսակի ցուցադրական բնույթ կրող ծրագրերի միջոցով<sup>4</sup>:

4. Ինֆորմացիայի մշակման ձևաչափն (Information Processing Model) առաջարկվել է Վիլյամ Մակ Գուայերի (William McGuire) կողմից: Ըստ նրա պատկերացման, համոզիչ հաղորդակցման (օրինակ, գովազդի) ազդեցությունը մարդուն խնդիրների հորձանուտ է հրավիրում: Այս ձևաչափը շատ նման է էֆեկտների հիերարխիայի ձևաչափին, սակայն ունի մեկ

2 Ա. Շ. Ավետիսյան, Հանրային կապեր, դասախոսություններ, «Անտարես» հրատ., Երևան, 2008, էջ 18:

3 Տե՛ս [http://www.learnmarketing.net/hierarchy\\_of\\_effects\\_model.html](http://www.learnmarketing.net/hierarchy_of_effects_model.html):

4 Տե՛ս <http://sphweb.bumc.bu.edu/otlt/MPH-Modules/SB/SB721-Models/SB721-Models4.html>:

1 Տե՛ս Мезенцев Е.А., Реклама в коммуникационном процессе, Учебное пособие, Омск: Изд-во ОмГТУ, <http://www.aup.ru/books/m1105/>:

յուրահատուկ օղակ՝ ստապահում<sup>1</sup>:

Գովազդի անհրաժեշտ բաղկացուցիչներն են.

- գովազդատու
- գովազդ իրականացնող
- գովազդի տարածման միջոց

(ԶԼՄ և այլն)

- սպառող:

### **Գովազդային տեխնոլոգիաների ներազդման հնարքները.**

Կարծիքի ձևավորման հիմնական ինստիտուտները՝ գանգվածային լրատվության միջոցները, առանձնահատուկ տեղ են հատկացնում գովազդին: Գովազդային տեխնոլոգիաներն, ազդելով հանրային կարծիքի ձևավորման վրա, հասարակությանը մղում են որոշակի գործողությունների:

Գովազդի հիմնական նպատակը մարդկանց ապրանք վաճառելն է, բայց այն հիմնվում է տվյալ հասարակության մշակութային արժեքների վրա, երբ գովազդային ուղերձը կուլտիվացնում է առկա որոշակի արժեքներ և հարցականի տակ է դնում մյուսները՝ որդեգրելով գոյություն ունեցող կենսաժամ ու աշխարհայացքը: Հաճախ գովազդը ոչ թե մեզ առաջարկում է գնել ապրանքը, այլև փորձում է փոխանցել որոշակի համոզմունքներ՝ ապակողովորելով դրանց լեզվական և պատկերային նշանները: Գովազդում տեղեկատվությունը ներկայացվում է գրավիչ ու յուրահատուկ ձևով, խոսքը հակիրճ է, պատկերավոր, հաճախ՝ հումորային և կարող է ունենալ գունային, ձայնային և պատկերային ձևավորում:

Գովազդում երբեմն օգտագործում են նշաններ, կողեր և սոցիալական առասպելներ, որոնք շրջանառվելով՝ մարդուն ներգրավվում են տեղեկանալու, ճանաչելու գործընթացում: Ունենալով գանգվածային բնույթ՝ գովազդն ունի կարևոր նշանակություն և ըստ այդմ

էլ՝ ունի մի քանի հիմնական դերեր՝ ուսուցանող, ուղղորդող և, ի վերջո, թելադրող: Ընդհանուր առմամբ, հաճախ հենց գովազդն է որոշում է մեր կյանքի բնույթն ու ձևը՝ այն, թե այսօր ուր ենք գնալու, ինչ ենք ուտելու կամ հագնելու:

Ժամանակակից աշխարհում «ուղիղ» գովազդն արդեն դժվար է համարել ապրանք վաճառելու կամ վաճառքի ծավալներն ընդարձակելու միջոց: Այսինքն՝ ուղղակի հայտարարել, որ տվյալ ապրանքը կամ ծառայությունն ամենալավն է, ու պետք է առաջարկվող բազմազանության մեջ անհատը ընտրի հենց այդ, մեղմ ասած, «չգործող» տարբերակ է: Գովազդի ոլորտում վերջերս կատարած հետազոտությունների արդյունքների համաձայն մարդկանց ընդամենը 15% է հավատում գովազդին, 65%-ն այն համարում է չափազանցություն, իսկ մնացած 20%-ը պարզապես չեզոք վերաբերմունք ունի<sup>2</sup>:

Ավանդական գովազդը (տպագիր մամուլում, հեռուստատեսությունում և ռադիոյում) համարվում է միայն մի փոքր մասը, այն համալիր մարքեթինգային ռազմավարության, որը նպատակաուղղված է ապրանքի վաճառքի ծավալների ընդլայնմանը: Պարզապես նոր կոմերցիոն առաջարկով շուկա մտնելը բավական չէ հաջողության հասնելու համար, այսօր արդեն նախքան տվյալ ապրանքը կամ ծառայությունը գովազդելը, այն արտադրողները, նախևառաջ, փորձում են պարզել հետաքրքրվողների, գնորդների և հաճախորդների հոգեբանությունը (ընդհանուր առմամբ, այս երեք խմբերի պահանջմունքները կարող են համընկնել):

Նմանատիպ ազդեցության համար գովազդ արտադրող յուրաքանչյուր կազմակերպություն իր տեխնիկական զինանոցում ունի տեխնոլոգիաների այնպիսի համակարգ, որն էլ հենց սպառվող է դարձնում գովազդն ու գո-

1 Տե՛ս <http://wasqcon.com/how-information-processing-affects-marketing-communications/>, How Information Processing Affects Marketing Communications:

2 [http://www.reclamesecret.com/promotion\\_tech.shtml](http://www.reclamesecret.com/promotion_tech.shtml), Գովազդային քննազատի հետազոտություններ:

վազդվող արտադրանքը:

Այս դեպքում կարելի է առանձնացնել երկու տիպի տեխնոլոգիա՝ **ավանդական և ժամանակակից**: Ժամանակակից գովազդային տեխնոլոգիաները հիմնականում պայմանավորված են գիտատեխնիկական նորանոր հայտնագործություններով, նաև մարդկային անսպառ երևակայությամբ: Դրանք հիմնականում նպատակադրված են սպառողի վրա առավել ազդեցիկ ազդեցության լծակներ ստեղծելուն և դրանով գովազդն արդյունավետ դարձնելուն:

- Տեխնոլոգիաներ, որոնք ազգում են սպառողի զգացմունքային դաշտի վրա: Սա հաճախ անվանում են նաև **զգացմունքային ռազմավարություն**<sup>1</sup>:

Զգացմունքներ ու հուզականություն առաջացնող գովազդը գործում է ավելի արդյունավետ: Էմոցիոնալ ցանկացած ազդակ մարդիկ պատրաստակամ են լսել, իսկ ստիպել մարդկանց լսել նշանակում է, որ հաճախորդը գնում կատարելու կես ճանապարհին է: Այս առումով կարևոր է հիշել յուրաքանչյուր ազգի էթնիկական հիմնական հատկանիշները. այն, ինչն ազդեցիկ կարող է լինել մի պետությունում, միանգամայն այլ հետևանքների կարող է հանգեցնել մյուսում: Այսինքն՝ գովազդի իմաստն ամբողջովին չի որոշվում այն արտադրողի կողմից, թեև ակնհայտ է, որ նա ունենում է մեկնաբանության գերադասելի տարբերակ և ամեն կերպ ջանում այն դարձնել տիրապետող: Տարբեր միջավայրերում գովազդային ուղերձը կարող է մեկնաբանվել տարբեր ձևերով, և նրա կայունացող իմաստը զգալիորեն կախված է նաև լսարանից:

Այսինքն՝ տեխնոլոգիան, որը ստեղծված է դրական ազդեցություն ունենալու համար, կարող է ճիշտ չկիրառվել և ունենալ միանգամայն այլ արդյունք: Այս առումով, հատկապես, կարևորվում են հստակ ձևակերպված տեքստն ու շփոթություններ չառաջացնող տեսաշարը:

Սա ոչ միայն կոպիտ ձևով մատնանշում է գովազդային ուղերձի հնարավոր բազմիմաստությունը և ապակողավորման տարբեր հնարավորությունները տարբեր մշակութային իրավիճակներում, այլև հուշում մեկ այլ բան՝ տարբեր հասարակություններում արդյունավետ են գովազդի տարաբնույթ ձևաչափեր:

- Հաջորդ կարևոր տեխնոլոգիան ազդեցությունն է թիրախային լսարանի վրա<sup>2</sup>:

Վերջինս հայտնի է նաև որպես ռեզոնանսային ռազմավարություն: Թիրախային խմբերի ընտրման մոտեցումները տարբեր են: Շատ հաճախ ընտրման մոտեցում են համարվում տարիքը, սեռը, սոցիալական կարգավիճակը: Այս իմաստով դասական օրինակ է երեխաների վրա ազդեցությունը: Նրանց վրա ավելի հեշտ է ազդել, իսկ երեխաներն իրենք են ծնողներին ուղղորդում, թե ինչն է իրենց հետաքրքրում:

Կան նաև այնպիսի թիրախային խմբեր, որոնցում յուրաքանչյուրն ուզում է իրեն ընդգրկված համարել, ուստի նմանատիպ գովազդն առավել լայնամասշտաբ բնույթ է կրում և ավելի ազդեցիկ է:

- Հաջորդ տեխնոլոգիան հայտնի անձի ներգրավվմամբ գովազդի պատրաստումն է:

Այս տեխնոլոգիան գործնականում ավելի հայտնի է «դրական օրինակի ռազմավարություն» անունով:

Սպառողը, տեսնելով մեկին, ով ճանաչված, հաջողակ, գեղեցիկ ու սիրելի կերպար է, գովազդում է որևէ արտադրանք, ակամա ցանկություն է առաջանում նմանվելու վերջինիս ու ձեռք բերելու միևնույն արտադրանքը: Այս հնարքը հաճախ կիրառվողներից է և բավականին արդյունավետ է գործում: Ի վերջո՝ տվյալ անձն ունի նաև երկրպագուների բանակ, որոնք նույնպես կհետ-

1 Տե՛ս նույն տեղում:

2 [http://www.reclamesecret.com/promotion\\_tech.shtml](http://www.reclamesecret.com/promotion_tech.shtml), Գովազդային բնագավառի հետազոտություններ:

և են նրա օրինակին: Ջարմանալի չէ, որ հոլիվուդյան աստղերին ներգրավվելով նման հոլիվուդական նկարահանումներում՝ ընկերությունները վճարում են խոշոր գումար:

• Հետաքրքիր, բայց ոչ հաճախ կիրառվող գովազդային հաջորդ տեխնոլոգիան **անվճար առաջարկներն** են:

Սա հիանալի տեխնոլոգիա է արդեն հայտնի բրենդի նոր արտադրանքների ներկայացման համար: Մշտական հաճախորդները չեն հրաժարվի սիրելի ապրանքանիշի նոր արտադրատեսակից, իսկ մրցակցի հաճախորդներն էլ չեն հրաժարվի անվճար առաջարկից: Լավ հնարավորություն է գովազդում այդքան հնչած դրական գնահատականները ի ցույց դնելու համար:

• **Ակցիաներ, մրցույթներ:**

Սա, թերևս, ամենաշատ կիրառվող տեխնոլոգիան է, որն ակտիվ օգտագործվում է ամբողջ աշխարհում, ինչպես նաև հայաստանյան շուկայում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շատերը հակված են հենց այն ապրանքը ձեռքբերել, որը առաջարկվում է որևէ ակցիայի ժամանակ: Սա չի նշանակում, որ մարդիկ միանգամից գնում են դեպի այդ ապրանքը, այս տեխնոլոգիան ավելի շուտ գործում է այն դեպքում, երբ սպառողը կանգնած է ընտրության առջև:

Տեխնոլոգիաներից ամենահետաքրքիրը օգտագործել է Ջեյմս Վիքերին (James Vicary) «25-րդ կադրի» գաղափարը<sup>1</sup>: Հայտնի է, որ կինոժապավենի պտտման արագությունը կազմում է վայրկյանում 24 կադր, այսինքն՝ 1 վայրկյանում մենք տեսնում ենք 24 կադր: 1957 թվականին Վիքերին հայտարարեց, որ մի փորձարկում է իրականացրել Նյու Ջերսիի կինոթատրոններից մեկում: «Պիկնիկ» ֆիլմի ժամանակ լրացուցիչ պրոեկտորի օգտագործման

շնորհիվ կարողացել է ցուցադրել 25-րդ կադրը, որը գաղտնի գովազդ էր՝ «Խմի՛ր Կոկա-կոլա» և «Կերե՛ք պոպկորն»: Մեկ տարի շարունակ ցուցադրվել է ֆիլմը, բնականաբար, նաև՝ գովազդը: Հետագայում ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Կոկա-կոլայի գնողականությունը կինոթատրոնի ճաշարանում բարձրացել է 17 տոկոսով, իսկ պոպկորնինը՝ 50 տոկոսով: Փաստորեն, այս մեթոդն ազդում է մարդկանց ենթագիտակցության վրա: Հետագայում գովազդային այս մեթոդն արգելվեց, սակայն 2014 թվականի ուկրաինական հեղափոխության օրերին «Ռոսիա 24» հեռուստաընկերությունը, որպես ազդեցության մեթոդ օգտագործեց «25-րդ կադրի» գաղափարը: Ուկրաինայի ազգային անվտանգությունն այդ օրերին հայտարարեց, որ ռուսական հեռուստաընկերությունն օգտագործում է «25 կադրի» էֆեկտը «Поджег правый сектор», «Бандеровцы убивают людей», «Нацгвардия убийцы»» արտահայտություններով:<sup>2</sup>

Ամեն դեպքում թվարկված տեխնոլոգիաներից և ոչ մեկը չի կարող աշխատել արդյունավետ, եթե գովազդատուն չապահովի արտադրանքի կամ ծառայության անհրաժեշտ չափանիշները, չտա բավարար տեղեկավորություն, կամ սպառողին մոլորեցնի՝ խոսելով արտադրանքի ունիկալության և չեղած հատկանիշների մասին:

Գովազդային աշխարհն այսօր արագ է փոփոխվում և շատ հնարավոր է, որ մենք գտնվում ենք տեղեկատվական հեղափոխության շեմին, որը ոչ միայն կփոխի տեղեկատվական ոլորտը, այլև հեղափոխական կլինի նաև գովազդային հիմնական տեխնոլոգիաների սկզբունքների փոփոխման հարցում:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝ 26.02.02015

1 <http://www.newscientist.com/article/mg19025494.400?DCMP=NLC-nletter&nshref=mg19025494.400>, Subliminal advertising may work after all, 28 April 2006 by Alison Motluk, Magazine issue 2549.

2 <https://www.youtube.com/watch?v=HRyI0DQIbCA>, 25-й кадр в выпуске новостей Россия 24 от 03 05 2014.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Շ. Ավետիսյան, Հանրային կապեր, դասախոսություն, «Անտարես» հրատ., Երևան, 2008:
2. Ա. Շ. Ավետիսյան, Հանրային կապերը զանգվածային հաղորդակցության համակարգում, ԵՊՀ հրատ., Երևան, 2014:
3. Кузнецов В. Ф., Связи с общественностью: Теория и технологии: Учебник для студентов вузов / В.Ф.Кузнецов. – 2-е изд., доп. и перер. – М.: Аспект Пресс, 2007
4. Филатова О. Г., Технологии и методы PR-продвижения информационных ресурсов. Вводный курс: Учебное пособие. – СПб.: НИУ ИТМО, 2012
5. Ульяновский, А. В., Современные рекламные технологии : учеб. пособие / А. В. Ульяновский. — СПб., 2011

### РЕКЛАМНЫЕ ТЕХНОЛОГИИ - МЕТОД ВОЗДЕЙСТВИЯ НА ОБЩЕСТВЕННОЕ МНЕНИЕ И СКЛОНЕНИЕ К ДЕЙСТВИЮ

**ԱՏՄԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

*Երևանский государственный университет, кафедра радио- и тележурналистики,  
кандидат филологических наук, доцент*

Основные институты формирования мнения- средства массовой информации, уделяют особое место рекламе. Воздействуя на формирование общественного мнения, рекламные технологии направляют общество к определенным действиям.

Основная цель рекламы – продать рекламный товар, при этом она опирается на культурные ценности данного общества, поощряя некоторые характерные для него ценности и ставя под сомнение остальные с учетом образа жизни и мировоззрения людей. Часто вместо предложения товара реклама пытается навязать определенные убеждения, расшифровывая языковые и изобразительные символы последних. В рекламе информация представляется в своеобразной привлекательной форме: краткий образный текст, часто представленный с юмором и в приятном цветовом и звуковом оформлении.

Дата представления статьи: 26.02.2015

### ADVERTISING TECHNOLOGIES AS A METHOD OF IMPACT ON PUBLIC OPINION AND ENCOURAGEMENT TO ACTION

**ASTGHİK AVETISYAN**

*YSU, Chair of Radio and Television Journalism, PhD, Associate Professor*

The main institutions of shaping opinion, the mass media, pay particular importance to advertising. The advertising technologies influencing on the formation of public opinion direct the society in particular actions.

The main purpose of advertising is to sell promotional goods, besides it is based on the cultural values of the society, encouraging some of its characteristic values and casting doubt on the rest taking into account the lifestyle and outlook of people.

Often, advertising is trying to impose certain beliefs instead of offering some goods, deciphering the linguistic and visual symbols of the latter. The advertisement information is presented in an attractive and special format: a brief figurative text often presented with a comic and pleasant color and sound design.

Article submission date: 26.02.2015



**ՀՈԳԵՎՈՐ-ԿՐՈՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ  
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔԵՐՈՒՄ**

Անկախացումից հետո, երբ մամուլն ու հեռուստատեսությունը թոթափեցին խորհրդային կարգերի գաղափարախոսությունը, ազատագրվեցին պարտադրված տեղեկատվություն հաղորդելու լծից, ի հայտ եկան այնպիսի թեմաներ, որոնք մինչ այդ արգելված էին: Մեր կրոնի, եկեղեցական ժառանգության մասին բազմակողմանի տեղեկատվություն հայտնվեց նախ հեռուստատեսությունում և մամուլում, ապա նաև՝ համացանցում: Հոդվածում քննության են առնված ինչպես Հայ առաքելական եկեղեցուն պատկանող կամ վերջինիս գաղափարները քարոզող կայքերը, այպես էլ կրոնական այլ կազմակերպությունների, աղանդավորական շարժումների քարոզչությունն իրականացնող կայքերը:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** հոգևոր-կրոնական հաղորդումներ, կայքէջեր, Հայ առաքելական, տեղեկատվություն, քարոզչություն իրականացնող կայքեր:

20-րդ դարի վերջին քառորդում մարդկության մեծագույն ձեռքբերումներից մեկը համակարգիչն է, որը շատ կարճ ժամանակահատվածում մեխանիկական գործողություններ կատարող սարքից վերածվեց հաղորդակցության և տեղեկատվություն տարածման կարևորագույն միջոցի: Համակարգչային ծրագրերի ձևաչափությունը լայն հնարավորություններ ու սահմաններ բացեցին մարդու առջև: Ըստ վիճակագրության՝ տեխնիկական ոչ մի գյուտ այսքան արագ և նույնքան լայն կիրա-

ռություն չի ունեցել, ինչպես համակարգիչը: Օրինակ՝ 1990-ական թվականներին ԱՄՆ-ում, Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում, Ճապոնիայում հազար բնակչից 250-400-ը համակարգիչ ուներ: Այս ցուցանիշը, իհարկե, գիջում էր ավտոմեքենայի (միջինը մեկուկես անգամ) և հեռուստացույցի (միջինը երկու անգամ) ցուցանիշներին: Սակայն այնպիսի տարածման չափերի, որին համակարգիչը հասավ 21-րդ դարում, հեռուստացույցի տարածման համար պահանջվեց քառասուն տարի, իսկ ավտոմեքենայի՝ յոթանասուն տարի [1, 1]:

Համակարգիչի մեծ մասսայականությունը պայմանավորված է վերջինիս բազմաբնույթ ու տարատեսակ գործառույթներով, որոնք հնարավորություն են տալիս տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց օգտվելու համակարգիչի ծառայություններից՝ մի քանի անգամ դյուրին ու արագ դարձնելով աշխատանքը: Իսկ համակարգչային ցանցերի՝ հատկապես Ինտերնետ կայքերի տարածումը առաջ բերեց «ինֆորմացիոն հասարակություն» գաղափարը, որով և տեսաբանները բնութագրում են 21-րդ դարը:

Երրորդ հազարամյակի մարդու համար տեղեկատվությունը անփոխարինելի արժեք է: Իսկ ի՞նչ է տեղեկատվությունը, և ինչո՞ւ է այն այդքան կարևոր դեր ու նշանակություն ստացել ժամանակակից դարաշրջանում: Ինֆորմացիայի էությունը հասկանալու համար ռուս տեսաբան Դմիտրի Իվանովն առաջարկում է նախ տարան-

ջատել հաղորդագրություն, վերարտադրություն կամ մեկնաբանություն, հաղորդակցություն հասկացությունները: «Հաղորդագրությունը մարդու ինտելեկտուալ գործունեության արդյունքի փոխանցումն է: Վերարտադրությունը կամ մեկնաբանությունը միտքն է, որը ձևավորվում է ձեռք բերված գիտելիքի արդյունքում: Հաղորդակցությունը միայն փոխանցման գործընթացի, հեռարձակման ապահովողն է: Սակայն ժամանակակից հասարակության մեջ հաղորդագրություն- վերարտադրություն- հաղորդակցություն եռակցության մեջ իշխողը հաղորդակցությունն է կամ հեռարձակումը» [1, 359]:

Պատահական չէ, որ տեղեկատվության բաղկացուցիչ մասերից ընդգծվում է տեղեկատվության փոխանցումը, հաղորդումը, քանի որ, եթե չլինեն ինֆորմացիայի տարածումն ապահովող միջոցները, տեղեկատվությունը կկորցնի իր նշանակությունը: Այստեղից էլ՝ որքան զարգացած են հաղորդակցության միջոցները, այնքան տեղեկացված է տվյալ հասարակությունը:

Համակարգչի և ինտերնետի ներմուծումը մեր կենցաղ էականորեն փոխեց տեղեկատվություն ստանալու միջոցների մասին մեր պատկերացումները: Կարճ ժամանակում հեշտ և արագ տեղեկատվություն քաղելու հնարավորությանն այսօր ռադիո և հեռուստատեսերին զուգահեռ ընձեռում են նաև ինտերնետային կայքերը: Վիրտուալ բազմազան տիրույթներից դուրս չեն մնում հոգևոր թեմաները: Գործում են եկեղեցիների ինչպես պաշտոնական, այնպես էլ անկախ հոգևոր կայքեր, որոնք տեղեկություն են տալիս եկեղեցական կյանքի, հովվական գործունեության, հարող կազմակերպությունների, կրոնական ու աստվածաբանական հարցերի մասին:

Դիտարկելով հոգևոր-կրոնական հայաստանյան կայքէջերը՝ դրանք կարելի է բաժանել երկու խմբի.

ա) Հայ առաքելական եկեղեցուն պատկանող կամ վերջինիս գաղափարները քարոզող կայքեր,

բ) Հայ առաքելական եկեղեցու գաղափարական սկզբունքներին չհարող կրոնական այլ կազմակերպությունների, աղանդավորական շարժումների քարոզչությունն իրականացնող կայքեր: «Քննենք դրանք ըստ խմբերի՝

**ա) Հայ առաքելական եկեղեցու քարոզչությունն իրականացնող կայքէջեր.**

Հայ Առաքելական եկեղեցու գործունեությունը ներկայացնող ինտերնետային կայքերը, կարելի է ասել, ձևավորման փուլում են: Դրանց ստեղծման և շրջանառության ժամանակահատվածը կարելի է համարել 1990-ական թվականների վերջը: Մեր եկեղեցու վարդապետության, պատմության ու գործունեության վերաբերյալ տեղեկություն պարունակող ինտերնետային էջերն այսօր շատ չեն: «Էյ էմ» տիրություն գործող հոգևոր կայքերից առանձնանում են Արարատյան Հայրապետական թեմի պաշտոնական և Զվարթնոց տեղեկատվական կենտրոնի էլեկտրոնային էջերը: [www.araratian-tem.am](http://www.araratian-tem.am) կայքը ստեղծվել է 2003 թ.: Այն, ի տարբերություն թեմական մյուս կայքէջերի, առավել շատ է անդրադառնում հասարակությանը հուզող արդի խնդիրներին, փորձում է ամրապնդել հոգևորական-անհատ կապը: Այն լուսաբանում է ոչ միայն հոգևոր թեմաներ, այլև մշակութային իրադարձություններ՝ այսպիսով կապ ապահովելով հասարակության լայն շրջանակների հետ: Արարատյան Հայրապետական թեմի պաշտոնական [www.araratian-tem.am](http://www.araratian-tem.am) կայքի բովանդակության բազմազանությունը պայմանավորված է թեմի գործունեությամբ, իրականացրած ծրագրերով: 2003թվականին [www.araratian-tem.am](http://www.araratian-tem.am) կայքում ստեղծվեց «Իմ քահանան» ծրագիրը, որը կարճ ժամանակ անց դարձավ ինքնուրույն կայք՝ [www.qahana.am](http://www.qahana.am) : Այս կայ-

քը առաջարկում է վիրտուալ քահանայի գաղափարը, որի ստեղծումը հնարավոր դարձրեց էլեկտրոնային փոստով գրուցել հոգևորականի հետ, ստանալ ամենատարբեր հարցերի պատասխաններ: Միայն առաջին մեկ տարվա ընթացքում [www.gahana.am](http://www.gahana.am) կայքում հոգևորականը պատասխանել է հազար նամակի:

[www.araratian-tem.am](http://www.araratian-tem.am) և [www.gahana.am](http://www.gahana.am) կայքէջերից փոքր ինչ ուշ՝ 2005 թվականին, Հայ առաքելական եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի «Զվարթնոց» տեղեկատվական-վերլուծական կենտրոնի կողմից ստեղծվեց մյուս հոգևոր-կրոնական էլեկտրոնային կայքը՝ [www.zvartnoc.am](http://www.zvartnoc.am) -ը: Բաղկացած է չորս հիմնական բաժիններից, որտեղ մեր եկեղեցու պատմությանն ու մերօրյա գործունեությանը զուգահեռ ներկայացվում են Հայաստանում տարածված այլ դավանանքներ, լուսաբանվում մեր երկրում գրանցված կրոնական այլ կազմակերպություններ, անդրադառնում դրանց գործունեությանը: Վերը նշված կայքը հայաստանյան մյուս հոգևոր-կրոնական կայքերից առանձնանում է նաև գիտական ուսումնասիրություններով, քրիստոնեությունը իբրև համամարդկային կրոն ներկայացնելու ձգտումով:

[www.armenianchurch.org](http://www.armenianchurch.org) հասցեում է տեղադրված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական կայքէջը: Ի տարբերություն Հայ առաքելական եկեղեցին ներկայացնող մյուս էջերի՝ այս մեկը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեության անմիջական անդրադարձն է: Այստեղ եկեղեցական տոնացույցից, քրիստոնեությանն ու եկեղեցու պատմությանը նվիրված ակնարկներից բացի ներկայացվում են նաև եկեղեցական իրադարձությունները, եկեղեցական կառույցների աշխատանքը: Էջը պարբերաբար լրացվում է Ամենայն Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակներով, օրհնության գրերով, ուղերձներով:

Հարկ է նշել, որ մեր եկեղեցու գործունեությունը լուսաբանող ինտերնե-

տային էջերը բնույթով գրեթե նման են միմյանց, սակայն կա մի էական տարբերություն. կայքէջերի մի մասը մշտապես թարմացվում է նոր տեղեկություններով և կրոնական բնույթի լուրերով, մյուսներում տեղ գտած նյութերն անփոփոխ են, ինչպես օրինակ ակնարկներ հայ եկեղեցու պատմության ու տոների մասին, հատվածներ Աստվածաշնչից, հայրաբանական գրականությունից: Առաջին տեսակի կայքերում մեծ չափաբաժին են կազմում է իրադարձային նյութերը, իսկ երկրորդ տեսակի կայքերում մեծածավալ հոդվածներն ու ակնարկները: Այդօրինակ կայքերից է [www.lusamut.net](http://www.lusamut.net) -ը: Այն հոգևոր-կրոնական մյուս էջերից առանձնանում է նրանով, որ նպատակամիտված է հոգևոր-մշակութային արժեքները ներկայացնել ոչ միայն սեփական նյութերով, այլև ներգրավում է այլ հեղինակների ուսումնասիրություններ: [www.lusamut.net](http://www.lusamut.net) կայքէջը առանձնանում է իր ենթաէջերի բազմազանությամբ և ինքնատիպությամբ: Ուշագրավ է Գևորգյան հոգևոր ձեռնարանի (ԳՀՃ) թեզեր էջը [2], որտեղ տեղադրված են ձեռնարանականների՝ տարբեր ժամանակներում գրված աշխատանքները: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների գիտական ուսումնասիրություններին հնարավոր է ծանոթանալ կայքի «Քարոզներ» ենթաէջի միջոցով [2]:

Ընդհանրացնելով դիտարկված նյութերը՝ կարելի է ասել, որ հայաստանյան հոգևոր-կրոնական ինտերնետային կայքէջերը նմանօրինակ են: Դա թերևս բացատրվում է նրանով, որ դրանց հեղինակներն անդրադառնում են հիմնականում հոգևոր-կրոնական միևնույն բնագավառներին ու թեմաներին: Օրինակ՝ տոնացույց, եկեղեցու պատմություն, խորհուրդներ և այլն: Մեր կարծիքով՝ այս դաշտում բացակայում են քրիստոնեական կամ եկեղեցական որևէ բնագավառի կամ թեմայի մասին բազմակողմանի և խորացված կայքէջերը: Ասվածն ավելի տեսանելի դարձնելու համար կարող ենք դիտարկել հոգևոր-

կրոնական ռուսական կայքէջերը: Այստեղ ամեն մի ոլորտ ներկայացվում և ուսումնասիրվում է առանձին կայքէջի կամ կայքէջերի միջոցով: Ասենք, առանձին կայքէջեր կան կրոնական կազմակերպությունների, Աստվածաշնչյան մեկնությունների, քրիստոնեական գրականության և այլ թեմաների մասին: Միայն [www.evangelie.ru](http://www.evangelie.ru) կայքում կա 1127 հոգևոր-կրոնական կայքէջի հղում, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է կրոնական որևէ ոլորտ [3]: Օրինակ՝ քրիստոնեական գրականությունը ներկայացված է տասնյակ կայքէջերում, գոյություն ունի անգամ «քրիստոնեական գրականության միության» կայքէջը՝ [www.aclib.spb.ru](http://www.aclib.spb.ru), որտեղ ներկայացված են ոչ միայն ռուսական, այլև քրիստոնեական գրականության համաշխարհային նմուշներ [4]: Պետք է նշել, որ քրիստոնեական գրականությունն այս կայքէջերում համակարգված ու տեսակավորված է, օրինակ, եթե [www.cozamdeo.ru](http://www.cozamdeo.ru)-ն «Քրիստոնեական գրականության գրադարանի» կայքէջն է, ապա [www.lhf.ru](http://www.lhf.ru) կայքէջում ներկայացված է միայն բողոքական եկեղեցու գրականությունը [5], [6]: Իսկ [www.christian-books.kazan.ru](http://www.christian-books.kazan.ru) կայքէջից հնարավոր է գնել քրիստոնեական գրականություն և DVD սկավառակներ [7]:

բ) Կրոնական այլ կազմակերպություններին պատկանող կայքեր.

Հոգևոր-կրոնական կայքէջերի ուսումնասիրության ժամանակ հանդիպում ենք նաև Հայ Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների կայքէջերի: Բազմաթիվ են նաև այնպիսի կայքեր, որոնցից շատերի հեղինակները անհայտ են: Կրոնական այդպիսի կայքերից են «Հավատք», «Բարի լուր», «Գործք 13 քրիստոնեական միություն», «Աստծո ժողովուրդ» և այլն [8], [9], [10], [11]: Այս կայքէջերում մեծ մասամբ ներկայացված են վկայություններ, զանազան քարոզներ, պատգամներ, հոգևոր երգեր, կինոնկարներ, հոգևոր բանաստեղծու-

թյուններ: Նյութերի գաղափարական բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ վերջիններս Հայ Առաքելական եկեղեցու հովանու ներքո չեն գործում: Պետք է նշել, որ քրիստոնեական այլ եկեղեցիների ու կրոնական կազմակերպությունների կայքէջերը տարբերվում են ոչ միայն բովանդակային, գաղափարախոսական առումներով, այլ նաև ձևավորմամբ: Այստեղ բացակայում են հայկական մանրանկարչական արվեստի նախշերը, գույները, սրբապատկերները: Նյութերի բովանդակային կառուցվածքը պայմանավորված է տվյալ կայքի կրոնական, գաղափարական պատկանելությամբ: Այսօրինակ կայքերում զետեղված նյութերը լրագրության հետ կապ չունեն, սրանցում բացակայում է հեղինակային մոտեցումը: Նյութերը կառուցված են քրիստոնեության մասին ոչ թե տեղեկատվություն հաղորդելու, այլ տվյալ աղանդի շրջանակներ նոր անդամներ գրավելու համար: «...Վախ, ընկճվածություն, սուգ, դառն անցյալ, բռնություն, մերժվածություն, վիրավորվածություն, ընտանեկան անախորժություն և այլն: Եթե Դուք տառապում եք նման խնդիրներով գրեք մեզ, լսեք մեր պատգամները: Մենք կօգնենք ձեզ Տիրոջ Շնորհքով» [11]:

Ամփոփելով հոգևոր-կրոնական հայկական կայքէջերի բնությունը՝ պետք է անդրադառնալ մեկ հարցի ևս. արդյո՞ք այս կայքերում տեղադրված նյութերը կառուցվածքային, ժանրային և բովանդակային տեսակետից կարելի է լրագրողական համարել: Մեր կարծիքով, եթե հողվածում նշված ա) խմբի կայքերում կարելի է այդպիսիք գտնել, ապա բ) խմբում՝ ոչ, ուստի դիտարկենք միայն ա) խմբի կայքերի նյութերը:

Այստեղ նյութերը միատարր չեն: Ոչ իրադարձային նյութերի բաժնում հիմնականում պատմական ակնարկներ են, այս կամ այն տոնի, ծեսի խորհրդի նկարագրություններ, տարբեր հոգևորականների քարոզխոսություններ և այլն:

Հարկ է նշել, որ դրանց մեծ մասի հեղինակները հոգևորականներ են կամ հոգևոր հաստատության ուսանողներ: Այս հանգամանքով պայմանավորված նյութերի տեքստերն ուրույն դիմագիծ ունեն: Դրանք ավելի շատ նկարագրողական են, գուրկ հարցադրումներից: Այս կայքերում իրադարձային նյութերի մեծ մասը պաշտոնական լրատվություն է, օրինակ՝ «Ապրիլի 12-ին Հայոց Հայրապետը կմասնակցի 100-րդ տարելիցի առիթով Սուրբ Պետրոսի տաճարում Ֆրանցիսկոս Պապի կողմից մատուցվելիք Ս. Պատարագին» {12}:

Խոսելով Հայ առաքելական եկեղեցուն պատկանող կայքէջերի մասին՝ պետք է նշել, որ ինտերնետում իրենց էջերն ունեն նաև Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունը, Զմմառ Կաթողիկե Հայոց Պատրիարքությունը, Վենետիկի Մխիթարյան միաբանությունը: Հոգևոր-կրոնական առանձին կայքէջեր ունեն նաև Հայ առաքելական եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան թեմը, Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմը, Հյուսիսային Ամերիկայի թեմը, Կանադայի թեմը, Սիրիայի թեմը: Այս կայքէջերում ներկայացված է թեմերի ձևավորման, կազմավորման պատմությունը, թեմական կյանքում տեղի ունեցած իրադարձություններ, տեղեկություններ քրիստոնեական տոների, խորհուրդների, ծեսերի մասին և այլն: Նշենք, որ կայքէջերի մեծ մասը օտար լեզուներով է, հեղինակները՝ հիմնականում Հայ առաքելական եկեղեցու թեմերում սպասավորող հոգևորականներն են:

Առանձին կայքէջեր ունեն նաև Միյուռքի որոշ եկեղեցակական համայնքներ, հոգևոր վարժարաններ, կրթօջախներ: Այդպիսի կայքէջերից են, օրինակ՝ Դիթրոյթի Սուրբ Հովհաննես եկեղեցին, Նյու Յորքի Սուրբ Ներսես Վարժարան, Մարսելի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին և այլն: Դրան-

ցում տեղեկություններ են պարունակում միայն տվյալ եկեղեցու կամ հոգևոր կրթօջախի գտնվելու վայրի, կոորդինատորների, հոգևոր սպասավորների կամ տեսչական կազմի մասին: Նմանատիպ կայքէջերը մանրամասն չենք ներկայացնում, քանի որ այն մեր այս ուսումնասիրության շրջանակներից դուրս է:

Ամփոփելով՝ նշենք, որ ինտերնետայի ցանցերի ընդլայնմանը զուգահեռ առաջանում են հոգևոր-կրոնական նոր կայքէջեր: Կարելի է եզրակացնել, որ քիչ ժամանակ անց, հոգևոր-կրոնական կայքէջերը կունենան ավելի հստակ դիմագիծ, կավելանան նրանցում ընդգրկված ենթաէջերը՝ բազմակողմանի և ամբողջական տեղեկատվություն հաղորդելով հոգևոր-կրոնական թեմաների ու ոլորտների մասին:

Հոգևոր-կրոնական կայքերի կայացումը ենթադրում է մասնագետների՝ լրագրողների ներգրավում կայքերի գործունեության ոլորտում: Սա իր հերթին կնպաստի, որ հոգևոր-կրոնական կայքերում նյութերը լինեն կառուցված լրագրության ժանրային և կառուցվածքային սկզբունքներով: Ըստ այդմ՝ վերջիններս կդառնան ավելի հետաքրքիր՝ ձգբտորեն կատարելով իրենց առաքելությունը. համակողմանի տեղեկատվություն հաղորդելով յուրաքանչյուր իրադարձության կամ երևույթի մասին: Նյութերի լրագրողական մատուցումը կնպաստի նաև Հայ առաքելական եկեղեցու քարոզչությանը, եկեղեցի-հասարակություն կապի ամրապնդմանը:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝  
14.02.2015

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Дмитрий Иванов, Виртуализация общества, М., 2004.
2. [www.lusamut.net](http://www.lusamut.net)
3. [www.evangelie.ru](http://www.evangelie.ru)
4. [www.aclib.spb.ru](http://www.aclib.spb.ru)
5. [www.cozamdeo.ru](http://www.cozamdeo.ru)
6. [www.lhf.ru](http://www.lhf.ru)
7. [www.christian-books.kazan.ru](http://www.christian-books.kazan.ru)
8. [www.hawatk.com](http://www.hawatk.com)
9. [www.barilur.com](http://www.barilur.com)
10. [www.hopeofarmenia.com](http://www.hopeofarmenia.com)
11. [www.armeniaforchrist.org](http://www.armeniaforchrist.org)
12. [www.armenianchurch.org](http://www.armenianchurch.org)

### ДУХОВНО-РЕЛИГИОЗНЫЕ ТЕМЫ НА АРМЯНСКИХ ЭЛЕКТРОННЫХ СТРАНИЦАХ ЛУСИНЕ БАЛЯН

*Ереванский государственный университет,  
Кафедра радио-тележурналистики, телеканал 'Шогакат', сценарист, соискатель*

После провозглашения независимости, когда пресса и телевидение сбросили с себя господство советской идеологии, освободившись от навязываемого способа подачи информации, обнаружилось темы, которые до этого были запрещены и недоступны. Разносторонняя информация о нашей религии и церковном наследии появилась сперва на телевидении и в прессе, потом в интернете. В статье исследуются как веб-сайты Армянской Апостольской церкви, освещающие ее идеи, так и других религиозных организаций, движений.

Дата представления статьи: 14.02.2015

### SPIRITUAL AND RELIGIOUS THEMES ON THE ARMENIAN ELECTRONIC PAGES LUSINE BALYAN

*Yerevan State University, Chair of Radio and TV Journalism  
Screenwriter – journalist at "Shoghakat" TV*

After the Armenian independence, when the press and television cast off the domination of the Soviet ideology, being freed from the imposed way of presenting information, some topics emerged that previously were banned and unavailable. Versatile information on our religion and ecclesiastical heritage appeared first on TV and in the press, then the Internet.

The article examines both the websites of the Armenian Apostolic Churches, illuminating their ideas and other religious organizations, movements.

Article submission date: 14.02.2015

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

\*\*\*

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ  
МЕЖДУНАРОДНЫЙ НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ ЦЕНТР  
INTERNATIONAL SCIENTIFIC-EDUCATIONAL CENTER

---

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ  
СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ  
COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

*Հրատարակչության անուն՝*  
ԷՄԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ

*Համարի թողարկման պատասխանատու և*  
*գլխավոր խմբագիր՝*  
ՆԱԻՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ

*Սրբագրիչ՝*  
ՕՖԵԼՅԱ ԱՎԱԳՅԱՆ

*Համակարգչային ձևավորումը՝*  
ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՅԱՆԻ

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70 × 100 1/16  
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 21,5 տպ. մանուկ  
Տպաքանակը՝ 150 օրինակ



**ԶԱՆԳԱԿ**  
ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹՅՈՒՆ

«ԶԱՆԳԱԿ-97» ՍՊԸ  
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2,  
Հեռ.՝ (+37410) 23 25 28, հեռապատճեն՝ (+37410) 23 25 95  
Էլ. կայքեր՝ [www.zangak.am](http://www.zangak.am), [www.book.am](http://www.book.am), [www.dasagirq.am](http://www.dasagirq.am)  
Էլ. փոստ՝ [info@zangak.am](mailto:info@zangak.am)